# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գ.



*Եղվարդի եկեղեցին (XIV դ.)։*



*Բուրթել իշխանի դամբարանը Նորավանքում (XIV դ.)։*

[illegible]

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

# ЯКОВ МАНАНДЯН

## ТРУДЫ

## III

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

# ԵՐԿԵՐ

## Գ

A 60062

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977

9 (С 43) 1

Մ 24

Խմբագրական հանձնաժողով
ԲԱԲԱՅԱՆ Լ. Հ., ԽՐԽՄՅԱՆ Ս. Տ.,
ՀԱԿՈԲՅԱՆ Վ. Ա., ՍԱՐԳՍՅԱՆ Գ. Խ.

Հատորը հրատարակության պատրաստեց
Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆԸ

Մ $\frac{10601}{703 (02)-77}$ 37—77 © Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1977.

# ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Բազմավաստակ գիտնական, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի երկերի ժողովածուի ներկա՝ երրորդ հատորում զետեղված են «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Գ հատորը և «Նոր ավյալներ մոնղոլների կողմից Գանձակի ավերման ժամանակի մասին» փոքրածավալ հոդվածը:

Առաջին աշխատությունն ընդգրկում է XI դարի երկրորդ կեսից մինչև XV դարի վերջը, այլ խոսքով, միջինասիական քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերի՝ սելջուկ-թուրքերի, մոնղոլների, թամուրիդների ու թուրքմենների տիրապետության ժամանակաշրջանների պատմությունը: Գ, հատորի հրատարակության ժամանակ (1952 թ.) ինչ-ինչ պատճառներով հանվել է XV դարի պատմության շարադրանքը և մի շարք տեղեր կատարվել են փոփոխություններ: Ներկա հրատարակությունը հեղինակի տվյալ հատորի ձեռագիր բնագիրն է, որը գտնվում է Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի արխիվում (տես. Հ. Հ. Մանանդյանի արխիվ, թղթապանակ № 228, վավերագիր № 396:

«Նոր տվյալներ մոնղոլների կողմից Գանձակի ավերման ժամանակի մասին» փոքրածավալ հոդվածը տպագրվել է ռուսերեն, 1943 թ. Ազֆանի «Տեղեկագրում», № 7, էջ 79—80: Այն հայերեն տպագրվում է առաջին անգամ:

Նկատի ունենալով ակադեմիկոս Հ. Հ. Մանանդյանի 1922 թ. ձեռագիր իրավունքով համալսարանում կարդացած դասախոսությունները՝ «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» խորագրով վիմատիպ հրատարակությունն ընդարձակված և ամբողջական ձևով կազմում են «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Գ հատորի 1—9-րդ գլուխները, նպատակահարմար համարվեց այն չզետեղել երկերի 3-րդ հատորում:

# ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

## ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՖՅԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ
## (XI—XV դդ.)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

11-րդ դարի երկրորդ կեսից սկսած ինչպես Հայաստանի, նույնպես և Առաջավոր Ասիայի պատմության համար՝ սկսվեց մի նոր դարաշրջան, որն իր հետևանքներով ավերիչ ու ահավոր եղավ այդ երկրների թե՛ քաղաքական և թե՛ կուլտուրական զարգացման համար: Հենց այս դարից սկսած Հայաստանում և Առաջավոր Ասիայում հաստատեցին իրենց տիրապետությունը նախ սելջուկյան թուրքերը, ապա նաև թուրքական ու մոնղոլական և այլ ցեղեր, որոնք հետզհետե նվաճեցին տեղական ժողովուրդներին ու հիմնեցին իրենց նոր իշխանությունը:

Ավգուստ Մյուլլերը, Իսլամի ու Արևելքի պատմության ականավոր մասնագետներից մեկը, այսպես է ընդհանուր գծերով բնորոշում թուրք-մոնղոլական այդ նոր տիրապետությունը Առաջավոր Ասիայում:

«Արևելյան երկրների համար մի մեծ դժբախտություն էր,— ասում է նա[1],— որ արաբներին... հաջորդեցին նախ թուրքերը, որոնք պոկեցին արևելյան քաղաքակնության ծառի ծաղիկները, և ապա մոնղոլները, որոնք ոչնչացրին և այդ ծառի տերևները: Այդ ամենը նրանք արին այնքան հիմնավոր, որ հետագայում այդ քաղաքակնությունը հազիվ միայն տեղ-տեղ կարող էր ծիլեր արձակել, այն էլ շատ վտիտ»:

Անդրկասպյան երկրից ու Միջին Ասիայից եկած քոչվոր ու խաշնարած նոր այս ցեղերի տիրապետությունը, որը խիստ ծանր ու անքուժելի հարված հասցրեց պարսկա-արաբական քաղաքակրթությանն ու կուլտուրային՝ ավելի ևս դաժան ու կործանարար եղավ հայության ու Մերձավոր Արևելքի ազգաբնակչության համար:

---

[1] *А. Мюллер,* История Ислама с основания до новейших времен, пер. с немецкого, под ред. Н. А. Медникова, СПб., 1898, III, стр. 78.

Եվ իրավի՝ 11-րդ դարի երկրորդ կեսից սկսած Հայաստանի ու հայ ժողովրդի պատմությունը գրեթե մի անընդհատ ժամանակագրություն էր թուրքական ու մոնղոլական ցեղերին պատկանող զինված հրոսակների, անխնա կոտորածների, գերության ու գաղթականության և ամեն տեսակ հալածանքի ու բռնությունների:

Այդ մեծ արշավանքների ժամանակ տեղի էր ունենում նաև նոր ցեղերի գաղթը Արևելքից Արևմուտք՝ Միջավոր Արևելք ու Հայաստան: Թուրք-մոնղոլական գաղթականությունը, բնակություն հաստատելով այստեղ՝ դառավ այնուհետև նոր իշխանության գլխավոր հենցուկը և պաշտպանը:

Սխալ կլինի, իհարկե, կարծել, որ Հայաստանի անկումն իր բոլոր ծայրագավառներով, նոր եկվոր տարրի հաստատումը բովանդակ երկրում և հայության ընկնումը տեղի էին ունեցել մի անգամից, կարճ ժամանակամիջոցում: Այդ երևույթը, ինչպես կտեսնենք, արդյունք էր պատմական երկարատև պրոցեսի, որ տեվել էր դարեր:

Սելջուկյան թուրքերի սոսկալի հարվածներից հետո Հայաստանը սկսել էր հետզհետե նորից վերակենդանանալ: Եկվոր տարրն ամրացել էր սկզբում Հայաստանի հարավ-արևելյան և հարավ-արևմտյան շրջաններում, իսկ հայության վերակենդանացման կենտրոններ դառել էին Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները: Այստեղ դեռ մնում էին Ձորագետի Կյուրիկյան և Կապանի Սյունյաց փոքրիկ թագավորությունները և նրանց իշխանության տակ գտնվող մանր նախարարական տոհմերը, որոնք գտնվելով դժվարամատչելի լեռնային շրջաններում՝ դառան հենարան համառ դիմադրության:

Այստեղի հայությունը, հետզհետե ուժեղանալով, 12-րդ դարում պաշտպանություն գտավ հարևան Վրաստանի կողմից, որի մեծագույն մասը, համեմատաբար քիչ էր ավերվել սելջուկյան արշավանքների ժամանակ: Հենվելով Վրաստանի վրա և պաշտպանություն գտնելով Վրաց Բագրատունիների կողմից՝ այս հայությունը շարունակ կռիվներ մղեց եկվոր տարրի դեմ ո՛չ միայն իր գոյությունն ապահովելու ու ամրապնդելու համար, այլ նաև Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հարավային շրջանները վերագրավելու նպատակով:

Ինքնապաշտպանության ու Հայաստանի քաղաքական վերահաստատման այդ համառ ջանքերը, որ հաջող ընթացք էին ստացել, մանավանդ 12-րդ դարի վերջում, կանգ են առնում 13-րդ

դարի առաջին կեսում մոնղոլական արշավանքների պատճառով: Սակայն այնուհետև ևս ֆեոդալական հայ իշխանությունները, հարկադրված լինելով ենթարկվել մոնղոլական տիրապետությանն ու գերիշխանությանը, սկզբնական շրջանում աջակցեցին ու գործակցեցին նրանց ընդդեմ իրենց թշնամի թուրքական իշխանությունների: Հայ իշխանությունները դեռևս հույս ունեին, որ քաղաքական այս ընթացքով կպահպանվեն իրենց գոյությունն ու ինքնուրույնությունը:

Սակայն մոնղոլական տիրապետության վերջին շրջանը և, մանավանդ, Լենկթեմուրի սոսկալի արշավանքները 14-րդ դարի երկրորդ կեսում՝ վերջ դրին նրանց այդ ակնկալություններին:

14-րդ դարի վերջերում եգիպտական մամլուքների հարվածների տակ ընկավ և Կիլիկիայի Ռուբինյանց հայ թագավորությունը, որը նույնպես համառ կերպով պայքարում էր հարավում, հենվելով նախ արևմտյան խաչակիրների և ապա մոնղոլների վրա:

Այնուհետև, 15-րդ դարից սկսած, հայ իշխանությունները, չունենալով և ո՛չ մի հույս ու հենարան՝ այլևս անզոր էին կասեցնել թուրքական ցեղերի առաջխաղացումը, և հայությունը ստիպված հպատակվեց զանազան նոր եկվոր ցեղերի տիրապետությանը, ենթարկվելով ըստ ամենայնի օտար այդ իշխանությունների քաղաքական ու սոցիալական հատուկ կարգերին:

Մինչև 15-րդ դարը, ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի պատմությունն ունի առանձնահատուկ բնույթ և բովանդակություն: Վերականգնման ջանքերի ու համառ պայքարի մի շրջան էր այդ, երբ հայ իշխանությունները մահամահ փորձեր էին անում ընդդեմ ծավալվող ու հաղթանակող թուրքական ու թաթարական ցեղերի: Այդ պայքարի կենտրոններն էին մի կողմից՝ բուն Հայաստանի հյուսիսային ու հյուսիս-արևելյան շրջանները, մյուս կողմից՝ Ռուբինյանց իշխանության տակ գտնվող Կիլիկիան:

Ըստ այդմ՝ մինչև 15-րդ դարը հայ ժողովրդի պատմությունը պետք է բաժանել երկու մասի՝ ա) բուն Հայաստանի պատմություն և բ) Ռուբինյանց Կիլիկյան թագավորության պատմություն:

Հայության այդ երկու հատվածների պատմական անցքերը, թեև ունեն շփման ընդհանուր կետեր, սակայն ունեցել են տարբեր ընթացք ու բովանդակություն:

Իմ աշխատության այս հատորի նյութն է վերոհիշյալ ժամանակաշրջանի բուն Հայաստանի պատմությունը:

Աշխատությանս առաջին մասի, սելջուկյան ժամանակաշրջանի համար, հիմք են ծառայել ձեռագրի իրավունքով հրատարակված

իմ վիմատիպ դասախոսությունները (Երևան, 1921), որոնք վերամշակված և գրեթե կրկնակի ընդարձակված են:

Ինչպես հայտնի է, XI—XV դարերի հայ ժողովրդի պատմությունն առաջին անգամ ընդարձակ կերպով գրել է Միքայել Չամչյանն իր Պատմության երկրորդ և երրորդ հատորներում (Վենետիկ, 1785—1786): Ավելի նոր ժամանակներում նույն դարերի պատմական անցքերի մասին աղքատիկ ու կցկտուր տեղեկություններ հաղորդված են Պալասանյանի «Պատմութիւն Հայոց» դպրոցական ձեռնարկի մեջ ու նաև պատմական մի քանի այլ աշխատություններում:

Պրոֆ. Լեոն, ինչպես այժմ վերջնականապես պարզված է, գրել է «Հայոց պատմության» երկրորդ հատորի միայն առաջին գիրքը, որն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը Արշակունիների թագավորության բարձումից հետո (428 թ.) մինչև 11-րդ դարի երկրորդ կեսը: Սակայն այդ հատորի երկրորդ գիրքը, որ պետք է պարունակեր չորս և կես դարերի պատմություն՝ 11-րդ դարի երկրորդ կեսից մինչև 16-րդ դարը՝ Լեոյի Պատմության մեջ պակասում է:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, իմ «Քննական տեսության» երրորդ հատորը վերաբերում է հայերի պատմական անցյալի այն ժամանակաշրջաններին, որոնք Չամչյանից հետո շատ քիչ են ուսումնասիրվել: Միանգամայն բնական է, ուրեմն, որ մեր այս հատորի մեջ, որն առաջին փորձն է 11—15-րդ դարերի պատմության ընդարձակ քննության, կլինեն զգալի բացեր ու թերևս նաև թերի ու վիճելի կետեր: Գիտական լրիվ ուսումնասիրությունն այս դարերի պատմության հնարավոր կլինի, անշուշտ, այն ժամանակ, երբ հրատարակված կլինեն այս ժամանակներին վերաբերվող բոլոր վիմական արձանագրությունները, հայերեն ձեռագրերի 11—13-րդ և 15-րդ դարերի հիշատակարանները, հայ և օտար չհրատարակված սկզբնաղբյուրները ու նաև նյութական կուլտուրայի անհայտ մնացած հուշարձանները:

Առայժմ ես կարողացել եմ անել միայն հնարավոր եղածը՝ աղբյուրների այն պաշարով, որ ինձ մատչելի էին, և այդ արել եմ, բնականաբար, խիստ զգուշավոր կերպով, խուսափելով վաղաժամ ու հապճեպ ընդհանրացումներից:

Պետք է ասեմ, որ խիստ համառոտ է և սոսկ ժամանակագրական ուրվագծի բնույթ ունի այս երրորդ հատորում հատկապես 15-րդ դարի պատմությունը, որ պետք է վերագրել աղբյուրների ու նյութերի անբավարարության:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻՑ ԱՌԱՋ

1. Հայաստանի ներքին դրությունը Բագրատունիների ժամանակ.— Ներքին պառակտումները Հայաստանում և նրանց օգտագործումը Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի կողմից:— 2. Քաղաքական այդ դրության պատճառները: — 3. Հայերը իբրև ռազմունակ մեծ ուժ և նրանց դերը Բյուզանդիայում:— 4. Բյուզանդիայի զորեղացումը և նրա սահմանների ընդարձակումն Արևելքում:— 5. Բյուզանդական քաղաքականությունը հայերի վերաբերմամբ 10-րդ դարի առաջին և երկրորդ կեսերում.— Տարոնի միացումը կայսրության և հայերին սպառնացող մեծ վտանգը Հովհաննես Ա. Չմշկիկի արևելյան արշավանքի ժամանակ:— 6. Բազիլեյոս Բ-ի նվաճողական քաղաքականությունը Վրաստանի ու Հայաստանի վերաբերմամբ.— Տայքի միացումը կայսրության և Բյուզանդիայի գերիշխանության ճանաչումը շրջակա երկրների իշխանությունների կողմից.— միացված երկրից ազնվականության գաղթեցումը:— 7. Վրացական-բյուզանդական կռիվները 11-րդ դարի առաջին քառորդում:— 8. Հովհաննես-Սմբատ և Աշոտ ու ներքին երկպառակությունները Հայաստանում.— Հովհաննես-Սմբատի կտակը և այդ կտակի շարժառիթները.— Հովհաննես-Սմբատի մահը և Բյուզանդիայի Անիին տիրելու փորձերը:— 9. Գագիկ Բ. և կռիվները Բյուզանդիայի դեմ:— 10. Շիրակ-Անիի գրավումը Բյուզանդիայի կողմից:— 11. Բյուզանդիայի քաղաքականությունը Հայաստանում.— կրոնական հալածանքները:— 12. Գաղթը և տեղահանությունները Հայաստանից.— Հայաստանի բնակչության պակասումը:— 13. Տեղահանությունների քաղաքական նպատակը.— տեղահանությունների տնտեսական նպատակը:— 14. Բյուզանդական քաղաքականության կործանարար հետևանքները.— հայկական և վրացական ռազմական ուժերի թուլացումը.— Բյուզանդիայի անճարակությունը արտաքին վտանգի հանդեպ:

*9-րդ դարից սկսած, Բաղդադի խալիֆայության տկարանալու միջոցին, ինչպես հայտնի է, Հայաստանում հետզհետե կազմվել էին Անիի, Վասպուրականի, Կարսի, Սյունիքի և Ձորագետի փոքրիկ թագավորությունները, որոնց մեջ առաջնակարգ տեղ էր գրավել Բագրատունիների Շիրակ-Անիի թագավորությունը։*

Բագրատունիների այս թագավորությունը, որ իր ծագման սկզբում աշխատեց ի մի համախմբել ո՛չ միայն Հայաստանի մյուս իշխանությունները, այլև Աղվանքը, Վրաստանը և Աբխազիան՝ չկարողացավ ֆեոդալական այդ քաղաքական միությունը դարձնել հարատև։ Ներքին պառակտումները և արյունահեղ խռովությունները, որ հատուկ էին Հայաստանի նախարարական կազմակերպությանը՝ նույնքան զորեղ էին Բագրատունիների թագավորության ընթացքում, ինչպես և հայ Արշակունիների ժամանակ։ Հայաստանի սահմանակից մեծ պետությունները՝ Բյուզանդական կայսրությունը և Արաբական խալիֆայությունը, օգտվում էին հայ իշխանությունների ներքին այդ երկպառակություններից հօգուտ իրենց քաղաքական նպատակների և աջակցում էին ու հովանավորում խռովարարներին։ Նրանք չէին կարող, բնականաբար, հանդուրժել Հայաստանի միացումն ու զորեղացումը. ուստի և իրենք էին հաճախ երկպառակում երկիրը և պաշտպանում իրենց քաղաքականության հլու և հաճելի, խռովարար ու ըմբոստ իշխաններին։

Այսպիսով, փոխանակ միասնական ու միաբան պետության, Հայաստանում կազմվել էին իրարից անջատ ու անկախ իշխանություններ։ Այս մանր իշխանությունները, որոնք պայքար էին մղում իրար դեմ իրենց տեղական անկախ իրավունքները պահպանելու կամ ընդարձակելու համար, արտաքին հարձակումներից պաշտպանվում էին ո՛չ թե ընդհանուր միացյալ ուժերով, այլ, մեծ մասամբ, ամեն մեկը անջատ ու առանձին։ Քաղաքական այս պայմաններում, բնականաբար, շատ դժվար պիտի լիներ պաշտպանել Հայաստանի բնակչությունը ներս խուժող թշնամի զորքերի ավերածություններից։

Քաղաքական այս ծանր կացությանը նպաստում էր Հայաստանում նաև երկրի աշխարհագրական դիրքը։ Հայաստանը սարահարթերի ու հովիտների, իրարից անջատված ու կտրված շրջանների մի լեռնաշխարհ է, ուստի և նրա այդ տեղադրության համեմատ կազմվել էին այստեղ իրարից անջատ նախարարական երկրներ։ Նահանգներից շատերը իրարից անջատված էին այստեղ բարձր անմատչելի լեռներով և նրանց բաժանմանը մեծ չափով նպաստում էին նաև ձմեռվա երկարատև ձյունը, բուքը և ցրտերը։ Հայ նախարարական տոհմերը, որ երկրի հարուստ կալվածատերերն էին ու ինքնիշխան վարիչները, շատ բնական է, որ աշխատելու էին ամեն կերպ պաշտպանել իրենց կալվածատիրական ու իշ-

*խանական իրավունքները։ Նրանց միաձուլելու քաղաքական փորձերը գրեթե անհաղթելի դժվարությունների պիտի հանդիպեին նաև այն պատճառով, որ Հայաստանը, գտնվելով Արևելքի և Արևմուտքի մշտական ընդհարումների շեմքին՝ եղել է շարունակ միջազգային պայքարի ու մրցությունների առարկա։ Հայաստանի հարևան մեծ պետությունները չէին կարող, բնականաբար, հանդուրժել Հայաստանի միացումն ու զորեղացումը, ուստի և, ինչպես ասացինք, հենց իրենք էին հաճախ երկպառակում երկիրը։*

*Ամեն մի երկրի համար՝ նրա տնտեսական-սոցիալական կացությունը, նրա աշխարհագրական դիրքը և քաղաքական ներքին ու արտաքին դրությունը կազմում են այն անխախտելի հիմքը, որով պայմանավորվում է նույն երկրի հզորությունը կամ թուլությունը։ Ինքն իրականությունը պատճառ է հանդիսանում պատմական անցքերի այս կամ այն ընթացքին։*

*Այդ իրականությունը շատ էր աննպաստ Հայաստանում մանր իշխանությունների միաձուլման կամ համերաշխ գործակցության համար։ Այս բոլորը պետք է ի նկատի ունենալ հասկանալու համար, թե որքան դժվար պիտի լիներ Բագրատունիների «արքայից արքաներին» ենթարկել իրենց գերիշխանության Հայաստանի մյուս իշխանությունները։*

*Բաժանված լինելով անջատ մանր թագավորությունների՝ Հայաստանը թեև քաղաքականապես շատ թույլ էր, սակայն ռազմական տեսակետից հայությունը Առաջավոր Ասիայի զորեղ ժողովուրդներից մեկն էր։ Բյուզանդագետ և հայագետ պրոֆ. Հ. Գելցերի կարծիքով*[1]*, Բագրատունիների նույն այս ժամանակաշրջանում, Առաջավոր Ասիայի հայ զորական ուժն էր, որ պաշտպանում ու անգամ առաջնորդում էր Բյուզանդական կայսրությունը։*

*Բազիլեյոս Ա-ից սկսած (867—886)՝ կառավարության գլուխն էր անցել Բյուզանդիայում հայազգի հռչակավոր դինաստիան, որն անվանվում է Մակեդոնական։ Գրավելով ամենաազդեցիկ դիրքերը զորական բարձր պաշտոններում և կայսերական դիվանում՝ հայ ազնվականությունն իր ձեռքն էր առել կայսրության ընդհանուր կացության ղեկավարությունը։ Հայ ազնվականության ու զորքի աջակցությամբ էր, որ 971 թվին վերջնականապես նվաճվեց Բուլ-*

---

[1] Տե՛ս *H. Gelzer*, Abriss der byzantinischen Kaisergeschichte, էջ 947, 979, 981 և 985 (Geschichte der byzant. Lit., von *K. Krumbacher*, München, **1897, հավելված՝ էջ 911—1067)։ Համեմատել նաև հայերեն թարգմանությունը Մեսրոպ Վ. Տեր-Մովսեսյանի, Վաղարշապատ, 1901։**

ղարական թագավորությունը, որը 300 տարուց ավելի սարսափի մեջ էր պահում Բյուզանդիան։

Սակայն հայկական ռազմունակ մեծ ուժը, որ պաշտպանել ու ապահովել էր Բյուզանդական կայսրության արևմտյան սահմանները, չկարողացավ, ինչպես կտեսնենք, պաշտպանել իր սեփական երկիրը սելջուկյան թուրքերի ահռելի հարձակումներից։ Դրա գլխավոր պատճառներից մեկը Բյուզանդական կայսրության այն քաղաքականությունն էր, որը գործադրվեց Հայաստանի և Վրաստանի նկատմամբ 10—11-րդ դարերում։

Արդեն 9-րդ դարի վերջին քառորդում բյուզանդական հայազգի կայսր Բազիլեյոս Ա-ը, որ Մակեդոնական դինաստիայի հիմնադիրն էր՝ կարողացել էր ոչնչացնել արաբների ամրացրած դիրքերը արևելյան սահմաններում և ներխուժել Միջագետք և Չորրորդ Հայք։ Այնուհետև նրա հաջորդների, Լևոն Զ Իմաստասերի (886—911) և, մանավանդ, Կոստանդին Է Պորփյուրոգենի (912—959) ու նրա աթոռակից Ռոմանոս Ա Լեկապենոսի (919—944) ժամանակ, Բյուզանդական կայսրությունը, կռիվներ մղելով արաբական ամիրայությունների դեմ, որոնք գրավել էին Հայաստանի արևմտյան ու հարավ-արևմտյան երկրները՝ հետզհետե ընդարձակեց արևելյան իր սահմանը Միջագետքի ու Հայաստանի ուղղությամբ։ Այդ ժամանակներում նա, գլխավորապես, հայազգի մեծ զորավար Հովհաննես Կուրկուասի քսանամյա համառ կռիվներից հետո (920—942)՝ վերագրավել էր այստեղ նախկին Բյուզանդական Հայաստանի երկրամասերը մինչև վերին Եփրատ ու վերին Տիգրիս գետերը[1]։

Միանգամայն բնական է, որ Բյուզանդիան, հաղթական իր առաջխաղացման սկզբնական այս շրջանում, սահմանակից հայկական և վրացական քրիստոնյա իշխանությունների հանդեպ վարում էր զգուշավոր ու խաղաղ քաղաքականություն և աշխատում էր ըստ կարելույն օգտագործել նրանց զինվորական ուժերն ընդդեմ Արաբական խալիֆայության ու ամիրայությունների։

10-րդ դարի երկրորդ կեսում և 11-րդ դարի առաջին քառորդում՝ Նիկեփորոս Բ Փոկասի (963—969), Հովհաննես Ա. Չմշկիկի (969—976) և Բազիլեյոս Բ-ի (976—1025) իշխանության ժամանակ՝ Բյուզանդիան հասավ իր հզորության գագաթնակետին։

964—969 թվերին Նիկեփորոս Բ-ը, հաղթական մեծ կռիվներից հետո, տիրեց Արևելյան Կիլիկիային և Հյուսիսային Ասորիքին և

---

[1] Տե՛ս *H. Gelzer*, Abriss der byzantinischen Kaisergeschichte, էջ 980։

*նվաճեց մի շարք այլ քաղաքների հետ նաև հռչակավոր Անտիոք քաղաքը, որն ավելի քան երեք դար գտնվում էր արաբների տիրապետության տակ։ Խոշոր հաջողություններ ունեցավ Արևելքում նաև Հովհաննես Ա. Չմշկիկը, որը 972—975 թվերին նվաճեց այստեղ, Միջագետքում ու Չորրորդ Հայքում՝ Մծբինը, Ամիդը և Ֆարկին-Տիգրանակերտը, իսկ Ասորիքի հարավում՝ Հիերապոլիսը, Ապամեան, Եմեսան, Հելիոպոլիսը և Բեյրութը։*

*Ինչպես վկայում է Գեորգիոս Համարտոլոսի ժամանակագրության շարունակողը, Բյուզանդիայի զորեղացումը և նրա հաղթական առաջխաղացումը ո՛չ միայն սարսափահար էին արել արաբներին ու պարսիկներին, այլև երկյուղ էին ներշնչել նաև հայերին*[1]*։ Հայաստանի «թագավորություններն» ու իշխանությունները սկսել էին արդեն վախենալ իրենց արևմտյան հարևանից։ Նրանք հետըզհետե համոզվում էին, որ Բյուզանդիայի ռազմական ու քաղաքական դրության ամրացումը Հայկական լեռնաշխարհի հարավում ու արևմուտքում կարող է կորստաբեր լինել և իրենց համար։*

*Եվ, իրապես, հաղթական Բյուզանդիան դեռևս Նիկեփորոս Բ-ի և Հովհաննես Ա Չմշկիկի մեծամեծ հաղթությունների ժամանակ ուզեց փոխել իր ժամանակավոր խաղաղ քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ և սկսեց ագրեսիվ քայլերի դիմել հայկական իշխանությունների հանդեպ։ Նիկեփորոս Բ-ի արևելյան մեծ արշավանքների ժամանակ (964—969) վախճանվել էր Տարոնի Բագրատունի իշխան Աշոտ Պատրիկը (+966/7) և նրա մահից հետո Տարոնը միացվեց կայսրությանը*[2]*։ Սակայն լեռնային Սասունը չենթարկվեց բյուզանդական իշխանությանը և պահպանեց իր ազատությունն ու անկախությունը։*

*Մեծ վտանգ էր սպառնում հայկական իշխանություններին նաև Հովհաննես Ա Չմշկիկի արևելյան արշավանքի ժամանակ։ Երբ բյուզանդական այս կայսրը 974 թվին*[3] *եկավ Արևելք արաբների դեմ պատերազմելու՝ նա հանկարծ իր ճանապարհը փոխեց և,*

---

[1] Տե՛ս *Georgii monachi*, dicti Hamartoli, Chronicon, ed. *Edouard de Muralt*, Petropoli, 1859, էջ 834 և 861։

[2] Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբ., 1885, III. 8 (էջ 183) և *Georgios Kedrenos*, ed *I. Bekker*. Bonnae, 1838—1839, II, էջ 375։

[3] Այս արշավանքի տարեթիվը ճշտել է Անաստասևիչը. տե՛ս *D. N. Anastasevic*. Die Zahl der Araberzüge des Tzimiskes, Byzantinische, Zeitschrift, Bd. XXX, Leipzig—Berlin, 1929/30, էջ 400—405։

սպառնական դիրք բռնելով հայկական իշխանությունների հանդեպ՝ բանակեց Տարոնում Այծյաց բերդի դիմաց։ Այս իմանալով, վկայում է Մատթեոս Ուռհայեցին, Կապանի, Աղվանքի, Վասպուրականի, Կարսի և Անձևացիների ու Սասունի թագավորներն ու իշխանները ժողով արին Բագրատունի Աշոտ Գ թագավորի մոտ և իսկույն պատրաստվեցին պատերազմի ու 80.000 զորքով բանակ դրին Հարքում։ Կայսրը, ակնածելով այդ մեծ ուժից, համաձայնություն կնքեց Աշոտ Գ-ի հետ և, ստանալով նրանից 10.000 օգնական զորք՝ Հայաստանի սահմաններից հեռացավ[1]։

Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը Վրաստանի և Հայաստանի հանդեպ ավելի ուժգին թափով առաջ տարվեց Բազիլեյոս Բ-ի (976—1025) իշխանության ժամանակ։

Անգլիացի բյուզանդագետ Ջ. Ֆինլեի ենթադրությամբ, Բազիլեյոս Բ-ի կառավարչական քաղաքականության գլխավոր նպատակըն է եղել ամրացնել պետական վարչության կենտրոնացումն ու միությունը և վերջնականապես ընկճել բուլղարներին ու սլավոններին, որոնք լեզվական ազգակցության պատճառով միացել էին և միաբան էին նմանապես իրենց անհաշտ ատելությամբ դեպի կայսերական կառավարությունը[2]։

Միաձուլման ու կենտրոնացման այս քաղաքականությունը, որ հաջողությամբ գործադրվել էր Արևմուտքում՝ նույն այս Բազիլեյոս Բ-ի ժամանակ, սկսվեց կիրառվել նաև Անդրկովկասում՝ Վրաստանի ու Հայաստանի նկատմամբ։

Իր թագավորության առաջին կեսում Վրաստանի և Հայաստանի գործերին Բազիլեյոս Բ-ը գրեթե չմիջամտեց, պարզ այն պատճառով, որ շարունակ զբաղված էր իր դեմ հարուցվող ապստամբությունների ընկճումով, նաև Օխրիդայում հաստատված Բուլղարական թագավորության նվաճումով։

Առաջին անգամ այդ հարմար առիթը նա ունեցավ Տայոց իշխան Դավիթ Կյուրապաղատի մահից հետո (1000 թվին)։ Չունենալով ժառանգ՝ Կյուրապաղատը կտակ էր արել և հանձնարարել իր երկիրը Բազիլեյոս Բ-ին։ Օգտվելով այս հանգամանքից՝ Բազիլեյոս Բ-ը, որն այդ ժամանակ ձմեռում էր Կիլիկիայի Տարսոն քաղաքում՝ այժմյան Մալատիայի ու Բալուի վրայով եկավ Երզնկա ու այնտեղից բարձրացավ Տայքի Հավճիչ քաղաքը, որը գտնվում էր

[1] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, Վաղարշապատ. 1898, էջ 17—18։

[2] Տե՛ս *George Finlay*, A history of Greece, Oxford, 1877.

Աղորդացփոր գավառում։ Այդ ուղևորության ժամանակ նրան ներկայացան Ծրղնկայում և Հավճիճում Նփրկերտի ամիրան, վրաց Գուրգեն թագավորը և սրա որդին՝ Աբխազների Բագարատ Գ թագավորը, որոնց նա ընդունեց մեծարանքով և տվեց առաջին երկուսին մագիստրոսության տիտղոս, իսկ վերջինին՝ կյուրապաղատության[1]։ Այս տիտղոսները բաժանելիս՝ բյուզանդական կայսրները, ըստ երևույթին նկատի ունեին, որ տեղական իշխանավորները, ստանալով իրենցից այս տիտղոսները՝ հպատակվում են իրենց ու ճանաչում Բյուզանդիայի գերիշխանությունը։

Հավճիճից Բազիլեյոս Բ-ը իջավ Բասենի և Հարքի վրայով Մանազկերտ ու այստեղից Ապահունիքի միջով և այժմյան Ալաշկերտի մոտով վերադարձավ Տայք։ Այս շրջանները՝ Բասենը, Հարքը և Ապահունիքը՝ 10-րդ դարի վերջում, ինչպես վկայում է Ասողիկը[2], գտնվում էին Դավիթ Կյուրապաղատի իշխանության տակ, ուստի և նրա կտակի համաձայն միացվելու էին այժմ Բյուզանդիային։

Բազիլեյոս Բ-ի այս նոր ուղևորության ժամանակ նրա մոտ էին եկել և նրա հովանավորությունն էին հայցել Կարսի Աբաս թագավորը և Վասպուրականի Սենեքերիմ թագավորն ու նրա եղբայր Գուրգենը։ Ասողիկի վկայությամբ՝ կայսրը, առնելով նրանց իր պաշտպանության տակ՝ հրովարտակներ էր ուղարկել շրջակա երկրների ամիրաներին, որ նրանք չհարձակվեն ու չնեղեն Վասպուրականը։

Բագրևանդում Վաղարշակերտ-Ալաշկերտի մոտ Բազիլեյոս Բ-ը բանակ էր դրել և սպասում էր, որ իր մոտ կգա և իրեն հավատարմություն կհայտնե նաև Բագրատունի Գագիկ Ա-ը։ Սակայն Շիրակ-Անիի այս հզոր ու հեռատես թագավորը իր համար այդ նվաստացուցիչ համարեց և աշխատեց պահպանել իր թագավորության անկախությունը[3]։

Վերադառնալով Տայք՝ Բազիլեյոս Բ-ը գրավեց Դավիթ Կյուրապաղատի կտակած գավառները, բերդերը և քաղաքները։ Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ՝ կայսրության կցված այս երկրում դատական և վարչական իշխանությունը հանձնվել էր բյուզանդական պաշտոնյաների։

---

1 Տե՛ս Ասողիկ, III, գլ. ԽԳ և «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, գլ. Ա։

2 Ասողիկ, III, գլ. ԺԵ. ԼԸ, ԽԱ։

3 Տե՛ս նույն տեղում, III, գլ. ԽԳ և ԽԶ։

«Եվ նա [Բազիլեյոս Բ-ը],— ասում է Լաստիվերտցին,— կարգում է նրանց [գավառների, բերդերի ու քաղաքների] վրա գործակալներ, դատավորներ և վերակացուներ»։

[«Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»][1]։

Լաստիվերտցու վկայությունից կարելի է եզրակացնել, որ այս գավառները քաղաքականապես և վարչականապես միացվել էին Բյուզանդական կայսրության այնպես, ինչպես այդ տեղի էր ունեցել Բուլղարիայի նկատմամբ։

Միացված երկրի քաղաքական դրության ու ներքին կացության արմատական այս հեղաշրջումը, բնականաբար, առաջ պիտի բերեր այդտեղ դժգոհների մի մեծ խումբ, որոնք կորցնում էին իրենց դարավոր հին իրավունքները և նախկին արտոնությունները։ Այս հեղաշրջումը, ուղղված լինելով առաջին հերթին տեղական ազնվականության տիրական իրավունքների դեմ՝ հարկադրելու էր Բյուզանդիային զսպել կամ չեզոքացնել այդ ազնվականությունը։ Դժվար չէ, ուրեմն, կռահել, որ երկրի բնական տերերի չեզոքացման նպատակով էր, հավանորեն, գործադրվում ազնվականության տեղափոխումների այն քաղաքականությունը, որ Վրաստանում, և ապա նաև Հայաստանում, հետզհետե ստացավ խիստ մեծ ծավալ։

Դավիթ Կյուրապաղատի երկրի միացումը կայսրության՝ սկիզբն էր քաղաքական այն նոր ընթացքի, որին հետևելու էր Բյուզանդիան Վրաստանի և Հայաստանի հանդեպ։

Ինչպես և պետք էր սպասել, երբ Բազիլեյոս Բ-ը և բյուզանդական զորքը հեռացան Դավիթ Կյուրապաղատի երկրից (1001 թ.), զսպված դժգոհություններ երևան եկան ամենաբուռն կերպով։ Խիստ դժգոհ էր մնացել նույնպես և Վրաց Գուրգեն թագավորը, նաև այն պատճառով, որ կայսրը իրեն տվել էր ո՛չ թե կյուրապաղատության, այլ միայն մագիստրոսության տիտղոս։ Վրաց թագավորը կայսեր հեռանալուց հետո ներխուժեց իր զորքերով Տայք և գրավեց այստեղ մի քանի շրջաններ[2]։ Բայց շուտով Բազիլեյոս Բ-ի զորավար մագիստրոս Կանիկլը նրա հետ խաղաղություն կնքեց, ըստ երևույթին, որոշ զիջումների գնով։

Վրաց Գուրգեն թագավորի (+1008) և նրա որդու ու հաջորդի Բագարատ Գ-ի (+1014) մահից հետո՝ Աբխազիայի ու Վրաս-

---

[1] Արիստակես Լաստիվերտցի, գլ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 5։
[2] Ասողիկ. III, գլ. ԽԴ։

*տանի թագավորական գահը ժառանգեց վերջինիս որդին, Գեորգին, որն իր թագավորության առաջին տարիներում գրավեց Բյուզանդական Տայքում նոր շրջաններ։ Արաբական պատմագիր Եահյա Անտիոքացին, որը ժամանակակից էր այդ անցքերին՝ պատմում է, որ երբ Բազիլեյոս Բ-ը պատերազմում էր բուլղարների դեմ (1014—1019) և ժամանակ չուներ կարգավորելու կայսրության հարաբերությունները արևելյան երկրների հետ, Գեորգի թագավորը, օգտվելով այդ հանգամանքից՝ ներխուժել էր Տայք և հեշտությամբ նվաճել էր այդ շրջանները, որ կայսրը միացրել էր Բյուզանդիային Դավիթ Կյուրապաղատի մահից հետո[1]։*

*Սակայն շուտով Բազիլեյոս Բ-ը, որը Բուլղարիայի նվաճման գործը վերջացրել էր՝ իր ուշադրությունը ամբողջովին կենտրոնացրեց Արևելքի գործերի վրա։ 1021/22 թվին նա նորից եկավ անձամբ Արևելք և պահանջեց Գեորգիից, որ նա հնազանդի իրեն և վերադարձնե Բյուզանդիային այն բոլոր բերդերն ու հողամասերը, որոնք կցված էին Վրաստանին Դավիթ Կյուրապաղատի բաժնից։ Գեորգիի համառ դիմադրությունը կայսրն ընկճեց դաժան ու արյունախանձ վճռականությամբ և ավերեց այժմյան Կարս-Արդահանի և Ախալքալաքի կողմերում 12 գավառ, սրի անցկացնելով ամբողջ բնակչությունը։ Սպանված բնակչության թիվը Եահյա Անտիոքացու մոտ ցույց է տրված մոտավորապես 200.000։ Պարտված Գեորգին 1023/24 թվին ստիպված եղավ Բազիլեյոսից խաղաղություն աղերսել, իհարկե, այն պայմաններով, որ առաջադրել էր իրեն կայսրը։*

*Այս արյունահեղ անցքերից մի քանի տարի առաջ մեռել էր Շիրակ-Անիի թագավոր Գագիկ Ա Բագրատունին (+1020) և Հայաստանում գահակալական վեճ ու խռովություններ էին ծագել նրա որդիների՝ Հովհաննես-Սմբատի ու Աշոտի մեջ։ Այդ երկպառակությունները Բյուզանդական կայսրության քաղաքական նպատակների համար ավելի քան ձեռնտու էին. և, իրավի, շուտով Բյուզանդիայի գերիշխանությունը տարածվեց և այստեղ։*

*Ներքին խռովությունների ընթացքում Աշոտը խնդրել էր Բյուզանդիայից օգնական զորք, որի աջակցությամբ նա կարողացել էր զսպել իր հակառակորդներին և ընդարձակել էր իր իշխանության սահմանները։ Այդ օգնությունը նա ստացած կլիներ, անշուշտ,*

---

[1] *Տե՛ս В. Розен,* Император Василий Болгаробойца. стр. 67. *Գեորգիի ներխուժման մասին Տայք Լաստիվերտցին ոչինչ չէ հաղորդում. վերոհիշյալ անցքերը նրա մոտ պատմված են այլ կերպ։*

*կայսրությանը հնազանդելու և նրա գերիշխանությունը ճանաչելու պայմանով։*

*Աշոտի եղբոր Հովհաննես-Սմբատի համար, որը, ինչպես վկայում է բյուզանդական ժամանակագիր Կեդրենոսը[1], վրաց Գեորգի թագավորի հետ մասնակցել էր կռիվներին Բազիլեյոս Բ-ի դեմ՝ ստեղծվում էր այժմ խիստ ծանր վիճակ։ Սարսափած այն արհավիրքներից, որոնց ենթարկվել էր Գեորգիի երկիրը՝ Հովհաննես-Սմբատը ինքը ևս ապավինեց Բյուզանդիայի հովանավորությանը և իր մահից հետո կտակեց Անի քաղաքը և իր ամբողջ երկիրը Բազիլեյոս Բ-ին։*

*Հովհաննես-Սմբատի այս կտակի պատճառը և շարժառիթները պատմական աղբյուրները բացատրում են տարբեր կերպով։*

*Արիստակես Լաստիվերտցին պատճառ է բերում Հովհաննես թագավորի անժառանգ լինելը։*

> *«Բայց այդ ժամանակ,— ասում է նա,— գրվեց հայերի կորստյան գիրը և նամակը։ Հովհաննեսը պատվեր էր տվել Հայրապետին, թե գրե գիր և տուր իբրև կտակ թագավորին, որ ես իմ մահից հետո իմ քաղաքներն ու երկրները կտամ նրան իբրև ժառանգություն. նա չուներ որդի՝ ժառանգ թագավորության, որովհետև որդին վախճանվել էր և չէր ապրել մինչև հոր պատվատիտղոսը ստանալը»։*
>
> *[«Բայց անդ եղև Հայոց կորստեան գիր և նամակ. քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր Հայրապետին, եթէ գրէ գիր և տո՛ւր կտակ թագաւորին, զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն. քանզի իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեանն. վասնի զի որդին նորա վախճանեցաւ և ոչ ժամանեաց ի պատիւ հօրն»][2]։*

*Մատթեոս Ուռհայեցին մատնանշում է, ընդհակառակը, որ Անին ու Կարսը պահանջել էր Բազիլեյոս Բ-ը։*

> *«Հայոց ՆՀ թվին [=1021],— ասում է նա,— Վասիլն անթիվ զորքով եկավ Արևելք և խնդրեց Հայոց թագավորից Անին ու Կարսը։ Եվ Հովհաննեսը, Գագիկի որդին, որոշեց տալ իր թուլասրտության պատճառով»։*
>
> *[«Ի թուականութեանս Հայոց ՆՀ ելանէր Վասիլն բա-*

---

[1] Կեդրենոս, *Ժամանակագրություն, Բոնն, 1838, II, էջ 556*։

[2] Արիստ. Լաստիվ., գլ. *Բ*, էջ *17*։

ընելս անթիւ զօրօք և խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի և զԿարս։ Եւ Յովհաննէս որդին Գագկայ խորհեցաւ տալ վասն թուլութեան սրտին իւրոյ»]¹։

Իսկ Վարդան վարդապետը կտակի շարժառիթ համարում է այն, որ Հովհաննես-Սմբատին խիստ նեղում էր Վրաց թագավորը։

«Երբ Վասիլ կայսրն այս լսեց [Դավիթ Կյուրապաղատի մահը և կտակը], եկավ բանակ դրեց Կարնո դաշտում։ Եվ Հովհաննեսը, այդ իմանալով՝ վախեցավ և ուղարկեց նրա մոտ ընծաներով Պետրոս պատրիարքին, որին իր կենդանության ժամանակ կաթողիկոս էր օծել Անիում իր ձեռքով և մեծ հանդեսով Տեր Սարգիսը։ Այլև Հովհաննեսին նեղում էր Վրաց թագավորը. ուստի և նա պատրիարքին պատվեր տվեց, որ Անին տա գրով իր մահից հետո հոռոմներին, ինչպես այդ արել էր և կյուրապաղատը, եթե նա [Վասիլ կայսրը] պաշտպանե իրեն իր նեղիչներից»։

[«Զոր լուեալ Վասլի կայսեր, գայ բանակի ի դաշտն Կարնոյ. զայս իմացեալ Հովհանիսի երկեաւ, և առաքէ առ նա զՊետրոս պատրիարգն պատարագօք, զոր տէր Սարգիս ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք ի յԱնի, մեծ հանդիսիւ։ Այլ և նեղէր զՅովանէս՝ արքայն Վրաց. վասն որոյ պատրիարգին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ ի Հոռոմս, որպէս և կիւրապաղատն, եթէ պահէ զնա ի նեղչաց իւրոց»]²։

Կտակի շարժառիթների մասին հայկական աղբյուրների այս ցուցումները, ինչպես արդեն նկատել են հայ պատմագետներից շատերը³, հավանական չեն։ Կտակի իսկական պատճառը մատնացույց է արված Կեդրենոսի մոտ, որը պարզ կերպով վկայում է, որ Հովհաննես-Սմբատը սարսափել էր և վախենում էր կայսեր վրեժխնդրությունից, որովհետև, լինելով Վրաց թագավորի դաշնակիցը, ինքը ևս օգնել էր սրան վերոհիշյալ պատերազմի ժամանակ։

---

¹ Մատթ. Ուռհայեցի, էջ 49։

² Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, գլ. ԾԲ, էջ 93։

³ Տե՛ս Կարապետ Վ. Շահնազարյանց. Ծրագիր պատմության Հայաստան աշխարհին, Տփխիս, 1913, էջ 39—40. *Akulian A.*, Einverleibung armenischer Territorien durch Byzanz, Grüningen, 1912, էջ 57 և ուրիշ.,

«Երբ Գեորգին, Աբխազների վեհապետը,— պատմում է Կեդրենոսը[1],— զենքերը շարժեց հոռոմների դեմ՝ նրան դաշնակից էր նաև Հովհաննեսը, որն Անիի երկրի իշխողն էր։ Իսկ երբ, ինչպես մի փոքր առաջ ասվեց, Բազիլեյոս թագավորը, գալով զորքերով Իբերիա՝ կռվեց Գեորգիի դեմ և սրան փախուստի մատնեց ու ջարդեց՝ Հովհաննեսը, վախենալով թե գուցե թագավորը, բարկացած լինելով իր վրա կռվին մասնակցած լինելու համար՝ անողոք կերպով իրեն կպատժե, վերցնելով քաղաքի բանալիները՝ ինքնաբերաբար անցավ թագավորի կողմը ու կամավոր կերպով նրան անձնատուր եղավ և բանալիները հանձնեց նրան[2]։ Իսկ կայսրը, երբ հանդիպեցին իրար, ընդունեց նրան, պատվեց մագիստրոսի տիտղոսով և նշանակեց նրան ցմահ Անիի և այսպես կոչված Մեծ Հայաստանի պետ։ Կայսրը նրանից պահանջեց գրավոր փաստաթուղթ, որ նրա մահից հետո այդ ամբողջ իշխանությունը կփոխանցվի իր իրավասության տակ և այդ երկիրը կդառնա մաս հոռոմների պետության։ Եվ այդ այդպես եղավ»։

1040/41 թվին մեռան Հովհաննես-Սմբատը և նրա եղբայր Աշոտը։ Նրանց մահից հետո՝ Միքայել Դ Պափլագոնացի կայսրը (1034—1041 դեկտ. 10) պահանջեց, որ Հովհաննես-Սմբատի երկիրը, վերջինիս կտակի համաձայն, հանձնվի Բյուզանդիային։ Սակայն թեև հայերը կուսակցությունների էին բաժանված և հույները Հայաստանում ունեին կողմնակիցների մեծ խումբ՝ Միքայել Դ-ը չկարողացավ նվաճել Անին ո՛չ խաղաղ բանակցությունների միջոցով, ո՛չ էլ բյուզանդական զենքի ուժով[3]։

1042 թվին Բագրատունիների կողմնակից հայ իշխանները, որոնց առաջնորդն էր Վահրամ Պահլավունին, միացան ու թագավոր կարգեցին Աշոտ Բագրատունու որդուն՝ պատանի Գագիկին։

---

[1] Kedrenos, II, էջ 536—537։

[2] Հայկական աղբյուրների վկայություններից հայտնի է, որ Հովհաննես-Սմբատի հանձնարարությամբ Բազիլեյոս Բ-ի մոտ գնացել էր 1022/23 թվին և հանձնել էր նրան թագավորի գրությունը Պետրոս կաթողիկոսը։

[3] Պատմաբաններից ոմանք հույների առաջին հարձակումն Անիի վրա թյուրիմացաբար ենթադրում են Միքայել Ե Կալափատեսի ժամանակ, որի իշխանությունը, ինչպես հայտնի է, տևել էր միայն չորս ամիս (1042 թվի դեկտ. 10-ից մինչև 1042 թվի ապր. 21-ը), տե՛ս J. Morgan, Histoire du peuple arménien, էջ 150. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, էջ 126 և ուրիշ.։

*Բագրատունյաց թագավորությունը, ազատվելով խառն ու անտերունչ դրությունից, սկսեց ուշքի գալ և զորեղանալ։ Բյուզանդիայի հանդեպ Գագիկ Բ-ը պատրաստ էր հպատակվել կայսեր և ընդունել նրա գերիշխանությունը։ Սակայն Բյուզանդիայի Կոստանդին Թ Մոնոմախոս կայսրը (1042—1054) պահանջում էր, որ կտակի համաձայն Անին հանձնվի կայսրությանը։ Կայսեր պահանջն էր, ուրիշ խոսքով, Բագրատունիների թագավորության վերացումը։*

*Գագիկ Բ-ի համար ուրիշ ելք չէր մնում, քան պահպանել իր թագավորությունը դիմադրության ու զենքի ուժով։ Շուտով Կոստանդին Թ Մոնոմախոսը Անիին բռնի կերպով տիրելու համար ուղարկեց Միքայել Ասիտեսին[1], որը կուսակալ էր Արևելքում։ Սակայն Գագիկ Բ-ը քաջությամբ դիմադրեց նրան ու սա ստիպված եղավ ետ քաշվել երկրից։ Այս անհաջողությունից հետո Կոստանդին Թ կայսրը Գագիկի դեմ ուղարկեց ավելի մեծ զորքով իր Նիկողայոս զորավարին և միաժամանակ նրա դեմ գրգռեց Դվինի Աբուլսուար ամիրային, որը հարձակվեց Գագիկի վրա արևելյան կողմից։ Բայց Գագիկն Աբուլսուարի հետ հաշտություն կնքեց, տալով նրան հարուստ ընծաներ, և բոլոր իր ուժերով հարձակվեց հույների վրա, որոնք, չկարողանալով դիմանալ հայերի կատաղի հարձակմանը, մատնվեցին փախուստի։*

*1041 թվից սկսած մինչև Անիին տիրելը (1045 թ.) հոռոմների զորքը, ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերտցին.*

> *«Չորս անգամ իրար հետևից մտան Հայոց աշխարհը, մինչև որ մարդաթափ արին ամբողջ երկիրը սրով, հրով ու գերությամբ»։*
>
> *[«Յայսոսիկ աւուրս հետամուտ եղեալ զօրքն հոռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով ու գերութեամբ»][2]։*

*Հույները չկարողացան առնել Անին իրենց զենքի ուժով։ Սակայն այն, ինչ որ չկարողացավ անել բյուզանդական զորքը, հեշտությամբ գլուխ բերեց Բյուզանդիայի փորձված դիվանագիտությունը։*

*1045 թվին Կոստանդին Թ Մոնոմախոսը հրավիրեց Գագիկ Բ-ին գալ Կոստանդնուպոլիս տեսակցելու իր հետ և խոստացավ*

---

1 Տե՛ս *Kedrenos*, II, էջ 558։

2 Արիստ. Լաստիվ., գլ Ժ, էջ 55—56, Թիֆլիս, 1912։

համաձայնության գալ նրա հետ և կնքել հաշտություն։ Բյուզանդիայի կողմնակից հայ ազնվականությունը, որի գլուխն ու ղեկավարն էր Վեստ Սարգիսը, հանդիսավոր ուխտով ու երդումով համոզեց երիտասարդ թագավորին, որ նա առանց վարանելու գնա կայսեր մոտ և որ իրենք պատրաստ են պաշտպանելու նրա իրավունքներն ու թագավորությունը։

Բյուզանդիայի ու նրա հայ կողմնակիցների այս նենգ դիվանագիտական խաղը հաջողվեց և ունեցավ այն հետևանքը, որ Կոստանդին Թ Մոնոմախոսը պահեց Գագիկ Բ-ին Կոստանդնուպոլսում ու մի տարի չանցած հույները գրավեցին Անին։

Աղբյուրների վկայություններից երևում է, որ Բյուզանդիայի տիրապետության հակառակորդ հայ իշխանները և Անի քաղաքի բնակչությունը, Գագիկ Բ-ի Պոլիս մեկնելուց հետո ևս, շարունակել էին իրենց հերոսական պայքարը ընդդեմ հույների։ Վրաց Քարթլիս-ցխովրեբա ժամանակագրության 11-րդ դարի անցքերի Անանուն հեղինակը վկայում է, որ 1045 թվին, երբ Գագիկ Բ-ը խաբեությամբ տարվել էր Պոլիս՝ անեցիներն Անին տվել էին Վրաց Բագարատ Դ թագավորի մորը, Մարիամ թագուհուն, որը Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու դուստրն էր և Բագրատունի Գագիկ Ա թագավորի թոռը[1]։ Իսկ Լաստիվերտցին նմանապես վկայում է, որ քաղաքի գլխավորներն Անիում, երբ նրանք տեսան, որ Գագիկ Բ-ին հույներն արգելեցին Պոլսում, մտածեցին տալ քաղաքը կամ Աբխազիայի Բագարատ Դ թագավորին, որը, ինչպես ասացինք, Մարիամ թագուհու որդին էր, կամ Լոռու և Աղվանքի թագավոր Բագրատունի Դավիթ Անհողինին և կամ նույնիսկ Դվինի ամիրա Աբուլսուարին, որի կինը Դավիթ Անհողինի քույրն էր[2]։

Բյուզանդական կայսրությունը սակայն այդ ժամանակ շատ ուժեղ էր և անեցիների ջանքերը պահպանելու Շիրակում Բագրատունիների տոհմի շառավիղների իշխանությունը չէին կարող հարկավ հաջողություն ունենալ։ Գագիկ Բ-ին մայրաքաղաք կանչելուց հետո հույները, Պետրոս կաթողիկոսի և իրենց կողմնակից իշխանների աջակցությամբ, տեր դառան ո՛չ միայն Անի քաղաքի, այլև ամբողջ Շիրակ-Անիի թագավորությանը։

---

1 Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 206 և 138, նաև *И. Орбели,* Надписи Мармашена, Пг., 1904, стр. 3.

2 Տե՛ս Արիստ. Լաստիվ., գլ. Ժ, էջ 61։

Բագրատունիների այս թագավորության անկումից հետո Բյուզանդիայի տիրապետությունը Հայաստանում Հ. Գելցերը այսպես է բնորոշում.

> «Եթե կային Հայաստանում մարդիկ,— ասում է նա,— որոնք, ինքնախաբեությամբ կուրացած, կարծում էին, որ հունաց տիրապետությունը զորեղ մի պատվար կհանդիսանա հայոց քրիստոնեական կրոնին, հիմնովին զգալու էին իրենց սխալը։ Մի խումբ ընչաքաղց հույն կղերականներ գլուխ անցան եպիսկոպոսական հարուստ վիճակների և վանահայրությունների։ Անվերջ շարունակվեցին կրոնական հալածանքները ուղղափառ միաբնակների դեմ։ Պետրոս կաթողիկոսին կանչեցին մայրաքաղաք։ Երբ սրա հաջորդը մեռավ՝ արգելեցին նոր կաթողիկոսի ընտրությունը։ Յոթներորդ և հետագա դարերի բոլոր դառն փորձերը որևէ հետևվանք չէին ունեցել ոչինչ չսովորող և ոչինչ չմոռացող հույն հոգևորականության համար։ Բնորոշ է նաև, որ դեռևս չարաբաստիկ Ռոմանոս Դիոգենես կայսրը (1067—1071) իր արշավանքը սկսելուց առաջ երդվել էր, որ վերադառնալուց հետո կոչնչացնե հայկական հավատը, ուստի և հայերի վարդապետները աղերսալից աղոթում էին առ Աստված, որպեսզի կայսրը խայտառ ջախջախվի, ինչպես անհավատ Հուլիանոսը, որին նզովել էր սուրբ Բարսեղը։ Հայերի այս հուզված տրամադրությունը, որը գրգռարկել էր հունական խելացնոր եկեղեցական իշխանությունը՝ մեզ միջոց է տալիս հասկանալու սելջուկների հաջողությունների պատճառը»[1]։

Կրոնական անհաշտ ատելությունը խիստ դժվարացրեց, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Գելցերը, հայության և Բյուզանդիայի համերաշխ գործակցությունն Արևելքում, որ շուտով անհրաժեշտ էր դառնալու սելջուկյան արշավանքների ժամանակ։

Անկախ դրանից՝ Հայկական լեռնաշխարհի բնակչության ռազմական ու դիմադրական ուժը խիստ պակասում էր նաև Բյուզանդիայի վարչական ներքին քաղաքականության պատճառով։ Դեռևս Բազիլեյոս Բ-ի թագավորության ժամանակ՝ Հայաստանում, ինչպես Բուլղարիայում ու Վրաստանում, Բյուզանդիան աշխատում էր տեղափոխել հայ բնակչությունը, գլխավորապես, ազնվականությունը՝ Փոքր Ասիա և Միջագետք, գլխավորապես, քաղաքական ու վարչական հատուկ նպատակներով։

[1] Տե՛ս *H. Gelzer*, Abriss der byzantinischen Kaisergeschichte, էջ 1004—1005։

*Ստեփանոս Տարոնեցին վկայում է, որ 988 թվին*[1] *Բագիլեյոս Բ-ը իր իշխանության տակ գտնվող հայության մի մասը գաղթեցրել ու բնակեցրել էր Մակեդոնիայում այդ երկրի շենացման ու պաշտպանության համար*[2]*։*

*Նույն կայսրը, Դավիթ Կյուրապաղատի երկրին տիրելուց հետո, ինչպես վերև ասացինք, կարգել էր Տայքում բյուզանդական պաշտոնյաներ, իսկ բնիկ ազատներին տեղափոխել ու բնակեցրել էր կայսրության հունական մասերում*[3]*։*

*Արիստակես Լաստիվերտցու վկայությունից հայտնի է նույնպես, որ բյուզանդական-վրացական պատերազմի ժամանակ, 1021/1022 թվերին, գաղթեցրել ու բնակեցրել էին Խաղտյաց երկրում Բասենի Ոկոմի ավանի ու նրա շրջակա գյուղերի բնակիչներին*[4]*։ Նույն այդ պատերազմի ժամանակ՝ գերի էր տարվել Բյուզանդիա և Աբխազիայի ավերված գավառի բնակչությունը*[5]*։*

*Ավելի դեռ առաջ, 1016 կամ 1018 թվի թուրքական հրոսակների մեծ հարձակումից հետո, Վասպուրականի Սենեքերիմ թագավորը, զգալով որ անկարող պիտի լինի սեփական ուժերով պաշտպանելու իր երկիրը հարևան ամիրայությունների հարձակումներից, տվել էր իր թագավորությունը Բագիլեյոս Բ-ին և, ստանալով նրանից փոխարենը Սեբաստիա և Լարիսա քաղաքներն ու շրջակա գավառները՝ գաղթել էր այնտեղ իր որդիների, եզբորորդիների, ազգականների ու բազմաթիվ ժողովրդի հետ, հավանորեն, 1021 թվին*[6]*։*

*Ուշագրավ է այս գաղթի մասին, բացի վերոհիշյալ աղբյուրների վկայություններից, նաև Ծահյա Անտիոքացու հաղորդագրու-*

---

1 *Ասողիկի բնագրում ՆԼԵ թիվը պետք է ուղղել և կարդալ ՆԼԷ (=988)։*

2 *Տե՛ս* Ասողիկ, *III, Ի, էջ 201։*

3 *Նույն տեղում, III, ԽԳ, էջ 278 և* Արիստ. Լաստիվ., *գլ. Ա, էջ 5։*

4 Արիստ. Լաստիվ., *գլ. Բ, էջ 12։*

5 *Նույն տեղում, գլ. Բ, էջ 14—16։*

6 Թովմա Արծրունու *պատմության շարունակողի վկայությամբ՝ «փոխեցին զհայրենի տունսն իւրեանց Հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ ի թուին Հայկազնեան տումարին ՆՀ» (=1021, տե՛ս IV, ԺԲ, էջ 500, Թիֆլիս, 1917)։ Արիստակես Լաստիվերտցին դնում է այս գաղթը Փոկասի Ծռավիզ որդու ապստամբությունից (1022/23 թ.) երկու կամ երեք տարի առաջ (գլ. Գ, էջ 20)։ Մոտավորապես նույն թիվը մատնացույց է արված նաև Ծահյա Անտիոքացու ներքև մեջ բերված վկայության մեջ։ Սակայն 11-րդ դարի հույն պատմիչ Կեդրենոսը վկայում է, որ Սենեքերիմը պատրիկ աստիճանով Վասպուրականից փոխադրվել էր Սեբաստիա 1016 թվի հունվար ամսին (տե՛ս II, էջ 494)։ Հավանական է ըստ իս առաջին տարեթիվը։*

*թյունը, որը ժամանակակից էր այդ անցքերին։ Սրա կարևոր վկայությունից երևում է, որ Բազիլեյոս Բ-ին տվել էր իր երկիրը ո՛չ միայն Սենեքերիմ Արծրունին, այլև նրա Գուրգեն եղբոր մեծ որդին՝ Դերենիկը, որն այդ ժամանակ Անձևացյաց իշխանության թագավորն էր։*

> *«Ձմեռը մոտեցավ և Բազիլեյոս կայսրը,— վկայում է Եահյան,— ետ նահանջեց Տրապիզոն, որպեսզի զորքը ձմեռն այնտեղ անցկացնե, իսկ հետո կրկին ռազմի ելնե։ Եվ այդ ժամանակներում Վասպուրականի Սենեքերիմ թագավորը բոլոր իր բերդերը, կալվածները և Վասպուրականի ամբողջ երկիրը տվել էր Բազիլեյոս կայսրին։ Եվ տվել էր իր բերդերն ու ամրոցները սրան նաև Սենեքերիմի հարևանը, Իբն-ալ-Դայրանին։ Եվ կայսրն այդ բոլորը միացրեց իր պետությանը։ Եվ դրանց՝ բերդերի ու ամրոցների թիվն ավելի էր քան 40։ Կայսրը ստեղծեց դրանցից առանձին կառավարություն և բերդերի մեջ նստեցրեց պահապան զորքեր ու դրեց նրանց վրա կառավարիչներ։ Սենեքերիմին ու Իբն-ալ-Դայրանիին և սրանց ընտանիքներին ու ազգականներին նա տվեց իբրև փոխհատուցում ընդարձակ կալվածներ, մեծ դրամական գումարներ և բարձր տիտղոսներ»[1]։*

*Կոստանդին Ը կայսեր ժամանակ, մոտավորապես 1027 թվին, Վրաստանի կողմերն էր եկել Արևելքի վերակացու Նիկիտոս Ներքինին։ Լաստիվերտցու ասելով.*

> *«Սա պատիր խոսքերով երկրի ազատներից շատերին, հայրենիքից հանելով՝ ուղարկում է թագավորի արքունիքը։ Տեսնելով այդ և ուրախանալով՝ կայսրը պատվում է նրանց մեծամեծ պարգևներով ու իշխանական գահով և տալիս է նրանց կնքված շնորհագրերով ըստ արժանավորության իբրև հավիտենական ժառանգություն գյուղեր և ավաններ»։*

> *[«Որ եկեալ անցանէ ի գաւառն Վրաց, և պատիր բանիւք բազումս յազատաց աշխարհին հանեալ ի հայրենեաց՝ առաքէ ի դուռն թագաւորին։ Զոր տեսեալ և ուրախացեալ՝ մեծամեծ պարգևօք և իշխանական գահու պատուէ զնոսա, և տայ նոցա ըստ արժանեաց գեօղս և աւանս գրով և մատանեաւ ժառանգութիւն յաւիտենից»][2]։*

---

[1] *Տե՛ս Розен,* Император Василий Болгаробойца, стр. 62.

[2] *Արիստ. Լաստիվ., գլ. Ե, էջ 31։ Նիկիտոս անունը թվում է աղճատված։ Պետք է լինի, հավանորեն, Նիկողեմոս կամ Նիկոմիդես։*

*Գագիկ Բ-ի թագավորության նվաճումից հետո՝ բանի կամ կամավոր գաղթը ստացել էր ավելի ևս մեծ չափեր։ Հայ իշխանները, վկայում է Արիստակես Լաստիվերտցին, թողին իրենց հայրենի ժառանգությունը և բնակվեցին օտար երկրում. հայ գավառներն ավերվեցին և «գնացին յաւար տանն Յունաց»*[1]։

*Երբ 1045 թվին ստիպեցին Գագիկ Բ-ին հանձնել Բյուզանդիային իր թագավորությունն ու Անին և ստանալ փոխարենը Պիզու փոքրիկ քաղաքը Կապադովկիայում և կալվածներ Լիկանդոս գավառում՝ տեղափոխվեցին նրա մոտ իր ազգականներն ու ազնվականության մի մասը*[2]։

*1045 կամ 1046 թվին Վասակ Պահլավունու որդին՝ մեծ իշխան Գրիգորը ևս հանձնեց Կոստանդին Թ Մոնոմախոսին Բջնին ու իր հայրենի ժառանգությունը և ստացավ նրանից մագիստրոսության աստիճան և քաղաքներ ու գյուղեր Միջագետքում*[3]։ *Գրիգոր Մագիստրոսի հետ միասին, հավանաբար, գաղթել էին այնտեղ ո՛չ միայն նրա ազգականներից շատերը, այլև իր բաժնի ազատների ու բնակչության մի մասը։*

*Տեղահանվում ու գաղթում էր, գլխավորապես, երկրի տիրող դասը, իշխանական տոհմերն ու ազատները, բայց սրանց միանում էին ու հեռանում նաև ռամիկ բնակիչները։ Համատարած այս գաղթի պատճառով Հայաստանը հետզհետե ամայանում էր, բնակչության թիվը զգալի չափով նվազում, ցրվում էին զանազան կողմեր և հայ զորքերը։*

> *«Հեծելազորը,— ասում է Լաստիվերտցին,— շրջում էր անտերունչ՝ ոմանք Պարսկաստանում, ոմանք Հունաստանում և ոմանք էլ Վրաստանում։ Դուրս էր ելել հայրենի երկրից նաև ազատների սեպուհ գունդը»։*
>
> *[«Հեծելազօրն անտէրունչ շրջեալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյնս, և ոմն ի Վիրս։ Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց»]*[4]։

*Այս բոլորը կատարվում էր Հայաստանում Բյուզանդական կայսրության անդուլ ջանքերով և քաղաքական ու վարչական հատուկ նպատակներով։*

*Քաղաքական տեսակետից, ինչպես տեսանք, հայ իշխանական*

---

1 Արիստ. Լաստիվ., գլ. Ժ, էջ 51։
2 Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 95 և Վարդան վրդ., գլ. ԾԵ, էջ 99։
3 Տե՛ս Արիստ. Լաստիվ., գլ. Ժ, էջ 61 և Վարդան վրդ., գլ. ԾԵ, էջ 99։
4 Արիստ. Լաստիվ., գլ. Ժ, էջ 58։

տոհմերի և ազնվականության տեղահանությունը Հայրենի երկրից ուներ շատ խոշոր նշանակություն։ Տեղահանված այս ազնվականությունը դարավոր ու ժառանգական իրավունքներով կապված էր իր Հայրենի Հողի ու միջավայրի Հետ և ուներ բնական ձգտում պաշտպանելու իր «տիրական» իրավունքները և պատեհ դեպքում ձեռք բերելու նորից անկախություն, մինչդեռ օտար երկրում բոլոր իրենց իրավունքներն ու արտոնությունները նրանք ստանում էին բյուզանդական կայսրներից, ուստի և դյուրությամբ կենթարկվեին կենտրոնական կառավարությանը և կծառայեին կայսրության և միացյալ պետականության ընդհանուր շահերին։ Քաղաքական շատ հին միջոց էր այս, ծանոթ ու գործադրված ասորա-բաբելոնական ժամանակներից։

Այդ հին միջոցը մեծ չափերով գործադրվում էր այժմ հայերի, բուլղարների և վրացիների նկատմամբ։ Բուլղարներին տեղափոխում էին Արևելք և մասամբ Հայաստան, իսկ հայերին ու վրացիներին՝ Միջագետք, Կապադովկիա, Բուլղարիա, կամ արևմտյան ուրիշ շրջաններ։

Քաղաքական նկատառումներից անկախ՝ տեղահանությունները որոշ նշանակություն ունեին նաև վարչական ու տնտեսական տեսակետից։ 9-րդ դարից սկսած՝ Փոքր Ասիայում և, գլխավորապես, նրա արևելյան նահանգներում, անընդհատ զարգանում ու աճում էր բարձր ազնվականության խոշոր կալվածատիրությունը ի հաշիվ մանր հողատիրության և ազատ գյուղացիության։ Մեծ կալվածներում հացահատիկների մշակման փոխարեն տարածվում էր անասնապահության տնտեսությունը, գերազանցապես, ստրուկների կամ ճորտերի աշխատանքով։ Տնտեսական-սոցիալական ներքին այս փոփոխությունը կայսրության համար վտանգավոր և սպառնական մի երևույթ էր, որը քայքայում էր երկրի տնտեսական զարգացումը, թուլացնում նրա ռազմական ու զորական ուժը և կերպարանափոխում բյուզանդական հին պետականությունը, դարձնելով նրան խաղալիք ազնվական խոշոր կալվածատերերի՝ իշխանավորների ձեռին։

Այդ երևույթի առաջն առնելու համար՝ բյուզանդական կայսրներից շատերը, մանավանդ, Բազիլեյոս Բ-ը, զանազան միջոցներով, աշխատում էր սահմանափակել խոշոր կալվածատիրության ծավալումը, զրկելով նրան կենտրոնացած պետականության դեմ պայքարելու հնարավորությունից։

Հայաստանի, Բուլղարիայի և Վրաստանի տեղափոխված

ազատներն էին, ըստ երևույթին, այն թարմ ու կենսունակ տարրը, որը ստվարացնելու էր մանր ազատանու թիվը և մատակարարելու էր կայսրության հավատարիմ պաշտոնյաներ և ուժեղ զորք։

Բյուզանդիայի քաղաքական ու տնտեսական այս նուրբ հաշիվները, որ թվում էին համապատասխան պետության շահերին, իրականության մեջ ո՛չ միայն չարդարացան, այլ, ընդհակառակը, նպաստեցին կայսրության գահավեժ կործանմանը։ Հայկական իշխանությունների միացումը կայսրության և հետզհետե սաստկացող կրոնական հալածանքը հայ եկեղեցու դեմ՝ ծայր աստիճան հուզեցին և գրգռեցին հայերին նոր իշխանության դեմ։ Բազիլեյոս Բ-ին հաջորդող կայսրները հայերի այդ անզուսպ ատելությունը փորձում էին արմատախիլ անել նոր և նոր հալածանքների միջոցով։ Եվ այսպիսով՝ այդ ատելությունն ավելի ևս խորացավ և վերածվեց արյունահեղ վրիժառու ընդհարումների։

Դառնալով Հայկական լեռնաշխարհի բացարձակ տերը՝ Բյուզանդիան այժմ ինքը պետք է պաշտպաներ Հայաստանի իր նոր սահմանները։ Նվաճված ու լքված հայ ազնվականությունը, որ մասամբ տեղահանված էր իր երկրից, չուներ, բնականաբար, իր նախկին ռազմական ուժը և կազմակերպությունը։ Կայսրությունը պետք է ապավիներ այժմ իր սեփական ուժերին, այն է՝ զանազան կողմերից Հայաստան բերված օտար վարձկան զորքերին, որոնց համար այս երկիրը ո՛չ հայրենի տուն էր, ո՛չ էլ հարազատ բնակավայր։

Եվ այս դրությունը ստեղծել էր ինքը Բյուզանդական կայսրությունը ռազմական ամենախոշոր նշանակությունն ունեցող արևելյան իր սահմանում և այնպիսի մի ժամանակ, երբ սելջուկյան թուրքերի ահռելի հրոսակները գտնվում էին արդեն Արևմուտքի շեմքին և սպառնում մահացու հարված տալու և կայսրությանը և Առաջավոր Ասիայի առաջադեմ կուլտուրային։

Բազիլեյոս Բ-ը, որը հայ իշխանությունների կայսրության հետ միացման ու ձուլման քաղաքականության գլխավոր նախաձեռնողն էր՝ իր հաջորդների համեմատությամբ ուներ նաև ռազմական խոշոր ընդունակություններ։ Լինելով տաղանդավոր զինվորական՝ նա ո՛չ միայն ընդունակ էր պաշտպանելու իր նոր գրաված երկրները, այլև կանխատես զգուշավորությամբ ամեն կերպ ամրացնում էր հարավ-արևելյան իր նոր սահմանները։

Սակայն նրա թույլ ու անզոր հաջորդները ո՛չ միայն անտարբեր ու անհոգ գտնվեցին արտաքին վտանգի հանդեպ, այլև իրենց



*Մարմաշենի եկեղեցին (XI դ.)։*



*Հաղպատավանքի գավիթը (XII դ.)։*

*անչափ ագահության պատճառով և, իբր թե պետական միջոցների խնայողության համար՝ արձակեցին հայերի և վրացիների 50.000 զորքը։*

> *«Հենց կարճ ժամանակից և փոքրիկ լեռնային պետությունները միացնելուց հետո,— ասում է Գելցերը,— Հռոմեական պետությունը պետք է ետ մղեր սելջուկների առաջխաղացումը, որոնք Տուղրուլ բեգի իշխանության տակ դառել էին Ասիայում հզոր ուժ։ Հունական խիստ չարչիական քաղաքականությունը խնայողություն էր անում, ինչպես սովորաբար, սխալ տեղում։ Նա ծանր հարկեր էր դրել նոր միացված լեռնային աղքատ գավառների վրա և արձակել էր 50.000 հայկական ու վրացական տեղական զորքը»*[1]*։*

*Այս խնայողությունն ու հարկային ծանր քաղաքականությունը կիրառելիս՝ հույները մոռանում էին, որ Հայկական լեռնաշխարհը, որը Առաջավոր Ասիայի ռազմական ու բնական ամենակարևոր դիրքն էր՝ Բյուզանդական կայսրության այն աքիլլեսյան գարշապարն է, որի ստացած վերքը կարող է մահացու լինել կայսրության ամբողջ կազմվածքի համար։*

*Եվ իրավի, թուլացնելով ու քայքայելով Հայաստանի բնակչության ռազմական ու դիմադրական ուժը՝ Բյուզանդիան ինքը անկարող եղավ պաշտպանել Հայաստանը։*

*Արևելքից արշավող թուրքական հրոսակները, անապատ դարձնելով հայերի երկիրը, իր դարավոր մշակույթով, իջան Հայկական լեռնաշխարհի վրայով Փոքր Ասիայի արգավանդ դաշտերը և այնտեղ առաջադեմ քաղաքակրթության ավերակների վրա հաստատեցին իրենց իշխանությունը, տարածելով հետզհետե այդ իշխանությունը նաև Կոստանդնուպոլսի և Բալկանյան թերակղզու վրա։*

*Բյուզանդական կայսրության տիրապետությունը Հայաստանում փոխարինվեց շուտով սելջուկյան թուրքերի իշխանությամբ։*

---

[1] *H. Gelzer*, Abriss der byzantinischen Kaisergeschichte, *էջ 1005*։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԹՈՒՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄԸ

1. Ցեղային տարբեր զանգվածների տիրապետությունը Մերձավոր Արևելքում։— 2. Թուրքական ցեղերի մեծ շարժումները արևելքից արևմուտք.— Քաղաքական նպաստավոր պայմանները նրանց առաջխաղացման համար։— 3. Սելջուկների իշխանության հաստատումը Խորասանում.— Պարսկաստանի նվաճումը և Բաղդադի գրավումը։— 4. Նախասելջուկյան թուրք հրոսակների արշավանքները Վասպուրականում։— 5. Սրանց նկարագիրը ըստ հայ աղբյուրների։— 6. Դեյլմիկների 1021 թվի արշավանքը։— 7. Սելջուկյան առաջին երկու արշավանքները Հայաստանում.— Արծն քաղաքի ավերումը։— 8. Հայերի դժգոհությունը Բյուզանդիայից.— հալածանքները հայ եկեղեցու դեմ։— 9. Մեծ կռիվը Բասենի դաշտում և հույների պարտությունը։— 10. Տուղրուլ բեգի արշավանքը և Մանազկերտի դիմադրությունը։— 11. Ավերածությունները Հայաստանում Տուղրուլ բեգի հեռանալուց հետո։— 12. Հայկական իշխանությունների մնացորդները Հարավային Հայաստանում։— 13. Սելջուկյան սուլթանությունը։

*Առաջավոր Ասիայի երկրներում դարեր շարունակ տեղի են ունեցել պարբերաբար կրկնվող ահռելի ընդհարումներ և մեծամեծ ավերածություններ։*

*Այդ ընդհարումների գլխավոր թատերաբեմերից էր Անդրկովկասը և առաջին հերթին, Հայկական լեռնաշխարհը։*

*7-րդ դարում գլուխ են բարձրացնում արաբական ցեղերը և իրենց իշխանությունն ու կրոնը տարածում Առաջավոր Ասիայի, գլխավորապես, արևելյան մասում։*

*Վերջապես, տեղի ունեցավ մի նոր փոփոխություն, թուրքական ցեղերի տիրապետությունը՝ ծայր առավ այստեղ 11-րդ դարում սելջուկ թուրքերի աշխարհակալությամբ։*

Սելջուկ Թուրքերի ցեղը ծագում էր Թուրքական ուզ կամ օղուզ կոչվող ցեղախմբից, սելջուկ էր անվանվում Սելջուկ անունը կրող իրենց առաջնորդի անունով։ Լինելով առավելապես խաշնարած ու քոչվոր ժողովուրդ՝ սրանք հեշտությամբ տեղափոխվում էին մի տեղից մյուսը իրենց ընտանիքներով ու անասուններով և վարում էին Թափառական կյանք։

Թուրքական ցեղերի շարժումն Արևելքից դեպի Եվրոպա մի անգամ արդեն անհաքեկել էր ամբողջ Արևմուտքը 5-րդ դարում մեր թվականությունից հետո։ Այդ մեծ շարժումը տեղի էր ունեցել Վոլգայի ու Հարավային Ռուսաստանի վրայով։ Հոների հանրածանոթ արշավանքն էր այդ Ատտիլայի առաջնորդությամբ։ Հին այդ ժամանակներումն արդեն Թուրքական ցեղերը նվաճել ու գրավել էին Հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հարուստ տափաստանները։ Վոլգայի վրայով Թուրքական զանազան ցեղերի գաղթը դեպի Արևմուտք պարբերաբար շարունակվել էր և հետագա դարերում։

11-րդ դարում տեղի ունեցավ Թուրքական ցեղերի նոր տեղաշարժը Արևելքից դեպի Արևմուտք, բայց այս անգամ ո՛չ միայն Վոլգայի, այլև Առաջավոր Ասիայի վրայով։ Համատարած այս մեծ շարժը սկսվեց նախ արևմտյան Թուրքության շրջանում։ Սրանց հաղթական առաջխաղացման համար Առաջավոր Ասիայի քաղաքական պայմաններն ավելի քան նպաստավոր էին։

10-րդ դարը, շնորհիվ Արաբական խալիֆայության Թուլացման ու քայքայման, քաղաքական ու կուլտուրական վերակենդանացման մի շրջան էր, Թե Անդրկովկասի և Թե իրանական ժողովուրդների համար։ Իրանում կազմվել էին այդ ժամանակ մանր և գրեթե անկախ իրանական իշխանություններ, որոնք Թեև կուլտուրապես առաջադիմում ու բարգավաճում էին, սակայն քաղաքականապես Թույլ էին և ուժասպառ էին լինում անվերջ կռիվների ու ներքին երկպառակությունների պատճառով։ Նրանց այս կռիվների ընթացքում Թուրքերը մեծ դեր էին կատարում և որոշ ազդեցություն էին ձեռք բերել, որպես վարձկան զորքեր։ Ճիշտ այնպես, ինչպես և գերմանացիները հռոմեական պետության անկման շրջանում։

Ինչպես հայտնի է, այդ եկվոր Թուրքերից էր ծագում նաև Գազնայի իշխան Սաբուկդիկինի որդին՝ Մահմուդը (998—1030), որը 11-րդ դարի սկզբում իր իշխանությանն էր ենթարկել պարսկա-արաբական պետությունների մեծագույն մասը և Հնդկաստանի հյուսիս-արևմտյան երկրները։ Բայց Մահմուդի մահից հետո

(1030) Նրա մեծ պետությունը, որի բաժան մասերը դեռևս չէին սերտորեն միաձուլվել՝ չկարողացավ դիմանալ սելջուկյան թուրքերի հաղթական հարձակումներին (1036—1040 թ.) և Մահմուդի հաջորդները ստիպված եղան նահանջել և ամփոփվել իրենց մեծ պետության հնդկական մասում։

Արդեն 11-րդ դարի երեսնական թվերին թուրքական արշավող ցեղերը հաստատվել էին Խորասանում և Մերվում։ Սրանց առաջնորդներն էին Սելջուկի թոռները՝ Տուղրուլ բեգը և նրա եղբայր Ջակիր բեգը։ Նոր ու նոր ներս խուժող թուրքական արշավախմբերը տարածվեցին այստեղից Պարսկաստանի զանազան կողմերը և ամեն ինչ իրենց շուրջը մատնեցին սրի, հրի և կողոպուտի։ 11-րդ դարի քառասնական թվերին սրանց վայրենի հրոսակները ցրվել էին հյուսիսային Պարսկաստանի և Ատրպատականի երկրները և հասել Բյուզանդական Հայաստանի սահմանները։

Առաջին հերթին սելջուկյան թուրքերը գրավել էին Պարսկաստանի հյուսիսային կողմերը, ուստի և նրանց հարձակումները Հայաստանի դեմ սկսվեցին ավելի շուտ, քան Պարսկաստանի վերջնական անկումը։ Պարսկաստանի հյուսիս-արևմտյան կողմերում գործում էին Տուղրուլ բեգը և նրա եղբայր Իբրահիմ Ենննալը, իսկ Ջակիր բեգն իշխում էր Խորասանում և այստեղից իր որդու՝ Ալփասլանի հետ նվաճում էր Պարսկաստանի արևելյան մասերը։

1059 թվին Գազնեվյան Մահմուդի Իբրահիմ թոռը, երկարատև ապարդյուն դիմադրությունից հետո՝ ստիպված եղավ խաղաղության դաշն կնքել Ջակիր բեգի հետ և զիջեց նրան Պարսկաստանի արևելյան երկրները մինչև Հինդուքուշ։ Եվ Տուղրուլ բեգը, որն արևմուտքում հետզհետե իր իշխանությանն էր ենթարկել Բուիդների պետությունը և 1055 թվին գրավել էր նաև Բաղդադը՝ Ջակիր բեգի մահից հետո (1059 թ.) դառավ բոլոր նվաճած երկրների միակ տերը։

Տուղրուլ բեգի զորեղ մրցակիցն ու անհանգիստ ախոյանն էր Իբրահիմ Ենննալը, որը կազմակերպել էր նրա դեմ զինվորական ապստամբություն։ Սակայն Տուղրուլ բեգը ջարդեց նրան Ալփասլանի օգնությամբ և 1059 թվին Իբրահիմ Ենննալը խեղդամահ արվեց սեփական իր աղեղով։

Համաձայն հայ պատմիչների հաղորդած վկայությունների՝ թուրք հրոսակները արդեն 1016 կամ 1018 թվին[1] արշավել էին Արծրունյաց թագավորության շրջանը։

[1] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 46 և ծան. 3 («ի յամս ՆԿԵ կամ ՆԿԷ»). Հայամավուրք, մարերի 25, տե՛ս Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադա-

*Ինչպես երևում է Թովմա Արծրունու պատմության շարունակողի անշուշտ չափազանցված վկայությունից, թուրքերը խոր տպավորություն էին թողել հայերի վրա իրենց արտաքին տեսքով ու պատերազմելու արտասովոր եղանակով։*

> *«Ապա մեզ վրա թագավորեցին, —ասում է այս պատմիչը,— մեր և մեր հայրերի մեղքերը և Աստված մեզ ու մնացածներին մատնեց անօրեն, արծաթաքաղց, եղեռնագործ և մեղսասեր Ելիմացոց զարմի ձեռքը, որ թուրքերի ցեղերն են. և նրանք տիրեցին աշխարհին Արևելից ծովեն մինչև Արևմտից ծովը. և չմնաց մինչևիսկ ո՛չ մի քարանձավ, որը չմատներ Աստված նրանց ձեռքը։ Եվ նրանք ունեին արյունարբու գազանների բնություն՝ սարսափելի. էին իրենց տեսքով, որովհետև նրանց դեմքերի կերպարանքը տեսնողներին զարհուրեցնում էր ու ահաբեկում։ Նրանց բնակարանները, ինչպես և վայրենի գազաններինը, լեռներն էին, դաշտերը ու անապատները և նրանք գիշակեր էին գազանների նման։ Նրանք չեն պատվում մեծամեծներին, չեն խնայում ծերերի ալիքները և պատկառելիությունը, չեն խղճում երիտասարդներին ու տղաներին, ո՛չ էլ խնայում են որևէ մեկի մանկությունը։ Չար ու դառնացող ժողովուրդ են, մի ժողովուրդ էին, որը չէր ուղղել իր սիրտը և չէր դարձրել առ Աստված իր հոգին»։*
>
> *[«Ապա թագաւորեցին ի վերայ մեր մեղք մեր և հարցն մերոց, և մատնեաց զմեզ Տէր և զմնացեալսն ի ձեռս անօրէն, արծաթակուրծ, եղեռնաթիւր և մեղսասէր զարմին Ելիմայ, որ են ազգք թուրքաց. և տիրեցին աշխարհի ի ծովէն արևելից մինչև ցծովն արևմտից, և ոչ մնաց ի նոցանէ մինչև ցքարանձաւ մի, որ ոչ մատնեաց Աստուած ի ձեռս նոցա. և նոքա ունելով զբնութիւն արիւնարբու գազանի. զի են ազգք ահաւոր տեսլեամբ, զի տեսիլ դիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողսն և ահաբեկ առնէ. և բնակութիւն նոցա ի լերինս և ի դաշտս և յանապատս, որպէս զվայրենի գազանաց. և են շաղղակերք որպէս զգազանս. ոչ պատուեն զմեծամեծս, ոչ խնայեն յալիս և ի հարկիսս ծերոցն, ոչ ողոր-*

---

*րանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 100 («Ն և ի ԿԵ թուականին մերոյ»=1016/1017)։ Ըստ երևույթին, Վասպուրականի Սենեքերիմ թագավորը Սեբաստիա էր գաղթել թուրք հրոսակների հարձակումից մի քանի տարի հետո։*

մին երիտասարդին և տղայոյն, ոչ խնայեն ի մանկութիւն ումեք, ազգ չար և դառնացող, ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ Աստուած զհոգի իւր»][1]։

Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է նաև, որ սրանք հերարձակ էին, որպես կանայք, և զինված էին աղեղներով, իսկ հայոց զորքերը չէին կարող իրենց պաշտպանել նրանց նետերից, որովհետև չունեին համապատասխան հանդերձանք։ Վասպուրականի հայ զորքը շարժվեց նրանց դեմ Սենեքերիմ թագավորի որդու Դավթի առաջնորդությամբ, սակայն ստիպված եղավ, մեծ կորուստ տալով, ետ նահանջել։ Թուրքերը շատ հմուտ նետաձիգներ էին և նրանց նետերից պաշտպանվելու համար անհրաժեշտ էր ունենալ հատուկ զգեստներ։

«Այս [ՆԿԵ=1016] թվին,— պատմում է Մատթեոս Ուռհայեցին,— տակնուվրա եղան առաքյալների և մարգարեների հիմնարկումները, որովհետև թևավոր օձերը եկան ու ուզեցին սլանալ Քրիստոսի հավատացյալների բոլոր երկրները. այս առաջին ելքն էր արյունարբու գազանների։ Այդ ժամանակները զորքեր հավաքեց անօրենների խուժադուժ ժողովուրդը, որն անվանում էին թուրք, և սրանք եկան մտան հայերի երկիրը, Վասպուրական գավառը, և անողորմ կերպով կոտորում էին սրով Քրիստոսի հավատացյալներին։

Այս եղելության լուրը հասավ ապա Սենեքերիմ թագավորին և իսկույն նրա ավագ որդին Դավիթը ժողովեց ազատների զորքը և եկավ թուրքերի բանակի դեմ։ Եվ նրանք իրար հետ բռնվեցին սաստկապես ահավոր կռվի։ Իսկ մինչև այդ ժամանակը հայերը բնավ չէին տեսել ձիավոր թուրք զորք։ Եվ երբ հանդիպեցին դրանց՝ տեսան, որ սրանք ուրիշ կերպարանք ունեն՝ աղեղնավորներ են և հերարձակ են, ինչպես կանայք։

Հայոց զորքերն այդ ժամանակ սովոր չէին պաշտպանվելու թշնամու նետերից. նրանք քաջաբար հարձակվեցին այլազգիների վրա և միահամուռ կերպով հանեցին իրենց սրերը պատյաններից. և հայոց քաջարի գունդը արիաբար դիմեց մարտի ու այլազգիներից շատերին կոտորեց։ Իսկ այլազգիները, նետեր արձակելով, հայոց զորքերից շատերին խոցելով վիրավորեցին։

---

[1] Տե՛ս Թովմա Արծրունի, IV, ԺԲ, էջ 496—497 (Թիֆլիս, 1917)։

*Եվ երբ այս ամենը տեսավ Շապուհը՝ ասաց Դավթին. «Ետ դարձի՛ր, թագավոր, թշնամու մոտից, որովհետև մեր զորքերի մեծագույն մասը վերքեր են ստացել նրանց նետերից. գնա՛նք և ընդդեմ այս զենքերի, որ տեսնում ենք այլազգիների մոտ՝ պատրաստենք նետերից պաշտպանող այլ զգեստներ»։ Իսկ Դավիթը, նկատի ունենալով իր մեծավոր լինելը՝ ամբարտավանաբար խիստ հպարտացավ և չէր լսում Շապուհին ու դուրս չէր գալիս կռվից։ Ապա Շապուհը բարկացած հարձակվեց Դավթի վրա և, խփելով բռունցքով թիկունքին՝ զոռով նրան ստիպեց ետ գալ. Շապուհը քաջ տղամարդ էր ու հզոր պատերազմող և դաստիարակն ու կրթողն էր Դավթի, ուստի և չէր վախենում նրանից։ Եվ այսպիսով նա ետ դարձրեց Դավթին զորքերի հետ միասին»։*

*[«Յայսմ ի թուականիս սասանեցաւ հիմունք առաքելականացն և մարգարէականացն, վասն զի օձք թեւաւորք հասին և կամէին ցոլանալ ընդ ամենայն աշխարհս հաւատացելոցս Քրիստոսի. այս է առաջին ելն արեանարբու գազանացն։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին խուժադուժ ազգն անօրինացն, որք անուանեալ կոչին Թուրք, և հասեալ մտանէին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին և անողորմ ի բերան սրոյ կոտորէին զհաւատացեալքս Քրիստոսի։*

*Յայնժամ հասանէր համբաւ կատարածիս այս առ թագաւորն Սենեքերիմ. յայնժամ աւագ որդւոյ նորա Դաւթի ժողովեալ զզօրս ազատացն հասանէր ի վերայ Թուրք բանակին. և հարան սաստկապէս ընդ միմեանս ահաւոր պատերազմաւ։ Իսկ մինչև յայնմ ժամանակին չէին բնաւ տեսեալ Թուրք զօրք հեծելոց. և ի հանդիպիլն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա. աղեղնաւորս և հերարձակս իբրև զկանայս. և յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինիլ ընդդէմ նետիցն. և քաջաբար ի վերայ այլազգեացն յարձակեցան և առ հասարակ մերկացուցին զսուսերն իւրեանց ի պատենիցն և արիաբար ի պատերազմ ընթանային արիական գունդն Հայոց և զբազումս յայլազգեացն սատակէին։ Իսկ այլազգիքն նետաձգութեամբ զբազումս ի զօրացն Հայոց վիրաւորէին խոցելով։*

*Եւ տեսեալ զայն ամենայն Շապուհ՝ ասէր ցԴաւիթ. «Դարձի՛ր, թագաւոր, յերեսաց թշնամեացս, վասն զի ի նե-*

*տիցս վիրաւորեալ եղեն մեծ մասն զօրացս, գնասցուք և ընդդէմ այսմ զինուցս, զոր տեսանեմք առ այլազգիսդ, ա՛յլ զգեստ պատրաստեցուք ընդդէմ նետիցդ»։ Իսկ Դաւիթ առ մեծութիւն իւր հայելով, հպարտացեալ մեծաւ ամբարտաւանութեամբ, ոչ լսէր Շապհոյ, դառնալ ի պատերազմէն։ Յայնժամ Շապուհ բարկութեամբ դիմեաց ի վերայ Դաւթի և բռնցի հարեալ զթիկունսն ուժգնակի մղէր զնա դառնալ. վասն զի Շապուհ էր այր քաջ և պատերազմող հզօր և էր մանկակալ և սնուցիչ Դաւթի, վասն այնորիկ անահ էր ի նմանէ. և այսպիսի օրինակաւ դարձուցանէր զԴաւիթ հանդերձ զօրօքն»]*[1]։

*Սենեքերիմ թագավորը, ինչպես ասացինք, հույս չունենալով իր փոքր ուժերով պաշտպանելու Վասպուրականի սահմանները, տվեց իր տերությունը Բազիլեյոս Բ-ին և ստացավ փոխարենը Սեբաստիան և Լարիսան։*

*Թուրքերի այս հարձակումը Արծրունյաց թագավորության դեմ ո՛չ մի կապ չունի սելջուկյան բուն արշավանքների հետ*[2]։ *1016—1018 թվերին սելջուկյան թուրքերը դեռևս չէին սկսել իրենց արշավանքները նույնիսկ Պարսկաստանի դեմ։ Այդ հարձակումը տեղի էր ունեցել, հավանորեն, պարսկական հարևան իշխանության կողմից*[3], *իսկ թուրքերը հարձակվողների շարքում ծառայել են որպես վարձկան հեծելազորք. մի երևույթ, որ հենց այս ժամանակներում սովորական ու համատարած էր դառել պարսկա-արաբական իշխանություններում։*

*Որ մեր այս ենթադրությունը ճիշտ է՝ այդ պարզ երևում է Արիստակես Լաստիվերտցու վկայությունից, որը պարզ կերպով մատնանշում է, որ Սենեքերիմն իր թագավորությունը տվել էր Բազիլեյոս Բ-ին, որովհետև նրան նեղում էին պարսիկները։*

*«Որովհետև Դավիթը, որին Սենեքերիմ էին կոչում,— ասում է Լաստիվերտցին,—* նեղվելով պարսիկներից՝ *տվել էր իր հայրենի ժառանգությունը, Վասպուրական երկիրը,*

---

1 Մատթ. Ուռհայեցի, *էջ 46—48. համեմատե նաև Հայսմավուրք. փետր. 27 և հունիս 11։*

2 *Պատմագիտական նորագույն երկերում այս հարձակումը թյուրիմացաբար համարում են երբեմն սելջուկյան թուրքերի արշավանք. տե՛ս* *Tournebize*, Histoire politique et religieuse de l'Arménie, *էջ 123—124.* *Morgan*, Histoire du peuple arménien, *էջ 148—149 և ուրիշ.*։

3 *Համեմատե* Շահնազարյանց, *Ծրագիր պատմութեան Հայաստան·աշխարհի, էջ 39։*

*ինքնակալ Վասիլին և փոխարենը ստացել էր Սեբաստիա քաղաքը և նրա շուրջը գտնվող գավառները»։*

*[«Քանզի Դաւիթ որ Սենեքերիմ կոչիւր, որ նեղեալ ի Պարսից՝ տայ զհայրենի ժառանգութիւն իւր զտունն Վասպուրականի յինքնակալն Վասիլ, և առնու փոխարէն զքաղաքն Սեբաստիա և որ շուրջ զնովաւ գաւառք»]*[1]։

*Պատմագիտական նորագույն աշխատություններում, Վարդան վարդապետի պատմության հետևությամբ, սելջուկյան մի նոր արշավանք Հայաստանի դեմ, Տուղրուլ բեգի առաջնորդությամբ, դրվում է 1021 թվին*[2]։

*«470 թվին [=1021],— վկայում է Վարդան վարդապետը,— եկավ Տուղրուլ բեգը և նրան պատահեց Նախիջևանում Լիպարիտը 5000 հեծելազորով, բայց փախավ, որովհետև թշնամու բազմությունն ահագին էր։ Երբ թուրքը եկավ Դվին և ուղարկեց զանազան կողմեր ասպատակներ՝ նրանց դեմ ելավ քաջ Վասակը [Պահլավունին] և, ցույց տալով մեծ քաջություն՝ վերադարձավ Սերկևլի, և երբ նա այստեղ քնել էր ու մի փոքր հանգչում էր՝ վախճանվեց, որովհետև մի մարդ անգիտությամբ խփել էր քարով գլխին»։*

*[«Ի չորեք հարիւր եօթանասուն թուին եկ Տուղրուլ-բեգն և պատահեաց նմա ի Նախճաւանի Լիպարիտն հինգ հազար հեծելօք, և փախեաւ յահագին բազմութենէն, և ի գալ թուրքին ի Դուին և սփռել ասպատակս, ել ընդդէմ նոցա քաջն Վասակ, և ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ ի Սերկևլի, և ի հանգչելն անդ սակաւ մի քնով՝ քարիւ հարեալ զգլուխն այր մի յանգէտս, մեռանի»]*[3]։

*Վարդան վարդապետի այս վկայությունը պետք է համարել, իհարկե, սխալ։ Սելջուկյան Տուղրուլ բեգը 1021 թվին չէր կարող արշավել Հայաստան, որովհետև սելջուկները Բուխարայից իջել էին Խորասան և նվաճել Պարսկաստանի հյուսիս-արևելյան շրջանները 1021 թվից շատ ավելի ուշ՝ 1035—1040 թվականներին։ Նույն արշավանքը Մատթեոս Ուռհայեցին վերագրում է դելմիկներին*[4],

---

[1] *Տե՛ս* Արիստ. Լաստիվ., *գլ. Գ, էջ 20. համեմատե նաև* Վարդան վրդ., *ԾԱ, էջ 92*։

[2] Չամչյան, *Պատմութիւն Հայոց, Բ, էջ 903—905.* *Tournebize*, Histoire polit. et rel. de l'Arménie, *էջ 123—124.* *Morgan*, Histoire du peuple arménien, *էջ 148—149 և ուրիշ.*։

[3] *Տե՛ս* Վարդան վրդ., *գլ. ԾԴ, էջ 98*։

[4] *«Զօրաժողով արարեալ թագաւորն Դելումաց,— ասում է Մատթեոս Ուռհա-*

որոնց զորքերի մեջ, ինչպես հայտնի է, մեծ թվով եղել են նաև թուրքեր։ Եվ, իրապես, ինչպես այժմ հետզհետե պարզվում է, իրանական այս դեյլամիկ ժողովուրդը, որը բնակվում էր Կասպից ծովի հարավ-արևմտյան լեռնային մասերում՝ քաղաքականապես գերիշխող ու ղեկավարող դեր էր կատարում Հայաստանի հարևան արևելյան երկրներում[1]։

Դեյլամիկների դեմ տեղի ունեցած կռվից հետո, Սերկևի կոչված տեղում, որը գտնվում էր Արագածոտն գավառում՝ սպանվել էր, ինչպես տեսանք, Գրիգոր Մագիստրոսի հայրը՝ Վասակ Պահլավունին։ Մարմաշենի 1029 թվի արձանագրությունն այդ կռիվն անվանում է «թուրքաց պատերազմ»[2]։ Թվում է, որ այդ վկայությունը ևս պետք է հասկանալ այն իմաստով, որ Հայաստանի հարևան դեյլամիկների արշավանքին մասնակցել էր նաև թուրք հեծելազորը։

Մատթեոս Ուռհայեցին, որը վերոհիշյալ պատերազմը նկարագրել է ընդարձակ կերպով, դեյլամիկների այս արշավանքի ժամանակը դնում է 971 թվին, որ պարզապես սխալ է։ Ավելի մոտ է ճշմարտության Վարդան վարդապետի վկայած 1021 թիվը։ Համենայն դեպս, հաստատ է, որ այս կռիվը տեղի էր ունեցել Մարմաշենի արձանագրության 1029 տարեթվից առաջ։

Սելջուկյան թուրքերի բուն արշավանքները Հայաստանի դեմ սկսվել են ո՛չ թե 1016—1018 կամ 1021 թվերին, ինչպես այդ ենթադրվում է պատմագիտական նորագույն երկերում, այլ 1047/8 թվին Իբրահիմ Եաննալի և Գթլմուշի գլխավորությամբ ու Տուղրուլ բեգի հրամանով[3]։ Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, որը ժամանակակից էր այս ահռելի անցքերին, սելջուկյան թուրքերի առաջին այս հարձակումը տեղի էր ունեցել Վասպուրականի ուղղությամբ, և այնտեղից նրանք հասել էին մինչև Բասենի շրջանը և Վաղարշավան դաստակերտը։

> «Այս տարիները [ՆՂԶ=1047/1048],— պատմում է Արիստակես Լաստիվերտցին,— բացվեց երկնքի բարկության դուռը մեր աշխարհի վրա և մեր դեմ շարժվեց Թուրքաստանից բազում զորք, որոնց ձիերն արագագնաց էին ինչպես արծիվները, իսկ սրանց սմբակները հաստատուն

յեցին,— և յանկարծիս գայր հասանէր ի Նիգ գաւառն Հայոց՝ մերձ ի յամուրն Բջնիս», տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 11։

1 Տե՛ս V. Minorsky, La domination des Dailamites, Paris, 1932։

2 Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 16։

3 Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 102։

էին ապառաժի նման։ Նրանց աղեղները ձիգ քաշված էին և նետերը սուր էին. նրանք կտրիճի պես գոտևորված էին և նրանց կոշիկների կապերը պինդ ամրացված էին։ Գալով Վասպուրականի գավառը՝ նրանք, ինչպես քաղցած գայլեր, որ չեն կշտանում ուտելուց՝ հարձակվեցին քրիստոնյաների վրա։ Նրանք եկան մինչև Բասեան գավառը ու մինչև մեծ դաստակերտը, որ կոչվում է Վաղարշավան, և քանդեցին ու ավերեցին սրով, հրով ու գերությամբ քսան և չորս գավառ»։

[«Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զօրք բազումք ի Թուրքաստանէ, որոց երիվարք արագունք իբրև զարծուիս, և սմբակք նոցա իբրև զվէմս հաստատունս. աղեղունք լարեալք, և սլաքեալ նետք նոցա, գօտևորեալք քաջապէս, և անլուծանելի ունելով զխրացս կօշկաց։ Եւ եկեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյագեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան, քանդեալ ապականեցին գաւառն քսան և չորս սրով և հրով և գերութեամբ»][1]։

Այն թույլ դիմադրությունը, որին նրանք այստեղ հանդիպեցին, և այն հարուստ ավարը և գերիների բազմությունը, որ տարան իրենց հետ՝ քաջալերեցին Թուրք հրոսակներին պարբերաբար կրկնելու իրենց հարձակումները։ Հետևյալ տարին, 1048 թվին, սելջուկյան Թուրքերը մտան Բասենի ու Կարնո ընդարձակ դաշտը։ Ոգևորված ավարի անկուշտ տենչով՝ այստեղից նրանք դիմեցին երկրի զանազան կողմերը և, ամեն ինչ սրի, հրի ու կողոպուտի մատնելով, հասան արևմուտքում մինչև Սպեր և Տայքի ու Արշարունիքի ամրությունները, իսկ հարավում՝ մինչև Տարոն ու Խորձյանի անտառը։ Այս հարձակումների ընթացքում նրանք ո՛չ միայն կոտորում էին խաղաղ բնակչությունը, չխնայելով անգամ կանանց ու երեխաներին, ո՛չ միայն խպառ կողոպտում էին երկրի հարստությունը, այլև ամեն ինչ հրդեհում էին ու ոչնչացնում։

«497 թվին մեր թվականության [=1048/1049],— վկայում է Արիստակես Լաստիվերտցին,— որը մեր գերության երկրորդ տարին էր՝ մյուս անգամ շարժվեց ահագին

[1] Տե՛ս Արիստ. Լաստիվ., գլ. ԺԱ, էջ 65։

ալեկոծությամբ դառնության մրուրը, բարկությամբ լիքը՝ Պարսկաստանի կողմից, և եկավ լցվավ Բասենի և Կարնո ընդարձակ դաշտը։ Հեղեղատի ցայտուկները բռնեցին երկրի չորս անկյունները. արևմուտքում՝ մինչև Խաղտյաց գավառը, հյուսիսում՝ մինչև Սպեր և մինչև Տայքի ու Արշարունիքի ամրությունները, իսկ հարավում՝ մինչև Տարոն և մինչև Հաշտյանքի գավառները՝ մինչև խորձյանի անտառը»։

[«Քանզի յամի չորեքհարիւրերորդի իննսներորդի եօթներորդի Թուականիս մերոյ՝ որ էր երկրորդ ամ գերութեանն մերոյ, շարժեալ միւս անգամ մրուր դառնութեան լի բարկութեամբ ի տանէն Պարսից՝ աՀագին ծփանօք, և եկեալ հեղաւ յընդարձակ դաշտն Բասենոյ և Կարնոյ. և ցայտուկս հեղեղատին կալաւ զչորս անկիւնս երկրին. յարևմուտս մինչև ի Խաղտեաց գաւառն. իսկ ի հիւսիսի՝ մինչև ի Սպեր և մինչև յամուրս Տայոց և Արշարունեաց. իսկ ի հարաւ՝ մինչև ի Տարօն և մինչև գաւառն Հաշտենից մինչև յանտառն Խորձենոյ»][1]։

Այս երկրորդ արշավանքի ընթացքում Թուրքական հրոսակները սոսկալի ջարդ ու ավերածություն էին գործել, մանավանդ, Մանանաղի գավառի Սմբատաբերդ կոչվող լեռան վրա, ուր ապավինել էր ժողովրդի անթիվ բազմություն իրենց ունեցվածքով։ Հարձակվելով սրանց վրա՝ Թուրքերը կարողացել էին քանդել այստեղի ամրությունը և, ներս խուժելով Սմբատաբերդ ավանը՝ սրի էին անցկացրել կամ գերել բոլոր փախստականներին[2]։

Նույն 1048 Թվին Թուրք հրոսակները մոխիր դարձրին Արծն քաղաքը, որը գտնվում էր Թեոդոսուպոլիս քաղաքի մոտ և այս շրջանի ամենահարուստ և առևտրական ամենախոշոր քաղաքն էր[3]։ Այն տեղեկությունները, որ պատմիչները տալիս են Արծն քաղաքի բնակչության ու կողոպտված ժողովրդի թվի մասին, թվում են գրեթե անհավատալի։ Համաձայն այդ տեղեկությունների՝ Արծն քաղաքն ունեցել է մոտ 300.000 բնակչություն, իսկ սպանված և այրված բնակիչների թիվը Կեդրենոսը հաշվում է 140.000 և Մատթեոս Ուռհայեցին՝ 150.000[4]։ Արիստակես Լաստիվերտցին, որ ինքն ականատես է եղել այդ չտեսնված ահռելի ջարդին, պատմում է, որ

---

1 Տե՛ս Արիստ. Լաստիվ., գլ. ԺԱ, էջ 69։

2 Նույն տեղում, գլ. ԺԱ, էջ 74—78։

3 Տե՛ս իմ աշխատությունը «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940, էջ 11—12։

4 Kedrenos, II, 577 և Մատթ. Ուռհայեցի, էջ 103։

«քահանաների թիվը, որոնք սրով և կրակի մեջ մահացան՝ մենք գտանք, որ ավելի էին քան հարյուր հիսուն՝ նրանց, որոնք վիճակի ու եկեղեցու տեր էին»։

[«Իսկ զթիւ քահանայիցն, որք ի սուր և ի հուր վախճանեցան՝ գտաք աւելի քան զհարիւր յիսուն, որք վիճակի տեարք էին և եկեղեցւոյ»][1]։

Մանրամասն տեղեկություն Արծն քաղաքի ավերման մասին, որը, ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերտցին, մատնվել էր կրակի՝ տալիս է Մատթեոս Ուռհայեցին։

«Եվ ահա այս թվին [ՆՂԸ=1049][2],— պատմում է Ուռհայեցին,— անօրենների զորքերը հասան հայերի հռչակավոր ու բազմամարդ քաղաքը, որն անվանվում է Արծն, և տեսան, որ այդ քաղաքն առանց պարսպի է և լիքը լցված է անթիվ բազմությամբ տղամարդկանց ու կանանց և ունի անհամար քանակությամբ ոսկի ու արծաթ։ Եվ քաղաքացիները, տեսնելով այլազգիների զորքը՝ միահամուռ կերպով ելան պատերազմի ու քաղաքի ծայրերի մոտ սկսվեց սաստիկ ու ահավոր կռիվը· Վեց ժամ օրվա ընթացքում հարվածում էին իրար և մարտադաշտը լցվեց արյունով, որովհետև չկար ոչ փախչելու տեղ, ո՛չ էլ օգնական և միայն մահն էր բոլորի հույսը։ Անօրենների բազմության պատճառով քաղաքի զորքերը հոգնեցին և ի փախուստ դարձան։ Իսկ այլազգիները սրերով հարձակվեցին քաղաքի վրա և սաստիկ կոտորած արին ու սրի անցկացրին հավասարապես ամբողջ քաղաքը՝ մոտ 150.000 մարդ։ Այլ ոսկու, արծաթի ու դիպակների մասին ավելորդ է խոսել, որովհետև անկարելի է այդ գրի անցկացնել»։

[«Եւ ահա յայսմ ամի զօրք անօրինաց հասանէին ի հռչակաւորն և ի բազմամբոխ քաղաքն Հայոց՝ որ կոչի Արծն. և գտեալ անպարիսպ զքաղաքն և անթիւ բազմութեամբ լցեալ զարանց և զկանանց և անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ քաղաքացիքն տեսեալ զզօրս այլազգեացն միաբան ի պատերազմ ելեալ, և խմբեցաւ շուրջ զեզերօք քաղաքին սաստիկ և ահաւոր պատերազմ. և եղև զվեց ժամ աւուրն զմիմեանս կոփէին և արեամբ լցաւ անդաս-

[1] Արիստ. Լաստիվ., գլ. ԺԲ, էջ 84։

[2] Կեդրենոսի մոտ այս անցքերի ժամանակը ցույց է տրված 1048 թվին, տե՛ս Kedrenos, II, էջ 575—580։

*տանքն, վասն զի ոչ գոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն զմահն ունէին յոյս. և ի բազմութենէ անօրինացն ձանձրացան զօրքն քաղաքին և ի փախուստ դարձան. և այլազգիքն սրով յարձակեցան ի վերայ քաղաքին և սաստիկ կոտորածով առ հասարակ ի ներքոյ սրոյ անցուցին զամենայն քաղաքն իբրև զբիւրս հնգետասան։ Այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ գրով»]*[1]։

*Հայերն այս աներևակայելի աղետների պատճառ համարում էին Բյուզանդական կայսրությունը, որը թողել էր երկիրն անտեր ու անպաշտպան և իշխանական ու զինվորական զորեղ հայ տարրը փոխարինել օտար թույլ ուժերով։ Հայերի այս մտայնությունը և դժգոհությունը Բյուզանդիայից պարզ կերպով արտահայտված է Մատթեոս Ուռհայեցու հետևյալ վկայության մեջ։*

*«Երկու զորապետները, որոնց անվանում էին Աբրեիմ և Գթլմուշ, ելան բազում զորքով [Տուղրուլ սուլթանի հրամանով] այն տեղի դիվանի կողմից և անթիվ բազմությամբ եկան Հայոց աշխարհը, որովհետև իմացել էին, որ հոռոմների ձեռքում Հայոց ամբողջ աշխարհն անտեր է ու անպաշտպան, որովհետև քաջ և հզոր մարդկանց հոռոմները վերցրել և դուրս էին տարել արևելքից և աշխատում էին Հայոց աշխարհը ու արևելյան ամբողջ երկիրը պահել զորապետ ներքինիների միջոցով»։*

*[«Եւ ելեալ երկու զօրապետքն բազում զօրօք ի դիւանէ անտի, որք անուանեալ ասէին Աբրէիմ և Գթլմուշ, և անթիւ բազմութեամբ գան ի յաշխարհն Հայոց, վասն զի ի ձեռացն հոռոմոց գիտացին անտէր և անպաշտպան զամենայն աշխարհն Հայոց. զի զարս քաջս և զհզօրս քակեալ հանին յարևելից հոռոմք և կուրտ զօրապիտօք ջանային պահել զաշխարհն Հայոց և զամենայն տունն արևելից»]*[2]։

*Սելջուկյան վերոհիշյալ արշավանքների ժամանակ Վասպուրականի կուսակալն էր Ահարոն Բուլգարը, իսկ Անիի տեղակալն էր Կատակալոն Կեկավմենոսը, որին հայ պատմիչներն անվանում են Կամենաս*[3]*։ Արտաքին մահացու վտանգի հանդեպ այժմ պարզ*

---

[1] Մատթ. Ուռհայեցի, *էջ 102—103։*

[2] *Նույն տեղում, էջ 102։*

[3] *Կեկավմենոս (=κεκαυμένος, այրված) Կատակալոնի մականունն էր, ուստի և հայ պատմիչները, ինչպես ճիշտ մատնանշել է* Տուրնեբիզը (Histoire

երկաց կայսրության քաղաքականության ամբողջ սնանկությունը։ Փոխանակ խաղաղ ու բարեմիտ քաղաքականությամբ մեղմելու հայերի գրգռված տրամադրությունը՝ Կատակալոնը մեծ եռանդով սկսել էր հալածել հայ եկեղեցականներին։ Պետրոս կաթողիկոսին նա արտաքսել էր Անի քաղաքից և մտադիր էր հայ եկեղեցին ենթարկել հարկատվության. մի բան, որ չէին արել նույնիսկ արաբները։ Հայաստանի մեջ հաստատվել էր հունական հոգևորականությունը, ո՛չ պակաս քան 21 եպիսկոպոսություններ, որոնց համար նստավայր էին ծառայում, մեծ մասամբ, հայկական վանքերը։ Գելցերի կարծիքով, այս եպիսկոպոսությունների հիմնման նպատակն է եղել, ըստ երևույթին, հայ եկեղեցական կալվածների ու հարստությունների բռնագրավումը[1]։

Այս բոլորը արվում էր, անշուշտ, կենտրոնական կառավարության թելադրանքով, այնպիսի մի ժամանակ, երբ արտաքին պաշտպանության համար քրիստոնյա հայության բարեկամությունն ու աջակցությունն ուներ ամենակարևոր նշանակությունը։

Հույները, ինչպես և պետք էր սպասել, իրենք էլ շուտով զգացին, որ առանց հայերի ու վրացիների զորավոր գործակցության Կատակալոնը և Ահարոնը չպիտի կարողանային կասեցնել սելջուկյան հաղթական հարձակումները։ Նրանք օգնության հրավիրեցին իրենց զորքերով Գրիգոր Մագիստրոսին ու նաև վրաց Լիպարիտ մեծ իշխանին, որը վրացական զորքերի սպարապետն էր։

Մեծ ընդհարումը սելջուկյան ուժերի հետ տեղի ունեցավ 1048 թվի սեպտեմբերի 18-ին Բասենի մեծ դաշտում՝ Կապուտառու բերդի մոտ, որը գտնվում էր Արջովիտում[2]։ Սակայն սկզբից արդեն վերոհիշյալ չորս զորավարները անմիաբան էին և անհամերաշխ։ Կռվի կեսին Ահարոն Բուլգարն իր զորամասերով ետ նահանջեց և միացյալ զորքը չարաչար կերպով պարտվեց։ Թուրք զորքն այս անգամ ևս տուն վերադարձավ, իր հետ տանելով անչափ հարստություն և գերիների ահագին բազմություն, որոնց մեջ էր նաև վրաց իշխան Լիպարիտը։

---

politique et religieuse de l'Arménie, էջ 29. ծան. 1), ըստ այդ մականվան նրան անվանում են Կամենաս (համեմատե Արիստ. Լաստիվ., գլ. ԺԳ, էջ 86՝ «Կամենաս, որ թարգմանի կրակ»)։

[1] Տե՛ս Gelzer H., Ausgewählte kleine Schriften, Leipzig, 1907, էջ 134։

[2] Տե՛ս Արիստ. Լաստիվ., էջ 86 և Մատթ. Ուռհայեցի, էջ 107. համեմատե նաև Hertzberg, Geschichte der Byzantiner und des Ormanischen Reiches, Berlin, 1883, էջ 238։

Բյուզանդական աղբյուրներում, ինչպես և Բյուզանդիայի պատմության վերաբերյալ նորագույն երկերում[1], սովորաբար մատնանշվում է, որ հույները 1048 թվին Կապուտրու բերդի մոտ հաղթություն էին տարել սելջուկների դեմ վրացական-հայկական զորքերի օգնությամբ։ Սակայն այս պնդումը ճիշտ չէ։ Հայկական ու արաբական աղբյուրների վստահելի ու հանգամանային նկարագրություններից երևում է, որ վերոհիշյալ կռվում հաղթվել էին ո՛չ թե սելջուկները, այլ իրենք հույները։

Արիստակես Լաստիվերտցու և Իբն-ալ-Ասիրի կարևոր վկայությունները հույների 1048 թվի պարտության մասին ավելորդ չեմ համարում մեջ բերել որոշ կրճատումներով։

1. Արիստակես Լաստիվերտցի, գլ. ԺԳ, էջ 87—88՝

«Արդ՝ շատ աղաչանքներից հետո եկավ Լիպարիտը, ստանալով իբրև պարգև առատ գանձեր, սակայն դրանով ևս ոչինչ գլուխ չեկավ. որովհետև նրանք հենց իրենք միաբան չէին իրար հետ։ Ուստի, երբ պատերազմը սկսվեց՝ Բուլգարի որդին ետ քաշվեց թիկունք իր մարդկանց հետ և թշնամիներին ներշնչեց համարձակություն։ Սրանք. բարձրաձայն աղաղակելով՝ իրար հորդորեցին և, շրջափակելով Լիպարիտին ու նրա քաջ մարդկանց՝ ոմանց նրանցից սպանեցին, իսկ իրեն Լիպարիտին, կտրելով նրա ձիու մկանները սրով՝ ձերբակալեցին։ Երբ մյուս զորքերն այս տեսան՝ ի փախուստ դարձան, իսկ թշնամիները, հետապնդելով նրանց, անչափ մեծ կոտորած արին՝ ոմանց սպանեցին սրով և շատերին, որովհետև արդեն մութն ընկել էր, ցած գլորեցին բարձր տեղերից ու քարանձավներից։ Մնացածները, մերկ ու կողոպտված, ազատվեցին հետիոտն, ուր որ կարողացան։ Եվ թշնամիները, վերցնելով ավելի ևս հարուստ ավար՝ ուրախացան, իսկ մերոնք վայ տվին գլուխներին ու ողբացին»։

[«Արդ՝ եկն Լիպարիտն բազում աղաչանօք և գանձուց առատատուր պարգևօք, և ոչինչ վճարեցաւ այնու. քանզի և ինքեանք իսկ չէին միաբանք առ միմեանս։ Վասն որոյ ի խմբել պատերազմին, որդի Բուլգարին իւրայնովքն ի թիկունս դարձեալ՝ համարձակութիւն տայր թշնամեացն. որք մեծաձայն աղաղակաւ զմիմեանս յորդորէին, և ի մէջ փա-

[1] Համեմատե Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte, էջ 1005։

կեալ զԼիպարիտն իւրովք քաջ արամբք, զոմանս սպանէին, և զերիվարի նորա զջիլսն հատեալ սուսերաւ՝ զինքն ձեռբակալ առնէին։ Զոր տեսեալ այլ զօրացն՝ ի փախուստ դառնային. որոց զհետ մտեալ Թշնամեացն, անչափ կոտորածս առնէին, զոմանս սրով, և զբազումս՝ վասն զի գիշերացաւ ժամն, ի գահից և ի քարանձաւաց գահավէժ առնէին. և մնացեալքն մերկ կողոպուտ հետիոտիւք ուր կարէին՝ ապրեցան։ Իսկ Թշնամիքն լցեալ աւարաւ առաւել քան զառաւել, ուրախ լինէին, իսկ մերքս վայիւք և ողբովք լի»][1]։

2. Իբն-ալ-Ասիր, տե՛ս ռուսերեն Թարգմանութ[յ]ունը Ժուզեի, էջ 116՝

«Սույն 440 թվին [=1048/9] Իբրահիմ Ենննալը ռազմերթի ելավ հոռոմների դեմ, պարտության մատնեց նրանց և վերցրեց ավար։ Բանն այն է, որ նրա մոտ Տրանսօքսանիայից եկել էին բազմաթիվ ուզեր, բայց նա նրանց ասաց հետևյալը. «Իմ երկիրը չէ կարող ձեզ տեղավորել և բավարարել ձեր կարիքները, ուստի ես խորհուրդ եմ տալիս ձեզ արշավանքի ելնել ընդդեմ հոռոմների, պատերազմել հանուն Աստուծո և վերցնել ավար։ Ես կգամ ձեր ետևից և կօգնեմ այդ բանում»։ Նրանք այդպես էլ արին՝ արշավանքի ելան նրանից առաջ, իսկ նա գնաց նրանց ետևից։ Եվ հասան նրանք մինչև Մանազկերտ, Արզն, Կարին քաղաք, Տրապիզոն և բոլոր մյուս տեղերը։ Նրանց դեմ եկավ մեծ զորաբանակ 50.000 հոգուց՝ հոռոմներ և աբխազներ։ Եվ սկսվեց նրանց միջև ուժեղ պատերազմ ու տեղի ունեցան մի քանի մարտեր, որոնց ընթացքում հաղթանակում էր թե մեկ կողմը և թե մյուսը։ Բայց վերջ ի վերջո հաղթությունը տարան մուսուլմանները, որոնք կոտորեցին շատ հոռոմներ, դարձրին նրանց ի փախուստ և գերի վերցրին մեծ թվով նրանց պատրիկներին։ Գերիների թվումն էր նաև աբխազների թագավորը, «Կարիտը» [=Լիպարիտը], որն առաջարկեց իր համար իբրև փրկանք 300.000 դինար և նվերներ 100.000 դինարի, բայց Ենննալը չհամաձայնեց։ Նա շարունակեց ավերել և կողոպտել այդ երկիրը, մինչև որ իրենց ու Կոստանդնուպոլսի միջև մնաց 15 օրվա միայն տարածություն։ Մուսուլմանները այդ շրջանները զրավե-

[1] Արիստ. Լաստիվ., գլ. ԺԳ, էջ 87—88։



23—4

ցին, կողոպտեցին նրանց, առան ամեն ինչ և գերի վերցրին ավելի քան 100.000 մարդ. նրանք վերցրել էին այնպիսի մեծ քանակությամբ գրաստներ, ջորիներ, ավար և գույք, որն անկարելի էր հաշվի առնել։ Ասում են, որ ավարը տարել էին տասը հազար սայլի վրա և որ ավարի այս թվի մեջ էին նաև 19.000 վահաններ»[1]։

Իբրահիմ Յաննալը, ոգևորված իր այս հաջողություններով՝ սկսել էր այնուհետև ըմբոստանալ իր եղբոր Տուղրուլի դեմ և, ըստ երևույթին, չէր ուզում ենթարկվել նրա գերիշխանությանը։ Եվ Տուղրուլ բեգը կարգադրեց գրավել Մարաստանի որոշ մասերը, որոնք գտնվում էին Իբրահիմ Յաննալի իշխանության տակ։ Հարաբերությունները երկու եղբոր մեջ այնքան սրվեցին, որ նրանք իրենց զենքերը դարձրին իրար դեմ։

1050 թվին Իբրահիմն իր զորքերով պարտվեց, անձնատուր եղավ Տուղրուլին և հպատակվեց նրա կամքին։ Այնուհետև Տուղրուլն ու Իբրահիմը մի քանի տարի կռվում էին Ֆարսում ու Խուժաստանում, գլխավորապես, Բաղդադի Խոսրով Փիրուզ ամիրայի դեմ, որը մեծ համառությամբ դիմադրում էր նրանց։

Այս կռիվների ընթացքում Հայաստանը, կիսով չափ քանդված ու ավերված, մոտ հինգ տարի ազատ մնաց Տուղրուլի և Իբրահիմ Յաննալի հարձակումներից։ Արիստակես Լաստիվերտցու մոտ այս ժամանակաշրջանում, ՇԲ թվին [1053/4][2] միայն, հիշատակված է «անօրենների զորքի» հանկարծակի հարձակումը Կարս քաղաքի վրա և այս քաղաքի բնակչության կոտորածը[3]։ Քաղաքացիներից փրկվել էին միայն նրանք, որոնք որ փախել էին միջնաբերդ։ Հարձակվող այս «անօրենների զորքը», ըստ երևույթին, ո՛չ թե սելջուկյան թուրքերի զորքերն էին, այլ հարևան երկրների հրոսախմբերը։

1054 թվին Հայաստան մտավ ինքը Տուղրուլ բեգը անթիվ զորքերով, փղերով, կառքերով և ռազմական լայն պատրաստությամբ։ Առանց երկար կանգ առնելու, նա անցավ Վանա լճի հյուսիսային կողմերով՝ Մանազկերտ քաղաքի շրջանը, որը նշանավոր ու խիստ ամուր բերդ էր։

Այստեղից նրա զորքերը զանազան ուղղությամբ ասպատակե-

---

[1] Տե՛ս «Из Тарих-ал-камиль Ибн-ал-Асира», перев. П. Жузе, Баку, 1940, стр. 116 (IX, 203).

[2] Արիստ. Լաստիվ., գլ. ԺԶ, էջ 92։

[3] Նույն տեղում, գլ. ԺԵ, էջ 91—92։

ցին և ավերեցին բազմաթիվ գավառներ, հասնելով հյուսիսում մինչև Աբխազիայի ամրությունները և Պարխար լեռները, արևմուտքում՝ մինչև Ճանեթի, այն է՝ Խաղտիքի անտառները, իսկ հարավում՝ մինչև Սիմ լեռը, այսինքն՝ Սասնո ու Խույթի Տավրոսյան լեռները։

«Այս պատմությունից [Կարսի կոտորածից] հետո,— վկայում է Արիստակես Լաստիվերտցին,— գալ տարին մեր թվականության ՇԴ թիվն էր [1054/5], և միևնույն ամսին ու միևնույն ամսաթվին, որին նրանք առաջին անգամ գերել էին մեր աշխարհը և այրել էին Արծնը, ինչպես և այլ քաղաքներ ու ավաններ, երթի ելավ մահաշունչ գազանը, արյունարբու և մարդասպան սուլթանը, անհամար զորքերով, փղերով և կառքերով ու ձիերով, կանանցով ու որդիներով, և մեծ պատրաստությամբ։ Մի կողմը թողնելով Արճեշն ու Բերկրին՝ նա եկավ բանակ դրեց քաղաքի շուրջը, որն անվանվում է Մանազկերտ, Ապահունիք գավառում, և բռնեց ամբողջությամբ ընդարձակ դաշտավայրերը։ Նա ուղարկեց երկրի երեք կողմերը ասպատակներ, դեպի հյուսիս՝ մինչև Աբխազների ամրությունը, մինչև լեռը, որը կոչվում է Պարխար, և մինչև Կովկասի ստորոտը, դեպի արևմուտք՝ մինչև Ճանեթի անտառը, իսկ դեպի հարավ՝ մինչև Սիմն կոչվող լեռը։ Եվ նրանք գրավեցին ամբողջ այս երկրները, ինչպես արտի հասկերի հնձողներ։

Իսկ այն ժամանակվա չարագործությունները, որ նրանք մեր աշխարհին հասցրին՝ ո՞վ կարող է գրի առնել կամ ո՞ւմ միտքը ի վիճակի է այդ հաշվի անցկացնել. որովհետև բոլոր այս երկրները լիքն էին դիակներով, թե շեն և թե անշեն վայրերը, ճանապարհները և անապատ տեղերը, քարանձավները և առապարները, խիտ անտառները և ժայռոտ տեղերը։ Եվ բոլոր մարդաբնակ տեղերում նրանք հրդեհեցին և ոչնչացրին տներն ու եկեղեցիները. այս հրդեհի բոցն ավելի էր, քան Բաբելոնի հնոցինը։ Եվ այսպիսի ձեռնարկությամբ նրանք կործանեցին մեր երկիրը ո՛չ թե մեկ անգամ, այլ երեք անգամ՝ մեկ-մեկու հետևից վերադառնալով, մինչև որ մեր երկրում ամեն տեղ հատան բնակիչները և դադարեց անասունների բառաչոցը»։

[«Զկնի այսր պատմութեանս, ի գալ տարւոյն էր թուականիս մերոյ ամք հինգհարիւր երեք, ի նոյն ամիս և ի նոյն

քանիս ամսոյն, ուր զառաջին աշխարհս գերի տարան, զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս և զաւանս. խաղաց գազանն մահաշունչ արիւնարբու և մարդախոշոշն Սուլտան անհամար զօրօք, փղօք, և կառօք և երիվարօք, կանամբք և որդւովք. և բազում պատրաստութեամբ։ Ջանց արարեալ զԱրճիշաւ և զԲերկրաւ՝ եկեալ բանակեցաւ շուրջ զքաղաքաւն, որ կոչի Մանազկերտ, ի գաւառն Ապահունեաց, և կալաւ բովանդակ զընդարձակ վայրս դաշտացն։ Եւ արձակեաց ասպատակս յերեսին կողմանս աշխարհին, ի հիւսիս՝ մինչև յամուրն Ափխազաց և մինչև ի լեառն որ կոչի Պարխար և մինչև ցստորոտն Կովկասու. և յարևմուտս՝ մինչև յանտառն Ծաննեթոյ, իսկ ի հարաւ՝ մինչև ցՍիմն կոչեցեալ լեառն. և բովանդակ կալեալ զաշխարհս իբրև հնձօղք ոճոյ ագարակի։

սուցին, ո՞վ կարէ ընդ գրով արկանել, կամ ո՞յր միտք բա-

Արդ զայնմ ժամու զչարիսն՝ զոր նոքա աշխարհիս հաւեն ի համար ածել. զի ամենայն աշխարհս լի էր դիակամբք, չէնք և անշէնք, ճանապարհք և անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անտառախիտ մայրիք և ափափայ վայրք՝ և յամենայն շինանիստ տեղիս հուր հարեալ ապականեցին զտունս և զեկեղեցիս, որոյ բոց հրատին առաւել բարձրանայր քան զհնոցն Բաբելովնի. և այսպիսի ձեռնարկութեամբ ապականեցին զաշխարհս մեր, ո՛չ միանգամ, այլ երիցս անգամ մի ի միոյ վերայ դարձ արարեալ՝ մինչև առ հասարակ հատաւ երկիրս ի բնակչաց և բարձաւ կառաչ անասնոց»]¹։

Տուղրուլ բեգի այս արշավանքի ժամանակ, ինչպես տեսնում ենք, ամենից շատ տուժել էին, ինչպես և Իբրահիմ Ենալի արշավանքների ընթացքում, Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները։ Այս շրջանների մասին է, որ Արիստակես Լաստիվերտցին ասում է, թե «կործանեցին մեր երկիրը ո՛չ թե մեկ անգամ, այլ երեք անգամ՝ մեկ-մեկու հետևից վերադառնալով, մինչև որ

¹ Արիստ. Լաստիվ., գլ. ԺԶ, էջ 93—95։ Համեմատե նաև Մատթեոս Ուռհայեցի, Վաղարշապատ, 1898, էջ 118 և հետ.։ Ուռհայեցու վկայությունը մի փոքր տարբերվում է Լաստիվերտցու վկայությունից։ Ինչպես պատմում է Ուռհայեցին, Մանազկերտ գնալիս՝ Տուղրուլ բեգը պատերազմել ու գրավել էր Բերկրի քաղաքը, սրի էր անցկացրել սրա բնակչությունը և այնուհետև պաշարել էր նաև Արճեշը, որը հնազանդվել էր նրան և ուղարկել էր մեծ քանակությամբ ոսկի ու արծաթ և ձիեր ու ջորիներ։

*մեր երկրում ամեն տեղ հատան բնակիչները և դադարեց անասունների բառաչը»։*

*Երբ ասպատակող զորամասերը վերադարձան չորս կողմից առատ պաշարով ու հարուստ ավարով՝ Տուղրուլ բեգը շրջապատեց Մանազկերտը և սկսեց պատերազմական մեքենաների օգնությամբ քաղաքի պաշարման ու գրավման ռազմական գործողությունները։ Սակայն քաղաքացիների համար այս կռիվը մահու ու կենաց խնդիր էր։ Քաղաքի կառավարիչ Վասիլ իշխանի առաջնորդությամբ՝ նրանք հերոսաբար պաշտպանեցին Մանազկերտը և լքված ու պարտված սելջուկյան զորքերը, անկարող լինելով ներս խուժել այդ ամուր բերդաքաղաքը՝ ստիպված եղան ետ նահանջել Պարսկաստան։ Ճանապարհին նրանք ավերեցին Արծկե քաղաքը և սրի անցկացրին այդ քաղաքի, ինչպես և հարևան ուրիշ տեղերի, բնակչությունը։*

*Ուշագրավ է, որ Տուղրուլ բեգի հրոսակախմբերը, որոնք անպատիժ կերպով ավերում ու կողոպտում էին Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող անպաշտպան հայկական երկրները, ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերտցին[1], դիմադրության էին հանդիպել Վանանդ գավառում, ուր դեռևս շարունակում էին իշխել հայ Բագրատունիները։ Այստեղ Աբասի որդու Գագիկ թագավորի քաջարի իշխաններն ու ազատները հարձակվել էին նրանց վրա և սրանց դիմադրությանը պետք է վերագրել այն, որ Վանանդը համեմատաբար զերծ էր մնացել սելջուկյան ասպատակների ավերածություններից։*

*Մանազկերտի մոտ կրած անհաջողությունից հետո Տուղրուլ բեգը Հայաստանը հանգիստ է թողել և կռիվներ էր վարում, գլխավորապես, Միջագետքում ու Պարսկաստանի հարավային կողմերում։ Սակայն Տուղրուլ բեգի հեռանալուց հետո ևս նոր ու նոր ավազակային հրոսակախմբեր գրեթե անընդհատ շարունակում էին մտնել Հայաստանի կիսավեր վերոհիշյալ շրջանները և կողոպտում ու բնաջնջում էին բնակչության մնացորդները, որ մի կերպ կարողացել էին ազատվել թուրքական սրից ու նախկին ավերածություններից։ Այս հարձակվողները, գլխավորապես Հայաստանի հարևան երկրների մուժ ու արկածախնդիր տարրերն էին, որոնք գալիս էին թալանելու անպաշտպան ժողովրդին։ Ավազակային այս հարձակումների մասին Արիստակես Լաստիվերտցին պատմում է հետևյալը։*

[1] Արիստ. Լաստիվ., գլ. ԺԶ, էջ 98։

«Այլ այդ ժամանակ նա [Տուղրուլ բեգը],— ասում է Լաստիվերտցին,— կռիվներ էր վարում Բաբելոնում և սրա շրջաններում, որովհետև խիստ պատերազմասեր էր։ Բայց նրանք, որոնք մեզ սահմանակից էին ու հարևան՝ կատաղի կերպով և ամառը և ձմեռը ավերում էին անդադար հայերի երկիրը։ Դրանք հետախուզություն էին կատարում լրտեսների միջոցով և ուր որ իմանում էին, որ մարդաբնակ տեղեր կան՝ գնում էին գիշերանց և հանկարծ վրա էին տալիս և անսպասելի կերպով հարվածում ու կոտորում անգթաբար բոլորին միասին։ Եվ որովհետև նրանք իրենց ապահով էին զգում և չէին վախենում՝ այդ անում էին միևնույն տեղում երկար ժամանակ, մինչև որ, բրելով ու պրպտելով տները, եթե որևէ տեղ մի բան թաքնված էր լինում, ամեն ինչ հանում էին և, բնակավայրը հիմնահատակ կերպով ավերելուց ու քարուքանդ անելուց հետո՝ առնում էին ավարն ու գերիներին և վերադառնում էին իրենց երկիրը»։

[«Այլ անդրէն ի Բաբելոն և որ զնովաւ կողմամբքն յուզէր զմարտն. քանզի յոյժ պատերազմասէր էր այրն։ Բայց որ մերս էին սահմանակիցք և դրացիք՝ խանձեալ, ոչ դադարեցին զամառն և զձմեռն յապականելոյ զաշխարհս Հայոց. քանզի դիտօք որոնէին և ուր լսէին զմարդաբնակ տեղեաց, գիշերագնաց եղեալ՝ յանկարծուստ ի վերայ անկանէին, և նորանշան հարուածովք անողորմաբար զամենեսեան առ հասարակ սատակէին. և անհոգացեալ երկիւղից՝ բազում աւուրս առնէին ի տեղւոջն, մինչև խիլ արկեալ տանցն, եթէ ուրուք կայր ինչ ի թաքստեան՝ զամենն հանեալ, և բնաբարձ աւերմամբ քանդեալ զվայրն, առեալ զաւ և զգերի՝ յաշխարհըն իւրեանց դառնային»][1]։

Սելջուկյան թուրքերի և Հայաստանի հարևան ամիրայությունների վայրագ հարձակումներին առաջին հերթին զոհ դառան Հայկական լեռնաշխարհի դաշտային անպաշտպան շրջանները։ Հայաստանի հարավային ու արևմտյան ավերված ու կողոպտված կողմերում հայությունը միայն տեղ տեղ կարողացել էր փրկվել, ապավինելով անմատչելի կամ ամրություններով պաշտպանված լեռնային շրջանները։

Հարձակումներից համեմատաբար զերծ մնացած այդպիսի

---

[1] Արիստ. Լաստիվ., գլ. ԺԸ, էջ 117—118։

անկյուններ էին, օրինակ, Վանա լճի արևելքում ու հարավում՝ Ամյուկը, Աղթամարը, Ռշտունիքը և Մոկքը, իսկ հարավ-արևմուտքում՝ Սասունը։ Ամյուկում և Աղթամարում դեռ շարունակում էին իշխել Արծրունիների տոհմի շառավիղները[1], որոնք մնացել էին երկրում և չէին գաղթել Սեբաստիա, Մոկքում ևս պահպանվել էին ազնվական հին իշխող տոհմերի մնացորդները, իսկ Սասունում, ինչպես մանրամասն ցույց է տվել Մարկվարտը[2], իշխում էր Տայքի Ջորտվանել իշխանի տոհմը, որը կապվել էր խնամիական կապերով հայ Մամիկոնյանների և Պահլավունիների իշխանական տների հետ և դառել էր նրանց մոտ ազգական։

1058 թվին, երբ թուրք զորքերը վերադառնում էին Պարսկաստան Վանա լճի կողմերով և ունեին իրենց հետ Մելիտենե քաղաքում վերցված ավարն ու գերիներին՝ սասունցիներն այնքան զորեղ էին, որ Մուշեղի որդու Թոռնիկ իշխանի առաջնորդությամբ կարողացան ջարդել նրանց ու խլել նրանցից ավարի ու գերիների մի մասը։

Արդեն 1054 թվի արշավանքի ժամանակ Տուղրուլ բեգին հպատակվել էին Գանձակի ու Դվինի Աբուլսուվար ամիրան, ինչպես և Ադրբեջանի մյուս շրջանների պետերը[3]։

1055 թվին Տուղրուլ բեգը, իրեն ապահով զգալով թիկունքից, կարողացավ գրավել Բաղդադը և գերի վերցնել Իրաքի ու Փարսի իշխան Մելիք Ռահիմին ու այնուհետև Բուիդների բոլոր երկրներն անցան նրա իշխանության տակ։ 1058 թվին նա ստացավ Բաղդադի խալիֆայից սուլթանի կոչում և, իբրև հիմնադիր Սելջուկյան աշխարհակալ պետության՝ իշխեց մինչև 1063 թիվը։

---

[1] Տե՛ս Թովմա Արծրունի, *IV, ԺԲ*, էջ 502 և հետ.։

[2] *Markwart J.*, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 517—530։

[3] Տե՛ս Իբն-ալ-Ասիր, *ռուս. թարգմ. Ժուզե*, էջ 117 (IX, 223)։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ԱԼՓԱՍԼԱՆԻ ՈՒ ՄԵԼԻՔՇԱՀԻ ՆՈՐ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՎՏԱՐՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻՑ

**1. Ալփասլանի արշավանքները Հայաստան և Վրաստան.— Սուրմառիի, Մարմաշենի ու Ախալքալաքի առումը և ավերումը.— «Մարյամ-Նիշին» բերդ-քաղաքն այժմյան Մարմաշենն է.— Բագարատ Դ-ի և Կորիկեի հպատակումը Ալփասլանին:— 2. Անի քաղաքի առումը և ավերումը:— 3. Բյուզանդիայի կրոնական հալածանքների սաստկացումը հայերի դեմ.— փոխադարձ վրեժխնդրությունը հայ և հույն իշխող դասակարգերի միջև:— 4. Կարսի Գագիկ թագավորի հպատակումը Ալփասլանին և գաղթը Փոքր Ասիա:— 5. Խռովությունները Ալփասլանի դեմ.— Ռոմանոս Դ-ի հաջող արշավանքները թուրքերի դեմ 1068—1069 թվերին:— 6. Ալփասլանի նոր արշավանքը Վրաստան.— Նրա կռիվները Բյուզանդիայի դեմ և Ռոմանոս Դ-ի պարտությունը Մանազկերտի ճակատամարտում:— 7. Սուլեյմանի հաղթությունները և սելջուկների իշխանության հաստատումը Փոքր Ասիայում:— 8. Սելջուկյան մեծ աշխարհակալությունը Մելիքշահի ժամանակ.— Վերականգնման ու կուլտուրական շինարարության աշխատանքները.— կրոնական համբերատարությունը և գյուղացիության տնտեսական դրության թեթևացումը.— Նիզամ ալ-Մուլքի մեծ դերը:— 9. Կռիվները Աբխազիայի ու Վրաստանի թագավոր Գեորգի Բ-ի դեմ.— սրա հպատակումը Մելիքշահին:— 10. Հայ պատգամավորության ուղևորությունը Մելիքշահի մոտ:— 11. Իսմայիլ Իբն Ակութ կուսակալի բարեմիտ քաղաքականությունը Հայաստանում:— 12. Նիզամ ալ-Մուլքի ու Մելիքշահի մահը և Սելջուկյան մեծ պետության աստիճանական քայքայումը:**

*Մի նոր մեծ արշավանք Հայաստանի ու նաև Վրաստանի դեմ տեղի ունեցավ Տուղրուլ սուլթանի մահից հետո (+1063), նրա հաջորդի Ալփասլան սուլթանի օրով, որը Տուղրուլի եղբոր Ջակիր բեգի որդին էր։*

*1064 թվի սկզբներին Ալփասլանը հավաքեց անթիվ զորք և արշավեց Հայաստանի հյուսիսային և կենտրոնական շրջանները, որոնք չէին վնասվել նախկին հարձակումներից։ Ալփասլանի հիմնական ծրագիրն էր, ըստ երևույթին, մահացու հարված տալ Բյու-*

զանգիային Փոքր Ասիայում, սակայն դրա համար անհրաժեշտ էր, որ նա ապահովեր իր թիկունքը հյուսիս-արևելքից։

Սովորաբար ենթադրվում է[1], որ Ալփասլանի այս արշավանքը տեղի էր ունեցել Աղվանքի վրայով դեպի Լոռի, Ջավախք ու Շիրակ, ինչպես այդ մատնանշում են Մատթեոս Ուռհայեցին և Քարթլիսցխովրեբան[2]։ Սակայն Իբն ալ-Ասիրի հաղորդած մանրամասն ու հանգամանային տեղեկություններից երևում է, որ Հեջիրի 456 թվի Ռաբի I ամսին (=22 փետր. 1064—22 մարտի 1064) Ալփասլանի որդու Մելիքշահի և Նիզամ-ալ-Մուլք վեզիրի առաջնորդությամբ թուրքական մեծ զորաբանակը Նախիջևանի վրայով մտել էր Հայաստանի կենտրոնական շրջանները և այստեղից գնացել էր Մարմաշեն։ Իբն-ալ-Ասիրի կարևոր վկայությունները և սելջուկյան զորքերի արշավանքի այս ճանապարհը հանգամանորեն քննության են առնված Մարկվարտի վերջին աշխատություններից մեկում[3]։

Նախիջևանի վրայով թուրքական զորաբանակը անցել և նվաճել էր Սուրմառի բերդը, որն, անշուշտ, Ճակատք գավառի մեջ գտնըվող հին Սուրմառին է, այժմյան Սուրմալին։ Սուրմառիի մոտ գտնըվել է մի ուրիշ բերդ, որը մուսուլմանների համար ծառայել է իբրև սահմանային ամրացրած առաջապոստ։

> «Այնտեղ [Նախիջևանում],— պատմում է Իբն-ալ-Ասիրը,— հավաքվեցին նրա [Ալփասլանի] մոտ անթիվ քանակությամբ թագավորներ ու զորքեր։ Երբ նա վերջացրեց զորքերի ու նավերի հավաքումը՝ ինքը գնաց դեպի Վրացիների երկիրը և իրեն տեղ զորքի գլուխ դրեց իր որդուն Մելիքշահին և իր Նիզամ-ալ-Մուլք վեզիրին։ Եվ Մելիքշահն ու Նիզամ-ալ-Մուլքը գնացին մի բերդի դեմ, որի մեջ կային բազմաթիվ հռոմներ։ Բերդի բնակիչները գրոհում էին դեպի դուրս, բռնում էին զորաբանակից շատերին և սպանեցին նրանցից ահագին բազմություն։ Նիզամ-ալ-Մուլքը և Մելիքշահը ցած եկան, առաջ շարժվեցին դեպի բերդը և կռվեցին նրա մեջ գտնվողների դեմ։ Ապա բերդի հրամանատարը սպանվեց և մուսուլմանները տիրեցին բերդին։

[1] Տե՛ս Չամչյանն, Պատմութ. Հայոց, Բ, էջ 977. *Lebeau*, Histoire du Bas-Empire, t. XIV, էջ 443. *Tournebize*, Histoire politique et religieuse de l'Arménie, էջ 133 և ուրիշ.։

[2] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի. էջ 145 և Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 207։

[3] *Markwart J.* Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, Wien, 1928, էջ 36—51։

Այստեղից նրանք գնացին դեպի Սուրմարի բերդը, որի մեջ կային հոսող ջրեր և այգիներ։ Մուսուլմանները մարտնչեցին սրա դեմ, տիրեցին սրան և բնակիչներին ստիպեցին դուրս գալ միջից։ Սուրմարիի մոտ գտնվում էր մի ուրիշ բերդ, որը Մելիքշահը նվաճեց և ուզեց քանդել։ Սակայն Նիզամ-ալ-Մուլքը խորհուրդ չտվեց այդ անել և ասաց, որ դա մուսուլմանների համար սահմանային բերդ է. ուստի և Մելիքշահը հայթայթեց սրան կայազոր, մթերքներ, նաև միջոցներ ու զենք և հանձնեց այս բերդը Նախիջևանի ամիրային»[1]։

Այնուհետև Իբն-ալ-Ասիրը մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մարմաշենի նվաճման մասին, որը նրա մոտ անվանված է «Մարյամ-Նիշին», այսինքն՝ Մարյամի աթոռանիստ։ Նրա վկայությամբ՝ «Մարյամ-Նիշին» քաղաքն ունեցել է ամրապատ պարիսպներ և պաշտպանված է եղել մի մեծ գետով։ Ակադ. Մառի «Անի» աշխատության մեջ այս բերդ-քաղաքը թյուրիմացաբար նույնացված է Անի քաղաքի հետ[2], բայց, իրապես, «Մարյամ-Նիշինը», ինչպես ուղիղ կռահել է Մարկվարտը[3], Գանլիճայում գտնվող Մարմաշեն վանքն է, որը կառուցել էր Վահրամ Պահլավունին 988—1029 թվերին։ Վանքի հիմնադրմանը կենդանի մասնակցություն էր ցույց տվել, ինչպես երևում է նույն վանքի արձանագրություններից, «Ափխազաց և Հայոց» Մարյամ թագուհին, որը Արծրունյաց Սենեքերիմ թագավորի դուստրն էր, Բագրատունյաց Գագիկ Ա. թագավորի թոռը և Վրաց ու Ափխազաց Բագրատ Դ. թագավորի (1027—1072) մայրը։

Կեկելիձեն և Մելիքսեթ-Բեկը հավանական են համարում[4], որ Մարմաշեն անունը ո՛չ թե Մարմարաշեն է նշանակում, ինչպես սովորաբար ենթադրվում է, այլ Մարյամաշեն։

Ալիշանը կարծում է, որ նույն այս Գանլիճայում և Մարմաշենում պետք է ենթադրել Վահրամ Պահլավունու կառուցած ամրա-

---

[1] Տե՛ս Markwart, Skizzen, էջ 38—39 և Իբն-ալ-Ասիր, ռուս. թարգմ. ժողովի, էջ 118 (X, 14)։

[2] *Н. Я. Марр*, Ани, Л., М. 1934, էջ 26։

[3] Markwart, Skizzen, էջ 47—48. Համեմատե նաև իմ աշխատությունը «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Երևան, 1936, էջ 125—126։

[4] Կ. Կեկելիձե, Երկու եփիմոս վրաց հին գրականության մեջ, վրացերեն «Ձվենի մեցնիերեբա», № 2—3, 1923, էջ 113, ծան. 2. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 109։

պատ և աշտարակազարդ պարիսպներն ու դղյակը[1], որոնց մասին սանահնեցիներին գրած իր թղթում Գրիգոր Մագիստրոսն ունի հետևյալ վկայությունը.

> «Եվ դղյակները սքանչելի ու ամրապատ պարիսպներով ու աշտարակներով նա հարդարեց»։
>
> [«Եւ զդղեկաց սքանչելի և ամրապատ պարսպօք և աշտարակօք յարամանիալ»][2]։

«Մարյամ-Նիշինի» պարիսպներին թուրքերը մոտեցել էին նավակների օգնությամբ Ախուրյան գետի կողմից և կարողացել էին գրավել քաղաքը համառ կռիվներից հետո։ Ներս խուժելով քաղաք՝ սելջուկյան թուրքերը ո՛չ միայն կոտորել էին բնակչությունը, այլև հրդեհել էին ու քանդել քաղաքի շինությունները։

> «Մելիքշահն ու Նիզամ-ալ-Մուլքը,— պատմում է Իբն ալ-Ասիրը,— առաջ շարժվեցին դեպի Մարյամ-Նիշին քաղաքը, որի մեջ կային շատ վարդապետներ, քահանաներ, իշխաններ և քրիստոնյա ռամիկ ժողովուրդ, որոնք ապավինել էին այդ քաղաքի բնակչության պաշտպանությանը։ Սա ամրացրած քաղաք էր, որի պարիսպը մեծ, պինդ քարերից էր, որ իրար էին միացված կապարով և երկաթով։ Սրա մոտ գտնվում էր մի մեծ գետ։ Նիզամ-ալ-Մուլքը պատրաստեց նավեր ու այն ամենը, ինչ որ հարկավոր էր քաղաքի դեմ պատերազմ վարելու համար, և մարտ մղեց նրա դեմ, որ շարունակվում էր օր ու գիշեր. Նա տեղավորեց զորքերը քաղաքի շուրջը և սրանք կռվում էին փոխիփոխ։ Այնուհետև անհավատները սկսեցին անհանգստանալ և խիստ հոգնեցին ու ուժասպառ եղան։
>
> Մուսուլմանները, որովհետև նրանց բրիչները քարերի կարծրության պատճառով պարիսպը ծակելիս խիստ բթացել էին, մոտեցան քաղաքի պարսպին, դեմ արին նրան սանդուղքներ և բարձրացան ծայրը։ Երբ քաղաքի բնակիչները տեսան, որ մուսուլմանները պարսպի վրա են՝ նրանց ձեռքերը թուլացան։ Մելիքշահը և Նիզամ ալ-Մուլքը ներս մտան քաղաք, քանդեցին նրան, եկեղեցիներն այրեցին և

---

[1] Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1888, էջ 158։

[2] Տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 141։

> բնակիչներից շատերին կոտորեցին, իսկ շատերն ընդունեցին մահմեդականություն և կոտորածից ազատվեցին»[1]։

Մարմաշենի առումից հետո Ալփասլանը Մելիքշահին կանչել էր իր մոտ և այնուհետև Իբն ալ-Ասիրի մոտ իբրև արշավող զորքերի առաջնորդ մատնանշված է ինքը Ալփասլանը։

Շարունակելով իրենց արշավանքը, սելջուկյան զորքերը, ինչպես հաղորդում է Իբն ալ-Ասիրը, նվաճել ու ավերել էին Սիպետշահրը («Սպիտակ քաղաք») և Ա՛ալլալ քաղաքները։ Սեն-Մարտենը, նմանապես և Մարկվարտը ենթադրում են, որ Սիպետշահրը Ջավախք գավառում գտնվող Ախալքալաքն է, իսկ Ա՛ալլալը՝ Լոռի բերդ-քաղաքը[2]։ Սակայն Իբն ալ-Ասիրի տեղագրական ցուցումներից կարելի է ըստ իս կռահել, որ Ախալքալաք քաղաքի հետ պետք է նույնացնել ավելի շուտ Ա՛ալլալը, քան Սիպետշահրը, որի տեղագրությունը մնում է անորոշ։ Ա՛ալլալի առումը և հրդեհումը Իբն ալ-Ասիրի մոտ ցույց է տրված Հեջիրի 456 թվին ռաջաբ ամսին (=19 հուն. 1064—18 հուլ. 1064 թ.)։

Ախալքալաքի նվաճման ու ավերման մասին մանրամասն տեղեկություններ հաղորդում են նաև Մատթեոս Ուռհայեցին ու Քարթլիս-ցխովրեբան, որոնք Ալփասլանի 1064 թվի արշավանքի մասին տալիս են ուշագրավ նոր ցուցումներ։

> «Եվ եկավ Ալփասլան սուլթանը՝ Պարսկաստանի թագավորը,— պատմում է Քարթլիս-ցխովրեբան,— անակընկալ կերպով, ինչպես այդ լինում է ներխուժումների ժամանակ, և խուժեց Կանգարք ու Թռեղք գավառները, որոնք նա ավերեց։ Եվ միևնույն օրում նրա ասպատակավորները տարածվեցին մինչև Ղվելիս-Ղուր։ . . . . Երբ թագավորը [Բագարատ Դ-ը] արդեն նրանցից առաջ Քարթլի էր եկել՝ նրանք մտան Ջավախք և պաշարեցին Ախալքալաքը։ Սակայն մեսխացի ազնաուրները և երկրի մեծամեծները զորեղ կերպով պաշտպանվում էին այդ տեղում, բայց, որովհետև Ախալքալաքը դեռևս չէր շրջապատված լավ պարիսպներով՝ նրանք կռվեցին միայն երեք օր։ Վերջ ի վերջո սրանք, չկարողանալով այլևս ընդդիմադրել նրանց հզոր հարձակում-

---

[1] *Տե՛ս Markwart*, Skizzen, *էջ 39—40 և* Իբն-ալ-Ասիր, *ռուս. թարգմ. ժողովի, էջ 119*։

[2] ***Տե՛ս Saint-Marten***, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, *1818—1819*, t. I, *էջ 84 և* t. II, *էջ 227*. ***Markwart***, Skizzen, *էջ 48, 51—64*։

ներին՝ սպառազինվեցին, բաց արին քաղաքի դռները և արյունահեղ ճակատամարտից հետո ստաերահար եղան ու ընկան»[1]։

Ի լրումն այս հաղորդագրության Մատթեոս Ուռհայեցին մատնացույց է անում և այն ճանապարհը, որով Ալփասլանը եկել էր Վրաստան։ Ուռհայեցու վկայությամբ՝ 1064 թվին Ալփասլանը մտել էր նախ Աղվանք և, այս երկիրը սրի ու գերության մատնելուց հետո, անցել էր Վրաստան և առել էր այստեղ Ախալքալաքը, որի բնակչությանը նա անողորմ կերպով կոտորել էր կամ գերել[2]։

Աղբյուրների ուշադիր քննությունից երևում է, որ Ալփասլանի 1064 թվի արշավանքը տեղի էր ունեցել, հավանորեն, ո՛չ թե մի ուղղությամբ, այլ երկու ուղղությամբ՝ Աղվանքի վրայով դեպի Կանգարք, Թռեղք ու Ջավախք և Նախիջևանի վրայով դեպի Սուրմառի ու Մարմաշեն։ Մելիքշահն ու Նիզամ ալ-Մուլքը, ինչպես տեսանք, արշավել էին կենտրոնական Հայաստան և այստեղ գրավել էին Սուրմառին, Մարմաշենը և մի քանի այլ ամրություններ, իսկ ինքը Ալփասլանը, ըստ երևույթին, մտել էր Լոռի ու Վրաստան Աղվանքի վրայով։

Ահաբեկված ու սարսափահար եղած Ալփասլանի վերոհիշյալ հարձակումներից՝ Վրաստանի Բագարատ Դ թագավորը և Ձորագետի ու Աղվանքի Կորիկե թագավորը, որը Դավիթ Անհողինի որդին էր՝ հպատակվեցին նրան, որպեսզի ազատեն իրենց երկրները սոսկալի վտանգից։ Ինչպես վկայում են հայ աղբյուրները, Ալփասլանը, խաղաղություն կնքելով Կորիկեի հետ՝ ամուսնացել էր նրա դստեր հետ և, մեծապես պատվելով Հայոց թագավորին՝ ուղարկել էր նրան առատ ընծաներով Լոռի, որն այդ ժամանակ դառնել էր Կորիկյան թագավորության մայրաքաղաքը[3]։

Ախալքալաքի առումից հետո Ալփասլանը իր բոլոր ուժերով

---

[1] Տե՛ս *Markwart*, Skizzen, էջ 49—51. համեմատե *Brosset*, Histoire de la Géorgie, I, էջ 327։

[2] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 144—146։

[3] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 145—146. Վարդան վրդ. (1862), էջ 101։ Քարթլիս-ցխովրեբան Ալփասլանի այս ամուսնության մասին տալիս է տարբեր տեղեկություն։ Սրա վկայությամբ՝ Ալփասլանը խնդրել էր, որ Բագարատ Դ-ը իր հետ ամուսնացնե քրոջ աղջկանը, որ Կորիկեի եղբոր դուստրն էր։ Սակայն Կորիկեն չէր համաձայնում. ուստի և Վրաց թագավորի զորագլուխները, սրան անտառում դարան գործեցին, բռնեցին, և Բագարատը կարողացավ այնուհետև վերցնել աղջկանը ու միաժամանակ նաև Շամշուլդե քաղաքը. տե՛ս Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 207։

հարձակվեց Անիի վրա։ Բյուզանդիայի դիմադրական ուժը արևելքում թուլացնելու համար՝ նրան հարկավոր էր նվաճել Հայկական լեռնաշխարհի նաև այդ մեծ ու հարուստ կենտրոնը և նշանավոր ամրությունը։

1064 թվի ամառվա վերջերին Ալփասլանը իր զորքերով պաշարեց Անի քաղաքը, և թեև սելջուկյան թուրքերը այնքան էլ վարժ չէին պաշարողական բարդ գործողություններին՝ այնուամենայնիվ նա կարողացավ առնել քաղաքը, գլխավորապես, շնորհիվ Բյուզանդիայի կարճատես անհոգության, որը չուներ այստեղ բավարար թվով պահապան զորք և այս օրհասական կռվի ընթացքում չուղարկեց օգնական զորք իր արևելյան սահմանի ամենանշանավոր բերդաքաղաքը փրկելու համար։ Պաշարող թուրք զորքերը իզուր չէին աշխատել. փարթամ ու հարուստ Անին ենթարկվեց սովորական ավերածության և անխնա կողոպուտի։

Անիի առման մասին ընդարձակ տեղեկություններ են հաղորդում ո՛չ միայն հայկական, այլ նաև բյուզանդական, արաբական ու պարսկական աղբյուրները[1]։ Առանձնապես կարևոր ու արժանահավատ է համարվում Իբն ալ-Ասիրի վկայությունը։

> «Երբ նա [սուլթանը],— պատմում է Իբն ալ-Ասիրը,— եկավ այնտեղ [Անի], տեսավ որ սա ամուր քաղաք է և բոլորովին անմատչելի է, որովհետև սրա երեք քառորդի վրա հարձակվել չէր կարելի Արաքս գետի պատճառով[2], իսկ մնացած մի քառորդը պատսպարված էր մի խոր ու արագահոս գետով, որը գլորում էր ու տանում մեծ քարեր, որ մեջն էին գցում։ Ճանապարհը գնում էր քաղաք փոսի միջով, որի վերև գտնվում էր պարիսպը՝ շինված հաստաքեստ քարերից։ Սա մի մեծ ու բարգավաճող քաղաք էր, ուներ մեծ բնակչություն և նրա մեջ կային ավելի քան 500 եկեղեցի։
>
> Սուլթանը պաշարեց սրան և շրջափակեց, սակայն մուսուլմանները հույս չունեին քաղաքը վերցնելու նրա անառիկ լինելու պատճառով, որ նրանք տեսնում էին։ Ապա

---

[1] Տե՛ս Արիստ. Լաստիվ., գլ. ԻԴ, էջ 162—167. Մատթ. Ուռհայեցի, Վաղարշապատ, 1898, էջ 146—150. *Michael Attaliates*, Bonnae, 1853, էջ 79—82. Ահմեդ բեն-Մուխամեդ ալ-Ջաֆարի, տե՛ս *Марр*, Ани, էջ 26—27 և ուրիշ.։ Վերջին հեղինակի վկայության մեծագույն մասը վերաբերում է ըստ իս ո՛չ թե Անիի, այլ Մարմաշենի առմանը։

[2] Այս տեղեկությունը, իհարկե, սխալ է։ Անին գտնվում է ոչ թե Արաքս, այլ Ախուրյան կամ Արփա-չայ գետի ափին։

սուլթանը շինել տվեց մի փայտե աշտարակ, զինավորեց նրան կռվողներով և նրա վրա կանգնեցրեց քարաձիգ մեքենան ու նետաձիգներին։

Այնուհետև հոռոմները ստիպված եղան պարսպի վրայից հեռանալ և մուսուլմանները մոտեցան նրան, որպեսզի նրա մեջ անցք բանան։ Եվ այդ ժամանակ աստծու ողորմությամբ այնպիսի բան պատահեց, որ նրանք հաշվի չէին առել, պարսպի մի մեծ մասն ինքն իրեն քանդվեց առանց պատճառի։ Շնորհիվ դրան նրանք մտան քաղաք և կոտորեցին անթիվ քանակությամբ բնակչություն, այնքան շատ, որ մուսուլմաններից շատերը չկարողացան ներս խուժել քաղաք սպանվածների բազմության պատճառով։ Եվ նրանք գերի վերցրին գրեթե նույնքան, ինչքան որ սպանել էին»[1]։

Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ Ալփասլանը, չկարողանալով ներս խուժել քաղաք՝ արդեն հուսահատվել էր և սկսել էր ետ նահանջել, սակայն Անիի իշխանավորները, Բագրատը և Գրիգոր Բակուրյանը, հենց նույն այդ ժամանակ թողին ժողովրդին անպաշտպան և ետ քաշվեցին միջնաբերդ։ Եվ մուսուլմանները, իմանալով այդ և տեսնելով, որ ժողովուրդը խուճապի է մատնվել, ետ դարձան և գրավեցին քաղաքը, որ առանց պահապանների էր[2]։

Անիի առումը Չամչյանը, և նրան հետևելով նաև Սեն-Մարտենը, Հերցբերգը ու պատմագիրների մեծագույն մասը[3], ենթադրում են 1064 թվի հունիսի 6-ին։ Այս հաշիվը ճիշտ չէ։ Ավելի ճիշտ է ըստ իս Դյուլորյեի տոմարական հաշիվը։

Սամուել Անեցու մոտ[4] Անիի առումը ցույց է տրված «ի ՇԺԳ-ին ի տօնի Տիրամօրն յաւուր երկշաբաթոջ»։ Հիմնվելով այս կարևոր վկայության վրա, Դյուլորյեն Անիի առումը Ալփասլանի զորքերի կողմից դնում է 1064 թվի օգոստոսի 16-ին, երկուշաբթի[5]։

---

[1] Տե՛ս *Markwart*, Skizzen, էջ 43—44 և Իբն-ալ-Ասիր, ռուս. թարգմ. ժողովր, էջ 120։

[2] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 148։

[3] Չամչյան, Պատմութ. Հայոց, Բ, էջ 982. *Lebeau*, Histoire du Bas-Empire, t. XIV, էջ 445. *Hertzberg*, Geschichte der Byzantiner und des osmanischen Reiches, էջ 244 և ուրիշ.։

[4] Տե՛ս հրատ. Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ 112։

[5] *Ed. Dulaurier*, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859, էջ 297։

*1064 թվի մեծ հաջողություններից հետո՝ Ալփասլանը, որը կատարելապես ապահովել էր իր թիկունքը՝ կարող էր համարձակ կերպով դարձնել իր հաղթական սուրը Փոքր Ասիայի դեմ։ Հայկական լեռնաշխարհը, որը Բյուզանդական կայսրության ամրակուռ բնական պատնեշն էր՝ այժմ գրեթե խորտակված էր։ Բավական էր մեկ հուժկու հարված ևս և թափառական թուրք հորդաները կկարողանային արդեն ազատ ներս խուժել Փոքր Ասիայի արգավանդ դաշտերն ու արոտատեղերը և հաստատվել այստեղ, որպես տիրող ու իշխող ցեղ։*

*Արդ՝ ի՞նչ էր մտածում և ի՞նչ էր անում հայությունն այս մահացու վտանգի հանդեպ, որ սպառնում էր իր իսկ գոյությանը։*

*Հայ եկեղեցու ու եկեղեցականների դեմ հարուցած հալածանքներից հետո, նա այժմ նպատակ էր դրել իրեն բռնի կերպով դավանափոխ անելու հայ «հերետիկոս» ժողովուրդը։ Գրգռումը և հուզմունքը հայ ու հույն իշխող դասակարգերի մեջ այնքան էր սաստկացել, որ ընդունում էր հետզհետե արյան վրիժառության, փոխադարձ վենդետտայի բնույթ։*

*Անիից վտարանդված Գագիկ Բ Բագրատունին հրամայել էր իր զինվորներին սպանել Կեսարիայի Մարկոս մետրոպոլիտին, որը լցված էր անզուսպ ատելությամբ դեպի հայերը և իր շան անունը դրել էր Արմեն։ Այս սպանության վրեժն առնում են Կիզիստրա բերդի (Կիւբիստռա) հույն իշխանները՝ Մանդալեի որդիները, որոնք չարաչար տանջում ու սպանում են Գագիկին և մարմինը կախում բերդի պարսպից (1079)։ Մանդալեի որդիներին չարաչար սպանում է Ռուբինյան Թորոս իշխանը։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ՝ այդպիսի վրիժառու սպանությունների զոհ եղան հայերի կողմից՝ Գրիգոր Մագիստրոսի որդին Վասակը, որ Անտիոքի իշխանն էր, Ապլխտ իշխանը «ի տանէն Շիրակայ» և ուրիշները[1]։*

*Հայ պատմիչներն այդ փոխադարձ վրիժառության մասին ունեն բազմաթիվ նկարագրություններ, որոնք թեև հաճախ հիմնըված են ժողովրդական ավանդության վրա և կարող են չափազանցված լինել, սակայն ինքը լայն վրիժառության փաստը միանգամայն ստույգ է և համապատասխան է հայ իշխող դասակարգերի ծայր աստիճան գրգռված տրամադրությանը։*

*Արևելյան քրիստոնեության այս անհաշտ երկվությունը և անվերջ պառակտումները, որ արձագանք էին գտնում բյուզանդական*

---

[1] *Տե՛ս* Մատթ. Ուռհայեցի, *էջ 213 և 214։*



*Սանահնի գլխավոր տաճարի գավիթը։*



*Սաղմոսավանք (XIII դ.)։*

զորքի ու զորավարության մեջ և առիթ դառնում դավերի ու անգամ դավաճանության՝ մեծ չափով նպաստում էին սելջուկյան թուրքերի հաջողություններին։

Ալփասլանի 1064 թվի արշավանքից հետո հայերի գաղթը սաստկացավ նաև Հայաստանի հյուսիսային կողմերից։ Ալփասլանի այս արշավանքի ժամանակ դեռևս գոյություն ուներ Կարսի Բագրատունյաց թագավորությունը, որը գտնվում էր Աբասյան Գագիկի իշխանության տակ։

Արդեն Տուղրուլ բեգի արշավանքների ժամանակ Կարս քաղաքը ենթարկվել էր հարձակման ու ավերածության, և Կարսի Գագիկ թագավորը և բնակչության մի մասը փրկվել էին քաղաքի վերնաբերդում։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, այս Գագիկը ևս, ինչպես և Վրաստանի ու Ձորագետի թագավորները, հնազանդել ու անձնատուր էր եղել Ալփասլանին և իր երկիրը համեմատաբար զերծ պահել թուրքական վայրագություններից։

Սակայն, ինչպես Վասպուրականի Սենեքերիմ թագավորը, այս Գագիկը ևս, սարսափած թուրքերից՝ 1064 թվի վերջերին տվեց իր թագավորությունը Բյուզանդիայի Կոստանդին Դուկաս կայսեր (1059—1067) և, ստանալով նրանից Կիլիկյան Տավրոսում, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, Ծամնդավ բերդաքաղաքը[1], շտապեց փոխադրվել այնտեղ ազնվականության ու բնակչության մի մասի հետ։ Տարբեր է Վարդան վարդապետի վկայությունը, որը հաղորդում է, որ

> «Կարսի Գագիկ թագավորը, Աբասի որդին, Թուրքերի երկյուղից նեղվելով տալիս է իր հայրենիքը հույներին և առնում է Ծամնդավը, Լառիսն, Ամասիան և Կոմանան ու նաև հարյուր պռաստին, այսինքն՝ գյուղ»։
>
> [«Իսկ թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիւղէ Թուրքացն՝ տայ զհայրենիսն իւր ի յոյնս և առնու զԾամնդաւ, և զԼառիս և զԱմասիա և զԿոմանա, և զպռաստինս հարիւր, որ է գեօղեան»][2]։

Շատ հավանական է, որ Ալփասլանի հարձակումներից հետո Փոքր Ասիա էին գաղթել նաև հայության ուրիշ հատվածներ Հայաստանի հյուսիսային և արևելյան կողմերից։

---

[1] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 151։ Այդ բերդաքաղաքը Գելցերի մոտ անվանված է Կամենդավ (Camendav), տե՛ս *H. Gelzer*, Abriss der byzantinischen Kaisergeschichte, էջ 1008։

[2] Վարդան վրդ., պ. ԾԸ, էջ 102 (1862)։

Հայ ազնվականության ու ռազմական ուժի մասսայական այս գաղթը Փոքր Ասիա, գլխավորապես Կապադովկիա ու Կիլիկիա, որ պարբերաբար շարունակվել էր 11-րդ դարի առաջին քառորդից սկսած՝ հիմք ծառայեց այստեղ հայկական նոր իշխանության ծագման Կիլիկիայի լեռներում, որը, ինչպես հայտնի է, գոյություն ունեցավ ավելի քան երեք դար։

Ալփասլանի 1064 թվի հաղթական արշավանքը Հայաստան ու Վրաստան նախերգանքն էր այն մեծ ու վճռական ընդհարումների, որ Սելջուկյան նոր աշխարհակալությունը ձեռնարկելու էր շուտով Բյուզանդական կայսրության դեմ։ Այդ վճռական ընդհարումը մի փոքր հետաձգվեց շնորհիվ սելջուկյան տան ընտանեկան երկպառակտումների և Ալփասլանի դեմ հարուցված ապստամբությունների։ 1063/4 թվին Ալփասլանը ճնշում էր իր ազգական Գթըլմուշի ապստամբությունը Ռեյում, որը Տուղրուլի ու Ալփասլանի ժամանակ Սելջուկյան սուլթանության մայրաքաղաքն էր, իսկ 1067 թվին կռվում էր իր հարազատ եղբոր՝ Կավուրդի դեմ, որը Կիրմանի կուսակալն էր։

1067 թվին Բյուզանդիայում գահ էր բարձրացել նշանավոր զինվորական Ռոմանոս Դ Դիոգենեսը (1067—1071), որը վճռել էր զորական մեծ ուժերով դիմադրել սելջուկներին և վերջ դնել թուրքական անընդհատ հարձակումներին, որոնց ենթարկվում էին այժմ Պոնտոսը և Կապադովկիան։ 1068 թվին հույներին հաջողվեց ետ մղել թուրքական զորամասերը, որոնք ավերում ու կողոպտում էին Պոնտոսի շրջակայքը։ 1069 թվին Ռոմանոս Դ կայսրը ետ քշեց թուրքական հրոսակներին Եփրատ գետի մոտից և համարձակ կերպով առաջ շարժվեց, կամենալով գրավել Խլաթը։

Սակայն այս առաջշարժման միջոցին պարտվել էր Կապադովկիայում Փիլարետոս զորավարը և թուրքական հրոսախմբերը հասել էին մինչև Իկոնիա, ուր անպատիժ կերպով ավերում ու թալանում էին հույն զորքի թիկունքը։ Ռոմանոս Դ կայսրը ստիպված եղավ ետ նահանջել և 1070 թվին վերադարձավ Կոստանդնուպոլիս Իտալիայում ծագած բարդությունների պատճառով։

Բյուզանդիայի ռազմական ուժերի այս առաջխաղացման հետ որոշ կապ են ունեցել, հավանորեն կռիվներն Անդրկովկասում Բագարատ Դ-ի դեմ, որը, ըստ երևույթին, նորից հարել էր կայսրությանը։ Քարթլիս-ցխովրեբան վկայում է, որ Ալփասլանը կրկին ռազմի էր ելել Աբխազիայի ու Վրաստանի թագավորի դեմ և որ սուլթանին միացել էին Ջորագետի ու Աղվանքի Կորիկե թագավո-

րը, Տփղիսի ամիրան և Կախեթիայի Աղսարթան թագավորը, որոնք իրենց ուժերով մտել էին Քարթլի 1068 թվի դեկտեմբեր ամսին[1]։

Նույն այս պատերազմին է վերաբերում նաև Ջուանշերի հետևյալ վկայությունը։

«Իսկ սուլթանը,— պատմում է Ջուանշերը,— երեք տարուց հետո նորից եկավ վրացիների վրա և երկիրը լցրեց արյունով։ Եվ նա առավ Տփղիսը և տվեց Գանձակի ամիրային՝ Փատլունին։ Եվ Աղսարթանը, Կախեթի թագավոր Գագիկի որդին, եկավ նրա մոտ և շրջում էր նրա հետ միասին մինչև որ սուլթանը հեռացավ»։

[«Իսկ սուլտանն զկնի երից ամաց դարձաւ ի վերայ Վրաց, և ելից արեամբ զերկիրն։ Եւ առեալ զՏփղիս՝ ետ ի յամիրայն Գանձակայ Փատլուն։ Եւ Ասխարթան՝ որդի Գագկայ, թագաւորին Կախեթոյ՝ եկն առ նա, և շրջէր ընդ նմա՝ մինչև գնաց սուլտանն»][2]։

1070 թվին, երբ Ռոմանոս Դ Դիոգենեսը Արևելքից վերադարձել էր Կոստանդնուպոլիս, Ալփասլան սուլթանը զորական մեծ ուժերով շարժվեց դեպի Փոքր Ասիա։ Հայաստանի հարավային ճանապարհով, Արածանիի հովիտներով, նա դիմեց Բյուզանդական կայսրության հարավ-արևելյան կողմերը։

Մանազկերտ քաղաքը, որի առջև պարտություն էր կրել իր հորեղբայր Տուղրուլ բեգը, Ալփասլանն առանց դժվարության նվաճեց և քաղաքացիներին խիստ պատժեց իր հորեղբոր անհաջողության համար։ Նրա հզոր ու ահարկու հարվածների տակ մեկը մյուսի ետևից ընկնում էին Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող Հայաստանի բերդերն ու քաղաքները։ Փոքր Ասիային սպառնացող այս մեծ վտանգի հանդեպ Բյուզանդիային հարկավոր էր բոլոր ռազմական իր ուժերով պաշտպանել կայսրության արևելյան երկրները։

Ռոմանոս Դ Դիոգենես կայսրը ժողովեց անչափ մեծ զորք և ինքն անձամբ եկավ նորից Արևելք Ալփասլանի դեմ։ Սկզբում հաջողությունը կայսեր կողմն էր և նա կարողացավ ետ նվաճել Մանազկերտ քաղաքը։

Բյուզանդական և թուրքական ուժերի վճռական ընդհարումը տեղի ունեցավ նույն այս Մանազկերտի մոտ։ Ջնայած կայսեր

---

[1] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, էջ 208։

[2] «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 113։

անձնական քաջության, այս կռվում պարզ երևաց բյուզանդական զորական ուժի քայքայված վիճակը և կարգապահության ու հավատարմության բացակայությունը։ Շտապ հավաքված ու մեծ մասամբ վարձկան զինվորներից կազմված այս զորքը ահռելի էր միայն իր թվով, բայց ո՛չ ռազմական իր որակով։ Զորավարների մեջ կային Ռոմանոս Դիոգենեսի անձնական ոխերիմ թշնամիներ։ Կռվի հենց առաջին օրը տեղի ունեցան դավադրության և մատնության դեպքեր, որոնք մեծ չափով թուլացրին բանակի ոգևորված տրամադրությունը։

Կռվի երկրորդ օրը ճակատամարտի դաշտից դավաճանաբար ետ քաշվեց իր զորամասով Անդրոնիկոս Դուկաս իշխանը և նրան հետևեցին նաև ուրիշ զորապետներ իրենց զորագնդերով։ Սելջուկ-թուրքերի և Բյուզանդիայի վճռական այս ընդհարումը վերջացավ հույն զորքերի սոսկալի պարտությամբ և ինքը կայսրը գերի ընկավ Ալփասլանի ձեռքը։

> «1071 թվի Մանազկերտի պարտության ճակատագրական սարսափելի օրը,— ասում է պրոֆ. Գելցերը,— Բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր։ Թեև նրա հետևանքներն իրենց բոլոր ահավորությամբ անմիջապես զգալի չեղան, սակայն Փոքր Ասիայի արևելյան մասերը, Հայաստանը և Կապադովկիան, որոնք այնքան կայսրներ և զորապետներ էին տվել և կազմում էին պետության իսկական ուժը՝ ընդ միշտ կորած էին կայսրության համար և թափառական թուրքը հաստատեց հին հռոմեական փառահեղության ավերակների վրա իր վրանը»[1]։

Ալփասլանը գերված կայսեր հետ շատ մեղմ վարվեց։ Ռոմանոս Դ-ի հետ նա կնքեց խաղաղության դաշն և, նրան ազատ արձակելով, պահանջեց թուրք գերիների վերադարձը և դրամական որոշ հատուցում։

Սակայն Ռոմանոսի ոխերիմ հակառակորդների աջակցությամբ Կոստանդնուպոլսում նոր կայսր էր հրատարակվել Միքայել Է Դուկասը (Պարապինակեսը, 1071—1078) և դժբախտ Ռոմանոսը ստիպված եղավ անձնատուր լինել նույն Անդրոնիկոս Դուկասին, որի դավաճանությանն էին վերագրում Մանազկերտի պարտությունը։ Անձնատուր եղած Ռոմանոս Դիոգենեսին երդմնազանցաբար կուրացրին, իսկ Ալփասլանի հետ կնքված դաշինքը չընդունեցին։

---

[1] Տե՛ս H. Gelzer, Abriss, էջ 1010։

Ալփասլանին շուտով հաջորդեց նրա որդին Մելիքշահը (1072—1092), որը կռիվը Բյուզանդիայի դեմ հանձնարարեց Գթըլմուշի որդուն՝ Սուլեյմանին, որ Տուղրուլ սուլթանի թոռն էր։ Այս ընդունակ զորապետը մեծ հաջողությամբ շարունակեց Փոքր Ասիայի նվաճումը և աշխատեց հաստատել այստեղ իր տիրապետությունը։

1073 թվին նա Կեսարիայի մոտ ծանր պարտության մատնեց բյուզանդական զորավար Իսահակ Կոմնենին։ Սրան փոխարինեց նոր հրամանատար Կեսար Դուկասը, որը սակայն միացավ Փոքր Ասիայում նորմանական զորքերի առաջնորդ ապստամբ Ուրսելի հետ և, ձգտելով գահակալության, իր զենքն ուղղեց ո՛չ թե սելջուկների, այլ իր հարազատ եղբորորդու Միքայել է Դուկասի դեմ։ Հուսահատված կայսրը, ապավինելով սելջուկների օգնության, նրանց հետ դաշն կնքեց, Սուլեյմանի աջակցությամբ ճնշեց Կեսար Դուկասի և Ուրսելի ապստամբությունը և համաձայն դաշինքի ճանաչեց Սուլեյմանին օրինավոր տեր գրեթե ամբողջ Փոքր Ասիայի (1074)։

Երբ 1086 թվին արևմուտք եկավ ինքը Մելիքշահ սուլթանը և հասավ մինչև Միջերկրական ծովի ափը՝ Փոքր Ասիայի և Ասորիքի բոլոր մեծ ու փոքր իշխանները հպատակվեցին նրան և այսպիսով Սելջուկյան աշխարհակալ մեծ պետությունը անչափ ընդարձակվեց։

Նոր աշխարհակալությունը տարածվում էր Չինաստանի և Աղվանիստանի սահմաններից մինչև Միջերկրական ծովը, այն է՝ մինչև Եգիպտոս ու գրեթե մինչև Կոստանդնուպոլիս, իսկ հյուսիսից հարավ՝ Սև ծովից ու Կովկասից մինչև Եմեն և Հնդկական օվկիանոսը։

Բյուզանդական աշխարհակալությունը ջախջախված լինելով Փոքր Ասիայում, այնուհետև Արևմտյան Ասիայի պատմության ղեկն անցավ սելջուկյան թուրքերի ձեռքը։

Մելիքշահի ժամանակ Հայաստանի ու Փոքր Ասիայի մեծագույն մասը քանդված ու ավերված էին։ Թեև սելջուկյան թուրքերի անվերջ հարձակումներից սոսկալի կերպով տուժել էր նաև պարսկական Արևելքը, սակայն ավերածությունն անհամեմատ ավելի դաժան էր եղել Անդրկովկասի և Փոքր Ասիայի քրիստոնեական երկրներում։

Սելջուկյան հսկայական նոր պետությունը, որ, մեծ մասամբ, ավերված ու կողոպտված էր, անհրաժեշտ էր այժմ վերաշինել ու բարեկարգել, և Մելիքշահ սուլթանը, անսպասելի կերպով, շի-

նարարական ու կուլտուրական այդ մեծ գործում ցույց տվեց և բարի կամեցողություն և արտակարգ եռանդ։

Մելիքշահի հրամանով սկսվեցին ամենուրեք վերանորոգչական ու շինարարական մեծ աշխատանքներ։ Երկրի տնտեսական դրությունը բարվոքելու համար վերաշինվում էին ավերված շրջանները, կարգի էին բերվում հաղորդակցության ճանապարհները, վերացվում էին առևտուրը արգելակող ծանր մաքսերը, կառուցվում էին կարավանակայաններ և բազմաթիվ հասարակական շենքեր։ Աշխարհակալ այս մեծ պետության աթոռանիստ կենտրոններն էին Ռեյը, Նյուշապուհը և կամ Սպահանը։

Բաղդադում կառուցվեց հատուկ աստղադիտարան։ Նշանավոր քաղաքներում հիմնվեցին բարձրագույն դպրոցներ։ Ամեն կերպ հովանավորվում էին գիտությունն ու գեղարվեստը։ Արքունիքում կառավարության հովանավորության տակ ծաղկում էր արաբական ու պարսկական գրականությունը. Մելիքշահը և նրա վեզիր Նիզամ ալ-Մուլքը խիստ բարեհաճ վերաբերմունք ունեին դեպի Օմար Խայամը, որըականավոր մաթեմատիկոս և աստղագետ ու միաժամանակ նաև նշանավոր բանաստեղծ էր։

Քրիստոնեական երկրների և, մասնավորապես, հայ ժողովրդի համար որոշակի նշանակությունն ունեցավ Մելիքշահի կառավարության լայն համբերողությունը բոլոր կրոնների ու դավանությունների վերաբերմամբ։

Ուշագրավ է առանձնապես սելջուկյան տիրապետության սկզբնական շրջանում գյուղացիության տնտեսական դրության բարվոքումը Բյուզանդական նախկին երկրներում։ Բյուզանդական կայսրության մեջ ամենացավոտ խնդիրն էր, ինչպես վերև ասացինք, խոշոր կալվածատիրության անընդհատ ծավալումը ի հաշիվ աղքատացող ու շահագործվող մանր գյուղացիության։ Մեծամեծների կալվածները մշակում էին, մեծ մասամբ, ճորտերը կամ ստրուկները։

Հողային այս խնդիրը, որն անկարող եղան լուծել Ռոմանոս Ա-ի և Բազիլեյոս Բ-ի ամենախիստ օրենքները, այժմ լուծեց Փոքր Ասիայում Իկոնիայի սուլթանության հիմնադիր Սուլեյման Ա-ը հօգուտ գյուղացիության[1]։ Շահագործվող ճորտ ու ստրուկ գյուղացիությունը հայտարարվեց ազատ տեր իրենց հողաբաժինների.

---

[1] *Համեմատե* *Вл. Гордлевский,* Государство Сельджукидов Малой Азии. Л., 1941, стр. 93.

և նա պետք է վճարեր հարկ միայն կառավարությանը։ Մելիքշահի կառավարությունը հողային խնդրի այս կտրուկ լուծումով, անշուշտ, շահած պիտի լիներ գյուղացիության համակրանքը։

Կուլտուրական բեղուն ու բազմակողմանի աշխատանքները, որ վերև մատնանշեցինք, չի կարելի, իհարկե, վերագրել թափառական սելջուկյան թուրքերին, որոնք գտնվում էին քաղաքակրթական զարգացման համեմատաբար ցածր աստիճանի վրա։

Մելիքշահի կառավարության շինարարական այս գործունեության գաղտնիքը բացատրվում է պարզապես նրանով, որ Սելջուկյան մեծ պետության իրական ղեկավարն այդ ժամանակ ո՛չ թե իրենք թուրքերն էին, այլ պարսկական-արաբական կուլտուրայի ականավոր ներկայացուցիչները։ Սելջուկյան սուլթանները ենթարկվել էին արդեն այդ ժամանակ պարսկական-արաբական բարձր կուլտուրայի ազդեցությանը։

Ինչպես հայտնի է, Մելիքշահի կառավարության լիազոր վարիչն էր տաղանդավոր ու եռանդուն պարսիկ Հասան իբն Ալին Խորասանի Տուս քաղաքից, որի մականունն էր Նիզամ ալ-Մուլք (=«տերության կարգավորում»)։ Սելջուկյան մեծ պետության ղեկը գտնվում էր այս նշանավոր վեզիրի և նրա նշանակած բարձր պաշտոնյաների ձեռքին։

Եվ հենց, մասամբ, այս մեծ վեզիրին, որի գրչին պատկանում է հռչակավոր «Կառավարման ձեռնարկ» (Սիասետ-Նամե) երկը[1], պետք է վերագրել Մելիքշահի ներքին քաղաքականության բարեհաճ ու շինարար ընթացքը։ Թե որքան մեծ է եղել Նիզամ ալ-Մուլքի դերը՝ այդ երևում է ժամանակակից պատմիչների հետևյալ դիտողությունից։ Երբ իր թագավորության վերջին տարիներում Մելիքշահը, ընկնելով մեծ վեզիրի թշնամիների ազդեցության տակ, դժգոհություն էր հայտնել նրան, Նիզամ ալ-Մուլքը սուլթանի մարդկանց ներկայությամբ ասել էր՝ «Մելիքշահի թագն անխզելի կերպով կապված է իմ գրչի հետ. եթե գրիչս ձեռիցս վայր դնեմ՝ նրա թագն իսկույն կխորտակվի»։

Սելջուկյան ներքին քաղաքականության կուլտուրական ու շինարար բնույթը մի պարզ ցուցանիշ էր, որ Առաջավոր Ասիայի նախկին բարձր քաղաքակրթությունը նորից սկսել էր գերիշխող հանդիսանալ Արևելքում։ Թափառական սելջուկյան թուրքերը, հաղ-

---

[1] Այս երկը լույս է տեսել այժմ ռուսերեն թարգմանությամբ՝ տե՛ս «Сиасет-Намэ, книга о правлении визира XI столетия Низам ал-Мулька» перевод проф. Б. Н. Заходера, М.—Л., 1949.

թող լինելով հանդերձ, ենթարկվել էին հաղթվածների բարձր քաղաքակրթությանը։

Կուլտուրական այս վերակենդանությունը, ինչպես կտեսնենք, երկարատև չեղավ։ Մոնղոլական ահեղ ու ավերիչ արշավանքները և դեպի արևմուտք շարժվող թուրք-թաթարական ցեղերի նոր հարձակումները ոչնչացրին հետզհետե կուլտուրական առաջադիմության այս ջանքերը և նախկին քաղաքակրթության պահպանված մնացորդները։

Մելիքշահ սուլթանի մասին հայ պատմիչները խոսում են մեծ գովասանքով։ Վարդան պատմիչը նրան բնորոշում է, որպես «այր ողորմած և բարեմիտ, առաւէլ ազգիս մեր», իսկ Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է՝ «հայր և ծնող ամենայն տիեզերաց, այր բարի և ողորմած և քաղցր ի վերայ ամենայն աշխարհի»[1]։ Ինչպես երևում է հայ պատմիչների հաղորդած տեղեկություններից, Մելիքշահի բարեմիտ և խաղաղ քաղաքականությունը արտահայտվել է ինչպես Փոքր Ասիայի հայության, նույնպես և բուն Հայաստանի նկատմամբ։

Մելիքշահի գահակալության ժամանակ Անդրկովկասյան իշխանությունների մեծագույն մասը գտնվում էին սելջուկյան սուլթանության գերիշխանության տակ։ Բայց, ըստ երևույթին, Աբխազիան ու Վրաստանը Բագրատ Դ-ի թագավորության վերջին տարիներում և նրա որդու Գեորգի Բ-ի թագավորության ժամանակ (1072—1089), որը Ջուանշերի մոտ անվանված է «Գէորգի կիւրապաղատ», նորից հարել էին Բյուզանդիային և հրաժարվել էին ենթարկվել սելջուկյան սուլթանների գերիշխանությանը։

Դեռևս Ալփասլանի սուլթանության վերջին տարիներում Բագրատ Դ-ը, ինչպես վկայում է Ջուանշերը[2], հարձակվեց Տփղիսի վրա, որն Ալփասլանը տվել էր Փատլուն ամիրային։ Գանձակի ամիրան, մատնվելով այս կռվում պարտության Լիպարիտի որդու Իվանե Օրբելյանի կողմից՝ գերի բռնվեց և, ազատ արձակվելով՝ տվեց Աբխազների ու Վրաց թագավորին Տփղիսն ու նաև Գագա բերդը և Քավազին կամ Գավարզին ամրոցը («զՔօզինն»), որոնք գտնվում էին այժմյան Ղազախ գավառում՝ Աղստև գետի արևմտյան կողմում։

Գեորգի Բ-ի թագավորության ժամանակ Վրաստանն ավելի և ուժեղացավ ու ընդարձակվեց և Բյուզանդական մեծ կայսրության

---

[1] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԾԹ, էջ 104 և Մատթ. Ուռհայեցի, էջ 243։

[2] Տե՛ս գլ. ժե, էջ 113—114։

անկման ու քայքայման շնորհիվ հետզհետե տեր դառավ Վրաստանի ու Հայաստանի մի շարք շրջանների, որոնք միացվել էին Բյուզանդիային և դեռևս մնում էին նրա իշխանության տակ։ Ինչպես վկայում են, Քարթլիս-ցխովրեբան և Ջուանշերը[1], Գեորգի Բ-ը գրավել էր կամ ստացել էր հույներից Արխազիայի Անակոփիա մեծ բերդը և բազմաթիվ բերդեր Կղարջքում, Շավշեթում, Ջավախքում, Արդահանում ու նաև Կարսը և Վանանդը։

Սելջուկյան մեծ աշխարհակալությունը չէր կարող, իհարկե, հանդուրժել Վրաստանի զորեղացումը և մերձեցումը Բյուզանդիայի հետ։ Ուստի և Մելիքշահի սուլթանության հենց առաջին տարիներում սելջուկյան թուրքերը նորից հարձակվեցին Վրաստանի վրա և գրավեցին այստեղ Տփղիսը և Շամշուլդեն, Կորիկյան Բագրատունիների մայրաքաղաքը, որին Բագարատ Դ-ի թագավորության ժամանակ վերստին տիրել էին վրացիները։ Գրաված քաղաքների իշխանությունը Մելիքշահը հանձնեց Սրահանգ ամիրային։

Շուտով տեղի ունեցավ նոր ընդհարում վրացիների հետ և Սրահանգը, դաշնակից ունենալով Գանձակի, Դվինի և Դմանիսի ամիրաներին՝ կռվի բռնվեց Գեորգի Բ-ի հետ Շամշուլդեի դաշտում՝ Փարցխիսում։ Սակայն այս կռվում Սրահանգը հաղթվեց և փախավ Գանձակ[2]։ Ակադ. Ջավախիշվիլին Տփղիսի ու Շամշուլդեի գրավումը սելջուկյան զորքերից և Շամշուլդեի դաշտում տեղի ունեցած ճակատամարտը ենթադրում է 1073—1074 թվերին[3]։

Սրահանգի պարտությունից հետո սելջուկյան թուրքերը, ինչպես վկայում են վրացական աղբյուրները, պարբերաբար շարունակել են արշավել և ավերել են Վրաստանի, գլխավորապես, արևմտյան երկրները, ուր նրանք հրդեհել էին Քութայիսը, Արտանուջը և Կղարջքի վանքերն ու եկեղեցիները[4]։

«Այն ժամանակներում,— վկայում է նաև Ջուանշերը,— թուրքերն ասպատակեցին Վրաց երկիրը և շատ ար-

---

1 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 208, 216 և «Համառոտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմչի», էջ 114։

2 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Ա, էջ 208 և 216. Ջուանշեր, գլ. ԺԷ, էջ 114։

3 Տե՛ս И. А. Джавахишвили, История грузинского народа, II, рус. перевод М. Хубуа (на правах рукописи), стр. 249.

4 Նույն տեղում, II, էջ 250։

յում թափեցին և շատերին էլ գերեցին ու գնացին. նրանց գլխավորի անունն էր Բուժղուբ»։

[«Յաւուրսն յայնոսիկ ասպատակեցին թուրքք յերկիրն Վրաց, և բազում արիւնս հեղին, և գյոլովս գերեցին և գնացին. որոց գլխաւորին անուն Բուժղուբ կոչէին»][1]։

Աբխազիայի ու Վրաստանի թագավորության դրությունը խիստ ծանրացել էր նաև արևելյան կողմից։ 1087 թվին Մելիքշահի հրամանով Անդրկովկաս եկավ թուրքական մեծ զորքով Բուզան ամիրան, որը պաշարեց ու գրավեց Փատլունյաններից Գանձակ քաղաքը[2]։ Ըստ երևույթին, թուրքերն այնուհետև վերագրավել էին նաև Տփղիսն ու Շամշույլդեն։ Այսպիսով, Վրաստանը սպառնալիքի էր ենթակա թե հարավ-արևմուտքից և թե արևելքից։ Ուստի և Գեորգի Բ-ը, ընկնելով ծանր ու հուսահատական այս դրության մեջ՝ իր երկիրը փրկելու համար գնաց Մելիքշահի մոտ Սպահան, հնազանդվեց նրան ու համաձայնեց վճարել նրան որոշ տուրք։

1090 թվին Մելիքշահի մոտ գնաց նաև հայ հոգևորականներից ու ազնվականներից կազմված մի պատգամավորություն Բարսեղ կաթողիկոսի հետ և խնդրեց սուլթանից ազատել հայ եկեղեցին ծանր հարկերից և աջակցություն ցույց տալ կաթողիկոսական աթոռի միացման[3]։

Մելիքշահը Բարսեղ կաթողիկոսին ընդունեց պատվով ու մեծարանքով, կատարեց պատգամավորության խնդիրքը, ազատեց հայ եկեղեցին ծանր հարկերից և մեծ շքով ճանապարհ դրեց պատգամավորությունը, տալով կաթողիկոսին հատուկ հրովարտակներ և ազատության գիր[4]։

Միևնույն ժամանակ Մելիքշահը Հայաստանի հոգատարության գործը հանձնարարեց իր կնոջ եղբորն Իսմայիլ իբն Ակուբ ամիրային, որը նշանակվեց Ատրպատականի, Աղվանքի և Հայաստանի

---

[1] Տե՛ս Ջուանշեր, գլ. ԺԷ, էջ 114—115։

[2] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԿԱ, էջ 106. Մատթ. Ուռհայեցի, էջ 237 և Սամ. Անեցի, էջ 118։

[3] Մատթեոս Ուռհայեցին վկայում է (էջ 229), որ «Ի ժամանակս այսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա Տեր Վահրամ յԵգիպտոս, և Տէր Թէոդորոս ի Հոնին և Տէր Բարսեղ ի թագաւորաբնակ քաղաքն Հայոց յԱնի և Տէր Պօղոս ի Մարաշ քաղաքն»։ Կաթողիկոսական աթոռի բաժանումը հետևանք է մասամբ հայերի գաղթման և ցույց է տալիս հայերի ցրվածությունը Փոքր Ասիայում և Եգիպտոսում։

[4] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 240. Սամ. Անեցի, էջ 117 և այլն։

կուսակալ։ Իսմայիլ ամիրան իրեն կենտրոնավայր էր ընտրել Գանձակ քաղաքը։ Վարդան վարդապետը վկայում է նրա մասին, որ

> «Խիստ քաղցր ու բարեմիտ էր հայերի վերաբերմամբ. ուստի և հոգս քաշելով հայ ժողովրդի մասին՝ բարեկարգեց երկիրը, [հարկերից] ազատեց վանքերը և բոլոր եկեղեցականներին»։
>
> [«Կարի քաղցր և բարեմիտ առ հայս. վասն որոյ խնամածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս. ազատեալ զվանորայս, և զամենայն եկեղեցականս»][1]։

Մատթեոս Ուռհայեցին ևս նրա մասին խոսում է մեծ հարգանքով։

> «Սա [Իսմայել իբն Ակութը],— ասում է Ուռհայեցին,— տիրել էր ամբողջ Հայոց աշխարհին։ Եվ սա ամեն կողմից քաղցր էր, ողորմած, բարի, խնամակալ, մարդասեր, խաղաղարար, և շինող էր Հայոց համայն աշխարհի. զարդարիչ էր վանքերի, մխիթարիչ էր կրոնավորների և հավատացյալներին ազատ էր պահում պարսիկների ամեն տեսակ չարագործություններից. Նրա կառավարման օրերում ամեն մեկը տիրում էր հայրենի ժառանգությանը և ամբողջ Հայաստանը լի էր նրա ժամանակ ուրախությամբ»։
>
> [«Վասն զի սա տիրեալ էր ամենայն աշխարհին Հայոց։ Եւ էր սա յամենայն կողմանց քաղցր և ողորմած և բարի և խնամակալ և մարդասէր և խաղաղարար և շինող ամենայն աշխարհին Հայոց, զարդարիչ վանորէից և մխիթարիչ կրօնաւորաց, և ազատ պահէր զհաւատացեալսն յամենայն չարեացն Պարսից. և ամենայն ոք տիրեալ էր հայրենեաց իւրոց յաւուրս նորա, և ի ժամանակս նորա կայր ուրախութեամբ լցեալ ամենայն Հայքն»][2]։

Այս վկայություններից պարզ երևում է, որ Նիզամ ալ-Մուլքի խոհուն ու բարեհաճ վարչական քաղաքականությունն ունեցել էր բարերար հետևանքներ նաև հայ ժողովրդի համար։

Այդ խաղաղ շրջանը կարճ տևեց։ 1092 թվին հոկտեմբեր ամսին Իսմայելիտ աղանդավորների ուղարկած ֆիդայու ձեռքով սպանվեց Նիզամ ալ-Մուլքը, իսկ մի ամիս հետո մեռավ և Մելիքշահ սուլթանը։

---

[1] Վարդան վրդ., ԿԲ, էջ 108։

[2] Մատթ. Ուռհայեցի, էջ 247։

Սրանց մահից հետո սկսվեց Սելջուկյան մեծ աշխարհակալության քայլ առ քայլ անկումը, գլխավորապես, սելջուկյան սուլթանական տան ընտանեկան երկպառակությունների և գահակալական կռիվների պատճառով։ Ներքին այդ անվերջ պառակտումներն ու ընդհարումներն ունեցան այն հետևանքը, որ Սելջուկյան մեծ աշխարհակալությունը բաժան բաժան եղավ և վերածվեց մի շարք մեծ ու փոքր, իրարից անկախ պետությունների։

Սելջուկյան ներքին կռիվների այս շրջանում Հայկական լեռնաշխարհը նորից դառավ բեմ պարբերաբար բռնկվող ընդհարումների։ Այս կռիվները մեծ չափով թուլացրին սելջուկյան իշխանության ուժը։ Հայությունը, որ սելջուկյան արհավիրքներից ու ավերածություններից հետո սկսել էր նորից վերակենդանանալ, համառ կերպով աշխատեց պայքարել իր երկրում ծավալվող ու իշխող եկվոր նոր իշխանությունների դեմ։ Վրաստանի օգնությամբ և նրա գերիշխանության տակ նա ձգտեց վերականգնել քաղաքական իր նախկին դրությունը և կուլտուրական բարեկեցությունը։

Վերականգնման այս համառ ջանքերը կազմում են հայ ժողովրդի պատմության հատուկ և ուրույն մի շրջանը, որը կարոտ է դեռ լուրջ ուսումնասիրության։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

**1. Արյունահեղ ներքին պատերազմները Մելիքշահի մահից հետո.— Սելջուկյան մեծ պետության կործանումը։— 2. Հայկական իշխանությունների մնացորդները 12-րդ դարի սկզբներում.— Կյուրիկյան թագավորությունը.— Կապանի Սյունյաց թագավորությունը.— Սասունի իշխանությունը.— Խաչենի իշխանությունները.— Վասպուրականի իշխանության մնացորդը։— 3. Նոր իշխանությունները Հայաստանում։— 4. Ատրպատականի և Առանի կուսակալությունը։— 5. Կապան քաղաքի ավերումը։— 6. Սելջուկյան կենտրոնական սուլթանության քայքայումը աթաբեկների իշխանության ժամանակ։— 7. Դվինի և Անիի Շեդդադյանների ամիրայությունները։— 8. Հայ իշխանությունների մնացորդները Շիրակում։— 9. Ապստամբությունները Շիրակում և Լոռիում սելջուկյան ներքին խռովությունների ժամանակ։— 10. Կարնո և Կարսի ամիրայությունները.— Դանիշմանների ամիրայությունը Կապադովկիայում ու Սեբաստիայում.— Արտուխյանները Հիսն-Կեֆում և Մերդինում.— Շահ-Արմեների ամիրայությունը Խլաթում։— 11. Մահմեդական մանր իշխանությունների պայքարը իրար դեմ։— 12. Վրաստանի բարձր դերը և վրացական-հայկական համերաշխությունը։**

*Մելիքշահի մահից հետո (1092) նրա որդիները բոլորն էլ անչափահաս էին։ Ամենամեծ որդին էր Բարկիարուխը, Ատրպատականի Իսմայիլ իբն Ակութ ամիրայի քրոջ որդին, որը տասներկու տարեկան էր կամ մի փոքր ավելի մեծ։ Բարկիարուխի (1092—1104) թե՛ եղբայրները և թե՛ հորեղբայրները, նրանք, որոնք ուժ ունեին և զորեղ կողմնակիցներ, ապստամբեցին սրա դեմ և ամեն մեկը նրանցից ինքն էր ուզում տիրապետել սելջուկյան գահին։*

*Սկսվեցին արյունահեղ ընդհարումներ և ներքին երկպառակություններ, որոնք սկիզբ դրին Սելջուկյան աշխարհակալության քայքայման։ Այդ կռիվների ընթացքում 1093 թվին սպանվեց Ատրպատականի, Աղվանքի ու Հայաստանի կուսակալ Ակութի որդին*

Իսմայելը, ինչպես և շատերը սելջուկյան սուլթանական ընտանիքից ու նշանավոր ամիրաներից։

Բարկիարուխի մահից հետո (1104), նրա եղբայր Մուհամմեդը (1105—1118), որին հայ պատմագիրներն անվանում են Տափար[1], կարողացավ ընկճել ապստամբներին և վերականգնել կարգը, սակայն շատ կարճ ժամանակով։

Մուհամմեդ-Տափարից հետո Սելջուկյան աշխարհակալության քայքայումը ավելի ևս արագացավ և Սելջուկյան ընդարձակ պետությունը բաժանվեց մեծ ու փոքր իշխանությունների։ Անջատումն ամենից առաջ տեղի ունեցավ սելջուկյան սուլթանական ընտանիքի մեջ։

Կերմանում հաստատեց իր անկախ իշխանությունը Ալփասլանի եղբոր Կավուրդի սերունդը, հյուսիս-արևելյան Իրանում՝ Մելիքշահի որդին Սինջարը, արևմտյան Փոքր Ասիայում՝ Ղըլըճըլուշի և նրա Սուլեյման որդու հաջորդները հիմնեցին Իկոնիայի անկախ տերությունը, որի գլխավոր կենտրոններն էին Իկոնիան և Նիկիան։ Իսկ Ասորիքի ու Միջագետքի կողմերում, ուր հաստատվել էին Մելիքշահի եղբոր Տուտուշի որդիները՝ սրանց երկպառակություններն պատճառով կազմվեցին մի շարք մանր անկախ ամիրայություններ և իշխանություններ։ Զուգընթաց սուլթանյան ծլուզակորման, այդպիսի անկախ կամ կիսաանկախ իշխանություններ առաջ եկան նաև Սելջուկյան պետության ուրիշ մասերում։

Բուն Հայաստանի հայ բնակչության մի ստվար մասը, ինչպես տեսանք, Բյուզանդիայի հատուկ քաղաքականության շնորհիվ, նաև թուրքական արշավանքների պատճառով՝ գաղթել էր Փոքր Ասիայի հարավ-արևելյան երկրները։ Այստեղ, հյուսիս-արևմտյան Միջագետքում, Կապադովկիայում, Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում, այս գաղթականությունը աշխատեց հիմնել իր համար մի նոր հայրենիք։ Պաշտպանվելով սելջուկյան հարձակումներից, հայ գաղթականությունը հիմնեց այս երկրներում մի շարք անկախ կամ կիսաանկախ իշխանություններ, որոնց մեջ նշանավոր դարձավ, ինչպես ասացինք, Կիլիկիայի Ռուբենյան իշխանությունը, որը գոյություն ունեցավ մոտ երեք հարյուր տարի՝ մինչև 14-րդ դարի վերջերը։

Սելջուկյան աշխարհակալ պետության քայքայման ու թուլացման շրջանում հետզհետե ուժեղ եկան բուն Հայաստանի, գլխավո-

---

[1] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 298, 330, 341 և Վարդան վրդ., էջ 113, 118։



Սելջուկյան իշխանությունները Առաջավոր Ասիայում։

*րապես, հյուսիս-արևելյան շրջանները, որոնք համեմատաբար քիչ էին տուժել սելջուկյան հարձակումներից՝ Լոռին, Զորափորը, Սյունիքը և նրանց սահմանակից մյուս շրջանները։ Հայ ժողովրդի բեկորները թե՛ այստեղ հյուսիսում և թե՛ Հայաստանի կենտրոնական մասերում ու նաև հարավային լեռնային շրջաններում սկսեցին հետզհետե այնուհետև համառ պայքար թուրք իշխանությունների դեմ, ձգտելով վերականգնել ու ապահովել իրենց ինքնուրույն գոյությունը և կուլտուրական ազատ զարգացումը։*

*11-րդ դարի վերջերում, սելջուկյան թուրքերի ահավոր արշավիրքներից ու ավերածություններից հետո, ինչպես վերև ասացինք, Հայաստանում, գլխավորապես նրա լեռնային ու ամրացրած շրջաններում, տեղ տեղ մնացել էին հայկական նախկին իշխանությունների ցրված բեկորները։ Մատենագրական տպագրված հայ աղբյուրների մեջ, որոնց վկայությունները այս ժամանակաշրջանի մասին խիստ աղքատիկ են, աղոտ ու կցկտուր տեղեկություններ են պահպանված միայն մի քանի իշխանությունների մասին։*

*Սելջուկյան աշխարհակալության անկման սկզբնական տարիներում, Մելիքշահի մահից հետո, համեմատաբար ընդարձակ հայկական երկրներ էին հյուսիսում Կյուրիկյան ու նաև Կապանի Սյունյաց թագավորությունները, իսկ հարավում՝ Սասնո իշխանությունը։*

*Կյուրիկե Ա-ի ժամանակ (1048—մինչև 11-րդ դարի իննսնական թվականները) Կյուրիկյան թագավորությունն իր մեջ պարունակում էր հին Գուգարք նահանգի արևելյան գավառները՝ Տաշիր-Լոռին, Զորագետը և նրանց հյուսիսում գտնվող շրջանները, որ վրացիներն անվանում էին Սոմխեթ, ու նաև Ուտի նահանգի արևմտյան գավառները։*

*Այս թագավորության կենտրոնն էր այդ ժամանակ Տաշիր-Լոռին և Կյուրիկե Ա-ը Շամշուլդեից փոխադրեց այստեղ. Լոռի քաղաքը, Կյուրիկյան իշխանության մայրաքաղաքը։ 12-րդ դարում Տաշիր-Լոռին և Զորագետը խոշորագույն դեր կատարեցին հայկական կյանքում և նրանք դառան, ինչպես կտեսնենք, Հայաստանի քաղաքական ու կուլտուրական վերածնության սիրտը։*

*Հայկական մյուս մեծ իշխանությունը հյուսիսում Բաղաց կամ Կապանի Սյունյաց թագավորությունն էր։ Ստեփանոս Օրբելյան պատմագրի վկայությամբ, այս թագավորության իշխանության տակ էին գտնվում այս ժամանակաշրջանում 43 բերդ, որոնցից հայտնի էին ու նշանավոր տասներկուսը, 48 վանք և 1008 գյուղ,*

*իսկ նրա կենտրոնն էր Կապան մայրաքաղաքը*[1]*։ Որքան և մոտավոր լինեն այս թվերը, Ստեփանոս Օրբելյանի թե՛ այս և թե՛ ուրիշ տեղեկություններից երևում է, որ Կապանի համեմատաբար ընդարձակ թագավորությունը պարունակել է իր մեջ Սյունյաց աշխարհի մեծագույն մասը։ Նույն այս պատմագիրը վկայում է, որ Բաղաց և Կապանի Սենեքերիմ թագավորը գնացել էր Սպահան ի տեսություն Մելիքշահի և, հպատակվելով նրան, կարողացել էր պահպանել իր թագավորությունը։*

*Հայաստանի հարավում հայկական անկախ երկիր էր Սասունի իշխանությունը, որի մեջ էին գտնվում այս ժամանակ Հանձիթ գավառի որոշ մասերը, Աշմուշատ կամ Արշամաշատ քաղաք-բերդը և Տարոն գավառի մի մասը։ Սելջուկյան արշավանքների ժամանակ այստեղ իշխում էր Մուշեղի որդին՝ Թոռնիկը։ Սրա մահից հետո (+1078) այս իշխանությունը ժառանգել էին նրա փոքրահասակ որդիները՝ Ջորտվանելը և Վասակը*[2]*։*

*Մատթեոս Ուռհայեցին, նկարագրելով Փիլառտոսի արշավանքը Սասուն, վկայում է, որ Թոռնիկ իշխանը սրա դեմ պատերազմելու համար հավաքել էր Սասունի ամբողջ զորքը՝ հիսուն հազար հետևակ և վեց հազար ձիավոր*[3]*։ Այս թվերը, թեև կարող են չափազանցված լինել, բայց, այնուամենայնիվ, մատնացույց են անում Թոռնիկի իշխանության տակ գտնվող այս երկրի մեծությունը և հզորությունը։*

*Հայ իշխանությունների մնացորդներ կային 11-րդ դարի վերջերում նաև Աղվանքի, Ուտի և Արցախ նահանգներում։ Այս մանր իշխանությունները, ապավինած իրենց լեռների բարձունքներին ու անմատչելի բերդերին՝ պահպանել էին տեղ-տեղ իրենց գոյությունը ինչպես Գանձակի Փատլունյանների, նույնպես և սելջուկյան կուսակալների տիրապետության շրջանում։ «Այդպիսիներից էին,— ինչպես մատնացույց է անում Գարեգին Հովսեփյանը,— Արցախի կամ Խաչենի երկճյուղ իշխանությունները՝ Խոխանաբերդում և Հաթերքում, իրենց ստորադրյալ ավելի փոքր իշխանություններով կամ ազատներով»*[4]*։*

---

[1] *Տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, գլ. ԿԱ, էջ 334։*

[2] *Տե՛ս Markwart*, Südarmenien und die Tigrisqnellen, *էջ 528։*

[3] *Տե՛ս* Մատթ. Ուռհայեցի, *էջ 207։*

[4] *Տե՛ս* Գ. Հովսեփյան, *Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 13։*

Վերև մենք հիշեցինք նաև Վասպուրականի փոքր իշխանությունը, որին ապաստան էին ծառայել Ամյուկ անմատույց ժայռաբերդը և Աղթամար կղզին։ 11-րդ դարի վերջերում և 12-րդ դարի առաջին քառորդում մինչև 1121 թիվը այստեղ, ինչպես վկայում է Թովմա Արծրունու պատմության շարունակողը, իշխում էր «այր ոմն տոհմակից արքային Սենեքերիմայ և գաւառն Ամկոյ յազգէն Արծրունեաց անուամբ Աբլղմսէհ կոչեցեալ»[1]։ Սրա կինն էր, ինչպես վկայում է դարձյալ նույն պատմագիրը, արևելյան Գրիգոր դուքսի դուստր Մարիամը՝ իշխանաց իշխան Աշոտի թոռը։ Այս վերջինը տեր էր և իշխեցող Ծաղկոտն և Կոգովիտ գավառների և Անգղ մեծ ավանի[2]։

Բացի հիշատակված այս իշխանություններից հայկական իշխանությունների մնացորդներ եղել են նույնպես լեռնային ու ամրացրած և այլ տեղերում, գլխավորապես, Ուշտունիքում և Մոկքում։

Այս իշխանությունները, իհարկե, մեծ դժվարությամբ էին կարողանում իրենց գոյությունը պահպանել, որովհետև շրջապատված էին թուրքական ու այլ հին և նոր ամիրայություններով, որոնք կազմակերպվել էին Հայաստանի շրջաններում։

Արդ՝ որո՞նք են այդ իշխանությունները։

Դեռևս արաբական տիրապետության շրջանում պարսկաարաբական գաղթականությունը հաստատվել էր Դվին քաղաքում։ Նա գրավել էր արդեն նաև շատ տեղեր Վանա լճի շուրջը, ինչպես օրինակ, Բերկրին, Մանազկերտը, Արճեշը, Խլաթը, Արզնը, Մուֆարղինը, Ամիդը և ուրիշները։ Սելջուկյան արշավանքներից հետո Հայաստանի ավերված ու ամայացած հարավային ու արևմտյան մասերը, ինչպես և գրեթե ամբողջ Հայկական միջնաշխարհը, որ 11-րդ դարի առաջին կեսում, մեծ մասամբ, նվաճել և գրավել էր Բյուզանդական կայսրությունը, անցան հետզհետե թուրքական ու այլ իշխանությունների ձեռքը։ Դվինը, Անին, Կարինը, Մանազկերտը, Խլաթը, Կարսը դառան սրանց աթոռանիստ կենտրոնները։ Եվ թուրք ու այլ եկվոր ցեղերը հաստատվեցին Հայաստանի զանազան կողմերում։

Թուրքերի ու այլ եկվոր ցեղերի ձեռքն անցած այս շրջաններում էս տեղ տեղ պահպանվել էին հայ իշխանությունների մնացորդները, որոնք գտնվում էին այժմ եկվորների տիրապետության տակ։

[1] Տե՛ս Թովմա Արծրունի, IV, գլ. ԺԲ, էջ 502. Համեմատե նաև Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920։

[2] Նույն տեղում, էջ 502։

Նոր կազմված իշխանություններից ամենաուժեղն էր Ատրպատականի և Առանի (հին Աղվանքի) սելջուկյան կուսակալությունը, որի կենտրոնն էր դառել Գանձակ քաղաքը։ Բարկիարուխի սուլթանության ժամանակ այստեղ էր ուղարկված (մոտավորապես 1095 թվին), որպես կուսակալ, Բարկիարուխի Մուհամմեդ եղբայրը, որը 1099 թվին ապստամբվեց Բարկիարուխի դեմ և 1105 թվին տիրեց սուլթանական գահին։ Մուհամմեդը, որը Բարկիարուխի մահից հետո ճանաչվեց իբրև գերագույն սուլթան, ստացավ բացի Ատրպատականից և Առանից, որ իրենն էին արդեն, նաև Ասորիքը, Միջագետքը և արևմտյան Իրանը։

Շնորհիվ Ատրպատականի և Առանի զորեղ կուսակալության հարևանության, այս Մուհամմեդի իշխանության ժամանակ, սկսած 12-րդ դարի սկզբներից, խիստ ծանրացավ Բաղաց կամ Կապանի թագավորության դրությունը։ Բարկիարուխի սուլթանության վերջին տարիներում, երբ սելջուկյան գահակալների ընտանիքում և ամիրաների մեջ սաստկացել էին ներքին խռովությունները և կռիվները, Գանձակում նստած ամիրաներն ուղղեցին իրենց անկուշտ հայացքն այս շեն ու հարուստ երկրի վրա, որը չէր կարողացել նվաճել նրանց նախորդը՝ Գանձակի Փադլուն ամիրան։

1103 թվին, ինչպես հաղորդում է Սյունյաց նահանգի տոհմական պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, թուրքերը Չորթմանի առաջնորդությամբ գրավեցին ու ավերեցին Բաղաց թագավորության Կապան մայրաքաղաքը։ 1104 ու 1105 թվերին նրանք առան նաև նույն գավառում գտնվող Որոտն ու Բղեն բերդերը։

> «Բայց 525 թվականին [1076],— ասում է Ստեփանոս Օրբելյանը,— Կապանի գավառները շեն էին ու վանքերը փայլում էին պաշտամունքով և լուսավորությամբ։ Իսկ 541 թվին [1092], Մելիքշահի մեռնելուց հետո, մի ամբողջ տարի նրանք բոլորն առհասարակ ահի և դողի մեջ էին։ Նրանք մի փոքր խաղաղացան, յոթը տարվա ընթացքում, Մելիքշահի որդու Բարկիարուխի իշխանության ժամանակ։ Այնուհետև 548 թվին [1099] . . . . . . նրանք նորից դողացին դառն կերպով սարսափից։
>
> Իսկ երբ լրացավ 11-րդ հոբելյանը [հիսնամյակը] և երկու տարին ևս, որ է 552 թիվը [1103 թ.], հանկարծակի մի օր, երբ քաղաքացիներն անհոգ կացության մեջ էին, Աստված կորստյան մատնեց Կապան քաղաքը, որը մարդկանց համար անառիկ էր։ Անսպասելի կերպով քաղաքի

վրա հարձակվեց իր քինախնդրության պատճառով անիծյալ Ջոլթմանը։ Նախ և առաջ խոռոչների ու քարերի միջով ապառաժուտ սարի վրա բարձրացան շատ մարդիկ հետևակ զորքից։ Հետո նրանք հեղեղատի մեծ հունի վրայով իջան քաղաք. որովհետև մարդկանց մուտքն այդ կողմով անհնարին էր՝ այդ տեղը պարսպով փակված չէր։

Եվ նրանք սկսեցին կոտորել ժողովուրդը Ջհտաթաղի կողմից և ապա բաց արին քաղաքի դուռը, որը նայում էր Խնձորո գլուխը։ Այնուհետև ամբողջ զորքը ներս մտավ և նրանք խփեցին ու սպանեցին բոլորին առհասարակ։ Բայց բերդի դեմ ոչինչ չկարողացան ձեռնարկել, այլ գնացին նորից իրենց երկիրը։

Ահա այս եղավ Կապան աշխարհի ավերման սկիզբը և հետզհետե այդ իշխանությունը սկսեց նվազել և փոքրանալ. նա ուներ իր ձեռքի տակ 43 բերդ, որոնցից տասներկուսը նշանավոր էին, և 48 վանք ու 1008 գյուղ, նաև իբրև մայրաքաղաք՝ Կապանը. Բաղաց իշխանությունն էր այս։ Դարձյալ մի տարուց հետո՝ 553 թվին [1104 թվին]՝ առան Որոտնը և 554-ին [1105 թ.]՝ Բղենը։ Խոսրովիկ իշխանը գերի բռնվեց, քրիստոնյաների բազմությունը սրերով կոտորվեց և Բաղաց երկիրը բոլորովին ավերվեց։ Եվ վանքերի միաբանությունները դադարեցրին ժամասացությունը ու թանձրամած խավարը տիրեց Հայաստանցիների ազգին։ Ապա անհնարին սուգը պատեց բոլոր քրիստոնյաներին և հայերի եկեղեցիներին։ Բայց մնացին Բաղաբերդը, Գեղին, Կաքավաբերդը, Շլորուտը, Կարճևանը, Մեղրին ու Գրհամը Աշոտի թոռների՝ Գրիգոր Թագավորի և Սմբատի ձեռին, որոնք անզավակ էին։ Գրիգորը մի դուստր միայն ուներ Կատա անունով»։

[«Բայց ի 525 թուականին չէն էին գաւառք Կապանին և պայծառացեալ վանորայքն ի պաշտաման և ի լուսաւորութեան. իսկ ի 541 թուին մինչ մեռաւ Մելիքշահ սուլտանն՝ զամ մի ողջոյն սասանեցան առ հասարակ։ Եւ սակաւ մի խաղաղացեալ ամս եօթն ի տէրութեան Բէկի-Արուխին՝ որդւոյ Մելիք-Շահին։ Ապա ի 548 թուին մինչ մեռաւ Բէկի-Արուխըն՝[1] դարձեալ վերստին սասանեցան դառնապէս։ Իսկ ի լինել մետասան յոբելենին և երկուց թուոց որ է 552 թուին՝

[1] Ճիշտ չէ. Բարկիարուխը մեռել էր ո՛չ թե 1099, այլ 1104 թ.։

օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան քաղաքացիքն, մատնեաց Տէր զանառիկն ի մարդկանէ զԿապան քաղաք. և անիծեալ Չորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեզաւ ի վերայ քաղաքին։ Նախ՝ բազում հետեւակազօր մարդիկ սորամուտք և քարագնացք ելին ի գլուխն ապառաժուտ լերինն. և իջին ընդ մեծ աւարի հեղեղատն ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին գոլոյ մտից մարդկան. և սկսան կոտորել ի Ջհտաթաղոյն. և ապա բացին զդուռն քաղաքին որ ի Խնձորոյ գլուխ հայէր. և մտին զօրքն ամենայն և հարեալ սատակեցին զամենեսեան առ հասարակ. բայց ի բերդն ոչ ինչ կարացին ձեռնարկել, այլ գնացին անդրէն ի տեղի իւրեանց։

Ահա՛ այս իսկ եղև սկիզբն աւերման աշխարհին, և օր ըստ օրէ սկսաւ նուազիլ և պակասիլ իշխանութիւնն այն որ ունէր ընդ ձեռամբ բերդս 43. և անուանիքն ի նոցանէ 12. և վանորայս 48, և գիւղս 1008. և մայրաքաղաք զԿապանն. այս Բաղաց իշխանութիւնն է։ Դարձեալ յետ մի ամի, ի 553 թուականին առաւ Որոտն. և ի 554-ին առաւ Բղեն. և գերեցաւ Խոսրովիկ իշխանն. և ի սուր սուսերի մաշեցան բազմութիւնք քրիստոնէից, և բնաւին յաւեր անցաւ տունն Բաղաց. և լռեցին ամենայն ուխտք վանորէիցն ի պաշտամանէ. և խաւար թանձրամած կալաւ զազգս Հայաստանեայց և սուգ անհնարին զգեցան ամենայն քրիստոնեայք և եկեղեցիք Հայոց. բայց մնացին Բաղաբերդ և Գեղի, Կաքաւաբերդ, Շլորուտն, Կարճևան, Մեղրի, Գրհամ առ Գրիգորոյ Թագաւորի և Սմբատայ՝ թոռանց Աշոտոյ որք էին անզաւակ. բայց միայն մի դուստր ունէր Գրիգոր Կատայ անուն»][1]։

Մելիքշահ սուլթանի որդու Մուհամմեդ-Տափարի մահից հետո (1118 թ.) ո՛չ միայն բաժան բաժան եղավ Սելջուկյան մեծ աշխարհակալությունը, այլև Սպահանի կենտրոնական սուլթանությունը սկսեց իր հերթին քայքայվել։

Մուհամմեդ-Տափարը մեռել էր 37 տարեկան հասակում և նրա ժառանգները ևս, ինչպես և Մելիքշահի ժամանակ, անչափահաս էին։ Սրանց անչափահասության պատճառով Սելջուկյան կենտրոնական պետության ղեկավարներն ու գլխավոր դերակատարները դառան այս ժառանգների խնամակալներն ու դաստիարակները, որ կոչվում էին աթաբեկներ։

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Թիֆլիս, 1911, գլ. ԿԱ, էջ 333—335։

*Աթաբեկների իշխանության ժամանակ ներքին կռիվներն ու խռովություններն անվերջ էին։ Լինելով մեծ մասամբ, նախկին ստրուկներ կամ ստրուկների որդիներ՝ աթաբեկները շատ քիչ էին մտածում իրենց խնամքին հանձնված սաների մասին, այլ ի նկատի ունեին իրենց անձնական շահերը։ Սրանք հետզհետե հիմնեցին Պարսկաստանում սեփական դինաստիաներ և շուտով հենց իրենք հիմնովին քայքայեցին Սելջուկյան կենտրոնական սուլթանությունը։*

*Սակայն չնայած սելջուկների պետության թուլացման՝ համառ, երկարատև ու հսկայական աշխատանք էր հարկավոր, որ Հայկական լեռնաշխարհի հայ բնակչությունը, որը թե իր քանակով և թե իր բարեկեցությամբ անչափ նվազել և ուժասպառ էր եղել սելջուկյան արշավանքների պատճառով՝ կարողանար նորից ուժեղանալ և ընդունակ լինել պաշտպանվելու հաղթական թուրք իշխանությունների դեմ, որոնց տիրապետության տակ էր գտնվում Հայաստանի մեծագույն մասը։*

*Ատրպատականի և Առանի սելջուկյան կուսակալությունից հետո բավական ուժեղ ամիրայություններ էին Հայկական միջնաշխարհում Դվինի ու Անիի իշխանությունները։*

*11-րդ դարի առաջին կեսում, սելջուկյան թուրքերի արշավանքներից դեռ առաջ, Դվինը գրավել էր Գանձակի Փադլուն ամիրան, որի տոհմը ծագում էր իրանական-քրդական Շեդդադյաններից*[1] *և որը, ինչպես ենթադրում են, մոտ ազգակից էր Թավրիզում ու Մարաղայում իշխող իրանական-քրդական Ռավադյանների հետ*[2], *որոնք 10-րդ դարի երկրորդ կեսում որոշ ժամանակ իշխում էին Դվինում։ Բյուզանդիայի տիրապետության ժամանակ Անիում և ավելի առաջ՝ Հովհաննես-Սմբատի ու Գագիկ Բ-ի թագավորության ժամանակ, Դվինում իշխում էր, ինչպես վերև տեսանք, Շեդդադյան Աբուլսուար ամիրան, որը Հովհաննես-Սմբատի եղբոր՝ Աշոտի փեսան էր։*

*Սելջուկյան արշավանքների ժամանակ այս Աբուլսուարը, ինչպես և Գանձակի Փադլուն ամիրան, գործոն աջակցություն էին ցույց տվել թուրքական արշավախմբերին։ Ուստի և երբ սելջուկյան սուլթանները տիրեցին հայկական շրջաններին, Շեդդադյանները կարողացան ընդարձակել իրենց իշխանության սահմանները և*

---

[1] *Համեմատե* Վարդան վրդ., *գլ. ԿԱ, էջ 106։*

[2] *Տե՛ս Е. А. Пахомов,* Арабские и иранские феодалы в Азербайджане X—XI вв., Сборник «Памяти акад. Н. Я. Марра», М.—Л., 1938, стр. 418—419.

*Ալփասլանի 1064 թվի արշավանքից հետո գրավեցին նաև կիսավեր Անի քաղաքը։*

*1072 թվին՝ Գանձակի Փատլուն ամիրան, ինչպես վկայում է Վարդան պատմիչը[2], Անին Ալփասլանից գնեց և տվեց իր մանկահասակ Մանուչե թոռին, որն աշխատեց վերականգնել ու շենացնել կիսավեր քաղաքը և վերանորոգել նրա պարիսպն ու ամրությունները։*

*Այս Մանուչեն, ըստ երևույթին, Դվինի վերոհիշյալ Աբուլսուարի որդին էր, ուստի և ենթադրում են, որ սրա մայրն էր Հովհաննես-Սմբատ թագավորի եղբոր, Աշոտ Բագրատունու դուստրը։ Լինելով հայ Բագրատունիների ազգական՝ Մանուչեի սերունդը իրեն, հավանորեն, հաջորդ էր համարում այս վերջինների և իրավական ժառանգ՝ Շիրակի ու Անի քաղաքի։*

*Հայ ժողովրդի հանդեպ Շեդդադյանների իշխանությունն Անիում եղել է, ընդհանուր առմամբ, բարեհաճ ու խաղաղարար։ Պահլավունիների տոհմի մնացորդները և Ապիրատյան մեծ զորավար Գրիգոր իշխանը, որի մայրը Գրիգոր Մագիստրոսի դուստրն էր, իր հոր ու եղբայրների և մյուս հայ ազնվականության ու ազատների հետ միասին վերահաստատվեցին իրենց նախկին իրավունքներում Շեդդադյանների իշխանության ներքո։*

*1082 թվին Մանուչեի համաձայնությամբ Հաղբատում կաթողիկոս ձեռնադրվեց Ապիրատյան Գրիգոր իշխանի Բարսեղ եղբայրը և կաթողիկոսական գահը հաստատվեց նորից Անիում։ Հայկական աղբյուրների վկայություններից երևում է, որ Մանուչեի ու Փատլունի զորքերի շարքերում կային մեծ թվով Շիրակի ու Անիի շրջանի հայեր իրենց իշխանների առաջնորդությամբ[3]։*

*Հայ իշխանների ու ազատների վերադարձի մասին Անի, ուշագրավ է Վարդան վարդապետի վկայությունը։*

> *«Այս Փատլունը [Գանձակի Փատլուն ամիրան],— ասում է Վարդանը,— առավ Ալփասլանից Անին, տալով նրան Ծաղկոցի ոսկիակուռ նկարները, և ուղարկեց իբրև տեր ավերված քաղաքին իր թոռ Մանուչեին, որը շատ փոքր տղա էր։ Եվ երբ սա մեծացավ՝ ավելացրեց Անիի պարսպի և ամրությունների կառուցումները։ Եվ նա քաղաք բերեց*

---

[1] Տե՛ս Չամչյան, Պատմ. Հայոց, Բ, էջ 995 և Марр, Ани, էջ 32։

[2] Վարդան վրդ., գլ. ԾԹ, էջ 103։

[3] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԾԹ, էջ 103 և գլ. ԿԳ, էջ 109. Մատթ. Ուռհայեցի, էջ 268—269։

բոլոր իշխաններին, որ մնացել էին։ Նաև, ընդառաջ ելնելով՝ նա մեծ հանդեսով ներս առաջնորդեց քաղաք Վասակի Գրիգոր որդուն, Ապիրատի թոռին. ինչպես ասում են, սրա ազատների կանայք իրենց գլխին ունեին հինգ հարյուր երևելի թագ, որովհետև սա տեր էր մեծ զորքի և շատ ազատների։ Եվ նա եղբայրն էր տեր Բարսեղի, որը Գևորգից հետո ձեռնադրվեց կաթողիկոս Հաղբատում Մանուչեի հրամանով և բոլոր հայերի ցանկությամբ։ Անի քաղաքը շինվեց ոչ մի բանով պակաս, քան առաջվանը»։

[«Այս Փատլուն առնու զԱնի յԱլփասլանայ, տալով նմա ոսկիակուռ նկարս Ծաղկոցի. և առաքէ տէր ասեր քաղաքին զՄանուչէ թոռն իւր յոյժ տղայ՝ որ իբրև զարգացաւ յաւելոյր ի պարիսպն Անւոյ և յամրութիւնս նորա, և ած ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն. որպէս և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին. զոր ասեն ունել ի գլուխ ազատաց կանանցն հինգ հարիւր թագս երևելիս. զի տէր էր մեծ զորաց, և բազում ազատաց։ Եւ էր եղբայր տէր Բարսղի, որ զկնի Գէորգեայ ձեռնադրեցաւ ի Հաղբատ կաթողիկոս հրամանաւ և կամօք Մանուչէի և ամենայն Հայոց։ Եւ շինեցաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաջինն»][1]։

Մանուչեի իշխանության ժամանակ Անիում (1072—1110)՝ Դվինում ևս 1105 թվին, ինչպես վկայում է Վարդան վարդապետը[2], իշխում էր նրա եղբայրը՝ Աբունասրը։ Գանձակի, Դվինի և Անիի ամիրայությունները ֆեոդալական իրար հետ սերտ կապված պետություններ էին, որ պատկանում էին իրանական-քրդական Շեդդադյանների տոհմին։ Ուստի և միանգամայն հասկանալի է, թե ինչո՞ւ Ապիրատյան Գրիգոր զորավարը, Վասակի որդին, և նրա հայկական զորամասերը կռվում էին թե Փատլունի և թե Մանուչեի զորքերի շարքում։

1094 թվին, ինչպես հաղորդում են հայկական աղբյուրները[3],

---

1 Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԾԹ, էջ 103—104։

2 Նույն տեղում, գլ. ԿԵ, էջ 113։

3 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԾԹ, էջ 320. Վարդան վրդ., գլ. ԾԹ, էջ 103. Մխիթար Այրիվանեցի (Մոսկվա, 1860), էջ 60։ Վարդանը և Մխիթար Այրիվանեցին կարծում են սխալմամբ, որ այս արշավանքի ժամանակ Փատլունի զորավարն էր Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վասակ Պահլավունին։ Բայց այս Վասակ իշխանը, ինչպես հայտնի է, սպանվել էր Անտիոք քաղաքում 1076 թվին, տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 213։

Շիրակի Պահլավունյան տոհմի իշխան Ապիրատյան Գրիգորը, որը Գանձակի Փատլուն ամիրայի զորքերի առաջնորդն էր՝ արշավեց Սյունիք և խաբեությամբ դուրս հանեց բերդից Բաղաց Սենեքերիմ թագավորին, որին նենգաբար սպանեցին, բայց չկարողացան նվաճել նրա թագավորությունը։

Նույն այս Ապիրատյան Գրիգորը, ինչպես վկայում է Վարդան վարդապետը, 11-րդ դարի իննսնական թվականներին մասնակցել էր նաև Մանուչեի զորքերի շարքերում մեծ պատերազմին Արտուխյան Էլխազի ամիրայի դեմ, որը յոթը հազար զորքով հարձակվել էր Շեդդադյանների ամիրայության վրա և հասել էր մինչև Անի[1]։ Այս պատերազմում Պահլավունի Գրիգոր իշխանը սպանել էր Էլխազի ամիրայի եղբորը, որը, ինչպես ասում է Վարդան վարդապետը, «նման էր Գողիաթու հսկայի»[2]։

Դարձյալ 1099 թվին, մեծ խառնակությունների ժամանակ, որ սկսվել էին ամենուրեք Մուհամմեդ-Տափարի ապստամբության ընթացքում Բարկիարուխի դեմ՝ Ապիրատյան Գրիգորն իր հայկական զորքերով պատերազմել էր նաև թուրքական բանակի դեմ Արշարունիք գավառի Կաղզվան գյուղում[3]։ Այստեղ նա կոտորել էր ու հալածել թուրքերին և ազատել էր մահից Մանուչե ամիրային։ Բայց հաղթությունից հետո նրան նետով սպանել էր դարան մտած մի թուրք։ Այս քաջ ու հզոր պատերազմողին մեծ հուղարկավորությամբ թաղեցին Կեչառիսի վանքում ինքը Մանուչե ամիրան ու այլազգի զորքերը։

1104—1105 թվականների գահակալական նոր խռովությունների ժամանակ Մուհամմեդ-Տափարի ու եղբայրների միջև, ինչպես Կյուրիկյանների թագավորությունը, նույնպես և Շեդդադյանների Դվինի ամիրայությունը, ենթարկվեցին հարձակման Ղզիլ ամիրայի կողմից։ Սա առավ Լոռին, այրեց Հաղբատն ու Սանահինը և եկավ գրավեց Դվինը ու սպանեց Մանուչեի եղբորը՝ Աբունասրին։ Սակայն Մանուչեն, որը ենթարկվել էր, հավանորեն, սելջուկյան գահի վրա հաստատված Մուհամմեդ-Տափարի գերագույն իշխանությանը, օգնություն ստացավ սրանից և, վրեժխնդիր լինելով իր եղբոր արյան՝ սելջուկյան սուլթանի զորքերի օգնությամբ վերագրավեց Դվինը և Ղզիլ ամիրային սպանեց Աբունասրի գերեզմանի վրա։

[1] Վարդան վրդ., գլ. ԿԳ, էջ 109։

[2] Նույն տեղում, էջ 109։

[3] Մատթ. Ուռհայեցի, էջ 269 և Վարդան վրդ. գլ. ԿԳ, էջ 109։

Շեդդադյանների ամիրայություններում, ինչպես տեսանք, հայերի դրությունը համեմատաբար ապահով ու անվտանգ էր և նրանք կարողացել էին նորից աճել, զորեղանալ և վերականգնել իրենց նախկին բարեկեցիկ վիճակը։ Հայաստանի վերանորոգման ու վերահաստատման համար այս հանգամանքը պետք է ունենար, բնականաբար, ամենախոշոր նշանակությունը։

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան կողմերում, բացի Սասունից և լեռնային այլ պաշտպանված փոքր շրջաններից՝ հայերի քաղաքական ու ներքին կացությունը պետք է լիներ հավանորեն, ավելի ծանր ու լքված։ Այստեղ մեծ աշխատանք էր կատարել թե՛ սելջուկյան ավերիչ զենքը և թե՛ Բյուզանդական կայսրության հատուկ քաղաքականությունը, որը դեռ վեցերորդ դարից սկսած ձգտել էր և քաղաքականապես և կուլտուրապես ռիմազուրկ անել այստեղի հայությունը կրոնափոխման ու ապազգայնացման միջոցով։

Հայկական լեռնաշխարհի այս մասում հայ պատմիչները միջանկյալ կերպով հիշում են, որպես նոր առանձին իշխանություն, Կարնո ամիրայությունը, իսկ սրանից դեպի հյուսիս-արևելք՝ նաև Կարսի ամիրայությունը։

Հայաստանի հարավ-արևմտյան սահմանների մոտ, հին Կապադովկիայում և, հատկապես, Սեբաստիայի շրջանում, ուր տեղափոխվել էր իր ընտանիքով, իշխաններով ու զորքով Վասպուրականի Սենեքերիմ թագավորը՝ 11-րդ դարի վերջերում կազմվել էր Դանիշմանների տոհմի իշխանությունը[1]։ Այս ամիրայության հիմնադիր Դանիշմանը (+1105), ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, «էր այր բարի և շինող աշխարհի և էր յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի» (տե՛ս էջ 297)։

Սակայն նրա հաջորդների ժամանակ հայերի դրությունը սկսել էր հետզհետե ծանրանալ։ 1155 թվին, Ալիբասանի ամիրայության ժամանակ, որն իշխում էր Սեբաստիա քաղաքում և Պոնտոսի կողմերում՝ ծանր տանջանքների էին մատնվել և նահատակվել Թեոդորոս աբեղան և Դավիթ հայ իշխանավորի որդիները՝ Գոհարինե,

---

[1] Մատթեոս Ուռհայեցին Դանիշմանների տոհմի հիմնադրին, Դանիշմանին, համարում է ազգով հայ, իսկ Չամչյանը ենթադրում է սրան հայ իշխան, որ ընդունել էր մահմեդականություն (տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 297 և Չամչյան, Պատմ. Հայոց, Գ, էջ 24)։ Լեն-Պուլի մոտ մատնանշված է, որ Դանիշմանը թուրք զորավար Գումիշտեգինի հայրն է, տե՛ս Стэнли Лэн-Пуль, Мусульманские династии, перев. Бартольда, СПб., 1899, стр. 129.

Ռադիոս, Ծամիդես և Տուկիոս եղբայրները, որոնք հրաժարվել էին ուրանալ իրենց հավատը[1]։

Հայաստանի հարավային սահմանների մոտ, հյուսիսային Միջագետքում, 12-րդ դարի սկզբներում կազմվել էին Արտուխյան թուրքական տոհմի իշխանությունները, որոնց կենտրոններն էին Մերդինը և Հիսն-Կեֆը։

Այս դինաստիայի հիմնադիրն էր Մելիքշահի եղբոր Տուտուշի հայտնի զորավար Արտուխը, որին Տուտուշը նշանակել էր Երուսաղեմի կուսակալ (1077 թ.)։ 1096 թվին, երբ Եգիպտոսի Ֆատիմյանները վերագրավեցին Երուսաղեմը՝ Արտուխի որդիները, Սուքմանը և Իլխազին, հեռացան այստեղից Միջագետք և Իրաք։ Այնուհետև Արտուխի որդին, Սուքմանը, կարողացավ գրավել և ամրանալ Հիսն-Կեֆ բերդում և այստեղից տարածեց իր իշխանությունը հարևան շրջանների վրա, գրավելով նաև Մերդինը և Մծբինը։

Սուքմանի մահից հետո այս իշխանությունը ստացավ նրա եղբայրը, Իլխազին, որը Հիսն-Կեֆը զիջեց Սուքմանի որդուն[2]։ Այսպիսով Արտուխի տոհմը բաժանվեց երկու ճյուղերի, որոնցից մեկը հաստատվեց Մերդին քաղաքում, իսկ մյուսը՝ Հիսն-Կեֆում։

Հայկական բարձրավանդակի հարավային և հարավ-արևմտյան մի քանի շրջաններ, որ սահմանակից էին Արտուխյանների և Դանիշմանների ամիրայություններին՝ գտնվում էին սրանց իշխանության տակ։

Նույն այս ժամանակաշրջանում, երբ Միջագետքում և Կապադովկիայում կազմվեցին հիշյալ ամիրայությունները՝ Մանազկերտի և Խլաթի կողմերում ևս հիմնվեցին առանձին մի իշխանություն, որի ամիրաներն իրենց անվանում էին Շահի-Արմեն, այսինքն՝ Հայոց թագավոր։ Մանազկերտի և Խլաթի ամիրաների այս տիտղոսից երևում է, որ այս ամիրայության բնակչության մի ստվար մասը եղել են հայեր։ Հիմնադիրն էր այս ամիրայության Սուքման ալ-Կուտբին, որը Մարանդ քաղաքի սելջուկյան կուսակալի ստրուկն էր և 1110 թվին Մերվանյաններից կարողացել էր առնել Խլաթ քաղաքը[3]։

---

[1] Տե՛ս «Հայոց նոր վկաները», հրատ. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 3—22։

[2] Տե՛ս *А. Мюллер*, История Ислама, перев. под редакцией Медникова. III, СПб., 1896, էջ 151—152 և *Стэнли Лэн-Пуль*, Мусульманские династии, стр. 140—142.

[3] Տե՛ս *Стэнли Лэн-Пуль*, Мусульманские династии, էջ 143։




Հայաստանը Սելջուկյան արշավանքներից հետո։

Ինչպես երևում է վերոհիշյալ տեղեկություններից, Հայաստանի զանազան մասերում գոյություն են ունեցել մի շարք մանր իշխանություններ և այս երկրի քաղաքական դրությունը նման է եղել Միջագետքի դրությանը, որը նույնպես դառել էր բազմաթիվ մանր իշխանությունների մի երկիր։

Բացի Հայաստանի հյուսիս-արևելյան և հարավային մի քանի շրջաններից, ինչպես տեսնում ենք, գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը անցել էր նոր ամիրայությունների ձեռքը։ Այս իշխանությունները հաճախ ընդհարվում էին իրար հետ, չէին միացված մի ուժեղ ձեռքի տակ, և այս հանգամանքը մեծապես նպաստավոր եղավ Վրաց և Հայոց հյուսիսային իշխանությունների համար, որոնք պատմական դառն փորձերից խրատված՝ գործում էին այժմ ավելի համերաշխ ու միաբան, քան բյուզանդական բռնությունների և սելջուկյան արշավիրքների ժամանակ։

Վրաստանն էր այն զորեղ ուժը, որը հրապարակ ելավ այդ ամիրայությունների դեմ, միացնելով իր շուրջը հայերին՝ Աղվանքի ժողովրդին և Հյուսիսային Կովկասի լեռնականներին։

Շնորհիվ աշխարհագրական իր դիրքի, Վրաստանը, գտնվելով Հայաստանի թիկունքում, համեմատաբար ազատ էր մնացել սելջուկյան արշավիրքներից։ Հայկական բարձրավանդակը բնական ու զորեղ մի պատնեշ էր, որն Արևելքի ահռելի վտանգից պաշտպանում էր ոչ միայն Բյուզանդական կայսրությունը, այլև Վրաստանը։ Ամեն անգամ, երբ հայությունը պաշտպանում էր իր երկիրը արտաքին աշխարհակալ թշնամու հարձակումներից, արտաքին վտանգից նա պաշտպանած էր լինում փաստորեն նաև իր թիկունքում գտնվող Վրաստանը։

Այս երկու երկրները, ամենահին ժամանակներից սկսած, սերտ կապված էին իրար հետ պատմական բախտակցության և կուլտուրական մերձավորության բնական կապերով։ Մի մեծ դժբախտություն էր քրիստոնյա այս երկրների համար կրոնական բաժանումն ու հակամարտությունը, որ տեղի ունեցավ յոթերորդ դարի սկզբում և որը այստեղ ևս, ինչպես և Բյուզանդիայում, դառավ Արևելքի քրիստոնեության պառակտման և անմիաբանության մշտական առիթը։ Մի մեծ դժբախտություն էր նաև քաղաքական այն կարճամտությունը, որ շատ հաճախ անտես էր առնում հարևան այս երկրների բնական միության և պատմական բախտակցության ընդհանուր կապը։

Սակայն այժմ, երբ սելջուկյան հարվածներից խորտակված էր

Վրաստանը պաշտպանող հայկական պատնեշը, երբ Վրաստանի ու հյուսիս-արևելյան հայ իշխանությունների հանդեպ դեմ առ դեմ կանգնած էին սելջուկ-թուրքական ամիրայությունները՝ Վրաց և Հայոց իշխանություններում սկսել էր, բնականաբար, արթնանալ համերաշխ գործակցության գիտակցությունը։

Այս համերաշխությանը պետք է ամենամեծ չափերով վերագրել այն մեծ հաղթությունները, որ Վրաստանը և նրան գործակցող հայ իշխանություններն ունեցան ո՛չ միայն պատմական Հայաստանում, այլև անգամ Ատրպատականում։ Այդ հաջողությունները, որ մեծապես նպաստեցին Հայաստանի վերականգնմանը Այրարատում և հարևան շրջաններում, ինչպես և Հայաստանի կուլտուրական վերածնությանը՝ միանգամայն նպաստավոր էին և Վրաստանի համար, որովհետև հայկական իշխանությունների վերահաստատման միջոցով նորից ապահովվում էր Վրաստանի հարավային սահմանը։

Սելջուկյան արշավանքների ժամանակ Աբխազիայի և Վրաստանի թագավորներն էին, ինչպես վերև տեսանք, Բագարատ Դ-ը և նրա որդին Գեորգի Բ-ը Բագրատունիների տոհմից։ Թեև սրանց թագավորության ընթացքում սելջուկյան հրոսակները Հայաստանի վրայով ու Գանձակի կողմերից անցել էին Վրաստան, սակայն թուրքական հարձակումների զոհ էին եղել միայն Վրաստանի հարավ-արևելյան շրջանները։

Թուրքական արշավանքներից հետո Վրաստանը, Գեորգի Բ-ի ժամանակ, ինչպես տեսանք, հպատակվել էր Մելիքշահին և հարկատու էր դառել Սելջուկյան սուլթանությանը։ Բայց քաղաքական այս դրությունը հիմնովին փոխվեց 12-րդ դարի հենց առաջին քառորդում։ Կարճ ժամանակից հետո Վրաստանը ո՛չ միայն իր վրայից թոթափեց Սելջուկյան սուլթանության լուծը, այլև, մեծամեծ հաղթանակներ տանելով, հետզհետե ինքը տիրեց գրեթե ամբողջ Անդրկովկասին։

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

# ՎՐԱՍՏԱ՛ՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՛ՆՐԱ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱ՛Ն ՏԱՐԱԾՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ Ա՛ՆԻ

1. Վրաստանի հզորացումը Դավիթ թագավորի ժամանակ.— Կախեթի, Շամշուլդեի, Սոմխեթի ամրությունների և Քալածորի միացումը Վրաստանին:— 2. Կյուրիկյան թագավորության նվաճումը:— 3. Վրաստանի հաջողությունները հյուսիսում և մշտական զորքի կազմակերպումը ղփչաղներից.— Կապաղակի գրավումը.— թուրք զորքերի, քոչվորների ու գաղթականների կոտորածը Թուղարքում, Արշարունիքում և Խունանում.— կռիվների կապը խաչակիրների շարժման հետ հարավում:— 4. Ամիրայությունների միացյալ ուժերի պարտությունը Տփղիսի մոտ.— Տփղիսի, Շամախու և Սոմխեթի բազմաթիվ բերդերի նվաճումը:— 5. Անի քաղաքի հանձնումը Վրաց թագավորին:— 6. Դավիթ թագավորի կուլտուրական ու շինարարական գործունեությունը:— 7. Նրա բարեհաճ քաղաքականությունը հայերի նկատմամբ.— հայերի գաղթը Վրաստան:— 8. Վրաստանը Դեմետրե Ա-ի ժամանակ.— Անիի և Շիրակի հանձնումը Շեդդադյաններին:— 9. Հայերի ծանր դրությունը Շիրակում:— 10. Կռիվները ամիրայությունների դեմ Դեմետրե Ա-ի ժամանակ:— 11. Դավադրությունները Դեմետրեի կյանքի դեմ և խռովությունները Գանձակի կուսակալության մեջ:— 12. Գանձակի մեծ երկրաշարժը և Դեմետրեի ու Ղարա-Սնգուռի արշավանքները:— 13. Խուհտուղտիի, Ջավլիի և այլ ամիրաների ապստամբությունը Գանձակում:— 14. Գանձակի ամիրաների արշավանքները Կապանի, Հաբերքի, Խաչենի և Տավուշի վրա:

*Մելիքշահի մահից հետո սկսվեց, ինչպես ասացինք, Սելջուկյան աշխարհակալության քայլ առ քայլ անկումը, և Գեորգի Բ-ին հաջորդող Դավիթ թագավորը (1089—1125) ո՛չ միայն կասեցրեց թուրքերի հաղթական առաջխաղացումը, այլև կարողացավ ետ մղել նրանց ու տեր դառնալ գրեթե ամբողջ Անդրկովկասին։*

*Իր թագավորության առաջին տարիներում Դավիթ թագավորը, որը կոչվում է Շինող, 12 հարկ էր վճարում, ինչպես և իր հայրը, Գեորգի Բ-ը, Սելջուկյան սուլթանությանը։ Սակայն երբ 11-րդ դարի վերջերում սկսվեցին ներքին պատերազմները Մելիքշահի որ-*

*դիների միջև՝ Դավիթ Շինողը վերականգնեց Վրաստանի անկախությունը և դադարեցրեց պայմանավորված հարկի վճարումները։*

*Այնուհետև նա, սկսած 12-րդ դարի սկզբներից, շարունակ պատերազմ վարեց հարևան իշխանությունների ու ամիրայությունների դեմ և աշխատեց ընդարձակել իր պետության սահմանները և արևելյան, և հյուսիսային, և հարավ-արևմտյան ուղղությամբ։*

*Դավիթ Շինողի գահակալության ժամանակ Տփղիսը, Ռուսթավը, Շամշուլդեն և Սոմխեթի որոշ մասերը թուրքերի ձեռին էին, իսկ Կախեթը առանձին թագավորություն էր և այնտեղ իշխում էր Դավիթ Անհողինի Գագիկ որդու թոռը՝ Կյուրիկե Դ-ը (1084—1102)*[1]*։ Աղբյուրների վկայություններից երևում է, որ Դավիթ Շինողը դեռ 1101 թվին առել էր այս Կյուրիկեից Զեդազեն բերդը, իսկ սրա հաջորդի՝ Աղսարթան Բ-ի, թագավորության հենց սկզբներում նվաճել էր ու միացրել Վրաստանին ամբողջ Կախեթը*[2]*։*

*Կախեթը վերցնելուց հետո՝ Վրաստանն արդեն ընդհուպ մոտենում էր Գանձակի ամիրայությանը և Շիրվանին, իսկ թուրքերի գրաված արևմտյան երկրները, Տփղիսը, Շամշուլդեն, Ռուսթավը և Սոմխեթը՝ շրջափակվում էին ուժեղացող Վրաստանի կողմից թե՛ արևմուտքից և թե՛ արևելքից։*

*Գանձակի սելջուկյան կուսակալների համար անկախ ու հզոր Վրաստանի ընդարձակումը, իհարկե, հանդուրժելի չէր։ Ուստի և արդեն 1104/5 թվականներին սկսվեցին մեծ կռիվները վրացիների ու թուրքերի միջև, որոնք, մեծ մասամբ, վերջանում էին վրացիների հաղթությամբ։*

*1110 թվին, ինչպես վկայում է Քարթլիս-ցխովրեբան*[3]*, վրացական զորքերը Աբուլեթ և Իվանե Օրբելյանների առաջնորդությամբ կարողացան, փախուստի մատնելով թուրքերին՝ նվաճել Շամշուլդեն և մեծագույն մասը Սոմխեթի բերդերի։ 1117 թվին Դավիթ Շինողի որդին, Դեմետրեն, արշավելով Շիրվանի շահերի գերիշխանության տակ գտնվող Շաքիի (այժմյան Նուխու) կողմերը՝ գրավեց այնտեղ Քալաձոր բերդը*[4]*։ Իսկ 1118 թվին Դավիթ Շինո-*

---

1 Տե՛ս *Пахомов Е. А.*, О монете Корикэ куропалата, Изв. Кавк. Ист.-арх. института, т. III, Тифлис, 1925, стр. 40 և Մովսեսյան, «Լօռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը», Վիեննա, 1923, էջ 86—87։

2 Տե՛ս Մովսեսյան Ղ., Նույն տեղում, էջ 87։

3 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, էջ 216։

4 Տե՛ս Ջուանշեր, Համառօտ պատմութիւն Վրաց, գլ. ԺԸ, էջ 118, նաև *Крымский А.*, Шеки, Сборник «Памяти акад. Н. Я. Марра», М., 1938, էջ 382։

ղը, ավելի ևս ընդարձակելով Վրաստանի սահմանները՝ գրավեց Կյուրիկյանների Լոռի քաղաքաբերդը և Ագարակը ու այնուհետև հետզհետե տիրեց Կյուրիկյան թագավորության բոլոր երկրներին[1]։

Կյուրիկե Ա-ի որդիները, Դավիթ Բ-ը և Աբասը, ինչպես վկայում են Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը, նեղվելով վրացիներից, գնացին Առանի, այսինքն՝ Գանձակի ամիրայության իշխանների մոտ և ստացան նրանցից իբրև ժառանգություն Տավուշը, Մածնաբերդը և այլ տեղեր[2]։ Իսկ սրանց մայրաքաղաքը՝ Լոռին իր գավառովը, Ագարակը և Կյուրիկյանների նախկին մայրաքաղաքը, Շամշուլդեն, իր գավառովը՝ Դավիթ թագավորը տվեց Իվանե Օրբելյանին[3], որը Շամշուլդեն ստացել էր թուրքական տիրապետությունից դեռ առաջ Գեորգի Բ-ից (1072—1089)։

1118 թվին մեռավ սելջուկյան սուլթան Մուհամմեդ-Տափարը և նրան հաջորդեց մեծ որդին Մահմուդը, որը դեռ անչափահաս էր։ Սրա սուլթանության ժամանակ Գանձակ ուղարկվեց, իբրև կուսակալ, Մուհամմեդ-Տափարի մյուս որդին՝ Մելիքը։

Երկպառակությունները և ներքին խռովությունները, որ Սելջուկյան սուլթանության մեջ սկսվել էին Մելիքշահի մահից հետո՝ շարունակվեցին նաև անչափահաս Մահմուդ սուլթանի իշխանության ժամանակ (1118—1131) և Վրաստանը, օգուտ քաղելով սելջուկյանների թուլացումից՝ շուտով ավելի ևս զորացավ և դառավ վտանգավոր ախոյան Սելջուկյան Պարսկաստանի։

Մոտավորապես 1118—1120 թվականներին Դավիթ Շինողը հնազանդեցրեց իրեն օսերի իշխաններին և գրավեց Դարիալի բերդը և Կովկասյան լեռների այդ կողմի անցքերը։ Հյուսիսային Կովկասից նա գաղթեցրեց Վրաստան, ինչպես վկայում է Ջուանշերը, 40.000 տուն ղփչաղներ և սրանցից կազմակերպեց մշտական զորք[4]։ Այնուհետև թուրքական ծագում ունեցող այս ղփչաղները պատերազմում էին վրացական զորքերի շարքերում։

1120 թվին Դավիթ Շինողը արշավեց նորից Շիրվանի կողմերը և գրավեց այստեղ Կապաղակ քաղաքը, որը գտնվում էր Շաքիի, Պարթավի ու Շիրվանի միջև։ Նույն թվին նա հարձակվեց և կոտ-

---

[1] Տե՛ս Ջուանշեր, նույն տեղում, էջ 119 և Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները, Ա, էջ 217։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Թիֆլիս, 1910, էջ 145. Վարդան վրդ., գլ. ԿԱ, էջ 106։

[3] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 379 (Թիֆլիս, 1911)։

[4] Տե՛ս Ջուանշեր, գլ. ԺԸ, էջ 118—119։

րեց թուրքերին Արշարունիքում և Թուղարքի ձմերոցում, որ գտնվում էր Ճորոխ գետի մոտ[1]։

Թուրք ամիրայությունները թեև կատաղի կերպով դիմադրում էին Վրաստանին, սակայն շարունակ հաղթվում էին և ստանում ջախջախիչ հարվածներ։

1121 թվի մարտ ամսին Դավիթ թագավորը հանկարծ եկավ իր թագավորության արևմտյան շրջաններից Քարթլի և այստեղից գնաց Խունան, ուր թուրք քոչվորներն արածեցնում էին ձմերոցում իրենց հոտերը։ Այստեղ նա սրանց սրի անցկացրեց, կոտորեց գյուղերում թուրք գաղթականներին և հասավ մինչև Պարտավ[2]։

Ուշադրության արժանի է, որ Վրաստանի այս կատաղի կռիվները զուգադիպում են խաչակրաց արշավանքներին։ Հետաքրքիր է նաև, որ դրամների վրա «Գեորգիի որդի թագավոր թագավորաց Դաուդը» անվանվում է «Մեսիայի սուր»։ Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ Դավիթ թագավորի զորքերի շարքում կար ֆրանկների մի փոքր զորամաս[3] (Վաղարշապատ, 1898, էջ 350)։

Դավիթ Շինողի 1120 և 1121 թվականների հարձակումները թուրքերի վրա ամենուրեք առաջ բերին մեծ զայրույթ։ Հենց նույն 1121 թվին թուրքական ամիրայությունները համաձայնեցին իրար հետ և ուզեցին ջախջախել իրենց այս նոր վտանգավոր թշնամուն միացյալ ուժերով։

Մատթեոս Ուռհայեցին և Իբն ալ-Ասիրը վկայում են, որ Դավիթ թագավորի դեմ թուրքական մեծ արշավանք կազմակերպվեց, որին մասնակցում էին Գանձակի Մելեք սուլթանը[4], Միջագետքի Արտուխյան տոհմի Իլղազի ամիրան և արաբների թագավոր Դուբեյս Բ-ը, որը արաբական պատմության մեծ հերոս Սադակա Ա-ի որդին էր[5]։ Սրանց միացյալ զորքի թիվը Մատթեոս Ուռհայեցին հաշվում է ավելի քան 500.000, իսկ Իբն ալ-Ասիրը միայն 30.000։

---

1 Տե՛ս Ջուանշեր, գլ. ԺԸ, էջ 119։

2 Նույն տեղում, գլ. ԺԸ, էջ 119—120։

3 Երեմյանի կարծիքով, այս զինվորները ո՛չ թե «Փռանգ»-ներ էին, այլ «Վռանգ»-ներ, այսինքն՝ «վարյագ»-ներ. տե՛ս *Еремян*, Юрий Боголюбский в армянских и грузинских источниках, Научные труды Ереванского Гос. Университета, том XXIII (1946), էջ 390։

4 Մուհամմեդ սուլթանի այս Մելեք որդին Իբն ալ-Ասիրի մոտ անվանված է Տուղրուլ։

5 Տե՛ս *Ибн-ал-Асир*, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 123 և Մատթ. Ուռհայեցի, էջ 348—350։ Համեմատե նաև Ջուանշեր, գլ. ԺԸ, էջ 120. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Ա, էջ 218. Սամուել Անեցի, էջ 125. Միխիթար Այրիվանեցի, էջ 62. Վարդան վրդ., գլ. ԿԸ, էջ 119։

Ուռհայեցու թիվը, իհարկե, առասպելական է, սակայն նրա վկայություններից պարզ երևում է, որ թուրքական ամիրայությունները լարել էին իրենց բոլոր ուժերը, որպեսզի կարողանան խորտակել Վրաստանի զորությունը։

Թշնամի զորքերն իրար հանդիպեցին Ուռհայեցու ասելով՝ «ի կողմն Տփխեաց քաղաքին ի լեառն, որ Դեկոր կոչի», իսկ ըստ Ջուանշեր պատմիչի՝ «ի Թռեղս, ի Մանկլիս և ի Դիդկորքն»։ Սակայն այս անգամ ևս թուրքական զորքերը սոսկալի կերպով պարտվեցին (օգոստոս ամսին 1121 թվի) և Դավիթ թագավորի ձեռքն անցավ անչափ ավար և մեծ թվով գերիներ։ Թուրքերի կրած այս մեծ պարտությունից հետո Վրաստանը դառնում էր հյուսիսում վերոհիշյալ ամիրայությունների ամենավտանգավոր թշնամին։

Այս մեծ հաղթությունից հետո Դավիթ Շինողը կարողացավ նվաճել թուրքական տիրապետության տակ գտնվող բազմաթիվ նոր շրջաններ թե՛ Սոմխեթում ու Առանում և թե՛ Շիրվանում ու Հայաստանում։

1122 թվին նա գրավեց երկար պաշարումից հետո Տփղիս քաղաքը[1], որը ութերորդ դարից սկսած գտնվում էր օտար իշխանության ներքո։ Հետևյալ տարին, 1123 թվի գարնանը, Դավիթ Շինողը արշավեց Շիրվան ընդդեմ սելջուկյան Մահմուդ սուլթանի և գրավեց այստեղ Շամախի քաղաքը։ Իսկ ամառվա ամիսների ընթացքում նա նվաճեց Գուգարքի արևելյան և Առանի արևմտյան շրջանները, Գագա դաշտից դեպի արևելք, և գրավեց այստեղ գտնվող բերդերն ու ամրոցները՝ Գագը, Գավարզինը, Կայենը, Կայծոնը, Տերունականը, Նոր բերդը, Տավուշը, Մահկանաբերդը, Մանասգոմը, Խալինձքարը և ուրիշները[2]։

Դավիթ թագավորի հաղթություններն ընդհանուր թշնամու դեմ Վրաստանի սահմանակից հայաբնակ շրջաններում առաջ էին բերում ոգևորություն և հույս էին ներշնչում հայերին, որ Վրաստանի օգնությամբ իրենք ևս կկարողանան ոտքի կանգնել ու ազատվել օտար տիրապետությունից։

Ինչպես վկայում է Քարթլիս-ցխովրեբայի Անանուն հեղինակի «Դավիթ արքայից արքայի պատմությունը», 1123 թվի օգոստոսի

---

[1] Տե՛ս Ибн-ал-Асир, էջ 124. Մատթ. Ուռհայեցի, էջ 350. Վարդան վրդ., ԿԸ, էջ 118. Ջուանշեր, գլ. ԺԸ, էջ 120 և ուրիշ.։

[2] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները, Ա, էջ 218. Ջուանշեր, գլ. ԺԸ, էջ 121. Վարդան վրդ., ԿԸ, էջ 119. Սամուել Անեցի, էջ 125. Միխիթար Այրիվ., էջ 62 և ուրիշ.։

*20-ին Վրաց թագավորի մոտ եկան Անեցի ավագների ուղարկած պատգամավորները և հայտնեցին, որ քաղաքացիները ցանկանում են քաղաքը հանձնել իրեն՝[1]։ Եվ Դավիթ թագավորը իսկույն գնաց Անի և քաղաքը գրավեց առանց պատերազմի։ Անիում և Շիրակում իշխում էր այդ ժամանակ Մանուչեի «անարի և կնամարդի» որդին, Աբուլսուարը, որը, անկարող լինելով պաշտպանել քաղաքը հինահարությւններից և ասպատակություններից՝ ուզում էր Անին վաճառել 60.000 դինարի Կարսի ամիրային։ Հայերը, բացի այդ, խիստ դժգոհ էին Շեդդադյաններից, որովհետև նրանք Անիի Կաթուղիկե եկեղեցին վերածել էին մզկիթի։*

> *«Անի մեր քաղաքի և Շիրակ գավառի տարակույսի մեջ ընկած ու տառապած բնակիչները,— ասում է նույն այս 12-րդ դարի ժամանակագիր Սամուել Անեցին,— մտածեցին ելք գտնել փոթորկից և նրանք, անձնատուր լինելով Վրաց Դավիթ թագավորին՝ դավաճանեցին Մանուչեի որդուն, Աբուլսուարին, որը իշխում էր քաղաքում հոր մահից հետո։ Նրանք բանալով քաղաքի դռները՝ թագավորին ներս թողին. և այդ ժամանակ, երբ սա ներս էր մտնում՝ և ոչ մի մարդ չսպանվեց»։*
>
> *[«Տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անւոյ և Շիրակ գաւառի՝ խորհեցեալ ելս գտանել մրրկին ձեռն տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, նենգեցին ամիրային Աբըլսուարայ՝ որդւոյ Մանուչէի, որ տիրէր քաղաքին յետ հօրն մահու. առնըլով զթագաւորն ի ներքս՝ բանալով ըզդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն, եղև վընաս արեան և ոչ միոյ շնչոյ»[2]։*

*Միջնադարյան իրավահասկացողությամբ Շիրակը և Անին համարվում էին Բագրատունյաց տոհմի սեփականությունը։ Երբ 1045 թվին հույները նենգությամբ դուրս հանեցին Գագիկ Բ-ին իր երկրից և նրան բռնությամբ պահեցին իրենց մոտ՝ Անի քաղաքի ավագների մի մասը տրամադիր էր քաղաքը հանձնելու նույն այս Դավիթ թագավորի պապին, Աբխազիայի և Վրաստանի Բագարատ թագավորին, որովհետև սա ևս ծագում էր Բագրատունիների տոհմից և որդին էր Սենեքերիմ Արծրունու Մարիամ դստեր։ Այդ տե-*

---

[1] *Տե՛ս* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, հատ. Ա, էջ 218։*

[2] *Տե՛ս* Սամուել Անեցի, *էջ 125—126։ Համեմատե նաև* Վարդան վրդ., *գլ. ԿԸ, էջ 119.* Մատթ. Ուռհայեցի, *էջ 359.* Մխիթար Այրիվ., *էջ 62.* Ջուանշեր, *գլ. ԺԸ, էջ 121 և ուրիշ.։*

սակետից, Վրաց Բագրատունիների տիրապետությունը և գերագույն իշխանությունը Անի քաղաքում օրինավոր պետք է ճանաչվեր ո՛չ միայն ժողովրդի աչքում, այլև հայ իշխանների կողմից։

Դավիթ թագավորը, Անին գրավելուց հետո՝ գերի տարավ Աբուլսուար ամիրային ու նրա որդիներին և քաղաքի վրա տեղակալ կարգեց Աբուլեթ իշխանին և նրա որդուն Իվանեին։

1124 թվին Դավիթ թագավորը նվաճեց ամբողջ Շիրվանը և այնուհետև նրա կազմած պետության սահմանների մեջ մտնում էր Անդրկովկասի մեծագույն մասը։ Վրաց մեծ թագավորության սահմանները տարածվում էին այժմ Սև ծովից մինչև Կասպից ծովը և Կովկասյան լեռներից մինչև Շիրակ և մինչև Կարսի ու Կարնո ամիրայությունների շրջանները։

Զուգընթաց իր պատերազմական փայլուն հաջողություններին՝ Դավիթն աշխատում էր բարեկարգել իր երկիրը և մեծ չափով աջակցում էր ավերված շրջանների վերաշինությանը։ Կուլտուրական և շինարարական իր եռանդուն գործունեության համար Դավիթ թագավորին անվանում են Շինող։ Նրա կարգադրությամբ վերանորոգվեցին ամեն տեղ սելջուկների ավերած եկեղեցիները, վանքերը, պալատներն ու հասարակական շենքերը, կառուցվեցին հանրօգուտ նոր հիմնարկություններ, վերաշինվեցին նաև ճանապարհներն ու ջրանցքները։ Միևնույն ժամանակ Դավիթ Շինողն ամեն կերպ նպաստում էր գիտության ու գրականության զարգացմանը։

Դեպի հայությունը Դավիթ Շինողն ունեցավ բարեմիտ ու հոգատար վերաբերմունք։ Հայոց և Վրաց եկեղեցիների կրոնադավանաբանական տարբերությունը ո՛չ մի ազդեցություն չունեցավ նրա այդ բարեհաճ քաղաքականության վրա։ Նա ո՛չ միայն հովանավորում էր հայերին, այլև աջակցում էր ավերված հայ եկեղեցիների ու վանքերի վերաշինության և նվիրաբերություններ էր անում ի նպաստ այդ հիմնարկությունների[1]։

Նրա համբերատարությունը խոր տպավորություն էր թողել հայերի վրա և Վարդան վարդապետն առանձնապես շեշտում է, որ «ոչ էր նա երկմիտ եկեղեցւոյ և յաղօթից մերոց, վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն»[2]։

Վրաստանի զորեղացման պատճառով և շնորհիվ Դավիթ Շի-

---

[1] Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբ., 1913, էջ 28, Հաղբատի 1121 թվի արձանագրությունը։

[2] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԿԸ, էջ 120.

նողի հայերի հանդեպ վարած բարեհաճ ու խնամատար քաղաքականության՝ մեծ չափեր ստացավ հայերի գաղթը դեպի Հայաստանի հյուսիսային կողմերը և դեպի Վրաստան։ Այս գաղթականության համար Դավիթը հատկացրել էր հատուկ քաղաքավայրեր ու ավաններ։ Դավիթ Շինողը մեռավ 1125 թվի հունվարի 24-ին և նրան հաջորդեց որդին՝ Դեմետրեն (1125—1155/6)։

Ինչպես հայտնի է, Դավիթ Շինողն ունեցել է երկու կին։ Նրա առաջին կինը, ինչպես վկայում է Մատթեոս Ուռհայեցին, եղել է հայ[1]։ Իսկ նրա երկրորդ կինը, Գորանդուխտը, որի հետ նա ամուսնացել էր իր հայ կնոջից բաժանվելուց հետո՝ ղփչաղների մեծ իշխանի որդու դուստրն էր։ Դավթի հաջորդ Դեմետրե Ա-ը նրա առաջին հայ կնոջ որդին էր։ Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ այս Դեմետրեն էր «այր քաջ և աստուածասէր, նմանեալ հօր իւրոյ Դաւթի ամենայն գործովք բարեաց»[2]։

Դեմետրե Ա-ի ժամանակ թեև շրջակա թուրք ամիրայություն-ները շարունակում էին իրենց հարձակումները Վրաստանի դեմ, սակայն նրա երկարատև, մոտ երեսուն և մեկ տարվա թագավո-րության ընթացքում, Վրաց մեծ պետությունը, ընդհանուր առ-մամբ, գտնվում էր խաղաղ կացության մեջ և զորեղանում էր թե՛ կուլտուրապես և թե՛ ռազմական իր նշանակությամբ։ Թշնա-մու հարձակումներից նեղվում էին, գլխավորապես, Վրաստանի սահմանային շրջանները։

Ջափազանց ծանր էր Անի քաղաքի և Շիրակի դրությունը։ Աբուլսուար ամիրան, որին որդոց հետ գերի էին տարել Վրաստան՝ մեռել էր աքսորում, ինչպես և նրա երկու որդիները։ Աբուլսուարի մեծ որդին, Փատլունը, որը Անիի 1123 թվի նվաճումից առաջ Պարսկաստան էր գնացել՝ եկավ մեծ ուժերով Անի քաղաքի դեմ և, դաշն կնքելով շրջակա ամիրայությունների հետ, պաշարեց քաղաքը։

Թեև քաղաքացիները, Աբուլեթի որդու՝ Իվանեի առաջնորդու-թյամբ, արիաբար ու հաջողությամբ դիմադրում էին Փատլունին, սակայն երկարատև պաշարման պատճառով քաղաքում սկսվել էր սովը, և Դեմետրե Ա-ը, ի նկատի առնելով ժողովրդի դառն վիճա-կը՝ 1126 թվին Անին զիջեց Փատլունին, պայմանով, որ նա ընդու-նե Վրաստանի գերիշխանությունը, անհավատարմության համար

[1] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 357 և 365։

[2] Նույն տեղում, էջ 365։

*վրեժխնդիր չլինի։ Հայ ազգաբնակությունից և Անիի Կաթուղիկե եկեղեցին, որ առաջ մզկիթի էր վերածվել՝ մնա հայերի ձեռին։*

*Փադլուն ամիրան, որ դաշինքով ու երդումով ընդունեց այս պայմանները, հակառակ իր տված խոստումներին, շուտով սկսեց ամեն կերպ նեղել հայերին։ Սամուել Անեցին, որ ականատես է եղել այդ դեպքերին, պատմում է, որ Փադլունը հիշյալ պայմանները՝*

> *«Հանձն էր առել առժամանակ, բայց մի փոքր դադարից հետո՝ տեսակ տեսակ միջոցներով վրեժ առավ և հաստուցեց նրանց փոխհատուցումը. և թեպետ սրանց իշխանակալության ժամանակ երկիրը խաղաղացավ սովորական հենից՝ սակայն վերոհիշյալ նեղությունների պատճառով և շնորհիվ հարկահանական հափշտակությունների, մենք ընկանք ծայրահեղ աղքատության մեջ և ենթարկվեցինք անհնարին տառապանքների, ինչպիսի տառապանքներ Հայոց աշխարհը կրել էր առաջվա ժամանակներում»։*
>
> *[«Զոր թէպէտ և յանձն առնոյր առժամն, այլ յետ ղպարապ առնլոյ՝ խիք խիք հնարիւք էառ վրէժս հատուցեալ նոցա զհատուցումն, յորոց իշխանակալութեան թէպէտ և խաղաղանայր երկիրս ի սովորական հինից, այլ յաղագս վերոյգրեալ նեղութեանց՝ և վասն հարկապահանջ յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն և տառապանք անհնարինք, որ յառաջագոյն ժամանակօք ունէր զաշխարհս Հայոց»]*[1]*։*

*Քրիստոնյա հայության համակրանքը ու աջակցությունը Վրաստանի հանդեպ՝ նրա համար, բնականաբար, ստեղծում էր խիստ ծանր կացություն մահմեդական ամիրայությունների իշխանության տակ գտնվող հայկական շրջաններում։ Հայաստանի ու հայության ազատագրումը թուրքական ամիրայությունների տիրապետությունից պահանջում էր, իհարկե, երկարատև համառ մաքառում և կարող էր իրագործվել քայլ առ քայլ՝ հայ ժողովրդի զրկանքների ու զոհողությունների թանկ գնով։*

*Դեմետրե Ա-ի ժամանակ կռիվները շարունակվեցին, գլխավորապես, Գանձակի սելջուկյան կուսակալության դեմ։ 1128 թվին, ինչպես՝ վկայում են Սամուել Անեցին և Մխիթար Այրիվանեցին*[2]*,*

---

[1] Սամուել Անեցի, էջ 127։ Համեմատե նաև Մատթ. Ուռհայեցի, էջ 365. Վարդան վրդ., գլ. ԿԹ, էջ 120 և ուրիշներ։

[2] Սամուել Անեցի, էջ 129 և Մխիթար Այրիվ., էջ 62։

Դեմետրեն պարտություն էր մատնել Նոր-բերդում, Գանձակի կուսակալության արևմտյան սահմանների մոտ, «Խարասնգուռ» կամ ավելի ճիշտ Ղարա-Սնգուր աթաբեկին։ Այս հաջողությունից հետո, նույն 1128 թվին, Օրբելյան Աբուլեթը և նրա Իվանե որդին նվաճեցին Դմանիսը, իսկ Օրբելյան մյուս Իվանեն և նրա որդին Սմբատը՝ Խունանը[1], որը, ըստ երևույթին, Հայոց հին Հունարակերտ քաղաքն էր, որ գտնվում էր Կուր գետի վրա Ձորոփորի հարավակողմում։

Դեմետրեի թագավորության առաջին տարիներում կռիվներ տեղի ունեցան նաև Հայաստանում։ Բայց այդ կռիվներում Վրաստանը հաջողություն չունեցավ։

1130 թվին, ինչպես վկայում է Վարդան վարդապետը[2], Խուրթի ամիրան, Կուղի որդին, հարձակվելով Դվինի վրա, որը գտնվում էր Շեդդադյանների իշխանության ներքո՝ կարողացավ տիրել այդ քաղաքին։ Տեղի ունեցած պատերազմում վիրավորվեց Անիի Փադլուն ամիրան (1126—1132), որը յոթ տարի Անիում իշխելուց հետո մեռավ իր ստացած վերքից, ինչպես վկայում է Սամուել Անեցին[3], ՇՁԱ[=1132] թվին։

Փադլունը, որը 1126 թվին ընդունել էր Վրաստանի գերիշխանությունը՝ ըստ երևույթին կռիվ էր մղել Խուրթի ամիրայի դեմ իբրև Վրաստանի դաշնակից։ Ուստի և 1131 թվին Գառնիի կողմերը արշավեց և ուզեց հարձակվել Դվինի վրա Աբուլեթի որդին՝ Իվանե Օրբելյանը։ Սակայն նա պարտություն կրեց Խուրթի ամիրայից և վերջինս, ինչպես վկայում է Վարդան վարդապետը, բարբարոսաբար կտրել տալով ճակատամարտում սպանված վրացական զինվորների գլուխները՝ եփել տվեց թանի մեջ և այդ «թանեփաց» գանգերը դարսել տվեց Դվինի մինարեի կտուրի վրա[4]։

Վրաստանի ընդհարումները ամիրայությունների հետ, ինչպես տեսնում ենք, տեղի են ունենում այժմ ո՛չ թե բուն Վրաստանում, այլ Վրաստանից դուրս՝ Անիի, Գանձակի, և Դվինի կողմերում։ Այս կռիվները, եթե երբեմն վերջանում էին ամիրայությունների հաղթանակով՝ կրում էին ո՛չ թե հարձակողական, այլ պաշտպանողական բնույթ ընդդեմ ծավալվող ու առաջ շարժվող Վրաց մեծ պետության։

---

1 Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԿԸ, էջ 120 և Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 379։

2 Նույն տեղում, գլ. ՀԱ, էջ 122։

3 Սամուել Անեցի, էջ 130։

4 Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՀԱ, էջ 123. Սամուել Անեցի, էջ 130։

Դեմետրե թագավորի ժամանակ ծայր առավ Վրաստանի ու Վրաց Բագրատունիների իշխանության համար խիստ վտանգավոր մի երևույթ, որ ֆեոդալական պետականության ուղեկցող մշտական դժբախտությունն էր։ Դեմետրե Ա-ի դեմ ըմբոստության ու ապստամբության փորձեր եղան, որոնց մասնակից էին Վրաստանի ամենազորեղ ու նշանավոր իշխանները, ինչպես Աբուլեթ Օրբելյանը և նրա Իվանե որդին։ Սակայն Դեմետրեն կարողացավ շատ շուտով սանձահարել ու պատժել խռովարար իշխաններին։

Վրաստանի համար մի բարեբախտություն էր սակայն, որ անմիաբանությունը և երկպառակությունները խոր արմատ էին գցել նաև Սելջուկյան սուլթանության մեջ և իրար հետ համերաշխ չէին նաև ամիրայությունները։ Սրանց անվերջ խռովությունների մասին Դեմետրե Ա-ի թագավորության ժամանակաշրջանում, գլխավորապես, Գանձակի կուսակալության մեջ՝ կարևոր ու մանրամասն տեղեկություններ, որ հայտնի չեն այլ աղբյուրներից, հաղորդված են Մխիթար Գոշի Դատաստանագրքի վերջաբանում և մեջ են բերված Ալիշանի Հայապատումում[1]։

Գանձակի կուսակալության դրությունը չափազանց ծանր էր 1139 թվին։ Այս թվականի սեպտեմբերի 30-ին Գանձակ քաղաքում, նրա դաշտային շրջաններում և Փառիսոսի ու Խաչենի որոշ մասերում՝ տեղի ունեցավ սարսափելի երկրաշարժ, որը խիստ ուժեղ էր, մանավանդ, Գանձակում։ Տների փլատակներում, ինչպես վկայում է Իբն ալ-Ասիրը, վախճանվել էր հարյուր հազարավոր բնակչություն։ Եվ նույն այս թվին Գանձակ եկավ իր զորքերով Դեմետրե թագավորը, սրի անցկացրեց և գերի վերցրեց բնակչության մնացորդները, և քաղաքը կողոպտելուց հետո, իր հետ Վրաստան տարավ քաղաքի երկաթյա դռները[2]։

Կարճ ժամանակից հետո Պարսկաստանից եկավ Գանձակ Ղարա-Սնղուր աթաբեկը, որը սկիզբ դրեց քաղաքի ու շրջանների վերանորոգմանը և շինեց քաղաքի քանդված պարիսպները։ Նա աշխատեց վրեժ առնել Վրաց թագավորից, արշավեց Վրաստան և, պարտության մատնելով Իվանե Օրբելյանին՝ գրավեց այնտեղ

---

[1] Տե՛ս Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 384—391,—«Կաթողիկոսք և դէպք Աղուանից ի մէջ ԺԲ դարու»։

[2] Տե՛ս Իբն ալ-Ասիր, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 125 (XI, 51). Մխիթար Գոշի հիշատակարանի հատվածը՝ «Հայապատում», էջ 361—362. Կիրակոս Գանձակեցի, էջ 108, 189. Սամուել Անեցի, էջ 132 և ուրիշ.։

բերդեր և գյուղեր: Պարսկաստան վերադառնալիս՝ նա ճանապարհին վախճանվեց, հասնելով Ատրպատականի սահմանը (1140 թ.)[1]:

Ղարա-Սնգուրի մահից հետո, ինչպես երևում է Մխիթար Գոշի վերոհիշյալ հիշատակարանից, Գանձակի կուսակալության մեջ սկսվեցին ըմբոստություններ Սելջուկյան Իրաքի սուլթանության դեմ, որոնք շարունակվեցին մինչև Փահլավանյան տոհմի իշխանության հաստատումը Առանում և Ադրբեջանում (1148—1225):

Գանձակի շրջանը, որն անջատված էր Պարսկաստանից դժվար հաղթահարելի ճանապարհներով ու լեռներով՝ խիստ հարմար վայր էր այն ըմբոստ ու անհնազանդ ամիրաների համար, որոնք ձգտում էին Անդրկովկասում հիմնել իրենց սեփական իշխանությունը և լինել անկախ սելջուկյան սուլթաններից:

1140—1 թվին Գանձակ քաղաքի իշխան կամ շահապ կարգվեց Ղարա-Սնդուր աթաբեկի ծառան, Խուհտուղտին, որը ապստամբեց Մասուդ սուլթանի դեմ (1133—1152) և ուզեց անկախ լինել Սելջուկյան կենտրոնական կառավարությունից: Սակայն 1142 թվին նրա դեմ ելավ Ջավլին, որը զորագլուխ էր Գանձակում, և, պաշարելով ու վերցնելով քաղաքը՝ գերի առավ Խուհտուղտիին, կուրացրեց նրան և հաստատեց Առանում իր իշխանությունը (1142/3 թ.): Շուտով սա ևս ուզեց ապստամբել Մասուդի դեմ, բայց հանկարծամահ եղավ Մարաստանի Զենջան քաղաքում (1146—7 թ.), որը Մխիթար Գոշի մոտ անվանված է Զանգան[2]:

Ջավլիից հետո Առանին և Ադրբեջանի հյուսիսային մասերին տիրեց սուլթան Մասուդի հրամանով Փախրադինը, որը, ինչպես վկայում է Մխիթար Գոշը՝ «էր մեծատուն և մեծատոհմ յազգէ»[3]: Բայց սրան կարճ ժամանակից հետո, 1147—8 թվին, նույն սելջուկյան սուլթանի հրամանով սպանեց «Խազբեկ» կամ ավելի ճիշտ՝ Ղազի բեգ ամիրան, որն ըստ իս կարող է լինել սուլթան Մասուդի հռչակավոր Զանգի աթաբեկի մեծ որդին, Սեյֆ-ադ-դին Ղազի Ա-ը, որը հոր մահից հետո իշխեց Մոսուլում 1146 թվից մինչև 1149 թիվը[4]:

Փախրադինի սպանությունից հետո Գանձակի կուսակալու-

---

[1] Տե՛ս Մխիթար Գոշի հատվածը՝ «Հայապատում», էջ 262 և Սամուել Անեցի, էջ 132։

[2] Տե՛ս «Հայապատում», էջ 386. Համեմատե նաև Իբն ալ-Ասիր, էջ 125 (XI, 48):

[3] Տե՛ս «Հայապատում», էջ 386։

[4] Տե՛ս Лэн-Пуль, Мусульманские династии, էջ 137—138։

*թյանն ուզեց տիրապետել առանց սուլթանի հրամանի Որդիշ ամիրան, սակայն քաղաքացիները սրան չընդունեցին և իշխանությունը ստանձնեց քաղաքում իբրև շահապ սուլթան Մասուդի ուղարկած Ռովադի ամիրան։*

*Ռովադի իշխանության ժամանակ ապստամբվեցին Գանձակի գավառի թուրքմենները, որոնց ձեռքումն էին այդ ժամանակ Գանձակի ու Ջուանշիրի գավառների լեռնային մասերում գտնվող Հերքան-բերդը, Ճառաբերդը (Թարթառ և Թրղին գետերի միախառնման մոտ)*[1]*, Ջարեքը և այլ ամրություններ։ Թուրքական գաղթականությունը, ինչպես տեսնում ենք, բնակություն էր հաստատել Գանձակի նահանգում սելջուկյան արշավանքներից հետո 11—12-րդ դարերում։*

*Թուրքմենների ապստամբությանը և անընդհատ շարունակվող խառնակություններին վերջ տալու համար Ռովադիի հակառակորդները կանչեցին Ելտկուզ աթաբեկին, որն այդ ժամանակ Նախիջևան քաղաքի և գավառի ամիրան էր։ Սա 1148—9 թվականին տիրեց Գանձակի կուսակալությանը, խաղաղեցրեց երկիրը և հիմնադիր եղավ այստեղ Ելտկուզյան կամ Փահլավանյան տոհմի իշխանությանը։*

*Գանձակի կուսակալության ռազմատենչ ու փառասեր ամիրաները, որոնք ձգտում էին ընդարձակել իրենց երկրի սահմանները՝ պարբերաբար շարունակեցին իրենց հարձակումները Արցախի և Սյունիքի վրա։*

*Դեռևս 1126 թվին Հարոն ամիրան, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, ավերեց Կապան ու Արևիք գավառները և առավ «Կաքաւու բերդ»-ը և «Բաղակու քար»-ը։ Այս վերջինի մեջ, որ հին վանք էր, բացի ոսկյա, արծաթյա և այլ թանկարժեք եկեղեցական կահույքից, հավաքված էին շրջակա գավառներից նաև ձեռագրեր, որոնք բոլորն ընկան թշնամու ձեռքը*[2]*։*

*1142 թվին, երբ վերև հիշատակված Գանձակի Խուհտուղտի ամիրան, ապստամբելով սուլթան Մասուդի դեմ՝ ուզեց հիմնադիր լինել սեփական անկախ ամիրայության և աշխատում էր ընդարձակել իր երկրի սահմանները՝ նա մեծ զորքով եկավ Գանձակից «Հադահերայ լեռնակողմ»-ը և պաշարեց այստեղ «Կաթողիկոսի քար»-ը և «Կարապետանց քար»-ը, որ գտնվում էին, ինչպես են-*

---

1 Տե՛ս Մակար եպ. Բարխուտարյանց, *Արցախ*, Բագու, 1895, էջ 239։

2 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԱ, էջ 335 (Թիֆլիս, 1911)։

*թադրում է Մակար եպ. Բարխուտարյանցը[1], Ջարեքի բերդի մոտ Գարդման գավառում։ Նա գրավեց և հրդեհեց ու քանդեց այս ամուր տեղերը[2]։*

*1143—4 թվին, ինչպես վկայում է դարձյալ Մխիթար Գոշը, Խաչենի կողմերը արշավեց Գանձակի Ջավլի ամիրան, որը, գրավելով Խաչենի ամրոցները՝ քանդեց եկեղեցիները, այրեց վանքերը, կոտորեց ազատներին և մաշեց բոլորին սրով ու գերությամբ[3]։ Սամուել Անեցին մատնանշում է, որ Խաչենի ամրոցները Ջավլին կարողացավ առնել խաբեությամբ և սուտ երդմամբ, բանակցելով իշխանների հետ։ Այնուհետև նույն այս Ջավլին 1145 թվին պաշարեց Տավուշ բերդը, որի մեջ ամրացել էր Կյուրիկե Ա-ի որդին, Աբաս Ա-ը։ Առնելով բերդը 40 օրվա պաշարումից հետո՝ նա առանց վնասելու թույլ տվեց Աբաս թագավորին յուրայինների հետ հեռանալ։ Վերջինս գնաց և պատսպարվեց Վրաց Դեմետրե Ա թագավորի մոտ[4]։*

*Նույն կամ հետևյալ տարին (1145—1146 թ.) Ջավլին կրկին եկավ Խաչեն և Հարևան շրջանները, որովհետև բերդամրոցները նորից վերագրավել էին ազատները, որոնք թաքնվել էին անտառների մեջ։ Սակայն այս անգամ նա չկարողացավ նվաճել ամրոցները և, վրեժ առնելով հայերից՝ ավերեց դաշտային շրջանները և այրեց Դադի վանքը, որը գտնվում էր Թարթառ գետի վերին հովտում Հաթերքից դեպի արևմուտք։*

---

1 *Տե՛ս* Մակար եպ. Բարխուտարյանց, *Պատմություն Աղվանից, Վաղարշապատ, 1902, էջ 186 և «Արցախ», Բագու, 1895, էջ 301 և 430 (ծան. 44)։*

2 *Տե՛ս «Հայապատում», էջ 386։*

3 *Տե՛ս Նույն տեղում, էջ 386, Նաև* Սամուել Անեցի, *էջ 132 և* Մխիթար Այրիվանեցի, *էջ 63։*

4 *«Հայապատում», էջ 386.* Սամուել Անեցի, *էջ 133։*

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

# ՎՐԱՍՏԱՆԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԳԵՈՐԳԻ Գ-Ի ԺԱՄԱՆԱԿ

**1. Դեմետրե Ա-ի հաջորդները՝ Դավիթ Գ-ը և ապա Գեորգի Գ-ը:— 2. Ելտկուզյան տոհմի իշխանության հաստատումը Նախիջևանում և Գանձակում:— 3. Խլաթի իշխանության զորեղացումը Շահի-Արմեն Միրանի ժամանակ:— 4. Շիրակ-Անիի և Կարնո ամիրայությունները 12-րդ դարի երկրորդ կեսում:— 5. Ամիրայությունների հանդուրժող քաղաքականությունը իրենց հպատակ հայերի հանդեպ.— Քրիստոնյա փախստական իշխանների պատսպարումը ամիրայություններում:— 6. Կռիվները Արշարունիքում և Տայքում Գեորգի Գ-ի ժամանակ:— 7. Անիի գրավումը և Շահի-Արմեն Միրանի պարտությունը:— 8. Դվին քաղաքի գրավումը և ավերումը:— 9. Ելտկուզի արշավանքը և կռիվը Գագա դաշտում:— 10. Գեորգի Գ-ի քաղաքականությունը հայերի հանդեպ.— Անիի հանձնումը Շեդդադյաններին:— 12. Գեորգի Գ-ի 1165/6 թվի արշավանքը և Ուտի նահանգի ամայացումը: 13. Ելտկուզի արշավանքները Արցախում ու Սյունիքում և Բաղաց թագավորության նվաճումը:— 14. Անիի վերստին առումը և հանձնումը Իվանե Օրբելյանին.— Օրբելյան տոհմի ծագումը և նրանց ազգականությունը Կյուրիկյան Բագրատունիների հետ:— 15. Շեդդադյանները նորից Անիում մինչև 1199 թիվը:— 16. Ապստամբությունը Վրաստանում Գեորգի Գ-ի դեմ: 17. Գեորգիի ձեռք առած վճռական միջոցները գողության ու ավազակության դեմ.— անիշխանությունը և կյանքի ու գույքի անապահովությունը այս ժամանակաշրջանում:— 18. Քրիստոնյաների խոշտանգումը Ծառաքարում.— Անեցիների արշավանքը և Ծառաքարի առումը:**

*Դեմետրե Ա-ը իր թագավորության վերջին տարում հեռացավ վանք և նրան հաջորդեց մեծ որդին՝ Դավիթ Գ-ը (1155/6), որը թագավորեց միայն մի քանի ամիս։ Մխիթար Գոշը Դավիթ Գ-ին անվանում է «այր բարեմիտ, մանաւանդ առ իշխանսն Հայոց, որք էին ընդ ձեռամբ նորա»։*

*Սա իր մոտ հրավիրեց, ասում է Գոշը, Կյուրիկյան Դավիթ թագավորի որդուն, Կյուրիկե Բ-ին, և խոստացավ վերադարձնել նրան հայրենի թագավորությունը, որ իր նախնիքները խլել էին նրանցից։*

Սակայն, ինչպես վկայում է դարձյալ Գոշը, երբ այս բանը իմացան Վրաց իշխանները, գլխավորապես Օրբելյանները, որոնք Դավիթ Շինողից ստացել էին իբրև պարգև Կյուրիկյան թագավորության բերդերն ու երկրները՝ նրանք մահաբեր դեղ տվին Դավիթ թագավորին և նրան սպանեցին[1]։

Դավիթ Գ-ի մահից հետո, գահաժառանգման ընդունված կարգով, պետք է սրան հաջորդեր իր որդին Դեմետրեն, որին հայ պատմագիրներն անվանում են Դեմնա։ Սակայն թագաժառանգ Դեմնայի անչափահասության պատճառով Վրաստանի թագավոր դարձավ սրա հորեղբայրը՝ Գեորգին։

Գեորգի Գ-ի թագավորության ժամանակ (1155/6—1184) խիստ զորեղացան Գանձակի և Խլաթի ամիրայությունները։

Գանձակի կուսակալությունը, ինչպես վերևում ասացինք, 1148/9 թվին տիրեց Ելտկուզյան կամ Փահլավանյան տոհմը։ Մասուդ սուլթանի արքունիքն այս տոհմի հիմնադիր Ելտկուզին, որ թուրք գերի էր՝ գնել էր ղփչաղների երկրում՝ Հյուսիսային Կովկասում։ Իբրև ընդունակ զինվորական՝ շուտով սա առաջ քաշվեց և ձեռք բերեց պալատում բարձր դիրք։ Սուլթան Մասուդը նրան ամուսնացրեց Մելեք կամ Տուղրուլ Բ սուլթանի (1131—1133) այրի կնոջ հետ և հանձնարարեց նրան Տուղրուլ Բ-ի որդու, Ասլանշահի, խնամատարությունը։ Այնուհետև նրան հանձնարարվեց նաև Նախիջևանի ամիրայության իշխանությունը։

1147/8 թվին, ինչպես հաղորդում է Մխիթար Գոշը, սուլթան Մասուդի հրամանով Մոսուլի Ղազի Ա աթաբեկը, որը Գոշի հիշատակարանում անվանված է Խազբեկ, սպանել էր Գանձակի Փախրադին ամիրային։ Փարսի և Խուժաստանի «Բղափայ» (Բուղաբեյ) ամիրան, լսելով, որ այդ սպանությունը կատարվել է սուլթանի հրամանով՝ արշավում է նրա վրա գահընկեց անելու նպատակով, բայց տեղի ունեցած մեծ ճակատամարտում պարտվում է և սպանվում։

Բղափայի այս ապստամբությունը ճնշելու ժամանակ մեծ աջակցություն էր ցույց տվել նաև Ելտկուզ ամիրան և, ըստ երևույթին, այս ապստամբությունից հետո է, որ նա 1148/9 թվին տիրել էր նաև Գանձակի կուսակալությանը[2]։ Ուրեմն՝ Առանում և Գանձակ քաղաքում Ելտկուզյան տոհմի իշխանությունը հաստատվել էր ո՛չ

---

1 Տե՛ս «Հայապատում», էջ 369 և Վարդան վրդ., գլ. ՀԴ, էջ 126։

2 Տե՛ս «Հայապատում», էջ 388, Ալիշան, Սիսական, էջ 499։

*թե 1136 կամ 1140 թվին, ինչպես մինչ այժմ ենթադրվել է*[1]*, այլ 1148/9 թվին։ Իսկ աթաբեկության պատվավոր կոչումը, ինչպես երևում է Մխիթար Գոշի վկայությունից, Ելտկուզը ստացել էր, հավանորեն, Մոսուլի Ղազի Ա ամիրայի ու աթաբեկի սպանությունից հետո 1149/1150 թվերին*[2]*։*

*Նախիջևանի և Գանձակի այս մեծ ամիրան (վախճանվել է 1172 թվին) և նրա որդին Մուհամմեդ Փահլավանը, որի անունով Ելտկուզյան տոհմը կոչվում է նաև Փահլավանյան, որպես սելջուկյան թագաժառանգ իշխանների խնամակալներ՝ խաղալիք դարձրին իրենց ձեռքին սելջուկյան սուլթաններին և հիմք դրին սեփական դինաստիայի։ Սրանց իշխանությանը ենթարկվեցին ո՛չ միայն Ադրբեջանը, Առանը և Հայաստանի հյուսիս-արևելյան որոշ մասերը, այլև Պարսկական Իրաքը, Սպահանը և Ռեյը։ Ելտկուզ աթաբեկը և նրա որդիները, որոնք հետամուտ եղան մանր ամիրայություններից կազմակերպելու մի մեծ միացյալ պետություն՝ դառան Վրաստանի ամենավտանգավոր հակառակորդները։*

*Մանազկերտի և Խլաթի ամիրայությունը, որի հիմնադիրն էր, ինչպես վերև ասացինք, Սուքման ալ-Կուտբին, նույնպես խիստ զորեղացավ նրա թոռ Շահարմեն կամ Շահի-Արմեն Միրան ամիրայի ժամանակ (1128—1185), որը Լեն-Պուլի մոտ անվանված է Նասրադդին Սուքման Բ, իսկ Մարկվարտի մոտ՝ Նասրադդին Մուհամմադ Սուքման Բ*[3]*։*

*Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակողի վկայությամբ՝ Միրան ամիրայի իշխանության տակ էին գտնվում Խլաթը, Արճեշը, Մանազկերտը, Մուշը, Տողատափը և ուրիշ քաղաքներ ու գավառներ*[4]*։ Իսկ Վարդան վարդապետը հաղորդում է, որ նույն այս Շահի-Արմեն Միրանը գրավել էր Արծրունիների տոհմակից Խեչենիկ իշխանից Ամյուկ ամրոցը և, ինչպես կտեսնենք, նաև Վիգենից, որը Մուշեղյան Թոռնիկ իշխանի թոռն էր՝ Սասունը*[5]*։ Այս երկրները, ասում է Վարդան վարդապետը, նա պահեց «ի խոր խաղաղութեան զամս վաթսուն»։*

---

[1] *Տե՛ս Мюллер,* История Ислама. т. III, СПб. 1896. *էջ 145, Лэн-Пуль,* Мусульманские династии, *էջ 144 և ուրիշները։*

[2] *Տե՛ս «Հայապատում», էջ 388։*

[3] *Տե՛ս Лэн-Пуль*, Мусульманские династии, *143 և Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, *էջ 481։*

[4] Մատթեոս Ուռհայեցի, *էջ 425։*

[5] Վարդան վրդ., *գլ. ՀԲ, էջ 124։*

*Հակառակ տիրող ընդհանուր ենթադրության, Շահի-Արմեն Միրանի ամիրայությունը շատ ավելի ընդարձակ է եղել, քան սովորաբար կարծում են։ Նրա տերության մասերն են կազմել ո՛չ միայն Վանա լճի արևմտյան կողմում գտնվող Խլաթի փոքր շրջանը, ինչպես այդ ենթադրում են Ա. Մյուլլերը և Հորնը*[1]*, այլև նույն լճի հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմերում գտնվող ընդարձակ երկրները։*

*12-րդ դարի երկրորդ կեսում համեմատաբար ավելի թույլ էին Շեդդադյան ամիրայությունը Շիրակ-Անիում և Սալդուխի ամիրայությունը Կարնո շրջանում, որոնք արտաքին վտանգի դեպքում կարիք էին զգում միշտ հզոր հարևանների օգնության։*

*Շիրակ-Անիում, որը Դավիթ Շինողը 1126 թվին վերադարձրել էր Շեդդադյաններին՝ Աբուլսուարի որդու, Փատլունի մահից հետո (+ 1132)՝ ամիրայական իշխանությունը կարճ ժամանակով ժառանգել էր վերջինիս կրտսեր եղբայր Խուշչեռը, և ապա՝ նրա ավագ եղբայր Մահմուդը։ Սակայն Անին սրանց ժամանակ, ինչպես վկայում է Վարդան վարդապետը, դարձյալ ընկել էր թշվառ դրության մեջ*[2]*։*

*Վրաց Գեորգի Գ-ի թագավորության շրջանում (1155/6—1184) իբրև Շիրակ-Անիի ամիրաներ հիշատակված են հայկական աղբյուրների մեջ նույն տոհմից Շադադը և նրանից հետո՝ Փատլուն Բ-ը*[3]*։*

*Ըստ երևույթին, ավելի ընդարձակ է եղել և զորեղ Կարնո ամիրայությունը, որը 12-րդ դարի երկրորդ կեսում գտնվում էր Սալդուխ ամիրայի իշխանության տակ։ Վրաց Քարթլիս-ցխովրեբայում Կարնո այս ամիրան անվանված է «Արդոխի որդի Սալդուխ Սելջուկյան, որը սուլթանների տոհմիցն էր»*[4]*։ Այս տեղեկությունը կարոտ է սակայն հատուկ քննության ու ստուգման։ Ուշագրավ է նույն այս Սալդուխի մասին Վարդան վարդապետի հաղորդած տեղեկությունը, որը վկայում է, որ Շահի-Արմեն Միրանը՝ «փեսայա-*

---

[1] *«Հայաստանում,—ասում է Հորնը,—իշխում էին Շահի-Արմենները (1100—1207), որոնք, սակայն, հակառակ այդ մեծահնչյուն տիտղոսի, տիրում էին միայն Խլաթի շրջանին Վանա լճի մոտ», տե՛ս P. Horn*, Geschichte Irans in islamitischer Zeit (Grundriss der iranischen Philologie, B. II, Lief 5, Strassburg, *1903, էջ 570)։ Համեմատե նաև А. Мюллер*, История Ислама, т. III, стр. *153։*

[2] *Տե՛ս* Վարդան վրդ., *գլ. ՀԱ, էջ 122. համեմատե* Սամուել Անեցի. *էջ 130։ վերջինս վկայում է, որ Փատլունին հաջորդել էր նրա Մահմուդ եղբայրը։*

[3] Վարդան վրդ., *գլ. ՀԴ, էջ 126։*

[4] *Տե՛ս* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, հատ. Բ, էջ 8։*

*ցույց ինքեան զՍալդուխն և խորհեցաւ նովաւ բարի առնել աշխարհի»*[1]։

*Դեմետրե Ա-ի թագավորության վերջին տարիներում, ըստ Իբն ալ-Ասիրի՝ Հեջիրի 548 թվին [=29 մարտ 1153—17 մարտ 1154], վրացիների, հայերի և այս Սալդուխի միջև տեղի էր ունեցել մեծ պատերազմ։ Այդ պատերազմում Սալդուխը պարտություն էր կրել ու գերի բռնվել, սակայն հետո, վճարելով փրկանք, ազատվել էր ու վերադարձել Կարին*[2]։

*Այս պատերազմը և Սալդուխի գերի ընկնելը Միքայել Ասորու մոտ մատնացույց է արված Ասորոց 1471 [=1160] թվին Գեորգի Գ-ի թագավորության ժամանակ*[3]։ *Քարթլիս-ցխովրեբայում ես Սալդուխի ձերբակալումը ցույց է տրված «քրոնիկոնի երեք հարյուր ութսունին», այսինքն՝ [380+780] 1160 թվին*[4]։ *Բայց Անանունի «Համառոտ Վրաց պատմության» մեջ Սալդուխի պարտությունը Անիում մատնացույց է արված 1125 թվին Դեմետրե Ա-ի թագավորության ժամանակ*[5]։

*Սալդուխ ամիրան, Շահի-Արմեն Միրանը, ինչպես և Ելտկուզ աթաբեկը և նրա որդի Մուհամմեդ Փահլավանը, ո՛չ միայն ամեն ջանք գործ դրին և աշխատեցին կասեցնել Վրաստանի առաջխաղացումը, այլև իրենք ձգտեցին, որպես Վրաստանի զորեղ մրցակիցներ, տարածել իրենց ծավալվող իշխանությունը դեպի Վրաստանի կողմերը։*

*Ինչպես երևում է հայ պատմագիրների վկայություններից, իրենց հայ հպատակների նկատմամբ վերոհիշյալ ամիրաները վարել են, ընդհանուր առմամբ, համբերատար ու խաղաղարար քաղաքականություն։*

*Ելտկուզ աթաբեկի, Շահի-Արմեն Միրանի և Սալդուխի մասին Վարդան վարդապետը վկայում է, որ «յԱստուծոյ եղեալ երեքեան սոքա քրիստոնէասէր և աշխարհաշէն»*[6]։ *Իսկ հատկապես Ելտկուզի մասին Մխիթար Գոշը վկայում է, որ սա «խաղաղացոյց զխռովու-*

---

[1] Վարդան վրդ., գլ. ՀԲ, էջ 124։ Իբն ալ-Ասիրի վկայությամբ՝ Շահի-Արմեն Միրանը ամուսնացել էր Սալդուխի քրոջ Շահ-Բանովարի հետ. տե՛ս ռուս. թարգմ. ժուզեի, էջ 126 (XI, 113)։

[2] *Ибн ал-Асир.* ռուս. թարգմ. ժուզեի. էջ 125 (XI, 77)։

[3] Միխայել Ասորի, *Երուսաղեմ, 1871, էջ 442*։

[4] Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, հատ. Բ, էջ 43*։

[5] *Նույնը, էջ 38*։

[6] Վարդան վրդ., գլ. ՀԲ, էջ 124։

*թյուն աշխարհին Առանայ. և վայրենամիտ ազգն Իսմայելացւոց ընդանացան, և կապուտ կողոպուտն դադարեաց ի նոցանէ, զոր առնէին յաճախ աշխարհիս Աղուանից»*[1]։

*Պետք է սակայն ասել, որ հայերի և քրիստոնեության ընդունած մահմեդականների նահատակման դեպքերը, որ տեղի էին ունեցել սրանց հրամանով, ցույց են տալիս, որ նրանց քրիստոնեասիրությունը պետք է ընդունել որոշ վերապահումներով։*

*Ելտկուզի հրամանով 1170 թվին նահատակված է Հովսեփ Դունեցին։ Նրա իշխանության ժամանակ, 1167 թվին, նահատակված է նաև Խոսրով Գանձակեցին։ 1182 թվին Կարին քաղաքում, Սալդուխ ամիրայի իշխանության կենտրոնում, նահատակված է Հորդանան Թուրք վկան, իսկ Շահի-Արմեն Միրանի հրամանով քարկոծված է Ավետ քահանան*[2]։

*Քրիստոնեության հալածանավորումը վերոհիշյալ ամիրայություններում, ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, շատ անգամ տեղի է ունեցել քաղաքական նկատառումներով։ Ամեն անգամ, երբ Վրաստանում ծագում էին ներքին պառակտումներ և Վրաց ու Հայոց իշխանները խռովություններ էին հարուցանում Վրաստանի թագավորի դեմ՝ խռովարարները և ապստամբները սիրալիր ընդունելություն էին գտնում Ելտկուզի, Միրանի և Սալդուխի մոտ։*

*Այսպես, Վրաց Թիրքաշ իշխանը, որի հայրը՝ Իվանեն սպանված էր Դեմետրե Ա թագավորի հրամանով, ո՛չ միայն ապաստան գտավ Շահի-Արմեն Միրանի մոտ, այլև ստացավ սրանից Երասխաձորում Արշարունյաց գավառը։ Այստեղից նա, ինչպես վկայում է Վարդան վարդապետը*[3], *արշավում ու «մեծաւ քաջութեամբ» ավերում էր իր հայրենի երկիր՝ Վրաստանը։*

*Շահի-Արմեն Միրանի ամիրայության սահմանները, ինչպես երևում է Վարդան վարդապետի այս վկայությունից, տարածվում էին ու հասնում մինչև այժմյան Կաղզվանի կողմերը։*

*Մխիթար Գոշը հաղորդում է դարձյալ, որ Տփղիսի քաղաքապետ Վասակ հայ իշխանը, որը Դեմետրե Ա-ի թագավորության ժամանակ Թագաժառանգ Դավթին ավելի լավ էր սպասավորել և մեծա-*

---

[1] *«Հայապատում», էջ 388—389։*

[2] *Տե՛ս* Վարդան վրդ., *գլ. ՀԲ, էջ 124—125։ Խոսրով Գանձակեցու, Հովսեփ Դունեցու և Հորդանան Թուրք նահատակի վկայաբանությունները տե՛ս Իմ և Աճառյանի աշխատության մեջ՝ «Հայոց Նոր վկաները», գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903, էջ 23—72։*

[3] Վարդան վրդ., *գլ. ՀԱ, էջ 123։*

րել, քան նրա Գեորգի եղբորը՝ վախենալով նոր գահակալած Գեորգի Գ թագավորի ոխակալությունից՝ իր Քուրդ և Սարգիս եղբայրների հետ փախել էր Կարին։ Սրանց «խնդությամբ ու մեծարանքով» ընդունից Սալդուխ ամիրան և պարգևեց նրանց բազմաթիվ գյուղեր։ Վասակի մահից հետո, ասում է Մխիթար Գոշը, սրա «դրոշը, պատերազմական փողը և իշխանությունը» ժառանգեց նրա Քուրդ եղբայրը, որը մնաց այնտեղ ու վայելում էր մեծ հարգանք[1]։

Ելտկուզ աթաբեկի և նրա որդու մոտ ևս, ինչպես կտեսնենք ներքև, ապաստան էին գտնում հաճախ ապստամբած կամ հալածվող հայ և վրացի իշխանները։ Այս փախստականները, հպատակ դառնալով մահմեդական իշխանների՝ պարտավոր էին, իհարկե, կռվի դուրս գալ իրենց հայրենակիցների դեմ ամիրայությունների զորքերի շարքերում։

Չնայած շրջակա ամիրայությունների բոլոր ջանքերին՝ Վրաստանի հզորացումը շարունակվեց նաև Գեորգի Գ թագավորի ժամանակ, որը զինվորական խոշոր դեմք էր և աչքի էր ընկնում իր անձնական քաջությամբ։

Իր թագավորության հենց սկզբներում, ինչպես վկայում է Քարթլիս-ցխովրեբան, Գեորգի Գ-ը, ամրանալով Կաղզվան քաղաքում, ավերեց Արշարունիք գավառը, որը, ինչպես ասացինք, գտնըվում էր Շահի-Արմեն Միրանի իշխանության ներքո[2]։ Բայց շուտով Միրան ամիրան, ուզենալով վրեժ առնել այս ավերածությունների համար՝ ուղարկեց մեծ զորքով Վրաստան իր աներոջ Ատրատինին (1160 թվին)[3]։ Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության շարունակողի, Գրիգոր երեցի ասելով՝ հենց նույն այս ժամանակ Գեորգի Գ-ի զորքերը գալիս էին ասպատակելու թուրքերի երկիրը, ուստի և թշնամի զորքերն իրար հանդիպեցին այժմյան Օլթի գավառում։ Այստեղ տեղի ունեցավ մեծ ճակատամարտ և վրացիները, հաղթելով թուրքերին՝ մատնեցին նրանց փախուստի։

Հետևյալ տարին, 1161 թվի ամառը, Վրաց զորքերը արշավելով Շիրակ՝ երկրորդ անգամ առան Անին Շեդդադյաններից՝ Փատլուն Ա-ի եղբորորդու Փատլուն Բ-ի ձեռից (հունիսի 13-ին, երեքշաբթի, 1161 թվին)[4]։ Այս անգամ, ինչպես հաղորդում է Մխիթար

---

1 Տե՛ս «Հայապատում», էջ 389—390։

2 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 7։

3 Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 425։

4 Տե՛ս Սամուել Անեցի, էջ 137, Մատթեոս Ուռհայեցի, էջ 426. Վարդան վրդ., գլ. ՀԴ, էջ 126. Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿՁ, էջ 382. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 8 և 43։

Գուզը, քաղաքի մեծավորները, Բարսեղ եպիսկոպոսը և նրա եղբայրները, որոնք Բարսեղ Ա Կաթողիկոսի (1082—1113) եղբոր որդիներն էին՝ ընդդիմացան և չուզեցին տալ Անին Գեորգի Գ-ին։ Ուստի և Վրաց զորքերը, այս դիմադրության պատճառով, քաղաքը ավարի մատնեցին և կողոպտեցին ո՛չ միայն մահմեդականներին, այլև քրիստոնյաներին, անարգելով նրանց ընդդիմանալու համար[1]։

Իբրև Անիի կառավարիչներ նշանակվեցին 1161 թվին, ինչպես հաղորդում է Վրաց ժամանակագրությունը, Իվանե Օրբելյանը և Զաքարյան Սարգիս Մխարգրձելին[2]։

Անիի առումից մոտ երկու ամիս հետո Շեդդադյաններին օգնության հասավ Շահի-Արմեն Միրան ամիրան, համախմբելով իր շուրջը նաև հարևան ամիրայությունների օգնական զորքերը։ Մեծ ճակատամարտում, որը տեղի ունեցավ 1161 թվի օգոստոս ամսի սկզբին Անիի մոտ՝ Շահի-Արմեն Միրանը կրեց սոսկալի պարտություն։

Սամուել Անեցին, որ ականատես է եղել այս դեպքերին՝ պատմում է[3], որ Գեորգի Գ-ը, ունենալով միայն 7.000 զորք՝ կարողացել էր հաղթել Շահի-Արմեն Միրանին, կոտորել էր նրա 80.000 զորքը և գերի էր վերցրել 23.000մարդ[4]։ Մատթեոս Ուռհայեցին ևս վկայում է, որ վրացական զորքերը վերցրել էին այս կռվում.

«անհամար քանակությամբ ձիեր, ջորիներ, ուղտեր և վրաններ, զրահներ ու այլ զենքեր, որ չէր կարելի հաշվել, և շատ ոչխարներ։ Անի քաղաքը լցվեց ամեն տեսակ հարստությունով և այն, ինչ որ կորցրել էին քաղաքի առման ժամանակ վրացիների կողմից՝ կրկնապատիկը շահեցան. Նույնիսկ կրծքի ընտիր զրահները ծախում էին երկու դանկի։ Եվ երկար ժամանակից հետո Անի քաղաքի մարդիկ գնում էին պատերազմի վայրը, գտնում էին խոտերի մեջ շատ զրահներ և բերում»։

[«Եւ առին… և ձիս և ջորիս և ուղտս անհամարս, և վրան

---

[1] Տե՛ս «Հայապատում», էջ 390։

[2] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 8։

[3] Սամուել Անեցի, էջ 137։

[4] Այս թվերը ենթադրական են և չափազանցված և չեն կարող համարվել ստույգ։ Ստեփանոս Օրբելյանի մոտ Շահի-Արմեն Միրանի զորքերի թիվը ցույց է տրված ո՛չ թե 80.000, այլ միայն 40.000. տե՛ս գլ. ԿԶ, էջ 382։

և ջօշան և այլ սլեհ որ ոչ գոյ թիւ, և ոչխար բազում, և լցաւ քաղաքն Անի ամենայն հարստութեամբ, զոր յառման վրացւոյն էին կորուսեալ՝ կրկնապատիկ շահեցան, մինչև զընտիր ջօշանն երկու դանկ ծախէին։ Եւ զկնի բաղում աւուրց գնային մարդիկք քաղաքին Անւոյ ի տեղի պատերազմին և գտանէին զրահս բազում ի մէջ խոտին և բերէին»][1]։

1124 թվի փորձից հետո Գեորգի Գ-ը, ըստ երևույթին, շատ լավ հասկանում էր, թե որքան դժվար պիտի լիներ պահպանել Անին և պահել Վրաստանի գերիշխանության տակ։ Թշնամիներն այնքան էին զորեղ Անիի մոտակա շրջաններում, որ անհրաժեշտ էր Անիում ունենալ շատ ուժեղ պահակազորք, որը սակայն կկարողանար պաշտպանել միայն քաղաքը, իսկ քաղաքից դուրս՝ խաղաղ ազգաբնակությունը շարունակ ենթարկվելու էր հարձակումների, և նույն անտանելի դրություն էր ստեղծվելու, ինչպես 1124—1126 թվերին։

Անին ու նրա շրջակայքը այդ մեծ վտանգից ապահովելու համար՝ անհրաժեշտ էր ջախջախիչ հարվածով ուժասպառ անել Դվինը և թուլացնել այդ ամիրայության ուժը Անիի թիկունքում։ Եվ իրավի, Անիի նվաճումից անմիջապես հետո, 1162 թվի օգոստոս ամսին, Գեորգի Գ-ը պատերազմական գործողությունները փոխադրեց Անիի թիկունքը և նվաճեց նաև Դվին քաղաքը։ Գեորգիի նպատակն էր, ըստ երևույթին, խորտակել և անմարդաբնակ անել Դվինի ամիրայության այս զորեղ կենտրոնը։ Սամուել Անեցու վկայությամբ՝ նա վերցրել էր այստեղ մեծ թվով գերիներ, բնակչության մի խոշոր մասը անխնա կոտորել էր քաղաքի ներսում և այրել ու քանդել էր նրանց բնակարաններն ու աղոթանոցները[2]։

Պատմիչների տված տեղեկություններից երևում է, որ այս 1162 թվի կռիվը ունեցել է կատաղի բնույթ։ 1131 թվին, երբ Խուրթի ամիրան Շեդդադյան Փադլուն Ա-ից գրավել էր Դվինը և Գառնու մոտ ջարդել էր Աբուլեթյան Իվանեի զորքերը՝ նա, ինչպես վերև հիշատակեցինք, կտրել էր տվել Վրաց զինվորների գլուխները, եփել տվել թանի մեջ և հրամայել էր շարել այդ գանգերը քարոր-

---

[1] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 426։ Շահի-Արմեն Միրանի այս պարտությունը հիշատակված է նաև հետևյալ աղբյուրներում՝ Իբն ալ-Ասիր, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 125—126 (XI, 113). Վարդան վրդ., գլ. ՀԴ, էջ 126—127. Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 382. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 8 և ուրիշ.։

[2] Տե՛ս Սամուել Անեցի, էջ 137. Համեմատե նաև Մատթեոս Ուռհայեցի, էջ 429. Մխիթար Այրիվանեցի, էջ 63. Վարդան վրդ., գլ. ՀԴ, էջ 127. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները, Բ, էջ 7։

ների վրա մինարեի վերևում։ Խուրթի ամիրայի այս հրեշավոր բարբարոսության փոխհատույց պատիժն էր, ըստ երևույթին, որ այժմ կրում էր Դվին քաղաքը։ Վարդան վարդապետը պատմում է, որ Գեորգի Գ-ը.—

«Վերցնելով թանի մեջ եփած գանգերը մինարեի վրայից՝ զարդարեց ոսկեթել հանդերձներով և, դնելով դագաղների մեջ՝ բեռնեց մուղրինների ուսերին և տվեց, որ նրանք ոտաբոբիկ տանեն մինչև Տփղիս՝ իր մայրաքաղաքը»։

[«Եւ զգաղաթունսն թանեփեացս առեալ ի մինրայէն՝ զարդարէ ոսկեթել հանդերձիւք. և եդեալ ի դագաղս՝ բառնայ ի յուսս մուկրեաց, և բոկոտիւք տայ տանել մինչև ցՏփխիս, նախագահ քաղաքն իւր»][1]։

Գեորգի Գ-ի փայլուն հաջողությունները, Շեդդադյանների և Շահի-Արմեն Միրանի պարտությունը և Դվինի մեծ աղետը ծայր աստիճան հուզեցին սելջուկյան ամիրայություններին։ Վրաստանի առաջխաղացումը հարկավոր էր կասեցնել, որովհետև Գեորգի Գ-ի հաղթական զորքերը Հայկական բարձրավանդակի վրայով հետըզհետե մոտենում էին Ատրպատականի և Առանի սահմաններին։

1162 թվի վերջերին զորքերի անթիվ բազմությամբ Գեորգի Գ-ի դեմ շարժվեց Ելտկուզ աթաբեկը։ Նրա զորքերը գրավեցին այրված ու քանդված Դվինը և այստեղից Անիի մոտով, մոտ 30 օր քաղաքը պաշարելուց և բնակչությունը սարսափահար անելուց հետո՝ ընացին Վրաց թագավորի դեմ և, ինչպես վկայում է ժամանակակից պատմիչ Սամուել Անեցին՝ «գաղտագողի, աղուէսաբար» հարձակվեցին Վրաց բանակի վրա և, պարտության մատնելով Գեորգի Գ-ին՝ վերցրին հարուստ ավար[2]։

Այս արշավանքի ընթացքում Ելտկուզի զորքերը Դվինի վրեժը ճանապարհին առնում էին քրիստոնյա հայ ազգաբնակչությունից։ Սամուել Անեցու, Վարդան վարդապետի և Մխիթար Գոշի վկայությամբ՝ Ելտկուզ աթաբեկը, գրավելով Արագածոտն գավառում ու Շիրակում Թալին, Աշնակ և Մրեն ավանագյուղերը՝ այրել էր Մրենի ամրոցում չորս հազար հոգի՝ տղամարդ, կին և երեխա, իսկ Աշնակ ավանում՝ հինգ հազար հոգի[3]։

Գեորգի Գ-ի 1163 թվի վերոհիշյալ պարտությունը, որը, ըստ

[1] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՀԴ, էջ 127. համեմատե նաև Միխայել Ասորի, Երուսաղեմ, 1871, էջ 446։

[2] Տե՛ս Սամուել Անեցի, էջ 137—138։

[3] Տե՛ս Սամուել Անեցի, էջ 138. Վարդան վրդ., գլ. ՀԴ, էջ 127. «Հայաստանում», էջ 391։

*երևույթին, սքողված ու լռությյան է մատնված վրացական և հայկական աղբյուրներում՝ մանրամասն հիշատակում են Իբն ալ-Ասիրը և Համդալլահ Քազվինին։*

> *«Երբ այդ լուրը [Դվինի ավերման մասին],— պատմում է Իբն ալ-Ասիրը,— հասավ Ադրբեջանի, Ջիբալի և Սպահանի տիրոջ, Շեմշադդին Ելտկուզին՝ նա հավաքեց և ռազմի հանեց իր զորքերը։ Նրան միացան Խլաթի տերը, Շահի-Արմենը, որը Սուքման ալ-Կուտբիի որդին էր, և Մարաղայի տիրոջ Աղ-Սնղուրի որդին և ուրիշները։*
>
> *Համախմբվելով ու մեծ զորքի գլուխ կանգնելով, որի թիվը 50.000-ից ավելի էր՝ նրանք ուղևորվեցին Վրաստան Հեջիրի 558 թվին սափար ամսում [1163 թվի հունվարին]. Թալանեցին երկիրը և գերի վերցրին կանանց, երեխաներին ու տղամարդկանց։ Վրացիները նրանց դեմ դուրս եկան և բռնվեցին նրանց հետ կատաղի կռվի, որի ընթացքում երկու կողմն էլ ցույց տվին մեծ տոկունություն։ Կռիվը նրանց միջև շարունակվեց մեկ ամսից ավելի։ Հաղթությունը տարան մուսուլմանները, և վրացիները մատնվեցին փախուստի։ Նրանցից շատերը սպանվեցին, շատերն էլ գերի ընկան»[1]։*

*Վրացական և հայկական աղբյուրներ, հակառակ մեջբերված այս վկայության, հաղորդում են, որ թշնամի զորքերի հանդիպումը տեղի էր ունեցել Գագ բերդի մոտ, որը գտնվում էր Գագա դաշտում՝ այժմյան Կոթի գյուղի արևելյան կողմում[2], և Ելտկուզը, տեղեկանալով, որ Վրաց զորաբանակը մոտեցել է և հարձակվելու է իր վրա՝ գաղտագողի ետ նահանջեց, թողնելով վրացիներին վրանների մեջ եղած իրենց կարասին և այլ ավար[3]։*

*Հայ ժողովրդի վերաբերմամբ Գեորգի Գ-ի քաղաքականությունը նույնքան բարեմիտ էր, որքան և նրա նախորդներինը։ Անի քաղաքի գրավումից հետո՝ նա նվիրել էր 40.000 դահեկան, որպես փրկանք Շիրակ-Անիում վերցրած գերիների ետ գնման ու ազատ-*

---

[1] *Տե՛ս* Ибн ал-Асир, *ռուսերեն թարգմ. Ժուզեի, էջ 126 (XI, 115—116).* Համեմատե նաև Համդալլահ Քազվինի, Tarikhe gozidè, ed. Gantin, t. I, էջ 298—300։

[2] *Տե՛ս* Մակար եպիս. Բարխուդարեանց, *Արցախ, էջ 396։*

[3] *«Հայապատում», էջ 391.* Սամուել Անեցի, *էջ 138.* Վարդան վրդ., *գլ. ՀԴ, էջ 127.* Ստեփանոս Օրբելյան, *գլ. ԿՁ, էջ 382.* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները. Բ, էջ 9։*

ման համար՝ թե քրիստոնյա և թե այլազգի[1]։ Նրա աջակցությամբ ազատվել էր Կարսի բանտից և վերադարձել էր Անի Բարսեղ եպիսկոպոսի եղբայր Ապիրատ մեծ իշխանը[2]։

Հայ իշխանները առանձնապես գոհ պիտի լինեին Գեորգի Գ թագավորից, որովհետև նա, գրավելով Հայաստանի զանազան մասերը, նվաճված այս շրջանների կառավարությունը հանձնարարում էր, մեծ մասամբ, հայ իշխաններին։ 1161 թվին Գեորգին Անիի իշխանությունը հանձնել էր Սադուն իշխանին և ապա Զաքարյան Սարգիս իշխանին[3]։

Թեպետ Ըլտկուզ աթաբեկը չկարողացավ արշավել բուն Վրաստան, սակայն նրա հաջողությունը Դվինում, Հայկական միջնաշխարհում և Գագա դաշտում ոտքի էին կանգնեցրել այստեղ իր կողմնակիցներին և Անի քաղաքի ու Շիրակի դրությունը այնքան էր ծանրացել, որ Գեորգի Գ-ը, ողորմելով քաղաքին, ստիպված եղավ Անին զիջել նորից նրա նախկին տերերին։

Աղբյուրների ուշադիր քննությունը պարզ ցույց է տալիս, որ Գեորգի Գ-ը Անին տվել էր ո՛չ թե Ըլտկուզ աթաբեկին և նրա խնամակալության տակ գտնվող Արսլանշահ սուլթանին, ինչպես մինչև այժմ ենթադրվել է[4], այլ Շեդդադյան Մահմուդ ամիրայի որդուն, որը Վարդան պատմիչի մոտ անվանված է «Շովիզ սուլտան՝ որդի Մահմուդի Ասլան», իսկ Անիի 1173 թվի մի արձանագրության մեջ՝ «բարիանուն սուլտան՝ որդի ամիր Մահմուդի թոռն Մանուչէի»[5]։ Քարթլիս-ցխովրեբայի վկայությունից ևս երևում է, որ Գեորգի Գ-ը Անին վերադարձրել էր նրա տիրոջը «իբրև իրեն հպատակին» Ըլտկուզ աթաբեկի խնդիրքով ու նրա միջնորդությամբ[6]։

Աղբյուրների համապատասխան այս վկայությունները, որ սխալ են հասկացվել՝ ավելորդ չեմ համարում մեջ բերել առանց կրճատումների։

1. Վարդան վարդապետ, գլ. ՀԴ, էջ 127՝

---

[1] Տե՛ս Մատթ. Ուռհայեցի, էջ 426։

[2] Վարդան վրդ., գլ. ՀՁ, էջ 130։

[3] Նույնը, գլ. ՀԴ, էջ 127։

[4] Տե՛ս Չամչյան, Պատմութիւն Հայոց, Գ. էջ 80 և ձեռագրի իրավունքով հրատարակված իմ աշխատությունը՝ «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», Երևան, 1922, էջ 69 և ուրիշ.։ (Նույնը տե՛ս սույն հատորի 530-րդ էջում—խմբ.)։

[5] Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբ., 1913, էջ 31։

[6] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 10։

«Սակայն [Ելտկուզը] գրգռեց Դավիթ սուլթանին՝ Մահմուդի որդուն Ասլանին, և ուղարկեց Անիի դեմ։ Եվ չորս տարի նա պահեց Անին տառապանքի մեջ՝ անվար ու անհանգիստ, մինչև որ Վրաց թագավորը Գեորգին, ողորմելով քաղաքին՝ կանչեց իր մոտ սուլթանին և տվեց նրան Անին. որովհետև անկարող էր անօրենների շատության պատճառով պահել իր ձեռքում»։

[«Սակայն գրգռէ զԴավիթ սուլտանն, զորդին Մահմուդի զԱսլան և ածէ յԱնի, և զամս չորս պահէ ի տառապանս անվար և անհանգիստ. մինչև թագաւորն Վրաց Գէորգի, ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն և տայ ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել ի բազմութենէ անօրինացն»]։

2. Քարթլիս-ցխովրեբա, տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 10։

«Ապա [Գեորգի Գ թագավորը] շնորհեց Անին նրա տիրոջը, որին և պատվեց իբրև իրեն հպատակին, և Ելտկուզ աթաբեկն էլ եղավ միջնորդ սուլթանի և Վրաց միջև, խնդրելով հաշտություն»։

Անիի վերստին հանձնումը Շեդդադյաններին, ինչպես տեսնում ենք այս վկայություններից, տեղի էր ունեցել այս քաղաքի նվաճումից, այսինքն՝ 1161 թվից, չորս տարի հետո՝ 1165 թվին։

Ելտկուզ աթաբեկը, ինչպես ասացինք, լինելով Սպահանի սելջուկյան սուլթանության իրական տերն ու տնօրենը՝ ամենազորեղ ու վտանգավոր հակառակորդն էր Վրաստանի։ Նրա կենդանության ժամանակ Գեորգի Գ թագավորը հարկադրված էր մտածել հաճախ իր երկրի պաշտպանության մասին Ելտկուզի հարձակումներից։ Հարավ-արևելյան կողմից Վրաստանը չուներ ուժեղ բնական սահմաններ և Գանձակի աթաբեկները կարող էին հեշտությամբ ներս խուժել Վրաստան Կուր գետի հովտով։

Գեորգի Գ-ը, ըստ երևույթին, այդ վտանգը շատ լավ գիտակցում էր, և այդ էր պատճառը, որ նա 1166 թվին, Ելտկուզի հաղթական առաջխաղացումից անմիջապես հետո, աշխատեց Վրաստանի պաշտպանության համար անընակ դարձնել իր երկրի հարավ-արևելյան սահմանակից գավառները, գլխավորապես, Ուտեացոց ամբողջ երկիրը։

«Հեջիրի 561 [1165/6] թվին,—վկայում է Իբն ալ-Ասիրը, —վրացիները հսկայական թվով արշավանքի ելան,

ներս խուժեցին մուսուլմանների երկրները, հասան մինչև Գանձակ, սպանեցին ու գերի վերցրին շատերին և թալանեցին ու վերցրին անհաշիվ քանակությամբ ամեն տեսակ գույք»[1]։

Նմանապես և Խոսրով Գանձակեցու վկայաբանության (+ 1167, հուլիս 10, երկուշաբթի) հեղինակը, որ ժամանակակից էր այս անցքերին՝ 1166 թվի նույն արշավանքի մասին ունի հետևյալ վկայությունը։

«Նաև Վրաց թագավորը,— ասում է նա,— որ սահմանակից էր Աղվանից աշխարհին՝ ուզեց այս աշխարհն անբնակ դարձնել մարդ ու անասունից. մանավանդ ուզեց ավերակ դարձնել Ուտեացոց բերդի ու արգավանդ երկիրը»։

[«Նաև թագաւորն Վրաց՝ որ էր սահմանակից տանն Աղուանից, կամեցաւ անբնակ առնել զաշխարհն ի մարդոյ և յանասնոյ. մանաւանդ զբերդ և զարգաւանդ երկիրն Ուտէացւոց յաւէր դարձուցանէր»][2]։

Պետք է ասել, որ 12-րդ դարի երկրորդ կեսում խիստ ծանրացել էր ո՛չ միայն ժողովրդի դրությունը Ուտի նահանգում, այլև հայ իշխանությունների դրությունը Արցախում և Սյունիքում։ Մխիթար Գոշի վկայությամբ՝ Ելտկուզ ամիրան եա շարունակել էր պատերազմը Խաչենի իշխանների դեմ և դալով գաղտագողի լեռնային Ղարաբաղի կողմերը՝ առել էր «Հարու ամրոց»-ը, որը գտնվում էր Վարանդայում, սրի մատնելով բնակիչներին[3]։ Այնուհետև հարձակումներն Արցախի և Սյունիքի անառիկ շրջանների վրա պարբերաբար շարունակվեցին։

1152 թվին, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը[4], թուրքերը գրավեցին Շլորուտ բերդը, որը գտնվում էր Կապանի կամ Բաղաց թագավորության մեջ։ 1157 թվին նրանք առան Մեղրին։ 1166—1169 թվականներին՝ Գրհամը, Գեղին և Կաքավաբերդը, իսկ 1170 թվին՝ նաև «Կկոց քար»-ը և անառիկ Բաղաբերդը։

Այնուհետև մեկը մյուսի ետևից ընկան Կապանի և մյուս ամրությունները և այդ երկիրը ստիպված եղավ անձնատուր լինել Ելտկուզ ամիրային։ Կապանի կամ Բաղաց թագավորության շրջանների ավերածության ժամանակ, ինչպես հաղորդում է Ստե-

---

[1] Տե՛ս Ибн ал-Асир. ռուս. թարգմ. ժուղնի, էջ 127 (XI, 130—131)։

[2] Տե՛ս «Հայոց նոր վկաները», գիտական հրատ., էջ 24։

[3] Տե՛ս «Հայսպատում», էջ 389։

[4] Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԱ, էջ 335—336։

փանոս Օրբելյանը[1], թշնամու ձեռքն էին անցել հայ ժողովրդի հոգեկան դարավոր ստեղծագործության մնացորդները, ձեռագրերի հարուստ պահեստները։ Միմիայն Տաթևի եկեղեցու ձեռագրերը, որ գրավել էին թուրքերը Բաղաբերդում, 10.000-ից ավելի էին։ Հավանական է, որ կուլտուրական այդ մեծ հարստությունը ենթարկվել էր, մեծ մասամբ, անհետ ոչնչացման։

1172 թվին մեռավ Ելտկուզ աթաբեկը և նրան հաջորդեց նախ մեծ որդին՝ Մուհամմեդ Փահլավանը (1172—1186) և ապա մյուս որդին՝ Խզըլ Ասլանը (1186—1191)։ Ելտկուզի մահից հետո Գեորգի Գ թագավորը, ըստ երևույթին, իր երկիրն ապահով էր համարում թշնամու հարձակումներից։ Ուստի նա նորից արշավեց Հայկական միջնաշխարհի կողմը և 1174 թվին երկրորդ անգամ գրավեց Անին։

Այս անգամ Գեորգի Գ-ը ուզեց պահել Անին իր ձեռքում և տվեց քաղաքը ամիրսպասալար Իվանեին, որը Սմբատ Օրբելյանի որդին էր։ Ոմանք կարծում են, որ նույն այս ժամանակ Անիում ամիրա էր նշանակվել, Բարսեղ եպիսկոպոսի միջնորդությամբ, սրա եղբայր Ապիրատ Պահլավունին[2]։ Սակայն այս ենթադրությունը թյուրիմացության արդյունք է, որ հիմնված է Վարդան վարդապետի համապատասխան վկայության սխալ բացատրության վրա։

«Նույն այս ժամանակները [1174—7 թվականներին],— ասում է Վարդան վարդապետը,— դուրս եկավ Կարսի բանտից մեծ իշխան Ապիրատը և եկավ Անի։ Սա եղբայրն էր [Անի] քաղաքի եպիսկոպոս տեր Բարսեղի, որն աղաչեց Վրաց թագավորին ու վերջինս տվեց նրա փոխարեն մի ամիրա և առավ նրան ու նաև 17.000 դահեկան»։

[«Ի նմին ժամանակի ել ի բանտէն Կարուց մեծ իշխանն Ապիրատն և եկն ի Անի. սա էր եղբայր եպիսկոպոսի քաղաքին տեառն Բարսղի, որ աղաչեաց զթագաւորն Վրաց, և ետ փոխան նմա ամիրայ, և առ զնա և եօթնևտասն հազար դահեկան»][3]։

Այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, բնավ չէ ասված, որ Գեորգի Գ-ը Ապիրատին նշանակել էր Անի քաղաքի ամիրա։

---

[1] Ստեփաննոս Օրբելյան, էջ 336 և Վարդան վրդ., գլ. ԿԵ, էջ 128։

[2] Տե՛ս Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, Վաղարշապատ, 1928, էջ 3։

[3] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ԿՁ, էջ 130։

Ամիրսպասալար Իվանե Օրբելյանը, որը 1174 թվին Գեորգի Գ-ից ստացավ Անին՝ Սմբատ Օրբելյանի որդին էր ու մեծ սպասալար Օրբելյան Իվանեի թոռն էր և ամուսնացած էր Կյուրիկե Բ-ի (1145—1185) դստեր Ռուսուդանի հետ։

Օրբելյանների տոհմը, ինչպես հայտնի է, Վրաստանի ամենանշանավոր իշխանական տոհմերիցն էր։ Սրանց ձեռին էր գտնվում Վրաց զորքի հրամանատարության իրավունքը։ Այս տոհմին, հավանորեն, ազգակից էր Վրաց զորքի սպարապետ հայտնի Լիպարիտը, որը, 1049 թվին մասնակցել էր Բասենի մեծ կռվին[1]։ Հայ պատմագիրների վկայությամբ՝ այս Լիպարիտը ապստամբել էր Բագարատ Դ թագավորի դեմ և համառ կերպով ձգտել էր, ինչպես և իրեն հաջորդող տոհմակիցները, իր ձեռքն առնել Վրաց թագավորությունը։

Ստեփանոս Օրբելյանի պատմությունից երևում է[2], որ Օրբելյանները, ինչպես և հայ Մամիկոնյանները, իրենց տոհմին վերագրել են չինական ծագում և իրենց նախահայր համարել են Չինաստանից փախած Ճենբակուր թագավորի ազգականներին։ Ի նկատի առնելով, որ Օրբելյաններն իրենց ծագման մասին ունեցել են նույն ընտանեկան ավանդությունը, ինչպես և Մամիկոնյանները, Ն. Ադոնցը կարծում է, որ նրանց կարելի է համարել Մամիկոնյաններին ազգակից[3]։

Ստեփանոս Օրբելյանի պատմելով Օրբելյանները, դեռ Իվանե ամիրսպասալարի և Ռուսուդանի ամուսնությունից առաջ, «խնամութեամբ խառնեալ էին ընդ թագաւորին Վրաց և ընդ թագաւորին Հայոց Կիւրիկեանց որք էին Բագրատունիք»[4]։ Այդ խնամությունը պետք է վերագրել, ըստ երևույթին, որ 12-րդ դարի սկզբում, երբ Դավիթ Շինողը նվաճեց Ձորագետի թագավորությունը, սրանք ստացան Կյուրիկյանների երկրի մեծագույն մասը։ Այդ ազգակցության որոշ նշան կարող է համարվել նաև Ռուսուդանի սկեսրայրի Սմբատ անունը։

Իբրև մոր կողմից Բագրատունիներ՝ Օրբելյանները, բնականաբար, կարող էին իրենց սեփական ժառանգություն համարել ո՛չ

---

[1] Լիպարիտյան տոհմը տարբեր է համարում Օրբելյանների տոհմից Ս. Երեմյանը. Տե՛ս Երեմյան, Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, Երևանի պետական համալսարանի Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, 1947. № 2, էջ 103—149։

[2] Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿՁ, էջ 369—371։

[3] Տե՛ս *Адонц*, Армения в эпоху Юстиниана, էջ 403—404։

[4] Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿՁ, էջ 379։

միայն Լոռին ու Ձորագետը, այլև Անի քաղաքը և Շիրակը։ Եվ իրավի, Վարդան վարդապետը վկայում է[1], որ 1174 թվին Գեորգի Գ-ը երկրորդ անգամ առավ Անին «ի սադրելոյ Իւանէի ամիրսպասալարի, զի ինքն նստցի ի նմա, և արասցէ գերագարձ քրիստոնէից»։

Առանձնապես ուշագրավ է այս տեսակետից 1172-3 թվականներին Հաղբատում գրված և Մեծն Բարսեղի ճառերի վերջում դրված հայտնի հիշատակարանի վկայությունը, որի մեջ Անին անվանված է «սեփական քաղաք» Իվանեի ու Ռուսուդանի։ Այս հիշատակարանը, խոսելով վերջիններիս շինարարական ու նորոգչական բեղուն գործունեության մասին՝ տալիս է հետևյալ կարևոր վկայությունը։

«Որովհետև բոլոր այն տեղերը,— ասում է հիշատակարանի գրիչը,— որ սրա [Ռուսուդանի] նախնիքները կառուցել էին, իսկ հետո նվազել էին՝ սրա ժամանակ վերստին նորոգվում էին և պայծառանում՝ թե մեր գավառում [Ձորագետում], թե Անիի նրանց սեփական քաղաքի գավառում և թե իրեն Անիի մեջ և թե Դվինի գավառում։ Որովհետև սրա ամուսնու, մեծ սպասալար Իվանեի իշխանական ուժն ու ահը զգացվում էին ամեն տեղ, ուստի և սա աշխատում էր ամենուրեք, որ իր նախնիքների շինած եկեղեցիները պայծառացնե»։

[Քանզի ամենայն տեղի որ ի նախնեացն սորա շինեալ էին և նուազեալ յետոյ, ի սորա աւուրս պայծառանային և նորոգէին վերստին. եթէ ի մերում գաւառիս և եթէ ի գաւառն Անւոյ սեփական քաղաքին իւրեանց, և ի նոյն իսկ յԱնի, և եթէ ի գաւառն Դւինայ։ Քանզի յամենայն տեղի իշխանութիւն և երկիւղն մեծի սպասալարին Իւանէի՝ առն սորա հասանէր և սա ջանայր զի զիւր նախնեացն շինեալ եկեղեցիսն պայծառացուսցէ»][2]։

Պատմագիտական նորագույն երկերում սովորաբար ենթադրում են, որ Անի քաղաքը և նրա շրջանները 1174 թվին վերջնականապես միացվել էին Վրաստանին և տրվել ամիրսպասալար Իվանեին։ Սակայն այդ ենթադրությունը, ինչպես այժմ պարզված է, ճիշտ չէ[3]։ Դեռևս 1848 թվին ռուս գիտնական Խանիկովը գտել էր

[1] Վարդան վրդ., գլ. ՀԶ, էջ 129։

[2] Տե՛ս «Հայապատում», էջ 382։

[3] Տե՛ս Гюзальян Л. Т. Персидская надпись Кей-Султана Шеддади в Ани, Сборник статей «Академия наук СССР, академику Н. Я. Марру», М.—Л., 1935, էջ 629—641։

Անիում Շեդդադյան Կեյ-սուլթանի 1198/9 թվի պարսկերեն արձանագրությունը, որն ինքնին արդեն մի պարզ ապացույց էր, որ Շեդդադյանների իշխանությունը շարունակվել էր Անիում ո՛չ թե մինչև 1174 թիվը, ինչպես ենթադրում են Լեն-Պուլը[1] և ուրիշները, այլ մինչև 1198/9 թիվը։

Որ Անին, նաև երկրորդ անգամ գրավելուց հետո, վրացիները նորից հարկադրված են եղել վերադարձնել Շեդդադյաններին՝ այդ պարզ կերպով վկայում է նույնպես Մխիթար Գոշը իր Դատաստանագրքի վերոհիշյալ վերջաբան հիշատակարանում։

«Իսկ Գեորգին,—ասում է Մխիթար Գոշը,—երբ թագավորեց ու հաստատվեց, զանազան կողմեր արշավելով՝ արիության շատ գործեր ցույց տվեց և շատ գավառներ, որ իր դեմ էին ելել՝ պատերազմելով հարվածեց։ Նա առավ նաև Անի քաղաքը մեկ անգամ և երկրորդ անգամ, կանչելով իր մոտ Բարսեղ եպիսկոպոսին ու նրա եղբայրներին՝ Մագիստրոս Հասանի որդիներին։ Բայց հետո, ընդդիմանալով, չուզեցին տալ քաղաքը նրա ձեռքը. և նա, առնելով քաղաքը բռնի կերպով՝ հրամայեց ավարի մատնել։ Երբ զորքերը տկլորացրին բոլորին՝ տղամարդկանց, կանանց, քահանաներին և կրոնավորներին՝ խիստ անարգեցին նրանց ընդդիմանալու համար։ Եվ նա քաղաքի վրա շահապ նշանակեց ու նրա մոտ զորք թողեց և գնաց։ Իսկ քաղաքը, նեղվելով թշնամիների արշավանքներից՝ աղաղակ բարձրացրեց, որ տան նախկին տիրոջը, որն ազգով պարսիկ էր։ Եվ վերադարձնելով մեկից մյուսին՝ խաղաղությունը քաղաքում ու գավառում չվերականգնվեց։ Այնուհետև նա տվեց քաղաքը իր զորավար Իվանեին, սակայն այսպիսով ևս խաղաղություն չեղավ, ուստի և նորից տվեց առաջվա նրա տերերին»:

[«Իսկ Գիորգի իբրև թագաւորեաց և հաստատեցաւ՝ բազում գործ արութեան ցուցանէր, արշաւելով ի կողմանս կողմանս, զբազում գաւառս հարկանէր զպատահեալսն պատերազմաւ, առնոյր և զքաղաքն Անի միանգամ և երկիցս, կոչելով եպիսկոպոսին Բարսղի և եղբարց նորա՝ որդւոցն Մագիստրոսին Հասանայ. և ապա ընդդիմացեալ ոչ տային ի ձեռս նորա զքաղաքն. և առեալ բռնաբար զքաղաքն՝ և հրա-

---

[1] Տե՛ս Лэн-Пуль, Мусульманские династии, էջ 295։

մայեաց աւար Հարկանել. և մերկացուցեալ զօրացն զամենեսեան զարս և զկանայսն, զքահանայս և զկրօնաւորս՝ բազում անարգանս ցուցանէին յաղագս ընդդիմանալոյն. և եդեալ շահապ քաղաքին և զօր ընդ նմա՝ `գնաց։

Եւ նեղեալ քաղաքն յարշաւանացն թշնամեացն՝ աղաղակեցին տալ ի ձեռս առաջին տեառնն՝ որ էր պարսիկ ազգաւ. և դարձեալ յայլ յայլմէ փոխեալ՝ ոչ լինէր խաղաղութիւն քաղաքին և գաւառին։ Ապա տայ ի ձեռս զօրավարին իւրոյ՝ Իւանէի. և ոչ եղև և ոչ այնպէս հանդարտութիւն, մինչև տալ ի ձեռս իւրոց առաջնոց տերանցն»][1]։

1177/8 թվին Վրաստանում տեղի ունեցան ներքին մեծ խռովություններ գահաժառանգության խնդրի շուրջը։ Ինչպես վերև հիշեցինք, Դավիթ Գ-ի մահից հետո գահի օրինավոր ժառանգն էր նրա Դեմետրե որդին, և ոչ նրա եղբայր Գեորգին։ Դեմետրեն այժմ չափահաս էր և ամուսնացած էր մեծ իշխան ամիրսպասալար Իվանե Օրբելյանի դստեր հետ։ Վրաց ականավոր իշխանները դավադրություն կազմեցին Գեորգի Գ-ի դեմ, կամենալով թագավորեցնել Դեմետրեին իր հորեղբոր փոխարեն։

Դեմետրեի իրավունքների պաշտպանությունը, ինչպես ենթադրում են, պարզապես մի պատրվակ էր ապստամբների համար, իսկ ապստամբության բուն պատճառն այն էր, որ Վրաստանի ֆեոդալական բարձր ազնվականությունը դեմ էր թագավորական իշխանության անչափ զորեղացմանը Գեորգի Գ-ի թագավորության ընթացքում։

Դավադրության գլուխն անցավ ամիրսպասալար Իվանե Օրբելյանը, որին միացել էին նաև Զաքարյան Սարգիս իշխանը, Գրիգոր Ապիրատյանը և Վրաստանի գրեթե բոլոր նշանավոր իշխանները։ Սակայն կռվի ընթացքում Զաքարյան Սարգիս իշխանը, Ապիրատյան Գրիգորը և դավադիրների մեծագույն մասը անցան Գեորգիի կողմը, ինքը Դեմետրեն ևս անձնատուր եղավ իր հորեղբորը և այդպիսով ապստամբությունը խեղդվեց առանց մեծ արյունհեղության։

Այս ապստամբության պատճառով Գեորգի Գ-ի հրամանով Դեմետրեին և Իվանե Օրբելյանին կուրացրին, Օրբելյաններից գրավեցին նրանց հայրենի կալվածներն ու հարստությունները և բնա-

[1] Տե՛ս «Հայապատում», էջ 390։

ջինջ արին նրանց ամբողջ տոհմը[1]։ Օրբելյաններից փրկվել էր ամիրսպասալար Իվանեի եղբայր Լիպարիտը, որն ապստամբության ժամանակ իր երկու որդիների, Էլիկումի և Իվանեի հետ, գնացել էր Էլտկուզ աթաբեկի որդոց՝ Մուհամմեդ Փահլավանի և Խզիլ Ասլանի մոտ, հույս ունենալով օգնություն ստանալու հարևան ամիրայություններից։

Գեորգի Գ-ի դեմ բռնկված ապստամբությունը, ըստ երևույթին, արձագանք էր գտել Վրաստանի զանազան կողմերում և ստեղծել էր երկրում շփոթ ու ներքին անիշխանական դրություն։ 1180 թվին, պատմում է Վարդան վարդապետը, Գեորգի Գ-ը.—

«Ոչնչացրեց իր երկրում գողերին ու ավազակներին, երբ ամբողջ զորքը միասին էր համախմբվել՝ նա օրենք սահմանեց, որ անողորմ կերպով կախեն փայտից բոլոր մարդկանց անխտիր թե փոքր և թե մեծ հանցանքի համար. ուստի և կախաղան հանվեցին նաև շատերը պատվավորներից»։

[«Ի վեցհարիւր քսան և ինն թուին Գէորգի եբարձ զգող և զաւազակ յերկրէ. զի ամենայն զօրացն ի միասին եղելոյ՝ օրինադրեաց կախել զփայտէ վասն փոքու և մեծի իրաց՝ անողորմ զամենայն մարդ, և յոլովք ի պատուաւորաց կախեցան»][2]։

Այս խիստ ու կտրուկ միջոցով Գեորգի Գ-ին հաջողվեց վերականգնել երկրում խանգարված կարգը և խաղաղությունը։

Հայ աղբյուրների նաև այլ վկայություններից երևում է, որ սելջուկյան արշավանքներից հետո՝ անիշխանությունը և կյանքի ու գույքի անապահովությունը, ընդհանրապես, խիստ տարածված երևույթ էին Հայաստանի զանազան կողմերում։ Խոսրով Գանձակեցու վկայաբանության (+ 1167) հեղինակը տալիս է, օրինակ, ուշագրավ մի նկարագրություն Արցախում տիրող անիշխանության։

«Ղեմացիների բռնակալության ժամանակ,— ասում է նա,— երբ վաղուց արդեն իսպառ վերացել էր Հայոց թագավորությունը՝ իշխանների մնացորդները թափառում էին անտերունչ, ցրված ամբողջ աշխարհում, ու չէին հնազանդվում միմյանց՝ մանավանդ նրանք, որոնք բնակվում էին Արցախ երկրի ամրություններում՝ ավազակաբար ապրում էին

---

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 383—390. Վարդան վրդ., գլ. ՀԶ, էջ 130. Մելիքսեթ–Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 10—11. Համեմատե Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, էջ 5—6։

[2] Վարդան վրդ., գլ. ՀԷ, էջ 131։



Անիի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու գավիթը։



*Գանձասարի վանքի գավիթի մուտքը (XIII դ.)։*

լեռներում և ապահով տեղերում ու, նստելով ճանապարհների անցքերի մոտ՝ թալանում էին ամեն ազգի մարդկանց, որոնց կարողանում էին հաղթել. և քիչ նեղություն չէին պատճառում նաև քրիստոնյաներին, պահանջելով հարկեր։

[«Ի ժամանակս բռնակալութեանն Ղեմացւոց՝ յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառուստ, և անտերունչք շրջէին մնացորդք իշխանաց՝ որ ընդ բնաւ աշխարհս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ՝ որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ, աւազակաբար կելով ի լերինս և ի զերծ տեղիս և յանցս ճանապարհաց նստելով՝ առնուին կապուտ կողոպուտ յամենայն ազգաց՝ յորս յաղթելն կարէին և նեղութիւն ոչ սակաւ հասուցանէին քրիստովնէից, հարկս խնդրելով...»][1]։

Այս վկայությունը շատ կարևոր է, որովհետև մատնանիշ է անում ավազակությունների ու անիշխանության հիմնական պատճառներից մեկը հայկական շրջաններում։ Ավազակաբար ապրողները, ինչպես տեսնում ենք, եղել են երկրի նախկին տերերը, հայ ազնվականության այն մնացորդները, որոնք զրկվել էին իշխանական ու կալվածատիրական իրենց նախկին իրավունքներից և չէին հաշտվել նոր իրավակարգի հետ։ Խաղաղ բնակչության դրությունը, որից հարկ և ապրուստ էին պահանջում թե հին և թե նոր տերերը, իրավի որ շատ ծանր էր լինելու։

Նույն այս ժամանակներում կազմակերպվել էին նաև հատուկ ավազակային ոջեր, որոնք նույնպես սանձարձակ անիշխանության արդյունք էին և բնորոշում են այդ ժամանակվա շփոթ ու ալեկոծ կյանքի անտանելի պայմանները։

«Նույն ժամանակներում [1178—1180 թվականներին], — պատմում է Վարդան վարդապետը,— գողերն առան Ծառաքարը Կեչրորի Ղարաչայ ամիրայի հրամանով, որը վաճառեց այն մեծ գումար ոսկի փողով Խզլ-Ասլանին։ Եվ նա բնակեցրեց այնտեղ հանցագործ մարդկանց, որոնք գիշեր և ցերեկ անդադար արյունհեղություն էին անում և մինչև իսկ, ընկղմելով քրիստոնյաներին խավարային անդունդների մեջ՝ սպանում էին սովով ու առաջվա մեռածների գարշահոտությամբ»։

[1] Տե՛ս «Հայոց նոր վկաները», գիտական հրատ., էջ 23։

[«Ի նոյն աւուրս առաւ Ծառաքար ի գողոց հրամանաւ Ղարաչայ ամիրային Կեչրորոյ, որ վաճառեաց զնա Խզլասլանայ ընդ բազում ոսկւոյ. և նա բնակեցոյց անդ արս վնասակարս որք ոչ դադարէին յարենհեղութենէ ի տուէ և ի գիշերի. մինչև զքրիստոնեայս ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով և գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սատանանէին»][1]։

Ծառաքարի այս ավազակային որջը, ինչպես վկայում է նույն Վարդանը, նվաճեցին շուտով (1186 թ.) անեցիները և անխնա կերպով կոտորեցին բոլոր բնակչությունը, բացի կանանցից ու երեխաներից։ Այս հարձակման ժամանակ մեռել էին նաև Դվինի Ալիշեր ամիրայի կինն ու որդիները, որոնք այդ ժամանակ գտնվում էին Ծառաքարում[2]։

Ուշագրավ է, որ անեցիներից, որոնք գտնվում էին Վրաստանի հովանավորության տակ՝ չկարողացան վրեժ առնել ո՛չ Ալիշերը և ո՛չ էլ Խզիլ Ասլանը։ Գեորգի Գ-ի թագավորության ժամանակ և նրա դստեր Թամարի գահակալությունից հետո՝ Վրաստանն այնքան արդեն ուժեղացել էր, որ շրջակա ամիրայությունները չհամարձակվեցին հարձակողական պատերազմ սկսել և պաշտպանել իրենց ազգակիցներին։

---

[1] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՀԶ, էջ 131։

[2] Նույնը, գլ. ՀԸ, էջ 133։

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

**1. Զաքարյանների քաղաքական մեծ դերը Թամար թագուհու ժամանակ.— Զաքարյանների տոհմի ծագումը.— Զաքարյանների նախահայրերը:— 2. Սարգիս Մեծը և Զաքարեն, իբրև սպասալարներ հայկական զորքերի:— 3. Լոռու վիճակը Օրբելյանների անկումից հետո.— Սարգիս մեծի նշանակումը Հայոց և Վրաց սպասալար և Զաքարյանների իշխանության հաստատումը Լոռում:— 4. Զաքարեի և Իվանեի առաջ քաշումը և պարգևատրումը:— 5. Զաքարյանները իբրև Բագրատունիների ժառանգներ:— 6. Վրաստանի արշավանքները դեպի Առան և Աբու-Բեկր աթաբեկի պարտությունը:— 7. Ելտկուզյան աթաբեկության սահմանում գտնվող Զաքարյան տոհմի Վահրամյան ճյուղի իշխանության զորեղացումը:— 8. Զաքարեի և Իվանեի հաղթական պատերազմները և կենտրոնական Հայաստանի ազատագրումը.— Անբերդի, Անիի, Բջնիի և Դվինի առումը.— Ռուքնադդինի պարտությունը Բասենում:— 9. Մանազկերտ-Խլաթի ամիրայությունը և Զաքարյանների պատերազմները նրա դեմ.— Կարսի և Վանանդի բերդերի առումը:— 10. Անիի աղետը և Արդաբիլի ավերումը և ջարդը:— 11. Շահի-Արմենների անկումը և Էյուբյան ամիրայությունը:— 12. Խլաթ քաղաքի պաշարումը և հաշտությունը Էյուբյանների հետ:— 13. Զաքարե ամիրսպասալարի վերջին մեծ արշավանքն Ատրպատական:— 14. Զաքարեի և Իվանեի ազատագրած երկրները ըստ հայկական աղբյուրների:— 15. Նրանց ազատագրած իշխանությունը Հայաստանում:**

*Վրաց Գեորգի Գ թագավորը, որը գահաժառանգության հարցը վերջնականապես լուծել էր զենքի ուժով, չուներ արու զավակ։ Սա դեռ իր կենդանության ժամանակ իրեն հաջորդ հրատարակեց իր դուստր Թամարին (1178/1179 թվին)։*

*Թամարի թագավորության ժամանակը (1184—1213) Վրաց Բագրատունիների հզորության ամենակուռ շրջանն էր և Վրաստանի ամենանշանավոր գործիչներն էին այս շրջանում Զաքարյան Սարգիսի որդիները՝ Զաքարեն և Իվանեն։ Իշխանական այս նոր տոհմի քաղաքական ու կուլտուրական դերն այնքան մեծ էր ու արդյունա-*

վետ նաև Հայոց պատմական անցյալում, որ անհրաժեշտ է Զաքարյանների ժամանակաշրջանն ու նրանց գործունեությունը քննության առնել ընդարձակ կերպով։

Զաքարյանների ծագման մասին, որոնք Հայաստանի պատմության մեջ հանդես են գալիս միայն 11—12-րդ դարերում՝ հայ պատմիչները տալիս են բավական պարզ ու որոշ տեղեկություններ։

Վարդան վարդապետը և Կիրակոս Գանձակեցին, որոնք 13-րդ դարի պատմագիրներ են և ժամանակակից են Զաքարյան մեծ իշխանների դարաշրջանին՝ այս տոհմին վերագրում են քրդական ծագում։ Կիրակոս Գանձակեցին պարզ վկայում է նաև, որ Զաքարյանները ծագում են «ի քրթաց ի Բաբիրական խելէն», այսինքն՝ «Բաբիրական» կոչվող քրդական «էլից» կամ «ցեղից»։

Սրանք գաղթել էին Զորագետ, հավանորեն, 11-րդ դարում և եկել, ինչպես որոշակի մատնանշում է Վարդան վարդապետը. «առ Թագաւորսն Զորոգետոյ, որ ի Բագրատունեաց ազգէ» ու ընդունել էին այստեղ քրիստոնեություն ըստ Հայոց եկեղեցու դավանանքի։ Նրանք, ազգակցություն հաստատելով ամուսնությունների միջոցով հայերի հետ՝ հետզհետե հայացել էին։ Ստանալով Կյուրիկյաններից իբրև բնակության տեղ Խոշորնին, որը գտնվում է այժմյան Սադախլուից մոտ 10 կիլոմետր դեպի արևմուտք՝ սրանք, որովհետև խիստ քաջ էին՝ արժանացել էին մեծ պատիվների ու պաշտոնների։

Վարդան վարդապետի և Կիրակոս Գանձակեցու կարևոր վկայությունները, որ հայ բանասերները համարել են վիճելի կամ առարկելի[1] մեջ եմ բերում աշխարհաբար թարգմանությամբ, կցելով նաև ԺԷ դարի պատմիչ Զաքարիա սարկավագի վկայությունը, որը օգտվելով Կիրակոս Գանձակեցու հաղորդագրությունից՝ նրա «ի Բաբիրական խելէն» խոսքերը սխալ է հասկացել և կարծել է, որ

[1] Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, I, Վաղարշապատ, 1928, էջ 3. Կարապետ Եպ., Նյութեր հայ մելիքության մասին, Բ. պրակ, Էջմիածին, 1914, էջ 18—26. Ասլ. Շահնազարյանց, Զաքարյան Երկայնաբազուկ տոհմի ծագումը, Շողակաթ, Վաղարշապատ, 1913, էջ 73—74։ Վերջինս, քննության առնելով Զաքարյանների մասին հայ և վրաց աղբյուրների տեղեկությունները՝ ենթադրում է, որ «Զաքարյանները ծագումով քաղդեացիներ են, գաղթել են դեպի Հայաստան մոտավորապես 1044—1050 թվականներին և բնակություն հաստատել Զորագետում 1050—1063 թվականներին. Նոքա դեռ Բաբելոնում եղած ժամանակ նեստորական են եղել, հետևապես քրիստոնյա, իսկ Հայաստանում ընդունել են միայն Հայոց եկեղեցու դավանությունը»։ Աս. Շահնազարյանի այս եզրակացությունները, որ հիմնված են ներքև մեջբերված Զաքարիա սարկավագի սխալ ենթադրությունների վրա՝ միանգամայն անհիմն են և անընդունելի։

*Զաքարյանները եկել էին Հայաստան Բաբելոնիայից՝ «ի Բաբիլական երկրէն»։*

*1. Վարդան վարդապետ, «Հաւաքումն պատմութեան», գլ. ՁԲ, էջ 138։*

> *«Այս ժամանակներում ապրում էին հռչակավոր Զաքարե ու Իվանե իշխանները՝ Սարգիսի որդիք... քուրդ ազգից, որոնք գաղթել էին և եկել Ձորագետի թագավորների մոտ, որ ազգով Բագրատունիներ էին, ընդունել էին քրիստոնեական կրոնը և արժանացել էին պատիվների. իբրև բնակության տեղ նրանց սրվել էր Խոշորնին և, որովհետև խիստ քաջ էին՝ առաջացան օրըստօրէ դիրքով ու պատվով»։*
>
> *[«Յաւուրս ժամանակացս այսոցիկ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և Իւանէ որդիք Սարգսի... ի քուրդ ազգէ, հաստուած եղեալ առ թագաւորսն Ձորոգետոյ, որ ի Բագրատունեաց ազգէ, հաւատացին ի Քրիստոս, և պատուեցան. և տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի. և զի արիագոյնք էին՝ յառաջեցին օր ըստ օրէ ի բարձ և ի պատիւ»]։*

*2. Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1910, էջ 154։*

> *«Լևոն Հայոց արքայի թագավորության ժամանակ Արեվելքում ապրում էին երկու եղբայրներ, բարեպաշտ Սարգիս իշխանի որդիները... որոնք անջատվել էին քրդերի Բաբիրական ցեղից. առաջինի անունն էր Զաքարե և երկրորդինը՝ Իվանե. սրանք քաջ տղամարդիկ էին ու հզոր էին իշխանությամբ և արժանացել էին պատիվների Վրաց թագուհու կողմից, որի անունն էր Թամար և որը դուստրն էր քաջ Գեորգիի՝ Դեմետրեի որդու»։*
>
> *[«Յաւուրս ժամանակաց թագաւորութեանն Լևոնի Հայոց արքայի էին յԱրևելս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի... որ հատուածեալ ի քրթաց ի Բաբիրական խելէն, անուն առաջնոյն Զաքարէ, և երկրորդին Իւանէ, արք քաջք և ճոխք իշխանութեամբ, պատուեալք ի թագուհւոյն Վրաց, որ Թամարն կոչէր, դուստր Գէորգեայ քաջի, որդւոյ Դեմետրէի»]։*

*3. «Զաքարեայ սարկաւագի պատմութիւն», հատ. Գ, Վաղարշապատ, 1870, գլ. Ը, էջ 11։*

> *«Մենք խոստացել էինք նախապես անել Զաքարե զորավարի պատմությունը, թե ո՛րտեղից էր և ո՛վ էր,— այդ*

*համառոտ պատմում է Կիրակոսը։ Բաբելացիների երկրում իշխան էր կարգված քուրդ ազգից Զաքարիա անունով մի քրիստոնյա, սակայն նա, վշտացած լինելով նրանցից՝ չկարողացավ մնալ այնտեղ։ Ընտրելով հարմար ժամանակ՝ նա վերցնում է հետը իր բոլոր ընդոծիններին, ծառաներին ու աղախիններին և իր բանակի բոլոր տունուտեղը և, հեռանալով Բաբելական երկրից՝ ճանապարհ է ընկնում դեպի Պարսից տերությունը։ Այնտեղից նա կամաց կամաց գալիս մոտենում է Հայաստանի սահմաններին և գնում է վրացիների երկիրը։ Իսկ այնտեղ, իշխանություն ստանալով Վրաց թագավորներից՝ խիստ առաջադիմում է»։*

*[«Քանզի յառաջագոյն խոստացաք առնել զպատմութիւն Զաքարէ զօրավարի, թէ ո՞ւստի և կամ ո՞րպէս էր. զի համառօտ պատմէ Կիրակոս։ Ի յերկրին Բաբիլացւոց՝ այր ումն քրիստոնեայ՝ Զաքարիա անուն՝ կարգեալ իշխան յազգէն մարաց, և վշտացեալ ի նոցանէ, ոչ կարաց կեալ անդէն։ Եւ գտեալ ժամանակ, առնու ամենայն ընդոծինս, ծառայս և աղախինս, ախիւ բանակի իւրոյ հատուածեալ ի Բաբիլական երկրէն, անկանի առ տէրութիւմն Պարսից։ Եւ անտի գայ մեղմով և մտանէ ի սահմանս Հայոց, եւ գնայ յերկիրն Վրաց։ Եւ անդ գտեալ իշխանութիւմ ի թագաւորացն Վրաց, մեծանայ յոյժ»]։*

*Զաքարեի և Իվանեի նախորդների մասին մատենագրական աղբյուրների և արձանագրությունների հաղորդած տեղեկությունները քննության են առնված ու ճշտված Ասլան Շահնազարյանցի վերոհիշյալ հոդվածում[1]։ Շահնազարյանցին հաջողվել է Զաքարյանների ճյուղագրությունը վերականգնել մինչև Զաքարեի և Իվանեի պապի պապը՝ Խոսրովը, հետևյալ կարգով.—*




---

[1] Տե՛ս «Շողակաթ», Էջմիածնի հայագիտական ժողովածու, էջ 74—75։ Համեմատե նաև Ալիշան, Հայապատում, էջ 447։

[2] Հայոց մատենագրության և պատմագիտության մեջ իշխանական այս տոհմն անվանվում է Զաքարյան Սարգիս մեծի և Վահրամի հոր՝ Զաքարե Ա-ի անունով։

*Զաքարյանների տոհմի նախահայրերը, որ Կյուրիկյան Բագրատունիների ժամանակ հաստատվել էին Ձորագետում՝ խնամիանալով իշխանական հայ տոհմերի, և, հավանաբար, նաև Բագրատունիների հետ՝ հետզհետե զորեղացան և ձեռք բերին Լոռում և Վրաստանում բացառիկ դիրք ու հեղինակություն։*

*Երբ 12-րդ դարի սկզբում Դավիթ Շինողը նվաճեց Կյուրիկյան թագավորությունը և Կյուրիկե Ա-ի Դավիթ և Աբաս որդիները հաստատվեցին Մածնաբերդում և Տավուշում՝ Ձորագետի մեծ մասը, ինչպես տեսանք, ստացան Օրբելյան իշխանները, որոնք Վրաստանի ամիրսպասալարներն էին, իսկ Զաքարյանները, թեև ունեին այստեղ իրենց սեփական կալվածները, սակայն նրանց քաղաքական դերը դեռևս համեմատաբար համեստ էր։*

*Հայկական վիմական արձանագրությունների վկայություններից կարելի է կռահել, որ Զաքարյանները, Վրաստանի համայն զորքերի գլխավոր հրամանատարության կամ ամիրսպասալարության պաշտոնը ստանձնելուց առաջ, եղել են, ըստ երևույթին, արդեն 12-րդ դարի երկրորդ կեսում, զորապետներ կամ սպասալարներ հայկական զորքերի*[1]*։*

*Ինչպես հայտնի է, Զաքարեի և Իվանեի հայրը, Սարգիս մեծը, ու նաև ինքը Զաքարեն՝ ամիրսպասալար են անվանված, առաջինը՝ 1155 և 1181 թվերի Հաղարծնի ու Սանահնի արձանագրություններում, իսկ երկրորդը՝ 1187 և 1191 թվերի Սանահնի ու Հոռոմայրի արձանագրություններում*[2]*, թեև այդ ժամանակներում Վրաստանի զորքերի գլխավոր հրամանատարներ կամ ամիրսպասալարներ էին— Իվանե Օրբելյանը, Գամրեկել Թորեցին և ուրիշները։ Հավանական է, ուրեմն, որ նրանք այդ թվականներին, լինելով հայ զորքերի հրամանատարներ՝ օգնականներ էին Վրաստանի ամիրսպասալարների։*

*Ըստ երևույթին, այդ է պատճառը, որ երբ 1161 թվին Գեորգի Գ-ը գրավել էր Անին՝ նա այնտեղ կառավարիչ էր նշանակել ամիրսպասալար Իվանե Օրբելյանի հետ միասին նաև Սարգիս Մխարգրձելուն։ Վրաց Քարթլիս-ցխովրեբա տարեգրությունը «Մխարգրձելի», այսինքն՝ «երկարաուս» կամ «լայնաթիկունք» է անվանում Սարգիս մեծ իշխանին*[3]*։*

---

*[1] Համեմատե Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 8։*

*[2] Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 31, 33, 36, 37 և 41։*

*[3] Զաքարյանների տոհմի «երկայնաբազուկ» կոչումը նոր ծագում ունի և հիմնված է Քարթլիս-ցխովրեբայի սխալ վկայության վրա, որ իբր թե ամիրսպասալար Զաքարեն (Բ-ը) Պարսից Արտաքսերքսես Ա Երկայնաբազուկի ցեղից էր։*

Զաքարյանները հետզհետե անչափ ուժեղացան և պարգևատրվեցին ամենաբարձր պաշտոններով ու ընդարձակ կալվածներով Թամար թագուհու ժամանակ։

Գեորգի Գ-ի թագավորության վերջին տարիներում, ինչպես հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը, Վրաստանի միացյալ զորքերի ամիրսպասալարության պաշտոնը տրվել էր ղփչաղ Խուպասարին, որը 1177/8 թվ. մեծ ապստամբության ժամանակ Գեորգիի առաջին օգնականն էր[1]։ Եվ որովհետև սպասալարության այս պաշտոնը աշխարհագրորեն պատկանում էր հայկական Լոռուն և այնտեղ տիրող իշխանական տանը, ուստի և Խուպասարը սպասալարության պատվի հետ միասին ստացավ նաև Լոռու իշխանությունը[2]։ Սակայն Խուպասարը չկարողացավ հաստատել իր իշխանությունը Լոռում։ Եվ շուտով, ինչպես հաղորդում է Վրաց ժամանակագրությունը, ամիրսպասալարության պատիվն ուզեց գրավել ինքնիշխանաբար ու «նստել Հայոց թագավորի տեղը Լոռում» գանձարանապետ Խութլու-Արսլանը[3]։

Սպասալարության պաշտոնի շուրջ ստեղծված այս խառնակ դրությանը վերջ դրվեց 1186 թվին և Վրաց ու Հայոց զորքերի ամիրսպասալարը նշանակեց Թամարը Զաքարյան Սարգիս մեծ իշխանին, որին նա իբրև ժառանգական սեփականություն շնորհեց Լոռին։

Հենց 1186 թվականից հետո արձանագրություններում արդեն պարզ հիշատակվում է Զաքարյանների տիրությունն ամբողջ այդ երկրում և Սարգիս մեծի որդիները՝ Զաքարեն և Իվանեն՝ անվանվում են «իշխանաց իշխան»[4]։ Անիի 1187 թվի մի արձանագրության մեջ վերջիններս անվանված են նույնիսկ «թագաւորք Հայոց»[5]։

Զաքարյան Սարգիս մեծ իշխանը, որ իր տոհմի բարձրացման ու զորեղացման գլխավոր նախաձեռնողն էր՝ վախճանվեց 1187 թվին և թաղվեց Սանահնի մայր տաճարի բակում։

Նրա մահից հետո Վրաց թագավորության զորքերի ամիրսպասալարությունը կարճ ժամանակով ստացավ Գամրեկել Թորեցին, որին իբրև օգնականներ ու հայկական զորքերի սպասալարներ գործակցում էին Զաքարյանները։ Բայց շուտով 12-րդ դարի իննսունական թվականների սկզբներին, Թամար թագուհու ռուս ամուսնու

---

1 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Թիֆլիս, 1911, գլ. ԿԶ, էջ 391։

2 Տե՛ս Մեյիխսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 11։

3 Նույնը, էջ 11։

4 Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 38—39։

5 Նույնը, էջ 41։

ու սրան միացած Վրաց իշխանների ապստամբությունը ընկճելուց հետո՝ Գամրեկել Թորելու փոխարեն, որն այդ ժամանակ վախճանվել էր՝ վրացական-հայկական միացյալ զորքերի ամիրսպասալար նշանակվեց Սարգիս մեծի որդին, Զաքարեն, իսկ սրա եղբայրը, Իվանեն, որը տարիքով նրանից փոքր էր՝ ստացավ նախ արքունի մեծ վեզիրի, մսախուրթուխուցեսի բարձր պաշտոնը, իսկ հետո՝ աթաբեկի[1]։ Բացի այս պաշտոններից Վրաց թագուհին նրանց շնորհեց, ինչպես վկայում է Քարթլիս-ցխովրեբան, նաև նոր կալվածներ։

> «Ողորմած լինելով հավատարիմների և յուրայինների հանդեպ,— ասում է Վրաց ժամանակագրությունը[2],— [Թամար թագուհին] շնորհեց Սարգսի որդի Իվանեին առաջնություն և մսախուրթուխուցեսի պաշտոնը և ի պատիվ՝ Կայենն ու Կայծոնը, Գեղարքունիքով և այլ բազում հարկատու քաղաքներով, բերդերով ու երկրներով... [Երբ] վախճանվեց Գամրեկել ամիրսպասալարը,... ապա ամիրսպասալարությունը շնորհվեց Մխարգրձել Զաքարիային՝ Սարգիս ամիրսպասալարի որդուն, որը նստած էր Հայոց թագավորի տեղում և Լոռիի տերն էր, որին կցեցին նաև Ռուսթավ քաղաքը, [քանի որ] նա հպատակ էր, արժանի սպասպետությանը»։

Ուշագրավ է, որ Վրաց աղբյուրները Սարգիս մեծի ու նրա որդիների քրդական ծագման մասին տեղեկություն չունեն։ Եվ այդ միանգամայն հասկանալի է։ 12-րդ դարի երկրորդ կեսում, երբ Զաքարյանները սկսեցին նշանավոր դեր խաղալ Հայաստանում և Վրաստանում՝ նրանք արդեն կատարելապես հայացել էին։

Զաքարեի և Իվանեի մայրն էր Սահակադուխտը, որը Կայենի բերդի ու գավառի (Աղստև գետի միջին հոսանքում) մեծ իշխան Քուրդի քույրն էր[3]։ Նրանց տատը, նախատատը և պապի տատը՝ բոլորն էլ, հավանորեն, եղել են հայեր, և շատ բնական է, որ նրանք գիտենալու էին իրենց իբրև հայեր, իսկ իրենց հեռավոր նախնիքների ծագման մասին ունենալու էին միայն հիշողություններ։

---

[1] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 13—14, 34. համեմատե նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 154. Ստեփանոս Օրբելյան. գլ. ԿԶ, էջ 391 և ուրիշները։ Աթաբեկության ամենաբարձր պաշտոնը Իվանեին տրվել է ո՛չ թե վերահիշյալ թվին, այլ ավելի ուշ։

[2] Նույնը, էջ 13—14։

[3] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 41. Վարդան վրդ., գլ. ՁԳ, էջ 140. Կիրակոս Գանձակեցի, էջ 198։

Նրանք ո՛չ միայն իրենց հայ են համարել, այլև համարել են, ինչպես երևում է Հաղարծնի վանքի կարևոր մի արձանագրության վկայությունից, «յազգէ Բագրատունեաց», իսկ իրենց գրաված հայկական երկրները՝ «սեփական ժառանգութիւն նախնեաց»[1]։ Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ Զաքարյանները, ինչպես ճիշտ կռահել է Շահնազարյանը, Զորագետ գաղթելուց հետո՝ խնամություն էին ունեցել Կյուրիկյան Բագրատունիների հետ և նրանց ազգական են եղել իգական գծով[2]։

Զաքարեի և Իվանեի գործունեության ժամանակը գրեթե անընդհատ հաղթությունների և փայլուն վերածնության մի շրջան էր։

Սրանց մեծ հաղթությունների ու անընդհատ հաջողությունների շնորհիվ Վրաստանի գերիշխանությունը անօրինակ արագությամբ տարածվեց մինչև Ատրպատականի հյուսիսային նահանգները։ Հայկական բազմաթիվ շրջաններ, որ գտնվում էին ամիրայությունների տիրապետության տակ՝ մեկը մյուսի ետևից ազատագրվեցին և առանձին իշխանություններ կազմեցին, որոնք գտնվում էին Զաքարեի կամ Իվանեի անմիջական իշխանության ներքո։

Վրաստանի և Թուրքական իշխանությունների համառ պայքարը, որ շարունակվեց կարճ ընդմիջումներով ավելի քան մեկ դար՝ վճռվում էր այժմ հօգուտ Վրաստանի և հայկական իշխանությունների։

Ջախջախելով շրջակա ամիրայությունների զինվորական ուժը՝ Զաքարե ամիրսպասալարը և Իվանեն, համեմատաբար շատ կարճ ժամանակում, նվաճեցին Սևանի շուրջը գտնվող բոլոր հայ շրջանները, հին Այրարատի գրեթե ամբողջ նահանգը, նաև Գուգարքի, Տայքի, Սյունիքի և Ուտիքի բազմաթիվ գավառները։

Արդեն Թամարի թագավորության առաջին տարիներում վերսկսվեցին կռիվները Թուրք հարևանների դեմ, բայց այս կռիվներն ունեին, մեծ մասամբ, ասպատակությունների բնույթ։ Վրացական

---

[1] Տե՛ս Ս. Վ. Ջալալյանց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 131—2. նաև «Վիմական տարեգիր», էջ 141։ Կարապետ եպիսկոպոսը, հիմնվելով այս արձանագրության վրա, չի ընդունում Զաքարյանների քրդական կամ, ինչպես Ա. Շահնազարյանն է ենթադրում, քաղդեական ծագումը, այլ կարծում է, որ նրանք կարող էին սերված լինել կիսաքուրդ Մոկաց երկրի կամ Տարոնի հայ Բագրատունիներից, տե՛ս Նյութեր հայ մելիքության մասին, Բ. պրակ, Էջմիածին, 1914, էջ 18—30։

[2] Տե՛ս Շահնազարյանց, Շողակաթ, հայազգիտ. ժողովածու, էջ 69։

զորքերը գնում էին ավար բերելու և վերադառնում էին տուն, բերելով իրենց հետ գերիներ, բազմաթիվ անասուններ և հարուստ կողոպուտ։ Նույն նպատակով ասպատակում էին Վրաց երկրները հարևան ամիրայությունները, գլխավորապես, թուրքերը, որոնք այդ ժամանակ արդեն խիստ շատ էին Առանում ու նաև Հայաստանում։

Քարթլիս-ցխովրեբայում հիշատակված են, օրինակ, Առանի, Գեղարքունիքի, Կարինի ու այլ շրջանների թուրքերի ասպատակությունները Պալակացիս կամ Չըլդըր լճի կողմերում և Շավշեթում, որը գտնվում էր այժմյան Արտանուջի շրջանի հյուսիսակողմերում։ Ի պատասխան այս ասպատակությունների և կամ ավարառության հատուկ նպատակով՝ հաճախակի էին դառել նաև վրացական-հայկական զորքերի հարձակումները հարևան երկրների վրա։

Այսպես՝ Քարթլիս-ցխովրեբայում հիշատակված են վերջիններիս ասպատակությունները Պալակացիս լճի շրջանում և Կարուց երկրում մինչև Բասեն, ինչպես և Թամարի ամուսին ռուս Գեորգիի ու Զաքարյանների արշավանքները Դվին, Գեղարքունիք և Արաքսի ափերը մինչև Մասիս, որ տեղի էին ունեցել, հավանորեն, 1184—1187 թվերին[1]։

Այս հարձակումների ընթացքում այժմ կոտորվում, գերի էին տարվում ու կողոպտվում, գլխավորապես, թուրք բնակչությունը, որն արդեն ոտք էր դրել ու հաստատվել Հայաստանում։

> «[Գեորգի ռուսը],— վկայում է Քարթլիս-ցխովրեբան, — մեծ զորք ժողովեց ու դիմեց Գեղարքունիք, որը դժվար էր գրավել թուրքմենների՝ այնտեղ ծովի ավազի պես շատ լինելու պատճառով.[2] հարձակվեցին, կոտորեցին և վերցրին մեծ քանակությամբ գերիներ և ավար»[3]։

1187/8 թվին[4], իր ամուսնանալուց երկու տարի հետո, Թամար թագուհին բաժանվեց իր Գեորգի ռուս ամուսնուց, որը հեռացավ Պոլիս։ Այնուհետև, 1189 թվին, Թամարն ամուսնացավ օսերի թագավորի որդու Սոսլանի հետ, որը, թագավոր դառնալով Վրաստանի՝ անվանվեց Դավիթ։

Վրացական-հայկական զորքերի ասպատակություններն ու ար-

---

[1] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 11—12։

[2] Հավանորեն, խոսքը քոչվոր թուրքերի մասին է։

[3] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 12։

[4] Տե՛ս *Джавахишвили,* История грузинского народа, II, перевод М. Хубуа, էջ 391։

*շավանքները Հարևան ամիրայությունների երկրները խիստ մեծ չափեր ստացան Գեորգիի ու նրա հետ միացած իշխանների ապըստամբությունը ճնշելուց հետո, 12-րդ դարի վերջին տասնամյակում և 13-րդ դարի սկզբներում, երբ համայն Վրաց զորքերի ամիրսպասալարն էր Մխարգրձել Զաքարեն։ Սրա ու Իվանեի հաղթական, գրեթե անընդհատ կռիվները ամիրայությունների դեմ տևեցին մոտ 25 տարի։*

*Նրանց հաղթությունների շնորհիվ Հայաստանը, ինչպես ասացինք, քաղաքականապես նորից վերականգնվեց, և նրա սահմաններն այնքան ընդարձակվեցին, որ պարունակում էին իրենց մեջ ո՛չ միայն Բագրատունիների նախկին Շիրակ-Անիի, Կարսի, Ձորագետի թագավորությունները և Սյունյաց մեծ իշխանությունը, այլև Դվին քաղաքը շրջակա իր գավառներով, որ սելջուկյան արշավանքներից առաջ ևս գտնվում էին օտար իշխանության տակ։*

*Զաքարե և Իվանե իշխանների հարվածներն ուղղված էին, նախ և առաջ Ելտկուզ աթաբեկի հաջորդների, Փահլավանյան կամ Ելտկուզյան մեծ աթաբեկության դեմ, որը Վրաց թագավորության ամենազորեղ ու վտանգավոր հակառակորդն էր։ Այս աթաբեկության իշխանության տակ էր գտնվում հյուսիսում ո՛չ միայն Ադրբեջանը և Առանը, այլև Հայաստանի մի մասը։*

*Ելտկուզի որդու Մուհամմեդ Փահլավանի (1172—1186) մահից հետո՝ վերջինիս եղբոր Խզըլ-Ասլանի իշխանության ժամանակ (1186—1191) սկսվեցին այստեղ երկպառակություններ ու ներքին կռիվներ։ 1187 և 1188 թվերին Խզըլ-Ասլանի դեմ պատերազմ էր վարում սելջուկյան սուլթան Տուղրուլ Գ-ը (1177—1194), որը չէր ուզում ենթարկվել իր աթաբեկին։ Այնուհետև Խզըլ-Ասլանը, որը 1191 թվին իրեն հայտարարել էր սուլթան Տուղրուլ Գ-ի տեղ, հենց նույն 1191 թվին սպանվեց։*

*Այս աթաբեկի մահից հետո՝ երկպառակությունները շարունակվեցին նաև սրա եղբոր, Մուհամմեդ Փահլավանի որդիների՝ Աբու-Բեկրի (1191—1210) և Ուզբեկի (1210—1225) իշխանության ընթացքում։ Այս վերջին երկու աթաբեկների ժամանակ Ելտկուզյան մեծ պետությունը գտնվում էր արդեն անկման ու քայքայման վիճակում։*

*Այս ամենը, բնականաբար, նպաստավոր մի հանգամանք էին, որ հեշտացրին Ելտկուզյանների տիրապետության տակ գտնվող հայկական շրջանների ազատագրումը։*

*Զաքարեի ամիրսպասալարության, ինչպես և Խզըլ-Ասլանի*

*թույլ հաջորդի՝ Աբու-Բեկրի իշխանության առաջին հենց տարիներում, Քարթլիս-ցխովրեբայում հիշատակված են, բացի վրացական-հայկական զորքերի առաջխաղացումից դեպի Կարին ու Արաքսի ափերն Արարատյան դաշտում՝ նաև նրանց երկու արշավանքները Ելտկուզյան աթաբեկության շրջանները, դեպի Առանի մեծ ու հարուստ Պարտավ քաղաքը և Գեղարքունիքի, Խաչենի ու Գարգարացոց երկրի միջով դեպի Բայլական, որը գտնվում էր Արաքս ու Կուր գետերի միջև այժմյան Շուշուց դեպի հարավ-արևելք*[1]*։*

*Այս երկու արշավանքների ժամանակ, ինչպես վկայում է Վրաց ժամանակագրությունը, Վրաստանի միացյալ զորքերը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու հասել էին մինչև Առան, որը, ինչպես ասացինք, գտնվում էր այդ ժամանակ Աբու-Բեկրի իշխանության տակ։*

*Հավանաբար, այս արշավանքներից հետո էր, որ Աբու-Բեկրը, հավաքելով անթիվ զորք, պատերազմի պատրաստվեց և ուզեց հակահարված տալ Վրաստանին։ Բայց նա Շամքորի ու Գանձակի միջև ծանր պարտություն կրեց և Վրաստանի միացյալ զորքերը գրավեցին Շամքորն ու Գանձակը և վերցրին այս կռվում մեծ թվով գերիներ ու հարուստ ավար*[2]*։*

*Գանձակի աթաբեկության թուլացումը խիստ նպաստավոր եղավ Զաքարյանների Վահրամյան ճյուղի զորեղացման համար։ Զաքարեի և Իվանեի հորեղբայր Վահրամը ու նրա որդիները կալվածներ ունեին հին Ձորափոր կամ Կայեն գավառում (=այժմյան Ղազախ գավառ)։ Քարթլիս-ցխովրեբայի վկայություններից երևում է, որ Թամարի ռուս ամուսնու՝ Գեորգիի ապստամբության ժամանակ այս գավառը, ինչպես և «ամբողջ Սոմխեթը Քուրդ-Վաճառի ձորից» դեպի արևելք՝ միացել էին ապստամբներին, բացի Զաքարյան Վահրամի Զաքարե որդուց, որը Քարթլիս-ցխովրեբայում անվանված է, ըստ երևույթին, սխալմամբ «Վարդանի որդի»*[3]*։*

*Իր հավատարմության համար այս Զաքարեն Թամարից ստացավ իբրև պարգև՝ Գագը և բազում այլ բերդեր ու ավաններ*[4]*։*

---

[1] *Տե՛ս* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, Բ, էջ 14—15։ Բայլականի ավերակները, որ անվանվում են* Mil-i Baylaqān (Millar), *Մինորսկու կարծիքով գտնվում են Շուշուց դեպի հարավ-արևելք. տե՛ս V. Minorsky*, Hudud al-'Alam, *էջ 398։*

[2] *Նույնը, Բ, էջ 15 և Басили.* Жизнь царицы Тамары, перевод *В. Дондуа,* Сборник «Памятники эпохи Руставели», Л., 1938, *էջ 50—55։*

[3] *Նույնը, Բ, էջ 13։*

[4] *Նույնը։*

Այնուհետև, Ելտկուզյան աթաբեկության թուլացման շրջանում և, հավանորեն, Աբու-Բեկրի վերոհիշյալ պարտությունից հետո՝ այս իշխանությունը, որը Վրաստանի սահմանապահ հզոր իշխանություններից մեկն էր՝ ստացավ նաև նոր երկրամասեր Ուտի և Արցախ նահանգներում։

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Զաքարյան իշխանների այս ճյուղը ևս, Վահրամի որդիները՝ Զաքարեն և Սարգիսը, որոնք ամիրսպասալարի և աթաբեկի ազգականներն էին՝ մասնակից են եղել նրանց նվաճումներին։

> «Առան և նրանք,— ասում է Կիրակոս Գանձակեցին.— շատ գավառներ պարսիկներից, նաև ամուր բերդեր՝ Գարդմանը, Քարհերձը, Երգեվանքը, Տավուշը, Կածարեթը, Տերունականը և Գագը, ու նաև Շամքոր քաղաքը նեղ դրության մեջ դրին, որը հետո առավ նրա [Զաքարիայի] որդին Վահրամը՝ Սաղսուղի հայրը և Վահրամի, Զաքարեի ու Իվանեի պապը»։
>
> [«Առին և նոքա բազում գաւառս ի Պարսից, և զբերդս ամուրս՝ զԳարդման, զՔարհերձ, և զԵրգեվանք, զՏաւուշ, զԿածարեթ, և զՏէրունականն, զԳագ, և զՇամքոր քաղաք ի նեղ էարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ, հայր Սաղսուղին, պապն Վահրամայ և Զաքարէի և Իւանէի»][1]։

Ելտկուզյան աթաբեկության ռազմական ու դիմադրական ուժը թուլանալուց հետո, 12-րդ դարի իննսնական թվականներին սկըսվեցին նաև Զաքարե ամիրսպասալարի և Իվանե աթաբեկի մեծամեծ հաղթական պատերազմները պատմական Հայաստանի մյուս շրջաններում, որոնք հետզհետե վերանվաճվեցին ու ազատվեցին թուրքական ու այլ ցեղերի տիրապետությունից։

Բուն Հայաստանի կենտրոնական վայրերի նվաճման թվականները տալիս է Վարդան վարդապետը, որի վկայությունները, մեծ մասամբ, հաստատվում են նաև այլ աղբյուրների հաղորդած տեղեկություններով։

1196 թվին Զաքարե ամիրսպասալարը նվաճեց Անբերդը, որը գտնվում էր Արագածոտն գավառում[2]։ Որ «Անառիկ դղեակ Անբերդ»-ը Զաքարեի ու Իվանեի առաջին նվաճումներից մեկն էր Այրարատ նահանգում՝ այդ մատնանշված է նաև Իվանե աթաբեկի Հա-

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 154—155։

[2] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԲ, էջ 138։

ղարծին վանքի արձանագրության մեջ[1]։ Ի հիշատակ Անբերդի առման Զաքարե ամիրսպասալարը 1200 թվին կառուցել է, ինչպես հաղորդում է Գ. Հովսեփյանը, մի խաչքար, որը գտնվում է այժմ Ինաքլու գյուղի Նորաշեն եկեղեցում[2]։

1199 թվին, ինչպես վկայում է Վարդան վարդապետը[3], Զաքարեն և Իվանեն առան Անին։ Մենք արդեն տեսանք վերև, որ մինչև այս թվականն Անիում շարունակում էին իշխել Շեդդադյանները։ Այս տոհմի վերջին իշխանն էր Կեյ-սուլթանը, որի 1198/9 թվի պարսկերեն արձանագրությունը, որ գտնված էր Անիի մեծ մինարեի պատի վրա՝ հրատարակել է Խանիկովը։

Անիի նվաճումը, որը տրվել էր իբրև սեփականություն ամիրսպասալար Զաքարեին, առանձնապես մատնանշել է նաև Վրաց Բասիլի պատմիչը։ Սրա ասելով, Թամարը գրավված քաղաքներն ու բերդերը իր թագավորությանը չէր միացնում, այլ տալիս էր իր զորավարներին։ Եվ այդ բանի վկա է, ասում է նա, Հայոց թագավորների մեծ ու հոչակավոր Անի քաղաքը, որը նա, ինչպես և շահնշահ տիտղոսը, առել էր պարսիկներից[4]։

1201 թվին Զաքարեն և Իվանեն նվաճեցին Բջնին[5], իսկ 1203 թվին՝ Դվինը, որոնք տրվեցին իբրև սեփականություն Իվանե աթաբեկին։ Դվինի առման մասին մանրամասն ու կարևոր տեղեկություն է տալիս, գլխավորապես, Իբն ալ-Ասիրը։

«Այս 599 թվին [=20 սեպտ. 1202—9 սեպտ. 1203], —պատմում է Իբն ալ-Ասիրը,— վրացիները վերցրին Ադրբեջանում Դվին քաղաքը, կողոպտեցին նրան, ավերեցին և մեծ կոտորած սարքեցին ու սպանեցին նրա բնակիչներին։ Ինչպես այս քաղաքը, նույնպես և Ադրբեջանի բոլոր շրջանները, պատկանում էին ամիրա Աբու-Բեկրին, Փահլավանի որդուն, որն ըստ իր սովորության գիշեր-ցերեկ անձնատուր էր լինում հարբեցողության և երբեք չէր զգաստանում գինովությունից։ Նա բոլորովին չէր հոգում իր պետու-

---

[1] Տե՛ս Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Ա, էջ 131 և «Վիմական տարեգիր», էջ 141։

[2] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք. էջ 8—9։

[3] Տե՛ս Վարդան վրդ., էջ 138։

[4] Տե՛ս *Басили*, перевод *Дондуа*, «Памятники эпохи Руставели», էջ 58—59։

[5] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԲ, էջ 138 և Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 43 և ուրիշ.։

*թյան գործերի, իր հպատակների և իր զորքի մասին և այդ բոլորից ձեռք էր քաշել ու իրեն այնպես էր պահում, որ իբր թե այդ ամենն իրեն չեն վերաբերում։ Այս երկրի բնակչությունը հաճախ դիմում էր նրան և օգնություն խնդրում։ Նրանք հայտնում էին նրան, որ վրացիները հաճախ ներխուժում են իրենց երկիրը, սակայն նրանք կարծես թե դիմում էին մունջ ապառաժին։ Երբ այս թվին վրացիները պաշարեցին Դվին քաղաքը՝ նրա բնակիչներից ոմանք գնացին նրա մոտ խնդրելու օգնություն, բայց նա չօգնեց»*[1]։

Տեր դառնալով Շիրակ-Անիին և Հայոց Դվին ոստանին՝ Վրաստանն արդեն կից մոտենում էր Կարսին և վտանգավոր էր դառնում նաև Կարնո ու Խլաթի ամիրայություններին։ Եվ իրավի, Դվինը 1203 թվին նվաճելուց հետո՝ սկսվեցին Վրաստանի արշավանքները նաև հարևան այս ամիրայությունների դեմ։

Այս ամիրայություններից ամենահզորն էր այդ ժամանակ Իկոնիա-Ռումի սելջուկյան սուլթանությունը, որը Խլիճ Ասլան Բ-ի որդու՝ Սուլեյման Բ Շահ սուլթան Ռուքնադդինի ժամանակ (1196—1204/5)[2], պարունակում էր իր մեջ Փոքր Ասիայի մեծագույն մասը մինչև Պոլիս, Սեբաստիայի Դանիշմանների երկիրը, Պոնտոսը, նաև պատմական Հայաստանի Եկեղյաց և Դարանաղյաց գավառները և Ծոփքը՝ մինչև Թեոդոսուպոլիս—Կարին ու Եզնկայի շրջանը[3]։

Վրաց պատմիչ Բասիլին վկայում է, որ այս Ռուքնադդինը, որին նա անվանում է Նուքարդին՝ որդի Ղարասլանի, ցանկանալով կասեցնել Վրաստանի անընդհատ հարձակումները մահմեդական երկրների վրա՝ ուզեց մեծ զորքով արշավել Վրաստան։ Բայց նա ևս չարաչար պարտվեց Բասենում, ինչպես և Ելտկուզյան Աբու-Բեկրը[4]։

---

[1] Տե՛ս *Ибн ал-Асир*, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 127 (XII, 76). Նաև Վարդան վրդ., գլ. ՁԲ, էջ 138. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 43 և ուրիշները։

[2] Տե՛ս *Вл. Гордлевский*, Государство сельджукидов Малой Азии, 1941, էջ 165։ Լեն-Պուլի մոտ Ռուքնադդինի սուլթանության տարեթվերն են՝ 1200—1203, որ պարզապես սխալ են. տե՛ս *Лэн-Пуль*, Мусульманские династии, էջ 128։

[3] Տե՛ս «Հայոց նոր վկաները», գիտ. հրատար., էջ 75։ Այս աղբյուրում Ռուքնադդինի սուլթանության ժամանակը ցույց է տրված 1203—1204/5 թ.։

[4] Տե՛ս *Басили*, перев. *Дондуа*, „Памятники эпохи Руставели", էջ 61—67. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 20—21, 35 և 43։

Այս պատերազմի մասին առանձնապես կարևոր է Մշո Առաքելոց վանքի Տոնականի հիշատակարանի տված տեղեկությունը, որը գրված է հենց նույն այդ կռվի ժամանակ 1204/5 թվին[1]։

«Եվ [Տոնականի կամ Ճառընտիրի]գրության ավարտման ժամանակ [1204/5 թվին],— ասված է այդ հիշատակարանում,— Սեբաստիայի սուլթանը, հավաքելով անհուն բազմություն և նմանելով ամբարիշտ Հուլիանոսին՝ փքվելով լեռան չափ՝ հասավ Թեոդոսուպոլիս և այնտեղից կամենում էր անցնել Հայոց և Վրաց աշխարհը։ Եվ նա բոլորովին մոռացել էր աստծուն և, հույսը դնելով իր նանրության վրա՝ ուզում էր ավարի առնել ամբողջ այդ աշխարհը։ Սակայն աստծու օգնությամբ եկան հասան Վրաց զորքերը և մեծն Զաքարեն իր հարազատի Իվանեի և այլ աստվածասեր իշխանների, նախարարների և մեծաթիվ խառնիճաղանջ բազմության հետ։ Նրանք հարձակվեցին տաճկաց անօրեն զորքերի վրա և նրանց անխնա կոտորեցին, ոմանց ձերբակալեցին և ոմանք փախուստի դիմեցին, իսկ սուլթանն անվնաս մնաց։ Իսկ ավարի քանակը ո՞վ կարող է գիտենալ՝ ոսկու, արծաթի, մետաքսի և ուղտերի, ձիերի ու ջորիների երամակների»։

[«Եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սևաստոյ ժողովարարեալ անհուն բազմութեամբ՝ նմանեալ անբարշտին Յուլիանեայ, փքացեալ լեռնացեալ եհան ի Թէուդուպաւղիս, և անտի կամեցեալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց. և ամենևին մոռացաւ զԱստուած և յուսացաւ ի նանրութիւն իւր, կամէր յաւարի առնուլ զաշխարհս ամենայն։ Իսկ օգնականութեամբն Աստուծոյ եկին հասին զօրքն Վրաց, և մեծն Զաքարիէ հանդերձ Իւանէիւ հարազատաւն իւր, և այլ աստուածասէր իշխանօք և նախարարօք և յոգնախումբ խառնիճաղանջ բազմութեամբ՝ հասին ի վերայ անօրէն զօրացն տաճկաց և յանխնայ կոտորեցին զնոսա, զոմանս ձերբակալ

[1] Նույն այս պատերազմը հիշատակված է, իմ կարծիքով, խիստ շփոթ կերպով նաև Իբն ալ-Ասիրի մոտ (տե՛ս ռուս. թարգմ. ժուղեի, էջ 128—XII, 85)։ Վերջինիս վկայությունը Էրզրումի ամիրայի զորքերի կռվի մասին վրացիների հետ, որ տեղի էր ունեցել 1204/5 թվին Էրզրումի սահմանակից Խլաթի շրջանում, ըստ երևույթին, վերաբերում է Բասենի ճակատամարտին։ Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ 1204/5 թվի կռվում սպանվել էր փոքր Զաքարեն (հավանորեն Վահրամի որդին), որ Վրաց զորքերի հրամանատարներից մեկն էր։

*արարին, և ոմանք ի փախուստ դարձան, բայց սուլտանն անվրէպ մնաց։ Սակայն զաւարոյն զթիւս ո՞ կարէ գիտել՝ զոսկւոյ և զարծաթոյ և զմետաքսի, զերամակս ուղտուց, ձիոց և ջորւոց»]*[1]։

*Այս մեծ կռվից ու ծանր պարտությունից դեռ առաջ Վրաց թագավորության գերիշխանությունը, ըստ երևույթին, ընդունել էին Կարնո և Երզնկայի ամիրաները, որոնք, ինչպես վկայում են հայ-վրացական աղբյուրները, վճարում էին Թամարին որոշ հարկ*[2]։

*Ապահովելով Վրաստանի ընդարձակված արևելյան և արևմտյան սահմանները Սելջուկյան աթաբեկության ու Ռումի սուլթանության հարձակումներից՝ Վրաց արքունիքն ուշադրությունը կենտրոնացրեց Հայաստանի հարավում գտնվող Մանազկերտ-Խլաթի ամիրայության վրա, որը թե՛ Գեորգիի և թե՛ նրա նախորդների ժամանակ արշավանքներ էր կազմակերպել Վրաց թագավորության դեմ։*

*Այս ամիրայության մեջ տեղի էին ունեցել խոշոր փոփոխություններ։ 12-րդ դարի երկրորդ կեսում Շահի-Արմեն Միրանը (1125—1185) գրավել էր, ինչպես վերև տեսանք, Ծորտվանելյան—Մամիկոնյան իշխան Վիգենից Սասունը։ 1174 թվին, ինչպես վկայում է Միքայել Ասորին, Սասունի դեմ պատերազմ էր սկսել Նփրկերտի ամիրան։ Եվ որովհետև սասունցիները ծանր դրության մեջ էին ընկել և մատնվել էին սովի՝ նրանք իրենց ամրությունները հանձնել էին Շահի-Արմեն Միրանին*[3]։

*1185 թվին մեռավ Միրանը և նրա իշխանության գլուխ անցավ նրան ենթակա իշխաններից մեկը՝ Բեկդամուրը (1185—1193)*[4], *որը Նփրկերտի կուսակալն էր։ Բեկդամուրի դեմ ապստամբեց Վիգենի թոռը, Շահնշահը, որը Շահի-Արմեն Միրանի մահից հետո չուզեց ճանաչել Բեկդամուրի իշխանությունը։ Շահնշահի նպատակն էր ազատել Սասունը և վերականգնել այնտեղ իր տոհմի*

---

[1] *Տե՛ս* Ալիշան, *Հայապատում, էջ 448։ Համեմատե նաև* Հովսեփյան Գ., *Խաղբակյանք, էջ 10։*

[2] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 154 և* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, Բ, էջ 35 և 44։*

[3] *Տե՛ս Markwart*, Südarmenien und die Tigrisquellen, *էջ 480—481*, *նաև* Chronique de *Michel le Syrien*, *710* b, *19—29*. III, *361 և* Միքայել Ասորի, *Երուսաղեմ, 1871, էջ 476։*

[4] *Տե՛ս Лэн-Пуль*. Мусульманские династии, стр. 143.

նախկին անկախ տիրապետությունը։ Շահի-Արմեն Միրանի մահից անմիջապես հետո Շահնշահին հաջողվել էր դերի վերցնել Բեկ-դամուրին և առնել նրանից Թառձյան բերդը, որը գտնվում էր Սասունի և Տարոնի սահմանում։

Վարդան վարդապետի պատմելով.—

«Շահնշահը նրան երդումով ազատ էր արձակել, բայց նա, շահի գահին տիրելուց հետո՝ դրժել էր իր երդումը և վերցրել էր նրանից ինչպես այդ բերդը, նույնպես և ամբողջ Սասունը, և հարկ էր դրել եկեղեցիների ու վանքերի վրա»։

[«(Շահնշահ) ուխտիւ արձակեաց զնա, որ և ստեաց ուխտին ի տիրելն իւրում աթոռոյ շահին. և զայն ևս և զամենայն Սասունք՝ եհան ի նմանէ, և արկ ընդ հարկաւ զեկեղեցիս և զուխտս»][1]։

Զաքարյանների արշավանքները Մանազկերտ-Խլաթի ամիրայության կողմերում հիշատակված են Իբն ալ-Ասիրի մոտ[2]։ Վրացական զորքերը, ինչպես վկայում է արաբական այս պատմիչը, Հեջիրի 601 թվին [=29. օգոստ. 1204—17 օգոստ. 1205] ներխուժեցին Խլաթի ամիրայությունը և հասան մինչև Մանազկերտ և Արճեշ։ Ծվ որովհետև դիմադրություն ցույց չէր տրվել՝ նրանք ավերել ու կողոպտել էին այս շրջանները և վերցրել էին գերիներ։

Հետևյալ տարին ևս, Հեջիրի 602 թվին [=18 օգոստ. 1205—7 օգոստ. 1206], նրանք նորից սկսել էին արշավել դարձյալ դեպի Խլաթի ամիրայության երկրները, սակայն այս անգամ ծանր պարտություն էին կրել։

1206/7 թվին վրացական-հայկական միացյալ զորքերը, Զաքարե ամիրսպասալարի առաջնորդությամբ, պաշարեցին ու վերցրին Խլաթի ամիրայության ենթակա Կարս քաղաքը[3]։

«Այս մի քաղաքն ու բերդը,— ասում է Վրաց պատմիչ Բասիլին,— [Թամարը] վերապահեց իրեն այն բոլորից, որ դրավել էր Զորագետից մինչև Արաքս, Գաղից մինչև Գանձակ և Ջավախքից մինչև Սպեր»[4]։

---

[1] Տե՛ս Վարդան վրդ., ՃԸ, էջ 133։

[2] Տե՛ս Ибн ал-Асир. XII, 83. XII. 100, էջ 128 և 130. Համեմատե նաև Aboulfaradj, Chronicum syriacum, Leipzig, 1789, էջ 448, 459։

[3] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 20, 36 և 43. Վարդան վրդ., գլ. ՃԲ, էջ 138. Ибн ал-Асир, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 131 (XII, 107) և այլն։

[4] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները, Բ, էջ 36 և Басили, перев. Дондуа, «Памятники эпохи Руставели», стр. 71.

13-րդ դարի Վրաց Անանուն հեղինակի պատմական երկում, որ հրատարակել է Թբիլիսիում Ջավախիշվիլին (1927 թվին), հիշատակված է, որ Մխարգրձելները, բացի Կարսից, գրավել էին այս կողմերում նաև Կարմիր Փորակի, Վանանդի և Արաքսի ափին գտնվող բերդերը[1]։

1207/8 թվին, Թամարի ամուսնու Դավիթ Սոսլանի մահից հետո, անսպասելի կերպով ավերածության ենթարկվեց Անի քաղաքը։ Երբ Զաքարե ամիրսպասալարը և Իվանե աթաբեկը գտնվում էին Թամարի մոտ Գեգութում՝ Արդաբիլի սուլթանը արագացրած երթով եկավ իր զորքերով Անիի վրա և զատկի օրը մտավ հանկարծակի քաղաք և նրանք սկսեցին կոտորել ու գերել բնակիչներին։ Ազատվեցին նրանք, որոնք թաքնվել էին միջնաբերդում կամ այրերում։ Միմիայն եկեղեցիների մեջ սպանվել էին մոտ 12.000 մարդ։

Երբ Անիի աղետի մասին լուրը հասավ Գեգութ՝ Զաքարեն և Իվանեն եկան Անի, զորք գումարեցին և Գեղարքունիքի ու Սյունիքի վրայով իջան Կուր գետի հովիտը և, դիմելով այստեղից դեպի Արդաբիլ, հանկարծ հարձակվեցին քաղաքի վրա և, Անիի վրեժն առնելով՝ գերի վերցրին սուլթանին և նրա կանանց ու երեխաներին, սպանեցին մզկիթների մեջ մոտ 12.000 բնակիչ և, սպանելով նաև քաղաքի մեջ ավելի մեծ բազմություն՝ մեծ ավարով վերադարձան Անի[2]։

1207/8 թվին, երբ ավերածության մատնեցին Անին և Արդաբիլը՝ Խլաթի ամիրայության մեջ տեղի ունեցավ քաղաքական մեծ հեղաշրջում։ Հիշյալ թվին խռովություններ ծագեցին այստեղ և, Խլաթի ամիրայությանը տիրելու նպատակով՝ սրա Շահի-Արմեն Բալբան ամիրային սպանեց սելջուկյան իշխան Տուղրուլ-Շահը՝ Ռումի Խլիճ Ասլան սուլթանի որդին, որը մի փոքր առաջ իր եղբոր Ռուքնադդինի աջակցությամբ դարձել էր Էրզրումի ամիրա Սալդուխի որդու փոխարեն[3]։

Բայց սրան Մանազկերտի և Խլաթի բնակիչները չընդունեցին իբրև իրենց ամիրա և դուրս վտարեցին։ Այնուհետև այստեղ հաստատվեց էյուբյանների նշանավոր դինաստիան և Խլաթի ամիրա-

---

[1] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 43։ Անանունի վկայության մեջ «Կարնիփոր» ընթերցվածը պետք է ըստ իս ուղղել և կարդալ «Կարմիր Փորակ»։

[2] Նույնը, էջ 22—23 և 44։

[3] Նույնը, էջ 20, 35 և Ибн ал-Асир, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 132 (XII, 113)։

յությանը տեր դառավ հռչակավոր Սալահեդդինի Ադիլ եղբոր որդին, Մելիք Աուխադը, որին Մխիթար Այրիվանեցին անվանում է «Մելիք Աւաթ»[1]։

Էյուբյանները, ինչպես ենթադրում են, ծագումով քուրդ էին հայկական Դվին քաղաքից։ Հաստատվելով Եգիպտոսում՝ այս տոհմի ամենափայլուն ներկայացուցիչը, Էյուբի որդին Սալահեդդինը, հիմնադիրը եղավ մի նոր աշխարհակալության, որի մեջ մտնում էին ամբողջ Եգիպտոսը, Ասորիքը և Միջագետքի մեծագույն մասը։ Սալահեդդինի մահից հետո, 1193 թվին, նրա ժառանգների մեջ սկսվեցին ներքին երկպառակություններ։

Ներքին այս արյունահեղ ընդհարումներին վերջ տվեց Սալահեդդինի եղբայր Մելիք Ադիլը (1193—1218), որի գերիշխանությունն ընդունեցին թե մյուս Էյուբյանները և թե Մարդինի Արտուխյան տոհմի ամիրայությունը։ Կիրակոս Գանձակեցին Միջագետքում և Խլաթում հաստատված Էյուբյաններին անվանում է «Եոլեանք» Մելիք Ադիլի անունով[2], որի որդին էր վերոհիշյալ Մելիք-Աուխադը։

Մանազկերտ-Խլաթի ամիրայությունը, ուր հաստատել էր իր իշխանությունը Մելիք-Աուխադը, այլևս ինքնամփոփ անկախ պետություն չէր, ինչպես Շահի-Արմենների ժամանակ, այլ անբաժան մասն էր Էյուբյանների կամ «Եոլյան»-ների ընդարձակ ավատական պետության։ Ուրեմն, ինչպես տեսնում ենք, 1207/8 թվից հետո Հայաստանի հարավում Վրաստանի հարևան էր դառել Շահի-Արմենների ամիրայության փոխարեն Էյուբյանների ավելի հզոր պետությունը։

1208/9 թվին, ռազմական պատժարշավից հետո ընդդեմ Արդաբիլի սուլթանի, Զաքարե ամիրսպասալարը և Իվանե աթաբեկը վերսկսեցին պատերազմը Հայաստանի հարավում Մանազկերտ-Խլաթի ամիրայության դեմ։

Իբն ալ-Ասիրը և ասորական ժամանակագիր Աբուլֆարաջը հաղորդում են, որ Հեջիրի 605 թվին [=16 հուլ. 1208—5 հուլիսի 1209] վրացական ուժերը մտան Խլաթի ամիրայության շրջանները, գրավեցին Արճեշը և վերցրին մեծ ավար ու գերիներ։ Նրանք դիմադրության չէին հանդիպել, որովհետև Նեջմադդին Էյուբ Աուխա-

---

[1] Տե՛ս Ибн ал-Асир. Նույնը, էջ 132. Chèref—Nâmeh, t. I. Seconde partie, էջ 94. Մխիթար Այրիվանեցի, էջ 65 և ուրիշ.։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 145 և 369։

*դը, որը նոր էր նվաճել Խլաթի ամիրայությունը, դեռևս իր իշխանությունը չէր համարում կայուն և հաստատուն[1]։*

*Այնուհետև հետևյալ տարին (1209/1210) նրանք նորից վերադարձան այստեղ և պաշարեցին Խլաթ քաղաքը։ Զաքարեն և Իվանեն, ըստ երևույթին, իրենց նպատակ էին դրել վերանվաճել պատմական Հայաստանի նաև հարավային երկրները։*

*Սակայն այս անգամ նրանց արշավանքն անհաջող անցավ։ Անհաջողության պատճառը Իվանե աթաբեկի անզգուշությունն էր, որը, Խլաթի պաշարման ժամանակ, քաղաքի շուրջը զբոսնելիս, գերի էր ընկել քաղաքացիների ձեռքը։ Զաքարեն, իր եղբորն ազատելու համար, ստիպված եղավ դադարեցնել կռիվը և կնքել էյուբյանների հետ խաղաղության դաշն[2]։*

*Ըստ այս դաշնադրության, Զաքարեն և Իվանեն պարտավորվել էին, ինչպես վկայում է աշխարհագիր Աբուլֆիդան, վերադարձնել բազմաթիվ ամրություններ ու 5000 մահմեդական գերի, վճարել որոշ գումար, զինադադար անել 30 տարի ժամանակով և Իվանեի դուստր Թամթային տալ կնության Մելիք Աուխադին[3]։*

*Այս դաշնագրից հետո էյուբյանների հետ հաստատվել էին բարեկամական հարաբերություններ։ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Թամթայի ամուսնությունն Աուխադի և ապա նրա եղբոր Աշրաֆի հետ Խլաթի ամիրայության մեջ ապրող հայերի ու քրիստոնյաների համար ունեցավ բարեհաջող հետևանքներ։*

> *«Մեծ օգուտ եղավ,— ասում է Կիրակոս Գանձակեցին, —կնոջը սուլթանների տունը գալուց, որովհետև նրանք դյուրություններ տվին քրիստոնյաներին, որ գտնվում էին իրենց իշխանության տակ, և, մանավանդ, երկրին Տարոնի,— վանքերը, որ այնտեղ էին գտնվում՝ հարկի տակ էին, իսկ նրանք թեթևացրին հարկի չափը և մի մասի հարկերն էլ բոլորովին վերացրին»։*

---

1 *Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ.* փուզեի, *էջ 134* (XII, *11C*) *և* Chronicum Syriacum, *էջ 452։*

2 *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 156.* Վարդան վրդ., *գլ. ՁԲ, էջ 138։*

3 *Տե՛ս Saint-Martin,* Mémoires, t. II, *էջ 252—253։ Համեմատե* Կիրակոս Գանձակեցի, *էջ 156։ Ջավախիշվիլու 1927 թվին հրատարակած վրաց Անանուն պատմիչը տալիս է այս հաշտության մասին սխալ տեղեկություն։ Նրա ասելով «Զաքարեն ստիպել էր Խլաթի սուլթանին խոնարհվել և հաղթությամբ զարդարված առաջարկել էր վերջինին հաշտության հիմունքները», տե՛ս* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, Բ, էջ 44։*

[«Բազում օգուտ եղև գալ կնոջն ի տուն սուլտանացն, զի դիւրեցին քրիստոնէիցն, որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, ևս առաւել երկրին Տարօնոյ. զի վանորայքն՝ որ անդ էին, ընդ հարկիւ էին, թեթևացուցին զսակ հարկին, և կիսոց զամէնն իսկ թողին»][1]։

Խլաթի դաշնագրից հետո Վրաստանը, ապահոված լինելով իր թիկունքը հարավից ու արևմուտքից՝ 1210/1211 թվին մի նոր մեծ արշավանք սկսեց, որն ուղղված էր նորից Ատրպատականի դեմ։

Ինչպես շատ ճիշտ նկատել է Ջավախիշվիլին[2], Վարդան վարդապետը և Կիրակոս Գանձակեցին 1207/8 թվի և 1210/11 թվի արշավանքները շփոթել են իրար հետ և կարծել են, որ Արդաբիլի 1207/8 թվի վերոհիշյալ ավերածությունը տեղի էր ունեցել 1210/11 թվի արշավանքի ժամանակ[3]։ Քարթլիս-ցխովրեբայի վկայությունից երևում է, սակայն, որ 1210/11 թվին վրացական-հայկական զորքերը արշավել էին Ատրպատական նոր ուղղությամբ՝ Նախիջևանի և Ջուղայի վրայով դեպի Մարանդ, Թավրիզ և Կազվին[4]։

Այս հաղթական արշավանքից վերադառնալիս Զաքարե ամիրսպասալարը ճանապարհին հիվանդանում է և մեռնում (1212 թ.)։ Նրան թաղել են Սանահնի վանքում, ուր թաղված էր նաև նրա հայրը՝ Սարգիս մեծը։ Իվանե աթաբեկն ընդունել էր, ինչպես հայտնի է, Վրաց քաղկեդոնական եկեղեցու դավանանքը, բայց Զաքարեն հավատարիմ էր մնացել հայ եկեղեցական դավանությանն ու ավանդություններին։

Զաքարե մեծ սպասալարի մահից հետո այլևս գրեթե դադարեցին Վրաստանի կռիվները շրջակա ամիրայությունների դեմ։ Վարդան վարդապետի մոտ հիշատակված է այնուհետև, որ մեծն Իվանեն ևս նվաճել էր Զարեքը և նրա շրջակայքը, օգնել էր Զաքարյան Վահրամ Գագեցուն՝ գրավել Շամքորը և 1219 թվին առել էր նաև Որոտնը[5]։

Որպես հետևանք Զաքարեի և Իվանեի երկարատև և հաղթական պատերազմների ու արշավանքների, ինչպես տեսնում ենք, Հայաստանի մեծագույն մասը, բացի Խլաթի, Կարնո և մի քանի

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 156—157։

[2] Տե՛ս «История грузинского народа», II, էջ 419—420։

[3] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԳ, էջ 139—140. Կիրակոս Գանձակեցի, էջ 175։

[4] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 23—24։

[5] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԳ, էջ 140։

այլ շրջանների, ազատված էր թուրք ու այլ օտար ցեղերի իշխանությունից։

Հայ պատմիչների՝ Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի մոտ, ինչպես և Իվանե աթաբեկի Հաղարծնի վանքի արձանագրության մեջ տրված են Զաքարեի և Իվանեի նվաճած երկրների ցանկերը, որոնց մեջ հիշատակված են նաև այլ վայրեր ու երկրներ, որոնք չեն մատնանշված վերև՝ նրանց վարած պատերազմների ժամանակագրական նկարագրության մեջ։ Կարևոր է, իհարկե, և անհրաժեշտ ընդարձակ կերպով մեջ բերել նաև այդ վկայությունները.

1. Արձանագրություն Հաղարծնի, տես Ջալալյան, Ճանապարհորդություն, Ա, էջ 131.—

«Ամենակալ աստծու կամքով՝ այս մեր հիշատակագիրն է և մշտնջենավոր արձանը՝ Սարգիս մեծի որդիների, Բագրատունիների ազգից, Իվանեի և Զաքարեի։ Երբ աստծու նախախնամությունը իջավ արարածներիս վրա և հնարավորություն տվեց տիրելու մեր նախնիքների սեփական ժառանգությանը՝ նա մեր ձեռքը տվեց առաջ անառիկ Անբերդ դղյակը և թագավորանիստ Անի քաղաքը, և ապա Բջնի բերդը, Մարանդը մինչև Գավազանք դեպի Թավրիզ, Կարնո քաղաքը մինչև Խլաթ, Շաքին և Շիրվանը, Պարտավը մինչև Բելուկան և այլ բազում տեղեր, իրենց սահմանով, որ ավելորդ համարեցինք հիշատակել»։

[«Կամաւն ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է և արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսի յազգէ Բագրատունեանց՝ Իւանէի և Զաքարէի։ Յորժամ նախախնամութիւնն Աստուծոյ եհաս յարարածս և ետ նորոցն տիրել սեփական ժառանգութեան նախնեաց մերոց, և ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն զԱնբերթ և թագաւորանիստ քաղաքն Անի, և ապա զամուրն Բջնի, զՄարանդ մինչև Գաւազանք ի Թաւրէժ, Կարնոյ քաղաքն մինչև Խլադ, զՇաքի և զՇրուան[1], զՊարտաւ մինչև Բելուկան, և զայլ բազումս իւրեանց սահմանովն, զոր աւելորդ համարեցաք յիշատակել»]։

2. Կիրակոս Գանձակեցի, Թիֆլիս, 1910, էջ 154.—

---

[1] Ջալալյանի բնագիրը «զՇաքի և զՇրուան»-ի փոխանակ ունի «զՇրուան և զԵրեան», որ, հավանորեն, սխալ է. տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 141 և Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 366։

*«Սրանք [Զաքարեն և Իվանեն] քաջությամբ վարեցին շատ պատերազմներ և հայերի բազմաթիվ երկրներ, որ պարսիկների և տաճիկների ձեռին էին՝ առան նրանցից և սեփականացրին,— այն է՝ գավառները, որ գտնվում էին Գեղարքունի ծովի շուրջը, Արտաշիրը, և Այրարատը, և Դվինը, և Անբերդը, և Անի քաղաքը, և Կարսը, և Վայոց ձորը, և Սյունյաց աշխարհը ու այն բերդերն ու գավառները, որ գտնվում էին նրա շուրջը։ Նրանք հարկատու դարձրին և Կարնո քաղաքի սուլթանին. ավերեցին նաև Պարսկաստանի բազմաթիվ գավառները և Ատրպատականը. Նրանք ընդարձակեցին իրենց սահմանները բոլոր կողմերից»։*

*[«Սոքա բազում մարտս քաջութեան ցուցին. քանզի զբազում աշխարհս Հայոց՝ զոր ունէին Պարսիկք և Տաճիկք, առին ի նոցանէ յինքեանս, զգաւառսն՝ որ շուրջ զծովովն Գեղարքունոյ, զԱրտաշիր, և զԱյրարատ, և զԴուին, և զԱնբերդ, և զԱնի քաղաք, և զԿարս, և Վայոց ձոր, և զաշխարհն Սիւնեաց, և որ շուրջ զնովաւ են բերդք, և գաւառք. հարկատուք արարին և զսուլտանն Կարնոյ քաղաքին. աւերեցին և զբազում գաւառս Պարսից, և զԱտրպատական. ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց»]։*

3. *Ստեփանոս Օրբելյան, Թիֆլիս, 1911, գլ. ԿԶ, էջ 391—392.—*

*«Սրանք [Զաքարեն և Իվանեն] մեծ ջանքով պարսիկների ձեռից առան Հայոց երկրները. և նրանք դրավեցին Առանից մինչև Ներքին Բասենը և Բարկուշատից մինչև Մժնկերտը։ Նրանք առան Կարսը, Վաղարշակերտը, Կաղզվանը, Սուրբ Մարին, Անին, Անբերդը, Բջնին և Գառնին, Դվին մայրաքաղաքը, Գարդմանը, Գանձակը, Ջարեքը, Հերթը, Շամքորը, Շաքին, Պարտավը, Ջարաբերդը։ Նրանք առան 660 թվին [1211/2] Սյունիքը, Որոտնը, Բորոտանը, Բղենը, Բարկուշատը։ Նվ թեև այլևայլ թվականներին էին առնվել, սակայն, ընդհանրապես, սրանք առան և իրենց որդիները. և ազատեցին այս երկրները տաճկական դառն ծառայությունից»։*

*[«Որք բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ։ Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԳառ-*

նի, զԴվին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զՉարեք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զՋարաբերդ։ Առին ի 669 թուին զՍիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղեն, զԲարկուշատ։ Եւ թէպէտ յայլ և յայլ թուականս առան, սակայն զհասարակն սոքա առին և որդիքն իւրեանց. և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց»]։

Նվաճված և ազատագրված այս երկրներում հաստատվեցին այնուհետև, մեծ մասամբ, հայկական նոր իշխանություններ, որոնք ստորադրված էին Զաքարե ամիրսպասալարին և Իվանե աթաբեկին։ 1198 թվի Հոռոմոսի վանքի «Հայր Մխիթարի» արձանագրության, ինչպես և նույն թվի Տայլարի արձանագրության մեջ, ասված է, որ Մեծ Հայոց «բոլոր երկրի» տերությունը գտնվել է Զաքարեի և Իվանեի իշխանության տակ[1]։ Սմբատի որդի Խաղաթի 1206 թվի Հաղարծնի արձանագրության մեջ նրանց «տէրութիւնն» անվանված է «աշխարհակալ»[2]։ Անիի Աղջկաբերդի եկեղեցու մի արձանագրության մեջ Զաքարեն և Իվանեն անվանված են «թագաւորք Հայոց»[3]. շատ ուշագրավ է նաև, որ Իվանե Աթաբեկի կինը՝ Խոշաքը, իրեն անվանում է «Հայոց թագուհի» կամ «վերաիշխող տանս Վրաց և Հայոց և Նովին թագուհի»[4]։

Այս և ուրիշ բազմաթիվ վկայություններից պարզ երևում է, որ հայկական նոր իշխանությունները, որոնք հետզհետե հաստատվում էին ազատագրված շրջաններում, ենթարկվում էին Զաքարեի և Իվանեի կամ Զաքարյանների մյուս ճյուղի անմիջական իշխանությանը։ Վերականգնված Հայաստանը, որը կազմակերպվում էր Զաքարյանների տիրապետության և Վրաստանի գերիշխանության տակ՝ 13-րդ դարի սկզբում սկսեց արդեն արագ կերպով բարգավաճել և քաղաքականապես և կուլտուրապես։ Սակայն նա չկարողացավ զարգանալ և զորեղանալ այնպես, ինչպես այդ ծրագրում էին Զաքարեն և Իվանեն։

13-րդ դարի առաջին կեսում սկսվեցին մոնղոլական արշավանքները։ Առաջավոր Ասիան և, մանավանդ, նրա արևելյան շրջանները ենթարկվեցին նորից արհավիրքների և ավերածություններին։

1220/21 թվին երևացին Անդրկովկասում մոնղոլական առաջին

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 39 և 42։
[2] Նույնը, էջ 47։
[3] Նույնը, էջ 41։
[4] Նույնը, էջ 71 և 74։

*խուզարկու գնդեր։ Այնուհետև, մոնղոլական ահեղ հարձակումների ճնշման տակ ներս խուժեցին Անդրկովկաս խվարեզմի շահ Ջալալեդդինի Թուրքական հրոսակները, որոնք մոտ յոթը տարի, գրեթե անընդհատ, ավերեցին ու կողոպտեցին Հայաստանը։ Վերջապես, 1236 թվին, փոթորկվող մրրիկի նման, Հայաստան մտան մոնղոլական զորքերը, որոնք կարճ ժամանակում նվաճեցին հայկական իշխանությունները, նաև Վրաստանը։*

*Մոնղոլների տիրապետության տակ թե՛ Վրաստանի և թե՛ հայկական իշխանությունների հետագա զարգացումը ունեցավ նոր ընթացք և նոր բովանդակություն։*

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**1. Զաքարյան տոհմի հայկական երեք մեծ իշխանությունները.— սրանց ենթակա ֆեոդալական նշանավոր մյուս իշխանությունները։— 2. Վաչուտյանների իշխանությունն Արագածոտնում։— 3. Տիգրան Հոնենցը՝ իբրև խոշորագույն ներկայացուցիչ դրամական վաշխառուական կապիտալի։— 4. Պահլավունիները իբրև բարձր պաշտոնյաներ Անիում։— 5. Օրբելյանների իշխանությունը Վայոց ձորում և Սյունիքի այլ մասերում։— 6. Իշխանաց իշխան Բուբակ։— 7. Խաղբակյանների իշխանության կալվածները Սյունիքում և Այրարատում։— 8. Շահուռնեցիք և Մահևանեանք։— 9. Դոփյանների իշխանությունը Փոքր Սյունիքում։— 10. Ներքին և Վերին Խաչենի իշխանությունները։— 11. Վերին Խաչենի միացումը Դոփյանների իշխանության։— 12. Խաչենի իշխանները՝ որպես Իվանեի արքունիքի հեջուբներ։**

*Զաքարյանների ժամանակ, Հայաստանի վերականգնման ընթացքում, նոր գրավված երկրներում հիմնվեցին հայկական մի շարք իշխանություններ։ Բայց այս իշխանությունները չդառան ֆեոդալական միացյալ պետություն, այլ գտնվում էին Վրաստանի գերագույն իշխանության և Զաքարյանների ընտանիքի երեք ավագ ներկայացուցիչների անմիջական իշխանության տակ՝ մեծն Զաքարեի և Իվանեի ու մյուս Զաքարեի, որը նրանց հորեղբոր Վահրամի որդին էր[1]։*

*Մեծն Զաքարեի անմիջական իշխանությանը ենթակա էին Բագրատունյաց նախկին Շիրակ-Անի թագավորության երկրները և սրան սահմանակից Արագածոտն և այլ գավառամասերը մինչև ներքին Բասեն։ Զաքարեի այս մեծ իշխանության կենտրոնն էր թագավորանիստ Անի քաղաքը։*

---

*[1] Վահրամի մյուս որդին՝ Սարգիսը իշխում էր, ինչպես կարելի է կռահել Քարթլիս-ցխովրեբայի վկայություններից, Թմոգվիում, որը գտնվում էր Ջավախքում. տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 12, 34, 35, 57։*

Իվանեի գերիշխանության տակն էին գտնվում Այրարատ նահանգի արևելյան մի քանի շրջանները և Սևանա լճի շուրջը գտնվող երկրները, գլխավորապես, Գեղարքունիքը, Սոդքը, Վայոց ձորը և հյուսիսարևմտյան Սյունիքի մի քանի այլ մասերը։ Կենտրոնն էր այս ընդարձակ իշխանության Դվին մայրաքաղաքը։

Զաքարյանների տոհմի երրորդ իշխանությունը, որ համեմատաբար ավելի փոքր էր՝ հաստատվել էր, ինչպես տեսանք, Վահրամի Զաքարե որդու տիրության տակ, պատմական Հայաստանի հյուսիս-արևելքում և Աղվանքում՝ Քուստիում, Փառիսոսում և Գարդմանում։

Այս երեք իշխանություններում, որոնք գտնվում էին Զաքարյանների իշխանության կամ հովանավորության տակ՝ վերակենդանացան և ուժեղացան ո՛չ միայն հայկական այն մանր իշխանությունները, որ հնուց մնացել էին այստեղ, այլև Զաքարյանների ժամանակ կազմված նոր իշխանությունները։

Այս իշխանությունների պատմությունը հնարավոր կլինի տալ ընդարձակ կերպով միայն այն ժամանակ, երբ հրատարակված կլինի ամբողջական ժողովածուն վիմական արձանագրությունների, որոնք գտնվում են Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում, ու նաև ձեռագրերի հիշատակարանները, որ գրված են այդ ժամանակաշրջանում։ Այդ իշխանությունների մասին մենք այժմ ի վիճակի ենք և հարկավոր ենք համարում տալ միայն համառոտ տեղեկություններ։

13-րդ դարի սկզբում հիմնվել էր Արագածոտն գավառում Վաչուտյանների իշխանությունը, որի սահմանների մեջ էին գտնվում սրանց վերանորոգած ու վերաշինած Սաղմոսավանքը և Հովհաննավանքը։ Այս իշխանության հիմնադիրն էր Վաչուտյան Սարգսի որդին, Վաչեն, որը 1215 թվի Սաղմոսավանքի և 1217 թվի Հովհաննավանքի արձանագրությունների մեջ անվանում է իրեն «իշխանաց իշխան»[1]։

Հովհաննավանքի նույն արձանագրության մեջ «իշխանաց իշխան» Վաչեն հաղորդում է, որ այդ գավառի վերակացությունը նրան հավատարիմ իր ծառայության համար հանձնարարել էին Զաքարեն և Իվանեն։ Իսկ Սաղմոսավանքի 1215 թվի արձանագրությունից պարզ երևում է, որ Վաչուտյան այս իշխանությունը գտնվում էր Զաքարե ամիրսպասալարի գերիշխանության տակ։

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 58 և 61։

Այդ գերիշխանության արտահայտություն պետք է համարել այն ուշագրավ փաստը, որ «իշխանաց իշխան» Վաչեն, որը «Սուրբ Սիան» եկեղեցին շինել էր Սաղմոսավանքում «ի յիշատակ ամիր սպասալար Զաքարէի», այդ եկեղեցուն նվիրել էր Աղկունծ գյուղը. ըստ երևույթին, ոչ իր ազատ ու անկախ տնօրինությամբ, այլ «ողորմութեամբ պատրոնին»։

> «ՈԿԴ թվին [=1215], քրիստոսի ճշմարիտ սիրուց դրդված,— ասված է Սաղմոսավանքի արձանագրության մեջ,— ես Վաչե, իշխանաց իշխան, որդի Սարգսի և իմ ամուսին Մամախաթունը... շինեցինք սուրբ Սիոն եկեղեցին մեր հոգու փրկության համար և ի հիշատակ ամիրսպասալար Զաքարեի և ի պահպանություն կենաց նրա որդու, Շահնշահի, որը մեր աչքի լույսն է և մեր կյանքի ապավենը. և պատրոնի հաճությամբ տվինք Աղկունծ գյուղը Սաղմոսավանքի սուրբ Սիոն եկեղեցուն»...։
>
> [«Թվ. ՈԿԴ ի ճշմարիտ սիրոյն Քրիստոսի յորդորեալք... ես Վաչէ, իշխանաց իշխան, որդի Սարգսի, և ամուսին իմ Մամախաթուն... շինեցի զեկեղեցիս Սուրբ Սիան ի փրկութիւն հոգւոց մերոց և յիշատակ ամիր սպասալար Զաքարէի և ի պահպանութիւն կենաց որդո նորին, Շահնշահի, որ է լոյս աչաց և ապաւէն կենաց մերոց. եւ ողորմութեամբ պատրոնին տվաք զգեղն Աղկունծ ի Սուրբ Սիան Սաղմոսավանացս»][1]։

Արձանագրությունների մեջ մի այլ տեղ Վաչուտյան նույն այս Վաչեն իրեն պարզ կերպով անվանում է «ծառայ Զաքարէի», այսինքն՝ ավատառու կամ վասալ Զաքարեի[2]։

Վաչուտյանների մասին ուշագրավ է Զաքարիա Սարկավագի վկայությունը, որն իր պատմագրության երրորդ հատորում տվել է մանրամասն տեղեկություններ սրանց վերաշինած Հովհաննավանքի մասին։

> «Բայց որովհետև արդեն ասացինք Զաքարիա առաջնի գալստի մասին բոլոր իր ծառաների հետ,— պատմում է Զաքարիա Սարկավագը,— ասելու ենք, որ նա ուներ մի ծառա ևս Սարգիս անունով, Աժդահակի ցեղից, որ կոչվում էին Վաչուտյաններ։ Այս Սարգիսն ապրեց մինչև վերջին

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 58։

[2] Նույնը, էջ 52։

*Զաքարիան և ծնավ մի որդի, որն անվանվեց Վաչե։ Սրան սիրեց Զաքարիան և սա դառավ նրա տան հավատարիմ մարդը։ Եվ անխարդախ ծառայության համար Զաքարիան նրան կարգեց իշխանաց իշխան և նրան մեծացրեց ու տվեց ամբողջ Արագածոտնի, Շիրակի, Նիգի, Անբերդի իշխանությունը, ու նաև բոլոր սահմանային շրջանների՝ մինչև Երասխաձորը»։*

*[«Բայց զի՝ որպէս ասացաք գալուստ առաջնոյն Զաքարիայի ամենայն ծառայիւք, ունէր և ծառայ մի ևս Սարգիս անուն՝ յազգէ Աժդահակայ՝ որ Վաչուտանց կոչէին։ Այս Սարգիս տևեաց մինչև ցվերջին Զաքարիա, և ծնաւ նա որդի մի, և անուանեցաւ Վաչէ. որ սիրեցաւ ի Զաքարէէ, և եղև հաւատարիմ տան նորա։ Եւ վասն միամիտ ծառայութեան իւրոյ՝ կարգեաց զնա իշխանաց իշխան և ետ նմա մեծութիւն և իշխանութիւն ամենայն Արագածոտանն, Շիրակայ, Նգայ, Անբերդու և ամենայն եզերաց նորա՝ մինչև ցԵրասխաձոր»]*[1]։

Զաքարիա Սարկավագի այս վկայությունը Վաչուտյանների տոհմի ծագման մասին Աժդահակի կամ մարաց ցեղից, ինչպես և նրա վերոհիշյալ վկայությունը Զաքարյանների գաղթի մասին Բաբելոնից, ըստ երևույթին, նրա սեփական ենթադրություններն են, որ կարոտ են ստուգման։ Ալիշանը կարծում է, որ Վաչուտյանների նախահայրը կարող է թերևս լինել այն Վաչուտը, որի տապանագիրը (1174 թվի) հայտաբերված է Երնջակ գավառի Պանանյար կամ Ապարաներ մեծ գյուղաքաղաքում[2]։

Վաչուտյանները, լինելով Զաքարյանների զորապետները և մասնակցած լինելով ամիրայությունների դեմ մղվող նրանց պատերազմներին ու նվաճումներին՝ իրենց իշխանությունը և կալվածները ստացել էին, ինչպես երևում է արձանագրությունների վկայություններից, ժառանգական տիրության իրավունքով։

Զաքարե ամիրսպասալարի գերիշխանության տակ գտնվող իշխանական տոհմերից հայտնի էր և խիստ զորեղ էր նաև Հոնենց տոհմը, որի նշանավոր ներկայացուցիչն էր 13-րդ դարի սկզբներում Տիգրանը՝ «Սմբատաւրենց Սուլեման»-ի որդին։ Հոռոմոսի 1201 թվի արձանագրության մեջ սա իրեն անվանում է

---

1 Տե՛ս «Զաքարեայ սարկաւագի, Պատմագրութիւն», հատոր երրորդ, Վաղարշապատ, 1870, գլ. Թ, էջ 12։

2 Տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 370։

«Հաւատարիմ իմ պարոնին Զաքարիայի», իսկ Խծկոնքի 1213 թվի արձանագրության մեջ՝ «Հաւատարիմ ծառայ մանդատորթախուցէս ամիրսպասալար Շահնշահ Զաքարիայի...»[1], որը 1212 թվին վախճանված ամիրսպասալար Մեծն Զաքարեի որդին էր։

Լինելով խոշոր կալվածատեր և ծառա-վասալ ամիրսպասալար Զաքարեի՝ Տիգրան Հոնենցը միաժամանակ խոշորագույն ներկայացուցիչն էր դրամական-վաշխառուական կապիտալի և զբաղվում էր մեծ չափերով փողի առևտրով, գլխավորապես փոխատվական գործառնություններով կայքերի գրավի դիմաց ու նաև անշարժ ու շարժական գույքերի առուծախով։

Արձանագրությունների վկայություններից երևում է, որ այս Տիգրան Հոնենցը զանազան նվիրաբերություններ է արել վանքերին ու եկեղեցիներին, նորոգել է Անիի Բեխենց վանքը և 1215 թվին շինել է դարձյալ Անիում նկարազարդ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին ի հիշատակ իր պատրոնների՝ Մեծն Զաքարեի և նրա որդու Շահնշահի։ Իրեն Հոնենց տոհմական դամբարանը գտնվում էր, ինչպես կարծում են, Ծաղկոցաձորի քարայրերից մեկում, ուր պահպանվել են որմնանկարներ և արձանագրություններ[2]։

Խիստ հետաքրքիր է հատկապես Հոնենց Տիգրանի նվիրաբերությունների ընդարձակ ցանկը, որ նա տվել էր 1215 թվին իր շինած Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն և վանքին։

Նա գնել էր սեփականատերերից նախկին Ս. Աստուածածին մատուռի քարքարոտ ու մացառոտ տեղը, որը ծանր աշխատանքով շրջապատել էր տվել պարիսպով, անելով մեծ ծախսեր։ Նա կառուցել էր տվել այդ տեղում Ս. Գրիգոր Լուսավորչի վանքը և զարդարել էր նրան ոսկե և արծաթե խաչերով, կանթեղներով, սպասներով ու նաև պատկերներով՝ դրվագված ոսկով, արծաթով, ակներով և մարգարտով։ Շինել էր տվել վանականների, իշխանների և քահանաների համար բազմազան բնակարաններ։ Վանքին նա իբրև սեփականություն տվել էր հետևյալ կալվածները և գույքը[3]։

1. Ութը գյուղ (կամ ամբողջովին կամ նրանց որոշ մասը).

2. Վեց այգի՝ Երևանում, Օշականում, Կոշում, Արուճում, Մրենում և Ծմակում.

3. Մեկ իջևանատուն կամ վաճառատուն (խանապար) և Պապենց կոչվող խանապարի 4 դանգը, այսինքն՝ ²/₃-ը։

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 44 և 54։

[2] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, Ա, էջ 16։

[3] Տե՛ս Ալիշան, Շիրակ, 75. «Վիմական տարեգիր», էջ 58—59. Марр. Ани, էջ 33—34։





*Սանահնի կամուրջը (XII գ.)։*



Նոր-Գետիկ վանքը (XII դ.)։

4. Բոլոր տները, որ գտնվում էին Հատեցոնց փողոցում.

5. Բոլոր խանութները, որ գտնվում էին առաջին խանապարին կից, և Պայենց խանապարի դռան մոտ գտնվող խանութը.

6. Երկու բաղանիք,— մեկը, որը գտնվում էր հրապարակում, և մյուսը ես՝ մարագի հետ միասին.

7. Մեկ ջրմուղ (միլ) հրապարակում.

8. Մեկ պանդոկ-իջևան (փնդուկ) քաղաքում և կամարակապ պանդոկը.

9. Երկու ակն ձիթահանք.

10. Դվինի դռան մոտ գտնվող կես ակն ջրաղացի ամբողջ մի թարփը և մի այլ թարփի շաբաթական երկու օրը. Նաև Գլիձորի ջրաղացի մեկ թարփի շաբաթական երկու օրը.

11. Մի քանի ախոռներ՝ ա. տեր Սարգսի ախոռը և բ. ախոռները վանքի դռան մոտ.

12. Մի քանի մարագներ՝ ա. մարագը, որ բաղանիքին կից էր, բ. տեր Սարգսի մարագը և գ. մարագը վանքի դռան մոտ.

13. Երկու բանջարանոց («պահէզ»),— ա. մեկը՝ վանքի առջև և բ. մյուսը՝ գետի ափին.

14. Արոտավայրի լանջը Գլիձորի դռնից մինչև գետը.

15. Շատ հողեր՝ ա. քաղաքի դռան մոտ, բ. «Բնչկենակապ»-ից մինչև կամուրջը և գ. այլ բազմաթիվ գրավ դրած հողեր, որ այս ընծայագրի մեջ չեն հիշատակված. «եթե տերերը վճարեն ոսկին վանքին՝ [հողերը պետք է վերադարձվեն]— այդ մասին գրել եմ ուրիշ կտակագրի մեջ»։

Ինչպես տեսնում ենք, Հոնենց Տիգրանը հատուկ տիպի իշխան էր, որ իր անչափ հարստությունները կուտակել էր, գլխավորապես, առևտրով ու վաշխառությամբ։

Զաքարեի և Իվանեի Բագրատունյաց Հայաստանի մեծագույն մասին տիրապետելուց դեռ առաջ, ինչպես վերև տեսանք, դեռևս Շեդդադյանների ժամանակ սրանց ամիրայության մեջ կար մեծ թվով հայ բնակչություն ու նաև հայ ազնվականություն, որը որոշ դեր էր կատարում թե՛ Անիի կառավարման գործում և թե՛ Շեդդադյանների զորքերի շարքում։

Շիրակ-Անիի և այլ շրջանների վերանվաճումից հետո՝ այս կողմերում գտնվող հայ իշխանությունների մնացորդները սկսեցին, բնականաբար, ուժեղանալ և կատարում էին քաղաքական ու կուլտուրական ավելի մեծ դեր, քան առաջ։

Հին այդ իշխանական տոհմերից ամենանշանավորն էր Պահ-

լավունիների տոհմը, որի հայրենական կալվածները գտնվում էին Շիրակի զանազան կողմերում՝ Մարմաշենի, Բագնայրի, Խմպատի (այժմյան Արթիկի մոտ) և այլ շրջաններում։ Այս տոհմիցն էին Անի քաղաքի ու Շիրակի եպիսկոպոսները՝ Ապիրատի որդի Սարգիսը, Ապուղամրի որդի Գրիգորը, Ամիր Երկաթի որդի Բարսեղը և ուրիշները, որոնք Անիի ամիրայի և այլ բարձր պաշտոնյաների հետ միասին կառավարում էին քաղաքը։

1225 թվի Մարմաշենի եկեղեցու մեծ արձանագրության մեջ հիշատակված է աշխարհիկ Պահլավունիներից իշխանաց իշխան Վահրամի թոռ և Ապուղամրի որդի, Ղարիփ կամ Խարիփ մագիստրոսը, որը նույն այդ արձանագրության մեջ անվանված է «քաջ և արի զաւրական»[1]։

Հավանական է նույնպես, որ Անիի Վահրամ ամիրան, որը 1218 թվին հաստատել էր Գրիգոր եպիսկոպոսի հետ Վրաց Եպիփան կաթողիկոսի հրամանը եկեղեցական տուրքերի մասին Անիում, Պահլավունի էր, ինչպես Գրիգոր եպիսկոպոսը, որը Պահլավունի Ապուղամրի որդին էր[2]։

Իվանե աթաբեկի գերիշխանության տակ գտնվող Հայաստանի հյուսիսարևելյան մասում, Վայոց ձորում, 13-րդ դարի առաջին տասնամյակում հիմնվեց Օրբելյանների իշխանությունը։

Այս մեծ իշխանության հիմնադիրն էր Օրբելյան Լիպարիտը՝ Էլիկումի որդին և Վրաց իշխան Սմբատի Լիպարիտ որդու թոռը։ Այս վերջին Լիպարիտը և նրա որդիները, Էլիկումն ու Իվանեն, ինչպես վերև տեսանք, գնացել էին Պարսկաստան Մուհամմեդ Փահլավանի և Խզիլ-Ասլանի մոտ 1177/8 թվի մեծ ապստամբության ժամանակ, որ Վրաց իշխանները, Լիպարիտի եղբոր՝ ամիրսպասալար Իվանե Օրբելյանի ղեկավարությամբ, կազմակերպել էին Գեորգի Գ թագավորի դեմ։

Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ հոր մահից հետո Էլիկումը ստացավ Փահլավանից կալվածներ Նախիջևանի կողմերում և ամուսնացավ այստեղ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի խաթուն անունով քրոջ աղջկա հետ, որը ազնվատոհմ Աբաս Ճահկեցու դուստրն էր[3]։ Էլիկումի որդին՝ Լիպարիտը հոր մահից հետո սնվում

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 70—71 և Надписи Мармашена, հրատ. Օրբելու, էջ 2։

[2] Տե՛ս Марр, Надпись Епифания католикоса Грузии, СПб., 1910 և Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 14։

[3] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 393—397։

էր նույն կողմերում մի մահմեդականի մոտ, որն ամուսնացել էր Խաթունի հետ։

Սակայն, երբ Զաքարյանները նվաճեցին Դվինը և հարևան շրջանները՝ սրանք կարողացան Ստեփանոս եպիսկոպոսի աջակցությամբ այլազգի ամուսնու տնից փախցնել Խաթունին ու Լիպարիտին և նրանց բերել տվին Վայոց ձոր։ Այստեղ Լիպարիտը Իվանե աթաբեկից ստացավ իր հայրենի Լոռու կալվածքների փոխարեն Հրաշկաբերդը և բազմաթիվ գյուղեր Վայոց ձորում, Գեղարքունիքում, Կոտայքում և Կայենում։

«Դրանից հետո,— վկայում է Ստեփանոս Օրբելյանը,— [Իվանեն] թագավորի հրամանով տվեց Լիպարիտին «անանցական գրով» իբրև հայրենիք՝ Հրաշկաբերդը իր սահմաններով և Վայոց ձորում այլ բազմաթիվ գյուղեր, Կոտայքում՝ Ելառը և ուրիշ շատ գյուղեր, Գեղարքունիքում՝ Համասրին և ուրիշ շատ գյուղեր և Կայենում՝ Աղստեը իր կերով։ Եվ որովհետև սա էր Սյունիքի և այլ բերդերի առման առաջնորդը, ուստի և նա սրան տվեց նաև Սյունիքը՝ Որոտն ու Բարկուշատը և այլ բերդեր»։

[«Յետ որոյ հրամանաւ թագաւորին տայ փոխան հայրենեացն Լիպարտի անանցական գրով զՀրաշկաբերդ իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս ի Վայոց ձոր, ի Կոտայսն զԵլառն և այլ գիւղս յոլովս. ի Գեղարքունի զՀամասրի և այլ գեղօրէս բազում, ի Կայեն զԱղստև իւր կերովն։ Եւ զի նա եղև առաջնորդ առման Սիւնեաց և այլ բերդերոյն, տայ և ի ձեռս նորա զՍիւնիս՝ զՈրոտն, զԲարկուշատ և զայլ բերդորէսն»][1]։

Էլիկումի որդի Լիպարիտը, Սյունյաց Օրբելյան մեծ իշխանության նախահայրը, ամուսնացավ այստեղ իշխանաց իշխան Բուբակի դստեր Ասփայի հետ։ Արձանագրությունների վկայություններից երևում է, որ Բուբակը Զաքարյանների նշանավոր զորապետներից էր և ուներ մեծ կալվածներ Գեղարքունիքում և Վայոց ձորում։ «Հայր Օհաննավանքի» 1211 թվի արձանագրության մեջ Բուբակն իրեն անվանում է այդ երկրի տեր, իսկ 1223 թվի Նորավանքի արձանագրության մեջ նա, ընծայելով Աղբերիս գյուղը Լիպարիտ Օրբելյանի կառուցած Նորավանքի եկեղեցուն՝ իր ընծա-

[1] Նույնը, գլ. ԿԶ, էջ 397։

յագրի մեջ մատնանշում է, որ այգ գյուղը «իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց և իմ արեամբս թափեալ»[1]։

Վայոց ձորում և հարևան շրջաններում Զաքարյանների ժամանակ հիմնվել էր նույնպես Խաղբակյան կամ Պռոշյան տոհմի մեծ իշխանությունը, որի ծագումը և պատմությունը մանրամասն լուսաբանված է Գ. Հովսեփյանի «Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ» աշխատության մեջ։ Խաղբակյանները ծագմամբ, ինչպես պարզել է Գ. Հովսեփյանը, խաչենցիներ էին, և սրանց իշխանության աթոռանիստ կենտրոնը 12-րդ դարում գտնվել է Հավապտուկում՝ Խոխանաբերդ ամրոցի դեմ Խաչենագետի վրա[2]։

13-րդ դարի առաջին տասնամյակում Վասակ քաջ Խաղբակյանը, որը գործակցել էր ամիրսպասալար Զաքարեին և աթաբեկ Իվանեին Վայոց ձորի և, հավանորեն, նաև Բջնիի ու Դվինի գրավմանը՝ հիմնադիր եղավ մի ընդարձակ իշխանության, որի կալվածները գտնվում էին Վայոց ձորի, Շահապունիքի, Վարաժնունիքի և Կոտայքի գավառամասերում։ Արատեսի մի արձանագրության վկայությամբ՝ այս Վասակը նվաճել էր Եղեգյաց ձորի ամրոցները, իսկ ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ նաև Հրաշկաբերդը[3]։ Վերջինս վկայում է նաև, որ Օրբելյանների և Խաղբակյանների կողմնակալությունները կարգվել էին Գեորգի Լաշա թագավորի և աթաբեկ Իվանեի կողմից։

«Եվ կարգում են Լաշա թագավորը և Իվանե աթաբեկը,— ասում է Ստեփանոս Օրբելյանը,— Լիպարիտին կողմնակալ այս աշխարհի [Սյունիքի]. նմանապես և մյուս իշխանին՝ ամենօրհնյալ Վասակ Խաչենեցուն, որը քրիստոսասեր և բարեպաշտ պարոն Պռոշի հայրն էր՝ կարգում են կողմնակալ Վայոց ձորում»։

[«Եւ կացուցանեն թագաւորն Լաշայ և աթաբէկն Իվանէ զԼիպարիտն կողմնակալ այսմ աշխարհի, նմանապէս և զմիւս իշխանն զամենօրհնեալն զՎասակ Խաչենեցի, զհայրն քրիստոսասէր և բարեպաշտ պարոնին Պռոշայ, կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»][4]։

Ուշագրավ է, որ Խաղբակի որդին, Վասակը, իր կառուցած Կեչառուքի կաթուղիկե եկեղեցու արձանագրության մեջ մատնանշում է, որ իրեն պատրոններն են եղել Իվանե աթաբեկը և ամիրսպա-

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 51 և 67։

[2] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 29։

[3] Նույնը, էջ 35, նաև Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԴ. էջ 350։

[4] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 397։

*սալար Զաքարեի որդի Շահնշահը[1]։ Կարելի է ըստ այսմ ենթադրել, որ Խաղբակյանների կալվածների մի մասը գտնվել է ամիրսպասալար Զաքարեի գերիշխանության տակ գտնվող Այրարատ նահանգի շրջանում։*

*Օրբելյանների կենտրոնավայրերն էին Վայոց ձորում Արփա ավանը և Եղեգիքը, իսկ Խաղբակյաններինը՝ Սրկղունք ավանը (Հովսեփյանի կարծիքով՝ այժմյան Բաշքյանդը) և Բոլորաբերդը, որոնց մոտ գտնվում էին նրանց կառուցած Սպիտակավոր Աստվածածինը և Աղբերց կամ Գայլեձոր ու Թանատի վանքերը[2]։*

*Բացի Օրբելյաններից և Խաղբակյաններից, Վայոց ձորում կալվածներ ունեին նաև Շահուռնեցիք և Մահևանեանք։ Առաջին իշխանական տոհմը իշխում էր Վայոց ձորի արևելյան կողմում՝ Հերհերում ու նրա շրջակայքում, իսկ երկրորդը՝ Նրբուլն բերդում, որը գտնվում էր Վայոց ձորի արևմտյան կողմում՝ հին Վարդենիք, ըստ Ալիշանի՝ այժմյան Վրթանես գյուղի մոտ[3]։*

*Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Մահևանյանները շառավիղ էին Բաղաց կամ Կապանի իշխանական տոհմի և որ նրանց բերել ու բնակեցրել էր Վայոց ձորում աթաբեկ Իվանեն, որը տվել էր նրանց իբրև հայրենիք Նրբուլն բերդը և այլ հողեր[4]։*

*Զաքարյանները, ընդհանրապես, շատ հեռատես քաղաքականություն էին վարում հին իշխանական տոհմերի մնացորդների նկատմամբ, որ պահպանվել էին Արցախի մի քանի շրջաններում։ Սրանց հետ նրանք սերտ բարեկամություն հաստատեցին, կապելով իրենց հետ խնամիական կապերով։*

*Թարթառ գետի վերին հովտում և նրան կից Սոթից գավառում 12-րդ դարի սկզբներում հիշատակվում է Դոփյանների իշխանությունը, որի անունը ծագում է Զաքարեի և Իվանեի Դոփ քրոջ անունից։ Այս Դոփը, Զաքարյան Սարգիս իշխանի դուստրը, ամուսնացած էր այս կողմերի տեղական իշխան ո՛չ թե Ղարա Գրիգորի հետ, ինչպես սովորաբար ենթադրվում է, այլ Հասանի հետ[5]։*

---

[1] *Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 144 և* Ալիշան, *Այրարատ, էջ 263։*

[2] *Տե՛ս* Ալիշան, *Սիսական, էջ 146, 181 և* Հովսեփյան, ***Խաղբակյանք***, *էջ 36—45։*

[3] *Նույնը, էջ 168։*

[4] *Տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, *գլ. ԿՍ, էջ 366։*

[5] *Դոփյան առաջին իշխաններն էին, ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել Գ. Հովսեփյանը, Հասանը՝ Դոփի ամուսինը, սրանց որդին Գրիգորը և ապա վերջինիս որդին Հասանը և նրա որդին Գրիգորը՝ Ասփայի ամուսինը. տե՛ս Խաղբակյանք, էջ 19—20 և Г. Овсепян,* Потомство Тарсанча Орбеляна, СПб., 1913, *էջ 222—224։*

Կարապետ եպիսկոպոսը կարծում է, որ Դոփյանների իշխանության կալվածների մի մասը, հավանորեն, Դոփը օժիտ էր տարել իր ամուսնուն[1]։ Այս ենթադրությունը կարող է, իրապես, ճիշտ լինել, որովհետև Դոփյանների իշխանության սահմանների մեջ արդեն 13-րդ դարի առաջին կեսում մտնում էր, հավանորեն, Սևանի լճի ամբողջ հարավակողմը մինչև Շողագա (այժմյան Ծրանոսից ու Ադամխանից մի փոքր հարավ), այսինքն՝ Գեղարքունիի մեծագույն մասը, որը պատկանում էր, ինչպես վերև տեսանք, աթաբեկ Իվանեին։

13-րդ դարի երկրորդ կեսում, ըստ երևույթին, նրանք կարողացել էին ընդարձակել իրենց իշխանության սահմանները և այս ժամանակաշրջանի արձանագրություններում անվանում են իրենց «Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգահո և այլ բազում գաւառաց» տեր[2]։

Դոփյանների ընդարձակված իշխանության տեղադրության ու տարածության մասին առանձնապես կարևոր է Թարգմանչաց վանքի Ավետարանի 1312 թվի հիշատակարանը, որի մեջ Դոփյան իշխանաց իշխան Գրիգոր Բ-ի մասին, որն ամուսնացած էր Օրբելյան Տարսայիճ մեծ իշխանի դուստր Ասփայի հետ՝ ուշագրավ տեղեկություն է հաղորդված, որ նա «տէր և պարոն» էր «Փոքր Սիւնեաց, Հանդաբերդոյ և Ականց և բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև Շաւղուագայ»[3]։ Այս իշխանության գահանիստ կենտրոնն է եղել, գլխավորապես, Ծար գյուղաքաղաքը, իսկ տոհմային դամբարանը՝ Խաթրավանքը։

> «Ի ժամանակս,— ասված է վերոհիշյալ Ավետարանի հիշատակարանում,— և ի դարս աւուրց տիեզերակալութեան և արքայութեան բոլոր աշխարհաց ազգին Նետաւղաց, որ տիրէր ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կասպից, և յԵփրատ գետոյ մինչև յայնկոյս լերանցն Կովկասու, որոյ գլուխ և ինքնակալ՝ խանն աշխարհակալ Խարբանդայ կոչեցեալ, ի թուին Հայոց ՉԿԱ (1312)։ Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ և երեւելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, ի գնդէ

---

1 Տե՛ս Կարապետ եպ., Նյութեր հայ մելիքության մասին, Բ, էջ 34։

2 Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 130 և Կարապետ եպ., Նյութեր հայ մելիքության մասին, Բ, էջ 44, 65 ևն.։

3 Տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 532 և «Նյութեր հայ մելիքության մասին», Բ, էջ 52, 72 և 76։

գովելեաց, Գրիգոր իշխան Հայոց՝ տէր և պարոն Փոքր Սիւնեաց՝ Հանդաբերդոյ, և Ականւոյ, և բարձր լերանց ծովակին Գեղամայ, Սոթից մինչև ի Շաղուագայ, և գաւառք մեր յանուանէ այս է՝ Սոթ Գլուխ, և Բերդաձոր, և Ծոխանց, Հասկաբակս, Ատրենին, Կալեր, Ուռիաձոր, և Խորուագետ, Դիանոց և այլ իւրեանց միջոց մազրովն ի մեր նախնեաց մնացեալ հայրենիք է, իւրեանց չորս սահմանովն, ստոյգ և ճշմարիտ գրեալ կայ յաւետարանիս։ Ամուսնացեալ ընդ դստէր Տարսաիճ իշխանին, ընդ ամէնօրհնեալ պարկեշտ տիկնոջն Ասփայի, ծնանի ի սմանէ ուստերս և դստերս, իսկ միոյն, որում անունն էր Սարգիս, նուիրէ Քրիստոսի ի ստնդեայ հասակին, որ արժանաւորութեամբ ի կոչմանէ Հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան տանն Խաչենոյ»[1]։

Զաքարեի և Իվանեի մյուս քույրը, Խորիշահը, ամուսնացել էր բուն Խաչենի տեր Վախթանգի հետ, որին Կիրակոս Գանձակեցին անվանում է Տանկիկ, իսկ Վարդան վարդապետը՝ «Վաղթանգ Սակռեանց»[2]։

Արձանագրություններում մեջ այս տոհմի իշխաններն իրենց անվանում են «տէր Խաչենոյ» և «տէր Խոյախան բերդոյ Խաչենոյ»[3], սակայն աղբյուրների ուշադիր քննությունից երևում է, որ սրանց պատկանել է, իրապես, Խաչենի միմիայն հարավային մասը, ուստի և Վարդան վարդապետը իրավացի կերպով համարում է սրանց «տէր Ներքին Խաչենոյ»[4]։

Խորիշահի և Վախթանգի որդին, Հասան Ջալալ Դոլան, որը 1240 թվին վերջացրել էր Գանձասարի մայր եկեղեցու կառուցումը, նույն այդ վանքի 1240 թվի արձանագրության մեջ իրեն անվանում է «բնակաւոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր և ի յոգնասահման նահանգի»[5]։

Մեծն Հասանի որդու Տանկիկ Վախթանգի այս տոհմը, ինչպես ցույց է տվել Գ. Հովսեփյանը[6], ցեղակից էր Վայոց ձորի Խաղբա-

---

[1] Տե՛ս «ԺԴ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 84։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 254 և Վարդան վրդ., գլ. ՁԳ, էջ 140։

[3] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 53, 73, 92։

[4] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԳ, էջ 140։

[5] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 81։

[6] Տե՛ս Խաղբակյանք, էջ 28—34։

կյան-Պռոշյանների տոհմին և սրա աթոռանիստ կենտրոնը գտնվում էր վերոհիշյալ Հավապտուկում՝ Խոխանաբերդ ամրոցի հյուսիսակողմում, Խաչենագետի աջ ափին՝, իսկ տոհմային դամբարանը՝ Գանձասարում։

Խաչենի այս տոհմի և Դոփյանների իշխանությունների միջև, Թարթառ գետի միջին հոսանքում, գտնվում էին Հաթերքի Վախթանգ իշխանի կալվածները, որին նրա կինը Արզուխաթունը, «մեծի իշխանաց իշխան Քրդին» դուստրը, Խութավանքի 1214 թվի արձանագրության մեջ անվանում է «թագաւորազն»։ Այս Վախթանգը «թագաւորազն» կոչվում է, ըստ երևույթին, այն հիման վրա, որ նրա մայրը Մամքանը՝ «Հաթերքու և Հանդաբերդու, Խաչենաբերդու և Հաւքախաղացին» տիրոջ Հասանի կինը, Կյուրիկե Բ-ի դուստրն էր։ Նույն այս Մամքանը Խութավանքի 1182 թվի արձանագրության մեջ իրեն ևս համարում է «Մամայ թագուհի»[2]։

Թագավորազն Վախթանգը տեր էր ո՛չ միայն Հաթերքի, այլև «ամենայն Վերին Խաչենոյ»[3]։ Նա վախճանվել էր 1214 թվին և թաղվել, ինչպես և իր վաղամահ երկու որդիները, իր տոհմի հանգստարանում, որ գտնվում էր Խութավանքում, որը կոչվում էր նաև Դադի վանք[4]։

Վախթանգի մահից հետո, ինչպես վկայում է Վարդան վարդապետը.—

> «Վեցհարյուր վաթսուն և երեք թվին [=1214] Հաթերքը տվին նրա տերերը Իվանեին, որովհետև նրա բուն տերը, Վախթանգը մեռել էր և վախճանվել էին անժամանակորեն նաև նրա որդիները»։
>
> [«Ի վեցհարիւր վաթսուն և երեք թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ»][5]։

Այնուհետև Վերին Խաչենի մեծագույն մասը, ինչպես և Հանդաբերդը և Խութավանքը, ստացել էին, հավանորեն, Իվանեից Դոփյանները։ Թարգմանչաց վանքի Ավետարանի վերոհիշյալ հիշատակարանի ու նաև արձանագրությունների մեջ, իբրև տեր այդ

---

[1] Տե՛ս Բարխուդարյանց, Արցախ, էջ 182։

[2] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 34։ Համեմատե նաև Կարապետ եպ., Նյութեր հայ մելիքության մասին, Բ, էջ 51։

[3] Նույնը, էջ 56։

[4] Տե՛ս Բարխուդարյանց, Արցախ, էջ 203։

[5] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԴ, էջ 140։

տեղերի՝ հիշատակված են հետագայում Դոփյան Գրիգոր Բ-ը և նրա նախնիքները[1]։

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, թագավորազն Վախթանգի և նրա որդիների մահից հետո Հայաստանի այս կողմերում գոյություն ունեին երկու մեծ իշխանություններ՝ Վախթանգյանների իշխանությունը Ներքին Խաչենում և Դոփյաններինը՝ Գեղարքունիքում, Փոքր Սյունիքում և Վերին Խաչենում։

Պետք է ասել, որ Խաչենը և նրա զինվորական ուժեղ ազնվականությունը խիստ կարևոր ու խոշոր դեր են կատարել Զաքարյանների ժամանակ։ Խաչենի իշխանական տոհմերը ո՛չ միայն իրենց ձեռքումն ունեին Խաղբակյան, Դոփյան և Վախթանգյան մեծ իշխանությունները, այլև, լինելով Իվանե աթաբեկի մոտ բարձր պաշտոնյաներ կամ գործակալներ՝ հեջուբ կամ գերագույն կառավարիչ էին նրա արքունիքի և խնամակալ էին նրա որդու։

1198 թվի Հոռոմոսի և Տայլարի արձանագրություններում հիշատակված են հեջուբ Գրիգորը և Սմբատը, որոնք իրենց եղբայրների հետ տեր և պատրոն էին այդ տեղերի[2]։ Առանձնապես կարևոր է Գոշավանքի մի այլ արձանագրությունը, որի մեջ Գրիգոր հեջուբը հաղորդում է, որ աթաբեկ Իվանեն նրան վերակացու էր կարգել իր տան և որ ինքը ամիրսպասալար Ավագի հեջուբն է։ Նա հաղորդում է նույնպես, որ ինքը Սմբատի որդին է ու թոռն է մեծ Վախթանգի, որոնք Արցախ աշխարհի կողմնապետներն են[3]։

Հետաքրքիր է սակայն, որ Հոռոմոսի 1228 թվի արձանագրության մեջ հիշատակված է մի այլ հեջուբ, դարձյալ Գրիգոր անունով, բայց որդի Հասանի[4]։ Սա նույնպես Հոռոմոս վանքի պատրոնն էր և, ամենայն հավանականությամբ, ազգականն էր Սմբատի որդու Գրիգոր հեջուբի։ Կիրակոս Գանձակեցին ևս վկայում է, որ աթաբեկ Իվանեն մահվան ժամանակ (1233/4) հանձնել էր «զորդին իւր և զտունն» իր սնուցած Գրիգոր անունով իշխանին, որի մականունն էր «Տղայ»[5]։

---

[1] Տե՛ս Ալիշան. Սիսական, էջ 532. Բարխուտարյանց, Արցախ, էջ 290—291, «Վիմական տարեգիր», էջ 130 և Ջալալյանց, Ճանապարհորդություն, էջ 200—203։

[2] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 39, 42—43։

[3] Նույնը, էջ 42 և Ջալալյանց, Ճանապարհորդություն, Ա, էջ 139։

[4] Նույնը, էջ 71։

[5] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 210։ Գ. Հովսեփյանի կարծիքը, որ այս Գրիգոր Տղան նույնը պիտի լինի Հոռոմոսի արձանագրությունների մեջ հիշատակված Սմբատի եղբայր հեջուբ Գրիգորի հետ, ինչպես տեսնում ենք, հավանական չէ. տե՛ս «Խաղբակյանք», էջ 21։

Բոլոր այս հեջուբները, որոնք մեծ դիրք ունեին Իվանեի արքունիքում՝ հավանորեն, խաչենի իշխաններից էին և իրար ազգակից։

Զաքարեի և Իվանեի մյուս քույրը Նանան Կյուրիկյան Աբաս Բ-ի կինն էր։ Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, Աբաս Բ-ը Կյուրիկե Բ-ի որդին էր, որն իշխում էր Մածնաբերդում[1]։ Նա վախճանվել է տասնինը տարեկան հասակում՝ ամուսնանալուց երկու տարի հետո, առանց ունենալու իր կնոջից ժառանգ։

Կարապետ եպիսկոպոսը ենթադրում է, որ Նանան ևս, ինչպես և Դոփը, իր ամուսնուն տարած պիտի լիներ իբրև օժիտ հարուստ կալվածներ[2]։ Նանան ունեցել է, իրոք, մեծ կարողություն և, ինչպես հայտնի է, 11-րդ դարի վերջերում կառուցել է իր ամուսնու հիշատակին Սանահնի կամուրջը Զորագետի վրա, որը մինչև այժմ կանգուն է[3]։

Բացի այս իշխանություններից կային նաև այլ մանր իշխանություններ հյուսիսային Հայաստանում, գլխավորապես, Լոռում, Զորագետում և Մահկանաբերդում, ինչպես օրինակ, Համազասպյան-Մամիկոնյանները Դսեղում, Արծրունյաց Ամիր Քրդի տոհմը Մահկանաբերդում, Ուքանյանները, Սևադյանները, նաև ուրիշ տոհմեր։

13-րդ դարի սկզբում Վրաստանի գերագույն իշխանության և Զաքարյանների տիրապետության տակ վերականգնված էր, ինչպես տեսնում ենք, պատմական Հայաստանի մեծագույն մասը, որը ծածկված էր նորից զինվորական հայ իշխանությունների խիտ ցանցով։

Այս իշխանությունները, որ կազմակերպվել էին Վրաց մեծ պետության թե՛ արևելյան և թե՛ հարավային սահմաններում՝ նրա համար այժմ ամուր պատվար էին հանդիսանում շրջակա ամիրայությունների հարձակումների դեմ։ Այնպես էր թվում արդեն, որ անդրկովկասյան ժողովուրդների սերտ դաշնակցությունը երկարատև կերպով ապահովելու էր քաղաքական ու կուլտուրական նրանց վերածնությունը։

Բայց տարաբախտաբար այդպես չեղավ։

Շուտով անզուսպ հեղեղի նման ներս խուժեցին Միջին Ասիայի տափաստաններից Առաջավոր Ասիա մոնղոլները և նրանց

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 145։

[2] Տե՛ս «Նյութեր հայ մելիքության մասին», Բ, էջ 32։

[3] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 71։

միացած թուրքական այլ քոչվոր ցեղեր։ Սրանք նվաճեցին գրեթե ամբողջ Ասիան և Արևելյան Եվրոպան։

Վրացական-հայկական ուժերը չունեին, իհարկե, հնարավորություն ու կարողություն պաշտպանելու իրենց երկիրն այս հզոր թշնամուց, որին չէին կարողացել դիմադրել ավելի մեծ պետություններ, ինչպիսիներն էին Խվարեզմը, Չինաստանը և Ռուսաստանը։

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

**1. Աղբյուրների և ուսումնասիրությունների սակավությունը։— 2. Նոր վերածնությունը Զաքարյանների ժամանակ։— 3. Հայաստանի տնտեսական-կուլտուրական զարգացման կանգառումը Բագրատունյաց շրջանի բուռն վերելքից հետո.— միջազգային ու տարանցիկ նախկին մեծ առևտրի զարգացման խոչընդոտները։— 4. Քաղաքների վերակենդանացմանը նպաստող նոր պայմանները 12-րդ դարում.— բնական տնտեսության զորեղացումը սելջուկյան արշավանքներից հետո։— 5. Տարանցիկ առևտրի և քաղաքների վերստին բուռն զարգացումը Զաքարյանների ժամանակ.— Վենետիկի և Գենովայի մեծ դերը։— 6. Կուլտուրայի և շինարարության ծաղկումը Զաքարյան շրջանում։—7. Գրականության և գիտության զարգացումը։— 8. Զաքարյան Հայաստանի քաղաքական կազմակերպությունը.— օտար ազդեցության հետքերը։— 9. Ֆեոդալական հարաբերությունների ընդհանուր բնույթը.— «պատրոն»-ներ կամ «պարոն»-ներ.— գործակալական պաշտոններ։— 10. Վերականգնված Հայաստանի հիմնական պարտականությունը Վրաց թագավորության հանդեպ։— 11. Կարս քաղաքի միացումը Վրաստանին։— 12. Եկեղեցական կալվածատիրությունը և հոգևորականության իրավունքների ընդարձակումը։— 13. Գյուղացիության նորտական դրությունը։— 14. Կալվածատերերին վճարվող հարկերը։— 15. Շինականների պարտադիր ձրի աշխատանքները (կոռը»։— 16. Տուրքերը։**

*Հայաստանի ներքին կացությունը սելջուկյան արշավանքներից հետո և Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանում դեռևս մի մութ խնդիր է, որ շատ քիչ է ուսումնասիրված։*

*Այս շրջանի ներքին կյանքը լուսաբանելու համար առաջնակարգ աղբյուրներ կարող են համարվել վիմական արձանագրությունները և պեղումների ու հնագիտական հետազոտումների միջոցով ստացվող փաստական տվյալները։ Սակայն հայ պատմագիտության կարևորագույն այդ աղբյուրները, դժբախտաբար, դեռ մինչև այժմ բավարար չափով հավաքված, հրապարակված ու ուսումնասիրված չեն։*

Հայկական հնությունների և արձանագրությունների գիտական հրատարակման և հետազոտման գործը դեռ նոր է սկսվել և երկար ժամանակ է հարկավոր, որ այդ աշխատությունները լայն ծավալ ստանան և երևան բերեն այս ժամանակաշրջանի ներքին կյանքը լուսաբանող նոր փաստեր ու տվյալներ։

Նյութերի և աղբյուրների սակավության և հատուկ մանրաքրնին ուսումնասիրությունների բացակայության պատճառով՝ Հայաստանի ներքին կյանքը վերոհիշյալ դարերում կարելի է ցուցադրել ընդհանուր գծերով միայն։

Սելջուկյան արշավանքների շրջանում Հայաստանը, ինչպես տեսանք, խիստ ավերվել էր, իսկ բնակչությունը սրի ու գերության էր մատնվել կամ գաղթել ապահով տեղեր։

Պեղումները և հնագիտական սակավաթիվ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուն Հայաստանում, սելջուկյան արշավանքների ժամանակներից մինչև Զաքարյանների տիրապետությունը՝ շինարարությունը և կուլտուրական լայն աշխատանքները կանգ էին առել։ Ճիշտ է՝ Մելիքշահի ժամանակ (1072—1092) հայ բնակչության դրությունը սկսվել էր բարվոքվել, սակայն նրա հաջորդների ժամանակ անիշխանությունն ու անապահովությունը պարբերաբար շարունակվել էին, և երկար ժամանակ էր հարկավոր, որ հայության մնացորդները կարողանային ուշքի գալ, և վերստեղծել կիսավեր իրենց երկրում նոր կյանք ու նոր տնտեսություն և նախապատրաստել երկիրը քաղաքական ու կուլտուրական նոր վերածնության համար։

12-րդ դարի երկրորդ կեսում միայն, մոտ հարյուր տարվա քրտնաջան աշխատանքից հետո՝ Հայաստանի մեծագույն մասն այնքան արդեն զորեղացել էր, որ կարողացավ մաս առ մաս, Վրաստանի օգնությամբ և Զաքարյանների առաջնորդությամբ, ազատագրվել մահմեդական տիրապետությունից։ Նույն ժամանակաշրջանում և, գլխավորապես, 13-րդ դարի առաջին տասնամյակներում Հայաստանի զանազան մասերում մեծ թափով սկսել էր վերակենդանանալ ու զարգանալ կուլտուրական ստեղծագործ կյանքը և ընդհատված շինարարությունը։

Բագրատունյաց թագավորության ժամանակ, ինչպես ցույց եմ տվել նախորդ իմ աշխատություններում,[1] Հայաստանում աչքի

---

[1] Տե՛ս «О торговле и городах Армении», էջ 140—155 և «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», Երևան, 1940։

էր ընկնում սոցիալական-տնտեսական հատուկ մի երևույթ՝ խոշոր քաղաքների և քաղաքային կյանքի բուռն զարգացումը։ Այդ ժամանակաշրջանում բացառիկ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Հայաստանում առևտրի, արդյունագործության և ապրանքա-դրամական տնտեսության զարգացման համար։

Այս մեծ զարգացման հիմնական պատճառներից գլխավորն այն է, որ Բագրատունյաց Հայաստանը ո՛չ միայն ժամանակավորապես դառել էր միակ տրանզիտային ճանապարհը համաշխարհային առևտրի, այլև տնտեսական արտակարգ մեծ նշանակություն էր ստացել իբրև միակ չեզոք ու ապահով վայրը միջազգային առևտրի և, մասնավորապես, առևտրական հարաբերությունների պատերազմող թշնամական երկրների՝ Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության միջև։

Սելջուկյան արշավանքներից հետո՝ Հայաստանը, հիմնովին ավերված ու թալանված, կորցրեց միջազգային առևտրական իր այդ նշանակությունը։ Ամիրայությունները, որոնք կազմվել էին Հայաստանի զանազան շրջաններում և որոնք պարբերաբար կռիվ էին մղում թե իրար դեմ և թե Վրաստանի ու նրա գերագույն իշխանության տակ գտնվող երկրների դեմ՝ դժվար թե ի վիճակի լինեին իրենց հովանավորությամբ ապահովելու առևտրական կանոնավոր ու հարատև երթևեկությունը։

Անկախ այս հանգամանքից, Հայաստանը, իբրև միջազգային տրանզիտային առևտրի ճանապարհ, հետզհետե կորցնում էր իր այդ նշանակությունը նաև ուրիշ պատճառներով։

XI—XII դարերում մեծ դժվարությունների էր հանդիպում Հայաստանի ու Անդրկովկասի առևտուրը հարավային Ռուսաստանի հետ Ղփչաղ թուրքերի արշավանքների պատճառով, որոնք 11-րդ դարի երկրորդ կեսից սկսած գրեթե անընդհատ հարձակվում էին ու ավերում հարավային Ռուսաստանի երկրները։ Մյուս կողմից՝ խաչակրաց արշավանքների ընթացքում միջազգային առևտուրը սկսել էր խիստ զարգանալ Առաջավոր Ասիայի հարավային երկրներում և առաջնակարգ նշանակություն էին ստացել առևտրական հարավային ճանապարհները։ Առևտրական ամենախոշոր կենտրոններ էին դառել այստեղ Եգիպտոսը, Ասորիքը, Կիլիկիան և Միջագետքը։

Հայաստանը, որպես համաշխարհային առևտրի տրանզիտային կամ տարանցիկ ճանապարհ, մեծ չափով կորցնում էր իր նախկին նշանակությունը։

Ճիշտ է, Վրաստանի զորեղացման շրջանում 12-րդ դարում, երբ սրա տիրապետության կամ գերիշխանության սահմաններն ընդարձակվել էին Սև ծովից մինչև Կասպից ծովը, առևտրական կյանքն Անդրկովկասում սկսել էր նորից վերակենդանանալ ու զարգանալ, սակայն այդ վերակենդանությունը, Բագրատունյաց շրջանի առևտրական հարաբերությունների համեմատությամբ, ունենալու էր ըստ իս համեստ չափեր։

Հայաստանի քաղաքների որոշ բարեկեցությունը, որ նրանք ունեցել են սելջուկյան արշավանքներից հետո 12-րդ դարում՝ դժվար է, ուրեմն վերագրել համաշխարհային մեծ առևտրի զարգացմանը Արևմուտքի հետ։ Կուլտուրական ու տնտեսական նոր վերակենդանությունն այս քաղաքներում կապ է ունեցել, հավանորեն, ինչպես ճիշտ են մատնանշել պատմագետները, Առաջավոր Ասիայի քաղաքների ընդհանուր զարգացման հետ մահմեդական երկրներում։ Հայաստանում մեծ քաղաքները մինչև 12-րդ դարի վերջերը գտնվում էին, ինչպես վերև տեսանք, մահմեդական ամիրայությունների իշխանության տակ և քաղաքական ու կուլտուրական կենտրոններ էին դառել Շեդդադյանների, Շահի-Արմենների և Կարսի ու Էրզրումի իշխանությունների։ Եվ հասկանալի է, որ այս ամիրությունների և նորաստեղծ սելջուկյան սուլթանությունների միջև պետք է այս ժամանակներում հաստատված լինեին կենդանի ու սերտ հարաբերություններ՝ թե կուլտուրական և թե տնտեսական։

Որ Հայաստանը և նրա քաղաքները, անգամ Վրաստանի գերիշխանության ժամանակ, անկարող եղան վերահաստատել նախասելջուկյան մեծ վերածնության իրենց նախկին բարեկեցությունը՝ այդ մասին հայ աղբյուրների մեջ կան ուշագրավ ակնարկներ։

Բագրատունյաց թագավորության շրջանում, երբ Հայաստանը տրանզիտային ճանապարհ էր համաշխարհային առևտրի և տրնտեսական բուֆեր էր և կենտրոնավայր միջազգային առևտրական հարաբերությունների՝ դրամական շրջանառությունը հասել էր Հայաստանում մեծ չափերի։ 10-րդ դարի և 11-րդ դարի առաջին կեսի տուրքերից շատերը, ինչպես ցույց էի տվել նախորդ իմ աշխատություններում՝ եղել են դրամական[1]։ Արձանագրությունների բովանդակությունից կարելի է նույնիսկ ենթադրել, որ

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 263—264 և Հայաստանի պատմությունը Թուրք-Թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922, էջ 93—94։

Նրանց մեջ հիշատակված դրամական տուրքերի մի մասը գյուղական տուրքեր էին, որ ստացվում էին ո՛չ թե բնական բերքով, այլ դրամով։

Սելջուկյան արշավանքներից հետո այլևս գրեթե չենք գտնում հետքեր հնչուն դրամի նախկին արտակարգ առատության։ Իսկ գյուղացիության տուրքերն այս շրջանում, ինչպես երևում է արձանագրությունների և Մխիթար Գոշի Դատաստանագրքի վկայություններից՝ եղել են ո՛չ թե դրամով, այլ բնական բերքերով։

Հիմնվելով արձանագրությունների և պատմական վկայությունների որոշ ակնարկների վրա, ինձ թվում է, կարելի է ենթադրել, որ սելջուկյան արշավանքների հետևանքով Հայաստանը այլևս չէ ունեցել տնտեսական զարգացման ու բարգավաճման այն մեծ հնարավորությունները և նպաստավոր պայմանները, որ հատուկ էին Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանին։

Տնտեսական տեսակետից՝ Հայաստանը, որքան և նրա տընտեսությունը վերականգնված լիներ 12-րդ դարում, հետադիմել էր և գերիշխող փողային տնտեսության զարգացման շրջանակից նահանջել գերիշխող բնական տնտեսության շրջանակը։

Նիկ. Մառի կարծիքով, Հայաստանի քաղաքները նորից կենդանի մասնակցություն ունեցան համաշխարհային տարանցիկ առևտրին և վերստին մեծ նշանակություն ստացան 13-րդ դարի սկզբում Զաքարյանների իշխանության ժամանակ[1]։ Եվ, իրապես, հենց այս ժամանակ նորից ստեղծվել էին բարենպաստ պայմաններ համաշխարհային առևտրի համար Արևմուտքի հետ Տրապիզոնի և Սև ծովի վրայով։

Ինչպես հայտնի է, խաչակրաց չորրորդ արշավանքից հետո, որը վերջացավ Կոստանդնուպոլսի առումով ու ավերումով (1204 թ.)՝ Բյուզանդական կայսրության սահմաններում հիմնվեցին նոր պետություններ՝ ֆրանսիական և հունական։ Հենց նույն այդ ժամանակ, 1204 թվին, Թամար թագուհու աջակցությամբ և Վրաց զորքի օգնությամբ հիմնվեց և Տրապիզոնի հունական կայսրությունը։ Այս փոքր կայսրության հիմնադիրն էր Թամար թագուհու քրոջ որդի Ալեքսիոս Կոմնենը, Մանուել իշխանի որդին, որը, Պոլիսը խաչակիրների ձեռքն ընկնելուց հետո՝ իր եղբոր Դավթի հետ փախել էր Վրաստան։

Քաղաքական այս մեծ փոփոխությունների ընթացքում Լատինական կայսրության մեջ, որ հիմնվել էր Կոստանդնուպոլսում,

---

1 *Н. Я. Марр*, Кавказский культурный мир и Армения, էջ 43։

գերիշխող դիրք էր ձեռք բերել Վենետիկը, որը ստացել էր Բյուզանդական երկրների լավագույն մասը, ամենալավ նավահանգիստները և կարևորագույն ռազմական վայրերը։ Իտալական այս հանրապետությունը, ինչպես և մի փոքր հետո նաև Գենովան, աշխատեցին այնուհետև վերացնել իրենց դեմ եղած մրցակցությունը, և գրավեցին Արևելքում նոր շուկաներ և հետզհետե ընդլայնեցին առևտրական իրենց հարաբերությունները սևծովյան նավահանգիստների հետ։

Հավանորեն, հենց այս ժամանակ, երբ նորից սկսել էր վերակենդանանալ համաշխարհային առևտրական հաղորդակցությունը Վրաստանի բարեկամ Տրապիզոնի կայսրության վրայով՝ պետք է ենթադրել նաև նոր ու ավելի բուռն զարգացումը Հայաստանի քաղաքների, որոնց միջով անցնում էր տրանզիտային ճանապարհի հյուսիսային մեծ գիծը դեպի Տրապիզոն։

Հայ առևտրականները, որոնք խոշոր դեր էին կատարում դեռ Բագրատունյաց ժամանակ, ունեին այժմ, ինչպես շատ ճիշտ նշում է Մառը,[1] համաշխարհային կապեր և մշտական հարաբերություններ Լևանտական առևտրի կենտրոնների հետ, որտեղ սելջուկյան արշավանքներից հետո առաջացել էին հայկական գաղութներ։

Ավելի քան հավանական կարելի է համարել, որ, գլխավորապես, վերստին զարգացող այս մեծ առևտրին պետք է վերագրել Զաքարյան Հայաստանի թե կուլտուրական կյանքի և թե շինարարության նոր ծաղկումը և զարգացումը։ Մասնավորապես, շինարարական ձեռնարկումների բուռն աճմանը կարող էին այս շրջանում մասամբ նպաստած լինել Վրաստանի մոտ քսան և հինգ տարի շարունակվող հաղթական արշավանքներն ու պատերազմները, որոնց ընթացքում Զաքարյանները և նրանց զորավարները հարստանում էին նվաճված երկրների կողոպուտով։

Նյութական հարստությունների և դրամական միջոցների կուտակումը Զաքարյանների և այլ իշխանական տոհմերի ու խոշոր առևտրականների ձեռին խիստ նպաստեցին նոր այս վերածնության ընթացքում փառահեղ շենքերի և ճարտարապետական ու գեղարվեստական փարթամ հուշարձանների կառուցմանը։ Թե իրենք Զաքարյանները և թե մյուս իշխանները, մրցելով իրար հետ և աշխատելով իրար գերազանցել՝ շինել են տվել, սկսած 12-րդ դարի վերջերից, ո՛չ միայն շքեղ ու ճոխ եկեղեցիներ, այլև ապա-

---

[1] *Տե՛ս Н. Я. Марр,* Кавказский культурный мир и Армения, *էջ 43։*

րանքներ կամ դարպասներ, բերդեր, բարձրաբերձ աշտարակներ, իշխանատուն-վաճառատներ, բաղանիքներ, ջրամբարներ, ջըր-մուղներ, սալահատակված ճանապարհներ և այլ հասարակական շինություններ։

Առանձնապես ուշագրավ է, որ այս մեծ շինարարությանը մեծ չափով մասնակից են եղել, ինչպես երևում է վիմական արձանագրությունների վկայություններից, հայ իշխանների կանայք և դուստրները։

Այսպես, օրինակ, Կյուրիկե Բ-ի դուստրները՝ Իվանե Օրբելյանի կին Ռուսուդանը, Խաչենի Հասան իշխանի կին Մամքանը և սրանց քույրերը՝ Մարիամը, Վանենն և Բորինան, հայտնի են իրենց շինարարական գործերով Քոբայրի, Հաղբատի, Սանահնի, Խութա և այլ վանքերի մեջ[1]։ Զաքարեի և Իվանեի քույրը՝ Նանան, ինչպես վերև տեսանք, իր ամուսնու, Աբաս Բ-ի հիշատակին կառուցել էր Սանահնի կամուրջը։ Նրանց մյուս քույրը, Խորիշահը, նույնպես իր ամուսին Վախթանգ Տանկիկի հիշատակին իր որդի Հասան Ջալալի հետ հիմնարկել էր Գանձասարը (1240 թ.) և ուրիշ վանքեր իրենց գավիթներով ու ուսումնարաններով[2]։

Հայ իշխանների կանանց շինարարական գործունեության մասին արձանագրությունների մեջ հաղորդվում են և ուրիշ ուշագրավ տեղեկություններ։ Խիստ հետաքրքիր է Կիրակոս Գանձակեցու վկայությունը Հաթերքի և Վերին Խաչենի Վախթանգ իշխանի ամուսին Արզուխաթունի մասին, որն իր ձեռագործներով ու նկարչական տաղանդով զարմանք էր պատճառում ժամանակակիցներին։

> «Սա [Արզուխաթունը],— ասում է Կիրակոսը,— պատրաստեց իր դուստրների հետ գեղեցիկ վարագույր, իբրև ծածկույթ սուրբ խորանին, որ զարմանք էր պատճառում տեսնողներին. վարագույրը գործված էր փափկագույն այծերի մազից, ներկված էր գույնզգույն ու պես-պես, քանդակակերպ գործ էր և նկարազարդված էր պատկերներով, ճշգրտագույն հանվածքներով, Փրկչի և այլ սրբերի տնօրինություններով, որ հիացնում էր տեսնողներին։ Եվ ովքեր որ տեսնում էին՝ փառք էին տալիս աստծուն, որ նա կանանց տվել է ոստայնանկության իմաստություն և նկարակերտության հանճար»։

---

1 Տե՛ս Ղ. Մովսեսյան, Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 63—74։

2 Տե՛ս Բարխուտարյանց, Պատմութիւն Աղվանից, Վաղարշապատ, 1902, էջ 193։

[«Արար և վարագոյր գեղեցիկ, դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք. տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն։ Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային Աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան»]։[1]

Տնտեսական բարգավաճման նոր բարենպաստ պայմաններում հայ ժողովրդի ստեղծագործական ընդունակությունները արտահայտվեցին նաև այս վերածնության ժամանակ ո՛չ միայն արվեստի ու արհեստների և, մանավանդ, ճարտարապետության, զարդաքանդակների ու մանրանկարչության մեջ, այլև գրականության ու գիտության ասպարեզում։

Հայ գրականությունը, որի զարգացումը սելջուկյան արշավանքներից հետո ժամանակավորապես կանգ էր առել, նորից սկսել էր վերակենդանանալ ո՛չ միայն Կիլիկիայում, այլև Արևելյան Հայաստանում, գլխավորապես, Ձորագետում և Ուտիում։

Արդեն 12-րդ դարի սկզբներում հայ գրականությունն ունեցավ այնպիսի խոշոր ու տաղանդավոր մի մատենագիր, ինչպիսին էր Փառիսոսի գյուղերից մեկում ծնված Հովհաննես Սարկավագ վարդապետը, որի ուսման և գործունեության վայրերն էին Սանահինը, Հաղբատը և Անին։ Կիրակոս Գանձակեցին իրավացի կերպով նրան համարում է՝ «գիտությամբ շատերից ավելի իմաստուն, ամեն բանի մեջ հանճարեղ և մեծիմաստ» («մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն»)։[2]

Հայ մատենագրության ամենափայլուն դեմքերից մեկն էր նաև Գանձակեցի Մխիթար Գոշը (վախճանվել է 1213 թվին), որը Գոշավանքի կամ Նոր Գետիկ վանքի հիմնադիրն էր և ամիրսպասալար Զաքարեի խոստովանահայրը։ Գոշի հավաքած ու խմբագրած Դատաստանագիրքը, որը մեծարժեք աշխատություն է, խոշոր ու բացառիկ երևույթ էր Հայոց միջնադարյան գրականության մեջ։

Զաքարյան շրջանում շարունակվել է գրականության աշխարհականացումը և ժողովրդականացումը, որ ծնունդ էր առել Բագրատունյաց ժամանակ 10—11-րդ դարերում։

Մեծ ժողովրդականություն էին վայելում այս ժամանակներից

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 203։

[2] Նույնը, էջ 104։

*սկսած առակը և խրատը։ Զարգանում էր, բացի այդ, ո՛չ միայն պատմագրությունը, այլև գիտական գրականությունը՝ բժշկական գիտությունը, օրենսգիտությունը, քերականությունը և իմաստասիրությունը։*

*Զաքարյան շրջանի ֆեոդալական կազմակերպության առանձնահատկությունները դեռևս ուսումնասիրված չեն։ Այս կարևոր խնդրի լուսաբանության համար գլխավոր ու հիմնական աղբյուրներն են վիմական արձանագրությունները և հայ ձեռագրերի հիշատակարանները, որոնք, դժբախտաբար, գիտական եղանակով և լրիվ կերպով հավաքված ու հրապարակված չեն։*

*Դժվար չէ սակայն կռահել, որ այս ժամանակաշրջանում հայկական ֆեոդալիզմի որոշ կարգերը տարբեր պետք է լինեին Արշակունիների և մարզպանության շրջանի կարգերից, որ լուսաբանված են «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» իմ ընդարձակ աշխատության մեջ։*

*Շատ հավանական է, որ Հայաստանը, որն Արշակունյաց թագավորության անկումից հետո ենթարկվել էր Արաբական խալիֆայության, Սելջուկյան սուլթանության և պարսկական ամիրայությունների քաղաքական ու կուլտուրական ազդեցությանը՝ իր ներքին կարգերի ու կազմակերպության մեջ կարող էր կրած լինել նաև օտար ազդեցություն։ Այս ազդեցության հետքերը նկատելի են Զաքարյան շրջանի ֆեոդալական կազմակերպությանը և պաշտոնեությանը վերաբերող բառապաշարի մեջ, օրինակ՝ ամիր կամ ամիրայ, ամիրություն, հեջուբ, էվան, էվանություն, մուճուր, մուճուրություն, մուխթասիպ կամ մուսայիպ, ռայիս ևն., որոնք բոլորն էլ ունեն արաբական ծագում։*

*Զաքարյանների վերականգնած Հայաստանի ֆեոդալական հասարակարգը իր էությամբ, ինչպես և Արշակունյաց ու Բագրատունյաց թագավորությունների ժամանակ, խոշոր կալվածատիրության և զինվորական ազնվականության տիրապետություն էր։ Սակայն ինչպես Բագրատունիների ժամանակաշրջանում, նույնպես և այժմ մեծ դեր էին կատարում նաև քաղաքները և քաղաքային բնակչությունը՝ հարուստ վաճառականները և արհեստավորները, որոնք Զաքարյան Հայաստանի կուլտուրական վերածնության կարևոր նեցուկներն էին։*

*Ամիրսպասալար Զաքարեն և աթաբեկ Իվանեն, որոնք իրենց տեր ու սյուզերեններ ճանաչում էին Վրաց թագավորներին՝ փաստորեն հանդիսանում էին վերականգնված Հայաստանի ինքնուրույն*

*իշխողները՝ Հայաստանի բոլոր մյուս իշխանությունները, որ սրանց վասալներն էին, հարկավոր դեպքերում պարտավոր էին իրենց զորքերով մասնակցել ընդհանուր թշնամու դեմ մղվող պատերազմներին։*

*Սրանք ևս, ինչպես և Արշակունյաց շրջանի նախարարական տոհմերը, ունեին իրենց ամրոցներն ու բերդերը, սեփական զորքերը և առանձին դրոշները։ Մխիթար Այրիվանեցին, օրինակ, վկայում է,[1] որ Խաղբակյան Վասակ իշխանաց իշխանի մահից հետո «էառ զդրօշայն նորա որդի նորա քաջն Պռօշ»։ Ինչպես վերև տեսանք, Մխիթար Գոշը ևս հաղորդում է, որ ավագ եղբոր Վասակի մահվանից հետո սրա եղբայրը, Քուրդը, ժառանգել էր նրա դրոշը, պատերազմական փողը և իշխանությունը[2]։*

*Զաքարյանների իշխանությունը, որովհետև նրանք հանդիսանում էին ազատագրված Հայաստանի անմիջական պետերը, աղբյուրների մեջ անվանվում է հաճախ «աշխարհակալ տէրութիւն», «աշխարհակալութիւն», «պետական իշխանութիւն», «պետութիւն» կամ «թագաւորութիւն»[3]։*

*Զաքարյաններին ենթակա հայ իշխանները, լինելով նրանց վասալները, ճանաչում էին նրանց իբրև իրենց «տէր» կամ «պատրոն»։ Այս իշխաններին ստորադրված էին ավելի մանր կալվածատերերը, որոնք նույնպես համարում էին սրանց իբրև իրենց «պատրոններ» կամ «պարոններ»։ Այս վերջին տերմինները տիրոջ կամ միջնադարյան սենյորի իմաստով ավելի էին այժմ գործածական, քան Արշակունյաց շրջանի «տէր» տերմինը[4]։*

*Արձանագրությունների և մատենագրական աղբյուրների մեջ հիշատակված են այս ժամանակաշրջանի Վրաց արքունիքի և հայկական իշխանությունների մի քանի մեծ և փոքր պաշտոնյանները, որ համապատասխանում են Արշակունյաց շրջանի «գործակալ»-ներին[5]։*

*Գործակալական բարձրագույն պաշտոնների անուններ են, ան-*

---

[1] *Տե՛ս* Մխիթար Այրիվանեցի. *Մոսկվա, 1860, էջ 65։*

[2] *Տե՛ս* Ալիշան, *Հայապատում, էջ 390։*

[3] *Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 47, 50, 57 և Գ.* Հովսեփյան, *Խաղբակյանք, էջ 12։*

[4] *Խ. Սամվելյանի ենթադրությունը (տե՛ս «Հին Հայոց իրավունքի պատմություն», I, Երևան, 1939, էջ 243—244), որ «պարոն» նույնանիշ է ոչ թե «պատրոն», այլ իշխան բառին՝ չէ հաստատվում «Վիմական տարեգրի» վկայությունների ուշադիր քննությամբ։*

[5] *Տե՛ս իմ աշխատությունը «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 60—76։*

*տարակույս, Զաքարեի և Իվանեի «ամիրսպասալար» և «աթաբեկ» տիտղոսները։ Մեծն Զաքարեն, ինչպես վերև տեսանք, «ամիրսպասալար» է կոչվել իբրև Վրաց և Հայոց միացյալ զորքերի գլխավոր հրամանատար։ Նրա այդ պաշտոնը համապատասխանում է պարզապես Արշակունյաց շրջանի «սպարապետության» պաշտոնին։ Իսկ Իվանեն «աթաբեկ» է անվանվել իբրև Վրաստանի բարձրագույն պաշտոնյա և նրա այդ տիտղոսը համապատասխանում է մոտավորապես Արշակունյաց շրջանի «մարդպետության» գործակալության։*

*Աղբյուրների վկայությունից դժվար չէ նաև հետևցնել, որ բարձրր գործակալ պաշտոնյաների տիտղոս էր այս ժամանակաշրջանում նաև «ամիրայ» տիտղոսը։ «Ամիրայ» էին անվանվում այդ ժամանակ Անի քաղաքի կառավարիչները, որոնք գործակալներն էին ամիրսպասալար Զաքարեի և նրա որդու Շահնշահի*[1]*։ Իշխանական մեծ շրջաններում ևս, ըստ երևույթին, գոյություն են ունեցել բարձր գործակալ պաշտոնյաներ, որոնք նույնպես կոչվել են ամիրաներ*[2]*։*

*Ամիրայության նման գործակալության բարձր պաշտոն էր նաև հեջուբի կամ սենեկապետի պաշտոնը։ Վերև մենք տեսանք, որ Իվանե աթաբեկը իր տան վերակացու և հեջուբ էր կարգել Խաչենի իշխան Գրիգորին, իսկ իր մահվան ժամանակ հեջուբ Գրիգոր Տղայի խնամքին էր հանձնել իր որդուն և իր տունը*[3]*։ Աղբյուրների մեջ հիշատակված է նաև ամիրսպասալար Զաքարեի որդի Շահնշահի տան հեջուբը և առաջնորդը՝ «քաջ և ընտիր պատերազմող» Զաքարիա Պահլավունին*[4]*։*

*Ինչպես Բագրատունյաց ժամանակ, նույնպես և այժմ, քաղաքներում կար հատուկ պաշտոնյա, որն անվանվում էր մուխթասիպ (=արաբ.* muhthasib*) և որը վարում էր քաղաքներում ոստիկանապետի պաշտոն և հսկում էր շուկայի կշիռների և չափերի վրա*[5]*։*

*Գյուղական շրջաններում վարչական ու հարկահավաքման*

---

[1] *Տե՛ս* Ալիշան. *Շիրակ, էջ 43 և Գ.* Հովսեփյան, *Խաղբակյանք, էջ 14։*

2 *Համեմատ «Վիմական տարեգիր», էջ 102 (1260,* b*), 130 (1288,* c*) և 150 (1275)։*

[3] *Նույնը, էջ 39, 42, 43, 71 և* Կիրակոս Գանձակեցի. *էջ 210։*

[4] Փիրղալեմյանի *Ժողովածու, անտիպ, տե՛ս* Հովսեփյան, *Խաղբակյանք, էջ 15։*

[5] *Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 27 (1046—1050 թ.) և 221։ Համեմատ իմ աշխատությունը «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», II, էջ 20։*

գործը վարել են, ինչպես երևում է արձանագրական վկայություններից, «ձեռնաւոր»-ները։

Արձանագրությունների մեջ հիշատակված են նաև իբրև ստորին պաշտոնյաների անուններ՝ «էվան», որը ոստիկանական պաշտոնյա էր, և «մուճուր», որը, հավանորեն, ինչպես ենթադրում է Գ. Հովսեփյանը, հում նյութերով հավաքված հարկերի մթերապետ էր[1]։

Արձանագրություններից երևում է նույնպես, որ մի շարք մեծ գյուղերում Զաքարեն և Իվանեն նշանակած են եղել հատուկ առաջնորդներ, որոնք իրենց անվանում են ռայիսներ։ 1210 թվի Բագնայրի արձանագրության մեջ հիշատակված է Օշական գյուղի ռայիսը՝ «Պարսիմո որդի Հասանայ», իսկ 1224 թվի Բագարանի արձանագրության մեջ՝ Բագարանի ռայիս Վարդը։ Նորադուսի 1221 թվի արձանագրության մեջ Մխիթար Փեճարենց, Դավթի որդին, հաղորդում է, որ ինքը Նորադուս մեծահռչակ գյուղի առաջնորդ է կարգվել մեծն Իվանեի հրամանով[2]։

Զաքարյանների ազատագրած և քաղաքականապես վերականգնած Հայաստանը, որը նույնքան հզոր էր և ընդարձակ, ինչպես և Կիլիկիայի Ռուբինյան թագավորությունը՝ թեև Վրաստանին ենթակա վասալական երկիր էր, սակայն, իրապես, հանդիսանում էր բոլորովին ինքնուրույն երկիր։

Արձանագրություններից և մատենագրական աղբյուրներից չի երևում, որ Վրաստանը Զաքարյան Հայաստանի իշխանություններից ստանալիս լիներ հարկեր։ Հավանական է, որ Զաքարյանները իրենց «տէր»-երի կամ «պատրոն»-ների, Վրաց թագավորների հանդեպ ունեցել են, գլխավորապես, զինվորական ծառայության պարտականություն։ Հայ իշխանները, ստորադրված լինելով Զաքարեին և Իվանեին և լինելով, մեծ մասամբ, նրանց զորապետները, պարտավոր են եղել թագավորի ու ամիրսպասալարի հրամանով դուրս գալ պատերազմի արտաքին թշնամիների դեմ։

Որ հայկական իշխանությունները, հավանորեն, հարկ չեն վճարել Վրաստանին՝ այդ անուղղակի կերպով կարելի է թերևս հետևցնել Քարթլիս-ցխովրեբայի ուշագրավ մի վկայությունից, որի մեջ իբրև Վրաստանի հարկատուներ մատնանշված են միայն մահմեդական ամիրայությունները։

---

[1] Տե՛ս *Марр*, Новые материалы по армянской эпиграфике, СПб., 1893, էջ 89—90. Հովսեփյան, Զագավանից ժողովը, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 35։

[2] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 50, 52 և 68։

«Երբեմն,— վկայում է Քարթլիս-ցխովրեբայի Անանուն հեղինակը,—[Թամարն ու Դավիթը] անցնում էին [Հայնկույս Լիխի] և վարում այնտեղի գործերը, նաև որսի գնում Գեգուտ և Աջամեթ։ Ապա անցնում էին Քարթլի, Սոմխեթ և կանգ առնում Դվինում, ուր նրանց մոտ գալիս էին խարաջ [տալու] Գանձակեցիները և վերին քաղաքացիները։ Գարնանը բարձրանում էին Սոմխեթ, ստանալով խարաջ Նախիջևանեցուց և գնում Կոլա՝ Արտահանի գլուխը, ստանալով և այնտեղից խարաջ, նաև Կարնո քաղաքից, Երզնկայից և այլ շրջակա քաղաքներից»։[1]

Ուշագրավ է առանձնապես և այն, որ հայկական նորանվաճ երկրներում անշարժ գույքերին ու կալվածներին տիրապետել են ո՛չ թե Վրաց թագավորները, այլ Զաքարեն ու Իվանեն, որոնք ըստ իրենց բարեհայեցողության այդ կալվածները կամ սեփականացրել են և կամ տվել իրենց զորավարներին ու ազնվական այլ և այլ տոհմերին։ Բացառություն է կազմում միմիայն Կարս քաղաքը, որը Վրաց թագավորությունը գրավել էր 13-րդ դարի սկզբում (1206/7 թ.) և կցել էր անմիջապես արքունական կալվածներին, հանձնաբարելով նրա կառավարությունը Թամար թագուհու որդուն։ Այս բացառիկ փաստն առանձնապես շեշտում են թե Վարդան վարդապետը և թե Վրաց Բասիլի պատմագիրը։

«Ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին,— ասում է Վարդանը,[2]— առին զԿարս՝ թագաւորին»։

Իսկ Բասիլի պատմագիրը, ինչպես վերև տեսանք, վկայում է նույնպես, որ.

«Այս մի քաղաքն ու բերդը [Թամարն] իրեն վերապահեց բոլոր նրանցից, որ գրավել էր Ջորակերտից մինչև Արաքս, Գագից մինչև Գանձակ և Ջավախքից մինչև Սպեր»[3]։

Հայաստանի վերականգնման այս ժամանակաշրջանում ո՛չ միայն վերահաստատվեց կալվածատիրական ու քաղաքական իր իրավունքներում հայ ազնվականությունը, այլև հայ եկեղեցին ևս ստացավ ամենուրեք իր նախկին հեղինակությունը և քաղաքական նշանակությունը։

Զաքարյանների ժամանակ նորոգված են բազմաթիվ ավերված

---

1 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 21։

2 Տե՛ս Վարդան վրդ., պ. ՁԲ, էջ 138։

3 Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 36 և В. Дондуа, Басили, историк царицы Тамары, «Памятники эпохи Руставели», էջ 71։

վանքեր և եկեղեցիներ և շինված են նաև բազմաթիվ նոր եկեղեցիներ։ Այդ վանքերն ու եկեղեցիները ազնվականությունից ու ժողովրդից ստանում էին շարունակ ընդարձակ կալվածներ և հարուստ նվերներ։ Այսպիսով, հայ եկեղեցին ևս դառնում էր երկրում խոշորագույն կալվածատերը, իսկ հայ հոգևորականության բարձր դասը, որ ծագում էր, մեծ մասամբ, իշխանական տոհմերից, քաղաքական իր դիրքով ու իրավունքներով ո՛չ պակաս հեղինակավոր էր, քան իշխանաց իշխանները։

Գյուղացիության դրությունը Զաքարյան Հայաստանում կարոտ է դեռ հատուկ ուսումնասիրության։ Այս խնդիրը լուսաբանելու համար առայժմ միակ աղբյուրներն են վիմական արձանագրությունները և Մխիթար Գոշի Դատաստանագիրքը։ Ինչպես երևում է այս աղբյուրների վկայություններից, գյուղացիության մեծագույն մասը՝ շինականները, գտնվել են ճորտական վիճակում. նրանք ամրացված են եղել հողին և առանց կալվածատիրոջ թույլտվության իրավունք չունեին հեռանալ ու գաղթել ուրիշ տեղ։ Մխիթար Գոշը, թեև ինքը այլ տեսակետ ունի, սակայն իր հոդվածից երևում է, որ իրականությունը համապատասխան չէ եղել նրա ազատամիտ տեսակետին։

«Մարդկային մեր բնությունը,— ասում է Գոշը,— արարիչն ազատ է ստեղծել, բայց տերերին ծառայելը հողի և ջրի կարիքի պատճառով է։ Եվ ես պատշաճ եմ համարում հետևյալ վճիռը,— որ նա [շինականը], թողնելով տիրոջ հողը, ազատ կարող է ապրել, ուր որ կամենա։ Սակայն եթե տերերից ոմանք այդ թույլ չտան և գնացածներին ստիպեն ետ դառնալ՝ հոր մահից հետո ազատ պիտի լինեն որդիները, որոնք ծնվել են ոչ թե այդ, այլ ուրիշ տեղում»։

[«Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ։ Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան,— զի թողեալ զտէրունիսն ազատ է ուր և կամեսցի կալ։ Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տէրանցն և բռնադատէ գնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ»][1]։

Վիմական արձանագրությունների վկայություններից դժվար չէ նաև հետևցնել, որ շինականներին կարելի էր ծախել, նվիրել և

---

[1] Տե՛ս «Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց», հրատ. Վ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880, էջ 320 [II, 3]։

կտակել ինչպես առանձին առանձին, նույնպես և ամբողջ գյուղերով։

Ամրացած լինելով իրենց տերերի հողին՝ շինականները, ինչպես երևում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի վկայություններից՝ այդ հողից օգտվելու համար պետք է նրանց վճարեին բնահարկ, որը թե Բագրատունյաց և թե այս ժամանակաշրջանում անվանվում էր շարիատ[1]։

Շարիատի տարածված ու սովորական չափը Զաքարյանների իշխանության ժամանակ եղել է, ըստ երևույթին, բերքի հինգերորդ կամ տասներորդ մասը, որ Մխիթար Գոշի մոտ անվանված է «հնգեակ» և «տասանորդ»։ Հնգյակ տալիս էին շինականները ջրովի հողերի համար, իսկ անջրդի հողերի համար տալիս են տասանորդ։ Բացի այդ, նրանք որոշ հարկ վճարում էին նաև ոչխարների և կովերի համար։

Մխիթար Գոշի կարևոր վկայությունը շինականների հարկերի մասին ավելորդ չեմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։

> «Արծաթագին անդաստանը, այգեստանը և բուրաստանը,— ասում է Մխիթար Գոշը,— չպետք է լինեն հնգյակ հարկի տակ. նմանապես և ջրաղացները, տները և խանութները։ Իսկ բնակիչները պետք է հարկ վճարեն արհեստի և կամ վաճառի համար, որովհետև գլխահարկ տալիս են ոչ թե քրիստոնյաները, այլ այլազգիները, երբ նրանց բռնի կերպով հարկատու են դարձնում։ Բայց ջրովի անդաստանները պետք է տան հնգյակ, իսկ անջրդիները՝ տասանորդ, որովհետև թագավորին և իշխանին է պատկանում միայն հողը և ոչ ջուրը. նույնպես և անջրդի այգիները և ծառաստանները։
>
> Բացի այդ [շինականները] շաբաթվա ընթացքում պարտավոր են յոթից մեկ օր աշխատել իշխանի կամ տիրոջ համար. բայց ավելի աշխատեցնելը ստորադրյալներին մեծ անիրավություն է։
>
> Եզից առանձին հարկ չպիտի տրվի, որովհետև նրա հարկը հենց այն աշխատանքն է, որ նա կատարում է հնգյակի համար։

---

[1] Տե՛ս իմ աշխատությունը «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», II, էջ 10—18։

*Կովից միայն լիտր յուղ պիտի տրվի։*

*Արոտի համար այլ հարկ չպիտի տրվի, որովհետև հարկի տակ են հենց իրենք արոտականները։*

*Ոչխարների համար տրվելու է գառների տասներորդ մասը. եթե տերերը համաձայնեն, կարելի է փոխանակել ոչխարով ըստ արժողության։*

*Ձիուց, ջորուց և իշուց հարկ չպիտի վերցնեն, որովհետև [շինականը] շատ անգամ աշխատանք է կատարում նրանցով տիրոջ մոտ»։*

*[«Արծաթագին անդաստան և այգեստան և բուրաստան մի՛ լիցի ընդ հարկաւ հնգեկի. նմանապէս և ջրաղաց և տուն և խանութ։ Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցն, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգեաց՝ յորժամ բռնի ընդ հարկաւ արասցեն։ Բայց անդաստանք ջրարբիք լիցին ընդ հնգեկաւ, այլ ոստինք տասանորդեսցին. զի հող միայն է թագաւորի և իշխանի, և ոչ ջուր. սոյնպէս ոստինք, այգիք և ծառաստանք։*

*Այսպէս և յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանին և տէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է։*

*Եզին առանձին այլ հարկ մի՛ լիցի, զի այն իսկ է, զոր աշխատեալ հնգեկի։*

*Կովու լիտր եղն միայն լիցի։*

*Արօտի այլ հարկ մի՛ լիցի, զի այն իսկ են արօտականք որ հարկին։*

*Ոչխարք ի զառինսն տասանորդեսցին, թէ հաճոյ իցէ տէրունեացն՝ ընդ ոչխարի փոխանակիցէ ըստ արժանւոյն։*

*Ձիոյ և ջորւոյ և իշոյ մի՛ լիցի հարկ, զի նոքօք բազում անգամ ծառայէ զտէրունիսն»]*[1]։

Վիմական արձանագրությունների վկայություններից երևում է, որ բացի Դատաստանագրքում հիշատակված այս հարկերից, գոյություն են ունեցել նույն այս ժամանակաշրջանում նաև ուրիշ հարկեր։ Սակայն այս խնդիրը կարելի կլինի հանգամանորեն քննության առնել, երբ հրատարակված կլինի արձանագրությունների լրիվ ժողովածուն։

Դատաստանագրքի վերև մեջ բերված հատվածում խիստ կա-

[1] Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, II, 1, էջ 314—316։

րևոր է Գոշի վկայությունը նաև կոռի ու նրա քանակական չափի մասին Զաքարյան Հայաստանում։ Շինականները, ինչպես երևում է նրա վկայությունից, պարտավոր էին, բացի հարկ վճարելուց, կատարել իրենց տերերի մոտ ու նաև իշխանների հրամանով ձրի աշխատանքներ։

Պարտադիր ձրի աշխատանքների օրերի միջին քանակը, որ, ըստ երևույթին, սովորական է եղել այս ժամանակաշրջանում, Գոշի մոտ ցույց է տրված շաբաթվա ընթացքում մեկ օր, ուրեմն՝ տարեկան 52 օր։ Կոռի այս տևողությունը պետք է համարել շինականների համար բավական ծանր։

Թե՛ Բագրատունյաց և թե՛ այս ժամանակաշրջանում գոյություն են ունեցել Հայաստանում, ինչպես մանրամասն մատնացույց է արված իմ նախորդ աշխատություններից մեկում[1], շինականների երկու տեսակ պարտադիր գլխավոր աշխատանքներ, որոնք Միջնադարյան Եվրոպայում անվանվում էին manoperae (գերմ. Handfrohnen) և carroperae (գերմ. Fahr—կամ Spannfrohnen)։ Առաջինն այն աշխատանքներն էին, որ շինականը կատարում էր ինքը, իսկ երկրորդը՝ այն, որ նա կատարում էր իր անասուններով ու լծասարքով։ Ինչպես տեսանք Մխիթար Գոշի վերոհիշյալ վկայությունից շինականը հարկ չէր վճարելու իր ձիու, ջորու և էշի համար հենց այն պատճառով, որ սրանք կոռի աշխատանքներ էին կատարում կալվածատիրոջ մոտ։

Շինականներից պետք է տարբերել Գոշի Դատաստանագրքի զանազան հոդվածներում հիշված «ծառա»-ներին ու «աղախին»-ներին։ Սրանք պարզապես իրավազուրկ ստրուկներ էին, շինականներից շատ ավելի սահմանափակ իրավունքներով։

Աղբյուրների մեջ կան նաև որոշ ակնարկներ, որոնք հիմք են ծառայում ենթադրելու, որ այս ժամանակաշրջանում ևս Հայաստանում գոյություն են ունեցել գյուղական համայնքներ և համայնական հողատիրություն։

[1] Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926, էջ 37—44։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

# ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՌԱՋԱՊԱՀ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՋԱԼԱԼԵԴԴԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

**1. Մոնղոլական պետության հիմնումը Չինգիզ խանի իշխանության ներքո.— Չինգիզ խանի արշավանքները և նվաճումները.— Մոնղոլական ավերումների բնույթն ըստ Իբն ալ-Ասիրի:— 2. Ջեբեի և Սուբաթայի առաջապահ բանակը Առան-Աղվանքում.— Վրաց և Հայոց զորքի պարտությունը Կոտման գետի մոտ:— 3. Մոնղոլական առաջապահի վերադարձը Արևելյան Ռուսաստանի միջով:— 4. Վրաց-հայկական զորքերի կռիվները Անդրկովկաս գաղթած Ղփչաղների հետ.— Վրաստանի թուլացումը Գեորգի Լաշայի և Ռուսուդանի թագավորության ժամանակ.— կրոնական պառակտումը:— 5. Ջալալեդդինի իշխանության հաստատումը Ադրբեջանում:— 6. Հայ-վրացական զորքերի պարտությունը Գառնիի մոտ.— Հայաստանի աղետալի դրությունն այս պարտությունից հետո:— 7. Ջալալեդդինի հաջողության բանակցությունների անհաջողությունը.— Տփղիս քաղաքի գրավումը և բնակչության կոտորածը:— 8. Խվարեզմյան զորքերի 1226 թվի արշավանքները և Անիի, Կարսի, Մանազկերտի ու Խլաթի պաշարումը.— Տփղիսի ու Դվինի վերագրավումը և Ջալալեդդինին օգնող մահմեդական բնակչության կոտորածը:— 9. Մշո դաշտի, Տողատափի ու Ճապաղջրի ավերումը և Խլաթի առումը.— Ջալալեդդինի պարտությունը Երզնկայի շրջանում:— 10. Մոնղոլների արշավանքը Ադրբեջան Չարմաղանի առաջնորդությամբ:— 11. Ջալալեդդինի սպանվելը և մոնղոլների ավերածությունները հարավային Հայաստանում:— 12. Գանձակի առումը և ավերումը.— Չարմաղանի զորքի հեռացումը Աղվանքից:**

*13-րդ դարի առաջին քառորդում, երբ ազատագրված Հայաստանում սկսվել էր տնտեսական ու կուլտուրական մեծ վերելքի մի նոր շրջան՝ Արևմտյան Ասիան, ինչպես վերև ասացինք, նորից ենթարկվեց սոսկալի աղետի, որը գալիս էր դարձյալ Ասիայի խորքերից։ Այստեղ՝ Սիբիրի ու Չինաստանի միջև, այժմյան Մոնղոլիայում, վաղ ժամանակներից բնակվում էին բազմաթիվ վաչկատուն ու թափառակյաց ցեղեր, որոնք անվանվում էին մոնղոլ կամ թաթար։ XIII դարի սկզբներում այս ցեղերի ֆեոդալական իշխաններից ամենահզորը, Տեմուչինը, միացնելով սրանց իր իշխանության*

տակ՝ հիմք դրեց մոնղոլական միացյալ մեծ պետության և մոնղոլ ազնվականության մեծ ժողովում, որը կայացավ Օնոն գետի ափին՝ հայտարարվեց համամոնղոլական խաքան և անվանվեց Չինգիզ խան (1206 թ.)։

Մոնղոլական ցեղերի միապետ ընտրվելուց հետո Չինգիզ խանը, անցնելով Չինական պարիսպը՝ մոտ տասը տարվա ընթացքում նվաճեց հյուսիսային Չինաստանը։ Այնուհետև, 1217 թվին, նա հաղթեց արևմուտք փախած նայմանների թուրքական ցեղին, որն իրեն թշնամի էր, և առանց դժվարության գրավեց Կաշգարը և Արևելյան Թուրքաստանը։

Այստեղ արևմուտքում նրա հսկայական տերությունը սահմանակից դառավ Խվարեզմի Մուհամմեդ շահի մեծ պետությանը, որի իշխանության տակ գտնվում էին ամբողջ Անդրկասպյան երկիրը և Պարսկաստանի մեծագույն մասը։ Ամենակարճ ժամանակում, 1219—1221 թվերին, Չինգիզ խանը նվաճեց և այս պետությունը։

Նվաճելու ու բնաջնջելու մոլությամբ բռնված՝ մոնղոլական հրոսախմբերը, որոնց միացել էին նաև թուրքական ցեղեր, աղետալի ու մահաբեր բուք ու բորանի նման ներս էին խուժում Արևմտյան Ասիայի հարուստ երկրները և ամեն ինչ մատնում սրի, հրի ու ավերածության, կոտորելով ամենուրեք հարյուր հազարավոր անմեղ բնակչություն։

Մոնղոլների ներխուժումը Արևմտյան Ասիայի երկրները և նրանց սոսկալի ավերածությունները անասելի խոր տպավորություն էին թողել բոլոր տեղերում և, մանավանդ, մահմեդական երկրներում, որոնք ամենածանր հարվածներն էին ստացել նրանց արշավանքների ընթացքում։

Այդ տպավորությունը և ահ ու սարսափը պարզ արտահայտված է արաբական խոշոր պատմագիր Իբն ալ-Ասիրի վկայություններում, որը ժամանակակից էր Չինգիզ խանին և վերոհիշյալ անցքերին (Իբն ալ-Ասիրը ծնվել է 1160 թվին և վախճանվել է 1233 թվին)։

> «Իմ բարեկամներից շատերը,—ասում է Իբն ալ- Ասիրը,— համոզում էին ինձ տալ գրավոր կերպով տեղեկություններ թաթարական արշավանքի մասին։ Ես շարունակ տատանվում էի։ Բայց այժմ ես եկա այն եզրակացության, որ իմ լռությունը ոչ մի օգուտ չի բերի։ Սակայն զգուշացնում եմ, ես նկարագրելու եմ ամենասոսկալի դժբախտությունը և ամենամեծ աղետը, որի նմանը դեռ չեն տեսել երկրի վրա ոչ ցե-

*բեկը և ոչ գիշերը և որը պայթեց բոլոր ժողովուրդների գլխին ու, գլխավորապես, մուսուլմանների։ Եթե մեկը ասե, որ այն ժամանակից, երբ ամենափառավոր ու ամենաբարձյալն աստված ստեղծել էր Ադամին՝ աշխարհը երբեք չէ ենթարկվել մինչև այժմ նման փորձանքի,— նա ասած կլինի զուտ ճշմարտությունը։ Համաշխարհային տարեգրերում ո՛չ մի նման բան կամ մոտավոր կերպով նման անցք չէ հիշատակված։*

*Ամենասոսկալի աղետներից մեկը, որ պատմված է տարեգրություններում՝ համարվում է Նաբուգոդոնոսորի գործ դրած բռնությունը Իսրայելացիների վերաբերմամբ՝ նրանց ջարդը և Երուսաղեմի կործանումը։ Բայց ի՞նչ է Երուսաղեմը համեմատությամբ այն երկրների, որ ավերել էին այս անիծված թաթարները, ուր ամեն մի քաղաք երկու անգամ ավելի մեծ էր, քան Երուսաղեմը։ Ի՞նչ են Իսրայելացիները համեմատությամբ նրանց, որոնք այժմ մատնվեցին կոտորածի։ Չէ՞ որ բնակչությունը նույնիսկ որևէ մեկ քաղաքի, որ կոտորել էին թաթարները՝ ավելի էր թվով, քան ամբողջ Իսրայելյան ժողովուրդը։ Պետք է ենթադրել, որ մեր երկրի ժողովուրդներն այլևս չեն տեսնելու այսպիսի աղետ մինչև Գոգ և Մագոգի ժամանակները, երբ կլինի աշխարհի կոտորածը և վերջը։*

*Չէ՞ որ նույնիսկ Նեռը խնայելու է նրանց, որոնք կհետևեն իրեն և ոչնչացնելու է միայն նրանց, ով որ իրեն կդիմադրե.— իսկ թաթարները ոչ ոքին չէին խնայում՝ նրանք կոտորում էին և կանանց, և տղամարդկանց, և երեխաներին, կտրում էին հղի կանանց փորերը և մորթում չծնվածներին։ . . . . Ոչ ոք չէր քնում այն երկրում, որի վրա նրանք դեռևս չէին հարձակվել. ամեն ոք ահ ու սարսափով սպասում էր նրանց գալուն։ Իսկ թաթարները գնում էին առաջ առանց կարիք ունենալու հացի կամ այլ մթերքների։ Նրանք իրենց հետ տանում էին ոչխարներ, կովեր, ձիեր և զանազան այլ անասուններ և, որպես ուտելիք՝ գործ էին ածում միայն սրանց միսը։ Իսկ նրանց հեծնելու ձիերը, որոնց վրա նըստած էին՝ փորում էին իրենց սմբակներով գետինը ու ուտում բույսերի արմատները, և գարու մասին տեղեկություն չունեին։ Այսպիսով, մի որևէ տեղ դադար առնելիս՝ թաթարները ոչ մի ուրիշ բանի կարիք չունեին։ Բացի այդ, պետք է*

*նաև ասել, որ նրանց կրոնը ևս ... ոչ մի անթույլատրելի ուտելիք չէ ճանաչում, ուստի և թաթարները կարող էին ուտել և շների միս, և խոզերի, և ուրիշ նման կենդանիների»*[1]։

*1220 թվին Խվարեզմի շահ Մուհամմեդը, մոնղոլների ուժգին հարձակումներից սարսափած, փախավ երկչոտաբար իր պետության արևմտյան շրջանները և այստեղ, թաքնվելով Կասպից ծովի կղզիներից մեկում, հենց նույն 1220 թվի դեկտեմբեր ամսին հիվանդացավ և մեռավ։ Սրան հալածելու համար Ջինգիզ խանն արևմուտք էր ուղարկել իր առաջապահ զորքը Ջեբե նոյինի և Սուբատա բահատուրի*[2] *առաջնորդությամբ։ Այս զորքը, որ անկարող էր այլևս կատարել Ջինգիզ խանի հանձնարարությունը, թույլտվություն ստանալով նրանից՝ Հյուսիսային Պարսկաստանից Ատրպատականի վրայով մտավ Անդրկովկաս։*

*Ահա այս առաջապահ զորաբանակն էր, թվով մոտ 20.000, որն առաջին անգամ մտավ Աղվանք ո՛չ թե գալով Դերբենդի կողմից. ինչպես, հիմնվելով Կիրակոս Գանձակեցու սխալ վկայության վրա՝ թյուրիմացաբար ենթադրել է Չամչյանը, այլ Թավրիզի կողմերից ու Մուղանի վրայով, ինչպես այդ հանգամանորեն վկայում է Իբն ալ-Ասիրը*[3]։

*Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ մոնղոլները բանակ էին դրել Աղվանքում Բեղամեջ կոչվող ամուր տեղերում, որոնք գտնվում էին Պարտավ և Բայլական քաղաքների միջև*[4]։ *Այստեղից նրանք հանդուգն կերպով հարձակվում ու ավերում էին շրջակա գավառները։*

*Նրանց թռուցիկ ջոկատները ասպատակում էին ո՛չ միայն Առան-Աղվանքի այն երկրամասերը, որոնք գտնվում էին այդ ժամանակ Մուհամմեդ Փահլավանի որդու Ուզբեկի իշխանության տակ,*

---

[1] *Տե՛ս А. Крымский.* История Персии, ее литературы и дервишской теософии т. III, № 1—2. М., 1914—17, *էջ 1—3։ Համեմատե նաև Ибн ал-Асир,* из Тарих ал-Камиль, Баку, 1940, *էջ 134—136։*

[2] *«Նոյին» էին անվանվում մոնղոլական ազնվական տոհմերի առաջնորդները։ Իբրև մոնղոլական քոչվորական ֆեոդալիզմի տերմին «նոյին»-ը համապատասխանում է հայկական «տեր» և միջնադարյան Եվրոպայի «սենյոր» տերմիններին։ Իսկ «բահատուր», որից ծագել է ռուսերեն* богатырь *բառը, նշանակում է կտրիճ. տե՛ս Владимирцов,* Общественный строй монголов. Л., 1934, *էջ 74—75 ևն։*

[3] *Տե՛ս Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 201.* Կիրակոս Գանձակեցի, *էջ 190. Ибн ал-Асир, ռուս. թարգմ.* ժուզեի, *էջ 137։*

[4] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 191։*

այլև Զաքարյանների Վահրամյան ճյուղի գավառները և մինչևիսկ Տփղիսի մոտակա շրջանները[1]։

Ինչպես պատմում է Կիրակոս Գանձակեցին, մոնղոլական այս զորքը.

«Գալով Աղվանից աշխարհը և անցնելով Հայոց և Վրաց երկրները, ինչ որ ճանապարհին գտնում էր՝ ամեն ինչ սրի էր անցկացնում— թե մարդ և թե անասուն, մինչևիսկ շներին. մեծագին հագուստեղենը և այլ գույքերը նրանց չէին հետաքրքրում, բացի միայն ձիերից։ Շուտով նրանք հասան մինչև Տփղիս քաղաքը, բայց նորից վերադարձան Աղվանից աշխարհը՝ Շամքոր քաղաքի շրջանները։ Նրանց մասին սուտ լուր էր պտտում, որ իբր թե մոգեր են և հավատով քրիստոնյաներ ու հրաշագործներ և եկել են քրիստոնյաների համար տաճիկների պատճառած բռնության վրեժն առնելու.... և այսպես սուտ լուրը տարածվեց այս երկրում ու այդ պատճառով երկրի բնակիչները չամրացան։ Նույնիսկ մի աշխարհական երեց, վերցնելով իր ժողովուրդը, խաչ ու խաչվառով գնաց նրանց ընդառաջ։ Եվ նրանք կոտորեցին բոլորին՝ սրի անցկացնելով։ Այսպիսով նրանք կոտորեցին շատերին, որոնց անփույթ վիճակում էին գտնում, և ավերեցին բազմաթիվ տեղեր»

[«Եւ եկեալ յաշխարհն Աղուանից, գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց, և զոր ինչ գտանէր ի ճանապարհին՝ զամենեսեան սրոյ ճարակ տայր՝ զմարդ և զանասուն, մինչև ի շունս անգամ, և մեծագին հանդերձից և այլ ընչից փոյթ ինչ ո՛չ առնէին, բա՛ց ի ձիոյ. և փոյթ ընդ փոյթ չոգան մինչև ի քաղաքն Տփղիս, և դարձեալ եկին իջին յաշխարհն Աղուանից, ի սահմանս Շամքոք(?) քաղաքիս. և համբաւ ստութեան գայր զնոցանէ. թէ մոգք են և քրիստոնեայ հաւատովք, և նշանագործք, և եկեալ են ի վրէժխնդրութիւն քրիստոնէից որ ի բռնութենէն տաճկաց . . . . . . . . և այսպէս համբաւով ստութեան լցաւ աշխարհս. վասն այսորիկ ո՛չ ամրացան բնակիչք աշխարհին, մինչև երէց մի աշխարհական, առեալ զժողովուրդ իւր, և խաչիւք վարելովք ընթացաւ ընդ առաջ նոցա. եւ նոցա սուր ի վերայ եդեալ՝ կոտորեցին առ

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 190. Վարդան վրդ., գլ. ՁԴ, էջ 142 և Ибн ал-Асир, թարգմ. Ժուզեի, էջ 138 [XII, 154]։

հասարակ. և այսպէս անհոգս գտեալ զբազումս՝ կոտորեցին և աւերեցին զյոլով տեղիս»][1]։

Մոնղոլական զորքերի մուտքը Անդրկովկաս պետք է ենթադրել 1220 թվի ձմեռը, հավանորեն, դեկտեմբեր ամսին։ Ձմեռվա սկըզբին նրանք գտնվում էին, ինչպես երևում է Իբն ալ-Ասիրի և Ռաշիդ-եդդինի վկայություններից, Համադանի շրջանում[2]։ Բայց որովհետև 1220 թվի ձմեռը չափազանց ցուրտ էր՝ նրանք Ադրբեջանի վրայով եկել էին Մուղան և Առան, որպեսզի ձմեռն անցկացնեն այս տաք երկրներում, ուր կային նաև արոտավայրեր նրանց ձիերի համար։

Երբ նրանք արդեն մոտեցել էին Տփղիսի շրջանին՝ նրանց դեմ դուրս ելան Վրաց և Հայոց զորքերը Գեորգի Լաշայի առաջնորդությամբ։ Հանդիպելով թշնամու առաջավոր ջոկատներին Խունան դաշտում, որը գտնվում է Խրամի գետաբերանի արևելակողմում՝ Վրաստանի զորքերը թշնամիներին սկզբում ի փախուստ դարձրին և հալածեցին։ Բայց մոնղոլական զորքի մի մասը, որը դարան էր մտել՝ հանկարծակի նրանց վրա հարձակվեց թիկունքից և Ջեբեի ու Սուբատայի զորքերը շրջապատեցին նրանց և մատնեցին կատարյալ պարտության։ Կովի դաշտից հազիվ հազ կարողացել էին փախչել Վրաց թագավորը, Իվանե աթաբեկը և մյուս մեծամեծները։ Վարդան վարդապետի ասելով, միայն Վահրամ Գագեցին, Զաքարյան Վահրամի թոռը, տեղեկություն չունենալով սրանց պարտության մասին՝ մեծ քաջությամբ հալածել ու կոտորել էր թշնամուն և հասել մինչև Գարդման գավառը[3]։

Վրաց-հայկական զորքերի պարտության տեղը Վարդան վարդապետի մոտ ցույց է տրված «առ գետովն Կոտմանայ», Մխիթար Այրիվանցու մոտ՝ «ի Կոտմայ», իսկ Մաղաքիա աբեղայի մոտ՝ «ի դաշտն մեծ, որ կոչի Կոտման, որ կայ առաջի Տէրունական բերդին»[4]։ Այս Կոտման գետը ո՞չ թե Ջևանշիր գավառի հյուսիսակողմում գտնվող Գուրան չայն է, ինչպես այդ ենթադրել են Բրոսսեն և

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 190—191։

[2] Տե՛ս *Ибн ал-Асир*, ռուս. թարգմ. ժուզեի, էջ 137 (XII, 154) և *Тизенгаузен*, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, М.—Л., 1941, էջ 31։

[3] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՁԴ, էջ 142։ Համեմատե նաև այս ճակատամարտի մասին Քարթլիս-ցխովրեբայի Անանուն հեղինակի վկայությունները՝ Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 51։

[4] Նույնը, էջ 142. Մխիթար Այրիվանեցի (Մոսկվայի հրատակ.), էջ 65 և Մաղաքիա աբեղա (Ք. Պ-ի հրատ.), էջ 9։

Պատկանյանը, այլ, հավանորեն, այժմյան Թոուզ գետն է, որի ձախ կողմում Օքսուզլու գյուղի մոտ գտնվում էր Մ. Բարխուտարյանցի կարծիքով Տերունական բերդը[1]։

Վերոհիշյալ ճակատամարտի թվականը որոշվում է հաստատուն կերպով բաղդատությամբ հայ և օտար աղբյուրների վկայություններին։ Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը մոնղոլների գալը Առան դնում են Հայոց 669 թվին [=26 հունվ. 1220—25 հունվ. 1221], իսկ Իբն ալ-Ասիրի վկայությամբ՝ ճակատամարտը տեղի էր ունեցել Հեջիրի 617 թվի զուլկադա ամսին [=28 դեկտ. 1220—26 հունվ. 1221][2]։ Դժվար չէ, ուրեմն, եզրակացնել, որ ճակատամարտը Կոտմանի մոտ պետք է ենթադրել 1220/1221 թվի ձմեռը, հավանորեն, 1221 թվի հունվար ամսին։

Այս ճակատամարտից հետո Ջեբեի և Սուբաթայի զորքերը 1221 թվի ամբողջ ձմեռը մնացին Առանում, իսկ գարնան սկզբին վերադարձան Ադրբեջան և այստեղ նորից հրի ու սրի ճարակ դարձրին գյուղերն ու քաղաքները։ Իբն ալ-Ասիրի և Ռաշիդեդդինի վկայությամբ՝ 1221 թվի գարնան ու ամռան ընթացքում նրանք վերցրել և սրի ու ավերածության էին մատնել այս կողմերի հարուստ քաղաքները՝ Մարաղան, Համադանը, Նախիջևանը, Սարաբը և Արդաբիլը։ Վերադառնալով այնուհետև նորից Առվանք՝ Հեջիրի 618 թվի ռաջաբ ամսին [=21 օգոստոս.—19 սեպ. 1221 թ.] նրանք իսպառ ավերել էին նաև Բայլական քաղաքը և կոտորել նրա ամբողջ բնակչությունը՝ ո՛չ միայն տղամարդկանց, այլև կանանց և երեխաներին[3]։

Իբն ալ-Ասիրի մոտ Բայլականի ավերումից հետո հիշատակված է Ջեբեի և Սուբաթայի նոր արշավանքը Վրաստան և վրացհայկական զորքերի նոր պարտությունը և փախուստը[4], սակայն այդ մասին հայկական աղբյուրների մեջ չկան տեղեկություններ։ Ընդհակառակը, Վարդան վարդապետը վկայում է, որ թեև մոնղոլ-

---

[1] Տե՛ս Բրոսսեի Մխիթար Այրիվանեցու ֆրանսերեն թարգմանությունը, էջ 105 և Պատկանյանի Մաղաքիա աբեղայի ռուսերեն թարգմանությունը, ծան. 8։ Պատկանյանը այս սխալը ուղղել է իր մյուս աշխատության մեջ. տե՛ս «История монголов», I, էջ 70։ Համեմատե նաև Բարխուտարյանց. Արցախ. էջ 358 և 435։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 190. Վարդան վրդ., էջ 142. Ибн ал-Асир, թարգմ. Ժուզեի, էջ 138։

[3] Տե՛ս Ибн ал-Асир, թարգմ. Ժուզեի, էջ 139—140 և Ռաշիդեդդինի վկայությունները, որ մեջ են բերված Տիզենգաուզենի ժողովածուում «Сборник материалов», II, էջ 32։

[4] Նույնը, էջ 140 (XII, 158—159)։

ները կամեցել էին նորից արշավել Վրաստան, սակայն իմանալով որ վրացիներն ու հայերը լավ նախապատրաստված են կռվի՝ չհամարձակվեցին գալ և հեռացան[1]։

1221 թվի աշնանը մոնղոլական զորաբանակը մտավ Աղվանքից Շիրվան և, պաշարելով ու վերցնելով այստեղ Շամախի քաղաքը՝ սրա բնակչությունը ևս մատնեց սրի ու կողոպուտի։ Այստեղից նա Շիրվանի նեղ կիրճերով,—և ո՛չ Դերբենդի անցքով, ինչպես ոմանք ենթադրում են,— անցավ Հյուսիսային Կովկաս և ավերեց այստեղ ալանների և ղփչաղների երկրները։ Ինչպես հայտնի է, Ջեբեի ու Սուբաթայի նույն այս զորքերն էին, որ 1223 թվին ջարդեցին ռուսների և ղփչաղների միացյալ ուժերը Կալկայի մեծ ճակատամարտում։

Այնուհետև, 1223 թվին, մոտ երեք տարվա արշավանքներից հետո, սրանք վերադարձան Արևելք Չինգիզ խանի մոտ, հավաքած լինելով կարևոր տեղեկություններ արևմտյան այն երկրների մասին, որ իրենք նվաճելու էին մոտ ապագայում։

Մոնղոլների ներխուժման ժամանակ ղփչաղների երկիրը՝ սրանց մի ստվար մասը հարկադրված եղավ գաղթել Անդրկովկաս և այստեղ կողոպուտի մատնեց Շիրվանը և, գլխավորապես, Կապաղակ քաղաքի շրջանները, որը գտնվում էր Շամախու ու Եվլախի միջև[2], և հասավ մինչև Գանձակի կողմերը։ Գանձակեցիները սրանց բնակության տեղ տվին քաղաքի մոտ և պահեցին իբրև վարձկան զորք Վրաստանի հարձակումներից պաշտպանվելու համար։

1222 թվին Իվանե աթաբեկը մեծ ինքնավստահությամբ արշավեց Գանձակ և ուզեց պատժել այս քաղաքը, բայց ծանր պարտություն կրեց[3]։ Ղփչաղները Գանձակի մոտ անակնկալ կերպով հարձակվեցին երթից հոգնած նրա զորքերի վրա՝ մեծ ջարդ տվին և շատերին գերի վերցրին։ Այս պատերազմում, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, սպանվել էր Վասակ Խաղբակյանի որդին Պապաքը և գերի էր ընկել Վասակի եղբայրը՝ Գրիգորը։ Վերջինս ծանր տանջանքների ենթարկվեց և նահատակվեց, որովհետև հանձն չէր առել ուրանալ քրիստոնեությունը[4]։

---

[1] Տե՛ս Վարդան վրդ., էջ 142։

[2] Մինորսկու կարծիքով՝ Կապաղակի ավերակները գտնվում են Դուրիան-չայ գետի ափին. Եվլախից մոտ 35—40 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք. տե՛ս *Minorsky*, Hudud al'Alam, London, 1937, էջ 399 և 402։

[3] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 192—194։ Վարդան վրդ., գլ. ՁԴ, էջ 142—143. Մխիթար Այրիվանեցի, էջ 65. *Ибн ал-Асир*. Թարգմ. Ժուզեի, էջ 147։

[4] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 194 և Վարդան վրդ., էջ 143։

1222 թվի պարտության վրեժը վրաց-հայկական զորքերը ղփչաղներից առան և նրանց սրի անցկացրին կամ գերի վերցրին 1223 թվին Վարդանաշատի շրջանում[1], որը գտնվում էր Մուղանի տափաստանի մոտ Արաքս գետի աջ ափին՝ այժմյան Ալտան բերդի ավերակների տեղում[2]։

Աղբյուրների վկայություններից երևում է, որ Վրաստանի զորքերի արշավանքները Թուրքական, նաև այլ ամիրայությունների դեմ պարբերաբար շարունակվել էին նաև ամիրսպասալար Զաքարեի մահից հետո՝ գլխավորապես, Գեորգի Լաշայի (1213—1223) և Իվանե աթաբեկի առաջնորդությամբ։

Իբն ալ-Ասիրի մոտ հիշատակված են, օրինակ, վրաց-հայկական զորքերի 1222 թվի արշավանքը Բայլական, նրանց 1223 թվի հարձակումը Սուրմարի գավառի վրա և ծանր պարտությունը, 1225 թվի անհաջող ճակատամարտը Գանձակի մոտ և նույն թվի պարտությունը Ատրպատականում[3]։

Ուշագրավ է, որ Վրաստանի արշավանքները վերջանում էին այժմ, մեծ մասամբ, նրա զորքերի պարտությամբ։

Դրա պատճառը անշուշտ այն էր, որ Վրաստանն այդ ժամանակ արդեն կորցրել էր իր նախկին հզորությունը։ Ինչպես վկայում է Քարթլիս-ցխովրեբան, Թամարի հաջորդ Գեորգի Լաշան իր անբարոյական կենցաղով ու հարբեցողությամբ գրգռել էր իր դեմ Վրաստանի իշխաններին, որոնց մեջ նաև Իվանե աթաբեկին և Վահրամ Գագեցուն[4]։

Գեորգի Լաշան վախճանվեց Բագավանում 1223 թվի հունվար ամսի 18-ին չորեքշաբթի օրը[5]։ Նրան հաջորդեց իր քույրը Ռուսուդանը (1223—1247), որն ամուսնացավ սելջուկյան խլիճ Ասլան Բ-ի թոռան՝ Էրզրումի ամիրա Տուղրուլ շահի մեծ որդու հետ, որն ընդունել էր քրիստոնեություն[6]։ Իբն ալ-Ասիրի վկայությունից երևում է, որ Ռուսուդանը ևս անբարոյական կյանք էր վարում և իր դեմ հարուցել էր իշխող բարձր ազնվականության դժգոհությունը[7]։

---

[1] Նույնը, էջ 195 և Վարդան վրդ., էջ 143։

[2] Տե՛ս Minorsky, Hudud al'Alam, էջ 395։

[3] Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգ. ժուզնի, էջ 148—153 (XII, 169, 170—171, 175, 176—7)։

[4] Տե՛ս Մեյիֆսեր-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 50—51։

[5] Թվականը ճշտիվ որոշվում է 1223 թվին (և ո՛չ 1222-ին, ինչպես ոմանք ենթադրում են), որովհետև մատնանշված են մահվան ամիսը, ամսաթիվը և օրը։

[6] Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժուզնի, էջ 150—151 (XII, 171—2)։ Համեմատե նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 224։

[7] Նույնը, էջ 150։

Պետք է ասել, որ զգալի չափով վատացել էին այս ժամանակ, ամիրսպասալար Զաքարեի մահից հետո (1212 թ.), նաև հայ-վրացական հարաբերությունները շնորհիվ եկեղեցական բաժանման և կրոնական պառակտումների ու անհաշտության։ Ինչպես երևում է հայ աղբյուրների վկայություններից, Իվանեն իր կնոջ խոշաքի հետ քաղկեդոնական էին դարձրել մի քանի հին հայկական վանքեր և վրացադավան էին դարձրել Զաքարեի փոքրահասակ Շահնշահ որդուն[1]։ Իվանեն նաև սպառնացել էր, ըստ երևույթին, որ բռնի կերպով կստիպի բոլոր հայերին ընդունել վրաց եկեղեցու դավանությունը[2]։

Իվանեի բռնած այս դիրքը հայ եկեղեցու հանդեպ, անշուշտ, մի մեծ սխալ էր, որովհետև նրա կրոնական անհամբերատարությունը դժգոհություն ու պառակտում էր առաջացնում հայերի մեջ, որոնք վրացիների հետ միացած պետք է պաշտպանեին Հայաստանն ու Վրաստանը արտաքին ահեղ թշնամիներից։

Մոնղոլների 1220—1223 թվերի վերոհիշյալ արշավանքը նախերգանքն էր նոր և ավելի աղետալի փորձանքների, որոնց ենթարկվելու էին Վրաստանն ու Հայաստանը և սրանց հարևան երկրները։

Խվարեզմի Մուհամմեդ շահի մահից հետո՝ նրա որդին ու հաջորդը Ջալալեդդինը (1220—1231), որը փախել էր Հնդկաստան, եկավ այնտեղից Պարսկաստանի հարավային շրջանները, որոնք չէին ավերվել մոնղոլական հարձակումների ժամանակ, և 1225 թվի սկզբներին նվաճեց այստեղ, Ֆարսի աթաբեկի օգնությամբ, Խուժաստանի մի մասը, որը հարևան էր Միջագետքին, և ապա նաև Ադրբեջանը, որի Ելտկուզյան տոհմի իշխան՝ աթաբեկ Ուզբեկը, չկարողանալով նրան դիմադրել՝ փախավ Գանձակ։ Ադրբեջանի աթաբեկների աթոռանիստ քաղաքն էր այս ժամանակ Թավրիզը, որը Ջալալեդդինը, ինչպես վկայում է Իբն ալ-Ասիրը[3], գրավել էր Հեջիրի 622 թվի ռաջաբ ամսի 17-ին [=1225 թվի հուլիսի 25-ին]։

Ջալալեդդինի մեծ ու անհաշտ թշնամին մոնղոլներն էին, որոնք չէին կարող հանդուրժել Խվարեզմի շահերի ուժեղացումը, ուստի և Մուհամմեդ շահի այս հաջորդը պետք է, բնականաբար, աշխատեր հիմնել ըստ կարելույն շուտ մի հզոր պետություն Պարսկաստանի արևմուտքում, հավաքել մի նոր մեծ բանակ և, կասեցնելով մոնղոլական զորքերի առաջխաղացումը՝ վերականգ-

[1] Կիրակոս Գանձակեցի, էջ 210, 225. Վարդան վրդ., էջ 140 և ուրիշ.։

[2] Նույնը, էջ 211. Միխայել Ասորի (Երուսաղեմ, 1871), էջ 519—520։

[3] Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժուզեի, էջ 155 (XII, 178)։

նել իր տոհմի նախկին հզորությունը։ Վճռականությունը և արագությունը հիմնական նախապայմաններն էին սրա նախաձեռնած գործի հաջողության։

Ինչպես երևում է Իբն ալ-Ասիրի վկայություններից, որը ժամանակակից էր այս անցքերին, Ջալալեդդինը ամենակարճ ժամանակում նվաճել էր Ադրբեջանի հյուսիսային շրջանները և իսկույնևեթ այստեղից արշավել էր Հայաստան։ 1225 թվի օգոստոս ամսին, Թավրիզը վերցնելուց մոտ մի ամիս հետո, նա արդեն գրավել էր նաև Դվին քաղաքը[1]։

Այստեղ նրա դեմ դուրս եկան հայ-վրացական միացյալ զորքերը Իվանե աթաբեկի առաջնորդությամբ և տեղի ունեցավ մեծ ճակատամարտ Գառնիի մոտ Հեջիրի 622 թվի շաբան ամսին, այսինքն՝ 1225 թվի օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին։ Այս ճակատամարտում, որ մանրամասն նկարագրված է հայ և օտար աղբյուրներում[2] Ջալալեդդինը հաղթող հանդիսացավ և Իվանեի զորքերը մեծ կորուստներ կրեցին ու դիմեցին փախուստի։ Ինքը Իվանեն հազիվհազ կարողացել էր փախչել և պատսպարվել «Գեղէ» կամ «Քեղէ» ամրոցում։

Այս պարտությունից հետո, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը.—

«Անհնարին աղետներով և զանազան դժբախտություններով ապականվեց այս ամբողջ երկիրը. որովհետև խվարեզմցիները, տեսնելով որ այս երկիրն անտեր-անտիրական է՝ անխնա կոտորեցին և գերեցին բոլորին ու հրդեհեցին քաղաքների, գյուղերի և վանքերի բոլոր շենքերն ու տները։ Նրանք այրեցին նաև մեր բոլոր վաստակը և կտրեցին այգիներն ու ծառերը, և այդ պատճառով ամեն տեղ տարածվեց սաստիկ սով։ . . . . . . . . Եվ ահա այս պատուհասը տեր եղավ մեր աշխարհին յոթը տարի»։

[«Իսկ զկնի այսր անհնարին պատուհասիւք և զանազան դիպուածովք ապականեալ եղև աշխարհս ամենայն. զի գտեալ խորազմիկքն զաշխարհս անտէրունչ՝ անխնայ կո-

---

[1] Նույնը, էջ 155—156 (XII, 179)։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 211—213. Վարդան վրդ., էջ 143. Ստեփանոս Օրբելյան. գլ. ԿԶ, էջ 399. Նույնի ժամանակագրությունը, էջ 24, Միխայել Ասորի (Երուսաղեմի հրտ.), էջ 520—522. Մխիթար Այրիվանեցի, էջ 65—66. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 52. Ибн ал-Асир, էջ 156—157 (XII, 179)։

*տորեցին և գերեցին և հրդեհեցին զամենայն շինուածս տանց և յարկաց քաղաքաց, գիւղից և վանորէից. այրեցին և զվաստակս ամենայն, և հարին զայգիս և զծառս. վասն որոյ սով սաստիկ տիրեաց առ հասարակ . . . . . . . . . . . .*

*Եւ ահա այս պատուհաս տիրէ աշխարհիս ամս 7»]*[1]։

*Գառնիի մոտ տարած հաղթությունից հետո Խվարեզմի շահը, ինչպես վկայում է Վրաց ժամանակագրությունը, փորձել էր համաձայնության գալ Վրաստանի հետ և ուզեցել էր դադարեցնել կռիվը նրա դեմ։ Եվ իրավի, նրան բնավ ձեռնտու չէր ջլատել և ուժասպառ անել իր զորական ուժերը Անդրկովկասում, երբ իրեն սպառնում էին արևելքից Չինգիզ խանի վայրագ ու անողոք հրոսակները։*

*Վրաց ժամանակագրության վկայությամբ՝ Ջալալեդդինը տեսակցություն ունեցավ Բջնիի ձորում Իվանեի որդու Ավագի հետ և հայտնեց սրան, որ ինքը եկել է ո՛չ թե Վրաստանը ավերելու, այլ նրա հետ հաշտություն և խաղաղություն կնքելու։ Ավագը զեկուցեց այդ մասին թագուհուն և մեծամեծներին, բայց նրանք որոշեցին մերժել հաշտության առաջարկը*[2]։ *Վրաստանը, ինչպես տեսնում ենք, բնավ չէր գիտակցում մոնղոլական վտանգը, որը Դամոկլյան սրի նման կախված էր և սպառնում էր նաև իր գլխին։*

*Այս անհաջող բանակցություններից հետո Ջալալեդդինի զորքերը նվաճեցին Գանձակը և այստեղից Գագի դաշտավայրերի կողմով արշավեցին Տփղիսի շրջանը և, պարտության մատնելով վրացական միացյալ ուժերը, 1226 թվի գարնան սկզբին գրավեցին Տփղիս քաղաքը*[3]։

*Տփղիսի մոտ տեղի ունեցած ճակատամարտը և Տփղիսի առումը ու սոսկալի ավերումը նկարագրել է Իբն ալ-Ասիրը։*

> *«Մոտենալով նրան [Տփղիսին],—ասում է Իբն ալ-Ասիրը,— նա [Ջալալեդդինը] իր հետ եղած զորքի մեծագույն մասը մի քանի տեղում դարան մտցրեց և ապա առաջ շարժվեց դեպի քաղաք, գլուխ անցնելով մոտ երեք հազար ձիավորի։ Քաղաքում գտնվող վրացիները, տեսնելով նրան՝ ոգի առան, որովհետև նրա հետ եղած մարդկանց թիվը շատ չէր։*

---

1 Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, գլ. ԿՁ, էջ 400։

2 Տե՛ս Մելիքսեթ–Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 53։

3 Տե՛ս Վարդան վրդ., գլ. Ձb, էջ 143. Ибн ал-Асир, ռուս. թարգմ. Ժուզեի, էջ 158—159. Մելիքսեթ–Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 53. Միխայել Ասորի, էջ 523 և ուրիշ.։

Տեղեկություն չունենալով մյուս զորքի մասին՝ նրանք դուրս եկան քաղաքից և մարտնչեցին նրա հետ, սակայն սա ետ քաշվեց։

Այդ նրանց ավելի ևս քաջալերեց, որովհետև կարծեցին, որ փախչում է, ուստի և հետապնդեցին նրան։ Սակայն երբ նրանք գտնվում էին նահանջող ու դարան մտած զորքերի մեջտեղում՝ վերջինները դուրս եկան նրանց դեմ և սկսեցին կոտորել։ Վրաց զորքի մեծ մասը սպանվեց, իսկ մնացածները փախան և ներս մտան քաղաք, հետապնդվելով մուսուլմաններից։

Բայց հենց որ սրանք մտան քաղաք՝ սրա մուսուլման բնակիչները բղավեցին մուսուլմանական ազդակոչը[1] և Ջալալեդդինի անունը, իսկ վրացիները վհատվեցին ու անձնատուր եղան,— նրանց զորքերի մեծագույն մասը սպանվել էին նախորդ ճակատամարտում և այդ պատճառով նրանց թիվը պակասել էր և նրանց սրտերին տիրել էին վախը և սարսափը։

Մուսուլմանները քաղաքը գրավեցին ուժով և առանց «աման»-ի, ուստի և նրանք կոտորեցին քաղաքում գտնվող բոլոր վրացիներին, չխնայելով ո՛չ հասակավորներին, ո՛չ էլ երեխաներին, բացի նրանց, ովքեր ընդունեցին իսլամը և արտասանեցին [Ղորանի] վկայության երկու խոսքը[2]։ Սրանք խնայվեցին և Ջալալեդդինը հրամայեց նրանց թլպատել ու ձեռք չտալ։

Մուսուլմանները կողոպտեցին բնակչության գույքը, գերի վերցրին կանանց և դարձրին երեխաներին ստրուկ։ Փոքր-ինչ տուժեցին և քաղաքում ապրող մուսուլմանները՝ ոմանք սպանվեցին, ոմանք էլ, կողոպտվեցին»[3]։

Տփղիսում Ջալալեդդինը թողեց իր Շարաֆ ալ-Մուլք վեզիրին, և ինքը գնաց Պարսկաստան։ Բայց շուտով խվարեզմյան զորքը, ինչպես վկայում է դարձյալ Իբն ալ-Ասիրը[4], ունեցավ Տփղիսում պարենավորման պակասություն։ Ուստի և Շարաֆ ալ-Մուլքը այստեղից արշավեց Էրզրումի շրջանը և վերցրեց այնտեղ մեծ ավար ու գերիներ։

---

[1] «Ալլահը մեծ է»։

[2] «Չկա ուրիշ աստված բացի Ալլահից և Մուհամմեդը նրա մարգարեն է»։

[3] Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժուզեի, էջ 159—160։

[4] Նույնը, էջ 161—162 (XII, 188)։

*Վերադարձին, երբ արշավող այս զորքը անցնում էր Խլաթի ամիրայության սահմանների մոտով՝ Էյուբյան Աշրաֆի հեծուցը պարտության մատնեց սրանց և խլեց ամբողջ ավարը։ Լուր ստանալով այս մասին՝ Ջալալեդդինը վերադարձավ Անդրկովկաս (Հեջիրի 623 թվի ռամադան ամսին (=26 օգոստ.—24 սեպտ. 1226 թ.)։*

*1226 թվի աշնանը Ջալալեդդինը պաշարեց և փորձեց նվաճել Անին և Կարսը, բայց հաջողություն չունեցավ։ Այնուհետև նա ասպատակեց և ավերածության մատնեց Աբխազիան ու այնտեղից արագ երթով գնաց Խլաթի ամիրայության կողմերը և 1226 թվի աշնան վերջերին պաշարեց Մանազկերտը և Խլաթը։ Բայց այստեղ Աշրաֆի կուսակալը նրան ցույց տվեց ուժեղ դիմադրություն և Ջալալեդդինը, որը մեծ կորուստներ էր կրել, ստիպված եղավ հեռանալ և վերադարձավ Ադրբեջան*[1]*։*

*Ջալալեդդինի իշխանության գլխավոր հենարաններն էին Անդրկովկասում Տփղիսը, Գանձակը ու Դվինը և այնտեղից էին նրա թուրքական զորքերը ասպատակում, կողոպտում և ավերում Վրաստանն ու Հայաստանը։ Ուստի և հայ-վրացական կենդանի մնացած զորական ուժերը, որոնք պատսպարվել էին իրենց երկրների պարսպապատ քաղաքներում և ամրացրած այլ տեղերում, իրենց ժողովուրդներին պաշտպանելու և կոտորածից ու արհավիրքներից փրկելու համար՝ պետք է թշնամուն ջախջախեին ամենից առաջ այդ հենակայաններում։*

*Քաջալերված Ջալալեդդինի անհաջողություններից Անիի, Կարսի և Մանազկերտի ու Խլաթի մոտ՝ սրանք Հեջիրի 624 թվի ռաբի I ամսին [=19 փետր.—20 մարտ 1227] եկան Անիից, Կարսից և այլ ամրացրած տեղերից դեպի Տփղիս և, գրավելով քաղաքը, կոտորեցին այստեղ մահմեդականներին, որոնց օգնությամբ Ջալալեդդինը կարողացել էր նվաճել Տփղիսը։ Այնուհետև նրանք, ինչպես վկայում են Իբն ալ-Ասիրը և Միխայել Ասորու ժամանակագրության շարունակողը*[2]*, քաղաքն ավերելուց և հրդեհելուց հետո՝ վերադարձան նորից իրենց տեղերը։*

*Մոտավորապես նույն այս ժամանակ, հավանորեն, 1227 կամ 1228 թվին, Վասակ Խաղբակյանի որդին, մեծ իշխան Պռոշը, մտնելով Դվին, կոտորել էր նույնպես այստեղ եղած խվարեզմյան զորքը և տեղական այն մահմեդականներին, որոնք 1225 թվին*

[1] *Նույնը, էջ 162—163 (XII, 190—191)։*

[2] *Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժուզեի, էջ 164—165 (XII, 193—194) և Միխայել Ասորի (1871), էջ 523։*

*օգնել և աջակցել էին Ջալալեդդինին և սրի էին անցկացրել քաղաքում ապրող քրիստոնյաներին*[1]*։*

*Վրաց և Հայոց զորքերի 1227 և 1228 թվերի հաջողությունները բացատրվում են, գլխավորապես, նրանով, որ այս թվերին Ջալալեդդինը կռիվներ էր մղում Ադրբեջանում և Պարսկաստանում։ 1227 թվին նա ճնշում էր թուրքմենների ապստամբությունը, որոնք Ուրմիայի, Խոյի ու Թավրիզի շրջաններում ավերածության էին մատնում երկիրը և, խանգարելով հաղորդակցությունը, կողոպտում էին վաճառականներին։ Նույն այս թվին նա կռվում էր նաև Իսմայիլիտ աղանդավորների՝ մուլհիտների դեմ, որոնց ուղարկած ֆիդայները սպանել էին Գանձակում նրա կուսակալին։*

*Իսկ 1228 թվին նա պատերազմ էր մղում Ռեյ և Ասպահան քաղաքների կողմերում մոնղոլական հրոսակների դեմ։ Միայն սրանց հաղթելուց հետո նա վերադարձավ Ադրբեջան և սկսեց իր մեծ արշավանքը Էյուբյան Աշրաֆի դեմ, որի Խլաթի կուսակալը 1227 թվի աշնանը արշավել էր Ադրբեջան և գրավել էր Խոյը, Մարանդը և Նախիջևանը*[2]*։*

*1228 թվի երկրորդ կեսում Ջալալեդդինը, գալով Խլաթի շրջանը, առաջ շարժվեց այստեղից Մշո դաշտը և Տողատափի ու Ճապաղջրի կողմերը և կողոպտեց ու ավերեց այս շրջանները ևս, կոտորեց տղամարդկանց և գերի տարավ կանանց ու երեխաներին։ Իսկ 1229 թվին նա նորից պաշարեց Խլաթը, որի մեջ գտնվում էին Էյուբյան Աշրաֆի զորքերը։ Այս պաշարումը տևեց երկար ամիսներ և քաղաքը նա կարողացավ վերցնել միայն 1230 թվի ապրիլ ամսին*[3]*։*

*Խլաթի պաշարման ժամանակ Ջալալեդդինին օգնել էր Իկոնիայի Ալադին սուլթանի հորեղբոր որդին, որն այդ ժամանակ Ջալալեդդինի աջակցությամբ տիրել էր Էրզրումին և ճանաչել վերջինիս գերիշխանությունը։ Ինչպես հաղորդում են Սմբատ սպարապետը և Անանուն ժամանակագրությունը, Էրզրումի ամբողջ երկիրը ու նաև պատմական Հայաստանի արևմտյան մասերը՝*

---

[1] *Տե՛ս* Մխիթար Այրիվանեցի, *էջ 66 և* Միխայել Ասորի, *էջ 522։*

[2] *Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ.* Ժուզեի, *էջ 163—167 (XII, 191 և 194—196)։ Համեմատ Мюллер,* История Ислама, III, *էջ 241—242։*

[3] *Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ.* Ժուզեի, *էջ 167—168 (XII, 198—199 և 201—202). «Ժամանակագրութիւն* Ստեփանոս Օրբելյանի», *էջ 24.* Սամուել Անեցի, *էջ 149 և ուրիշ.։*

Երզնկան, Կամախը և այլ շրջաններ Ալադինը (1219—1236) միացրել էր Իկոնիայի սուլթանությանը[1]։

1228 թվին Ջալալեդդինը, ինչպես տեսանք, ավերել էր Ալադինի նվաճած արևելյան երկրները։ Ուստի Իկոնիայի սուլթանը, համաձայնության գալով Էյուբյան Աշրաֆի և նրա եղբոր Քեմլի հետ՝ 1230 թվի ամառը Աշրաֆի հետ միասին ռազմի ելավ Ջալալեդդինի դեմ։ Կիրակոս Գանձակեցու ասելով՝ Ալադինի զորքի շարքերում կային օգնական զորամասեր Կիլիկիայի հայերի և ֆրանկների։

Խվարեզմի շահը շտապով առաջ շարժվեց դեպի արևմուտք և հանդիպեց նրանց Երզնկայի շրջանում։ Սակայն այս անգամ նա ծանր պարտություն կրեց և իր զորքի չնչին մնացորդներով նահանջեց Ատրպեջան և կանգ առավ Խոյ քաղաքի մոտ։ Աշրաֆն ու Ալադինը վերագրավեցին իրենց երկրները, իսկ վերջինիս հորեղբոր որդին, Էրզրումի ամիրան, ենթարկվեց մահապատժի[2]։

Այս պարտությունից հետո Ջալալեդդինի դրությունը արդեն անհուսալի էր։ 1231 թվին արևելքից ներս էր խուժել Ատրպեջան մոնղոլական մի մեծ զորաբանակ, որը նրան սպառնում էր թիկունքից։

1227 թվին մեռել էր Չինգիզ խանը և երկու տարի հետո 1229 թվին, մեծ խան էր ընտրվել իր ազգականների ու մոնղոլական բարձր ազնվականության մեծ ժողովում (ղուռուլթայում) նրա որդին՝ Ուգեդեյը, որին հայկական աղբյուրներն անվանում են «Հոքթա խաղան», «Հաւքաթա ղան» կամ «Հաւքօթաղան»[3]։ Ահա այս մեծ խանի հրամանով էր, որ 30.000 հեծելազորով արևմուտք եկավ Ջալալեդդինին վերջնականապես ընկճելու համար Չարմաղան նոյինը մի քանի այլ մեծամեծների հետ[4]։

Իմանալով, որ իրենց գլխավոր թշնամին Ջալալեդդինն է՝ Չարմաղանը եկավ ուղիղ Ատրպեջան, անտես առնելով այն մուսուլմանական զորքերը, որ գտնվում էին իր ճանապարհին Պարսկաստանի զանազան կողմերում։

---

[1] *Տե՛ս* Սմբատ սպարապետ, *Մոսկվա, 1856, էջ 109—110 և «Անանուն ժամանակագրություն», Երևան, 1940, էջ 20։*

[2] *Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժուզեի, էջ 169—170.* Կիրակոս Գանձակեցի, *էջ 215—217.* Սամուել Անեցի, *էջ 149—150.* Վարդան վրդ., *գլ. Չե, էջ 144. Անանուն ժամանակագրություն, էջ 20։*

[3] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 219.* Ստեփանոս Օրբելյան, *գլ. ԿԶ. էջ 401 և* Մխիթար Այրիվանեցի, *էջ 66։*

[4] *Տե՛ս Тизенгаузен,* Сборник материалов, II, *էջ 21 և 34։*

Ջալալեդդինը, որն իր թիկունքն ապահովելու համար Աշրաֆի ու Ալադդինի հետ շտապ կերպով հաշտության դաշն էր կնքել՝ չկարողացավ ժողովել մեծ զորք ու նրանց դիմադրել և գնաց Ադրբեջանից Խլաթի շրջանը։ Բայց տեղեկանալով, որ մոնղոլները կրնկակոխ հետապնդում են իրեն՝ փախավ այստեղից Ամիդ, իսկ նրա զորքը պարտության մատնվեց և ցրվեց[1]։

«Ապա թաթարը,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— որը նրան [Ջալալեդդինին] փախցրել ու դուրս էր վտարել իր երկրից, հետապնդելով նրան՝ հալածեց ու քշեց մինչև Ամիդ, և այնտեղ սաստիկ հարված տվեց նրա զորքերին։ Կորավ և անօրեն իշխանը՝ կամ նույն պատերազմում և կամ, ինչպես ոմանք ասում են,— երբ նա հետիոտն փախչում էր՝ նրան ընդառաջ եկավ մի մարդ և, ճանաչելով թե նա է՝ սպանեց նրան և առավ նրանից իր մերձավորի արյան վրեժը, որին նա սպանել էր մի այլ ժամանակ. և այսպես չարը բարձավ չարի միջոցով»։

[«Ապա թաթարն՝ որ եհան զնա յերկրէն իւրմէ փախստական՝ զհետ մտեալ նորա՝ տարեալ վարեաց զնա մինչև յԱմիթ. և անդ եհար զզօրս նորա սաստկապէս. կորեաւ և անօրէն իշխանն, թէ ի նմին պատերազմի, և թէ՝ որպէս ոմանք ասէն՝ երթայր հետիոտս փախստական, դիմեալ նմա առն միոջ, և գիտացեալ՝ թէ նա է, սպան զնա փոխանակ արեան մերձաւորի իւրոյ, զոր սպանեալ էր նա յայլում աւուր. և այսպէս բարձաւ չարն չարեաւ»][2]։

Ջալալեդդինին հալածելիս՝ մոնղոլական հեծելազնդերը, ինչպես երևում է Իբն ալ-Ասիրի և վիմական հայ արձանագրությունների վկայություններից՝ ավերածության էին մատնել Վարագա Սուրբ Նշան վանքը և Ամիդի, Արզնի, Միաֆարղինի ու սրանց հարևան շրջանները, նաև պաշարել ու գրավել էին Արճեշը և Բերկրին ու կոտորել գրեթե սրանց ամբողջ բնակչությունը[3]։

Ջալալեդդինի փախուստից և նրա զորքերի պարտությունից հետո Ադրբեջանը ենթարկվեց մոնղոլների իշխանությանը և

---

[1] Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժողվ. էջ 170—173 (XII, 203—206), Վարդան վրդ., էջ 144 և ուրիշ.։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 217։ Համեմատե նաև Վարդան վրդ., էջ 144։

[3] Տե՛ս Ибн ал-Асир, ռուս. թարգմ. ժողվ. էջ 174—175 (XII, 206—7). «Վիմական տարեգիր», էջ 75։

վճարում էր նրանց հարկ[1]։ Այստեղից Չարմաղանի զորքերը մտան Առան և պաշարեցին այստեղ Գանձակ շահաստանը, որը ամենահզոր ու հարուստ քաղաքն էր ո՛չ միայն Առան-Աղվանքի, այլև ամբողջ Ադրբեջանի։

Գանձակի պաշարումը և առումը պետք է դնել ո՛չ թե 1235 թվին, ինչպես այդ, հիմնվելով Վարդան վարդապետի վկայության վրա՝ ենթադրում են պատմագետները[2], այլ, հավանորեն. 1231/2 թվին, ինչպես այդ մատնացույց է արված Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ[3]։

Քաղաքի անկումը մանրամասն կերպով նկարագրված է Կիրակոս Գանձակեցու մոտ, որը ժամանակակից և կարևորագույն աղբյուրն է մոնղոլական այս շրջանի պատմության։

> «Եվ հանկարծակի,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— եկան թաթարների զորքերը, շրջապատեցին քաղաքը բոլոր կողմերից և, կռիվ մղելով, նրա դեմ մարտնչում էին շատ մեքենաներով. և կտրեցին նրանք այգիները, որոնք գտնվում էին քաղաքի շուրջը։ Այնուհետև փիլիկվանների միջոցով փլցրին քաղաքի պարիսպը բոլոր կողմերից. և թշնամիներից ոչ ոք չմտավ քաղաք, այլ նրանք, զինված, քաղաքը պահեցին հսկողության տակ մեկ շաբաթ։ Իսկ երբ քաղաքի բնակիչները տեսան, որ քաղաքն առնված է թշնամիներից, ամեն մեկը, մտնելով իր տունը, այրեց իրեն ու իր շենքը, որպեսզի թշնամիների ձեռքը չընկնի։ Ուրիշներն էլ այրեցին այն ամենը, ինչ որ կարելի էր հրով այրել և մնացին միայն իրենք։ Թշնամիները, տեսնելով այդ՝ առավել ևս զայրացան ու բարկացան և, գործ դնելով սրերը՝ բոլորին սրի անցկացրին՝ տղամարդկանց, կանանց ու երեխաներին։ Ոչ ոք չազատվեց նրանց ձեռքից, բայց մի փոքր միայն զորագունդ, հանդերձված զենքով ու ամենայն պատրաստությամբ, պատռեց գիշերը թշնամու մի կողմը և փախավ։ Ազատվեցին նաև փոքր թվով գռեհիկ մարդիկ, որոնց

---

1 *Նույնը, էջ 176—7 (XII, 207—208)։*

2 Տե՛ս Չամչյան, *Պատմութիւն Հայոց, Գ. էջ 206. Бартольд,* Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, *էջ 62 և ուրիշ.։*

3 *Տե՛ս* Վարդան վրդ., *գլ. Ձե, էջ 144.* Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն, էջ 24. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 20.* Մաղաքիա աբեղա. *Ս. Պետերբ., 1870, էջ 6։ Համեմատե նաև Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 89։*

*պահեցին և խոշտանգեցին, որպեսզի սրանք ցույց տան՝ թե ո՛ւր են պահված գանձերը։ Իսկ հետո ոմանց սպանեցին, մի մասն էլ գերի տարան։*

*Եվ իրենք փորեցին այրված տները և հանեցին, ինչ որ գտան թաքցրած. և այս երկար ժամանակ անելուց հետո՝ հեռացան։ Այնուհետև բոլոր գավառներից թափվեցին քաղաքի վրա փորելու և որոնելու իրեր ու անոթներ. և նրա մեջ գտնում էին ոսկե, արծաթե և պղնձե ու երկաթե իրեղեններ, նաև զանազան այլ հանդերձներ, որոնք թաքցված էին գարաններում ու գետնափորերում։ Եվ քաղաքը մնաց այսպես ամայի չորս տարի. իսկ հետո հրաման տվին, որ քաղաքը վերաշինեն. և փոքր առ փոքր հավաքվեցին ու սկսեցին շինել բացի պարսպից»։*

*[«Եւ յանկարծակի հասին զօրք թաթարին, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եդեալ մարտնչէին ընդ նմա բազում մեքենայիւք, և հարին զայգեստանն՝ որ շուրջ զքաղաքաւն էին։ Ապա փլուցին և զպարիսպ քաղաքին փիլիկուանօք յամենայն կողմանց. և ո՛չ եմուտ ի քաղաքն ի թշնամեացն, այլ վառեալք զինու պահեցին զքաղաքն շաբաթ մի. իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին՝ թէ առաւ քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր ոք ի տուն իւր՝ այրեաց ի վերայ իւր զչինուածն. զի մի՛ անկցի ի ձեռս թշնամեացն, և այլք այրեցին զամենայն որ ինչ ծախիւր ի հրոյ. և ինքեանք միայն մնացին. և զայն տեսեալ թշնամեացն՝ առաւել ևս ի ցասումն բարկութեան բրդեցան, և սուր ի գործ արկեալ՝ զամենեսեան ճարակ սրոյ ետուն, զարս և զկանայսն և զմանկտի. և ոչ ոք զերծաւ ի նոցանէ, բայց սակաւ գունդ մի զօրու վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ, պատառեցին զկողմն մի գիշերի, և գնացին փախստական. և այլ սակաւ ինչ սինլքորք, զորս պահեցին և խոշտանգեցին՝ ցուցանել զգանձսն ո՛ւր պահեալ իցեն. ապա զոմանս սպանին, և զկէսն գերի վարեցին. և ինքեանք բրեցին զայրեալ տունսն, և հանին զորս գտին թաքուցեալ, և զայս արարեալ ի բազում աւուրս, գնացին ի բաց։*

*Ապա յամենայն գաւառաց շրջեցան ի վերայ նորա առ ի բրել և յորոնել զինչսն և զանօթն, և գտանէին բազում ինչս ի նմա ոսկւոյ և արծաթոյ, պղնձոյ և երկաթոյ, և այլ*

*պէսպէս հանդերձից, որ թագուցեալ էին ի դարանս և ի գետնափորս։ Եւ այսպէս աւմայի եկաց քաղաքն զչորս ամս, և ապա հրաման ետուն շինութեան քաղաքին և եկին ժողովեցան առ սակաւ սակաւ, և սկսան շինել զնա բաց ի պարըսպէն...]*[1]։

*Կիրակոս Գանձակեցու այս վկայությունը մենք ընդարձակ կերպով մեջ բերինք, որովհետև նա պարզ ցույց է տալիս մոնղոլների ռազմական բարձր տեխնիկան և ամրացրած քաղաքների պաշարման ու առման նրանց մեծ հմտությունը։ Գանձակեցի պատմիչի վկայությունից երևում է, որ մոնղոլները, գործելով պատերազմական մեքենաներով, քաղաքի ամուր պարիսպները կարողացել էին փուլ բերել ո՛չ միայն մեկ տեղում, այլ բոլոր կողմերում։*

*Ուշադրության արժանի է և վերոհիշյալ այն վկայությունը, որ պաշարման ժամանակ նրանք ոչնչացրել էին մինչև իսկ քաղաքի շուրջը եղած այգիներն ու ծառերը։ Հայաստանում ու Անդրկովկասում այդ համարվելու էր մեծ վայրագություն, որովհետև Մխիթար Գոշի Դատաստանագրքի համաձայն քաղաքների պաշարման ժամանակ արգելվում էր կտրել պտղատու ծառերը*[2]։

*Իսկ ամենից հետաքրքիրն այն է, որ մոնղոլական զորքը, քաղաքի պարիսպները խորտակելուց հետո, յոթ օր ներս չէր մտել և մնացել էր զինված դրսում։ Այս մարտավարական տակտիկան ուներ պարզապես այն առավելությունը, որ մոնղոլներն այդպիսով հնարավորություն էին ստանում կոտորելու մաս-մաս քաղաքի սարսափած ու հուսակորույս բնակչությունը առանց իրենց կողմից կորուստներ տալու։ Ըստ երևույթին, Չարմաղանի այս և նման հանգ ու հնարների պատճառով է, որ Կիրակոս Գանձակեցին նրան անվանում է «այր խորագէտ և իմաստուն», իսկ մոնղոլներին՝ «այլազգ խորամանգ և հնարաւորք»*[3]։

*Գանձակի առումից հետո մոնղոլները հեռացան Աղվանքից և Հայաստանն ու Վրաստանը մի քանի տարի զերծ մնացին ասպատակություններից։ Չարմաղանի 1231/2 թվի արշավանքի նպատակն էր վերջնականորեն հաղթել Ջալալեդդինին ու ոչնչացնել նրա զինված ուժերը և այդ այժմ լրիվ իրագործված էր։ Մոնղոլական նույն զորքը այնուհետև պետք է ոչնչացներ նաև մահմե-*

---

[1] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 222—224։ Համեմատե նաև* Վարդան *վրդ., էջ 144 և ուրիշ.։*

[2] *Տե՛ս* Մխիթար Գոշ, *Դատաստանագիրք Հայոց, էջ 307 (II, 1)։*

[3] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 220 և 227։*

*դականների այն ցրված մարտական ուժերը, որ նա թողել էր իր թիկունքում, և պետք է վերանվաճեր ապստամբած շրջանները։*

*Այդ է, ըստ երևույթին, գլխավոր պատճառը, որ Հայաստանի և Վրաստանի նվաճումը տեղի ունեցավ ո՛չ թե 1231 թվին, ինչպես այդ ենթադրում է Սեն-Մարտենը[1], այլ մի քանի տարի հետո՝ 1236 թվին։*

---

[1] *Տե՛ս Saint Martin*, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, *էջ 260 և 271։*

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

# ՉԱՐՄԱՂԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

**1. Մոնղոլների մեծ արշավանքը Ռուսաստան և Անդրկովկաս.— Մուղանը իբրև մոնղոլների գլխավոր կայան:— 2. Վրաց թագավորության վիճակը:— 3. Հայերի ու վրացիների թույլ դիմադրությունը:— 4. Մոնղոլական զորքերի հարձակումները զանազան ուղղությամբ.— Շամքորի և դաշտային Ուտիի բերդերի առումը.— Վանական վարդապետի և Կիրակոս պատմագրի գերումը:— 5. Լեռնային Ուտիի նվաճումը և մեծ իշխան Վահրամի փախուստը.— Լոռիի, Դմանիսի, Շամշույլդեի և Տփղիսի առումը.— Ավագի կամովին անձնատուր լինելը:— 6. Անիի, Կարսի և Սուրմառիի առումը.— Հասան Ջալալի և էլիկումի հպատակումը:— 7. Կոտորածի և ավերածության դադարեցումը.— Ավագի առաքումը մեծ խանի մոտ Արևելք:— 8. Մոնղոլների բռնությունները նրանց տիրապետության առաջին տարիներում.— Ավագի փախուստը և վերադարձը մեծ խանի միջամտությունից հետո:— 9. Մոնղոլների թողած տպավորությունը հայ ժողովրդի վրա.— Նրանց արտաքին տեսքը և նիստուկացը:— 10. Մոնղոլների կրոնը և նրանց վերաբերմունքը դեպի մյուս կրոնները:— 11. Նրանց մարտական հատկությունները: 12. Մոնղոլական կանանց դերը և հասարակական դիրքը.— Չարմաղանի հաջորդ Ելթինա խաթունը:**

*Ջալալեդդինի մահից և Ադրբեջանի նվաճումից հետո՝ Մոնղոլիայի Կարակորում մայրաքաղաքում, որը գտնվում էր Օրխոն գետի վրա՝ տեղի ունեցավ 1235 թվին նոր մեծ ժողով (ղուռուլթայ)։ Այս ժողովում, ինչպես երևում է աղբյուրների վկայությունների ուշադիր քննությունից, ո՛չ միայն որոշված է եղել արշավել Ռուսաստանի և Եվրոպայի հարավ-արևելյան մյուս երկրները, ինչպես այդ վկայում է Ռաշիդեդդինը*[1]*, այլ ըստ երևույթին, նաև որոշված է եղել նվաճել միաժամանակ Կովկասյան ու Անդրկովկասյան երկրները, գլխավորապես, Հայաստանը և Վրաստանը։ Եվ ուշագրավ է, որ ճիշտ 1236 թվին, երբ Չինգիզ խանի մեծ որդի*

[1] *Տե՛ս Тизенгаузен,* Сборник материалов, II, էջ 34։

Ջուչիի Բաթու որդին սկսել էր նվաճել Ռուսաստանը՝ Չարմաղանը ևս սկսել էր իր արշավանքը Հայաստանում և Վրաստանում։

Մոնղոլները, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին[1], այս արշավանքների ժամանակ տանում էին սայլերով իրենց ամբողջ ունեցվածքը և իրենց կանանց ու երեխաներին։ Ռազմի էին ելնում ո՛չ միայն իրենք մոնղոլները, այլ նրանց հետ նաև թուրքական ու այլ զանազան ցեղեր։ Այս խառնիճաղանջ զորքի ու ամբոխի գլխավոր կայանը դառավ Անդրկովկասում Մուղանի բերրի ու բարեկից դաշտը։

«Եվ հետո [Չարմաղանի զորքերը] եկան Հասան,— ասում է Կիրակոս Գանձակեցին,— Աղվանից աշխարհը իրենց ամբողջ տուն ու տեղով և ամբողջ բազմությամբ. և, տեղավորվելով բերրի ու արգավանդ դաշտում, որը կոչվում էր Մուղան և որը լի էր ամեն տեսակ բարիքներով՝ ջրով, փայտով, մրգով և որսով՝ նրանք այնտեղ խփեցին իրենց վրանները։ Այսպես էին անում նրանք ձմեռվա ժամանակ, իսկ գարնանը, ասպատակելով ու ավերելով, ցրվում էին զանազան կողմեր, և ապա նորից վերադառնում ու բանակում էին նույն տեղում։

[«Եւ ապա եկին հասին յաշխարհն Աղուանից ամենայն ախիւք բազմութեամբ իւրեանց, և ի բերրի և յարգաւանդ դաշտին՝ որ կոչի Մուղան, լի ամենայն բարութեամբ, ջրով և փայտիւ և մրգով և որսով, անդ ղետեղեալ՝ հարին ղխորանս իւրեանց։ Այսպէս առնէին զամենայն աւուրս ձմերայնոյն, և ի ժամանակս գարնայինս սփռնէին ընդ կողմանս ասպատակաւ և աւերմամբ. և դարձեալ դառնային անդրէն բանակէին»][2]։

Մոնղոլական արշավանքների ժամանակ Վրաց թագավորությունը, որի մի մասն էր կազմում Հայաստանը, շատ ավելի թույլ էր, քան Ջալալեդդինի արշավանքների ժամանակ։ Վերջինիս մոտ յոթը տարի տևող կռիվների և ասպատակությունների ընթացքում նա կորցրել էր իր ռազմական ուժերի զգալի մասը։ Գտնվելով անկարող Ռուսուդան թագուհու իշխանության տակ, որի ժամանակ սաստկացել էին երկրում ներքին երկպառակությունները՝ Վրաց մեծ պետությունը սկսել էր արդեն քայքայվել։ Նա չէր կարող դի-

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 219։

[2] Նույնը, էջ 221։

մադրություն ցույց տալ ուժեղ ու կազմակերպված որևէ թշնամու։ Մի քանի տարի առաջ վախճանվել էր Իվանե աթաբեկը (մոտավորապես 1233/4 թվին)[1] և նրա մահից հետո Վրաստանում մեծ դեր էին կատարում սրա որդին Ավագը, Զաքարեի որդի Շահնշահը և Վահրամ Գագեցին։ Վրաստանի իշխանները, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին,—

«Չէին կարող դիմադրել եկած անհնարին բքին, ուստի և նրանք բոլորն էլ պահպանեցին իրենց անձը, փախչելով ամրոցները, ուր որ կարողացան։ Իսկ սրանք [մոնղոլները] սփռվեցին ամենուրեք դաշտերում, լեռներում և ձորերում՝ բազմերամ մորեխի նման կամ իբրև անձրև, որ տեղում է հորդորեն երկրի վրա»։

[«Եւ ոչ էին կարող զդէմ ունել անհնարին բքոյն եկելոյ. վասն այսորիկ անձնապահ եղեն ամենեքեան, զաղթեալք յամրոցս, ո՛ւր և կարացին. և նոքա սփռեալք ատ հասարակ ընդ երեսս դաշտաց, լերանց և ձորոց, իբրև զմարախ բազմերամ, կամ իբրև զանձրև յորդութեամբ տեղեալ ի վերայ երկրի»)[2]։

Աղբյուրների վկայություններից երևում է, իրապես, որ մոնղոլական այս մեծ արշավանքի ժամանակ ո՛չ Հայաստանում և ո՛չ էլ Վրաստանում ցույց չտրվեց նրանց կազմակերպված որևէ դիմադրություն։ Անհաբեկված ու անպաշտպան ժողովուրդը ամեն տեղ թողնված էր ճակատագրի կամքին։ Բնական է, որ այսպիսի պայմաններում մոնղոլները տեր դարձան երկրին ամենակարճ ժամանակում[3]։

Չարմաղանի զորքերը մտան Հայաստան և Վրաստան Մուղանի կողմից ու ավերված Գանձակի մոտով, որը նրանք այժմ թույլ տվին վերաշինել։ Հարմարվելով Հայկական լեռնաշխարհի տեղական հատուկ պայմաններին՝ նրանք բաժանվեցին առանձին զորամասերի, որոնք հրամանատար-զորապետների առաջնորդությամբ ուղարկվեցին զանազան կողմեր նվաճելու իրենց բաժին ընկած շրջանները և ամրությունները։

«Գանձակ քաղաքի ավերումից կարճ ժամանակ հետո,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— այս մոլեկան և խռժամանկ զորքը, բաժանելով վիճակով Հայոց, Վրաց և Աղ-

[1] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 100—101։
[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 225։
[3] Տե՛ս Մխիթար Այրիվանեցի, էջ 66։

վանից ամբողջ երկիրը՝ տվեց ամեն մի գլխավորի, ըստ մեծության և փոքրության, քաղաքներ ու գավառներ, աշխարհներ ու բերդեր, որպեսզի նրանք առնեն, քանդեն և ավերեն։ Եվ գնացին յուրաքանչյուրն իր բաժնի մասը իրենց կանանցով ու երեխաներով և իրենց բանակի ամբողջ ունեցվածքով։ Նրանք նստան անհոգությամբ և նրանց անասուններն ու ուղտերը ապականեցին ու կերան բոլոր կանաչ բույսերը»։

[«Զկնի անցանելոյ ինչ աւերման քաղաքին Գանձակայ, այս զօր մոլեկան և խորամանգ, իբրև վիճակաւ բաժանեալ զամենայն աշխարհս Հայոց, Վրաց և Աղուանից՝ իւրաքանչիւր գլխաւորի, ըստ մեծութեան և փոքրկութեան, զքաղաքս և զգաւառս, զաշխարհս և զբերդս. առնո՛ւլ, քանդե՛լ, աւերե՛լ. և չոգան իւրաքանչիւր մասն բաժնի կանամբք և որդւովք և ամենայն ախիւ բանակին իւրեանց. և նստեալ յանհոգութեան՝ ապականել, ուտել զամենայն բոյսս դալարոյ ուղտօք և անասնօք իւրեանց»][1]։

Շատ ընդարձակ կերպով Կիրակոս Գանձակեցու մոտ նկարագրված է Ուտիի դաշտային շրջանի և նրա մեջ գտնվող բերդերի առումը, որոնք, մեծ մասամբ, պատկանում էին Պլու Զաքարեի որդի Վահրամ Գագեցուն։

Այս շրջանի նվաճումը հանձնարարված էր Մոլար նոյինին, որի զորքերը, ավերելով ու կողոպտելով տափաստաններում գտնվող գյուղերը՝ շրջապատեցին այստեղ բերդերն ու ամրոցները ու, նախ և առաջ, Շամքորը։ Այս քաղաքը, ասում է Կիրակոս Գանձակեցին,—

«Որ փոքր առաջ առել էին պարսիկներից՝ գտնվում էր այս ժամանակ Վահրամի և նրա որդու Աղբուղայի իշխանության տակ։ Շամքոր քաղաքի բնակիչները մարդ ուղարկեցին Վահրամի և նրա որդու մոտ, որպեսզի իրենց օգնեն, և հայտնեցին, որ [թշնամիները] քիչ են։ Իսկ նա չօգնեց, նաև իր որդուն, որն ուզեց գնալ՝ չթողեց, ասել տալով որ շատ են. այլ նրանց դեմ նաև քաղաքացիներին չհրամայեց կռվել»։

[«Իսկ քաղաքն յայնժամ էր ընդ իշխանութեամբ Վահրամայ և որդւոյ իւրոյ Աղպուղային, զոր առեալ էին յառա-

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 224։ Համեմատե նաև Վարդան վրդ., էջ 144 և «Անանուն ժամանակագրություն», էջ 21։

> չագոյն ի պարսկաց և առաքեցին բնակիչք քաղաքին Շամքորոյ առ Վահրամ և որդի նորա, զի օգնեսցեն նոցա. և ասացին, թէ սակաւք են։ Իսկ նա ո՛չ օգնեաց, այլ և զորդին՝ որ կամեցաւ երթալ, խափանեաց, բանս ի բերանս դնելով, թէ բազումք են. այլ և ո՛չ քաղաքացեացն հրամայեաց մարտնչել ընդ նոսա»][1]։

Վահրամի այս վարմունքն այնքան էլ պախարակելի չէ, որովհետև անզատ ու մասնակի դիմադրությունը միանգամայն անօգուտ էր ու ապարդյուն։ Շամքորի բնակչությունը, չնայած Վահրամի նախազգուշացման դիմադրեց մոնղոլներին և դրա համար սրի մատնվեց, իսկ քաղաքը հրդեհվեց ու ավերվեց[2]։

Շամքորը ավերելուց հետո Մոլար նոյինը գրավեց առանց դժվարության և, մեծ մասամբ, առանց կռվի՝ Վահրամ Գագեցու գավառները և բերդերը Սագամը, Տերունականը, Երգեվանքը, Տավուշը, Կածարեթը, Քավազինը ու Գագը, նաև Մածնաբերդը, որը աթոռանիստն էր Աղսարթանի որդի Կյուրիկեի, և Նոր բերդը, որը պատկանում էր Կյուրիկյան «արքայազն Վասակին»[3]։

Ջալալեդդինի և Մոլար նոյինի աշխարհավեր հարձակումների ժամանակ Վահրամ Գագեցու իշխանության սահմաններում ապրում էր հռչակավոր մատենագիր և ուսուցիչ Վանական վարդապետը, որ Մխիթար Գոշի աշակերտն էր։ Սա հիմնադիրն էր Խորանաշատ վանքի, որը գտնվում էր Գարդման գավառի թիկունքում՝ այժմյան Ղուլալի գյուղի արևելյան կողմում, և որը նշանավոր ուսումնավայր էր 13-րդ դարում։ Խվարեզմյան արհավիրքների պատճառով՝ նա իր աշակերտների հետ, որոնց մեջ էր նաև Կիրակոս Գանձակեցին՝ Խորանաշատից փախել էր և ամրացել մի քարայրի մեջ՝ Տավուշ բերդի հարավակողմում։

Սրանց բոլորին, ինչպես մանրամասն պատմում է Կիրակոս Գանձակեցին, պաշարել ու գերի էր վերցրել Մոլար նոյինի զորամասերից մեկը։ Բայց այնուհետև սրանք, ստանալով ութսուն դահեկան փրկանք, Վանականին ազատ էին արձակել, իսկ Կիրակոսը գերությունից փախել ազատվել էր ինքը[4]։

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 228։

2 Նույնը, էջ 228—229. Նաև Վարդան վրդ., գլ. ԶԵ, էջ 145 և Մաղաքիա աբեղա, Ս. Պետերբ., 1870, էջ 7։

3 Նույնը, էջ 229. Վարդան վրդ., գլ. ԶԵ, էջ 144—5. Մաղաքիա աբեղա, էջ 7։

4 Նույնը, էջ 230—232, Վարդան վրդ., գլ. ԶԶ, էջ 145—146. Մաղաքիա աբեղա, էջ 7—8։

Ուտիի լեռնային հարավային մասը վիճակով բաժին էր ընկել մոնղոլական ուրիշ զորավար Ղատաղա նոյինին և սրա զորքերը գրավեցին այստեղ, ինչպես վկայում են Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը, Գարդմանը, Չարեքը, Գետաբեկը, Վարդանաշատը և սրանց մոտակա շրջանները[1]։ Մեծ իշխան Վահրամ Գագեցին, որը գտնվում էր այդ ժամանակ Գարդմանում՝ գիշերը կարողացավ այստեղից փախչել և, տեղից տեղ շրջելով իր որդու Աղբուղայի հետ՝ պատսպարվեց ի վերջո Արևմտյան Վրաստանում՝ Քութայիս քաղաքում[2]։ Վահրամի երկիրը համեմատաբար քիչ էր տուժել, որովհետև նրա բերդերը կամովին անձնատուր էին եղել և տվել էին մոնղոլական զորքերին իրենց անասուններն ու գույքը, ինչ որ սրանք պահանջել էին[3]։

Ավելի ծանր եղավ Լոռի բերդաքաղաքի և հարևան տեղերի դրությունը, որ գտնվում էին ամիրսպասալար Զաքարեի որդի Շահնշահի իշխանության տակ։ Այս շրջանը բաժին էր ընկել Ջաղատայ նոյինին։ Սա, տեղեկանալով, որ Լոռի բերդաքաղաքի մեջ թաքցված են մեծ իշխան Շահնշահի գանձերի մեծագույն մասը, եկավ այստեղ ընտիր և սպառազեն զորքով և պաշարեց քաղաքը։ Իսկ Շահնշահ իշխանն ամրացավ ինքը մի քարայրի մեջ և քաղաքի պաշտպանությունը հանձնարարեց իր կնոջ ազգականներին։ Սակայն մոնղոլական զորքը քանդեց պարիսպները, փորելով տակից, և, մտնելով քաղաք՝ անխնա կոտորեց տղամարդկանց, կանանց ու երեխաներին։ Քաղաքը կողոպտելիս՝ նրանք գտան և վերցրին նաև Շահնշահի գանձերը։

Այնուհետև Ջաղատայ նոյինը վերցրեց նույնպես Դմանիսը, Շամշուլդեն և Վրաստանի մայրաքաղաքը՝ Տփղիսը[4]։ Լոռիի անկումից հետո՝ Շահնշահը, ինչպես վկայում է Վրաց Քարթլիս-ցխովրեբա ժամանակագրությունը, փախել էր Անարա[5]։

Իվանե աթաբեկի որդի մեծ իշխան Ավագը մոնղոլների հարձակման ժամանակ ամրացել էր Կայեն բերդում, ուր հավաքվել էր նաև գավառի բնակչությունը։ Այստեղ եկավ մեծ զորքով Դուղադա նոյինը, որը շրջապատեց ու պաշարեց բերդը։ Սա ուղարկեց Ավագի մոտ դեսպաններ և առաջարկեց աներկյուղ հպատակվել իրենց։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 229 և Վարդան վրդ., գլ. Ձb, էջ 144։

[2] Նույնը, նաև Մելիքսեթ–Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 54։

[3] Նույնը, էջ 229։

[4] Նույնը, էջ 239—241։ Համեմատե նաև Վարդան վրդ., գլ. Ձb, էջ 144։

[5] Տե՛ս Մելիքսեթ–Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 54։

Իսկ Ավագը, կամենալով նրա սիրտը շահել՝ ուղարկեց նրան իր դուստրը և այլ նվերներ։ Բայց չնայած դրան՝ պաշարումը այնուհետև ևս շարունակվեց սաստկությամբ, ուստի և Ավագը որոշեց կամովին անձնատուր լինել և իր տան վերակացու հեջուբ Գրիգոր Տղային ուղարկեց գլխավոր հրամանատար Չարմաղանի մոտ, որն այդ ժամանակ բանակ էր դցել Սևանա լճի ափին։

Չարմաղանը շատ ուրախացավ, կարգադրեց Դուղադային այլևս չնեղել բերդի ու գավառի բնակչությանը և ուղարկել իսկույն Ավագին իր մոտ։ Նա ընդունեց մեծ իշխանին պատվով և հրամայեց վերադարձնել նրան բոլոր նրա բերդերն ու կալվածները[1]։ Հպատակվելով մոնղոլներին՝ Ավագը համաձայնեց հարկ վճարել նրանց և մասնակցել իր զորքով նրանց արշավանքներին։

Ավագի անձնատրությունից հետո Չարմաղանը, վերցնելով նրան իր հետ՝ դիմեց Անիի վրա, ուր պատսպարվել էր իր անասուններով ու գույքով նաև գավառի ժողովուրդը։ Գալով Անի՝ մոնղոլ զորապետը դեսպաններ ուղարկեց քաղաքի գլխավորների մոտ և պահանջեց, որ անձնատուր լինեն և քաղաքը հանձնեն իրեն։ Բայց քաղաքի ամբոխը և ռամիկները հարձակվեցին դեսպանների վրա և բոլորին կոտորեցին։ Իմանալով այդ՝ Չարմաղանի կատաղած զորքը պաշարեց Անին, գրավեց քաղաքը պաշարողական մեքենաների օգնությամբ և բնակչությունը սրի անցկացրեց, բացի սակավաթիվ կանանցից, երեխաներից ու արհեստավորներից, որոնց գերի վերցրեց։

Կարսի բնակիչները, տեղեկություն ստանալով անեցիների կոտորածի մասին՝ որոշեցին անձնատուր լինել և քաղաքի բանալիներն ուղարկեցին Չարմաղանին։ Սակայն մոնղոլները, որ թալանի մեծ փափագ ունեին, կողոպտեցին նաև Կարսը և բնակիչներին կոտորեցին և մի մասն էլ գերի տարան[2]։

Անիի և Կարսի առումից հետո Չարմաղանի զորավարներից մեկը, Ղարա Բահատուրը, հարձակվեց հանկարծակի նաև սուրբ Մարիի (Սուրմարիի) վրա, որը մի քանի տարի առաջ նվաճել էին

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 241—244. Վարդան վրդ., գլ. ՁԵ, էջ 144։ Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 404։ Համեմատե նաև Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 54—55։

[2] Նույնը, էջ 244—247. Վարդան վրդ., գլ. ՁԵ, էջ 144. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 25։

Շահնշահը և Ավագը։ Նա այս քաղաքը վերցրեց մեծ արագությամբ և մատնեց կողոպուտի ու ավերածության[1]։

Հայկական աղբյուրների մեջ, բացի վերոհիշյալ արշավանքներից, հիշատակված է նույնպես Խաչենի և Սյունիքի նվաճումը մոնղոլների ձեռքով, որ տեղի ունեցավ դարձյալ 1236 թվին։ Այս շրջանները ևս նրանք կարողացան գրավել ամենակարճ ժամանակում և առանց պատերազմի ու ընդդիմության։ Ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, Խաչենը վիճակով բաժին էր ընկել Ջուղբուղային, որը Ջամչյանի օգտագործած ձեռագրի բնագրում հիշատակված է եղել իբրև «Ջոլա եղբայր Չարմաղանայ»։

Այս զորավարը, Խաչենի անպաշտպան շրջաններն ասպատակելուց ու ավերելուց հետո, թաքուն ու անակնկալ կերպով մտավ հանկարծակի Հավքախաղաց անմատչելի բերդը (Վերին Խաչենում Թարթառ գետի աջ կողմում)[2] և անխնայաբար սրի անցկացրեց, մասամբ էլ գահավեժ արեց այստեղ ապաստանած ժողովուրդը։

Այնուհետև Ջուղբուղան հարձակվեց Ներքին Խաչենի իշխան Հասան Ջալալի վրա, որն ամրացել էր Խոխանաբերդում (Խաչենագետի վրա Գանձասարի վանքի դիմաց)։ Բայց, տեսնելով որ այդ բերդն անհնար է մարտով առնել՝ նա առաջարկեց հաշտություն կնքել, և Հասան Ջալալը հոժարակամ անձնատուր եղավ և, շահելով մեծ նոյինի սիրտը հարուստ ընծաներով՝ ազատեց իր ժողովուրդը կոտորածից ու արհավիրքից[3]։

Մոնղոլական մի այլ զորամասի ներխուժումը Սյունիքի կողմերը հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի մոտ։ Այս շրջանը, ինչպես վկայում է նա, բաժին էր ընկել Ասլան նոյինին։ Ինչպես և այլ տեղերում, նույնպես և այստեղ՝ Օրբելյան մեծ իշխան Էլիկումը յուրայինների հետ ամրացավ Վայոց ձորի Հրաշկաբերդ ամրոցում, որը գտնվում էր Նորավանքի մոտ։ Սակայն նաև Սյունիքում, Ասլան նոյինի առաջարկությամբ, հաշտություն կնքվեց և Էլիկումը ընծաներով ընդառաջ ելավ նրան և հաստատեց մոնղոլների հետ բարեկամություն։ Այնուհետև մոնղոլ զորավարը, որը նվաճել էր Վայոց ձորը և Եղեգիսը և մինչև Երերոն գյուղը Գառնիի դիմաց՝ այդ ամբողջ երկիրը տվեց Էլիկումին[4]։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 247. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 25։

[2] Տե՛ս Բարխուտարյանց, Արցախ, էջ 211։

[3] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 253—255։

[4] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 403—404։

Չարմաղանի զորքերը, ինչպես տեսնում ենք, արդեն 1236 թվին կարողացան տեր դառնալ Զաքարյանների իշխանության տակ գտնվող գրեթե ամբողջ Հայաստանին։ Երկիրը նվաճելուց հետո նրանք հրամայեցին բնակիչներին, որոնք կենդանի էին մնացել և գերի չէին տարվել, որ գնան իրենց տեղերը, գյուղերն ու քաղաքները, և վերաշինեն իրենց շրջաններն ու ծառայեն իրենց նոր տերերին։ Եվ այնուհետև երկիրը հետզհետե սկսեց նորից շենանալ։

Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, մոնղոլներն արշավել և գրավել էին Հայաստանը, գլխավորապես, ամառվա ընթացքում բերքահավաքից առաջ։ Երբ ձմեռվա սկզբին նրանք հեռացան Մուղան՝ կենդանի մնացած ժողովուրդը իր գլուխը պահեց, հավաքելով արտերում թափված հացահատիկը։ Եվ չնայած, որ նա աշնանը չէր կարողացել ցանքս անել՝ հետևյալ գարնանը երկիրն ինքնաբերաբար այնքան բերք տվեց, որ բավական էր ժողովրդի ապրուստի համար։

Հետևյալ տարին մոնղոլները մեծ իշխան Ավագին ուղարկեցին Արևելք իրենց մեծ խանի մոտ, որն ընդունեց նրան սիրով ու պատվով, տվեց նրան կին թաթար ազգից և ետ ուղարկեց Հայաստան, գրելով Չարմաղան զորավարին, որ հանձնեն նրան երկրի իշխանությունը և նրա աջակցությամբ հնազանդեցնեն իրենց ապստամբած ու փախած իշխաններին։

Եվ, իրավի, երբ Ավագը վերադարձավ ու մեծ խանի հրամանով ստանձնեց իր նախկին իշխանությունը՝ նրա օրինակին հետևեցին Շահնշահը, Վահրամ Գագեցին ու մյուս փախած իշխանները, որոնք նույնպես հպատակվեցին մոնղոլներին և վերահաստատվեցին իրենց իշխանությունների մեջ։

Չարմաղանի զորքերը, ինչպես երևում է Վրաց Քարթլիսցխովրեբա ժամանակագրության վկայություններից՝ արշավել էին և ասպատակել նաև Արևմտյան Հայաստանի և բուն Վրաստանի շրջանները՝ Քարթլի, Թռեղք, Ջավախք, Սամցխե, Շավշք, Կղարջք, Կողա և Արտահան, ուր նույնպես, ավերածության ենթարկելով երկիրը՝ կոտորել էին և գերել բնակիչներին[1]։

Մոնղոլական տիրապետության առաջին տարիներում՝ թեև կոտորածները Հայաստանում դադարեցին, սակայն ժողովրդի դրությունը չափազանց ծանր էր շնորհիվ մեծ ու փոքր նոր իշխանավորների կամայականությունների, բռնությունների և կողոպուտների։

---

[1] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 54։

«Եվ երբ մի քանի տարի անցավ,— ասում է Կիրակոս Գանձակեցին,— իշխան Ավագը նեղվեց նրանցից, որովհետև շատ ագահ էին և նա չէր կարող բոլորի սիրտը շահել,— նրանք բնավ չէին բավականանում կերուխումով, այլ պահանջում էին նաև հեծնելու ձիեր և մեծագին զգեստներ, որովհետև խիստ ձիասեր էին։ Այդ պատճառով էլ նրանք հավաքեցին բոլոր ձիերը երկրից և ոչ ոք չէր կարող համարձակ կերպով պահել ձիեր կամ ջորիներ, այլ միայն որևէ տեղ թաքուն կերպով զինվորական ծառայության համար։

Եվ ուր որ նրանք գտնում էին՝ հափշտակում էին ու ավելին էին անում, եթե որևէ մեկի վրա գտնում էին իրենց խարանադրոշմները։ Որովհետև իրենց բոլոր անասունները ու նաև այն որ առնում էին՝ ամեն մի զորագլուխ կնքում էր իր նշանով, խարանելով մարմնի որևէ մասը։ Եվ թեպետ իրենցից էին գնում, սակայն եթե մի ուրիշը հանդիպեր այլ գնդից՝ նրանցից առնում էր և նրանց պատժում էր՝ իբրև գողերի։ Եվ այս ոչ միայն մեծամեծներն էին անում, այլև փոքրերը»։

[«Եւ իբրև անցին ամք ինչ, նեղացաւ ի նոցանէ իշխանն Աւագ, զի կարի ժլատք էին և ո՛չ կարէր զամենեսին ընդ միտս նոցա հաճել, զի ո՛չ միայն բաւականային ուտելով և ըմպելով, այլ և պահանջէին երիվարս և հանդերձս մեծագինս, զի կարի յոյժ ձիասէրք էին։ Վասն այսորիկ և քաղեցին զձի յամենայն երկրէն, և ո՛չ ոք իշխէր համարձակ պահել ձիս կամ ջորիս, բայց եթէ ի ծածուկ ուրեք վասն հարկի զինուորութեան, զի ո՛ւր և գտանէին յափշտակէին և աւելի ևս, յորում գտանէին զնշանն իւրեանց. զի զամենայն անասուն իւրեանց, և զոր առնուին, իւրաքանչիւր զօրագլուխ իւրով նշանով կնքէր, խարելով ի մի անդամսն, և թէպէտ գնէին ի նոցունց, և այլ ոք հանդիպէր յայլմէ գնդէ, առնուին ի նոցանէ, և պատժէին զնոսա, իբրև զգողս։ Եւ զայս ո՛չ միայն մեծամեծքն առնէին, այլ և փոքունքն ևս»][1]։

Կամայականություններն ու բռնությունները ավելի սաստկացան, Կիրակոս Գանձակեցու ասելով, Չաղատայ նոյինի մահից հետո, որը բարեկամ էր Ավագին ու նաև այն պատճառով, որ Չար-

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի. էջ 250։

մաղանը, որը մեծ խանի կողմից նշանակվել էր խան և կառավարիչ իր նվաճած շրջանների՝ հիվանդացել էր և համրացել։ Անիշխանությունն այնքան մեծ էր, որ մինչևիսկ մոնղոլական ստորադաս զորավարներից ոմանք ուզեցել էին սպանել Ավագին և վերջինս հազիվհազ կարողացել էր փախչել Արևմտյան Վրաստան, ուր ապաստանել էր Ռուսուդան թագուհին։

Ավագը գրեց մեծ խանին, որ ինքը փախել է ակամա ու հարկադրաբար և մեծ խանը, ընծաներ ուղարկելով նրան, խստիվ հրամայեց իր զորքին, որ նրան ձեռք չտան։ Այնուհետև Ավագը, որին մեծարանքով ընդունեցին մոնղոլները, ուղարկվեց հատուկ պատգամավորության հետ Ռուսուդան թագուհու մոտ, որը նրանց զորք տվեց և խոստացավ իր Դավիթ որդու հետ հնազանդվել և ենթարկվել մոնղոլների իշխանությանը[1]։

Մոնղոլներն իրենց արտաքինով ու բարքերով շատ խոր տպավորություն էին թողել հայ ժողովրդի վրա և ժամանակակից հայ պատմիչները հաղորդում են նրանց մասին կարևոր ու հետաքրքիր տեղեկություններ։ Կիրակոս Գանձակեցին, որը գերի էր ընկել և ծառայել նրանց մոտ՝ նկարագրել է նրանց արտաքին տեսքը և նիստուկացը։

> «Նրանք իրենց կերպարանքով ու տեսքով,— պատմում է նա,— տգեղ էին և սոսկալի. մորուք չունեին, բայց միայն ոմանք քիչ քանակությամբ մազ ունեին շրթունքների կամ կզակի վրա։ Նրանց աչքերը նեղ էին ու սրատես, ձայները՝ նուրբ և սուր, երկար ապրող էին ու դիմացկուն։ Երբ կարելի էր՝ ուտում և խմում էին շատ ու անկշտորեն, իսկ երբ կարելի չէր՝ չափավոր էին։ Ուտում էին ամեն տեսակ կենդանիներ՝ սուրբ և անսուրբ, բայց ձիու միսն ավելի էին գերադասում. կտոր կտոր կտրատում էին ու եփում, կամ խորովում էին առանց աղի և ապա մանր կտրատում և թաթախում էին աղաջրի մեջ ու այսպես էին ուտում։
>
> Ոմանք ուտում էին ուղտերի նման չոքած, ոմանք էլ նստած։ Ուտելու ժամանակ հավասար բաժին էին տալիս տերերին և ծառաներին։ Երբ խմում էին կումիս կամ գինի՝ վերցնում էր մեկը մեծ ամանով իր ձեռքը և, սրանից առնելով փոքր բաժակով՝ շաղ էին տալիս դեպի երկինք և ապա դեպի արևմուտք, հյուսիս և հարավ։ Այնուհետև ինքը շաղ տվողը նրա միջից մի փոքր խմում էր և տալիս էր ավագագույնին։

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 252—253։

Եթե մեկը նրանց կերակուր էր բերում կամ ըմպելիք՝ նախ տալիս էին, որ ուտե և խմե ինքը բերողը, իսկ իրենք ուտում և խմում էին նրանից հետո. այդ անում էին, որպեսզի խաբեությամբ չթունավորվեն մահացու դեղերով։

Կին էին առնում, որքան որ ուզենային, բայց պոռնիկներին, եթե իրենց կանանց մեջ լինեին՝ բնավ չէին թողնում կենդանի։ Բայց իրենք՝ ուր որ հանդիպեին այլազգի կանանց՝ անխտիր կենակցում էին։ Գողությունը նրանք ատում էին, ուստի և գողերին սպանում էին չարաչար մահով»։

[«էին տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր, մօրուս ոչ ունելով, բայց սակաւ ոմանց թուելով մազս ունելով ի շուրթն կամ ի վլափն. ակն նեղ և արագատես, ձայն նուրբ և սուր, բազմակեացք և տեւողք։ Յորժամ անկանէր յաճախ ուտէին և ըմպէին անյագ, յորժամ ոչ անկանէր, ժուժկալք էին. ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս և զմիս ձիոյ առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և եփեալ, կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կտրեալ և թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին. ոմանք ի գուճս ըստ նմանութեան ուղտուց, և կեսք նստելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տէրանց և ծառայից, և յըմպելն զըմուզ կամ զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռս իւր, և փոքր բաժակաւ առեալ ի նմանէ, ցանէին յերկինս, և ապա յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ. և ապա իւր իսկ ցրուողին զայն սակաւ մի ըմպեալ ի նմանէ, մատուցանէր աւագացունին։

Եւ եթէ ոք բերէր նոցա կերակուրս ինչ կամ ըմպելիս, նախ բերողին տային ուտել և ըմպել, և ապա ինքեանք ուտէին և ըմպէին. զի մի՛ մահացու դեղոց ինչ դժրիցին։

Որչափ և կամէին՝ կանայս առնէին. բայց զպոռնիկս ամենևին ո՛չ ապրեցուցանէին, որ ընդ իւրեանց կանայս. բայց ինքեանք ո՛ւր և հանդիպէին այլազգեաց, անխտիր խառնակէին, և գողութեան ատելիք էին. մինչ զի չարաչար մահուամբ սպանանէին»][1]։

Մանրամասն տեղեկություններ հաղորդում են հայ և օտար աղբյուրները մոնղոլների կրոնի մասին։ Այդ տեղեկություններից երևում է, որ նրանք եղել են կռապաշտներ, բայց չեն ունեցել ոչ

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 257—8։

*«պաշտոն աստուծոյ, ոչ աղօթս և ոչ պահս»[1]։ Պլանո Կարպինին վկայում է, որ նրանք աստվածային են համարել և սրբազան արևը, լուսինը, նաև ջուրն ու հողը[2]։*

*Մոնղոլների մեջ խիստ տարածված է եղել շամանականությունը՝ այն նախնական կրոնը, որի մեջ մեծ դեր էին կատարում հմայություն անող քուրմ շամանները։ Նկատելի է նրանց կրոնական հավատալիքների մեջ նաև բուդդայականության ազդեցությունը։*

*Ուշագրավ է առանձնապես, որ մոնղոլները ո՛չ միայն թշնամական վերաբերմունք չեն ունեցել դեպի մյուս կրոնները, այլև ամեն կերպ աշխատել են սիրաշահել անխտիր բոլոր դավանանքների հոգևորականներին։ Այդ էր պատճառը, որ քրիստոնյաներն ամեն տեղ, նաև Հեռավոր Մոնղոլիայում, կառուցում էին եկեղեցիներ և ազատ կերպով կատարում էին իրենց եկեղեցական արարողությունները և ծեսերը։*

*Այս վերաբերմունքը քրիստոնյա եկեղեցիների և քրիստոնյա հոգևորականության նկատմամբ հիմնովին փոխվեց ու վատացավ Մերձավոր Արևելքում 13-րդ դարի վերջերում, երբ մոնղոլները Ղազան խանի ժամանակ (1295—1304) ընդունեցին Իրանում մահմեդականությունը։*

*Մոնղոլների ռազմական հմտության և մարտական ընդունակությունների նկարագրությունը տվել է իր «Թաթարաց պատմության» մեջ Հեթում պատմիչը։*

> *«Թաթարները, —ասում է նա,— քաջ զինվորներ են և կռվողներ, հնազանդ են իրենց զորավարին և կառավարվում են դյուրավ նշանների միջոցով։ Պատերազմ գնալու ժամանակ թաթարների իշխանը նրանց ռոճիկ չի տալիս և նրանք ապրում են հարստահարությունների և ավարի միջոցով, որից բաժին են տալիս իրենց տիրոջ։ Նրանք իրենց հետ վերցնում են շատ զենքեր։ Կերակրվում են ձիու կաթով և մսով, որոնց մասին շատ լավ համարում ունեն։*
>
> *Իբրև հեծելազոր աչողակ են, նաև լավ աղեղնավորներ են, բայց որպես հետևազոր՝ ծանր են քայլում։ Ճարտարությամբ վերցնում են կռվով քաղաքներ ու ամրոցներ։*

---

[1] *Տե՛ս* Հեթում պատմիչ, *Վենետիկ, 1842, գլ. ԽԸ, էջ 70։* Կիրակոս Գանձակեցի, *էջ 258.* Մաղաքիա, *էջ 3։*

[2] *Տե՛ս Плано Карпини*, История монголов, пер. *А. И. Малсина*, СПб., 1911, *էջ 7—8։*

Ամոթալի չեն համարում ի փախուստ դառնալ, եթե փախչելը անհրաժեշտ լինի։ Ճակատամարտում հարձակումների ժամանակ հանդուգն չեն, բայց եթե կարևոր համարեն՝ դիմում են թշնամու վրա, եթե թշնամին անկարող լինի նրանց հետ կռվել։ Որովհետև լավ նետաձիգներ են՝ նրանց հետ դժվար է մարտնչել. դժվար է և նրանց հետապնդել ետ քաշվելու ժամանակ, որովհետև ետ են գնում կազմ ու կարգով և, ետ դառնալով՝ նետեր են արձակում։

Թաթարների զորքը բացահայտորեն չի նկատվում, որովհետև միասին են գնում։ Թաթարները տալիս են իրենց մոտ եկողներին ինչ որ ունեն, նմանապես և իրենք նույնը պահանջում են ուրիշներից. եթե չտան՝ բռնությամբ են առնում։ Նրանք կարողանում են ուրիշների երկիրն առնել, բայց պահել չեն կարողանում։ Երբ թուլանում են՝ խոնարհ են, իսկ երբ զորեղանում են կամ մեծ բազմություն են կազմում՝ ամբարտավան են»[1]։

Բացի Հեթումից. նաև մյուս ժամանակակից պատմիչները միահամուռ կերպով վկայում են, որ մոնղոլական զորքի գլխավոր առավելություններից մեկն այն է եղել, որ նրանք խիստ հմուտ ու ճարտար նետաձիգներ էին։ Եվ այդ է պատճառը, որ ժամանակակից հայ աղբյուրները նրանց տալիս են հաճախ «նետող» անունը, իսկ Գրիգոր պատմիչը նույնիսկ իր պատմական երկը անվանել է «Պատմութիւն. Տաթարին, այսինքն՝ ազգին Նետողաց»[2]։

Մոնղոլների քոչվորական կենցաղում մեծ դեր էին կատարում կանայք։

«Կանանց պարտականությունն էր,— ասում է 13-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուկը,— վարել սայլերը, դնել նրանց վրա կամ քանդել թաղեվրանները, կթել կովերը, պատրաստել յուղ և մածուն, նաև պատրաստել մորթիներ և կարել ու կցել նրանց միասին. իսկ կցում էին նրանց ջղե թելերով։ Եվ հենց իրենք բաժանում էին ջղերը մանր թելերի ու հետո միացնում և դարձնում երկար թել։ Նրանք կարում էին նաև տրեխներ, չմուշկներ և այլ

---

[1] Տե՛ս Հեթում պատմիչ, Պատմութիւն Թաթարաց. թարգմ. Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1842, գլ. ԽԸ, էջ 70։

[2] Տե՛ս Հ. Ժամկոչյան, Պատմութիւն վասն ազգին Նետողաց երկի հեղինակը, Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, հատ. XXIII, Երևան, 1946, էջ 380։

հագուստներ։ Գործում էին թաղիք և ծածկում էին նրանցով բնակարանները»[1]։

Մոնղոլների կանայք, որոնք կարևոր ու մեծ աշխատանք էին կատարում քոչվորական տնտեսության մեջ՝ որոշ դեր էին կատարում նաև հասարակական և քաղաքական կյանքում։ Նրանք ուղեկցում էին իրենց ամուսիններին և ծնողներին արշավանքներում։ Անվանի «խաթուն»-ների հետ խորհրդակցում էին հաճախ մեծ խաները և իշխանները։ Ամուսինների մահից հետո այրի կանայք սովորաբար ստանձնում էին նրանց իրավունքները և իշխանությունը՝ մինչև իրենց որդիների չափահաս դառնալը։ Հայտնի է նաև, որ մեծ խաների և իշխանների մահից հետո նրանց այրի կանայք դառնում էին հաճախ պետության խնամակալուհիներ և իշխանությունների կառավարչուհիներ[2]։

Կանանց հասարակական այս բարձր դիրքի մասին ունեն վկայություններ նույնպես և հայ աղբյուրները։ Ինչպես վկայում են Կիրակոս Գանձակեցին և Գրիգոր Ակներցին (Մաղաքիա աբեղան), Չարմաղանի հիվանդության և համրության պատճառով Հայաստանի և հարևան երկրների իշխանությունը վարում էր նրա կինը՝ Ելթինա խաթունը[3]։ Կիրակոս Գանձակեցին պատմում է նաև, թե ինչպես Աղվանից կաթողիկոսը եկել ներկայացել էր Ելթինա խաթունին և թե ինչպես վերջինս սիրով ընդունել ու մեծարել էր նրան և տվել էր պարգևներ ու հատուկ գրություն՝ էլտամղա, որպեսզի ոչ ոք նրան չնեղի[4]։

Հյուսիս-արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը նվաճելուց հետո մոնղոլական զորքերը շուտով իրենց արշավանքները շարունակեցին նոր ուղղությամբ՝ դեպի Փոքր Ասիա ու նաև Միջագետք և Ասորիք։

---

1 Տե՛ս Ռուբրուկ, ռուս. թարգմ. Մալեինի, էջ 78։

2 Տե՛ս Владимирцов, Общественный строй монголов, Л., 1934, էջ 55—56։

3 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 269 և 274—5։ Մաղաքիա աբեղա (Գրիգոր Ակներցի), էջ 18։

4 Նույնը, էջ 275—276։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

# ԲԱՉՈՒ ՆՈՅԻՆԸ ԵՎ ԿԱՐԻՆԻ, ԽԼԱԹԻ ՈՒ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՄԸ

1. Բաչու Նոյինի արշավանքը Բարձր Հայք և Կարին քաղաքի ավերումը.— Հայ-վրացական զորքի մեծ դերը։— 2. Ղիաթեդդինի պարտությունը Չմանկատուկի ճակատամարտում և Արևելյան Փոքր Ասիայի նվաճումը.— Խաղաղության դաշինքը Հեթում թագավորի հետ։— 3. Բաղեշի ու Խլաթի առումը և Միջագետքի ու Ասորիքի ասպատակումը.— Օրբելյան Էլիկումի մահը։— 4. Գույուկի ուղարկած Արղուն և Բուղա հարկահանների վայրագությունները։— 5. Գժտությունները Վրաստանում գահաժառանգության առիթով։— 6. Դավիթ՝ Գեորգի Լաշայի որդու և Դավիթ՝ Ռուսուդանի որդու թագավորությունը։— 7. Սմբատ սպարապետի ուղևորությունը մեծ խանի մոտ։— 8. Հասան Ջալալի ուղևորությունը։— 9. Վրաց թագավորի և իշխանների դավադրությունը մոնղոլների դեմ.— Բազմաթիվ գավառների ավերումը.— Հայ իշխանների գրգռված տրամադրությունը։— 10. Ավագի մահը։— 11. Երկպառակություններ մեծ խանության գահաժառանգման համար.— Բաթուի հովանավորյալի՝ Մանգուի գահակալումը։— 12. Մոնղոլական մեծ խանության չորս մեծ ուլուսները.— Հուլավուի առաքումը Արևմուտք և իլխանության հիմնումը։

*Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, 1242 թվի[1] սկզբներին հրաման ստացվեց մեծ խանից համրացած Չարմաղանի փոխարեն առաջնորդ և զորավար ընտրել Բաչու Նոյինին։*

*Ստանձնելով մոնղոլական զորքի հրամանատարությունը՝ Բաչու Նոյինն իսկույն հպատակ ազգերից մեծ զորք հավաքեց և շարժվեց դեպի Կարնո երկիրը, որն այդ ժամանակ գտնվում էր Իկոնիայի Ղիաթեդդին Քայ Խոսրով սուլթանի իշխանության տակ։ Հայաստանը և Արևելյան Վրաստանը նվաճելուց հետո՝ մոնղոլ-*

[1] Կիրակոս Գանձակեցու *1910 թվի հրատարակության մեջ տված է ՈԾ [=1201?], որ մենք առաջարկում ենք ուղղել ըստ Ախալցխայի Կարապետյան դպրոցի ձեռագրի ՈՂԱ [=1242]։*

ներն ուզում էին այժմ ենթարկել իրենց իշխանությանը նաև Իկոնիայի Սելջուկյան մեծ պետությունը։

Հասնելով Կարնո շրջանը՝ նրանք պաշարեցին Կարինը, ուր իրենց անասուններով ու ստացվածքով ապավինել էին նաև գավառի բնակիչները, և, ըստ իրենց սովորության, ուղարկեցին դեսպաններ և պահանջեցին, որ անձնատուր լինեն առանց դիմադրության։ Սակայն քաղաքի պաշտպանները ոչ միայն չհամաձայնեցին, այլև անարգեցին նրանց պատգամավորներին։ Այնուհետև, մոտ երկու ամիս պաշարումից հետո, քաղաքը նվաճվեց հարձակմամբ և բնակչությունը մատնվեց սրի ու կողոպուտի[1]։

Հաղթության պատճառը թե այս և թե հետագա կռիվներում, ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, հայ և վրացի իշխաններն էին, որոնք կանգնած լինելով զորքի առաջին շարքերում՝ ուժեղ կերպով հարձակվում էին թշնամու վրա. մոնղոլներն իրենց նետ ու աղեղներով գալիս էին նրանց ետևից[2]։ Այդպես էին նրանք դասավորում զորքը այն նպատակով, որպեսզի այլազգիները չկարողանան իրենց դավաճանել կամ դիմել փախուստի և ավելի շատ զոհ նրանք տան։

Կարնո առման ժամանակ, պատմում է Կիրակոս Գանձակեցին, օտարազգի զորքի ձեռքը ընկան ահագին քանակությամբ ձեռագրեր։ Այս ձեռագրերը, որ չնչին գներով առնում էին քրիստոնյաները՝ նվիրաբերվեցին Շիրակի և Հյուսիսային Հայաստանի վանքերին ու եկեղեցիներին։

> «Նաև այդ տեղի գերիներից ևս շատերին,— ասում է Կիրակոս Գանձակեցին,— տղամարդկանց, կանանց, երեխաներին, նաև եպիսկոպոսներին, քահանաներին և սարկավագներին, որքան որ հնարավոր էր, գնեցին քրիստոնյա իշխանները՝ Ավագը, Շահնշահը, Վահրամի որդի Աղբուղան և Դոփի որդի Գրիգոր Խաչենեցին, որը առաջինի մարդ էր, ու նաև սրանց զորքը... և բոլորին նրանք ազատ արձակեցին, թողնելով որ ապրեն՝ ուր որ իրենք կամենում են»։
>
> [«Այլ և ի գերելոց անտի զբազումս գնեցին զարս և զկանայս և զմանկտի, զեպիսկոպոսս և զքահանայս և զսար-

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 263—265. Մաղաքիա աբեղա, էջ 13. Վարդան վրդ., ՁԸ. էջ 147. Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն*, էջ 25 և «Անանուն ժամանակագրություն», էջ 21։

[2] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 13—14։ Համեմատե նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 267։

կուսագունս՝ որքան հնար էր գնեցին իշխանքն քրիստոնեայք՝ Աւագն և Շահնշահն և Աղպուղան որդին Վահրամայ, և Գրիգոր Խաչենեցի Դօփին որդի, որ էր այր երկիւղած, և զօրք նոցին... և զամենեսեան ազատ արձակեցին, թողլով ի կամս անձանց ո՛ւր և կայցեն»][1]։

Կարին քաղաքի առումից հետո մոնղոլական զորքը ետ քաշվեց Մուղան, որը իրենց ձմեռվա մշտական կայանն էր։ Իսկ հետևյալ տարին, 1243 թվին, Բաչու Նոյինը հայ և վրացի իշխանների հետ միասին նորից արշավեց Իկոնիայի սուլթանի երկիրը և Կարին—Էրզրումի վրայով առաջ շարժվեց դեպի Երզնկա։

Այս անգամ Ղիաթեդդինը, որը նախապատրաստվել ու մեծ ուժեր էր հավաքել, դուրս եկավ նրանց դեմ պատերազմի։ Ընդհարումը տեղի ունեցավ «Չմանկատուկ» գյուղաքաղաքի մոտ, որը համապատասխան կարող է լինել Երզնկայից մոտ 15—20 կիլոմետր դեպի արևելք գտնվող այժմյան Չիմին գյուղին։ Թեև թուրքական զորքն այս ճակատամարտում որոշ հաջողություն ունեցավ՝ սակայն Ղիաթեդդինը, տեսնելով, որ ամիրաներից ոմանք ուզում են դավաճանաբար անձնատուր լինել՝ փախուստի դիմեց, թողնելով թշնամիներին իր ամբողջ բանակը կահ-կարասիքով[2]։

Եվ այնուհետև Բաչու Նոյինը մտավ Երզնկայի վրայով Փոքր Ասիա և գրավեց մեծ և հարուստ քաղաքները՝ Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան և Տիվրիկը, որոնցից առաջին երկուսը, որոնք դիմադրություն էին ցույց տվել՝ ենթարկվեցին ո՛չ միայն կողոպուտի, այլև կոտորածի ու ավերածության[3]։

Իկոնիայի սելջուկյան սուլթանի պարտությունից և Փոքր Ասիայի արևելյան շրջանների նվաճումից հետո մոնղոլական արհավիրքների վտանգը սպառնում էր արդեն Կիլիկիայի հայկական պետությանը։ Այդ վտանգը Հեթում թագավորը, առանց ժամանակ կորցնելու, աշխատեց կանխել։ Նա ուղարկեց Բաչու Նոյինի և Չարմաղանի կնոջ՝ Ելթինա խաթունի մոտ դեսպաններ և, հայտնելով նրանց իր հնազանդությունը՝ կնքեց նրանց հետ, Խաչենցի Հասան Ջալալի միջնորդությամբ, հաշտության և բարեկամության դաշինք, ստացավ համապատասխան գրություն՝ էլտամղա[4]։

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 265։

2 Տե՛ս Մաղաքիա աբեղա. էջ 14—15 և Կիրակոս Գանձակեցի, էջ 265—267։

3 Նույնը. նաև Վարդան վրդ., ՁԸ, էջ 147. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 25. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 21. Մխիթար Այրիվանեցի, էջ 67. Սամուել Անեցի, էջ 150։

4 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 269—270 և Մաղաքիա աբեղա, էջ 16։

Երբ Իկոնիայի սելջուկյան սուլթանության դիմադրական ուժը մեծ չափով արդեն խորտակված ու ընկճված էր՝ 1245 թվին Բաչունոյինը արշավեց Հայաստանի հարավային կողմով Միջագետք և Ասորիք, ուր այդ ժամանակ իշխում էին Սալահեդդինի և նրա եղբոր Ադիլի որդիներն ու թոռները։ Մոնղոլական զորքերը նախ մտան պատմական Հայաստանի Բզնունիք գավառը և առան այստեղ Բաղեշը և Խլաթը։

Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, թե այս քաղաքների և թե ամբողջ Խլաթի ամիրայության երկրների իշխանությունը նրանք հանձնեցին էյուբյան Մելիք Աշրաֆի կնոջը՝ աթաբեկ Իվանեի դուստր Թամթային, որը գերի էր ընկել նախ Ջալալեդդինի և ապա, վերջինիս պարտությունից հետո, մոնղոլների ձեռքը և երկար ժամանակ գտնվում էր մեծ խանի արքունիքում[1]։

Խլաթի շրջանից Բաչուի զորքերը իջան հարավ ու ասպատակեցին Միջագետքը և Ասորիքը, հասնելով մինչև Ամիդ, Ուրֆա, Մծբին և Դամասկոս։ Թեև էյուբյան տոհմի մանր ու իրար թշնամի իշխանությունները ցույց չտվին նրանց լուրջ դիմադրություն՝ բայց և այնպես մոնղոլները մեծ կորուստներ ունեցան և նրանց զորքի ու ձիերի մեծագույն մասը մահացան այստեղ ամառվա շոգի պատճառով, որին նրանք անսովոր էին[2]։

Ասորիքից և Միջագետքից նրանք հարկադրված եղան ետ նահանջել և վերադարձան ու ձմեռը հանգստացան տաք ու արգավանդ Մուղանում։

1245 թվի արշավանքի ժամանակ, որին մասնակցել էին իրենց զորքերով վրացի և հայ իշխանները, հավանական է ենթադրել, ինչպես մատնացույց է արել Չամչյանը, Օրբելյան Էլիկումի ծանր հիվանդությունը և մահը, որ հիշատակված է Ստեփանոս Օրբելյանի մոտ[3]։ Ալիշանի կարծիքը[4], որ այդ տեղի էր ունեցել Մարտիրոսաց քաղաքի առման ժամանակ «1256 թվին»՝ չի կարող ճիշտ լինել, որովհետև Օրբելյանը վերոհիշյալ արշավանքին մասնակից է համարում նաև Ավագին, որը վախճանվել էր 1250 թվին։

Նույն այս 1245 թվին, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակե-

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 276—7։

2 Նույնը։

3 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 404 և Չամչյան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 218։

4 Տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 93։ Համեմատե, Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 94։

ցին, մոնղոլները հրաման տվին վերաշինել ավերված Կարին—Էրզրումը և հետզհետե վերադարձան ու վերանորոգեցին քաղաքը նրա թաքնված ու փախած բնակիչները և գերի տարված Սարգիս եպիսկոպոսը, որին գերությունից ազատել էր Զաքարյան Շահնշահը[1]։

Հոքաթա մեծ խանի մահից հետո (1241) նոր խանի ընտրությունը շարունակ հետաձգում էին, որովհետև մեծ խանության տոհմի ավագ անդամ Բաթուն, որի հարաբերությունները Հոքաթայի որդու Գույուկի հետ վատ էին ու լարված՝ հիվանդության պատրվակով խուսափում էր մասնակցել բարձր ազնվականության մեծ ժողովին (ղուռուլթային)։ Այս ժամանակաշրջանում պետության գործերը վարում էր Հոքաթայի կինը՝ Տուրաղինեն։ Հինգ տարուց հետո միայն, 1246 թվին, բացակայությամբ Բաթուի, կայացավ ղուռուլթայը և Գույուկը ընտրվեց մեծ խան։

Նոր մեծ խանի առաջին գործն այն եղավ, որ նա հարկահաններ ուղարկեց ամեն տեղ և հրամայեց հավաքել իր զորքերից տասանորդ, իսկ նվաճված երկրներից ու իշխանություններից՝ հարկեր։ Մերձավոր Արևելք ուղարկված հարկահանների գլխավորներն էին Արղունը, որը ղեկավարն էր բոլորի, և Բուղան։

«Այս Բուղան,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— գալով թաթարական զորքերի մոտ՝ մտնում էր ավագանու տները և, ինչ որ իրեն դուր էր գալիս՝ առնում էր անխնայաբար։ Եվ ոչ ոք չէր համարձակվում մի խոսք ասել նրան, որովհետև նա հավաքել էր իր շուրջը սրիկա մարդիկ պարսիկներից ու տաճիկներից, որոնք շարունակ անգութ արարմունքներ էին գործում և առավելապես թշնամի էին քրիստոնյաներին։

Այս էր պատճառը, որ սրանք գրգռեցին Բուղային բարեպաշտ Հասան իշխանի դեմ, որին Ջալալ էին անվանում։ Նա վերջինիս բռնեց մեծ արքունիքում բոլոր ավագների ներկայությամբ և, ենթարկվելով շատ պատիժների՝ քանդեց նրա անմատչելի բերդերը, Խոյական բերդը, ինչպես անվանում էին պարսկերեն լեզվով, նաև Դեղը, Տիրանաքարը և այլ նրա ամրոցները։ Այնպես նրանց խորտակեց, որ մինչևիսկ հետք չմնաց, թե երբևիցե շեն են եղել։

Եվ նա [Բուղան] շատ ոսկի ու արծաթ առավ նրանից և

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 277։

վերջինս հազիվ կարողացավ ազատվել. իսկ մեծամեծ ավագանին բոլորովին չկարողացան նրան օգնել»։

[«Նմանապէս և այս Բուղա եկեալ ի զօրսն Թաթար. մտանէր ի տունսն աւագանւոյն, և զոր ինչ ախորժ թուէր իւրն՝ առնոյր անխնայ. և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա. զի ժողովեալ էր իւր արս սրիկայս ի պարսից և ի տաճկաց, որք անխնայ գործէին զգործ խակութեան. և թշնամիք էին առաւել քրիստոնէից։

Վասն որոյ չարացուցին զնա ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն ասէին, որ ըմբռնեաց զնա ի մեծ դրանն առաջի ամենայն աւագանւոյն, և ընդ բազում պատժօք զնա արկեալ, քակեաց զանմատչելի բերդս նորա, զոր Խոյականայ բերդ կոչէին ըստ պարսկական բարբառոյն, և զԴեղն և զՏիրանաքարն, և զայլ ամրոցս նորին. և այնպէս յստակեաց զնոսա, մինչև հեաք անգամ ոչ երևէին, թէ բնաւ շէն լեալ իցէ. և բազում ոսկի և արծաթ առեալ ի նմանէ, հազիւ զերծաւ ի նմանէ. և մեծամեծ աւագանին ոչինչ կարաց օգնել նմա»][1]։

Մոնղոլների տիրապետության առաջին հենց տասնամյակում, երբ Հայաստանի և Վրաստանի իշխանները մեծ դժվարությամբ էին պահպանում իրենց խղճալի դրությունը՝ Վրաց թագավորությունը սկսել էր թուլանալ և ջլատվել նաև գահակալական ներքին խառվությունների պատճառով։

Վրաստանի թագավոր Գեորգի Լաշայի մահից հետո (+1223) մնացել էր Դավիթ անունով մի որդի, որը թագավորական գահի օրինավոր ժառանգն էր։ Սակայն Ռուսուդանը՝ նրա հորաքույրը, որը նրա անչափահասության պատճառով ինքն էր ստացել գահը՝ նրա փոխարեն ուզեց թագավոր դարձնել իր որդուն՝ Դավիթին։ Օրինավոր թագաժառանգի թեկնածությունը մեջտեղից վերացնելու համար՝ Լաշայի որդուն նա ուղարկեց իր դստեր ամուսնու, Իկոնիայի Ղիաթեդդին սուլթանի մոտ, որը թագաժառանգին պահեց իր երկրում կալանքի տակ։ Գահակալության այս հարցն էր, որ դառել էր Վրաստանում երկպառակությունների և գժտությունների պատճառ։

Պետք է ասել, որ թեև Ռուսուդան թագուհին համաձայնել էր հնազանդվել մոնղոլական իշխանությանը, սակայն նա, չնայած

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 297—298։

Բաչուի պահանջին՝ անձնատուր չէր եղել և իր որդու հետ թաքնվել ու ամրացել էր Սվանեթի անառիկ վայրերում։ Դրա համար էլ Բաչուն, տեղեկանալով, որ օրինավոր թագաժառանգ Դավիթը աքսորված է և գտնվում է Կեսարիա քաղաքի բանտում՝ ուղարկեց Վահրամ Գագեցուն Ղիաթեդդին սուլթանի մոտ (1236—1246)[1] և, բանտից ազատել տալով Դավթին՝ կարգադրեց, որ նրան Ռուսուդանի փոխարեն հանդիսավոր կերպով օծեն Վրաստանի թագավոր և ուղարկեն Գույուկ մեծ խանի մոտ վավերացնելու նրա իշխանությունը։

Լսելով այս՝ Ռուսուդանը ևս ուղարկեց իր որդուն Ոսկե Հորդայի Բաթու խանի մոտ, որի իշխանությանը հարավում ենթարկված էր ամբողջ Հյուսիսային Կովկասը մինչև Օսեթի և Դերբենդի կողմերը, և, համաձայնելով հպատակվել նրան՝ խնդրեց Վրաստանի թագավոր նշանակել իր Դավիթ որդուն։ Ռուսուդանի այս որդին ևս Բաթուի կողմից ուղարկվեց Գույուկ մեծ խանի մոտ[2]։

Գույուկ մեծ խանը, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, վճռեց որ նախ թագավորելու է Գեորգի Լաշայի որդի Դավիթը, որն ավագագույնն էր, և նրա մահից հետո՝ մյուս Դավիթը։ Նա հրամայեց նաև, որ Վրաց թագավորության գանձերը երեք մաս անեն՝ պատվական ու անգին թախտը, թագը և թանկարժեք իրերը ուղարկեն իրեն, իսկ մյուս հարստությունները բաժանեն երկուսի մեջ։

Համաձայն այս վճռի, որ կարող էր կայացած լինել, հավանորեն, 1247 կամ 1248 թվին՝ Վրաստանի թագավոր դառավ Տփղիսում Գեորգի Լաշայի որդի Դավիթը, իսկ մյուս Դավիթը, որի մայրը՝ Ռուսուդանը մեռել էր 1247 թվին, իշխեց Սվանեթում[3]։

1248 թվին Կիլիկիայի Հեթում թագավորը ևս, որը հայտնել էր Բաչուին իր հնազանդությունը՝ ուղարկեց մեծ խանի մոտ իր եղբորը՝ Սմբատ սպարապետին մատուցելու իր ուղարկած նվերները և հայտնելու նրան, իբրև բարձրագույն տիրոջ, վասալական իր հպատակությունը։ Աղբյուրների վկայություններից երևում է, որ

---

[1] Ղիաթեդդին Քեյ Խոսրովը մեռել է ո՛չ թե 1244 թվին, ինչպես ենթադրաբար կարծում է Մյուլլերը, այլ 1246 թվին, ինչպես այդ պարզ մատնանշված է Սմբատ սպարապետի մոտ (Մոսկվա, 1856, էջ 114). տե՛ս А. Мюллер, История Ислама, т. II, СПб, 1896, էջ 247։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 273—274 և 299—301. Մաղաքիա աբեղա, էջ 17—19։

[3] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 301. Ստեփանոս Օրբելյանը Լաշայի որդի Դավթի վերադարձը մեծ խանի մոտից դնում է 1248 թվին. տե՛ս «Ժամանակագրութիւն», էջ 26։

համաձայն մոնղոլական պետության կարգերի հպատակ թագավորներն ու մեծ իշխանները պետք է ներկայանային մեծ խանին. իբրև իրենց սյուզերենին, և հաստատվեին իրենց իրավունքներում։

Հիմնվելով Կիրակոս Գանձակեցու վկայության վրա՝ պատմագետները ենթադրել են, որ Սմբատ սպարապետը գնացած է եղել Գույուկ մեծ խանի մոտ[1]։ Սակայն աղբյուրների վկայությունների ուշադիր քննությունից դժվար չէ կռահել, որ նա, իրապես, ինչպես մատնանշում է Մաղաքիա աբեղան (այսինքն՝ Գրիգոր պատմիչը), գնացել էր Ոսկե Հորդա Սայինղան Բաթուի մոտ, որին մոնղոլները, ինչպես հայտնի է, անվանում էին «սային ղան», այսինքն՝ «լավ խան»[2]։ Հավանական է ենթադրել, որ Սմբատ սպարապետի ուղևորության ժամանակ (1248—1250)[3] Գույուկ մեծ խանն արդեն վախճանվել էր, ուստի և նա ներկայացել էր Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանին, որն այդ ժամանակ մինչև Մանգուի մեծ խան ընտրվելը (1251—1259) ժամանակավորապես վարում էր մեծ խանի պաշտոնը։

Այս նոր ենթադրությունը հաստատություն է գտնում պարսկական պատմագիր Ջուվեյնիի կողմից, որը պարզ կերպով մատնանշում է, որ Բաթուի մոտ եկել էին և ստացել նրանից արտոնագրեր «Իկոնիայի, Ասորիքի և այլ երկրների սուլթանները»[4]։ Իսկ Կիրակոս Գանձակեցու վկայության մեջ ասված է նույնպես, որ Սմբատ սպարապետը գնացել էր մեծ խանի մոտ ուղեկցությամբ Իկոնիայի Ղիաթեդդին սուլթանի որդիներից մեկի, որը ստացել էր խանից իր հոր իշխանությունը[5]։

Սմբատ սպարապետը, ինչպես վկայում են Կիրակոսը և Գրիգոր պատմիչը (Մաղաքիան), ընդունվեց սիրով և մեծարանքով և ստացավ խանից ոսկե փայիզաներ[6], թաթար ազնվական կին բարձր

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 350։ Համեմատե նաև Չամչյան, Պատմութիւն Հայոց, Գ, էջ 222. Б. Греков и А. Якубовский. Золотая орда, Л., 1937, էջ 103 և ուրիշ.։

[2] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 16։ Համեմատե Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 25, 26, 48 են. նաև А. Н. Насонов, Монголы и Русь, М., 1940, էջ 10։

[3] Սմբատ Սպարապետ, էջ 115։

[4] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 22։

[5] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 301—302։

[6] Փայիզա կոչվում են փոքրիկ տախտակները, որոնց վրա գրված էին աստծու և խանի անունները և որոնք տրվում էին վասալ իշխաններին ու պաշտոնյաներին ի նշան նրանց իշխանության։

գդակով («տաթար խաթուն պօխտախաւոր») և հատուկ արտոնագիր յառլըխ, որի համաձայն Կիլիկիայի թագավորին պետք է տրվեին այն բոլոր գավառներն ու բերդերը, որոնք առաջ Լևոն Բ-ին էին պատկանում, բայց հետո գրավել էր Իկոնիայի Ալայեդդին սուլթանը[1]։

Բաթուի մոտ հենց նույն այս ժամանակաշրջանում, ինչպես վկայում է դարձյալ Կիրակոսը, գնում էին շարունակ—

«Թագավորներ և արքայորդիներ, իշխաններ ու վաճառականներ և բոլոր վշտացածները և իրենց հայրենական գույքից զրկվածները. և նա արդար դատաստանով վերադարձնում էր նրանցից յուրաքանչյուրին, որ եկել էր իր մոտ՝ իրենց գավառները, հայրենական կալվածները և իշխանությունները, տալիս էր նաև նշանակալի գրություններ, և ոչ ոք չէր համարձակվում հակառակել նրա հրամաններին»։

[«Ապա սկսան երթալ առ նա թագաւորք և թագաւորազունք, և իշխանք և վաճառականք և ամենայն վշտատեսք, որք զրկեալ էին ի հայրենեաց իւրեանց. և նա արդար դատաստանաւ տայ զիւրաքանչիւր գաւառս և զհայրենիս և զիշխանութիւնս ամենայն ումեք երթողացն առ նա, և գիրս նշանաւորս, և ոչ ոք իշխէր ընդդէմ դառնալ հրամայելոցն ի նմանէ»][2]։

Վերականգնելու համար իր հայրենական իշխանության նախկին սահմանները, ինչպես վկայում է դարձյալ Կիրակոս Գանձակեցին, Բաթուի և նրա որդու Սարթախի մոտ գնացել էր Հայաստանից Ներքին Խաչենի Հասան Ջալալ իշխանը։ Սրան ևս մեծարանքով ընդունել էին և հրամայել էին վերադարձնել հայրենական կալվածները՝ Չարաբերդը, Ականան և Կառկառը, որ առաջներում խլել էին Թուրքերը և Զաքարյանները[3]։ Հասան Ջալալի այս այցելությունը Բաթուի մոտ հավանական մի նշան է, որ Ներքին Խաչենը եղել է մոնղոլների ժամանակ անկախ իշխանություն և չի գտնվել Զաքարյանների գերիշխանության տակ։

Գեորգի Լաշայի որդի Դավիթը, հաստատելով իր աթոռը Տփղիսում՝ միացրեց իր իշխանության ներքո Վրաց և Հայոց իշխաններին։ Բայց երկիրը խաղաղվեց շատ կարճ ժամանակով։ Վրաստանը և Հայաստանը թեև ազատ էին այժմ ասպատակություններից ու

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 301—302. նաև Մաղաքիա աբեղա, էջ 16—17։
2 Նույնը, էջ 344։
3 Նույնը, էջ 345։

արտաքին վտանգից՝ բայց խիստ նեղվում էին նոր տիրողների անհագ ագահությունից և անսանձ հարստահարումներից։ Մոնղոլական իշխանավորները և պաշտոնյաները չէին բավականանում սահմանված հարկերով և շարունակ գալիս էին ու պահանջում ձիեր, զգեստներ, կերպաս, կտավ, ոսկի և այլ թանկարժեք իրեր։

Այս ծանր բռնություններից վրդովված՝ հայ և վրացի իշխանները, որոնք այժմ միացած էին նորընտիր Դավիթ թագավորի իշխանության տակ՝ 1249 թվին զորաժողով արին Տփղիսում և ուզեցին դավադրություն կազմել ու ապստամբել մոնղոլ հարստահարիչների դեմ։ Բայց այս դավադրությունը, որը ժամանակակից Գրիգոր պատմիչը (Մաղաքիա աբեղան) հասկանալի պատճառով համարում է «ո՛չ ուղորդ, այլ ընդ խաղս և կատակս»՝ հաջողություն չունեցավ։ Բաչուն և մեծամեծները, որոնց իսկույն հայտնել էին այս դավադրության մասին՝ ձերբակալեցին թագավորին ու իշխաններին և, Ավագի միայն միջնորդությամբ, որը խափանել էր դավադրությունը՝ ազատեցին բոլորին, վերցնելով նրանցից գլխագին[1]։

Դավադրության այս փորձը մոնղոլական զորքին առիթ ծառայեց վերսկսելու կողոպուտները, ավերածությունները և կոտորածները, գլխավորապես, Սամցխեում և վրացական այլ գավառներում, որոնց մի մասը ապստամբել էր։ Նրանք ավերեցին նաև Հայաստանի մի քանի շրջանները։ Ինչպես վկայում է Վարդան վարդապետը, նրանք—

> «Անթիւս կոտորեցին և գերեցին գեօղս և ագարակս և գործեցին խայտառականս ի կանայս ի Հայս և առելի յաշխարհն Վրաց»[2]։

Որ մոնղոլական ծանր տիրապետության հետ չէին հաշտվել հայ և վրացի իշխանները և հարմար դեպքում պատրաստ էին նորից ապստամբել նրանց դեմ, այդ երևում է ֆրանսիացի ճանապարհորդ Ռուբրուկի վկայությունից, որը, Մանգու մեծ խանի մոտից վերադառնալիս, 1255 թվի հունվար ամսին Նախիջևանից եկել էր Անի և հրավիրվել էր Ճաշի Շահնշահի մոտ։

«Մենք այս քաղաքից [Նախիջևանից],— պատմում է

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 303—305. Մաղաքիա, էջ 20—21. Մելիք-սեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 57. Վարդան վրդ., ՁԸ, էջ 147—148 և ուրիշ.։

[2] Տե՛ս Վարդան վրդ., ՁԸ, էջ 148։ Համեմատե նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 305. Մաղաքիա, էջ 21. Մխիթար Այրիվանեցի, էջ 67. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 27. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 26։

Ռուբրուկը,— հեռացանք հունվարի 13-ին, որովհետև ձյունի պատճառով մենք ստիպված էինք մնալ այնտեղ։ Չորս օրից եկանք Շահնշահի երկիրը, երբեմնի ամենազորավոր վրացի իշխանի, բայց հիմա հարկատու թաթարներին, որոնք կործանած են իր բոլոր ամրոցները։ . . . . . Ես ճաշեցի մի անգամ այս Շահնշահի հետ և նա շատ մեծ քաղաքավարություն ցույց տվեց իմ հանդեպ, ինչպես նաև իր կինը և իր զավակը՝ Զաքարիա անունով մի շատ գեղեցիկ ու իմաստուն երիտասարդ, որ հարցրեց ինձ,— եթե ձեզ մոտ գամ՝ դուք կպահե՞ք ինձ. որովհետև նա այնքան ծանր է զգում թաթարների տիրապետությունը, որ թեև նա ամեն բան առատորեն ունի, սակայն նախընտրում է թափառել օտար երկրներ, քան կրել նրանց տիրապետությունը։ Այսուհանդերձ, նրանք ինձ ասացին, թե իրենք հռովմեական եկեղեցու զավակներ են[1], և եթե պապը մի քիչ օգնություն ուղարկե իրենց՝ նրանք դրացի բոլոր երկրները պիտի ենթարկեն եկեղեցուն»[2]։

Արդեն 1249 թվին, վերոհիշյալ դավադրության և ապստամբության ժամանակ. Ավագը, որը Վրաց թագավորության աթաբեկն էր և ամիրսպասալարը, ծանր հիվանդ էր և չէր կարողացել գալ մոնղոլ գլխավորների մոտ ձիով։ Նա վախճանվեց 1250 թվին[3], հավանորեն Բջնիում, որը, ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, նրա աթոռանիստ ավանն էր։ Իր հոր Իվանեի հետ նա թաղված է, ըստ երևույթին, ինչպես ճիշտ ենթադրում է Մելիքսեթ-Բեկը, Բջնիի Պղնձահանք վրացական վանքում, որը գտնըվում էր Բջնիից դեպի հյուսիս, Թայչարուխ գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ[4]։

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Ավագի մահից հետո նրա իշխանությունը տրվեց Շահնշահի որդուն՝ Զաքարեին։ Ինքը՝ Ավագը որդի չուներ, այլ ուներ միայն մի դուստր Խոշաք անունով։ Բայց շուտով իշխանությունը Զաքարեից վերցրին և տվին Ավագի

[1] Շահնշահը և նրա որդին, պատկանելով քաղկեդոնիկ դավանության, ըստ երևույթին, իրենց դավանակից էին համարում լատինական եկեղեցուն։

2 Տե՛ս «Ուղևորություններ», հատ. Ա, Երևան, 1932, էջ 19—20։

[3] Տե՛ս Վարդան վրդ., ՁԸ, էջ 148, Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 412, նույնի, «Ժամանակագրություն», էջ 26. Կիրակոս Գանձակեցի, էջ 305. «Անանուն ժամանակագրություն», էջ 21։

[4] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 64—69։

կնոջը՝ Գոնցայրին[1]։ Այնուհետև, ինչպես կտեսնենք, Ջաքարյանների տան քաղաքական մեծ դերը հետզհետե նսեմացավ և Հուլավուի ժամանակ նրանց իշխանությունը տրվեց այլ տոհմերի։

13-րդ դարի կեսին, Գույուկ մեծ խանի մահից հետո (+1248), Չինգիզ խանի ընտանիքում երկպառակությունները գահակալության խնդրի շուրջը նորից սաստկացան։ Ինչպես նախարարական Հայաստանում, նույնպես և այստեղ, մեծ նշանակություն ուներ ավագության իրավունքը։ Այստեղ, ինչպես հայտնի է, Չինգիզ խանի որդիների մահից հետո՝ նրա տոհմի ավագագույն անդամն էր Բաթուն. և այդ է, անշուշտ, պատճառը, որ նա մեծ հեղինակություն ուներ և նրա առաջարկներն ընդունվում էին ղուռուլթայներում առանց հակաճառության։

Բացի օտար աղբյուրներից նաև Կիրակոս Գանձակեցին առանձնապես շեշտում է[2], որ Բաթուին նրա ազգականները բոլորից բարձր էին համարում և մեծ խաները գահ էին բարձրանում նրա համաձայնությամբ։ Գույուկի մահից հետո նրան էին, ասում է նա, արժանի համարում, որ ընտրվի մեծ խան, իսկ հակառակ դեպքում, կարծում էին, որ մեծ խան պիտի ընտրվի, ո՛ւմ որ նա մատնանշի։

Բայց կային և Բաթուի հակառակորդներ։ Որովհետև Չինգիզ խանի որդի Հոքաթայի մահից հետո մեծ խան էր ընտրվել վերջինիս որդին, Գույուկը, և գահը այսպիսով անցել էր ուղիղ գծով մեռնող մեծ խանի որդուն՝ ուստի իրենց թագաժառանգ էին համարում Հոքաթայի մյուս որդիները։ Այսպիսով մոնղոլական մեծ խանության մեջ ևս, ինչպես ֆեոդալական արևելյան հին երկրներում՝ առաջացել էր գահաժառանգման երկու տարբեր սկզբունքների պայքար և այս պայքարը պատճառ էր դառել ընտանեկան երկպառակությունների։

Այս դեպքերին ժամանակակից պարսկական հեղինակ Ջուվեյնին հաղորդում է, որ գահաժառանգման խնդիրը վերջ ի վերջո լուծվեց Բաթուի որոշմամբ։

«Երբ Գույուկը[3],— պատմում է նա,— այս աշխարհից

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 205. Ստեփանոս Օրբելյան, ԿԶ, էջ 412. Նույնը, «Ժամանակագրութիւն», էջ 26։

[2] Նույնը, էջ 299, 343։ Համեմատե նաև Тизенгаузен, Материалы, II, էջ 15—16, 48 են։

[3] Տե՛ս Тизенгаузен, Материалы, II, էջ 15—16։ Համեմատե նաև Ռաշիդեդդինի վկայությունը. Материалы, II, էջ 66։

> տեղափոխվեց՝ մոնղոլական զորքի բոլոր ավագները դիմեցին Բաթուին և ասացին,— «Դո՛ւ պետք է լինես մեր թագավորը, որովհետև Չինգիզ խանի տոհմից ուրիշ ոչ ոք չկա քեզանից ավելի ծեր. գահը, թագը և իշխանությունն ամենից առաջ քոնն են»։ Բաթուն պատասխանեց. «Ինձ և իմ եղբայր Բերքային այս կողմերում [այսինքն՝ Դեշտ-ի-Ղփչաղում] այնքան պետություններ ու կալվածներ են պատկանում, որ տնօրինել այս բոլորը և միաժամանակ կառավարել նաև Չինաստանի, Թուրքաստանի և Իրանի երկրները անհնարին է։ Ամենից լավ կլինի հետևյալը. մեր հորեղբայր Տուլին, Չինգիզ խանի փոքր որդին՝ մեռավ երիտասարդ հասակում և չվայելեց թագավորական իշխանությունը, ուստի և թագավորությունը կտանք նրա որդուն և մեծ խան կնստեցնենք նրա մեծ որդուն՝ Մանգու խանին։ Որովհետև ես՝ Բաթուս, նրան նստեցնելու եմ գահ, ուստի և, իրապես, իշխող կլինեմ ես»։ Եվ նրա այդ կարծիքին բոլորը միացան»։

Այսպիսով՝ մոտ երեք տարի տևող միջիշխանությունից հետո՝ 1251 թվին մեծ խան դառավ Բաթուի աջակցությամբ Տուլիի որդին՝ Մանգուն։

Սրա իշխանության ժամանակ (1251—1259) մեծ խանության կառավարությունը ենթարկվեց որոշ փոփոխությունների։ Չինգիզ խանի ու նրա հաջորդների հիմնած հսկայական պետությունը բաժանված էր, ինչպես հայտնի է, չորս մեծ ուլուս կոչվող շրջանների։

1. Չինգիզ խանի ու մեծ խաների ուլուսը,— Մոնղոլիան, Չինաստանը և Տիբեթը,— որի մայրաքաղաքն էր Ղարադորումը (Կարակորումը), որը գտնվում էր Օրխոն գետի վրա Բայկալյան լճից դեպի հարավ-արևելք։

2. Չինգիզ խանի որդի Չաղատայի ուլուսը, որը տարածվում էր Ալտայից մինչև Ամու-Դարյա, պարունակելով իր մեջ Մավերաննախր-Թուրքաստանը և սրանից դեպի արևելք գտնվող շրջանները։

3. Չինգիզ խանի մեծ որդու Ջուչիի և սրա որդու Բաթուի նվաճած մեծ պետությունը՝ Դեշտ-ի-Ղփչաղը, որը գտնվում էր Կասպից և Սև ծովից հյուսիս և տարածվում էր մինչև Մոսկվա և Վոլգայի բուլղարների երկիրը։ Այս ուլուսի մեծագույն մասը նվաճել էր Բաթուն՝ Ոսկե-Հորդայի հիմնադիրը (1236—1255/6)[1]։

---

[1] Հայկական աղբյուրները վկայում են, որ Բաթուն մեռել է 1256 թվի սկզբին. տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 357, Վարդան վրդ., էջ 150. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 26։

4. Առաջավոր Ասիան,— Պարսկաստանը և նրա հարևան արևմրտյան երկրները,— միակ մեծ ուլուսն էր, որի կառավարությունը գտնվում էր ո՛չ թե Չինգիզ խանի տան անդամների, այլ մոնղոլական զորապետների ձեռքին։

Մանգուն, գահ բարձրանալով, մեծ խանության կառավարման մեջ մտցրեց երկու կարևոր փոփոխություն։ Նա նշանակեց իր եղբորը Խուբիլային հարավ-արևելյան երկրների ու Չինաստանի կառավարիչ և այս փոփոխության հետևանքը հետագայում այն եղավ, որ մեծ խանության մայրաքաղաքը փոխադրվեց Ղարաղորումից Պեկին։

Երկրորդ մեծ փոփոխությունը վերաբերվում էր Առաջավոր Ասիային և, հետևապես, նաև Հայաստանին ու Վրաստանին։ Իբրև այս ուլուսի կառավարիչ՝ Մանգուն ուղարկեց իր մյուս եղբորը Հուլավուին, որը հիմնադիր եղավ այստեղ սեփական դինաստիայի։ Այսպիսով, Առաջավոր Ասիան էլ, ինչպես մեծ խանության վերոհիշյալ մյուս շրջանները՝ ստացավ հատուկ դինաստիա Չինգիզ խանի տոհմից։

Հուլավուին տրված մեծ երկիրը, ինչպես կտեսնենք, շուտով դառավ առանձին անկախ պետություն, որն անվանվում էր իլխանություն։

Մանգուի մեծ խանության և նրա եղբոր Հուլավուի ժամանակ վերսկսվեցին կատաղի կռիվները արևմուտքում։ Այստեղ դեռևս ուժեղ էր Արաբական խալիֆայությունը և դեռ նվաճված չէին Իսմայելիտ աղանդավորների երկիրը, Հյուսիսային Միջագետքի և Ասորիքի որոշ մասերը և մամլուքների եգիպտական հզոր պետությունը։

Գլխավորապես այս նոր նվաճումները գլուխ բերելու համար էր, որ 1255 թվին Մոնղոլիայից եկավ արևմուտք Հուլավու խանը։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

# ՀՈՒԼԱՎՈՒՆ ԵՎ ՆՐԱ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

**1. Հայաստանը և Վրաստանը իբրև մեծ խանության վասալական երկրներ։— 2. Աշխարհագիրը և հարկերի ծանրացումը Մանգուի ժամանակ։— 3. Հեթում թագավորի ուղևորությունը Բաթուի և Մանգուի մոտ։— 4. Հուլավու և Հաշիշյանների ամրությունների առումը.— Բաչուի և նրա զորքի վտարումը Մուղանից Փոքր Ասիա։— 5. Խաների որդիների գալուստը Անդրկովկաս։— 6. Բաղդադի ավերածությունը և խալիֆայության բարձումը։— 7. Մուֆարղին քաղաքի պաշարումը և առումը.— Սասունցիների հպատակումը մոնղոլական իշխանության։— 8. Հուլավուի արշավանքը Ասորիք.— Քիթբուղայի պարտությունը։— 9. Հայ-վրացական նոր ապստամբությունը։— 10. Հասան Ջալալի և Շահնշահի որդու Զաքարեի սպանումը։— 11. Ներքին խռովությունները մոնղոլական մեծ խանության մեջ։— 12. Արյունահեղ կռիվները Ջուչյանների և Հուլավյանների միջև։— 13. Հուլավուի անկախ տերությունը և նրա սահմանները.— Հուլավյանների աթոռանիստ կենտրոնի կառուցումը Ալադաղում։— 14. Հուլավուի մահը։**

*Հայաստանի և Վրաստանի նվաճումից հետո այս երկրների իշխանները, ինչպես վերև տեսանք, թողնվել էին իրենց իշխանություններում իբրև մոնղոլներին ենթակա տեղական կառավարիչներ։*

*Մոնղոլական տիրապետության առաջին այս շրջանում բոլոր ուլուսները դեռևս սերտ կապված էին Չինգիզ խանի ու նրա հաջորդների միացյալ պետության հետ և համարվում էին մեծ խաներին պատկանող երկրամասեր։ Հայաստանի և Վրաստանի գերագույն իշխանավորները, իբրև մեծ խաների վասալներ, պետք է անձամբ ներկայանային իրենց սյուզերենին և վերահաստատվեին իրենց կալվածատիրական ու իշխանական իրավունքներում։ Հավաքված հարկերը կամ նրանց մի մասը ուղարկվում էին Ղարաղորում կենտրոնական կառավարությանը, որը գլխավոր կազմակերպողն էր և տնօրինողը հիմնական այդ խնդրի։*

*Աղբյուրների վկայություններից երևում է, որ սկզբնական այս ժամանակաշրջանում սահմանված հարկերը վճարում էին նոր տիրողներին Հայաստանի և Վրաստանի տեղական իշխանները։ Բայց Մանգուի իշխանության արդեն առաջին տարիներում, մեծ խանության եկամուտները ավելացնելու նպատակով, հարկահավաքմանը տրվեց ամեն տեղ, թե արևելքում և թե արևմուտքում, նոր կազմակերպություն։*

*Արղունի հարկերի վերակացությունը դեռևս Գույուկ մեծ խանի ժամանակ հանձնված էր բոլոր նվաճված երկրներում Արղունին, որին Գույուկը, ինչպես վերև հիշեցինք, Բուղայի հետ միասին ուղարկել էր արևմուտք ու նաև Հայաստան։ Եվ հենց նույն այս Արղունին հանձնարարվեց այժմ վերակազմել հարկահավաքման գործը և ընդհանուր աշխարհագիր անել բոլոր հպատակված երկրներում։*

*Սա 1252 թվին բնակչության ցուցակագրություն կատարեց Չինաստանում, 1253 թվին՝ Իրանում, 1254 թվին՝ Հայաստանում և Վրաստանում, իսկ այնուհետև՝ նաև Ռուսաստանում ու Ոսկե Հորդայի այլ շրջաններում։ Հայաստանում Արղունի գործակիցն էր Թորա Աղան, որը Բաթուի երկրի գլխավորներից մեկն էր[1]։ Այս աշխարհագրի ու Հայաստանի հարկատվության մասին մենք մանրամասն խոսելու ենք ներքև։*

*Նույն այս 1254 թվին, երբ Հայաստանում ընդհանուր աշխարհագիր էր արվում՝ Ոսկե Հորդայի Բաթու խանը դիմեց Կիլիկիայի Հեթում Ա թագավորին և կարգադրեց, որ նա տեսակցության գա իր մոտ ու ապա գնա և ներկայանա Մանգու մեծ խանին։ Մոնղոլներին հպատակված թագավորները, ինչպես վերև ասացինք, պետք է անձամբ ներկայանային մեծ խաներին, տանեին նրանց պատշաճ ընծաներ և, հայտնելով իրենց հավատարմությունը՝ ճանաչվեին իբրև վասալներ։*

*Հեթում թագավորի ուղևորությունը Բաթուի և Մանգու մեծ խանի մոտ նկարագրված է Կիրակոս Գանձակեցու պատմության առանձին գլխում, որի մեջ մանրամասն նշանակված է նաև այդ ճանապարհորդության ամբողջ ուղեգիծը, որ կարոտ է դեռ հատուկ ուսումնասիրության։*

*Մեկնելով 1254 թվի գարնան սկզբներին Սիս մայրաքաղա-*

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *էջ 348։ Համեմատե նաև* Մաղաքիա աբեղա, *էջ 22.* Վարդան վրդ., *էջ 148.* Ստեփանոս Օրբելյան, *էջ 413. նույնը. «Ժամանակագրութիւն», էջ 22.* Մխիթար Այրիվանեցի, *էջ 67։*

քից՝ Հեթում թագավորը ծածկաբար անցավ Իկոնիայի սուլթանության թշնամական երկրների միջով, եկավ Կարս և տեսակցություն ունեցավ Բաչու նոյինի հետ։ Այստեղից նա Դերբենդի վրայով գնաց Բաթուի և նրա որդու Սարթախի կայան-բանակատեղը, որը գտնըվում էր Եթիլ գետի (այժմյան Վոլգայի) ափին։

Այնուհետև նա Բաթուի մոտից ճանապարհվեց Թաթարստան և չորս ամսում հասավ Ղարաղորումի շրջանը, ներկայացավ Մանգու մեծ խանին և մնաց նրա մոտ հիսուն օր։ Մանգուի մոտից նա մեկնեց 1254 թվի աշնան վերջերին և վերադարձավ Կիլիկիա Թուրքաստանի, Պարսկաստանի, Ադրբեջանի և Հայաստանի վրայով 1255 թվի ամռան սկզբներին։ Հեթումի այս ճանապարհորդությունը, ինչպես երևում է Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի վկայություններից, տևել էր մոտ 15—16 ամիս[1]։

Մանգու մեծ խանը Հեթումին տվել էր հատուկ հրովարտակ և հրամայել էր, որ ոչ ոք նրան ու նրա երկիրը չնեղի։ Նա նաև խոստացել էր օգնել նրան թշնամիների դեմ և ետ դարձնել այն գավառները, որ գրավել էր նրանից Իկոնիայի սուլթանությունը։ Նա ազատել էր, բացի այդ, հարկերից և այլ պարտիքներից քրիստոնյաների բոլոր եկեղեցիները և բոլոր հոգևորականներին[2]։

Երբ Հեթում թագավորը 1255 թվի գարնանը անցնում էր Արաքսը, Բաչու նոյինը, ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, վերցնելով զորքի գլխավորներին՝ ընդառաջ էր գնում Հուլավուին, որը գալիս էր Պարսկաստան[3]։ Ինքը՝ Հեթումը, նույն պատմիչի վկայությամբ, Մանգուի մոտից վերադառնալիս՝ Հուլավուի հետ տեսակցություն էր ունեցել Դալասում, որը գտնվում էր «Ալուալեխից» (այժմ. Алмалык) և Իլանսու գետից դեպի հարավ-արևմուտք[4]։

Հետևյալ 1256 թվին Հուլավուն մեծ զորքով եկավ Թուրքաստանի կողմերից Պարսկաստան և նրա առաջին գործն այստեղ այն

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 350—357. Վարդան վրդ., ՁԲ, էջ 148—149։ Համեմատե նաև Մաղաքիա աբեղա, էջ 22. Հեթում պատմիչ, էջ 42։

[2] Նույնը, էջ 353. Մաղաքիա աբեղա, էջ 22—23։ Համեմատե նաև Հեթում պատմիչի և Հովհաննես Դարդելու վկայությունները, որոնց մոտ մանրամասն մեջ են բերված Հեթումի և Մանգուի դաշինքի բոլոր կետերը. տե՛ս Հեթում պատմիչ, էջ 43—44 և Հովհաննես Դարդելի, էջ 17—18։

[3] Հեթում պատմիչի վկայությունը (էջ 44), որ Հեթում թագավորը ետ էր դարձել Արևմուտք Հուլավուի հետ, հակասում է Կիրակոսի հաղորդած վստահելի տեղեկության (էջ 355)։

[4] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 354։

եղավ, որ նա հարձակվեց Իսմայելիտ աղանդավորների՝ մլհետների կամ հաշիշյանների (assassin) ամրացրած երկրի վրա, որը դեռևս չէր նվաճված։ Այս աղանդավորները Ղազվինի հյուսիսակողմում ունեին բազմաթիվ ամրություններ, որոնցից ամենամեծն էր Ալամութը՝ իրենց առաջնորդի կենտրոնատեղին։

Իսմայելիտների մեջ արդեն վաղուց էր չկար առաջվա կարգապահությունն ու քաջարությունը։ Նրանց առաջնորդ Ռուքնեդդինը շուտով անձնատուր եղավ և հրամայեց բոլոր ամրությունները հանձնել Հուլավուին։ Մոնղոլական զորքերն այնուհետև Իսմայելիտներին սրի մատնեցին և քանդեցին նրանց ամրությունները[1]։ Անառիկ ամրոցների ոչնչացումը նրանք խիստ կարևոր էին համարում, որպեսզի տեղական իշխանները չկարողանան ամրանալ և իրենց դեմ ապստամբել։ Գրիգոր պատմիչը (Մաղաքիա աբեղան) նույնպես վկայում է, որ մոնղոլները, Հայաստանը գրավելուց հետո (1236 թ.), կարգադրել էին Ղարա Բուղային քակել երկրի ամրությունները, գլխավորապես, անառիկ բերդերը[2]։

Հուլավուն իր նոր իշխանության կենտրոնավայր ընտրեց Մուղանի արգավանդ դաշտը, որը Բաչուի ու նրա բանակի ձմեռանոցն էր։ Ուստի և նա հրամայեց Բաչուին թողնել Մուղանը և իր տուն ու տեղով և զորքով գնալ Փոքր Ասիա և բնակվել Իկոնիայի սուլթանության երկրում։ Թեև Բաչու նոյինը և նրա զորքը դժվարանում էին հրաժարվել իրենց գրաված երկրից, սակայն նրանք, վախենալով Հուլավուից՝ հարկադրված եղան հնազանդվել և տեղափոխվեցին Փոքր Ասիա։

Այստեղ նրանք, Հեթում թագավորի աջակցությամբ, պատերազմեցին ու պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանին և, ավերելով ու կողոպտելով նրա երկիրը՝ նվաճեցին Փոքր Ասիայի գավառներն ու քաղաքները մինչև Միջերկրական ծովը և Եվքսինյան Պոնտոսը[3]։ Հավանորեն, 1257 թվի այս արշավանքների ժամանակն էր, որ Հեթում Ա-ը կարողացել էր ետ գրավել ու միացնել իր թագավորությանը Իսավրիան ու նաև մի քանի քաղաքներ, որ խլել էին հայերից թուրքերը։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 361. Վարդան վրդ., Ղ, էջ 140. Ստեփանոս Օրբելյան, «Ժամանակագրութիւն», էջ 26. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 22։

[2] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 8։

[3] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 359—360. Վարդան վրդ., Ղ, էջ 149. Ստեփանոս Օրբելյան, «Ժամանակագրութիւն», էջ 26. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 22։

Ինչպես վկայում է Վարդան վարդապետը, Հուլավուն, որի ավագ կին Տողուզ խաթունը քրիստոնյա էր, գալով Անդրկովկաս՝ սիրով ու պատվով ընդունեց Գեորգի Լաշայի որդուն, Վրաստանի Դավիթ թագավորին, և նրա հետ միասին նաև Վրաց և Հայոց իշխաններին[1]։

Իջևանելով Բաչուի զորաբանակի ձմեռոցում, Մուղանի տաք դաշտում, Հուլավու խանը սկսեց պատրաստություններ տեսնել նոր՝ ավելի մեծ արշավանքի։ Նրան հանձնարարված էր առաջ շարժվել և նվաճել մոնղոլական մեծ խանության սահմանակից պետությունները Առաջավոր Ասիայում։ Մանգուի հրամանով Հուլավուի հետ Անդրկովկաս էին եկել մեծ զորքով նաև մոնղոլական մեծ խանական տոհմի իշխանները, որոնք պետք է նրան օգնեին և աջակցեին։ Այս մեծ իշխանների գալուստը Անդրկովկաս բավական պատկերավոր կերպով նկարագրված է Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) մոտ։

«Իսկ սրանից հետո,— պատմում է Գրիգոր պատմիչը,— երբ վրա հասավ հայոց 706 թվականը [=1257], Արևելքից եկան, ուր մեծ խանն էր ապրում, յոթը հոգի խաների որդիներ՝ ամեն մեկը մի թուման հեծելազորով և մի թումանն էր 10.000[2]։ Եվ նրանց անուններն այս են. նրանցից առաջինը և ավագը Հուլավուն էր, որը Մանգու խանի եղբայրն էր. երկրորդն էր Ղուլը, որն իրեն անվանում էր աստծու եղբայր և չէր ամաչում. երրորդն էր Բալախենը, չորրորդը՝ Տութարը. հինգերորդը՝ Թագուդարը, վեցերորդը՝ Ղատախանը, յոթերորդը՝ Բորախանը[3]։ Սրանք միմյանց անհնազանդ էին և խիստ աներկյուղ էին և մարդակեր։

Իսկ ժամանելիս՝ նրանք բոլորը կառքերով եկան և կառքերով էին շրջում. այնպես որ հարթում էին լեռները և բլուրները արևելքի աշխարհի կողմերում, որպեսզի կառքերը և սայլերը հեշտ գնան։

---

[1] Տե՛ս Վարդան վրդ., Գ, էջ 149։

[2] Մաղաքիայի բնագիրը ԺԹ-ի փոխանակ (=10.000) ունի ԼԹ (=30.000), որ, հավանորեն, վրիպակ է։

[3] Այս մեծ իշխաններից չորսը՝ «Ղուլն ու Բալաղայն և Տուտհարն և Ղարաղանն», որոնք Բաթուի մոտ ազգականներն էին, հիշատակված են նաև Կիրակոս Գանձակեցու մոտ (էջ 361)։ Համեմատե նաև Խուլի, Բալախենի և Տութարի մասին Ռաշիդէդդինի կարևոր վկայությունների հետ, տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 45, 67—68։

Իսկ այն գլխավորը, որ իրեն աստծու եղբայր էր անվանում՝ եկավ երկրի ներսը և անողորմաբար ոտնատակ տվեց տառապյալ քրիստոնյաներին և ուր որ փայտե խաչ էին գտնում ճանապարհների կամ լեռների վրա կանգնեցրած՝ բոլորն այրում էին. և ոչ մի բանով չէին հագենում։ Իսկ վանքերը որ կային երկրում՝ ուր որ լինեին, ավելի էին ոտնակոխ անում, ուտելով և խմելով... և պատվական քահանաներին կախում էին և անողորմաբար ծեծում»։

[«Իսկ զկնի այսորիկ և հասանելոյ թուականին Հայոց յեւթն հարիւր և ի վեցն, եկին յարևելից ուստի մեծ ղանն էր՝ եւթն ղանի որդիք. ամենն դուման մի հեծելով. և մի դումանն էր երեսուն հազար։ Եւ են անուանք նոցա այս. առաջին և մեծն ի նոցանէ Հոյլաւու, որ էր եղբայր Մանգու ղանին. երկրորդ Խուլն՝ որ և զինքն եղբայր Աստուծոյ ասէր և ոչ ամաչէր. երրորդն՝ Բալախէն. չորրորդն՝ Տութարն. հինգերորդն՝ Թագուդարն. վեցերորդն՝ Ղատաղանն. եւթներորդն՝ Բաւրաղանն. և էին սոքա անհնազանդք միմեանց և յոյժ աներկեղք և մարդակերք։ Իսկ ի գալն որ եկին ամէնն կառօք եկին, և կառօք շրջէին. մինչ զի զլեառն և զբլուրս հարթէին աշխարհովն արևելից վասն հեշտ գնալոյ կառացն և սայլիցն։

Իսկ այն գլխավորն որ զինքն եղբայր Աստուծոյ ասէր, եկն ընդ մէջ երկրին և կոխեաց անողորմաբար զտառապեալ քրիստոնեայսն. և զփայտեայ խաչ ուր և գտանէին ի ճանապարհս և ի լերինս կանգնեալ՝ զամէնն այրէին, և ոչինչ իրօք որ յագենային. այլ և զվանորայսն որ կային յերկիրն, ուր և գտանէին առաւել ևս կոխէին ուտելով և ըմպելով. և զպատուական քահանայսն կախէին և ծեծէին անողորմաբար»][1]։

Հայկական աղբյուրների մեջ հիշատակված է, որ վերոհիշյալ մեծ իշխանների Անդրկովկաս գալու ժամանակ Խուլի գլխավորներից մեկը 1257 թվին նահատակել էր Գերեթին վանքում (հավանորեն, Արտազ գավառի կողմերը) Ստեփանոս վանահորը, իսկ Ղատա խանը նույն թվին ավերել էր Երզնկան և Կամախը[2]։

1257 թվի աշնանը Հուլավուն սկսեց իր մեծ արշավանքը Բաղ-

---

[1] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 23։ Համեմատե նաև Երուսաղեմի 1871 թվի հրատարակությունը, որը հիմք է ծառայել մեր թարգմանության։

[2] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 23—25. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 28. «Անանուն ժամանակագրություն», էջ 23։

*դագի խալիֆի դեմ և հրաման տվեց ինչպես իր և Բաչուի, նույնպես և բոլոր հպատակած իշխանությունների զորքերին՝ գնալ և պաշարել Բաղդադ քաղաքը։ Հուլավուի արշավանքներին, ինչպես վկայում են հայ աղբյուրները, մասնակցում էին Շահնշահի որդին Զաքարեն, Խաղբակյան Վասակի որդին Հասան Պռոշը, Գրիգոր Խաչենեցու որդին Սևադան, Բագրատունյաց շառավիղ Կյուրիկեի որդին Թաղիադինը և ուրիշները։*

*Բաղդադը պաշարելուց հետո Հուլավուն ուղարկեց Մուսթասիմ խալիֆի մոտ, որին Կիրակոս Գանձակեցին և Վարդան վարդապետը անվանում են «Մուսթասար» կամ «Մուսթասր», հատուկ դեսպանություն, որի մեջ էր նաև Խաղբակյան Պռոշ իշխանը, առաջարկելու անձնատուր լինել և հպատակվել մոնղոլական իշխանությանը։ Սակայն նա չհամաձայնեց անձնատուր լինել և դեսպանությանը տվեց անարգական ու խիստ պատասխան։*

*Շուտով այնուհետև խալիֆայության մայրաքաղաքը, որի մեջ ամրացել էր Մուսթասիմը, վերցվեց մարտով։ Ըստ Կիրակոս Գանձակեցու արժանահավատ վկայության, Բաղդադը առնվել էր 1258 թվի փետրվարի 4-ին, երկուշաբթի, աղուհացամտի առաջին օրը։ Աբբասյան խալիֆաների անթիվ գանձերը, ինչպես և քաղաքի մեծ հարստությունները, բաժին ընկան Հուլավուին ու նրա զորքերին, ինքը խալիֆը սպանվեց, իսկ բնակչությունը անխնա սրի մատնվեց կամ գերի տարվեց՝ բացի քրիստոնյաներից, որոնք կոտորածից ազատվեցին շնորհիվ Հուլավուի կնոջ Տողուզ խաթունի բարեխոսության*[1]*։*

*Բաղդադի խալիֆայության բարձման և քաղաքի առման մանրամասնությունները, որ ընդարձակ կերպով մեջ են բերված Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ, խիստ հետաքրքիր են և արժանի են հատուկ ուշադրության, որովհետև Գանձակեցու աղբյուրն էր, ինչպես ինքն է վկայում, Խաղբակյան Պռոշը, որը մասնակից էր այս պատերազմին։*

*Բաղդադի խալիֆայությունը նվաճելուց և իր ծրագրի առաջին*

[1] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 362—368.* Վարդան վրդ., *ՂԱ, էջ 150,* Մաղաքիա աբեղա. *էջ 26—27. Հեթում* պատմիչ, *ԻԵ—ԻԸ, էջ 45—47.* Ստեփանոս Օրբելյան, *«Ժամանակագրություն», էջ 26. «Անանուն ժամանակագրություն», էջ 23.* Սամուել Անեցի *(շարուն.), էջ 151.* Ստեփանոս Օրբելյան, *Պատմություն, էջ 402 և ուրիշ.։ Բաղդադի առումը մատնանշված է նաև Ռաշիդեդդինի մոտ մուհարրամ ամսի 28-ին, երկուշաբթի [=1258 թ. փետր. 4-ին]։ Տե՛ս Рашид ад-дин,* Сборник летописей, т. III, рус. перевод *Арендса, էջ 42։*

մասը գլուխ բերելուց հետո՝ Հուլավուին մնում էր հաստատել իր իշխանությունը նաև Հյուսիսային Միջագետքում և Ասորիքում, ուր իշխում էին էյուբյանների շառավիղները և եգիպտական մամլուքները։ Վերադառնալիս Բաղդադից՝ նա առանց ժամանակ կորցնելու, 1258 թվի գարնանը, ուղարկեց իր կրտսեր որդուն՝ Իսմուտին, Հյուսիսային Միջագետք ավերելու և հնազանդեցնելու նաև այս շրջանները։

Բայց այստեղ մոնղոլական զորքերին, որոնց միացել էին նաև հայկական զորքերը Խաղբակյան Հասան Պռոշի գլխավորությամբ, համառ դիմադրություն ցույց տվեց Մուֆարղին քաղաքը՝ Մեծն Տիգրանի հիմնած Տիգրանակերտը, որի մեջ ամրացել էր էյուբյան իշխանը։ Մուֆարղինի պաշարումը տևեց երկու տարի (1258—1260) և տեղի ունեցած կատաղի կռիվներում մեծ կորուստներ կրեցին և մոնղոլները և հայերը։ Պաշարող զորքերը վերցրին քաղաքը, որը սովամահության էր մատնված, միայն 1260 թվի գարնան սկզբներին և անգթաբար կոտորեցին սովատանջ ու ուժասպառ բնակչության մնացորդները[1]։

Մուֆարղինի պաշարման ժամանակ, ինչպես վկայում է Վարդան վարդապետը, սպանվել էր «գեղեցիկ երիտասարդն Սևադա Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի», որը, հավանորեն, Իվանեի և Զաքարեի քրոջ Դոփի թոռն էր։

Հյուսիսային Միջագետքում տեղի ունեցած այս արշավանքի ժամանակ Հուլավուի իշխանությանը հպատակվել էր և Սասունը։

> «Այլև Սասունցիների ամրագույն երկիրը,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— հնազանդվեց և հպատակվեց թաթարներին, վստահելով Սադուն[2] իշխանին, Շերբարոքի որդուն, Սադունի թոռին, որը քրիստոնյա էր հավատով. բարի էր գործով և մեծ պատիվ ուներ Հուլավուի մոտ,— նա հոյակազմ էր և այնքան քաջ կռվող էր, որ Հուլավուն նրան կարգել էր ամենաառաջին կտրիճների շարքում։ Սրան նա տվեց Սասունցիների գավառը, բայց հետո թաթարները իրենց երդումը դրժեցին և նրանցից շատերին կոտորեցին»։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 368—371, Վարդան վրդ., ՂԱ-ՂԲ. էջ 150—152, Մաղաքիա աբեղա, էջ 27—28. Մխիթար Այրիվանեցի, էջ 67. Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 402. Նույնը, «Ժամանակագրություն», էջ 26. «Անանուն ժամանակագրություն», էջ 23։

[2] Այս Սադունը վերև հիշատակված Մահկանաբերդի Քուրդ իշխանի Սադուն որդու թոռն էր և Շերբարոքի որդին։

*[«Այլ և ամրագոյն երկիրն Սասնոց եկին ի հնազանդութիւն ծառայութեան թաթարին, ապաւինեալք յիշխանն Սադոն՝ յորդի Շերբարոքին, ի թոռն Սադունին, քրիստոնեայ հաւատով և բարի գործով, և մեծ պատուով առ Հուլաւուն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր, մինչ զի ընդ առաջին ախոյանիցն կարգեալ էր զնա Հուլաւուն. սմա եւ զգաւառն Սասնոց, զոր յետոյ ստեցին երդմանն, և կոտորեցին զբազումս ի նոցանէ»]*[1]։

*Դեռևս Մուֆարղին-Տիգրանակերտի անկումից առաջ մեծ զորքով Ասորիք արշավեց ինքը Հուլավուն (1259 թ.)։ Այստեղ 13-րդ դարի երկրորդ կեսի սկզբում խիստ ուժեղացել էր էյուբյան Մելիք Նասիր Սալահեդդին Յուսուփը, որը տեր էր դառել գրեթե ամբողջ Ասորիքի։*

*Ավելի հարավում հաստատվել և իշխում էին եգիպտական մամլուքները։ Մամլուք անվանվում էին, ինչպես հայտնի է, գերիներից և ստրուկներից կազմված Եգիպտոսի էյուբյան սուլթանների թիկնապահները։ 13-րդ դարի հիսնական թվերին սրանք, նախ Իբեկը և ապա կարճ ժամանակից հետո Կուտուզը, կարողացել էին գրավել էյուբյանների գահը և հիմնադիր էին դառել այնտեղ մամլուք սուլթանների իշխանության։ Մոնղոլների նոր արշավանքի նպատակն էր, ուրեմն, իրենց իշխանությանը ենթարկել Ասորիքի էյուբյաններին և Եգիպտոսի մամլուքներին։*

*Հյուսիսային Միջագետքում Հուլավուին միացավ իր զորքերով Կիլիկիայի Հեթում թագավորը և նրանք որոշեցին նվաճել Ասորիքում ամենից առաջ Հալեպը, որը Մելիք Նասիրի մայրաքաղաքն էր։ Չնայած որ Հալեպը խիստ ամրացված էր և թվում էր անառիկ՝ նա առնվեց կարճ ժամանակում (1259 թվի վերջերին)*[2]*։ Այնուհետև կամովին անձնատուր եղավ Դամասկոսը, որը ուղարկեց Հուլավուին լիառատ ու թանկարժեք ընծաներ։ Մոնղոլական զորքերը Հյուսիսային Միջագետքում գրավեցին Մերդինը, իսկ Ասորիքում, բացի Հալեպից ու Դամասկոսից, Համաթը, Հեմսը, Հելիոպոլիսը և ուրիշ շատ քաղաքներ ու գավառներ։*

*Հուլավուն և Հեթումը պետք է այնուհետև առաջ շարժվեին և գրավեին նաև Երուսաղեմը, բայց հանկարծ, այս մեծ արշավանքի*

---

[1] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 370։*

[2] *Հալեպի առումը մատնանշված է Ռաշիդեդդինի մոտ Հեջիրի 657 թվի զուլհիջա ամսում [1259 թվի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին]. տե՛ս Рашид ад-дин,* Сборник летописей, т. III, *էջ 49։*

ամենահեռուն շրջանում, լուր հասավ, որ Մանգու մեծ խանը մեռել է։ Այս անսպասելի գույժը հարկադրեց Հուլավուին ընդհատել հաղթական իր հարձակումը, և նա շտապ կերպով ետ դարձավ, թողնելով Ասորիքում իր զորքի մի մասը Քիթբուղայի հրամանատարության տակ[1]։

Հուլավուի հեռանալուց հետո՝ Եգիպտոսի սուլթան Կուտուզը, օգտվելով այն հանգամանքից, որ Քիթբուղայի զորքը շատ չէր՝ մեծ զորքով մտավ Պաղեստին կանգնեցնելու մոնղոլների առաջխաղացումը։ Ընդհարումը տեղի ունեցավ 1260 թվի աշնանը Հորդանան գետի արևմտակողմում Այնա-Ջալուի հովտում, հին Նեապոլիս-Սիխեմի մոտ։ Այստեղ համառ մարտից հետո Քիթբուղայի զորքերը ծանր պարտություն կրեցին և ինքը, Քիթբուղան գերի ընկավ և սպանվեց։

Այս ճակատամարտում, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, կոտորվել էին նաև մեծ թվով հայեր և վրացիներ, որոնք գտնվում էին Քիթբուղայի զորքի շարքերում[2]։ Այս պարտությունից հետո, որով անհաջողության էր մատնվում Հուլավուի նվաճողական ծրագիրը հարավում՝ սուլթան Կուտուզը տիրեց գրեթե ամբողջ Ասորիքին։ Սակայն Եգիպտոս վերադառնալիս նա սպանվեց Բեյբարս-Բնդուխդարից, որին մերժել էր տալ Հալեպի սուլթանությունը։ 1260 թվին Եգիպտոսի սուլթան հռչակվեց նույն այս մամլուք Բեյբարսը (1260—1277)։

Հուլավուի իշխանության ժամանակ հայ-վրացական իշխանությունների դրությունը ո՛չ միայն չէր թեթևացել, այլ ավելի էր ծանրացել 1254 թվի աշխարհագրի և անընդհատ պատերազմների պատճառով Իսմայելիտների, Բաղդադի խալիֆայության, Միջագետքի և Ասորիքի էյուբյան իշխանների և Եգիպտոսի մամլուքների դեմ։ Չկարողանալով հանդուրժել այս ծանր դրությունը՝ Վրաց թագավոր Լաշայի որդի Դավիթը և նրա իշխաններից շատերը 1259 թվին նորից ապստամբեցին մոնղոլների տիրապետության դեմ և, թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը, փախան հեռավոր Աբխազիա և պատսպարվեցին Սվանեթի ամրություններում։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 371—372. Վարդան վրդ., ՂԲ, էջ 151. Մաղաքիա աբեղա, էջ 35. Հեթում պատմիչ, էջ 47—48. Դարդելի, էջ 19—21. Սամուել Անեցի, էջ 151. Մխիթար Այրիվանեցի, էջ 67. Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 402—3, նույնը, «Ժամանակագրութիւն», էջ 26. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 23։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 372—373. Վարդան վրդ., էջ 152։ Մաղաքիա աբեղա, էջ 35—36. Հեթում պատմիչ, էջ 50. Մխիթար Այրիվանեցի, էջ 68։

«Իսկ Վրաց թագավոր Լաշայի որդի Դավիթը,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— որը հնազանդվել էր թաթարներին՝ նեղացավ և ձանձրացավ բազմազան հարկապահանջությունից, որովհետև նրանք իրեն ու բոլոր իշխաններին, ինչպես և իր բոլոր երկրները, նեղում էին ծանր հարկերով, որ անկարելի էր հանդուրժել։

Նա թողեց իր քաղաքը, Տփղիսը, իր գահը ու նաև այն ամենը, ինչ որ ուներ, և փախավ խորին Աբխազիա՝ Սվանեթի ամրոցները։ Նրա հետ փախան նաև գավառների այլ մեծամեծ իշխանները, ճնշված և տառապած, որոնք ծախել կամ գրավ էին դրել իրենց քաղաքներն ու գավառները և, այնուամենայնիվ, չէին կարողացել կշտացնել անհագներին, որ նման էին չար տզրուկներին։ Եվ թագավորը այնքան արագ փախավ, որ չկարողացավ իր հետ տանել իր կնոջը, Գոնցա թագուհուն, և իր նորածին որդուն, Դեմետրեին, այլ տարավ միայն իր անդրանիկ որդուն՝ Գեորգիին»։

[«Իսկ թագաւորն Վրաց Դաւիթ՝ որդի Լաշային[1], որ կայր ի հնազանդութեան թաթարին նեղացաւ՝ ձանձրացաւ ի բազում հարկապահանջութեանն՝ որ նեղէին զնա և զամենայն իշխանսն և զամենայն աշխարհս անհնարին ծանրութեամբ, զոր ոչ կարէին բառնալ։

Եթող նա զքաղաք իւր զՏփխիս, և զաթոռ, և զամենայն ինչ՝ զոր ունէր. և փախեաւ ի խորինԱփխազք, և յամուրսն Սուանեթոյ. ընդ նման և այլ մեծամեծ իշխանք գաւառաց, նեղեալք և տառապեալք, ծախեալք և գրաւ եդեալք զքաղաքս և զգաւառս, և ոչ կարացեալք յագեցուցանել զանյագսն ըստ նմանութեան չար տզրկաց։ Եւ այնպէս տագնապաւ փախեաւ, զի զկինն իւր՝ զԳոնցա թագուհի, և զնոր ծնեալ որդի իւր՝ զԴեմետրէ, ոչ կարաց ընդ իւր տանել, բայց միայն զԳեօրգի զանդրանիկ իւր»][2]։

Խռովարարների ետևից, նրանց բռնելու ու պատժելու համար, ուղարկվեց մեծ զորքով Արղունը, որը Հուլավուի վեզիրն էր և արքունի հարկերի վերակացուն։ Սակայն Արղունը, չկարողանալով նրանց հետևից հասնել՝ կոտորեց և գերեց վրացական շատ գավառներ, քանդեց Վրաց թագավորների գերեզմանատունը Գելա-

[1] Բնագրում «Լաշային»-ի փոխանակ տպված է «Ճալային»։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 373—374։ Համեմատե նաև Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 26. Սամուել Անեցի, էջ 161։

*թում և անողորմաբար սրի անցկացրեց նաև Ազդորը, ուր գտնվում էր, Կիրակոս Գանձակեցու ասելով, Վրաց կաթողիկոսարանը*[1]։

*Այս ապստամբության հետ, ըստ երևույթին, կապ ունի վրաց թագուհու Գոնցայի, սրա և Զաքարյան Ավագի դստեր խոշաքի, նաև Հասան Ջալալի, Շահնշահի և ուրիշ շատերի ձերբակալությունը։ Սրանք կալանավորվել էին, Կիրակոս Գանձակեցու ասելով, մեծ պարտքերի ու հարկերի պատճառով և հազիվ հազ ազատվել էին մահից, տալով մեծ գումարներ։ Բայց կալանքի տակ մնաց միայն Ներքին խաչենի իշխան Հասան Ջալալը, որը, ինչպես հայտնի է, 1261 թվին նահատակվել է Ղազվինում Արղունի հրամանով։ Ջալալի մահից հետո Ներքին խաչենի իշխանությունը տրվեց նրա որդուն՝ Աթաբակին*[2]։

*Լաշայի որդի Դավթի ու նրան միացած իշխանների ապստամբությունը շարունակվել էր, հավանորեն, մի քանի տարի։ 1261 թվին Շահնշահի որդին Զաքարեն, որն Արղունի հետ գտնվում էր Ուխտիքի (Օլթիի) կողմերում ու թաքուն կերպով գնացել էր իր աներոջ՝ ապստամբած Ուխտյաց Սարգիս իշխանի մոտ՝ ապստամբների հետ կապ ունենալու պատրվակով կալանավորվեց և Հուլավուի հրամանով ենթարկվեց մահապատժի։ Նրա հայրը, Շահնշահը, տեղեկություն ստանալով իր որդու եղեռնական սպանության մասին, նույն 1261 թվին մեռավ դարդից ու կսկծից*[3]։

*Հետաքրքիր է, որ հենց նույն այս ժամանակ, երբ սկսվեց Վրաց թագավորի ապստամբությունը, Հեռավոր Արևելքում ևս, Մանգու մեծ խանի մահից հետո (1259 թ.)՝ արյունահեղ ներքին կռիվ էր սկսվել մեծ խանության գահի համար։ Ղարաղորումում մեծ խան էր ընտրվել Հուլավուի եղբայր Արիքբուղան, իսկ Չինաստանում՝ նրա մյուս եղբայրը՝ Խուբիլայը։ Այս առաջին անգամն էր, որ համեբաշխությունը և կարգապահությունը քայքայվեցին նաև Չինգիզ խանի տոհմում և ընտանեկան պառակտումները վերածվեցին միջցեղային պատերազմի։ Մոտավորապես նույն այս ժամանակ, 1261 թվին, երբ Հուլավուն պատրաստվում էր վրեժ առնելու մամլուքներից Քիթբուղայի պարտության համար՝ հանկարծ նաև այստեղ Առաջավոր Ասիայում ծագեցին ներքին երկպառակություններ Ոսկե*

---

[1] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 374*։

[2] *Նույնը, էջ 374—376.* Վարդան վրդ., *էջ 152—153.* Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն, էջ 26. «Անանուն ժամանակագրություն», էջ 23*։

[3] *Տե՛ս նույն հեղինակների վկայությունները։ Համեմատե նաև* Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները, Բ, էջ 59*։

Հորդայի Ջուչյանների և Հուլավյանների միջև։ Այս երկու տան գժտության և պառակտման պատճառը տարբեր կերպ է լուսաբանված հայ և օտար աղբյուրներում։ Ինչպես վերև հիշվեց, Հուլավուի հետ Մերձավոր Արևելք էին եկել Չինգիզ խանի տան մեծ իշխանները և նրանց թվում նաև Բաթուի և Բերքայի մոտ ազգականները՝ Ղուլը, Բալախենը, Տութարը, Ղատախանը։ Հայկական աղբյուրների վկայությամբ, արքայազն խաների այս որդիները, համարելով իրենց անկախ իշխաններ, ըմբոստացել էին Հուլավուի դեմ։ Եվ որովհետև Հուլավուն հրամայել էր, որ նրանց իրենց զորքերի հետ սրի անցկացնեն, Ոսկե Հորդայի խան Բերքան, որի մոտ փախել էր նրանց մի մասը՝ եկավ Հուլավուի դեմ իր ազգականների վրեժն առնելու[1]։

Պարսկական պատմագիր Վասսաֆը թշնամությունների պատճառ համարում է այն, որ Ոսկե Հորդայի խաները պահանջ էին հայտնում և ուզում էին միացնել իրենց մեծ պետությանը Առանը և Ադրբեջանը։ Նրանց այդ պահանջը որոշ հիմք ուներ, որովհետև Հուլավուին օգնել էին և նրա արշավանքներին մասնակցել էին նաև իրենց իշխանական տան անդամները ու նրանց զորքերը[2]։ Ինքը, Հուլավու խանը խոսակցության ժամանակ Վարդան վարդապետի հետ, որ ընդարձակ կերպով մեջ է բերված վերջինիս պատմության մեջ, իբրև երկպառակությունների հիմք մատնացույց է արել իր և Բերքայի կրոնական քաղաքականության ներհակությունը։

«Մեր եղբայրները,— ասում է նա,— նրա համար են մեզ հետ պատերազմ վարում, որ մենք սիրում ենք քրիստոնյաներին և մեր տան մեջ քրիստոնեություն կա, իսկ նրանք սիրում են մահմեդականներին և նրանց տան մեջ իշխում է մահմեդականությունը»։

[«Մեր եղբարքն հետ մեզ վասն այն են ի կռուի, որ մեք քրիստոնասէր եմք և քրիստոնէութիւն կայ ի մեր տանս, նոքա տաճկասէր են և տաճկութիւն կայ ի նոցա տանն»][3]։

Հակառակության ու թշնամության բոլոր վերոհիշյալ պատճառներն էլ ըստ իս ուշադրության արժանի են ու հավանական։ Բայց հիմնական պատճառը, ըստ երևույթին, պետք է համարել

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 378—379. Մաղաքիա աբեղա, էջ 28—30։ Համեմատե նաև Тизенгаузен, Материалы, II, էջ 67—68, 74 և 99։

[2] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 80—81։

[3] Տե՛ս Վարդան վրդ., ՂՁ, էջ 158։ Կրոնական հակառակությունը շեշտված է նաև Ռաշիդեդդինի մոտ, տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 74։

այն, որ Ոսկե Հորդայի խաները ցանկանում էին տիրել Անդրկովկասին, գլխավորապես Պարսկական Ադրբեջանին և Թավրիզին, որոնց միջով անցնում էր համաշխարհային առևտրի մեծ ճանապարհը Եվրոպայի հետ[1]։

Թշնամությունները և արյունահեղ ընդհարումները Ոսկե Հորդայի Ջուչյանների և Իրանի Հուլավյանների միջև սկսվեցին 1262 թվին և ընդհատումներով շարունակվեցին մոտ մեկ դար։ Այս ընդհարումները, որ տեղի էին ունենում, մեծ մասամբ, Անդրկովկասում՝ կործանարար էին ո՛չ միայն կռվող պետությունների, այլև Անդրկովկասի երկրների համար, որոնց տերիտորիան պարբերաբար ավերվում էր, իսկ բնակչությունը կոտորվում էր պատերազմներում կամ սնանկանում։

1262 թվի Հուլավուի առաջին մեծ պատերազմը Բերքայի դեմ մանրամասն նկարագրված է և հայ և օտար աղբյուրներում։ Թըշնամի զորքերի առաջին հանդիպումը, ինչպես վկայում են Ռաշիդեդդինը, Համդալլահ Ղազվինին և ուրիշները, տեղի ունեցավ Շամախու մոտ (1262 թվի օգոստոս ամսին)[2]։ Այստեղ Բերքայի զորավար Նողայը՝ Հուլավուի հրամանով սպանված Տութարի հորեղբոր որդին՝ պարտություն կրեց ու փախավ, և Հուլավուի զորքերը հալածելով նրան՝ գրավեցին Դերբենդը։ Այնուհետև սրանք, ավերելով Բերքայի երկրի հարավ-արևելյան շրջանները՝ անցան Տերեկ գետը և հասան մինչև Բերքայի ձմեռային բնակատեղը։ Բայց այստեղ նրանց դեմ ելավ ինքը Բերքան և կատաղի ու արյունահեղ ընդհարումից հետո, որ տեղի ունեցավ Տերեկ գետի մոտ (1263 թվի հունվար ամսին)՝ ստիպեց նրանց ետ նահանջել։ Նահանջի ժամանակ Տերեկի սառույցը կոտրվեց և Հուլավուի զորքից շատերը ընկան ջուրը և խեղդվեցին[3]։ Այս մեծ պատերազմին մասնակցել էին նաև հայ-վրացական զորքերը և Տերեկի մոտ, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, սպանվել էր նաև Օրբելյան էլիկումի որդին Բուրթելը[4]։

---

[1] *Տե՛ս Петрушевский И. П.* Хамдаллах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья, Известия Ак. наук СССР, 1937, էջ 912։

[2] *Տե՛ս Рашид ад-дин,* Сборник летописей, т. III, рус. перевод *Арендси,* էջ 59։

[3] *Տե՛ս Тизенгаузен,* Материалы, II, էջ 74—75, 92 և 99։ Համեմատե նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 379—380 և Մաղաքիա աբեղա, էջ 30։

[4] *Տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 416, համեմատե նաև գլ. ԿԵ, էջ 361։ Բուրթելի սպանությունը Ստեփանոս Օրբելյանի մոտ սխալմամբ ցույց է տրված «ի 710 թուին» [=1261]. համեմատե *Saint-Martin*. Mémoires, II, էջ 285։




Հուլավյանների իշխանությունը։

Մանգու մեծ խանի մահից հետո, 1260—1263 թվերի ներքին խռովությունների և եղբայրասպան կռիվների ժամանակ, մոնղոլական պետությունները, որոնք Չինգիզ խանի որդիների ուլուսներն էին և համարվում էին մեծ խանության անբաժան մասեր՝ փաստորեն դառան անկախ պետություններ։ Ինչպես Ջուչյանների Ոսկե Հորդան, նույնպես և Հուլավյանների Իրանը ու Չաղաթայանների Միջին Ասիան, իբրև միանգամայն անկախ պետություններ՝ սկսեցին վարել իրենց ներքին ու արտաքին քաղաքականությունը և նրանք նույնիսկ, ինչպես տեսանք, իրենց օրինական իրավունքն էին համարում անկախ կերպով մղել իրար դեմ մասնավոր պատերազմ։

1263 թվին Խուբիլայը (1259—1294), որը հաղթել էր իր հակառակորդներին և ճանաչվել էր մեծ խան, ուղարկեց Հուլավուին, որն իրեն կողմնակիցն էր՝ 30.000 մոնղոլական նորընտիր զորք և տվեց նրան «իլխան»-ի, այսինքն «ժողովրդի պետի» տիտղոս։ Այսպիսով սրա պետության ինքնուրույնությունը ճանաչվեց նաև ձևականորեն։ Հուլավուի հիմնած իլխանությունը, նրա նոր նվաճումներից հետո, պարունակում էր իր մեջ Պարսկաստանը և Առաջավոր Ասիայի մեծագույն մասը՝ Հնդկաստանից և Ամու-Դարյայից մինչև Միջերկրական ծովը։ Իլխանության երկրները սահմանակից էին հյուսիսում Չաղաթայանների և Ջուչյանների մոնղոլական պետություններին, իսկ հարավ-արևմուտքում՝ Եգիպտական մամլուքների սուլթանությանը։ Նրա կենտրոնավայրերն էին Թավրիզի շրջանը և Ղարադաղը, Մուղանը ու Ղարաբաղը, նաև Ալադաղը։

Դառնալով անկախ իշխանության պետ և սեփական դինաստիայի հիմնադիր՝ Հուլավուն, ինչպես վկայում են հայ պատմիչները[1], հիմնեց Ալադաղում գտնվող Դառն դաշտում՝ այժմյան Բագավանի ու Դիադինի հարավակողմում, որ իր սիրած ամառանոցային վայրն էր՝ աթոռանիստ բնակատեղի, որը, ինչպես կտեսնենք, դառավ իլխանության առևտրական կենտրոններից մեկը։ Սեն-Մարտենը և Չամչյանը այս նստավայրի տեղը սխալմամբ ենթադրում են Մուղանում՝ Կուր և Արաքս գետերի ստորին ավազանում[2]։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 330—331. Մաղաքիա, էջ 31—32. Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 415։ Համեմատե նաև Тизенгаузен, Сборник материалов. II, էջ 74, 96, 99։

[2] Տե՛ս Saint-Martin, Mémoires, II, էջ 283. Չամչյան, Պատմութիւն հայոց, Գ, էջ 259։

Իլխան Հուլավուն մեռավ 1265 թվին, թողնելով իր հաջորդին, ավագ որդուն՝ Աբաղային (1265—1282) հսկայական միահեծան մի պետություն՝ ավելի մեծ, քան Սասանյան Պարսկաստանը և Իրաքի Սելջուկյան սուլթանությունը։ Սակայն այս հզոր պետությունը, որն առանձնացել էր մեծ խանությունից և վերջինիս գերագույն իշխանությունը ճանաչում էր լոկ անվանապես՝ թողնված էր ինքն իրեն և այլևս չէր ստանում մարտական օգնական ուժեր Հեռավոր Արևելքից։

Այս հանգամանքը նպաստավոր չէր հարկավ նվաճողական առաջխաղացման համար։ Եվ Հուլավուի հաջորդները, ինչպես կտեսնենք, ավելի մտահոգված էին իրենց լայնածավալ պետության պաշտպանությամբ, քան նրա ընդարձակմամբ։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Մոնղոլական տիրապետության երկու շրջանները:— 2. Տեղական իշխանների վերահաստատումը իրենց նախկին իրավունքներում:— Սրանց վասալական կախումը մեծ խաներից:— 3. «Հարկապահանջություն, երբևեկություն և զինվորություն»:— 4. Արղունի աշխարհագրի բնույթը:— 5. Ոստիկանական հատուկ զորամասերի կազմակերպումը և Արղունի նշանակումը վեզիր և բասղաղ:— 6. Քաղաքներում պաշտոնավարող շահնաները:— Արքունի դիվանները և ստորին պաշտոնյաները:— 7. Վրաստանի և Հայաստանի զինապարտների թիվը ըստ 1254 թվի աշխարհագրի:— 8. Մոնղոլների ակտիվ քաղաքականությունը հայ-վրացական իշխանությունների հանդեպ:— Նրանց միջամտությունը իշխանությունների վեճերին և ներքին գործերին:— 9. Հովանավորյալ իշխանությունների անջատման ձգտումը Վրաց թագավորությունից:— Օրբելյանների և Զաքարյան Ավագի տան թշնամությունը:— 10. Օրբելյանների զորեղացումը և նրանց իշխանության ճանաչումը իբրև ինջու:— Սյունյաց իշխանության անկախությունը Զաքարյաններից և վրաց թագավորներից:— 11. Աթաբեկության և ամիրսպասալարության պաշտոնների հանձնումը Սադունին և Տարսայիճին:—Վրաց թագավորության թուլացումը:

*Մոնղոլների իշխանությունը Հայաստանի և Վրաստանի վրա տևեց ավելի քան մեկ դար՝ մինչև տասնչորսերորդ դարի քառասնական թվականները։ Նոր նվաճողների տիրապետության առաջին շրջանում, սկսած 1236 թվից մինչև 1256 թիվը, ուրեմն՝ ուղիղ քսան տարի՝ Հայաստանը Վրաստանի հետ կազմում էր Չինգիզ խանի հիմնած միացյալ մեծ խանության մասը, իսկ 1256 թվից սկսած մինչև 1344 թիվը՝ նա գտնվում էր Հուլավյան տոհմի իլխանների իշխանության տակ։*

*Առաջին շրջանում Վրաստանը և Հայաստանը, ինչպես և մոնղոլական մեծ խանության մյուս նորանվաճ երկրները, կապված էին անմիջական Ղարաղորումի արքունիքի հետ։ Այստեղ էին*



*Խաչքար Նոր-Գետիկում (XIII դ.)։*





վճռվում նրանց կառավարման ու հարկավճարման հարցերը, և մեծ խաներն էին ստանում հավաքված հարկերը կամ սրանց որոշ մասը։

Մոնղոլները, ընդհանրապես, չէին փոխում նվաճված երկրների քաղաքական կառուցվածքը։ Լինելով քոչվորներ՝ նրանք կանգնած էին կուլտուրական զարգացման ավելի ցածր մակարդակի վրա, քան Հայաստանը և Վրաստանը։ Ուստի և նրանք, անկարող լինելով ստեղծել այստեղ նոր հասարակակարգ, անփոփոխ թողին սրանց ֆեոդալական կազմը և աշխատեցին օգտագործել հայ-վրացական իշխանությունները և նրանց զինվորական ուժերն ու վարչական ապարատն իրենց նպատակների համար։

Երբ Զաքարյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը նվաճվեցին՝ Ավագը, ինչպես վերև հիշվեց, գնաց մեծ խանի մոտ և վերահաստատվեց իր իշխանական իրավունքներում։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ մեծ խանը—

«Գրեց իր զորավարին, որ տա նրան իր աշխարհը և նրա միջոցով նվաճե բոլոր ապստամբներին. և այդպես էլ եղավ։ Երբ նա եկավ իր աշխարհը և զորապետները կատարեցին իրենց արքայի հրամանը՝ նրանց հնազանդվեցին և հպատակվեցին Զաքարեի որդին Շահնշահը, Վահրամ իշխանը և նրա որդին Աղբուղան և Խաչենի կողմի իշխան Հասանը, որին անվանում էին Ջալալ, և ուրիշ շատերը։ Նրանց բոլորին տվին իրենց երկրները և շնորհեցին միևնույն ժամանակ ներում»։

[«Գրէր և առ զորավարն իւր տալ ի ձեռն նորա զիւր աշխարհն, և նովաւ նուաճել զամենայն ապստամբսն, որ եղև իսկ. զի իբրև եկն նա յաշխարհն իւր, և արարին զորագլուխքն զհրամանս արքային իւրեանց, եկին ի հնազանդութիւն ծառայութեան նոցա Շահնշահ՝ որդի Զաքարէի, և Վահրամ իշխանն, և որդին իւր Աղպուղայն, և Հասան, որ Ջալալն կոչէին, իշխան կողմանցն Խաչենոյ, և այլք բազումք. և զիւրանքանչիւր երկիր տային նոցա, և առ ժամանակ մի ներումն»][1]։

Այնուհետև մեծ խաները ճանաչում էին այս երկրները՝ իբրև քաղաքականապես ինքնավար, բայց իրենց ենթարկված վասալական իշխանություններ։ Նրանք պահանջում էին, որ սրանց բարձրագույն սյուզերեն պետերը հաստատվեն իրենց իշխանությունն

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 249—250։

ներում հատուկ հրամանագրերով, որ կոչվում էին «ճառլըխ»։ Լինելով մեծ խաների վասալներ, նրանք բոլորը պարտավոր էին, երբ նրանց կանչում էր մեծ խանը, անհապաղ գնալ Հեռավոր Արևելք և նրան ներկայանալ։ Այս պարտավորությունից խույս տալը կամ հապաղումը համարվում էին պետական հանցանք և դավաճանություն։

«Նրանք ուղարկում են,— վկայում է 13-րդ դարի եվրոպացի ճանապարհորդ Պլանո Կարպինին,— երկրների պետերի հետևից, որպեսզի սրանք գան իրենց մոտ առանց դանդաղելու»[1]։

Մոնղոլների տիրապետության առաջին տասնամյակում, 1236 թվից մինչև 1246 թիվը, Սվանեթ ապավինած Ռուսուդան թագուհու բացակայության պատճառով, Հայաստանը և Արևելյան Վրաստանը կառավարում էին տեղական իշխանները, ըստ երևույթին, Զաքարյան Իվանեի որդի աթաբեկ Ավագի գլխավորությամբ։ Միայն 1246 թվին, ինչպես վերև տեսանք, մոնղոլները բերել տվին Կեսարիայից Գեորգի Լաշայի Դավիթ որդուն, որը, վերադառնալով Տփղիս, դառավ թագավոր Արևելյան Վրաստանի և Զաքարյան Հայաստանի (1246—1270)։

Մինչև Հուլավուի իշխանության հաստատումը Իրանում և Առաջավոր Ասիայում, որ տեղի ունեցավ 1254 թվի աշխարհագրից մի քանի տարի հետո՝ հայ-վրացական իշխանությունները, ըստ երևույթին, պարտավոր էին վճարել որոշ հարկագումար, որ կանխապես սահմանված էր Վրաց թագավորության երկրների համար։ Բացի այդ, նրանք իբրև մեծ խանության վասալներ պարտավոր էին նաև, ինչպես տեսանք, մասնակցել իրենց զինվորական ուժերով մոնղոլական արշավանքներին։ Եվ նրանց երրորդ պարտականությունն էր՝ տալ մոնղոլական իշխանավորների հանձնարարությամբ երթևեկող պաշտոնյաներին ու ճանապարհորդներին, որոնք սովորաբար ունենում էին հատուկ հանձնագրեր— փայիզաներ, փոխադրության միջոցներ՝ ձիեր, սայլեր, ուղեցույցներ, օթևան և պարեն։ Մարկո Պոլոն պատմում է, որ իր հայրը, հորեղբայրը և ինքը մեծ խան Խուբիլայից ստացել էին ոսկե փայիզա։ «Նրա վրա,— ասում է նա,— գրված էր, որ բոլոր երկրներում, ուր կըգան երեք դեսպանները՝ նրանց պետք է տրվեր այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է, նաև ձիեր ու առաջնորդներ մի տեղից մինչև մյուս տեղը»[2]։

---

[1] Տե՛ս ռուս. թարգմ. Միճանի, էջ 34։

[2] Նույնը, էջ 9

Հայ և վրաց իշխանների վերոհիշյալ երեք գլխավոր պարտականությունները որոշակի մատնանշված են Կիրակոս Գանձակեցու մոտ։ Երբ հայ իշխանները հպատակվեցին մոնղոլներին՝ այնուհետև վերջիններս, ասում է Կիրակոսը,—

«Սկսեցին նեղել նրանց հարկապահանջությամբ, երթևեկությամբ և զինվորությամբ։ Սակայն թեպետ այս ամենով, և որ ավելին էր, քան այս՝ նեղում էին նրանց, բայց չէին սպանում»։

[«Եւ ապա սկսան հարկապահանջութեամբ և երթևեկութեամբ և զինուորութեամբ նեղել զնոսա. սակայն թէպէտ այսուամենայնիւ, և որ առաւել քան զայս էր, նեղէին զնոսա, բայց ոչ սպանանէին»][1]։

Պետք է ասել, որ երթևեկներին սպասարկելու և կերակրելու ծանր պարտականությունը ընկնում էր, գլխավորապես, բնակչության վրա։ Այս պարզ երևում է գարձյալ Կիրակոս Գանձակեցու վկայությունից։ Խոսելով մոնղոլական իշխանության հաստատման մասին Ներքին Խաչենում՝ նա առանձնապես մատնանշում է, որ իշխան Հասան Ջալալը—

«Խոհեմաբար կարգավորեց իր երկրի գործերը. ինչ որ երթևեկների կարիքների համար, որոնք գալիս էին նրանց մոտ, հարկավոր էր վերցնել՝ թե կերակուր և թե այլ ինչ՝ ինքն էր առնում և պահում և, ավելացնելով իր կողմից ես՝ տալիս էր նրանց, երբ գալիս էին նրա մոտ. ուստի և նրանք չէին նեղում նրա երկիրը, այլ գալիս էին նրա մոտ։ Բայց ուրիշ իշխանություններում այսպես չէր արվում, այլ որոնց մոտ որ իջևանում էին՝ նեղում էին ամեն տեղ հենց նրանց»։

[«Իսկ նա խոհեմաբար կարգաւորեաց զաշխարհս իւր, և որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթևեկաց՝ որ գային առ նոսա, թէ կերակուր և թէ այլ ինչ, ինքն առնոյր և պահէր, և յիւրմէն յաւելուածով տայր նոցա, յորժամ գային առ նա. և ոչ նեղէին զաշխարհն, բայց թէ առ նա գային։ Իսկ յայլ աշխարհս զայս ոչ առնին, այլ ուր և հասանէին՝ ամենայն ուրեք նեղէին զնոսա»][2]։

1254 թ. աշխարհագրից հետո Հայաստանում սկսվեց մոնղոլական տիրապետության երկրորդ շրջանը, որի ընթացքում երկրի ու

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի. էջ 250։

[2] Նույնը, էջ 255։ Թիֆլիսում հրատարակված բնագրի սխալներն ուղղել ենք համաձայն Ախալցխայի Կարապետյան դպրոցի գրադարանի ձեռագրի։

ժողովրդի դրությունը հետզհետե խիստ ծանրացավ։ Աշխարհագրի կատարումը հանձնարարված էր մահմեդական բարձր պաշտոնյաներ՝ Արղունին և Թորա Աղային, որոնք ունեին իրենց հետ համապատասխան օգնականներ և զորք։ Ինչպես Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում, նույնպես և ամբողջ Իրանում աշխարհագիրը կատարվում էր ըստ աշխատունակ տղամարդկանց գլխաթվի և հարկերը գանձվելու էին այնուհետև սրանց թվի համեմատ։ Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) վկայությամբ՝ Արղունը համարեց ամբողջ երկիրը ըստ տղամարդկանց գլխաթվի՝ տասնվեց տարեկանից մինչև վաթսուն տարեկանը։ Իսկ Կիրակոս Գանձակեցու ասելով՝ նա համարել ու հարկի տակ էր դրել բոլոր տղամարդկանց, որոնք 10 տարեկանից մեծ էին։ Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) վկայությունը կարելի է ըստ իս ավելի հավանական համարել, որովհետև Վարդան վարդապետը ևս վկայում է, որ Արղունը հարկ էր դրել ըստ տղամարդկանց գլխաթվի՝ բացառությամբ կանանց, տղաների և ծերերի[1]։ Հարկեր վճարելու պարտականությունից ազատված է եղել նաև հոգևորականությունը։

Արհեստավորներից ու վաճառականներից գանձվող ծանր հարկերի մասին կարևոր տեղեկություններ հաղորդում է Կիրակոս Գանձակեցին։

«Եվ սրանով,— ասում է նա,— նրանք չբավականացան, այլ հարկի տակ դրին նաև բոլոր արհեստավորներին՝ թե քաղաքներում և թե գյուղերում, նմանապես և ձկնորսների ծովակներն ու լճերը, նաև երկաթահաններին, դարբիններին և ներկարարներին։ Եվ ի՞նչ կարիք կա, երկար խոսելու. նրանք զրկեցին մարդկանց շահվելու բոլոր հնարավորություններից, և միայն իրենք էին շահվում։

Առան նրանք նաև բոլոր աղահանքերը՝ Կողբում և այլ տեղերում։ Վաճառականներից ևս նրանք կորզեցին շատ հարըստություններ և կուտակեցին մեծ գանձեր՝ ոսկու, արծաթի ու թանկագին քարերի։ Եվ բոլորին այսպես աղքատացնելով՝ ամբողջ աշխարհը լցրին լաց ու կոծով և թողին մեր երկրներում չար ոստիկաններ, որպեսզի յուրաքանչյուր տարի պահանջեն միևնույն այս հարկերը՝ նույն համարով և գրով»։

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 348. Մաղաքիա աբեղա, էջ 22. Վարդան վրդ., էջ 148։

[«Եւ այսու ոչ բաւականացան, այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին։ Այլ և զծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զդարբինս և զշպարարս. և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատին ի մարդկանէ, և ինքեանք միայն շահէին. և զամենայն աղահանսն առին, որ ի Կողբ, և որ յայլ կողմանս։ Նաև ի վաճառականաց բազում ինչս շահեալ, կուտեցին գանձս սաստիկս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. և այսպէս զամենեսին աղացուցեալ և վայիւ և աշխարհով լցեալ զաշխարհս, թողին չար ոստիկանս ի վերա աշխարհացս զնոյն պահանջել յամենայն ամի, նովին համարով և դրովք»][1]։

1254 թվի աշխարհագրից հետո մոնղոլական իշխանությունը Հայաստանում և Վրաստանում խիստ ծանրացավ և կազմակերպվեցին այստեղ մոնղոլական հատուկ զորամասեր, որոնց նպատակն էր հսկողություն ունենալ ներքին անդորրության ու տեղական իշխանների վրա և հետևել, որ սահմանված բոլոր հարկերը հավաքվեն ժամանակին և ուղարկվեն գանձարան։ Այս հատուկ զորամասերը գտնվում էին զինվորական բարձր պաշտոնյաների տրամադրության տակ, որոնք կոչվում էին բասղաղներ (баскаки)։ 1254 թվի աշխարհագրից հետո Հայաստանի և Վրաստանի բասղաղն էր վերև հիշված Արղունը, որին Կիրակոս Գանձակեցին անվանում է ոստիկան։ Ստեփանոս Օրբելյանի մոտ նա անվանված է—

«Վեզիր և բասղաղ կարգված մեծ խանից բոլոր մեր աշխարհի վրա, այսինքն՝ բոլորի հրամանատար և իշխող արքունի հարկերի ու մեծ դիվանի»։

[«Վազիր և պասղաղ՝ կարգեալ ի մեծ ղանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն՝ հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ դիւանին»][2]։

Իբրև ներքին պահպանության ու հանգստության վերահսկող և տեղական իշխանությունների վերակացու՝ հենց այս բասղաղ Արղունն էր, որ 1259 թվին ուղարկվել էր, ինչպես տեսանք, հետապնդելու և կալանավորելու ապստամբած Գեորգի Լաշայի որդի Դավիթ Թագավորին և նրա հետ փախած իշխաններին։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 349։

[2] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 412։

Բաղաղների վարչությանը ենթարկված էին, հավանորեն, քաղաքներում պաշտոնավարող մոնղոլական վերակացուները, որոնք աղբյուրների մեջ անվանվում են «շահնա»։ Այս պաշտոնյայի գոյությունն Անի քաղաքում հիշատակված է Ռուբրուքի ուղեգրության մեջ։

«Փետրվարի 2-ին [1255],— պատմում է Ռուբրուքը,— ես գտնվում էի Անի կոչված քաղաքում, որ պատկանում է Շահնշահին և որի դիրքը շատ զորավոր է։ Այնտեղ կան հայերի հազար եկեղեցիներ և արաբական երկու մզկիթներ։ Թաթարները այնտեղ գրած են մի վերակացու (bailiff ballivum)[1].

Աշխարհագրից հետո Վրաց թագավորության կենտրոնում, Տփղիսում և այլ տեղերում հիմնվեցին մոնղոլական կառավարչական գրասենյակներ՝ «դիւան»-ներ, որոնց մեջ պահվում էին կատարված աշխարհագրի և գրանցված հարկատուների մատյանները, որ կոչվում էին «դաւթար»։ Ստեփանոս Օրբելյանի մոտ, բացի Տփղիսում եղած դիվանից ու դավթարից, հիշատակված են նաև «մեծ դիւանն արքունի» և «մեծ դաւթար դիւանին», որ գտնվում էին «Դավրեժ Շահաստանում»[2]։

Դիվաններում ծառայող քարտուղարները կամ գրագիրները, որոնք հարկերը ցուցակագրողներն էին, անվանվում էին «բիթիքչի»[3]։ Շրջանի քարտուղարի և նոտարի իմաստ ուներ, հավանորեն, «քեթոքարը» (համեմատե արաբ. «քաթիբ», գրագիր, քարտուղար)[4], որ հիշատակված է Օշականի 1286 թվի արձանագրության մեջ[5]։

Քաղաքներում հարկահավաք պաշտոնյաներ էին «տամղաճի»-ները (կնիք խփողները) կամ բաժրարները, որոնք գանձում էին քաղաքային զանազան հարկեր, գլխավորապես, վաճառականներից, արհեստավորներից և առուծախ անողներից։

1254 թվի աշխարհագրի նպատակը ոչ միայն հարկերի ավելացումն էր, այլև զորակոչիկներին։ Այս մասին կարևոր տեղեկու-

---

[1] Տե՛ս «Ուղեգրություններ», հատ. Ա, էջ 23։

[2] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 411, 419, 421—427։

[3] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 260. Մաղաքիա, էջ 45։

[4] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 84, 302։

[5] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 129։ Աճառյանն իր Արմատական բառարանում «քեթոքար»-ը համապատասխան է համարում պրս. kütuvāl «բերդապահ» բառին, որ ըստ իս հավանական չէ։

թյուն է հաղորդում Վրաց ժամանակագրությունը։ Արղունը, ինչպես վկայում է Անանուն ժամանակագիրը,—

«Պետք է աշխարհագիր աներ և որոշեր հեծելակների և զինվորների քանակը, որոնք կարող էին գնալ պատերազմի նոյինների հետ։ . . . . . . Եվ նա ցուցակագրեց զորքի համար 10 հոգի գյուղացիներից, որոնք լավ հողերի տեր էին, մեկ մարդ. այնպես որ Դավիթի թագավորությունը տալիս էր ինը թուման հեծյալ, որ պարտավոր էին գնալ պատերազմի թաթարների հետ. և այդ կազմում էր իննը բյուր [90.000]»[1]։

Ըստ այս վկայության գրանցված հարկատու գյուղացիների թիվը Լաշայի որդի Դավթի ժամանակ ցույց է տրված, ինչպես տեսնում ենք, մոտ մեկ միլիոն մարդ։ Ավելացնելով այս թվին նաև երեխաների, ծերերի, կանանց, հոգևորականների և քաղաքացիների թիվը՝ կարելի է ենթադրել, որ Վրաց թագավորության բնակչության թիվը 13-րդ դարի կեսերին եղել է 4—5 միլիոն։ Այս թիվը, որ կարող է մոտավորապես ճիշտ լինել՝ վերաբերում է, իհարկե, ոչ միայն Քարթլիի և Կախեթի բնակչությանը, ինչպես այդ ենթադրում է Բրոսսեն, այլ Վրաց ամբողջ թագավորությանը, որի մասն էին կազմում այդ ժամանակ նաև Զաքարյան Հայաստանը, Կարսը և այլ շրջաններ։

Ստեղծելով Հայաստանում և Վրաստանում հատուկ բասղաղական զորամասեր, որոնք դառան մոնղոլական տիրապետության զինվորական-քաղաքական հենարանը՝ իլխանները կարող էին այնուհետև վարել այս երկրներում ավելի ակտիվ քաղաքականություն և միջամտել սրանց կառավարչական ներքին գործերին։ Աղբյուրների վկայությունների ուշադիր քննությունից դժվար չէ հետևցնել, որ նրանք ձգտել են թուլացնել վրաց թագավորների իշխանությունը և երկպառակություններ սերմանելով երկրում՝ աշխատել են աջակցել կամ հովանավորել խռովարար իշխաններին։ Այն, ինչ որ Կարլ Մարքսը իր «Գաղտնի Դիպլոմատիա»-ում գրել է մոնղոլների քաղաքականության մասին Ռուսաստանում՝ միանգամայն ճիշտ է նաև Վրաստանի ու Հայաստանի վերաբերմամբ։ «Գրգռել իրար դեմ իշխաններին, պահպանել անմիաբանությունը նրանց միջ, հավասարակշռել նրանց ուժերը և թույլ չտալ նրանց որևէ մեկին ուժեղանալ— այս բոլորը թաթարների ավանդական

---

[1] Տե՛ս Brosset, Histoire de la Géorgie, I, 2, էջ 550—552։

քաղաքականությունն է եղել» ո՛չ միայն Ռուսաստանում, այլ նաև Վրաստանում ու Հայաստանում։

Մոնղոլական խաները միջամտում էին Վրաց թագավորության և Զաքարյան Հայաստանի ներքին վեճերին ու գործերին դեռևս աշխարհագրից առաջ։ Ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, բոլոր դժգոհ մեծամեծներն ու իշխանները, որոնք համարում էին իրենց զրկված՝ գնում էին իբրև գանգատավորներ Բաթուի մոտ և նա հոժարությամբ կատարում էր նրանց խնդիրները։

> «Այնուհետև,— ասում է Կիրակոսը,— Նրա (Բաթուի) մոտ սկսեցին գնալ թագավորները, թագավորազունները, իշխանները, վաճառականները և բոլոր վիշտ ունեցողները, որոնք զրկված էին իրենց հայրենագույքից՝ և նա արդար դատաստանով բոլոր իր մոտ գնացողներին տալիս էր նրանց գավառները, հայրենագույքերը և իշխանությունները. նա տալիս էր նրանց նաև նշանադրած գրություններ, և ոչ ոք չէր համարձակվում ընդդեմ գնալ նրա հրամաններին»։
>
> [«Ապա սկսան երթալ առ նա թագաւորք և թագաւորազունք, և իշխանք և վաճառականք և ամենայն վշտատեսք, որք զրկեալ էին ի հայրենեաց իւրեանց. և նա արդար դատաստանաւ տայ զիւրաքանչիւր գաւառս և զհայրենիս և զիշխանութիւնս ամենայն ումեք երթողացն առ նա, և գիրս նշանաւորս, և ոչ ոք իշխէր ընդդէմ դառնալ հրամայելոցն ի նմանէ»][1]։

Վերև մենք տեսանք, որ Բաթուի հրամանով Ներքին Խաչենի իշխան Հասան Ջալալին տրվել էր Չարաբերդը, Ականան և Կառկառը, որ առաջներում գրավել էին հարևան թուրքերը և Զաքարյանները։ Վրաց ժամանակագրության վկայություններից երևում է նույնպես, որ իլխանները հովանավորել ու առաջ էին քաշել Սամցխեի իշխաններին՝ նախ Սարգիս Ջաղելուն և ապա նրա հաջորդներին[2], որոնք, ինչպես հայտնի է, հետզհետե ուժեղանալով անջատվեցին Վրաց թագավորությունից։ Անջատականության և բաժանման ձգտումը նկատելի է նաև Զաքարյան Հայաստանում։ Այստեղ մոնղոլները հովանավոր և պաշտպան հանդիսացան Օրբելյան տոհմի իշխանների, որոնք անհաշտելի թշնամիներն ու ախոյաններն էին դառել Զաքարյան Ավագի ու նրա ընտանիքի։

Այս թշնամության և ախոյանության պատճառները շատ լավ

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 344։

[2] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 59—61։

*հասկանալի են։ Օրբելյան տոհմի հայ իշխանության հիմնադիրը, Լիպարիտը, ինչպես վերև տեսանք, հաստատվել էր իր իշխանության մեջ՝ Գեղարքունիքում, Վայոց ձորում և Սյունիքում՝ Իվանե աթաբեկի կողմից, ուստի և Օրբելյանները ևս, ինչպես և Դոփյանները ու Խաղբակյանները, ենթարկվելու էին իրենց սյուզերենի՝ Իվանեի տան գերագույն իշխանությանը։ Սակայն սրանք, ինչպես դժվար չէ պուսհել Ստեփանոս Օրբելյանի վկայություններից, ի նկատի ունենալով իրենց մեծ անցյալը և իմանալով, որ իրենց հարուստ կալվածները և ամիրսպասալարության բարձր պաշտոնը ժառանգել են Զաքարյանները, իրենց ստացած երկիրը, ըստ երևույթին, համարում էին ո՛չ թե ստորադաս իշխանություն Իվանեի ու նրա ժառանգների, այլ սեփական տերություն, որ Թամարի ու Գեորգի Լաշայի հրամանով ստացել էին աթաբեկ Իվանեից «հայրենագիր սիգելաւ» փոխանակ իրենց հայրենիքի («փոխան հայրենեաց»)[1]։*

*Ուշագրավ է այս տեսակետից, որ Ստեփանոս Օրբելյանն իր պատմության հաջորդ գլուխներում կարևոր է համարել ընդգծել, որ Լիպարիտի որդի Էլիկումին ու նրա ազգին իրենց երկիրը և իշխանությունը տվել էր, իրապես, Ասլան Նոյինը, որն այդ գավառներն առել էր իր սրով[2]։ Ինչպես տեսնում ենք, կարելի է ավելի քան հավանական համարել, որ թշնամության գլխավոր պատճառը վերոհիշյալ տոհմերի, ըստ երևույթին, Օրբելյանների անհնազանդությունն էր ու նրանց ըմբոստ վերաբերմունքը դեպի Զաքարյան Իվանեի տունը, որն իրենց սյուզերենն էր։*

*Օրբելյանները խիստ ուժեղացան Էլիկումի եղբոր Սմբատի իշխանության ժամանակ շնորհիվ Մանգու մեծ խանի աջակցությանն ու հովանավորությանը։ Այս մեծ իշխանը՝ փրկելու համար իր իշխանությունը կործանումից և Զաքարյան Ավագի կնոջ Գոնցայի հալածանքներից՝ 1251 թվին գնաց Մանգու մեծ խանի մոտ, տանելով նրան իբրև նվեր մեծագին մի գոհար, որ տվել էր իրեն Ռուսուդանի որդին՝ Սվանեթի Դավիթ թագավորը։ Մանգուի մոտ նա մնաց երեք տարի և վերադարձավ Ղարաղորումից հայրենիք 1253 թվին, ճանաչվելով մեծ խանի կողմից իբրև ինջու («ենչու»), այսինքն՝ իբրև ինքնուրույն իշխան, որի երկիրն այլևս չէր գտնվելու*

---

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԵ, էջ 359—360։ Համեմատե «Վիմական տարեգիր», էջ 66։ «Հայրենագիր սիգել»-ը կնքված պաշտոնական գրություն էր։

[2] Նույնը, էջ 403—404, 411։

Զաքարյանների կամ Վրաց թագավորների գերիշխանության տակ, այլ համարվելու էր մեծխանական տան անձնական կալված[1]։

«Եվ նրան տվին,— պատմում է Ստեփանոս Օրբելյանը,— ոսկե փայիզա, այսինքն՝ տախտակ, որի վրա գրված էին աստուծո և արքայի անունները. և այդ մեծագույն պատիվն էր նրանց մոտ։ Գրեցին նաև ետրլեխ, այսինքն՝ հրաման, որ մենք անվանում ենք սիգել, ու տվին նրան այն ամենը, ինչ որ Ասլանն առել էր թրով՝ Որոտնը իր երկրով, որը գտնվում էր Բաչուի և նրա մեծամեծների բաժնում, նաև Բորոտն բերդը իր կերով, իբրև արյան գին նրա հոր Լիպարիտի, որովհետև այստեղ էր նա սպանվել։ Եվ նա [մեծ խանը] Սմբատի անունը դուրս հանել տվեց բոլոր դավթարների միջից՝ վրաց և այլոց։ Եվ այս այժմ նոր հաստատում եղավ նրանց հայրենի իշխանության. որովհետև առաջին անգամ սա առնված էր թրով, և նա ստացել էր այն իբրև վասալ Ասլան նոյինի՝ իսկ երկրորդ անգամ ստացել էր որպես արքայական շնորհ՝ առնված մեծագույն գնով լուսատու գոհարի փոխարեն։ Եվ նա հրաման ստացավ հարկից ազատելու հայերի բոլոր եկեղեցիները և քահանաներին։ Այսպիսի մեծ շուքով ու ճոխությամբ Սմբատը վերադարձավ այնտեղից, բերելով իր հետ այդ ամենը արքունի տնից։ Եվ նա շտապով եկավ ու հասավ մեր այս աշխարհը. և խաղաղություն հաստատվեց արևի նման, որը ծագեց գիշերվա միջին։ Եվ նա նախ և առաջ ներկայացավ Բաչուին ու մյուս գլխավորներին և, ստանալով օգնություն նաև նրանցից՝ գրավեց և ազատեց Որոտանի ամբողջ երկիրը մինչև Բորոտնի ու Բղենի սահմանները, ուր գտնվում էր ավերակ դրության մեջ Սյունիքի աթոռ Տաթևը։ Նա առավ նաև Եղեգիսը և Վայոց ձորի ամբողջ գավառը, Փողահանքը, Ուրծը, Վեդին իր ձորովը մինչև Երերունք, և նույնպես Կոտայքում ու Գեղարքունիքում բազմաթիվ գյուղեր ու ավաններ»։

[«Եւ ետուն նմա փայիզայ ոսկի որ էր տախտակ ունելով զանուն Աստուծոյ և զարքայի գրեալ յինքեան. և այս էր մեծագոյն պատիւ նոցա. և գրեն եառլեխ որ է հրաման. զոր մեք սիգէլ կոչեմք, և տան նմա զամենայն առածն թրով Ասլանին, և զՈրոտն իւր երկրաւն որ էր առ Բաչուին և իւր մեծամեծացն, և զբերդն Բորոտնայ իւր կերովն, վասն սպան-

---

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 405—409։

ման հօր նորա անդէն Լիպարտի, որպէս գին արեան լեալ։ Եւ եհան զՍմբատ ի դուրս յամենայն դաւթարաց ի վրաց և յայլոց. և ահա այս կրկին հաստատութիւն եղև հայրենեաց նոցա. զի առաջինն թրով առած էր, որպէս ծառայ, որ ի ձեռն Ասլան նոյինին. և երկրորդս՝ արքայատուր և որպէս գնոյ մեծագունի առեալ ընդ լուսատու գոհարին։ Եւ հրաման էառ ազատել զամենայն եկեղեցիս Հայոց և զքահանայս. և այնպէս մեծաշուք ճոխութեամբ դարձաւ այսրէն՝ բերեալ և ընդ ինքեան այն ի դրանէ արքունի։ Եւ եկեալ փութանակի հասաւ յաշխարհս յայս։ Եւ ծագեաց խաղաղութիւն, որպէս արեգակն ի մէջ գիշերի. և նախ յանդիման լինի Բաչուին և այլ գլխաւորացն. և ի նոցանէ ևս առեալ օգնութիւն՝ էառ և թափեաց զերկիրն Որոտան բովանդակ մինչ ի սահմանն Բոբոտնայ և Բղենոյ, յորում և կայր ընդաւեր աթոռն Սիւնեաց Տաթև։ Էառ և զԵղեգիս և զամենայն գաւառն Վայոց ձորոյ, զՓողահանսն, զՈւրծ և զՎէդի իւր ձորովն մինչև յԵրերաւնս, և ի Կոտայսն և ի Գեղարքունի բազում շէնս և աւանս»][1]։

Իր իշխանության անկախությունը Զաքարյան սյուզերեններից և Վրաց թագավորությունից Սմբատը ավելի ևս ամրացրեց 1256 թվին, երկրորդ անգամ գնալով Մանգու մեծ խանի մոտ։ Այսպիսով Օրբելյանների իշխանությունը ևս, ինչպես և Ներքին Խաչենի, դառավ այնուհետև ինքնուրույն իշխանություն՝ անկախ Զաքարյաններից և Վրաց թագավորներից։ Ուշագրավ է այս տեսակետից, որ Սմբատ Օրբելյանը և Հասան Ջալալը (+1261) արձանագրությունների մեջ հաճախ անվանվում են—առաջինը՝ «Սմբատ արքա», իսկ երկրորդը՝ «ինքնակալ», «բնակաւոր ինքնակալ» կամ «մեծ արքայ»[2]։

Օրբելյան Սմբատ իշխանի (1253—1273) ժամանակ Զաքարյան տոհմը կորցրեց իր նախկին քաղաքական մեծ դերը և աթաբեկությունն անցավ նախ Արծրունյաց տոհմի Սադուն իշխանին, որը Կայենի ու Մահկանաբերդի Ամիր Քուրդ իշխանի Սադուն որդու թոռն էր, և ապա 1284 թվին՝ Սմբատի եղբորը՝ Օրբելյան Տարսայիճին։ Այս Սադունը, որ Շերբարոքի որդին էր, ինչպես վերև տեսանք, 1260 թվին մասնակցել էր Մուֆարղինի պաշարմանը և նվաճմանը։ Գրիգոր պատմիչը (Մաղաքիան) մանրամասն պատ-

[1] Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, գլ. ԿԶ, էջ 410—412։

[2] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 81, 122, 134, 148 և Ալիշան, Սիսական, էջ 171, 189, 191, 192։

*մում է, թե ինչպես նա հաղթել էր Մանգու մեծ խանի ուղարկած անպարտելի ըմբիշին և Հուլավուի կողմից արժանացել էր մեծ պատիվների[1]։ Վրաց Քարթլիս-ցխովրեբայի վկայությամբ՝ Հուլավուի և նրա որդի Աբաղա խանի (1265—1282) ժամանակ Սադուն Մանկանաբերդցին ավելի զորեղ էր, քան ժամանակակից մյուս իշխանները։ Նույն աղբյուրի ասելով՝ նա խնամակալ էր նշանակվել Վրաց թագավորության գործերի, լինելով միաժամանակ հեչուբ և հոգաբարձու Զաքարյան Ավագի տան և նրա դստեր խոշաքի[2]։ Սադունը վախճանվել է, ինչպես վկայում է Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը, 1283 թվին (ՌՄԼԵ=հայկ. տոմ. ՉԼԲ= 1283)[3]։*

*Պաշտպանելով իբրև հակակշիռ Վրաց թագավորության նրա կազմի մեջ գտնվող առանձին իշխանությունների ինքնուրույնությունը և անկախությունը՝ մոնղոլ իշխանավորները, ըստ երևույթին, ուզում էին արգելք հանդիսանալ Անդրկովկասի իշխանությունների միության ուժեղացմանը։ Նրանց այս քաղաքականությունը, ինչպես կտեսնենք, ունեցավ այն հետևանքը, որ իլխանության քայքայման ժամանակ 14-րդ դարում Վրաց թագավորները չկարողացան այլևս վերականգնել նախկին իշխանական դաշնակցության սերտ միավորումը, որ ստեղծվել էր Թամարի ու նրա նախորդների թագավորության ժամանակ։*

---

1 **Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 33—34։**

2 **Տե՛ս Մելիքսեթ-Բեկ,** *Վրաց աղբյուրները, Բ,* **էջ 58—60։**

3 **Տե՛ս Սամուել Անեցի, էջ 163։**

## ԴԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԸ ԻԼԽԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

**1. Հայաստանի ավերված քաղաքների վերականգնումը։— Առևտրի ու քաղաքների զարգացման համար հատուկ բարենպաստ պայմանները։— 2. Խոշոր վաճառականությունը իբրև մոնղոլական տիրապետության գլխավոր հենարաններից մեկը։— Ռաբան Աթա ասորու ազդեցությունը և հեղինակությունը։— Միջազգային մեծ առևտրի զարգացումը իտալական քաղաքային հանրապետությունների միջնորդությամբ։— 3. Առևտրական հյուսիսային ճանապարհների մեծ դերը։— Ճանապարհների ուղղությունը։— Թավրիզը և Սուլթանիեն իբրև միջազգային առևտրի գլխավոր կենտրոններ։— 4. Առևտրական տրանզիտային ճանապարհների ուղղությունը Հայաստանում։— 5. Հայ հարուստ վաճառականները։— Առևտրականները որպես խոշոր կալվածատերեր և պետական բարձր պաշտոնյաներ։— 6. Սահիբ-Դիվանը և Սահմադինը իբրև կապալառուներ և նրանց կալվածները Հայաստանում։— 7. Այազաղ կոչվող նոր քաղաքի հիմնումը Դառան դաշտում։— Միջազգային առևտրի նվազումը և ընդհատումը Հայաստանի միջով։— 8. Արվեստի ու կուլտուրայի զարգացումը մոնղոլական տիրապետության ծանր պայմաններում։— Խորանաշատի և Գլաձորի դպրոցները։— Մանրանկարչությունը, արհեստները և գրականությունը։**

Մոնղոլական արշավանքների ընթացքում, ինչպես տեսանք, անբուժելի ծանր հարված ստացան Հայաստանի քաղաքները, որոնք արշավանքներից առաջ դառել էին նորից միջազգային առևտրի և արհեստագործության խոշոր կենտրոններ։ Ուշագրավ է, որ Հայաստանում ևս, ինչպես և Ռուսաստանում և այլ երկրներում, մոնղոլներին տեղ-տեղ դիմադրություն ցույց տվին քաղաքների բնակիչները, մինչդեռ իշխող դասի բարձր խավերը գրեթե առանց դիմադրության ենթարկվեցին նրանց իշխանությանը, որպեսզի փրկեն իրենց կյանքն ու գույքը։

1221 թվին իսպառ կործանվեց Աղվանքի խոշոր քաղաք Բայլականը, որն այլևս չվերականգնվեց։ 1231/2 թվին հիմնահատակ

քանդվեց Գանձակը, որը վերակառուցվեց մոնղոլների թույլտվությամբ չորս տարուց հետո՝ 1235/6 թ.։ 1236 թվին մոնղոլական զորքերը Չարմաղանի առաջնորդությամբ, վերցրին և ավերածության մատնեցին Անին և Կարսը։ Իսկ մի քանի տարի հետո, 1242—5 թվերին, Չարմաղանի հաջորդ Բաչու Նոյինի արշավանքների ժամանակ, ավերվեցին նաև պատմական Հայաստանի հարավ-արևմտյան կողմերի քաղաքները՝ Կարին—Էրզրումը, Երզնկան և Խլաթը։

Սակայն շուտով, կարճ ընդհատումից հետո, տնտեսական կյանքը նրանց մեջ վերականգնվեց և Հայաստանի քաղաքները նորից նշանակություն ստացան իբրև տեղական ու քարավանային առևտրի և արհեստների ու արդյունաբերության կենտրոններ։ Մոնղոլական մեծ խաների լայնածավալ մեծ պետությունը, որի գերագույն իշխանության տակ համախմբվել էին Հեռավոր ու Մերձավոր Արևելքի կուլտուրական երկրները ու նաև Դեշտ-ի Ղփչաղը և Ռուսաստանը, բնականաբար, պետք է մեծապես նպաստեր միջազգային առևտրի վերակենդանացմանը, որը, ինչպես տեսանք, սկսել էր արդեն խոշոր չափեր ստանալ դեռ Վրաստանի հզորացման ու Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում։

Դեռևս Չինգիզ խանի ժամանակ և նրանից դեռ առաջ ղանազան կողմերից Մոնղոլիա էին գալիս իրենց քարավաններով վաճառականներ, գլխավորապես, չինական և արաբական—պարսկական, որոնք իջևանում էին և երկար ապրում մեծ խաների ու խոշոր ֆեոդալների արքունիքներում։ Այս վաճառականները ոչ միայն բերում էին իրենց հետ ապրանքներ, այլև ներմուծում էին այստեղ որոշ կուլտուրա և տեխնիկա, գլխավորապես, ռազմական, և միաժամանակ կարևոր տեղեկություններ էին տալիս մեծ խանին ու մոնղոլներին մերձարևելյան և արևմտյան երկրների քաղաքական ու տնտեսական դրության մասին։ Ռուս մեծ գիտնական Բարտոլդը, որը մոնղոլական պատմության ու կուլտուրայի ամենախոշոր մասնագետներից մեկն է՝ մինչևիսկ կարծում է, որ մոնղոլական վիթխարի պետության ստեղծումը որոշ չափով վերագրվելու է մուսուլման վաճառականների գործունեությանը և ձգտումներին, որոնք գլխավոր հենարանն էին մոնղոլ նվաճողների նրանց հաղթական պատերազմների ժամանակ[1]։

Որ մոնղոլական մեծ խաները բարեկամական սերտ կապեր ունեին առևտրական կապիտալի ականավոր ներկայացուցիչների

---

[1] Տե՛ս *Бартольд*, Место прикаспийских областей в истории мусульманского мира, էջ 54 և 126։

հետ՝ այդ պարզ երևում է ո՛չ միայն պարսկա-արաբական, այլև հայկական աղբյուրների վկայություններից։ Այդ վկայություններից առանձնապես կարևոր է և ուշագրավ Կիրակոս Գանձակեցու վկայությունը, որը հաղորդում է, որ վաճառականները մեծ իրավունքներ ունեին, և նրանց քարավանները ազատ ու անվրդով ճանապարհորդում էին ամեն տեղ դեռևս Ջարմաղանի արշավանքի ժամանակ, որը, ինչպես տեսանք, Հայաստանի և Անդրկովկասի նվաճողն էր։

«Նախախնամողն աստված,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— որը կամենում է, որ բոլորը ապրեն՝ ըստ իր մարդասիրության երևան բերեց երկյուղած ու աստվածապաշտ մի մարդ, ազգով ասորի, որն անվանվում էր հայր նրանց արքայի, որին կոչում էին խաքան. այս մարդու անունն էր Սիմեոն, բայց նրան անվանում էին Ռաբան Աթա։ Երբ սա լուր ստացավ, որ թաթարների զորքերը անխնա կոտորում էին քրիստոնյաներին՝ դիմեց խաքանին և խնդրեց նրան, որ թուղթ գրե իր զորքերին, որ նրանք չկոտորեն անխտիր անմեղ մարդկանց, որոնք նրանց դեմ չեն պատերազմում, այլ նրանց կենդանի թողնեն, որպեսզի իրեն ծառայեն։ Իսկ մեծ խանը հենց նրան ուղարկեց մեծ և փայլուն շքով և իր զորավարներին գրեց հրովարտակ, որ բոլորը հնազանդվեն նրա հրամանին։ Եվ նա գալով այստեղ մեծ օգնություն հասցրեց քրիստոնյաներին՝ ազատելով նրանց մահից ու գերությունից։ . . . . . . . . Եվ ոչ ոք չէր համարձակվում հակառակվել նրա հրամաններին, այլ թաթարական ամբողջ զորքը նրան հավասար էր համարում իրենց արքային և առանց նրան ոչինչ չէր ձեռնարկում և կամ անում։ Եվ նրա մարդիկ, վաճառականները, որոնք ունեին նրա տամղան, այսինքն՝ նշանը և գիրը, համարձակ կերպով շրջում էին ամեն տեղ և ոչ ոք չէր համարձակվում դիպչել այն մարդկանց, որոնք տալիս էին Ռաբանի անունը։ Այլ նաև թաթարների բոլոր զորավարները նրան ընծաներ էին մատուցանում իրենց ավարից»։

[«Նախախնամօղն Աստուած, որ զամենեցուն կեալն կամի, նա՝ մարդասիրութեամբն իւրով երևեցոյց ի մէջ նոցա այր մի երկիւղած և աստուածապաշտ, Ասորի ազգաւ, որ հայր անուանեալ էր արքային նոցա, զոր խաղանն կոչէին, անուն նորա Սիմէոն, զոր Ռպան Աթա կոչէին։ Իբրև լուաւ

զանխնայ կոտորումն քրիստոնէից՝ որ ի զօրաց թաթարին. մատուցեալ առ խաղանն՝ խնդրեաց ի նմանէ թուղթ առ զօրսն իւր, զի մի՛ այնպէս առ հասարակ կոտորեսցեն զանմեղ մարդիկ, որք ոչ պատերազմին ընդ նոսա, այլ թողուլ զնոսա, զի ծառայեսցեն նմա։ Իսկ նա զնոյն ինքն առաքեաց մեծ և երևելի շքով, գրեալ հրովարտակ առ զօրագլուխս իւր, զի ամենեքեան անսայցեն հրամանի նորա։ Եւ նա եկեալ, բազում ինչ նպաստ եղև քրիստոնէից, թափելով ի մահուանէ և ի գերութենէ։ . . . . . . . . . . Եւ ոչ ոք իշխէր հակառակիլ հրամանի նորա, այլ և ամենայն զօրք թաթարին զնա որպէս զարքայն իւրեանց ունէին, և առանց նորա ոչինչ խորհէին կամ առնէին և մարդիկ նորա վաճառականք, որք ունէին զտամղա նորա, այսինքն զնշան և զգիր, համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն աշխարհս և ոչ ոք իշխէր մերձենալ առ այնոսիկ, որք ասէին զանուն Ռապանին։ Այլ և ամենայն զօրագլուխք թաթարին ընծայ մատուցանէին նմա յաւարէ իւրեանց»][1]։

Թե այս և թե այլ նման վկայություններից դժվար չէ հետևցնել, որ մոնղոլական մեծ խաները և նրանց իշխող բարձր ազնվականությունը շատ լավ հասկանում էին, որ մեծ առևտրի զարգացումը շահավետ է իրենց համար և կարող է իրենց տալ մեծ եկամուտ։ Եվ, իրավի, աղբյուրների վկայություններից երևում է, որ իլխանների տիրապետության, գլխավորապես, առաջին շրջանում միջազգային առևտուրը սկսել էր զարգանալ և գրավել նոր և նոր երկրներ։ Այդ մեծ առևտրին հետզհետե իրենց արտադրության ապրանքներով մասնակից եղան, մի կողմից՝ Պարսկաստանը, Փոքր Ասիան, Անդրկովկասը, Դեշտ-ի-Ղփչաղը, Ռուսաստանը, Միջին Ասիան և Չինաստանը, իսկ մյուս կողմից՝ իտալական քաղաքային հանրապետությունների միջնորդությամբ Միջերկրական և Սև ծովի շուրջ գտնվող երկրները՝ Իտալիան և Արևմտյան Եվրոպան։

Հայտնի է նույնպես, որ մոնղոլների ժամանակ գերակշռող նշանակություն ունեին ո՛չ թե հարավային, այլ երկու հյուսիսային գլխավոր ճանապարհները՝ Թուրքեստանի, Խվարեզմի ու Ոսկե Հորդայի քաղաքների վրայով դեպի Բալթյան ծովը կամ Սև ծովի հյուսիսային ափերի նավահանգիստները և Պարսկաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի վրայով դեպի Տրապիզոն կամ Փոքր

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի. էջ 261—262։




Այաս-Թավրիզ ուղեգիծը:

Ասիա, գլխավորապես, Կիլիկիայի հայ թագավորության նավահանգիստները։ Հարավային ճանապարհները այս ժամանակ մեծ դեր չէին կատարում, որովհետև մոնղոլները, չնայած որ նրանք մի քանի անգամ փորձել էին նվաճել Ասորիքը և գրավել նաև քարավանային մեծ ճանապարհները հարավում՝ բայց անհաջողության էին հանդիպել։

Առևտրական տարանցիկ ճանապարհների տեղափոխությունը հարավից հյուսիս ունեցավ այն հետևանքը, որ խոշոր քաղաքներ հիմնվեցին վերոհիշյալ գլխավոր գծերի վրա։ 13-րդ դարի երկրորդ կեսում առևտրական ամենախոշոր կենտրոնը դարձավ Մերձավոր Արևելքում Թավրիզը, որը խիստ ընդարձակվեց, մանավանդ Ղազան խանի ժամանակ (1295—1304)։ Բացի Թավրիզից առևտրական խոշոր դեր էր կատարում Զենջանի ու Ղազվինի միջև հիմնված Սուլթանիե քաղաքը, որը կառուցել էին 13-րդ դարի վերջում և 14-րդ դարի սկզբներում իլխան Արղունը (1284—1291) և նրա հաջորդները։ Հուլավյանների իշխանության ժամանակ Թավրիզում իրենց գրասենյակներն ունեին Վենետիկի և Ջենովայի վաճառականները, որոնք քարավանային մեծ առևտուր էին անում Մերձավոր Արևելքի հետ։

Այդ առևտրի ճանապարհները մանրամասն մեջ են բերված «Հայաստանի քաղաքների ու առևտրի մասին» ռուսերեն իմ աշխատության մեջ։ Բալդուչչի Պեգոլոտտիի մոտ (14-րդ դարի սկիզբ) հիշատակված է այդ ճանապարհներից քարավանային գիծը՝ Կիլիկիայի նավահանգիստ Այասից դեպի Թավրիզ, որը Կոպիտարայի և Գեկսյունի վրայով գնում էր Սեբաստիա և այնտեղից Երզնկայի վրայով Կարին—Էրզրում։ Էրզրումը հանգուցային կարևոր կետ էր միջազգային առևտրական հարաբերությունների ո՛չ միայն Փոքր Ասիայի և Կիլիկիայի, այլև Տրապիզոնի հետ, որը խոշորագույն կենտրոնն էր արևելյան սևծովյան առևտրի։ Այասից և Տրապիզոնից եկող գծերը Էրզրումից գնում էին Թավրիզ կամ Ալաշկերտի դաշտով և կամ Մանազկերտի վրայով։ Առաջին ճանապարհը մանրամասն նշանակված է Պեգոլոտտիի մոտ և, ինչպես պարզաբանված է իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ՝ համապատասխանում է Պևտինգերյան քարտեզում նկարագրված հին ուղեգծին։ Համաձայն Պեգոլոտտիի ճանապարհացուցակի, Էրզրումից նա գնում էր Թավրիզ Բոլորապահակ—Քեփրիքեի (=Polorbecch), Բագավան—Ուչքիլիսեի (Tre chiese), Ղարաքենդի (Scaracanti) և այժմյան Տայ—Ջավար դաշտի վրայով (=Piana

di Falconieri) դեպի Կարմիր գետի կամ այժմյան Կիզիլ չայի հովիտը (=Piana del Flume rosso) և ապա այժմյան Խոլի վրայով (=Condro) դեպի հարավ-արևելք[1]։

Բացի այս ճանապարհից, գոյություն ուներ Թավրիզից մինչև Էրզրում նաև մի այլ ճանապարհ, որը հիշատակված է Մարկո Պոլոյի և Լանգլեյի ուղեգրություններում և մանրամասն նշանակված է Համդալլահ Ղազվինիի մոտ։ Այս գիծը Խոյից գնում էր ոչ թե դեպի Բագավան, այլ դեպի Արճեշ և ապա գալիս էր Էրզրում Մանազկերտի ու Խնուսի վրայով[2]։

Հայոց կարծիքով, Հայաստանի միջով դեպի Տրապիզոն ու Այաս գնացող քարավանային ճանապարհների նշանակությունը, ինչպես և Թավրիզ քաղաքի առևտրական դերը՝ խիստ մեծացան Բաղդադի խալիֆայության և Բաղդադ քաղաքի կործանումից հետո, որ տեղի ունեցավ, ինչպես տեսանք, 1258 թվին։ Մինչ այդ Բաղդադը միջազգային առևտրում կատարում էր նույնպիսի առաջնակարգ դեր, ինչպես և Թավրիզը, սակայն 1258 թվից հետո վերջինս ու կարճ ժամանակից հետո նաև Սուլթանիեն, գրավելով Բաղդադի տեղը՝ դառան գլխավոր մեծ կենտրոնները Մերձավոր Արևելքի առևտրի։

Թեև մոնղոլական տիրապետության շրջանում միջազգային առևտրի համար ստեղծվել էին, ինչպես տեսնում ենք, նպաստավոր պայմաններ, սակայն նույն այս շրջանում Զաքարյան Հայաստանը և նրա մեջ գտնվող մեծ քաղաքները՝ Դվինը, Անին և Կարսը՝ առևտրական իրենց նախկին մեծ դերը հարկադրված եղան զիջել քարավանային բանուկ ճանապարհների վրա գտնվող պատմական Հայաստանի հարավային քաղաքներին՝ Արճեշին, Մանազկերտին և Խլաթին։ Հայաստանի հյուսիսային քաղաքների երկրորդակարգ դերը պարզ երևում է նրանից, որ Հայաստանի վրայով Թավրիզ գնացող եվրոպական ճանապարհորդները իրենց ուղեգրություն-

---

[1] Տե՛ս իմ աշխատությունները «О торговле и городах Армении», էջ 196—198 և «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 147։ Համեմատե W. *Heyd*, Histoire du commerce du Levant, II, էջ 113—117։

Առևտրի ու քաղաքների մասին ռուսերեն իմ աշխատության մեջ (էջ 198) Condro կայարանը ես սխալմամբ նույնացրել էի հին Կոտորի և այժմյան Ղոթուրի հետ. սակայն հետագայում այդ սխալը ուղղել եմ իմ «Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատ. մեջ (էջ 147)։

[2] Տե՛ս *Петрушевский*, Хамдаллах Казвини как источник социально-экономической истории Восточного Закавказья, էջ 914 և «О торговле и городах», էջ 198—199։

ներում հիշատակում են իբրև արդյունագործական ծաղկող քաղաքներ քարավանային հարավային ճանապարհների վրա գտնվող քաղաքները։ Անիի մասին, ինչպես տեսանք, որոշ տեղեկություններ տալիս է միայն Ռուբրուկը, բայց նա, ինչպես հայտնի է, գնում էր Անիի վրայով Փոքր Ասիա և Անի էր եկել ոչ թե Թավրիզից, այլ Սարայից՝ Դերբենդի ու Շամախու վրայով։

Որ մոնղոլների ժամանակ միջազգային առևտրական հարաբերությունները Հայաստանի վրայով տեղի էին ունենում հարավային ուղղությամբ՝ այդ անուղղակի կերպով հաստատվում է նաև նրանով, որ հայ աղբյուրների մեջ հիշատակված մեծատուն ու հարուստ վաճառականները, Ումեկը և նրա ազգականները, ծագում էին Մանազկերտից և խոշոր առևտուր էին անում Կարին քաղաքում։

«Բայց մեծարվեց նրանց [թաթարների] կողմից,— վկայում է Կիրակոս Գանձակեցին,— մեծատուն մի վաճառական և բարեգործ մի մարդ, որի անունն էր Ումեկ և որին նրանք անվանում էին Ասիլ։ Մենք վերև արդեն հիշատակել էինք, որ Կարին քաղաքի ավերման ժամանակ սա ազատվել էր իր Հովհաննես և Ստեփանոս որդիների և իր եղբայրների հետ։ Նա բնակություն էր հաստատել այդ ժամանակ Տփղիս քաղաքում և անվանվել էր հայր Դավիթ թագավորի. խանը նրան մեծարել էր գրությամբ և պատվում էին նրան նաև բոլոր մեծամեծները»։

[«Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական, Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին, այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի ի թաթարոյն հանդերձ որդւովքն՝ Յովհաննաւ և Ստեփանոսիւ, և եղբարբք իւրովք. և էր յայնժամ ի Տփղիս քաղաքի բնակութիւն կալեալ, և հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ ի ղանէն գրով, և յամենայն աւագանւոյն»][1]։

Թե ինչպիսի մեծ հարստություններ են ունեցել միջազգային առևտրի հետ կապ ունեցող խոշոր հայ վաճառականները՝ այդ երևում է Ումեկի որդու 1283 թվի Գոշավանքի արձանագրությունից, որից իմանում ենք, որ այս վանքը մեծ գումարով գնել էր նրա հայրը։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 349—350։ Համեմատե նաև Վարդան վրդ., գլ. ՁԸ, էջ 147. «Անանուն ժամանակագրութիւն», էջ 21. «Վիմական տարեգիր», էջ 111, 122 և 124։

«...Իմ հայրն Ումեկ,— հաղորդում է սրա որդին,— գնել էր Գետիկը քառասուն հազար կարմիր դուկատի. ես Ճարս գնեցի Հովքը իր բոլոր սահմաններով դառն ժամանակներում, երբ հայրենիքն էժան էր և ոսկին թանկ՝ չորս հազար կարմիր դուկատի»։

[«...Իմ հայրն Ումեկ գնեալ էր զԳետիկ ի քառասուն հազար կարմիր տուգատի. ես Ճարս գնեցի զՀովս իւր ամէն սահմանաւքն ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ, ի ԴՌ կարմիր տուկատ...»][1]։

Շատ հետաքրքիր է, որ այս արձանագրության մեջ հիշատակված մեծ գումարները ոչ թե տեղական փող են, այլ իտալական ոսկե դուկատներ, որոնք, ինչպես տեսնում ենք, մեծ քանակությամբ շրջանառության մեջ են եղել Հայաստանում շնորհիվ միջազգային առևտրի զարգացման իտալական հանրապետությունների հետ։ Բացի այդ, նույն այս արձանագրությունից երևում է, որ Ումեկի ժամանակ, 13-րդ դարի երկրորդ քառորդում, անշարժ գույքը ավելի թանկ էր, և ոսկին անհամեմատ ավելի էժան էր, քան նրա որդու Ճարի ժամանակ՝ 13-րդ դարի ութսունական թվերին։ Դրա պատճառը, ինչպես կտեսնենք, այն էր, որ մոնղոլական ծանր հարկերի ու հարկահավաքների զեղծումների պատճառով գյուղացիները փախչում էին և թողնում իրենց հողերը և կալվածատերերը սնանկանում էին ու իրենց անշարժ գույքը ծախում էին չնչին գներով։

Աղբյուրների վկայություններից նույնպես երևում է, որ այս ժամանակաշրջանի խոշոր առևտրականները, որոնք մոնղոլների նվաճած երկրներում սովորաբար ամենաբարձր պաշտոններն էին վարում ու նաև հաճախ կապալով վերցնում էին արքունի հարկերի գանձումը՝ իշխաններից ու կալվածատերերից գնում էին հաճախ ո՛չ միայն գյուղեր ու կալվածներ, այլև ամբողջ գավառներ ու քաղաքներ։

Նման ազդեցիկ առևտրականներից էին հայ և վրաց աղբյուրների մեջ հիշատակված խոջա Մուհամմեդ Շեմսեդդինը և նրա հայ աշխատակիցները՝ Սահմադինը և Քարիմադինը։ Խոջա Մուհամմեդ Շեմսեդդինը իլխանության քաղաքացիական վարչության ամենաբարձր պաշտոնյան էր և, իբրև այդպիսին՝ անվանվում էր Սահիբ Դիվան[2]։ 1269 թվին նա, ինչպես հաղորդում են Ստեփանոս Օրբե-

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 124։

[2] Տե՛ս «История монголов по арм. ист.», перевод *К. П. Патканова*, вып. I, էջ 86, ծանոթ. 42։

լյանը և Քարթլիս-ցխովրեբան, ամուսնացավ Զաքարյան Ավագի դստեր Խոշաքի հետ, որի հոգաբարձուն էր այդ ժամանակ Օրբելյան Սմբատ իշխանը[1]։ Ինչպես վկայում է դարձյալ Քարթլիս-ցխովրեբան, իլխանական

> «Ամբողջ պետությունը սրա ձեռքումն էր և սրա հրամաններին էր հնազանդ։ Եվ սա գնել էր շատ երկրներ և արքաներն էլ նրան նվիրել էին Կարսը»[2]։

Իբրև Ահմադ Սուլթանի (1282—1284) կողմնակից սա, ինչպես կտեսնենք, սպանվեց վերջինիս մյուս համախոհների հետ 1284 թվին։ Այս Սահիբ-Դիվանի մասին առանձնապես հետաքրքիր է Ֆրիկի «Ընդդէմ ֆալաքին» բանաստեղծության մեջ հետևյալ վկայությունը։

> «Սահիբ Դիվանին ասենք.
> Որ մըլքեց նա զերկիր բոլոր.
> Հանցեղ սիասաթ ունէր,
> Որ չունէր ոչ ոք թագաւոր։
> Զինչ որ խանորայք կային,
> Յափն ունէր զինչ ըզմի խնձոր.
> Ֆալաքն եբբ ի սիրտ եկաւ,
> Նա արար զինքն երկու կտոր»[3]։

Անիի 1263 թվի կարևոր մի արձանագրության բովանդակությունից կարելի է ըստ իս նաև հետևցնել, որ նույն այս Սահիբ Դիվանը և նրա հետ միասին վերոհիշյալ Սահմադինը և Քարիմադինը[4] կալալառուներն էին Անիի հարկերի։

> «Մեք տաղմաճիքս,— ասված է այդ արձանագրության մեջ,— վասն երկար կենդանութեան և վասն պատրոնաց մերոց Սահիպ Դիւանին և Սահմադին[ին] և Քարիմադինին բարձաք ի յԱնո իրիցանուս զրաժն, զոր ի սկզբանէ աղատ էր, մեք վերստին այլ հաստատեցաք. չունի ոք իշխանութիւն բաժ ուզելու ոչ ինչ ազգ, ով իջէ որ կապէլ որ լինի...»[5]։

---

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 418. Նույնի «Ժամանակագրություն», էջ 27, Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 59։

[2] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 60։ Համեմատե Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 418։

[3] Տե՛ս Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 219։

[4] Այս Քարիմադինը, հավանորեն, վերոհիշյալ Ումեկի որդին էր. տե՛ս Ալիշան, Հայապատում, էջ 512։

[5] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 106 (1263 d)։

Որ Սահմադինը ևս, ինչպես և Ումեկը, ականավոր ներկայացուցիչ էր առևտրական-վաշխառուական կապիտալի և ուներ դրամական մեծ հարստություն, այդ երևում է նաև Մրենի 1261 թվի մի արձանագրությունից, որ հրատարակել է Ն. Մառը։ Այդ արձանագրությունը վկայում է, որ նա Զաքարյան Շահնշահի Արտաշիր որդուց գնել էր Մրենը և այնտեղ, Աբաղայի խանության ժամանակ (1265—1282), կառուցել էր իրեն համար ամառանոց և պալատ, որի վրա ծախսել էր քառասուն հազար «դուկատ դահեկան»[1]։

Որ իլխանները, ի նկատի ունենալով իրենց գանձարանի եկամուտները, իրենց հովանավորության տակ էին առել ականավոր վաճառականներին և խրախուսում էին միջազգային մեծ առևտուրը՝ դրա ապացույց կարող է լինել և այն, որ Հայաստանի հարավում Թավրիզից Տրապիզոն և Այաս գնացող քարավանային վերոհիշյալ ճանապարհների մոտ Հուլավուն հիմնեց ամառվա քոչավայր և ընդարձակ քաղաք, որը պետք է լիներ իլխանության առևտրական կենտրոններից մեկը։ Այս քաղաքը, որի մեջ բռնի կերպով բնակեցրել էին վաճառականներ[2], հիմնված էր Բագավանի ու Դիադինի հարավակողմում, Նպատ կամ Ալադաղ լեռան ստորոտներում, Դառան կամ Դառն դաշտում և կոչվում էր ըստ Գրիգոր պատմիչի (Մաղաքիայի) Ալադաղ։ Ուշագրավ է, որ Ալադաղի շինարարության աշխատանքները, ինչպես վկայում է Կիրակոս Գանձակեցին, կատարվում էին, գլխավորապես, հպատակ ժողովուրդների պարտադիր ու տաժանալից աշխատանքով։

«Այս օրերում,— պատմում է Կիրակոս Գանձակեցին,— սկսեց մեծ Հուլավուն շինել մի ընդարձակ ու բազմամարդ քաղաք Դառն դաշտում. և նա հարկադրեց իր բոլոր հպատակներին, որ նրանք ամեն կողմից բերեն մեծ քանակությամբ փայտ, տների, շենքերի ու քաղաքի ապարանքների համար, որ նա կառուցում էր իր ամառվա զով նստավայրի տեղում։ Եվ մարդիկ ու անասունները տառապում էին խիստ ու դաժան վերակացուներից, որ ավելի դառն էին, քան փարավոնները, որ դրված էին Իսրայելի որդիների վրա»։

[«Յաւուրս յայսոսիկ սկսաւ մեծն Հուլաւու շինել քաղաք բազմատար և բազմամարդ ի դաշտին Դառնոյ. և եդ

---

[1] Տե՛ս Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, СПб., 1893, էջ 81—85։

[2] Տե՛ս Heyd W. Histoire du commerce du Levant, II, էջ 108։

հարկս ի վերայ ամենայն հնազանդելոցն բազմութիւն փայտից բերել յամենայն կողմանց ի պէտս շինուածոյ տանց և ապարանից քաղաքին, զոր շինէր ի տեղի հովոցաց իւրոց՝ յաւուրս ամարայնւոյ. և տառապէին մարդ և անասուն ի խիստ և ի դառն վերակացուացն, որ դառնագոյնք էին քան զփարաւոնին ի վերայ որդւոցն Իսրայէլի»][1]։

Հուլավյանների այս նոր աթոռանիստ քաղաքը, չնայած իր նպաստավոր տեղադրության առևտրական մեծ ճանապարհների մոտ՝ գոյություն ունեցավ միայն կարճ ժամանակ։ Նա չկարողացավ ամրանալ և զարգանալ, որովհետև շուտով սկսվեց թե Հուլավյանների իլխանության քայլ առ քայլ անկումը և թե միջազգային առևտրի նվազումը և ընդհատումը Հայաստանի միջով։

Արդեն Հուլավուի ժամանակ կռիվների պատճառով Ոսկե Հորդայի հետ քարավանային առևտուրը հյուսիսի հետ ստացավ անբուժելի հարված։ 1262—1263 թթ. մեծ պատերազմի ժամանակ Բերքայի դեմ Հուլավուն, ինչպես վկայում է պարսկական պատմագիր Վասսաֆը՝

«Հրամայեց մահապատժի ենթարկել Բերքա սուլթանի բոլոր վաճառականներին, որոնք առևտրով ու առևտրային գործարքներով էին զբաղված Թավրիզում և ունեին անհաշիվ ու անչափ գույք, և կարգադրեց հարքունիս գրավել նրանց գույքը, ինչ որ կգտնեն։ Այդ մարդկանց մեջ կային մեծ թվով այնպիսիները, որոնք Թավրիզի ականավոր մարդկանց վստահել էին իրենց կապիտալները և ապրանքները։ Նրանց սպանումից հետո՝ այդ գույքը մնաց այն մարդկանց ձեռին, որոնց հանձնված էր։ Վրեժ լուծելով՝ Բերքա սուլթանը ևս սպանեց այն վաճառականներին, որոնք իլխանական երկրներից էին, և սկսեց նույն ձևով վարվել սրանց հետ։ Այսպիսով առևտրականների երթևեկությունը և ճանապարհորդությունը, որ խելացի մարդկանց գործ էր, անմիջապես խափանվեց և ժամանակի անոթի միջից դուրս թռան խառնակության շեյթանները»[2]։

Պետք է ասել, որ առևտրի վրա Հայաստանի միջով, ընդհանրապես, շատ վատ էին անդրադառնում Ջուչյանների և Հուլավյանների մշտական պատերազմները, որոնց թատերավայրը Ան-

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 380։ Համեմատե նաև Ստեփանոս Օրբելյան, էջ 415 և Մաղաքիա աբեղա, էջ 32։

[2] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, 1941, էջ 81։

ղըրկովկասն էր։ Վերջինս պարբերաբար ենթարկվում էր ավերածության և կողոպուտի։ Չնայած, սակայն, երկրի ու աշխատավոր ժողովրդի ծանր դրության՝ Հայաստանի կուլտուրական վերածնությունը, որ բուռն թափով սկսվել էր Զաքարյանների ժամանակ՝ զգալի չափով շարունակվեց նաև մոնղոլական տիրապետության շրջանում, գլխավորապես, XIII դարում։ Այս շրջանը ևս, ինչպես հայտնի է, հարուստ է գեղեցիկ ու մեծածախս շինություններով։ Ուշագրավ է, սակայն, որ վիմական արձանագրությունները, որոնց մեջ առանձին-առանձին հիշատակված է այս շինարարությունը. մեջ ընդ մեջ ընդգծում են, որ պատմական այդ հուշարձանները կառուցված են թաթարական տիրապետության չար և դառն ժամանակներում[1]։

Այս շրջանի բազմաթիվ դողտրիկ ու գեղեցիկ շենքերի և պատմական հիշատակարանների թվում առաջին տեղն են գրավում, հարկավ, Պռոշյան տոհմի կառուցած Գեղարդավանքի քարափոր տաճարները և այլ հուշարձանները, որոնք գեղարվեստական մեծագործություններ են։ Հիշատակության արժանի է առանձնապես և Գանձասարի վանքը, որի կառուցումը սկսված էր մոնղոլական արշավանքներից առաջ և ավարտվել է 1240 թվին։ Արվեստի ուշագրավ մի կոթող է Հաղբատի վանքի սիրուն զանգակատունը, որը կառուցված է 1245 թվին «ի դառն ժամանակս թաթարաց»[2]։ Բազմաթիվ են ու գեղեցիկ նաև այս ժամանակաշրջանի եկեղեցիներին կից շինված գավիթները, որոնցից մի քանիսը, օրինակ, Հաղբատի տաճարինը՝ պատվավոր տեղ են գրավում հայ ճարտարապետության պատմության մեջ։

Կուլտուրական մեծ դեր են կատարել մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում վանական ուսումնավայր Խորանաշատը և Գլաձորի կամ Գայլաձորի համալսարանը, ուր ուսուցիչ էին Խորանաշատի հիմնադիր Վանականը և Եսայի Նչեցին։

Այստեղ, բացի քերականությունից, ճարտասանությունից, փիլիսոփայությունից և կրոնական առարկաներից՝ ուսուցանում էին նաև երգեցողություն, գրչության արվեստ և նկարչություն։ Վանական այդ դպրոցների շնորհիվ էր, որ 13—14-րդ դարերում շարունակեց զարգանալ Հայաստանում մանրանկարչությունը և որմնանկարչությունը։ Հայկական մանրանկարչությունը, որը դեռևս բա-

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 88, 90, 92, 124։

[2] Նույնը, էջ 88։

վարար չափով ուսումնասիրված չէ, ոչ միայն նշանակություն ունի իբրև հայ ժողովրդի գեղարվեստական ստեղծագործության հատուկ մի ճյուղ, այլև մեծ կարևորություն ունի հայ կուլտուրայի պատմության համար, որովհետև նրա մեջ պատահում են այնպիսի նկարներ, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու միջնադարյան հայկական հագուստները և նիստուկացը։

Մոնղոլական տիրապետության ժամանակ զարգանում էին Հայաստանի քաղաքներում արհեստները, գլխավորապես, մանածագործական, մետաղագործական և կավագործական արդյունագործությունը, որոնք, ինչպես հայտնի է, զարգացման բավական բարձր աստիճանի էին հասել Բագրատունիների թագավորության ժամանակ։ Ուշագրավ է առանձնապես, որ մեծ թվով հայ արհեստավորներ կային այս ժամանակ նաև Հայաստանից դուրս՝ ո՛չ միայն Փոքր Ասիայում ու սեծովյան առափնյա քաղաքներում, այլև Ոսկե Հորդայի ու Հարավային Ռուսաստանի մեծ քաղաքներում, օրինակ, Սուդակում, Սարայներում և Բուլղարում։

13—14-րդ դարերում ուժեղ կերպով զարգացավ Արևելյան Հայաստանում նույնպես և գրականությունը։ Այս դարերը շատ հարուստ են եկեղեցական, ինչպես և գիտական գրականությամբ՝ բժշկական, իմաստասիրական ու քերականական։ Քիչ չեն և պատմագրական ու ժամանակագրական երկերը, որոնք, ինչպես տեսանք, աղբյուր են ծառայել մեր այս աշխատության և որոնց մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդվելու սույն գրքի վերջում՝ աղբյուրների տեսության մեջ։ Մեծ թափով շարունակվեց 13-րդ և հաջորդ դարերում գեղարվեստական գրականության աշխարհականացումը։ Աշխարհիկ քնարերգությունը, որը խիստ զարգացավ 13-րդ դարում՝ պատվավոր տեղ է բռնում ո՛չ միայն հայ, այլև համաշխարհային գրականության մեջ։ Քնարերգու այս բանաստեղծության գլխավոր ներկայացուցիչներն էին Ֆրիկը և Կոստանդին Երզնկացին, որոնք խոշորագույն դեմքերն են միջնադարյան հայ աշխարհիկ գրականության։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՂՔԱՏԱՑՈՒՄԸ

**1. Սխալ կարծիքներ մոնղոլական տիրապետության առաջադիմական նշանակության մասին։— 2. Մոնղոլական տիրապետության մասին Կարլ Մարքսի կարծիքը։— 3. Հայաստանի տնտեսական հետադիմությունը։— Մոնղոլների կեղեքումները և դաժան հարկահանությունը։— 4. Հիմնական հարկերը մինչև Արղունի աշխարհագիրը.— «մալ», «թաղար», «ղփչուր»։— 5. Երթևեկներին սպասարկելու և «եամ»-ի պարտականությունները։— 6. «Տամղա»-ն և նրա ընդարձակ իմաստը։— 7. Զանազան այլ հարկանուններ։— 8. Հարկահանների զեղծումները և բռնությունները։— Հարկից խուսափողների ենթարկումը ծանր խոշտանգումների։— Տեղական իշխանների աջակցումը հարկահաններին։— 9. Անդրկովկասի և Հայաստանի ամայացումը Ջալալեդդինի, Չարմաղանի ու Բաչուի արշավանքների ժամանակ։— Աշխատավոր ժողովրդի սնանկացումը։ 10.— Մոնղոլական դիվանի փոքր եկամուտները շնորհիվ Իրանի ու Անդրկովկասյան երկրների տնտեսական անկման։— Թուրք քոչվորների և նրանց արոտային տնտեսության ուժեղացումը Անդրկովկասում։**

*Միջազգային առևտրի զարգացումը մոնղոլական տիրապետության ժամանակ, ինչպես և մոնղոլական խաների սերտ կապը և բարեկամությունը խոշոր առևտրականների հետ, որոնք նրանց մոտ պետության բարձր պաշտոնյաներն էին՝ ռուս պատմագետներից ոմանց առիթ է ծառայել կարծելու, որ մոնղոլների արշավանքները և իշխանությունը առաջադեմ երևույթ էին և որ իբր թե միանգամայն սխալ է տիրող կարծիքը, որ նրանց տիրապետությունը ավերածության և բարբարոսության թշվառ մի շրջան էր։*

> *«Միմիայն [թաթարների մտցրած] ֆինանսական կազմակերպությունը կարող է,— ասում է ռուս պատմաբան Պոկրովսկին,— բավական համարվել հերքելու համար այն ընթացիկ կարծիքը, որ իբր թե թաթարական արշավանքը*

*կործանումն էր կուլտուրական երկրի վայրենի քոչվորների ձեռքով»*[1]։

*Ականավոր ռուս արևելագետ Բարտոլդը ենթադրում է նույնիսկ, որ—*

> *«Մոնղոլներն իրենց հետ բերին խիստ ուժեղ պետական կազմակերպություն, որը չնայած իր բոլոր պակասություններին՝ ավելի բարեկազմ էր, քան նախկին պետական սիստեմները, և այդ կազմակերպությունը մեծ ազդեցություն գործեց բոլոր երկրներում, որոնք մտել էին մոնղոլական պետության կազմի մեջ»*[2]։

*Պաշտպանելով այս տեսակետները՝ Պակրովսկին և Բարտոլդը պարզապես թերագնահատում են աղբյուրների տվյալները մոնղոլների կոտորածների, ավերածությունների ու բարբարոսությունների մասին, որոնց շնորհիվ կիսաանապատ դառան Առաջավոր Ասիայի երկրները և անբուժելի հարված ստացան սրանց բարեկեցությունն ու քաղաքակրթությունը։ Անընդունելի է, մասնավորապես, և նրանց ենթադրությունը մոնղոլների ստեղծած ուժեղ պետականության մասին։ Աղբյուրների վկայություններից երևում է, ընդհակառակը, որ մոնղոլներն անկարող եղան ապահովություն ու հաստատուն կարգ մտցնել իրենց նվաճած երկրներում և նրանց սանձարձակ պաշտոնեությունը ու հարկահավաքները անպատիժ կերպով կեղեքում ու կողոպտում էին հպատակ ժողովուրդներին և ավերածության էին մատնում անխտիր բոլոր երկրները։*

*Պետք է ասել, որ միջազգային առևտրի և վաշխառուական-առևտրական կապիտալի զարգացումը այս շրջանում շատ քիչ նպաստեց ժողովրդական տնտեսության ընդհանուր զարգացմանը։ Իրենք հենց խոշոր վաճառականներն էին, որոնք՝ իբրև կապալառուներ և պետական բարձր պաշտոնյաներ՝ մոնղոլական տիրակալների հովանավորության ներքո անողոք կողոպուտի էին ենթարկում նվաճված երկրները։*

*Իսկական բնութագիրը և ուղիղ գնահատականը մոնղոլական տիրապետության տրված է, ինչպես հայտնի է, Կարլ Մարքսի*

---

[1] Տե՛ս *М. Н. Покровский*, Очерк истории русской культуры, часть I, М., 1915, էջ 186։

[2] Տե՛ս *В. В. Бартольд,* Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, էջ 72։ Համեմատե նաև էջ 65 և այլն։

«Գաղտնի դիպլոմատիա» գրվածքում[1]։ Խոսելով մոնղոլական տիրապետության ազդեցության մասին, հատկապես Ռուսաստանի վրա՝ Մարքսը իր այդ գրվածքում պարզ ասում է, որ—

«Թաթարական լուծը տևեց [Ռուսաստանում]… ավելի քան երկու դար և որ այդ մի լուծ էր, որը ոչ միայն ճնշում է, այլև պղծում ու հալումաշ է անում ժողովրդի իսկ ոգին, որը նրան ենթակա է։ Մոնղոլական թաթարները հաստատեցին սիստեմատիկ տեռորի ռեժիմ, որի միջոցներն էին կողոպուտները և մասսայական կոտորածները»։

Կարլ Մարքսի մոնղոլական տիրապետության այս գնահատականը կատարելապես ճիշտ է և Անդրկովկասի ու Հայաստանի վերաբերմամբ։ Մոնղոլական նվաճումը, ինչպես տեսանք, այստեղ ևս շատ ծանր էր անդրադարձել ժողովրդի դրության վրա։ Արշավանքների ժամանակ կողոպտվել էր ամբողջ երկիրը, քարուքանդ էին արված առևտրա-արդյունաբերական կենտրոնները, կոտորվել և գերի էր տարվել բնակչության զգալի մասը, իսկ այնուհետև, մոնղոլական տիրապետությունը հաստատվելուց հետո, ժողովրդի դրությունը— գյուղացիության և քաղաքացիների ստորին խավերի— անտանելի էր դառել անլուր հարստահարությունների և ծանր հարկերի պատճառով։ Մոնղոլ իշխանավորները, հնարավորություն տալով աշխատավոր բնակչությանը վերաշինել իրենց քանդված երկիրը՝ ո՛չ թե մտածում էին ժողովրդի ու նրա բարեկեցության մասին, այլ ի նկատի ունեին նրա դաժան շահագործումը ծանր հարկապահանջության միջոցով։ Նրանց վայրագ ու անգութ հարըստահարությունների արդյունքը, ինչպես կտեսնենք, այն եղավ, որ Հայաստանը, որը գտնվում էր տնտեսական զարգացման բարձր աստիճանի վրա՝ դուրս մղվեց նորից իր առաջավոր դիրքերից և ոչ միայն հետադիմեց, այլև ամայացավ։ Որ Հայաստանի ծանր դրության և աշխատավոր ժողովրդի տառապանքների գլխավոր պատճառը թաթարական հարկերն էին՝ այդ միաբերան վկայում են բոլոր հայ աղբյուրները[2]։ Նույնիսկ Ստեփանոս Օրբելյանը, որը մոնղոլների մասին խոսում է երբեմն գովեստով՝ մատնանշում է ու ընդգծում, որ նրանք բնությամբ—

«Խղճուկ էին, ընչաքաղց և մարդկանց նեղող ու կեղեքող»։

---

[1] Տե՛ս „Secret Diplomatic History of Eighteenth Century“ edit. by *Eleonor Marx*, London, 1899, էջ 78—80։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 278, 349. Մաղաքիա աբեղա, 20, 22, 28 և ուրիշ.։

*[«Բարուք աղքատք և ընչաքաղցք, նեղիչք և կեղեքիչք մարդկան»][1]։*

*Թաթարական կեղեքումները և դաժան հարկահանությունը պատկերավոր կերպով արձագանք են գտել Ֆրիկի բանաստեղծություններում, որ ավելորդ չեմ համարում մեջ բերել նրա երկի զանազան էջերից։*

*«Ջինչ տէրն երետ հերիք չածի,*
*Այլ մեծութիւն սիրտ ունէի.*
*Ժողովեցի շատ մի բարի.*
*Ըռղակ արի գնա Թաթարի։*

*. . . . . .*

*Ահա եղաւ այնչափ տարի,*
*Որ տուն ու տեղն դեռ կու քակի.*
*Ջինչ մեծամեծ վաստակ արի,*
*Ամեն դարձան հող ու՛ ի փոշի։*

*. . . . . .*

*Ես ի՞նչ գիտէի, եղբայր,*
*Թէ մեղաց դարն հանց լինենա.*
*Ջինչ որ կու քաղենք հիմիկ,*
*Շատ չարիս և վրճար չըկայ։*

*. . . . . .*

*Գէմ չի մնաց աղբիւր ու գետ,*
*Որ լացուցաքս չխմեցին.*
*Գէմ չի մնաց լեռներ ու դաշտք,*
*Որ մասասչիքըն չկոխեցին։*

*Զըմեռն յարան երթին լալով*
*Ու ամառըն ի քոչն քաշէին,*
*Քըսան տարի դար քաշեցանք,*
*Որ հալեցաւ ոսկր ու մորթին։*

*Լոկ շնչաւոր ինք մնացել,*
*Խելք զգացարանք մեզ չերևին»[2]։*

*Մոնղոլներին տրվող Հայաստանի հիմնական հարկերը, որոնք գոյություն ունեին մոնղոլական տիրապետության առաջին շրջա-*

---

1 *Տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, *Պատմություն, գլ. ԿԶ, էջ 401.*

2 *Տե՛ս* Ֆրիկ, *Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 25, 26, 147, 211։*

նում մինչև Արղունի 1254 թվի աշխարհագիրը, հիշատակված են Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) մոտ։ Այդ գլխավոր հարկերն էին «մալ», «թաղար» և «ղփչուր»։

Թե այս և թե մոնղոլական շրջանի մյուս հարկերի խնդիրը քննելիս՝ պետք է ի նկատի ունենալ, որ հարկերի վերաբերյալ միևնույն տերմինները զանազան տեղերում և զանազան ժամանակներում ունեցել են հաճախ տարբեր նշանակություն։ Այս տեսակետից, այդ հարկերի անունների լուսաբանությունը խիստ բարդ աշխատանք է, որ մինչև այժմ լայն չափերով դեռ չի կատարված։

Գրիգոր պատմիչը (Մաղաքիան) և Կիրակոս Գանձակեցին, մոնղոլական շրջանի պետական հարկերը հիշատակելիս՝ ամենից առաջ դնում են «մալ» հարկը[1]։ Որևէ տեղեկություն այս հարկի բնույթի մասին հայկական աղբյուրները մեզ չեն հաղորդում։

Ռուս գիտնականները՝ Պետրուշևսկին և Տիզենգաուզենը՝ ենթադրում են, որ մոնղոլների ժամանակ «մալ» է կոչվել հողային հարկը, որը վճարվել է սովորաբար դրամով[2]։ Բրոսսեն, հիմնվելով վրացական աղբյուրների վրա՝ «մալ»-ը համարում է դրամով տըրվող հարկ, որի գումարը որոշ չէ[3]։ Իսկ Պատկանյանը նույն այդ հարկը ենթադրում է գույքահարկ (налог на имущество)[4]։ Ուշագրավ է, որ Ղազան խանի հարկատվության վերաբերվող հրամանագրում, որ մեջ է բերված Ռաշիդեդդինի մոտ՝ «մալ»-ը հիշվում է «խարաճ»-ի, այսինքն՝ հողային հարկի կողքին։

> «Խարաճը և մալը,— ասված է այդ հրամանագրում,— որ վաղուցիվեր նշանակված է կանխիկ դրամով՝ սահմանված է, որ պետք է մուծվի տարվա սկզբին մի նվագում՝ Ջելալյան Նոր տարու օրից սկսած քսան օրվա ընթացքում»[5]։

Հավանական է ըստ այսմ, որ «մալ»-ը, իրապես, անշարժ գույքերի հարկ էր։

Երկրորդ մեծ հարկն էր գլխահարկը, որը դ՚Օհսոնն անվանում է անձնական հարկ (impôt personnel)։ Ինչպես վկայում է

---

[1] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 8, 16, 20. Կիրակոս Գանձակեցի, էջ 359։

[2] Տե՛ս Петрушевский, Хамдаллах Казвини, էջ 886. Համեմատե նաև Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 302։

[3] Տե՛ս Brosset, Histoire de la Géorgie. Introduction, St. Pet., 1856, էջ CLXXII։

[4] Տե՛ս Патканов, История монголов. II, էջ 135։

[5] Տե՛ս Рашид ад-дин, Сборник летописей. т. III, перевод А. К. Арендса. М.—Л., 1946, էջ 260։

դ'Օհսսոնը[1], Պարսկաստանում այս հարկը սահմանված էր ըստ հարկատուների կարողության 7-ից մինչև 1 դենար, իսկ Ռուսաստանում՝ իշխաններից 100 ռուբլի, բոյարներից 50 ռուբլի և գյուղացիներից 5 ռուբլի[2]։ Հենց այս հարկին է վերաբերվում Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) ուշագրավ մի վկայությունը, որը ուշադրության չէ առնվել։ Խոսելով Արղունի 1254 թվի աշխարհագրի մասին՝ Գրիգոր պատմիչը հաղորդում է, որ—

«Առնուին այնուհետև զհարկն ի գլխաթուոյ մարդկան. քանզի որ գրեալ լինէր ի դաւթարն, և այսպէս այլ աւերեցին զաշխարհն Արևելից, զի մի փոքր գեղն Ծ մարդ համարէին կամ Լ. ի ԺԵ տարեկանէն ի վերն զամէնն համարէին մինչ Կ տարեկանն, և յամէն գլխոյ որ համարէին Կ սպիտակ առնուին»[3]։

Այս 60 սպիտակը, որ հավասար էր ըստ իմ հաշիվների մոտավորապես 12 ոսկի ռուբլու, ինչպես տեսնում ենք անհամեմատ ավելի ծանր հարկ էր, քան գլխահարկը Սասանյան Պարսկաստանում, որը մարդագլուխ 4 դրամ էր կամ մոտավորապես 2 այժմյան ոսկի ռուբլի։ Աղբյուրների վկայություններից, ինչպես շատ ճիշտ նկատել են Բարտոլդը և Ալիզադեն, կարելի է եզրակացնել, որ դրամական այս հարկը, որ գլխահարկ էր, անվանվում էր «ղփչուր»[4]։

Մոնղոլական շրջանի երրորդ հիմնական հարկն էր «թաղար»-ը, որը Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) վերոհիշյալ հատվածներում (էջ 8, 16, 20) հիշատակված է երկրորդ տեղում։ «Թաղար»-ը, ինչպես հայտնի է, թուրքական չորեղենաչափ էր, իսկ իբրև հարկ, ըստ երևույթին, բնական տուրք էր՝ որոշ մաս բերքից, որ տրվում էր մոնղոլական պետությանը։ Վիմական արձանագրություններում բացի «թաղար»-ից հիշատակված են «եզին թաղար» և «կալաթաղար»[5]։ Պարսկական աղբյուրներում «թաղար» են անվանված, գլխավորապես, զորքի համար գանձվող պարենի պաշարները[6]։ «Թաղար»-ի նշանակության որոշման համար առանձնապես

---

1 Տե՛ս *D' Ohsson*. Histoire des Mongols. II, 262—266, III, 127։

2 Տե՛ս *Насонов*, Монголы и Русь, էջ 16։

3 Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 22։

4 Տե՛ս *Бартольд*, Персидская надпись на стене Анийской мечети Мануче, СПб., 1911, էջ 32—33. նաև *А. А. Ализаде*, К истории феодальных отношений в Азербайджане Термин «купчур». Изв. Ак. наук Азерб. ССР, 1945, № 5, էջ 87—102։

5 Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 221, 226, 247։

6 Տե՛ս *Тизенгаузен*, Сборник материалов, II, էջ 107, 136, 149։



Գեղարդավանքի ընդհանուր տեսքը (XIII դ.)։



*Գեղարդավանքի գլխավոր մուտքը (XIII դ.)։*

կարևոր է Կիրակոս Գանձակեցու հետևյալ վկայությունը[1], որից երևում է, որ «թաղար»-ը, իրապես, զորքի համար պահանջվող պարենհարկ էր—

«Եվ բացի մյուս այլ շատ հարկերից, որ դրել էր Արղունը, հրաման տվեց Հուլավուն պահանջելու նաև հարկը, որ թաղար էին անվանում. յուրաքանչյուր գլխից, որ մտցված էր արքունի գրի մեջ՝ պահանջում էին 100 լիտր ցորեն, հիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ ու ծնծատ, երեք տոպրակ, երկու չվան, մի սպիտակ, մի նետ, մի նալ ու բացի դրանից նաև այլ կաշառքներ. և քսան անասունից՝ մի անասուն ու 20 սպիտակ»։

[«Այլ և միւս ընդ այլ բաղումսն, որ եդաւ յԱրղունէն մալի և փախչուրի՝ եդաւ հրաման ի Հալուէն[2] պահանջման հարկի, զոր թաղարն ասեն, յամենայն գլխոյ, որ մտեալ էր ի գիրն արքունի, պահանջէին հարիւր լիտր ցորեան, յիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ և ծնծատ, երեք տոպրակ, երկու չուան, մի սպիտակ, մի նետ, մի նալ[3], թո՛ղ զայլ կաշառսն. և քսան անասնոյն մի անասուն և քսան ստակ»][4]։

Մի կողմ թողնելով Կիրակոսի այս վկայության մի քանի մութ կետերը, որ կարոտ են հատուկ քննության, նրա ընդհանուր բովանդակությունից դժվար չէ հետևցնել, որ «թաղար»-ը, ինչպես վերև ասացինք, բնական հարկ էր, որ գանձվում էր, գլխավորապես, մոնղոլական զորքի պետքերի համար։ Վերև հիշված «թաղար»-ի քանակը պարզելու համար պետք է մատնանշենք, որ 13-րդ դարի լիտրը, ինչպես ցույց է տրված «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» իմ աշխատության մեջ (II, Երևան, 1928, էջ 16), ըստ երևույթին, Մխիթար Գոշի մոտ հիշատակված լիտրն է, որի կշիռը հավասար էր 408 գրամի կամ 1 ռուսական ֆունտի։ Ուրեմն ըստ այս հաշվի՝ 100 լիտր ցորենը համապատասխան կլինի 2,5 փթի կամ մոտ 40 կիլոգրամի, 50 լիտր գինին՝ մոտավորապես 20 այժմյան լիտրի, իսկ 2 լիտր բրինձը՝ 2 այժմյան ֆունտի։

Ինչպես տեսնում ենք, «թաղար»-ը, որ Հուլավուի ժամանակ ստանում էին Հայաստանում՝ խիստ ծանր հարկ էր, ինչպես և վերոհիշյալ «ղփչուր»-ը։

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 359—360։

[2] Ակնալցխայի Կարապետյան դպրոցի ձեռագիրն ունի «ի Հուլաւունէն»։

[3] Ախլց. ձեռ. ունի «բ նալ»։

[4] Ախլցխ. ձեռ չունի «և քսան ստակ»։

*Մոնղոլական շրջանի չորրորդ հիմնական հարկն էր անասնահարկը, որը, ինչպես երևում է պարսկական աղբյուրների վկայություններից, անվանվում էր «ղփչուր», ինչպես և գլխահարկը։ Այդ մասին պարզ ու որոշ վկայություններ ունի, օրինակ, Ռաշիդեդդինը։*

> *«Այժմ ոչ ոքի համար գաղտնիք չէ,— վկայում է Ռաշիդեդդինը,— որ առաջ, մեր փառապանծ նախահայրերի ժամանակ, մոնղոլական ուլուսների վրա դրվում էին զանազան պարտիքներ ու ծանրություններ ինչպես* անասունները*ով* տրվող ղփչուրը, *մեծ «խամ»-երի (փոստային երթևեկությունների) պահպանումը, խիստ օրենքի [յասախի] ու զինապարտությունների [ղալանների] կատարումը, որ մենք այժմ միանգամից վերացրինք»*[1]։

*Նույն իմաստն ունի «ղփչուր»-ը նաև Ռաշիդեդդինի մի ուրիշ վկայության մեջ.—*

> *«Առաջ,— վկայում է դարձյալ Ռաշիդեդդինը.— երբ դեռ գոյություն ունեին նրանց [մոնղոլների] հին սովորությունները ու կարգերը, ամբողջ մոնղոլական զորքը յուրաքանչյուր տարի աղքատացած հորդաներին ու զորախմբերին բաժին էր հանում ղփչուր ձիերով, ոչխարներով, եզներով, թաղիքով, պարանով և այլն»*[2]։

*Պետք է ասել, որ «ղփչուր»-ը մոնղոլական-թաթարական բառ է և նշանակում է «արոտատեղի» կամ «անասնահարկ»։ Այս բառի ուղիղ մեկնությունը տվել է Ք. Պատկանյանը*[3]*։ Սակայն նա, հիմնվելով, ըստ երևույթին, դ՚Օհսոնի կամ Քատրմերի վրա*[4]*. կարծում է, որ իբրև անասնահարկ տրվում էր 100 անասունից 1 անասուն։ Այս տեղեկությունը, որ քաղված է Ռաշիդեդդինից՝ վերաբերվում է, իրապես, ո՛չ թե նվաճված ժողովուրդներին, այլ մոնղոլ քոչվորներին, որոնք գտնվում էին հարկային արտոնյալ վիճակում*[5]*։ Իսկ Հայաստանում Հուլավուի ժամանակ (1256—1265),*

---

[1] *Տե՛ս Рашид ад-дин,* Сборник летописей, т. III, рус. перев. Арендса, М.—Л., 1946, *էջ 283*։

[2] *Նույնը, էջ 281*։

[3] *Տե՛ս նրա «Մաղաքիայ աբեղայի պատմության» հրատարակությունը, էջ 63 և* История монголов, II. *էջ 135*։

[4] *Տե՛ս D'Ohsson,* Histoire des Mongols, II, *էջ 264, Quatrmére,* Histoire des Mongols de la Perse par *Rachid-Eddin,* t. I, Paris, *1836, էջ 256*։

[5] *Տե՛ս Владимирцов Б. Я.,* Общественный строй монголов. Л., 1934, *էջ 114*։

ինչպես երևում է Կիրակոս Գանձակեցու վերոհիշյալ վկայությունից, անասուններից առնում էին իբրև հարկ ո՛չ թե 100-ից 1-ը, այլ 20-ից 1-ը և 20 ստակ կամ սպիտակ։

Այս անասնահարկ «ղփչուր»-ը, որը Ռուսաստանում, ըստ երևույթին, տասանորդ հարկ էր, հիշատակված է նաև ռուսական աղբյուրներում։ 1238 թվականի տակ ռուսական ժամանակագրություններից մեկը հաղորդում է, որ այդ թվին Բաթուն դեսպաններ էր ուղարկել Ռյազանի իշխանների մոտ և պահանջել էր, որ նրան ամեն ինչից տան տասանորդ...

> «Տասերորդ մասը սպիտակ ձիերի, տասերորդը մուգ ձիերի, տասերորդը աշխետ ձիերի և տասերորդը խայտաբղետ ձիերի»[1]։

Առանձնապես ծանր էին ժողովրդի համար, բացի վերոհիշյալ հարկերից, նաև մոնղոլական պետական պաշտոնյաների և սուրհանդակների (ելչիների) երթևեկության հետ կապված պարտականությունները։ Բացի ծանր հարկեր վճարելուց՝ նա պետք է նաև պահեր բոլոր այս երթևեկողներին և տար նրանց ձիեր, սայլեր, ուղեկցողներ և սննդամթերք։

Երթևեկների համար ձիեր տալու պարտավորությունը ու, հատկապես, նաև փոստի այն կայարանները, ուր գտնվում էին այդ ձիերը՝ անվանվում էին «եամ»։ Կիրակոս Գանձակեցու վերև մեջ բերված ուշագրավ վկայությունից երևում է, որ ժողովուրդը հատուկ տուրք էր տալիս «եամ»-ի և երթևեկների կարիքները հոգալու համար։ Հասան Ջալալը, ինչպես ասում է Կիրակոսը, ինքն էր ընդունում երթևեկներին, ժողովրդից ստանալով «որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթևեկաց»[2]։

«Եամ»-ի մասին կարևոր մի վկայություն ունի նաև Գրիգոր պատմիչը (Մաղաքիա աբեղան)։ Խոսելով Հուլավուի գործունեության և նրա մտցրած կարգերի մասին՝ Գրիգոր պատմիչը հաղորդում է, որ Հուլավուն—

> «Սկսեց նաև ավերված տեղերը շինել. յուրաքանչյուր շեն գյուղից նա հանեց առանձին մարդիկ, փոքրերից՝ մեկական մարդ, մեծերից՝ երկու կամ երեք, անվանեց նրանց «եամ» և ուղարկեց նրանց, որ բոլոր ավերված տեղերում կառուցեն շինություններ. և նրանք բոլորովին հարկ չպիտի

[1] Տե՛ս Насонов, Монголы и Русь, էջ 12, ծան. 1։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 255։

տային, այլ պիտի տային միայն հաց և թան ճանապարհորդ թաթարներին»։

[«Սկսաւ և զաւեր տեղիսն շինել, և յամէն շէն գեղէ մեկանաւոր հանէին. և ի փոքրէն՝ մեկ, ի մեծէն՝ երկու կամ երեք. և անուանեաց զնոսա «իամս», և առաքէր զնոսա ամէն աւեր տեղիսն առնել շինութիւն. և ամենևին հարկ ո՛չ տալ, բայց միայն հաց և թան ճանապարհորդ Տաթարի»][1]։

Երթևեկ մեծամեծները, պաշտոնյաները և սուրհանդակները, ինչպես վկայում են աղբյուրները, անպատիժ կերպով գործում էին ամենուրեք աղաղակող զեղծումներ և չարիքներ։

Այդ մասին կարևոր տեղեկություններ է հաղորդում Ռաշիդեդդինը։ Մանգու մեծ խանը, պատմում է նա, հրամայել էր, որ

«Գլխավոր էլչիները, երբ նրանք գնում էին փոստային մի կայարանից մյուսը՝ չպետք է վերցնեն 14 ձիուց ավելի և չպետք է հափշտակեն բնակչության անասունները։ ...Նա հրամայել էր նույնպես, որ էլչիները չպետք է առանց գործի մտնեն որևէ քաղաք կամ գյուղ և վերցնեն ավելի պարեն ու կեր, քան սահմանված է։ [Այդ նրանք չպետք է անեն], որովհետև բռնությունն ու ճնշումները հասել են իրենց գագաթնակետին, այնպես որ ամեն տեսակ ծանրությունների, պահանջումների ու արտակարգ հարկերի ծանրաբեռնումների շնորհիվ ծայրահեղ դրության մեջ են ընկել, մանավանդ, գյուղացիները»...[2]։

Երթևեկության ու «եամ»-ի հետ կապված ծանր պարտականությունները, ինչպես մատնանշված է Պետ. Ձեռագրատան (Մատենադարանի) ՉԾԳ թվականի [1304] մի ձեռագրում (№ 3722) հիմնովին թեթևացրել էր Ղազան խանը (1295—1304), որը մտցրել էր երթևեկության նոր կարգեր։

«Առնէր սա,— վկայում է այդ ձեռագրի հիշատակարանը,— իրաւունս այրեաց, եբարձ զտոկոսիս պարտուց և դարձոյց զզրկանս զրկելոց. եբարձ սա զերթևեկութիւն դեսպակաց, էլչեաց և արղուչեաց և կարգեաց յամենայն տեղիս

---

[1] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 33։

[2] Տե՛ս А. Якубовский, Восстание Тараби в 1238 г., էջ 114—115։ Համեմատե նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 226, 250, 255։ Մանրամասն կերպով էլչիների չարագործությունների մասին տալիս է տեղեկություններ Ռաշիդեդդինը իր Ղազան խանին վերաբերվող պատմվածքում. տե՛ս «Сборник летописей», т. III, էջ 263—268։

սուրհանդակս, որ են շքրիկք, և սակս արդար իրաւանցն զոր առնէր, փակեաց տէր Աստուած զամենայն թշնամիս սորա ի ձեռս սորա»[1]։

Խիստ ծանր էին քաղաքներում գանձվող հարկերը, որոնք կոչվում էին «տամղա»։ Այս վերջին տերմինը, որը մոնղոլական-թուրքական բառ է, նշանակում էր «կնիք, խարանադրոշմ» ու նաև «մաքս և առևտրա-արդյունագործական հարկ»։

Խոսելով այս հարկի մասին՝ Բարտոլդը իրավացի կերպով առարկում է դ՚Օհսոնին, որ «տամղա»-ն ո՛չ միայն մաքսային և փոխադրաթյան հարկն էր (droits de douane et de transit), այլ սրա տակ հասկանում էին նաև այն բոլոր հարկերը, որ գանձվում էին առևտրական ու արդյունաբերական ձեռնարկություններից[2]։ Ուշադրության արժանի է իրապես, որ վիմական արձանագրություններում բացի «բաժ-տամղա»-ից հիշատակված են նաև «զչաղացանոյս ամենոյ զդամղեն» և «զքասանկին զդաղմէն քաղաքիս և որ ի դրուց գայ», այսինքն՝ ջաղացներից և ներկարարներից ու ներկ վաճառողներից գանձվող տամղա-ն[3]։

Բացի վերոհիշյալ հիմնական հարկերից աղբյուրների մեջ հիշատակված են նաև բազմաթիվ հարկերի այլ անուններ, որոնք վճարվում էին արքունի դիվանին կամ կալվածատերերին և որոնք կարոտ են դեռ հատուկ ուսումնասիրության։ Հարկերի այդ անունները, որ մեջ են բերված Ալիշանի «Շիրակ»-ում (էջ 91)՝ ավելորդ չեմ համարում հիշատակել համառոտ կերպով։

1. «Ախսրթամար», որ վճարվում էր Անի քաղաքում. մեկ անգամ գործածված է «Վիմական տարեգրի» անթվական մի արձանագրության մեջ՝ էջ 221։

2. «Աղլհակ» ոչխարի (=թուրք. «աղըլհաքքը», որ նշանակում է փարախի՝ գոմի իրավունք)[4]. գործածված է մեկ անգամ Անիի 1301 թվի արձանագրության մեջ (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 151)։

3. «Դոնագիր» և «դռնագիր մեծ» ու «դռնագիր փոքր», որ

---

[1] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 24։

[2] Տե՛ս *В. Бартольд,* Персидская надпись на стене Анийской мечети Мануче. СПб., 1911, էջ 33—34։

[3] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 149։

[4] Տե՛ս Աճառյան, Արմատական բառարան, էջ 149։

վճարվում էին Անի քաղաքում. տե՛ս Վիմական տարեգիր, էջ 160, 221[1]։

4. «Թարխ», որ գոյություն ուներ Անի քաղաքում և այլ տեղերում. Հիշատակված է երկու անգամ Անիի Մանուչեի մզկիթի պատի վրա գտնված Աբու-Սեիդի (1316—1335) արձանագրության մեջ (տե՛ս դարձյալ Բարտոլդ, Նույն աշխ., էջ 7 և 40—42)։

Թարխը, ինչպես բացատրել է Ալիզադեն, այն հարկադրական կարգն է, որի համաձայն կառավարությունը մթերքներ և ապրանքներ էր առնում պարտադիր չնչին գներով կամ պարտադիր կերպով վաճառում էր առևտրականներին մթերքներ և ապրանքներ խիստ բարձր գներով (սովորականից մի քանի անգամ ավելի բարձր գներով)[2]։

5. «Խալայ», «խալէ»— գինու, խաղողի և այգու վրա դրված հարկ, որ հիշատակված է Անիի 1036 թվի, Թալինի 1267 թվի և Մրենի 1273 ու 1288 թվերի արձանագրություններում (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 20, 111, 116 և 130)։ Այս հարկը, որ հիշատակված է Պետրոս կաթողիկոսի 1036 թվի արձանագրության մեջ, ինչպես տեսնում ենք, հին հարկ է և գոյություն է ունեցել Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում։

6. «Խարճ» և «խարճող մեծ և փոքր», որ գործածված են Դատի վանքի 1265 թվի և Աշտարակի 1323 թվի արձանագրություններում (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 107 և 161) և «խարաճ», որ հիշատակված է Շիրակավանի 1231 թվի արձանագրության մեջ (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 74)՝ ունեն, ըստ երևույթին, հողահարկի կամ եկամտաբեր անշարժ գույքերի հարկի նշանակություն։ Համեմատե նաև Վարդան վարդ., էջ 132, Մխիթար Անեցի, էջ 47 և Սամուել Անեցի (շարուն.), էջ 165, որոնց մոտ «խարաճ» գործ է ածված գլխահարկի իմաստով։

7. «Հազր եզին»— անասնահարկ է եզներից առնվող, որ կոչվել է, ըստ երևույթին, նաև «հասարա». Հիշատակված է 1301 թվի Անիի և 1325 թվի Ջագավանքի արձանագրություններում (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 151՝ «թողի զեզինն հազրն, զկովին համբրելէն, զոչխարին աղլհակն», նաև էջ 161՝ «թողաք զվանաց կոռս զմարդո, եզին, իշո, զամենայն ցեղ կոռ և զհասարա»)։ «Հազր»,

---

[1] Համեմատել՝ *Бартольд*. Персидская надпись. էջ 7, 42։

[2] Տե՛ս *А. А. Ализаде*, К истории феодальных отношений в Азербайджане в XIII—XIV веках. Термин «тарх». Известия АзФАН, Баку, 1942, № 3, էջ 26—32։

ինչպես բացատրել են Կարստը և Աճառյանը, արաբական hazīra բառն է, որ նշանակում է «փարախ, մակաղատեղ, ցանկապատ»[1]։ Կարելի է թերևս ենթադրել, որ այս հարկը, ինչպես և ոչխարների համար տրվող «աղլհակ» հարկը, վճարվելու էր կալվածատիրոջ նրա փարախներից կամ գոմերից օգտվելու համար։

8. «Համարեւլէ», «համբրեւլէ»— կովերից և էշերից առնվող հարկ, նաև «կովայ համար». գործածված են Անիի 1301 և 1320 թվերի և Բջնիի և Շիրակավանի երկու անթվական արձանագրություններում (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 151, 160, 226 և 247)։

9. «Հարսանէհակ», որ հիշատակված է Բջնիի անթվական մի արձանագրության մեջ (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 226)։

10. «Ղէսարայ հարկ»— վճարում էին Օշական գյուղը և վանքերը. գործածված է մեկ անգամ Օշականի 1295 թվի արձանագրության մեջ՝ «Թողի զՅուշականու զղէսարայ զհարկն զգեղիս եւ զվանորայից» (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 137)։

11. «Մահկանէ»— հիշատակված է Բջնիի անթվական մի արձանագրության մեջ (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 226)։

12. «Մուհասիլ» կամ «մահասիլ»— վճարել են Սանահնի եկեղեցիները. հիշատակված է երկու անգամ Սանահնի 1300 թվի արձանագրության մեջ՝ «որ ի մահասլաց և առաջնորդէ և այլ հարկէ աւիրած էր», նաև «ոչ մուհասիլ և ոչ այլ հարկ Սանահնէս կտան» (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 140—141)։

13. «Նեմերի»— արտակարգ հարկ, որ նշանակում է մոնղոլերեն «հավելում». հիշատակված է երկու անգամ Անիի Մանուչեի մզկիթի պատի վրա գտնված Աբու-Սեիդի պարսկերեն արձանագրության մեջ՝ «սրանից առաջ,— վկայում է այս արձանագրությունը,— Անի քաղաքում և Վրաստանի ուրիշ շրջաններում ղալանի, նեմերիի, ապօրինի հատկացումների և թարխի պատճառով անիրավ տուրքեր էին վերցնում և գործադրում էին բռնություն»[2]։ Ինձ թվում է, որ ռուսական աղբյուրներում «սև պահանջ»[3] անվանվում է հենց այս նեմերի հարկը։

14. «Սայլի սպիտակ»— հիշատակված է Բջնիի անթվական մի արձանագրության մեջ՝ «և թողի զամէն հարկ՝ զամիրայհակն,

[1] Տե՛ս J. Karst, Sempadşcher Kodex aus dem 13. Jahrhundert, II, Strassburg, 1905, էջ 12. Աճառյան, Արմատական բառարան, հատ. Դ, էջ 19։

[2] Տե՛ս Бартольд, Персидская надпись, էջ 7, և 37—38։

[3] «Черный бор», տե՛ս Насонов, Монголы и Русь, էջ 112, 113, 137, 138։

զՀարսանէՀակ, զկովայ Համարն, զկալաթաղարն, զսայլի սպն. զմաՀկանէն» (տե՛ս Վիմական տարեգիր, էջ 226)։

15. «Սուսունի»— մեկ անգամ գործածված է Շիրակավանի անթվական մի արձանագրության մեջ՝ «ոչ շարիատ, ոչ Համարելէ, ոչ սուսունի, ոչ եզին թաղար են» (Վիմական տարեգիր, էջ 247)։

Մեջբերված այս տեղեկություններից տեսնում ենք, որ մոնղոլական Հարկերը, իրապես, բազմազան էին ու խիստ ծանր։ Բայց անկախ սրանից՝ Հարկատու ժողովրդի վիճակը սոսկալի էր նաև, մանավանդ, ՀարկաՀանների զեղծումների ու բռնությունների պատճառով։

Ռաշիդեդդինը, որ Ղազան խանի վեզիրն էր և մոտ ծանոթ էր մոնղոլական կառավարչական կարգերին, պատմում է, որ մոնղոլական տեղական իշխանությունները՝ բասղաղները, շաՀնաները և մանր պաշտոնեությունը, մեծ մասամբ, Համագործում էին ՀարկաՀանների ու վարձակալների Հետ, ուստի և Հարկատու գյուղացիներն ու արՀեստավորները խիստ ՀարստաՀարվում էին ու Հաճախ ստիպված էին լինում իրենց տարեկան Հարկը վճարել մի քանի անգամ։ Կառավարչական այս գիշատիչ սիստեմը, ասում է Ռաշիդեդդինը՝ ժողովրդին Հասցրել էր կատարյալ սնանկացման և նա, անկարող լինելով խաղաղ աշխատել ու ապրել՝ թողնում էր իր Հողն ու տնտեսությունը և փախչում[1]։

ՀարկաՀանների բռնությունները և մոնղոլական պաշտոնյաների անիրավությունները սեղմ ու պատկերավոր կերպով ակնարկված են նաև Ֆրիկի բանաստեղծությունների Հետևյալ տողերում.—

«Ջանգէտ ու զնաքաղ մարդիքն
Աստըւորս առնես ձեռնաւոր.
Ու գիտնաւորաց Հացըն
Կու ձըգես ի սար, կամ ի ձոր։

Հիմիկ ղըժարեց բաներս,
Որ թաթարն եղաւ թագաւոր.
Ջրկեց զամենայն աշխարՀս
Ու գողերն եդիր մեծաւոր։

---

[1] Տե՛ս Якубовский, Восстание Тараби в 1238 г., էջ 116—117։ Համեմատե Рашид ад-дин, Сборник летописей, т. III, перевод с персидского Арендса, М.—Л., 1946, էջ 247—263։

. . . . . .

Քանի՞ կանայս առնես այրի
Եւ որքա՞ն որբ քրիստոնէի.
Որքա՞ն արիւն հեղան երկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի։

Որքա՞ն տանջեն զմեզ յաշխարի
Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի,
Եւ դու ներես յամենայնի,
Ի անտես առնես զմեզ ի վշտի։

Տէ՛ր, ո՛չ խնդրես վրէժ յայտնի,
Ո՛չ ցուցանես ակն ամենի.
Գիտե՞ս, մարմին եմք մսեղի,
Գեմ արձան չեմք ինչ պղընձի։

Եղէգն չեմք, կամ խոտ վայրի,
Որ խանձ արկեալ ես կըրակի.
Քան զանդաստան փըշաբերի,
Կամ մացառաց ինչ պըրակի»[1]։

Ռաշիդեդդինը և Գրիգոր պատմիչը (Մաղաքիա աբեղան) մանրամասն նկարագրում են նույնպես, թե ինչպես էին հարկահանները վարվում այն հարկատուների հետ, որոնք թաքնվում էին կամ փախչում։

Պատահում էր հաճախ, պատմում է Ռաշիդեդդինը, որ քաղաքի և գյուղի բնակիչներն իրենց տների դռները զմռսում էին քարերով և իրենք մտնում ու ելնում էին կտուրի միջով։ Երբ հարկահանները շրջում էին որևէ թաղում՝ նրանք ապավինում էին տեղացիներից որևէ մի անզգամի օգնության, որը նրանց սպասարկում էր որպես ուղեցույց։ Հենց որ հարկահանին բնակիչները հեռվից նկատում էին՝ նրանք ապաստան էին փնտրում և, կտուրներից ցած ցատկելիս՝ կոտրում էին իրենց ոտքերը։ Եթե հարկահաններին չէր հաջողվում փախչողներին կալանավորել՝ նրանք բռնում էին նրանց կանանց, քշում էին սրանց ոչխարի հոտի նման թաղից թաղ և տանում էին իրենց մեծավորի մոտ։ Այնտեղ՝ կապելով

[1] Տե՛ս Յրիկ. Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 217 և 233—234։

*նրանց՝ կախում էին ոտերից և այնպես էին թակում, որ օդը թընդում էր նրանց լացուկոծից*[1]։

*Հարկից խուսափողների խոշտանգումների ու դաժան տանջանքների մասին ավելի սոսկալի տեղեկություններ հաղորդում է Գրիգոր պատմիչը (Մաղաքիա աբեղան)։*

> *«Եթե մեկը,— պատմում է Մաղաքիան,— փախչում էր կամ թաքնվում, երբ նրան բռնում էին՝ անողորմ կերպով ձեռքերը կապում էին ետևից և դալար ճիպոտով ծեծում էին, մինչև որ ամբողջ մարմինը ջնջխվում էր և շաղախվում արյունով. և ապա նրանք անողորմաբար ներս էին թողնում իրենց կատաղած շներին, որոնց սովորեցրել էին մարդու միս ուտել, և թողնում էին որ ուտեն տառապյալ և չունևոր քրիստոնյաներին»։*

> *[«Եւ թէ ոք փախչէր կամ թաքչէր, յորժամ ըմբռնէին՝ կապէին անողորմ ձեռս ի յետս, և դալար գաւազանօք ծեծէին մինչ զի մարմինն ամենայն տրորէր և յարենէն շաղախէր, և ապա անողորմաբար զկատաղի շներն իւրեանց, զոր սովորեցուցեալ էին ուտել միս մարդոյ, ի ներս թողուին և ուտել տային զտառապեալ և զչունևոր քրիստոնեայսն»]*[2]։

*Նմանապես Կիրակոս Գանձակեցին, խոսելով Արղունի 1254 թվի աշխարհագրի մասին՝ տալիս է հետևյալ վկայությունը.—*

> *«Եվ բոլորից պահանջեցին խստագույն հարկեր, ավելի, քան մարդիկ կարող էին տալ. ուստի և սկսեցին աղքատանալ։ Եվ նրանք տանջում էին մարդկանց ու ենթարկում անտանելի կտտանքների, չարչարանքների ու խոշտանգումների գելոցներով. և ով որ թաքչում էր՝ բռնում էին ու սպանում, իսկ ով որ չէր կարող հարկը վճարել՝ պարտքի փոխարեն վերցնում էին նրանց երեխաներին»։*

> *[Եւ յամենեցունց պահանջեալ խստագոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն, և սկսան չքաւորիլ. և նեղէին անհնարին կտտանօք և չարչարանօք և գելոցօք. և որ թագչէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ո՛չ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն...»]*[3]։

*Մոնղոլների անասելի նման դաժանություններն են, ըստ երևույթին, գլխավոր պատճառը, որ Կարլ Մարքսը մոնղոլական*

---

[1] *Տե՛ս Якубовский,* Восстание Тараби в 1238 г., *էջ 117*։

[2] *Տե՛ս* Մաղաքիա աբեղա, *էջ 22*։

[3] *Տե՛ս* Կիրակոս Գանձակեցի, *էջ 348—349*։

աղնվականների իշխումը իրենց նվաճած երկրների ու ժողովուրդների վրա իր «Գաղտնի դիպլոմատիա» դրվածքում անվանում է մոնղոլական լծի արյունոտ պատեղություն։

Վերև առաջ բերված իր վկայության շարունակության մեջ Կիրակոս Գանձակեցին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև տեղական իշխանների մասին, որոնք, նրա ասելով, աջակցություն էին ցույց տալիս մոնղոլական հարկահաններին։

> «Այլև իշխանները, գավառների տերերը,— ասում է նա,— նրանց գործակցում էին (ժողովրդին) նեղելու ու [նրանից] հարկ պահանջելու ժամանակ, որպեսզի իրենք շահվեն»։
>
> [«Այլ և իշխանքն տեարք գաւառացն նոցուն գործակից լեալ ի նեղելն և ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ»][1]։

Շատ հետաքրքիր է, որ Նովգորոդյան առաջին ժամանակագրությունը, խոսելով Ռուսաստանում տեղի ունեցած 1257 թվի աշխարհագրի մասին, վկայում է նույնպես, որ Նովգորոդի բոյարները «իրենցը թեթև էին անում, իսկ նվազներինը՝ չարագույն» (творяку бо бояре себе легко, а меньшим зло)[2].

Մոնղոլական տիրապետությունը Անդրկովկասում և Հայաստանում, ինչպես դժվար չէր հետևցնել վերոհիշյալ դիտողություններից, առաջացնելու էր այս երկրներում տնտեսական հետադիմություն և աստիճանական անկում։

Անդրկովկասը, ինչպես և Հայաստանը, մեծ կորուստներ էին կրել արդեն Ջալալեդդինի և Չարմաղանի ու Բաչուի արշավանքների ժամանակ, որոնց ընթացքում ավերվել էին բազմաթիվ կուլտուրական կենտրոններ, կոտորվել էին կամ գերի էին տարվել միլիոնավոր բնակիչներ և ոչնչացվել էին նյութական անթիվ արժեքներ։

Պարսկական պատմագիր Համդալլահ Ղազվինին, որը մոնղոլների մոտ բարձր պաշտոնյա էր 14-րդ դարի առաջին կեսում, վկայում է, որ ավերածությունները և կոտորածները, որ տեղի էին ունեցել մոնղոլական պետության առաջացման ժամանակ՝ այնքան մեծ էին, որ Առաջավոր Ասիայի նախկին բարեկեցությունը չպիտի կարողանար վերականգնել երկար դարերի ընթացքում[3]։ Այս

---

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 349։ Տպագիր բնագիրն ուղղել ենք Ախալցխայի Կարապետյան դպրոցի գրադարանի ձեռագրի օգնությամբ։

2 Տե՛ս Насонов, Монголы и Русь, էջ 15։

3 Տե՛ս Петрушевский, Хамдаллах Казвини, էջ 899։

*ավերումներից հետո ևս Հայաստանը և Անդրկովկասը աղքատանում էին և տնտեսապես հետադիմում իլխանության կառավարչական ավերիչ սիստեմի և նրա պաշտոնեության կեղեքումների ու հարստահարությունների պատճառով։ Ուշագրավ է այս տեսակետից, որ ինչպես հայկական, նույնպես և վրացական ու պարսկական աղբյուրները՝ գանգատվում են ու ընդգծում ժողովրդի դառն տառապանքները, որ նա կրում էր հարկահաններից և մոնղոլական զորքերից ու պաշտոնյաներից։*

*Ռաշիդեդդինի, օրինակ, վկայություններից երևում է, որ զեղծումների շնորհիվ հարկահավաքման ժամանակ ոչ միայն սնանկանում էին քաղաքի և գյուղի աշխատավորները, այլև հաճախ դատարկ էր լինում նաև մոնղոլական պետական գանձարանը։ Եվ երբ Ղազան խանի ժամանակ (1295—1304) սուր կերպով դրվել էր խնդիրը պետական վարչական սիստեմի բարեփոխման և աշխատավոր ժողովրդի դրության բարվոքման մասին՝ պարզվել էր, որ գյուղացիներից շատերը այլևս անկարող էին մշակել իրենց հողերը, որովհետև չունեին եզներ և սերմացու*[1]։

*Որ մոնղոլական տիրապետության ժամանակը տնտեսության ու բարեկեցության անկման շրջան էր Իրանում և Անդրկովկասյան երկրներում՝ այդ պարզ հետևում է Համդալլահ Ղազվինու թվական մանրամասն տվյալներից այն փոքր եկամուտների մասին, որ 14-րդ դարի քառասնական թվականներին իլխանությունը ստանում էր վերոհիշյալ երկրներից։ Ղազվինին այս երկրների զանազան շրջաններից ստացվող հարկագումարները, որ նա՝ իբրև ֆինանսական վարչության բարձր աստիճանավոր՝ քաղել է, հավանորեն, պաշտոնական դավթարներից՝ հավասար է համարում Սելջուկյան պետության համապատասխան հարկագումարների մոտավորապես 10—20 տոկոսին*[2]։

*Թեև սելջուկյան շրջանի հարկագումարները, ինչպես մատնանշել է Բարտոլդը, կարող են նրա մոտ սխալ լինել ու չափազանցված, բայց չնայած դրան՝ նրա տված տեղեկությունները իլխանության համեմատաբար փոքր եկամուտների մասին հաստատվում են և այլ տվյալներով։*

*Համդալլահ Ղազվինու վկայությամբ՝ 13-րդ դարի երկրորդ կեսում, մինչև Ղազան խանի (1295—1304) գահակալումը, իլխա-*

---

1 *Տե՛ս Якубовский,* Восстание Тараби в 1238 г., *էջ 117—118։*

2 *Տե՛ս Петрушевский,* Хамдаллах Казвини, *էջ 896—898. Համեմատե Бартольд,* Персидская надпись, *էջ 19 են։*

նությունը ստանում էր իր երկրներից՝ Պարսկաստանից (բացի Խորասանից), Միջագետքից, Փոքր Ասիայից, Վրաստանից և Անդրկովկասյան մյուս շրջաններից— տարեկան հարկ, ընդամենը՝ մոտ 17.000.000 արծաթ դինար, որ Բարտոլդը, ընդունելով մեկ դենարը (=13,6 գր.) արծաթի իր պարունակությամբ համապատասխան 0.75 ռուսական արծաթ ռուբլու՝ հավասար է համարում մոտ 12.750.000 ռուբ.[1]։ Ավելի ուղիղ կլինի ըստ իս հիշյալ հարկագումարը վերածել ոսկի փողի, ընդունելով արծաթի և ոսկու հարաբերությունը 13-րդ դարում 10 ։ 1, (փոխանակ 23 ։ 1)[2], և ենթադրել նրա դրամական արժեքը, ընդունելով դենարը համապատասխան $0,75 \times 2,3 = 1,725$ ոսկի ռուբլու, հավասար մոտ 29.325.000 ոսկի ռուբ.։ Այս հարկագումարի հետ Համդալլահ Ղազվինին բաղդատում է Սասանյան Պարսկաստանի եկամուտը, ցույց տալու համար Առաջավոր Ասիայի երկրների տնտեսական գահավեժ անկումը մոնղոլական շրջանում։ Եվ իրավի, Խոսրով Պարվեզի 18-րդ տարում (607/8 թ.) Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 420.000.000 արծաթ դրամ էր, որն իր դրամական արժեքով, ինչպես մանրամասն ցույց եմ տվել իմ նախորդ աշխատություններում[3], հավասար էր ավելի քան 210.000.000 ոսկի ռուբ.։ Այդ եկամուտը, ուրեմն, մոտ յոթն անգամ ավելի էր, քան իլխանության եկամուտը։

Հայաստանի և Անդրկովկասի տնտեսական անկմանն ու ամայացմանը մեծ չափով նպաստեց 13—14-րդ դարերում նաև թափառակյաց քոչվորների նոր գաղթը Միջին Ասիայից։ Այս քոչվորները, որոնք, գլխավորապես, թուրքեր էին և հիմնական մասն էին կազմում մոնղոլական զորքի՝ մեծ հարված տվին տեղական բնակչության հողագործական բարձր և ինտենսիվ մշակույթին, զոհաբերելով այն իրենց արոտային տնտեսության պահանջներին։

Հայաստանի տնտեսական անկումը, ինչպես ներքև կտեսնենք, աղետալի չափեր ընդունեց 14-րդ դարում։ Այս դարի արդեն առաջին կեսում հայ ժողովրդի դրությունը հետզհետե այնքան ծանրա-

---

[1] Տե՛ս Бартольд, Персидская надпись, էջ 19—20։

[2] Ռուսաստանում բարձր պրոբի արծաթ ռուբլիների հարաբերությունը ոսկի փողի հանդեպ ընդունված էր 23 : 1, մինչդեռ 13-րդ դարում նրանց հարաբերությունը եղել է, հավանորեն, 10 : 1։ Ուրեմն, Բարտոլդի մատնանշած ընդհանուր գումարը կլինի ոսկով 2,3 անգամ ավելի։

[3] Տե՛ս «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում», Երևան, 1930, էջ 43—47. «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» I, Երևան, 1927, էջ 3—5։

ցավ շնորհիվ ծանր հարկերի ու անլուր հարստահարությունների, որ նրա մի ստվար մասը հարկադրված եղավ լքել իր հայրենի հողը և գաղթել օտար երկրներ։

Հայ ժողովրդի այս գաղթի մասին 14-րդ դարում ուշագրավ վկայություններ ունեն 14-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ Այդ վկայություններից մի քանիսը ավելորդ չենք համարում մեջ բերել համառոտ բովանդակությամբ։

1. 1314 թվի Թեոդոսուպոլսի «Գործք առաքելոց» ձեռագրի գրիչը վկայում է— «Եւ չկայ յոյս ապաւինի և ոչ տեղի ապաստանի, և էր աշխարհ յամենայն ի տառապանք և ի հարկապահանջութիւն. և իսպառ նուազեալ էր ազգս Հայոց։ Եւ ի քաղաքիս յայսմիկ [Թեոդոսուպոլիս] քակեցին եկեղեցիք բազում, և ոմանք, թողեալ զհաւատս որ ի Քրիստոս, և գնացեալ զհետ անօրինաց Իսմայելացոց ազգի, և այլք՝ վաճառեցին զտղայս իւրեանց, և ինքեանք փախուցեալք յայլևայլ տեղիս, և ոչ ուրեք գտանիւր տեղի ապաւինի»[1]։
2. 1340 թվին Երզնկայում ընդօրինակված «Ճառընտրի» գրիչը հայտնում է, որ— «ի դառն և ի յանհանգիստ ժամանակիս գրեցաւ, զի վասն ծովացեալ մեղաց մերոց զաւրացեալ են ազգն Նետողաց ի վերա քրիստոնէից, և ի սուր սուսերի մաշեն, և յաւարի հարկանեն, և ի գերութիւն վարեն զբազում գաւառս, և բազում և անիրաւ հարկապահանջութեամբ դատեն զամենեսեան, և այլ բազում չարիս լինի ի ժամանակիս մերում, զոր ոչ է կար մի ըստ միոջէ պատմել կամ ընդ գրով արկանել։ Իսկ մեք ոչ ունելով հանգիստ, այսր անդր շրջելով և փախստական լինելով, էաք որպէս դառինս ի մէջ գայլոց»...[2]։
3. 1341 թվին Տայոց գավառի Վարդնշեն գյուղում գրված «Աւետարան»-ի գրիչը դարձյալ վկայում է, որ— «Եղև փախուստ ամենայն գաւառին, նախս քաղաքին միահամուռ քրիստոնէից և իսմայելաց[ոց] և ամենայն բնակչացն ի ձեռաց Բ. իշխանաց, որոց ոչ է պարտ գրել զանուն նոցա։ Եւ ամենայն ոք փախաւ, և չուեցին յերկիր աւտար»[3]։

---

[1] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 101—102։

[2] Նույնը, էջ 325։

[3] Նույնը, էջ 327։

4. 1346 թվին Բաբերդում գրված «Աւետարան»-ի գրիչը ևս հայտնում է, որ ձեռագիրը նորոգվել է—«Ի նեղ և ի դառն ժամանակիս, յորում մեծ մայրաքաղաքն Թէոդուպաւլիս անապատ եղև ի մարդոյ և յանասնոյ ի յազգէն Հագարու և Իսմայելացոցն։ Նաև արևելեանքն ամենայն, տուն Վրաց, որ յոլովք ի սուր սուսերի մաշեցան եւ այլք ի սովոյ մեռանէին, որ ոչ ոք կարէ պատմել զանցս աղետիցս, զոր եկն ի վերայ ազգիս քրիստոնէից, և այն վասն առաւել յաճախ մեղաց մերոց։ Որ բազում տանուտեարք և քահանայք մուրողք տարաշխարհիկ շրջէին ի հայրենի գաւառացս»[1]։

5. 1378 թվին Տարոնում գրված «Աստուածաշունչ»-ի գրիչը գրում է, որ— «Ի թուին Հայոց տոմարի որ ՊԻ կոչի (1371) ի յասդմանէ չարին, վասն ծովացեալ մեղաց մերոց, ի հարկապահանջութենէ այլասեռիցն աւերեցաւ երկիրս Տարոնու, նաև սուրբ ուխտս Ղազարու, զոր և կրօնաւորք տարաշխարհիկ լինէին՝ անցանելով յայլ գաւառ»[2]։

---

[1] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 346։
[2] Նույնը, էջ 525։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

# ԱԲԱՂԱ ԽԱՆԸ ՈՒ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ՂԱԶԱՆ ԽԱՆԸ

**1. Իլխանության թուլացումը Հուլավուի հաջորդների ժամանակ։— 2. Աբաղա (1265—1282)։— Պատերազմը Ոսկե Հորդայի հետ։— 3. Բեյբարսի հաղթական արշավանքներն Ասորիքում և Կիլիկիայում։— 4. Թագուդարի և նրա զորքի վայրագությունները։— Նրա փախուստը և ձերբակալումը։— 5. Պատերազմը Խորասանում և Աբաղայի հաղթությունը։— 6. Եգիպտացիների նոր ասպատակությունները Կիլիկիայում։— 7. Փոքր Ասիայի թուրքերի ըմբոստությունը և Բեյբարսի նոր արշավանքը։— Մոնղոլների պարտությունը Ապլիստանի դաշտում։— 8. Բեյբարսի նահանջը և ապստամբության դաժան ճնշումը։— 9. Աբաղայի շտապ վերադարձը Փոքր Ասիայից և կռիվների վերսկսումը Կովկասում։— 10. Մանգու Տիմուրի անհաջող պատերազմը Եգիպտոսի Ալֆի սուլթանի դեմ։— 11. Հայաստանի ընդհանուր վիճակը Աբաղայի խանության ժամանակ։— 12. Թագուդար Ահմադ (1282—1284)։— Արղուն (1284—1291)։— 13. Պատերազմ Ոսկե Հորդայի հետ։— Դավադրություն Արղունի դեմ։— 14. Քեյղաթու (1291—1295)։— 15. Ղազան (1295—1304)։— Մոնղոլների մահմեդականացումը։— 16. Նավրուզի հարուցած իրանական հալածանքները։— Նավրուզի սպանությունը։— 17. Ղազան խանի բարենորոգումները։ Հայաստանի վիճակը նրա ժամանակ։— Բարեկամական հարաբերությունները Ոսկե Հորդայի հետ։— 18. Մամլուքների հաջողությունները Ասորիքում և Կիլիկիայում։— 19.— Ղազան խանի արշավանքները Ասորիքում հայերի դաշնակցությամբ։— 20. Խութլուշահի պարտությունը։— Եվրոպայի երկմիտ քաղաքականությունը։**

*Հուլավուի մահից հետո (1256—1265) նրա հիմնած իլխանությունը երկար կյանք չունեցավ, և Հուլավյան դինաստիան կարողացավ պահել իր ձեռքում իլխանական իշխանությունը միայն 70—80 տարի՝ մինչև 14-րդ դարի քառասնական թվականները։*

*Ինչպես կտեսնենք, նաև Հուլավուի հաջորդների ժամանակ շարունակվեցին թշնամությունը և պատերազմները Ոսկե Հորդայի խաների և Եգիպտոսի մամլուքների դեմ։ Այդ պատերազմները,*

ինչպես շատ ճիշտ մատնանշել է Ավգուստ Մյուլլերը[1], իլխանական պետությունից պահանջում էին ուժերի այնպիսի մեծ լարում, որին չէին կարող դիմանալ նրանց նվաճած կիսավեր երկրները։ Բացի այդ, ինչպես և Սելջուկյան մեծ սուլթանության մեջ, այստեղ ևս շուտով սկսվեցին գահակալական կռիվներ և ներքին երկպառակություններ, որոնք հետզհետե պատճառ հանդիսացան իլխանների միահեծան պետության թուլացման ու քայքայման։

Հուլավուին հաջորդեց նրա մեծ որդին՝ Աբաղան (1265—1282)։ Սա իր գահակալման առաջին հենց տարում ամուսնացավ Բյուզանդիայի Միքայել Պալեոլոգ կայսեր ապօրինի Մարիամ աղջկա հետ, որին հայ աղբյուրներն անվանում են Դեսպինա (=despoina «տիրուհի») խաթուն[2]։

Մեծ պատերազմը Ոսկե Հորդայի և իլխանության միջև, որ սկսվել էր 1262 թվին, շարունակվեց և Աբաղայի իշխանության առաջին տարիներում։ Հուլավուի մահից հետո Բերքան Աբաղայի դեմ ուղարկեց ահագին զորքով դարձյալ իր զորավար Նողային, հույս ունենալով, որ կկարողանա այս անգամ գրավել Ադրբեջանը և Անդրկովկասը։ Նողայի դեմ, որը Դերբենդի վրայով մտել էր Շիրվան և հասել մինչև Կուր գետի մոտերքը, Աբաղայի հրամանով դուրս եկավ սրա եղբայրը՝ Իսմութը 1265 թվին։ Սա անցնելով Կուր գետը, ինչպես վկայում է Ռաշիդեդդինը[3], թշնամու հետ շփման մեջ մտավ Ջաղան Մուրան գետի մոտ, որ անվանվում էր նաև Աքսու։ Այստեղ Նողայի բանակը պարտություն կրեց և դիմեց փախուստի (1265 թվի աշնան վերջերին)։ Շուտով նրան հսկայական զորքով օգնության հասավ ինքը Բերքան և Իսմութը, ստիպված լինելով նահանջել Կուր գետի աջ կողմը՝ ոչնչացնել տվեց նրա վրա եղած կամուրջները։ Այնուհետև Բերքան ուզեց գետն անցնել Տփղիսի մոտ, բայց ճանապարհին հիվանդացավ ու վախճանվեց (1266 թվի ամռանը), և նրա զորքը ցրվեց, իսկ մի մասը գերվեց։ Պատերազմը Աբաղան հաջողությամբ շարունակեց նույնպես և Բերքայի հաջորդ Մանգու-Տիմուրի դեմ (1266—1280), որը կարճ ժամանա-

---

[1] Տե՛ս *А. Мюллер*, История Ислама, т. III, перевод с немец. под редакц. *Медникова*, СПб., 1896. էջ 274։

[2] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 382. Վարդան վրդ., գլ. ՂԷ, էջ 161։

[3] Տե՛ս *Тизенгаузен*, Сборник материалов, т. II, էջ 75—76, 92 և 99—100։ Համեմատե նաև *Рашид ад-дин*, Сборник летописей, т. III, перевод Арендса, М.—Л., 1946, էջ 68։

կեց հետո, ինչպես վկայում են պարսկական աղբյուրները, նրա հետ կնքեց հաշտություն[1]։

Բերքա խանի կռիվների ժամանակ Հուլավուի և Աբաղայի դեմ սկսվեցին բարեկամական սերտ հարաբերությունները Ոսկե Հորդայի Ջուչյանների և Եգիպտոսի մամլուքների միջև։ Այս երկու մեծ մահմեդական պետությունների բարեկամության նպատակն էր նրանց համագործակցությունը ընդդեմ իրենց ընդհանուր թշնամու Հուլավյանների։ Ավելի քան հավանական է ըստ այսմ, որ Հուլավուի և Աբաղայի բարեհաճ վերաբերմունքը դեպի հպատակ քրիստոնյաները քաղաքական որոշ հաշիվ էր, որի նպատակն էր, ի միջի այլոց, սրանց օգնությամբ բարեկամական կապեր հաստատել Արևմտյան Եվրոպայի հետ՝ որպես հակակշիռ Ոսկե Հորդայի և Եգիպտոսի համախոհության[2]։

Նողայի և Բերքայի 1265—1266 թվերի արշավանքն Անդրկովկաս տեղի էր ունեցել Եգիպտոսի սուլթանի գիտությամբ և, հավանորեն, նրա հորդորանքով։ Հենց նույն 1266 թվին, երբ Աբաղան անկարող էր օգնության գնալու Կիլիկիայի հայոց թագավորին՝ Եգիպտոսի սուլթան Բեյբարսը զորք ուղարկեց Կիլիկիա, որը մըտնելով հանկարծակի նրա արևմտյան շրջանները՝ ծանր պարտության մատնեց հայոց բանակը, սպանեց Հեթումի որդուն, Թորոսին, գերի բռնեց նրա մյուս որդուն՝ Լևոնին, այրեց արքայանիստ Սիսը և ավերեց ամբողջ երկիրը մինչև Բարձր-բերդ և Ադանա[3]։ Այնուհետև Բեյբարսը, իր այս արշավանքի հաջողությունից քաջալերված՝ աշխատեց գրավել ամբողջ Ասորիքը և Կիլիկիայի լեռնային արևմտյան շրջանները։ 1268 թվին նա գրավեց և ավերածության մատնեց Անտիոք քաղաքը, նվաճեց հետզհետե նույնպես գրեթե մյուս բոլոր ամրությունները ու քաղաքները, որ պատկանում էին խաչակիրներին։ Ապա Հեթում թագավորը, տեսնելով, որ մոնղոլները զբաղված են երկպառակություններով և չեն կարող իրեն օգնել՝ զիջեց Բեյբարսին իր երկրի մի քանի ամրությունները ու շրջան-

---

[1] Տե՛ս Тизенгаузен Сборник материалов т. II, էջ 75—76, 92 և 99—100։ Համեմատ նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 382. Վարդան վրդ., գլ. ՂԸ, էջ 162. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 26։

[2] Համեմատ Насонов, Монголы и Русь, էջ 41—47։

[3] Տե՛ս Վարդան վրդ., գլ. ՂԹ, էջ 162. Հեթում պատմիչ, էջ 84. Սմբատ սպարապետ, էջ 115—116. Մաղաքիա աբեղա, էջ 39—40. Մխիթար Այրիվանեցի, էջ 68. Սամուել Անեցի (շարունակ.), էջ 151. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 26. «Անանուն ժամանակագրություն», էջ 23—24 և այլն։

ները, որ գտնվում էին Հյուսիսային Ասորիքի սահմանում, և ազատեց իր որդուն գերությունից (1268 թ.)։ Կարճ ժամանակից հետո նա իր թագավորությունը հանձնեց որդուն՝ Լևոնին (1270—1289) և ինքը հեռացավ վանք և այնտեղ վախճանվեց 1269 թվին[1]։

Ինչպես Հուլավուի, նույնպես և նրա որդու Աբաղայի ժամանակ, տեղի ունեցան նորից սանձարձակ անկարգություններ և ըմբոստացումներ մոնղոլական զորքի շարքերում։ Այս անգամ խառնակությունների գլխավոր դրդիչն էր Թագուդարը, որը Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) մոտ հիշատակված է խաների վերոհիշյալ «եոթը որդիների» թվում, որոնք Հուլավուի հետ եկել էին Արևմուտք։ Ցույց տալու համար, որ իլխանության մեջ խախտվում էր հաճախ նորմալ իրավակարգը և սովորական երևույթ էին անլուր կամայականություններն ու ապօրինությունները՝ ավելորդ չեմ համարում մեջ բերել Թագուդարի և նրա զորքի վայրագությունների վերաբերյալ Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) վկայությունը մանրամասն կերպով։

> «Եվ այնուհետև, —պատմում է Գրիգոր պատմիչը (Մաղաքիա աբեղան),— [Հուլավուին] հնազանդվածներից Թագուդարը խիստ հարստացավ հեծելազորով, գանձով, ոսկով և ամեն տեսակ ստացվածքով,— նրա գանձն ու դույքը տանում էին 300 ուղտի և 150 սայլի վրա. բացի այդ՝ նա ուներ ձիերի երամակներ և հոտեր, որոնք անթիվ էին։ Նրա հեծելազորի թիվը 40.000 էր ու բաղկացած էր անվանի ու պատերազմող մարդկանցից, որոնք գնում էին ամեն տեղ առանց վախի։ Նրանք ավազակաբար կոտորում էին երկրի քարավանները, կտրելով գիշեր ժամանակ նրանց ճանապարհները։ Նրանք վերցնում էին բոլոր ունեցվածքը քարավանների, որոնք գնում էին քաղաքից քաղաք։ Նրանք հարձակվում էին նույնպես գիշերվա ընթացքում փոքր գյուղերի վրա, տանում էին նրանց ամբողջ գույքը և չորքոտանիներին, իսկ մարդկանց անողորմ կերպով վիրավորում էին նետերով։ Նրանք գնում էին նույնպես վանքերը, կախում էին գլխիվայր ժամասաց երեցներին և, իրար խառնելով աղ ու ունջ՝ լցնում էին ժամասացների քթերի մեջ, ասելով՝ բերեք գինի ծովի չափ և միս սարի չափ»։

---

[1] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 47—49. Սմբատ սպարապետ, էջ 116. «Անանուն ժամանակագրություն», էջ 24. Ստեփանոս Օրբելյան, ժամանակագրություն. էջ 27 և ուրիշ.։

*[«Իսկ այսպէս ի հնազանդելոցն Թագուդար անուն յոյժ շատացան հեծելով և գանձով և ոսկով և ամենայն ընչիւք. զի Յ ուղտ և Ճ և Ծ սայլ զգանձն և զմալն տանէին թո՛ղ զջոկս ձիոցն և զհօտիցն՝ որոյ թիւ ոչ գոյր. և էր թիւ հեծելոցն ԽՌ անուանիք և յոյժ պատերազմողք և աներկեղք ամենայն տեղիս. զի զկարևան երկրին կոտորէին աւազակութեամբ՝ պահելով ի գիշերի զճանապարհս, և զամենայն ինչսն առնուին զկարևանին՝ որ գնային ի քաղաքէ ի քաղաք. նոյնպէս և զփոքր գեղորայսն ի գիշերի ծեծէին, և զամենայն ինչսն և չորքոտանիսն տանէին, և զմարդիկն նետով անողորմ խոցէին. նոյնպէս և երթային ի վանսերն և զժամարար իրիցնին գլխիվայր կախէին. և աղ և ունչ խառնեալ ածէին ընդ քիթսն ժամարարացն, ասելով «բերէք գինի ծովին չափ և միս սարին չափ»]*[1]։

Գրիգոր պատմիչի (Մաղաքիայի) պատմելով՝ հայ և վրացի իշխանները, այլևս անկարող լինելով հանդուրժել Թագուդարի սրիկայությունները, գնացին Աբաղայի մոտ, իրենց սրերը ցած ձգեցին և ասացին, որ նա կամ Թագուդարին ու նրա զորքը տա իրենց ձեռքը և կամ կոտորել տա իրենց բոլորին, որովհետև այլևս չեն տեսնեն այդ տեսակ խայտառակություններ։ Մոնղոլական մյուս զորքերը ևս, ասում է Գրիգոր պատմիչը (Մաղաքիան), գանգատվում էին, որ Թագուդարի զինվորները իրենց ծեծում են և խլում են իրենց ձիերը։ Աբաղան, որովհետև ինքը ևս դժգոհ էր, որ Թագուդարը խախտում էր օրինականությունը և սահմանված կարգերը՝ հրամայեց հայ-վրացական և մոնղոլական մյուս զորքերին կոտորել Թագուդարի հեծելազորը և նրան ձերբակալել։ Այնուհետև, ինչպես վկայում են աղբյուրները, Թագուդարը ապստամբեց և փախավ Աբխազիայի կողմերը, սակայն Աբաղայի ուղարկած զորքերը հետևից հասան, նրա հեծելազորը սրի անցկացրին, իսկ Թագուդարին բռնեցին և բերին Աբաղայի մոտ, որը նրան բանտ դրեց Հեր և Զարևանդ գավառում (1269)[2]։

Աբաղայի իշխանության առաջին տարիներում պատերազմ բռնկվեց նաև իլխանության և Չաղատայանների ուլուսի միջև, ուր իշխում էր այդ ժամանակ Բորախը։ Վերջինս, ինչպես երևում է

---

[1] Տե՛ս Մաղաքիա աբեղա, էջ 49—50։

2 Տե՛ս նույնը, էջ 50—51. Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն*, էջ 27. *«Անանուն ժամանակագրություն»*, էջ 24. Սամուել Անեցի (*շարուն.*), էջ 161. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները*, Բ, էջ 60. Մխիթար Այրիվանեցի, էջ 68։

*Ռաշիդեդդինի վկայություններից, ուզեցել էր գրավել ըստ երևույթին, Ջուչյանների դրդմամբ, իլխանության մի քանի հյուսիսարևելյան շրջանները։ Սակայն նա հաջողություն չունեցավ։ 1270 թվին մեծ զորքով Խորասան եկավ ինքը Աբաղա խանը և Բորախը ծանր պարտություն կրեց նրա միացյալ մոնղոլական և հայ-վրացական զորքերից*[1]*։*

*Նույն այս 1270 թվին, ինչպես վկայում են աղբյուրները, վախճանվեց Վրաստանի Դավիթ թագավորը, Գեորգի Լաշայի որդին, և նրան հաջորդեց իր որդին Դեմետրեն (1271—1289)*[2]*, որը տասներկու տարեկան էր։ Դեմետրեի փոքրահասակության պատճառով Արևելյան Վրաստանի աթաբեկ նշանակվեց Մահկանաբերդի իշխան Սադուն Արծրունին, որը դառավ փաստական տնօրենը վրացական թագավորության։ 1278 թվին նա ստացավ Դեմետրեից Թելավը, Բելականին և մի շարք ուրիշ վայրեր։ Այնուհետև նա կարողացավ տիրել նաև Դմանիսին և Կարսին, որը դառավ նրա աթոռանիստը։ Ինչպես մատնանշել է Գ. Հովսեփյանը, սա վախճանվել է, հավանորեն, 1284/5 թ. և նրա փոխարեն աթաբեկ կարգվել Տարսայիճ Օրբելյանը*[3]*։ Ուշագրավ է ու հետաքրքիր, որ Դեմետրեի թագավոր նստելուց հետո Վրաստանում և Հայաստանում 1273 թվին նոր աշխարհագիր էր արվել, որի կատարումը հանձնարարվել էր դարձյալ վերոհիշյալ Արղունին*[4]*։*

*Կիլիկիայի հայ թագավորության բարեկամությունը մոնղոլների հետ, որոնք Աբաղայի խանության առաջին շրջանում պարբերաբար պատերազմ էին մղում Ջուչյանների կամ Չաղաթայանների դեմ՝ նրա համար խիստ ծանր հետևանքներ ունեցավ նաև Հեթում Ա-ի որդու՝ Լևոն Գ-ի ժամանակ (1270—1289)։*

*1274—75 թվերին Եգիպտոսի սուլթանության զորքերը, միանալով Կիլիկիայի սահմանների մոտ ապրող թուրքմենների հետ նորից արշավեցին Կիլիկիա Բեյբարսի առաջնորդությամբ։ Այս անգամ նրանք, կողոպտելով և սրի ու հրի մատնելով երկիրը՝*

---

[1] *Տե՛ս Тизенгаузен,* Сборник материалов, т. II, *էջ 76—78.* Ստեփանոս Օրբելյան, *«Ժամանակագրություն», էջ 27. «Անանուն ժամանակագրություն», էջ 24.* Սամուել Անեցի *(շար.), էջ 162։*

[2] *Տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, *Պատմություն, էջ 424, 425 և 430. Նույնի «Ժամանակագրություն», էջ 27. «Անանուն ժամանակագրություն», էջ 24։*

[3] *Տե՛ս* Գ. Հովսեփյան, *Խաղբակյանք կամ Պռոշյանք, I, էջ 134—135։*

[4] *Տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն, էջ 27.* Մխիթար Այրիվանեցի, *էջ 68։*

ավերեցին, ինչպես վկայում է Սմբատ սպարապետը, գլխավորապես, Մսիսից դեպի հարավ-արևմուտք գտնվող շրջանները մինչև Կոռիկոս[1]։ Այս ասպատակության ժամանակ առնվեց Տարսոնը, որն այդ ժամանակ Կիլիկիայի մայրաքաղաքն էր։ Հարուստ ու բազմամարդ քաղաքը ավարի տրվեց, իսկ բնակիչները սպանվեցին կամ գերի ընկան։

Բեյբարսի մեծ հաջողությունները Ասորիքում և անպատիժ ասպատակությունները Կիլիկիայում հույս ներշնչեցին Փոքր Ասիայի թուրքերին, որ Եգիպտոսի օգնությամբ հնարավոր կլինի ազատել իրենց երկիրը մոնղոլական լծից և ինքնուրույնություն ձեռք բերել հավատակից մամլուքների հովանավորության տակ։ Ըմբոստությունը մոնղոլների իշխանության դեմ նկատելի էր, գլխավորապես, Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, որոնք օգնության էին կանչում իսլամի պաշտպան Եգիպտոսի սուլթանին։ Մահմեդականների ըմբոստ ու գրգռված տրամադրությանը պետք է վերագրել, հավանորեն, Եկեղյաց գավառի Սարգիս արքեպիսկոպոսի և այլ հայերի սպանությունը, որ տեղի ունեցավ Երզնկայում 1276 թվին[2]։ Հետևյալ տարին 1277 թվին մեծ զորքով մտավ Փոքր Ասիա ինքը՝ սուլթան Բեյբարսը, որին Փոքր Ասիայի մահմեդական ազգաբնակությունն ընդունեց անհուն հրճվանքով։ Այստեղ, Հյուսիս-արևելյան Կիլիկիայի մոտ, Ապլիստանի դաշտում, որը գտնըվում էր Ջահան գետի ակունքների մոտ, տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ մոնղոլական զորավարներ Թոխու նոյինի և Թուդա Բահատուրի հետ, որոնք, լքված լինելով սելջուկյան սուլթանի զորքերից՝ պարտություն կրեցին և երկուսն էլ սպանվեցին (1277 թվի ապրիլի 16-ին)[3]։

Այս հաղթությունից հետո Բեյբարսը մտավ Արևելյան Փոքր Ասիա, հասավ մինչև Կեսարիա և աշխատեց իր կողմը գրավել Արևմտյան Փոքր Ասիայի ամիրաններին։ Բայց շուտով մեծ զորքով Փոքր Ասիա եկան Աբաղա խանը և նրա եղբայրներ Մանգու-Տիմուրը ու Ղոնղրաթան և Բեյբարսը, վախենալով որ նրանք, անց-

---

1 Տե՛ս Սմբատ սպարապետ, էջ 116. Հեթում պատմիչ, էջ 84. «Անանուն ժամանակագրություն», էջ 24. Մխիթար Այրիվանեցի, էջ 68. Սամուել Անեցի (շարուն.), էջ 152 և ուրիշ.։

2 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 27. «Անանուն ժամանակագրություն», էջ 24. Սամուել Անեցի (շարուն.), էջ 162։

3 Տե՛ս Աբուլֆարաջ, Chron. syr., էջ 556. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 28. «Անանուն ժամանակագրություն», էջ 24 և ուրիշ.։

*նելով իր թիկունքը, կկտրեն իր նահանջի ճանապարհը՝ շտապ կերպով ետ գնաց և, կորցնելով ճանապարհին իր վերջապահ զորքը՝ հազիվ կարողացավ ծլկվել Ասորիք, ուր և մեռավ նույն այս 1277 թվին*[1]*։*

*Թուրքերի հետ Աբաղան խիստ դաժան դատաստան տեսավ։ Փոքր Ասիայի սուլթանն էր այդ ժամանակ փոքրահասակ Ղիաթեդդին Գ.-ը, իսկ նրա փաստական կառավարիչն էր Ղիաթեդդինի պարսիկ վեզիր Մուինեդդինը, որի մականունն էր Փարվանա։ Այս վերջինը, որ ապստամբության գաղտնի հրահրողն էր և փախել էր Թոխաթ՝ սպանվեց։ Փոքր Ասիայի արևելյան որոշ շրջանները ենթարկվեցին ավերածության, սպանվեցին ապստամբ ամիրաները ու նրանց հետ միասին ավելի քան 200.000 մարդ խաղաղ ազգաբնակությունից*[2]*։ Ինչպես վկայում է Հեթումը, 1277 թվի այս անցքերից հետո, Աբաղա խանը առաջարկեց Լևոն Գ-ին, որն իր հոր հետ մոնղոլներին միշտ հավատարիմ էր եղել՝ միացնել Սելջուկյան սուլթանության երկրները Կիլիկիայի հետ։ Բայց հայոց իմաստուն թագավորը, ասում է Հեթումը, հրաժարվեց այդ պարգևից, առարկելով, որ ինքը, շրջապատված լինելով հզոր թշնամիներով՝ անկարող է պահել ու պաշտպանել երկու թագավորություն*[3]*։*

*Աղբյուրների ուշադիր քննությունից ինձ թվում է, դժվար չէ հետևցնել, որ Լևոն Գ-ի և նրա հորեղբոր Սմբատ սպարապետի հաղթական բախումները եգիպտական զորքերի հետ, որ հիշատակված են կիլիկյան հայ աղբյուրներում, տեղի էին ունեցել ո՛չ թե 1276, այլ, գլխավորապես, 1277 թվին՝ Բեյբարսի վերոհիշյալ նահանջի ժամանակ դեպի Ասորիք։*

*1277 թվի պատերազմը Բեյբարսի դեմ, որ հաջող կերպով սկսված էր՝ Աբաղան հարկադրված եղավ նույն թվին ընդհատել և շտապ վերադառնալ Անդրկովկաս, որովհետև, ինչպես վկայում է «Անանուն ժամանակագրությունը», նա տեղեկություն ստացավ, որ Ոսկե Հորդայի զորքերը պատրաստվել էին Դերբենդի վրայով արշավել իր երկրի հյուսիսային շրջանները*[4]*։ Հայկական աղբյուրի*

---

1 *Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 25.* Ստեփանոս Օրբելյան, *ժամանակագրություն, էջ 28.* Հեթում պատմիչ, *էջ 53—54 և ուրիշ.։*

2 *Տե՛ս* Հեթում պատմիչ, *էջ 53.* Ստեփանոս Օրբելյան, *ժամանակագրություն, էջ 27—28 և ուրիշ.։ Համեմատ* *Мюллер*. История Ислама, т. III, *էջ 283։*

3 *Նույնը, գլ. Լb, էջ 54։*

4 *Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 25։*

այս վկայությունը հաստատում են նաև ռուսական ժամանակագրությունները, որոնց մեջ նույնպես հիշատակված է Ոսկե Հորդայի Մանգու-Տիմուր խանի 1278 թվի արշավանքը Կովկաս[1]։ Համդալլահ Ղազվինին ևս հաղորդում է, որ նաև 1279/80 թվին Հյուսիսային Կովկասից («Դեշտ-ի-խազար»-ից) իլխանության երկիրն էին մտել թշնամի մեծ զորքեր և նրանց դեմ դուրս էին եկել Աբաղայի զորքերը նրա եղբայր Մանգու-Տիմուրի առաջնորդությամբ, որը նրանց պարտության էր մատնել[2]։

Միայն 1281 թվին Աբաղան կարողացավ վերսկսել պատերազմը հարավում և ուզեց այս անգամ վճռական հարված տալ Եգիպտոսին, ուր այդ ժամանակ իշխանության գլուխ էր անցել Մանսուր Սեյֆեդդին Քելաունը (1279—1290), որին հայ աղբյուրներն անվանում են Ալփի կամ Ալֆի։ 1280/81 թվի ձմեռը Աբաղան ուղարկեց Ասորիք իր եղբայր Ղոնղրաթային, որը այստեղ ավերածության ենթարկեց Հալեպ քաղաքի շրջանները և կարճ ժամանակից հետո ետ նահանջեց։ Բայց այնուհետև, 1281 թվի աշնանը, մեծ զորքերով Ասորիք եկան Աբաղայի մյուս եղբայրը, Մանգու-Տիմուրը, Լևոն Գ-ը և Վրաստանի Դեմետրե թագավորը։ Նրանց դեմ դուրս եկան իրենց բանակներով Եգիպտոսի սուլթան Ալֆին ու նրա հետ միասին Դամասկոսի սուլթանը։ Համաու և կատաղի ճակատամարտում, որ տեղի ունեցավ Համաթ և Հեմս քաղաքների միջև 1281 թվի հոկտեմբերի վերջերին՝ հայ-վրացական զորքերը և մոնղոլական զորքերի մի մասը, որ գտնվում էին բանակի աջ և ձախ թևերում սկզբում հաջողություն ունեցան, բայց ինքը Մանգու-Տիմուրը, որ բանակի մեջտեղումն էր՝ շատ թույլ կռվեց և, Ալֆիի զորքերից պարտված՝ ետ քաշվեց Եփրատի կողմերը։

Այնուհետև հարկադրված եղան ետ նահանջել և մյուս զորքերը, որոնք նահանջի ժամանակ ունեցան զգալի կորուստներ[3]։

Այս պարտությունից մի քանի ամիս հետո, 1282 թվի ապրիլի 1-ին[4], մեռավ Համադանում Աբաղա խանը և նրան հաջորդեց եղ-

---

[1] Տե՛ս *Насонов,* Монголы и Русь. էջ 61, 64։

[2] Տե՛ս *Тизенгаузен,* Сборник материалов, т. II, էջ 92։

[3] Տե՛ս Հերում, գլ. ԼՁ, էջ 55—56, Աբուլֆարաջ, Chron. syr. vers. lat., էջ 519, 520 են. Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն*, էջ 28. «Անանուն ժամանակագրություն», էջ 25. Սամուել Անեցի (*շարուն.*), էջ 162. Մխիթար Այրիվանեցի, էջ 68 և ուրիշ.։

[4] Ըստ Ռաշիդեդդինի Հեջիրի 680 թվին, զուլհիջա ամսի 20-ին, չորեքշաբթի [=1282 թ. ապրիլի 1, չորեքշաբթի]։ Տե՛ս *Saint-Martin,* Mémoires. II, էջ 290. ըստ Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» (էջ 281), Հայոց ՉԻԱ թվին «յամիսն ի սահմի ԻԲ» [=նույնպես 1282 թ. ապրիլի 1, չորեքշաբթի]։

բայրը՝ Թագուդարը (1282—1284)։ «Անանուն ժամանակագրությունը» վկայում է, որ Աբաղա խանին և նրա եղբայր Մանգու Տիմուրին սպանել էին «դեղով մահու... Նենգությամբ Սահիպ Դիվանին»[1], այսինքն՝ վերոհիշյալ խոջա Մուհամմեդ Շեմսեդդինը, որի ձեռքին էր գտնվում, ինչպես վերև տեսանք, իլխանության կառավարության ղեկը։

Աբաղայի, նույնպես և նրա հոր Հուլավուի ժամանակ, թեև Հայաստանի հարկերը խիստ ծանր էին, սակայն երկրի ներքին վիճակը համեմատաբար տանելի էր, որովհետև այս հզոր իլխանները, ինչպես վերև տեսանք, դաժան դատաստան էին տեսնում մոնղոլական զորքերի հետ և նրանց ետ էին պահում անսանձ բռնություններից ու կողոպուտներից։ Ուշագրավ է այս տեսակետից Գրիգոր պատմիչի (Մաղաքիա աբեղայի) վկայությունը, որը մատնանշում է, որ Աբաղայի խանության ժամանակ «էր առատութիւն ամենայն իրաց ընդ ամենայն երկիր»[2]։ Մոնղոլական տիրապետության ծանրությունը կայանում էր այս շրջանում, գլխավորապես, նրանում, որ Հայաստանը, մասնակցելով մոնղոլների հեռավոր ու մշտական արշավանքներին, կորցնում էր շարունակ ժողովրդի աշխատունակ ամենաառողջ մասը և հետզհետե ուժասպառ ու արնաքամ էր լինում։ Որ այս զինապարտությունը կատարյալ մի արհավիրք էր երկրի համար՝ այդ պարզ երևում է հայ աղբյուրների վկայություններից։ Ստեփանոս Օրբելյանը մատնանշում է, օրինակ, որ իր հայրը՝ Տարսայիճը, որ մեծ քաջություններ էր գործել՝ մասնակցել էր պատերազմներին «ի Խորասան, ի Շամ, ի Հոռոմս, ի Համս և ի Համայ ընդ Մսրացւոյն, և ի Դարբանդ»[3]։

Աբաղայի մահից հետո, նրա եղբոր՝ Թագուդարի ժամանակ, որը տիրապետել էր գահին դավով ու բռնությամբ, իլխանության մեջ սկսվեցին խռովություններ և արյունահեղ երկպառակություններ, որոնք սկիզբ դրին այս մեծ պետության թուլացման և քայքայման։

Թագուդարը (1282—1284), որ մահմեդականություն էր ընդունել և անվանվում էր Ահմադ, հայտարարվեց իլխան Հուլավուի հիմնած Ալադաղում, բացահայտ աջակցությամբ ամենակարող վեզիր խոջա Մուհամմեդ Սեյֆեդդին Սահիպ-Դիվանի և, հավանորեն,

---

[1] Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 25։ Համեմատե նաև Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 419։

[2] Մաղաքիա աբեղա, էջ 37։

[3] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 423—424։

նաև այլ մահմեդականների։ Ընդունելով մահմեդականություն. ըստ երևույթին, նա ուզում էր նեցուկ դարձնել իր իշխանության մահմեդական ժողովուրդներին, որոնք ավելի բազմաթիվ էին և ավելի զորեղ, քան Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդները։ Իշխանությունը ձեռք առնելուն պես, Ահմադը աշխատեց, ամենից առաջ, ազատվել իր հակառակորդներից և սպանել տվեց իր եղբայր Կոնղուրաթային, մոնղոլ ու վրացի մի քանի մեծամեծների և նույնպես Ղիաթեդդին Գ. սուլթանին, որի իշխանությունը հանձնեցին Մասուդին (1283)[1]։ Բացի այդ, նա հալածանքներ հարուցեց իր իշխանության տակ գտնվող քրիստոնյաների դեմ և, ինչպես վկայում են Հեթում պատմիչը և Ստեփանոս Օրբելյանը, մտադիր էր նրանց մահմեդականացնել[2]։

1284 թվի գարնանը նա մտավ Խորասան և բանտարկեց այստեղ Աբաղայի որդուն, Արղունին, որը համարվում էր իլխանական գահի օրինավոր ժառանգ։ Բայց Արղունի կողմնակիցները՝ Բուղան, Առուխը և ուրիշները՝ նրան բանտից ազատեցին, սպանեցին Թագուդար-Ահմադին ու սրա համախոհներին, որոնց թվում նաև Սահիբ-Դիվանին և իշխանությունը հանձնեցին Աբաղայի որդուն Արղունին (1284—1291), որը նորից բարեկամական դիրք բռնեց քրիստոնյաների նկատմամբ[3]։

Արղունին օգնող զորքերի մեջն էր այդ ժամանակ Վրաց ու Հայոց մեծամեծների հետ Դեմետրե թագավորը։ Արղունը նրան մեծարեց և, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը[4], դրեց նրա գերիշխանության տակ Ավագի, Շահնշահի, Գագեցու իշխանական տները և Սադուն աթաբեկի որդիներին, որը վախճանվել էր հենց նույն այս 1284 թվին։ Շարուրում Դեմետրեին հանդիսավոր կերպով ընդառաջ եկավ ընծաներով Տարսայիճ Օրբելյանը։ Դեմետրեն նրան տարավ իր հետ Այրարատ և նշանակեց նրան իր թագավորության աթաբեկ, նաև հանձնարարեց նրան իր Դավիթ ու Մանվել որդիների խնամակալությունը։

1284 թվի հեղաշրջումից հետո Հուլավյանների պետությունը

---

1 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 425. Նույնի, «Ժամանակագրություն», էջ 28—29. «Անանուն ժամանակագրություն», էջ 25 և ուրիշ.։

2 Տե՛ս Հեթում պատմիչ, գլ. Լե, էջ 57. Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 28. Նույնի, Պատմություն, էջ 425։

3 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 28—29. Նույնի Պատմություն, էջ 426. «Անանուն ժամանակագրություն», էջ 26. Մխիթար Այրիվանեցի, էջ 68 և ուրիշ.։

4 Նույնի, Պատմություն, էջ 426։

հանգստություն վայելեց միայն մի քանի տարի։ Արղունը մեծ հակում ուներ շինարարության, և նրա իշխանության ժամանակ կառուցվել է Թավրիզի մոտ հեթանոսական տաճար և սկիզբ է դրվել նաև Սուլթանիե քաղաքի կառուցման։

1285 թվին Արղունի մոտ եկավ Լևոն Գ-ը[1], որը դեռևս հույս ուներ, որ դաշնակցելով մոնղոլների և Եվրոպայի քրիստոնյա պետությունների հետ՝ կկարողանա փրկել իր երկիրը եգիպտական մամլուքների ասպատակություններից։ Նրանք մտադիր էին սկսել հարավում նոր արշավանք, սակայն Արղունը ստիպված եղավ ետ կենալ իր դիտավորությունից, որովհետև շուտով նոր պատերազմ սկսվեց Ոսկե Հորդայի հետ։

1288 թվի աշնանը [Հեջիրի 687 թվի ռամադան ամսում=29 սեպտ.—29 հոկտ. 1288 թ.] Ոսկե Հորդայի զորքերը, ինչպես վկայում է Ռաշիդեդդինը, սկսեցին նոր արշավանք և ուզեցին ներխուժել Անդրկովկաս, սակայն Արղունի զորքերը զորեղ դիմադրություն ցույց տվին և դարձրին նրանց ի փախուստ[2]։

Արղունի ժամանակ իլխանության փաստական կառավարիչն էր վերոհիշյալ Բուղան, որին 1286 թվին, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, մեծարել էին ու անվանել «Չինքսան», այսինքն՝ «իշխանաց իշխան»[3]։ Այս Բուղան, որ ծագում էր մոնղոլական ամենահզոր Ջելաիրյան ցեղից, դավադրություն կազմեց Արղունի դեմ և, գրավելով իր կողմը մոնղոլ մեծամեծներին՝ ուզեց գահընկեց անել նրան և տիրել նրա գահին։ Այս անցքերը, որ տեղի ունեցան 1289 թվին՝ մանրամասն նկարագրված են Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» վերջում և Ֆրիկի «Վասն Արղուն խանին և Բուղային» ոտանավորի մեջ։ Ժամանակակից այս աղբյուրների վկայությամբ՝ Արղունը, որին կանխապես տեղեկություն էին տվել ծրագրված ապստամբության մասին՝ անսպասելի կերպով հարձակվեց Բուղայի ու մյուս դավադիրների վրա և նրանց բռնեց ու բոլորին անխնա կոտորեց։ Սրանց հետ միասին սպանել էին Մուղանի դաշտում նաև Դեմետրե թագավորին, որը Բուղայի աներն էր, կարծելով, որ նա ևս մասնակից է եղել դավադրության[4]։

---

[1] Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 26. Սամուել Անեցի (շարուն.), էջ 163 և ուրիշ.։

[2] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, т. II, էջ 68—69։

[3] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Ժամանակագրություն, էջ 30։

[4] Նույնը, էջ 30—31. Նույնի, Պատմություն, էջ 430. «Անանուն ժամանակագրություն», էջ 26. Մխիթար Այրիվանեցի, էջ 68—69. Ֆրիկ. Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 209—215 և ուրիշ.։

Դեմետրե Բ-ի սպանությունից հետո Սադուն Արծրունու որդին. Խութլու Բուղան, Արղուն խանի համաձայնությամբ, առաջնորդեց արքունիք Արևմտյան Վրաստանի Դավիթ թագավորի որդուն. Վախթանգին, որը թագավոր հաստատվեց Արևելյան Վրաստանի (1289—1292)։ Վախթանգն առատորեն պարգևատրեց Խութլու Բուղային և վերջինս կարգվեց Վրաստանի աթաբեկ և ամիրսպասալար։

Օգտվելով 1289 թվի խառնակություններից, որի ընթացքում սպանվել էին մոնղոլական շատ զորապետներ և նոյիններ՝ 1290 թվի գարնանը Ոսկե Հորդայի զորքերը նորից փորձ արին ներս խուժելու Անդրկովկաս Դերբենդի վրայով։ Նրանց դեմ այս անգամ դուրս եկավ ինքը Արղունը և, մատնելով նրանց պարտության՝ դարձրեց ի փախուստ[1]։

Ներքին երկպառակությունները և մեծամեծների բանտարկությունները ու սպանությունները, որ իլխանության մեջ հետզհետե դառնում էին սովորական ու մշտական երևույթ, շարունակվեցին նաև 1289 թվից հետո։ Շուտով սակայն, 1291 թվի գարնանը, Արղունը, որը գտնվում էր այդ ժամանակ Մուղանում, հանկարծամահ եղավ և նրան հաջորդեց եղբայրը՝ Քեյղաթուն (1291—1295), որը Հեթում պատմիչի մոտ անվանված է Ռեգայիդ։ Ստեփանոս Օրբելյանը և «Անանուն ժամանակագրությունը» մատնանշում են, որ բացի Արղունից, որին Մուղանի դաշտում թունավորել էր նրա հարճը, սպանվել էին սրա մահից հետո, 1291 թվին, նաև շատերը իլխանության բարձրագույն պաշտոնյաներից և կողոպտվել էին միաժամանակ և արքունի գանձերը[2]։

1292 թվին վախճանվել էր Վախթանգ թագավորը և 1293 թվին Քեյղաթունը Արևելյան Վրաստանի թագավոր հաստատեց Դեմետրե Բ-ի որդուն՝ Դավիթին։

Քեյղաթուն, ինչպես վկայում է Հեթումը, ոչ մի կրոն չէր դավանում, իբրև կռվող անզոր էր և վարում էր ցոփ ու շեխ կյանք։ Նրա իշխանությունը նշանավոր եղավ նրանով, որ նա հնչուն դրամի փոխարեն գործածության մեջ դրեց թղթադրամ (1294 թվի սեպտեմբեր ամսին)[3], և առևտուր անողներին արգելեց գործածել թան-

---

[1] Տե՛ս *Тизенгаузен*, Сборник материалов. т. II, էջ 78—79 և 92. Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն*, էջ 30։ Համեմատե նաև *Рашид ад-дин*, Сборник летописей, т. III, перевод *Арендса*, стр. 124—125.

[2] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, *Պատմություն*, էջ 467—468 (գլ. Հ)։ «Անանուն ժամանակագրություն», էջ 26։

[3] Տե՛ս *Рашид ад-дин*, Сборник летописей, т. III, էջ 135։

կացին մետաղներ։ Բայց այս նորամուծությունը, որ չինական գյուտ էր, հնարավոր չեղավ հարատև դարձնել շնորհիվ առևտրականների և ժողովրդի սուր դիմադրության։

Քեյղաթուի իշխանության հինգերորդ տարում (1295 թ.) իլխանության մեջ վերսկսվեցին նորից բուռն թափով խռովությունները և ներքին երկպառակությունները։

Ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, Քեյղաթուի պալատական բարձր պաշտոնյաները, որոնք զզվել էին նրանից և այլևս չէին կարող հանդուրժել նրա զազրելի արարքները՝ որոշեցին նրան գահընկեց անել և իշխանությունը տալ Բայդուին, որը նրա հորեղբոր որդին էր։ Թեև այս դավադրությունը սկզբում հաջողություն չունեցավ և դավակիցները ձերբակալվեցին՝ բայց շուտով Քեյղաթուի զորքերը ապստամբեցին, ազատեցին բանտից կալանավորներին, խեղդամահ արին Քեյղաթուին ու սպանեցին նաև նրա համախոհներին։ Այնուհետև նրանք ընդառաջ գնացին Բայդուին և, հանդիպելով նրան Ջիրավ դաշտում՝ հայտարարեցին խան և իշխող ամբողջ իլխանության (1295 թվի ապրիլ ամսին)[1]։

Բայդուն իլխանության գահը կարողացավ իր ձեռքում պահել միայն մի քանի ամիս մինչև 1295 թվի հոկտեմբեր ամիսը[2]։ Նրա դեմ եկավ Խորասանի կողմից Արղունի որդին՝ Ղազանը, որը համարում էր իրեն իլխանության օրինավոր ժառանգ։

Բայդուի արքունիքը և նրա զորքերը, երբ Ղազանը արդեն մոտ էր գտնվում՝ մատնվեցին խուճապի, ուստի և սա հեշտությամբ ձերբակալեց ու կոտորեց Բայդուի կողմնակիցներին և իշխանությունը գրավեց, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, առանց պատերազմի ու մարտի[3]։

Դեռևս Ղազան խանի գահակալումից առաջ Մերձավոր Արևելքում գտնվող մոնղոլական զորքերը, որ բաղկացած էին մոնղոլներից ու ավելի շատ թուրքերից՝ սկսել էին հետզհետե ձուլվել տեղական ժողովուրդների հետ, գլխավորապես, մահմեդական թուրքերի հետ, որոնք սելջուկյան արշավանքներից հետո բնակություն էին հաստատել Իրանում, Հայաստանում և Փոքր Ասիայում։ Իսկ Ղազանի իշխանության հենց սկզբում, որը իլխան դառավ մահմեդա-

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 468—470. Հեթում պատմիչ, գլ. ԼԹ, էջ 59. «Անանուն ժամանակագրություն», էջ 27։

[2] Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 27։

[3] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, գլ. Հ, էջ 470—478։ Համեմատե նաև Հեթում պատմիչ, գլ. Խ, էջ 60. «Անանուն ժամանակագրություն», էջ 27։

կանների աջակցությամբ, լինելով նրանց թեկնածուն՝ իր ամբողջ զորքը և ինքը Ղազանը հանդիսավոր կերպով ընդունեցին մահմեդականություն ըստ սուննի դավանության։

Ինչպես վկայում է այս դեպքերին ականատես Ստեփանոս Օրբելյանը, 1295 թվի գահակալական հեղաշրջման ընթացքում Ղազան խանի զորավար Նավրուզը, որը վերև հիշված բաղդադ Արղունի որդին էր՝ քրիստոնյաների դեմ հալածանքներ սկսեց իլխանության զանազան շրջաններում, և, ի միջի այլոց, նաև Նախիջևանի ու Սյունիքի որոշ մասերում։ Նավրուզի զորքերը կողոպտեցին, գլխավորապես, Նախիջևան քաղաքի և գավառի եկեղեցիներն ու վանքերը, չարչարեցին քահանաներին և ուզեցին քանդել եկեղեցիները, բայց շուտով ավերածություններն ու բռնությունները դադարեցին Ղազան խանի հրամանով և խաղաղությունը վերականգնվեց[1]։

Նավրուզի հարուցած կրոնական հալածանքների պատճառով Դեմետրեի փոքրահասակ որդի Դավիթ թագավորը հեռացավ իր մեծամեծների ու զորքերի հետ միասին այժմյան Դարյալի կողմերը և ամրացավ այնտեղ անառիկ բերդում։ Սակայն կարճ ժամանակից հետո, երբ հալածանքներն արդեն վերջացել էին՝ մեծ զորքով մտավ Վրաստան Ղազանի մեծ զորապետ Խութլուշահը, որը Վրաց թագավորի մոտ պատգամավորություն ուղարկեց, հաշտություն կնքեց և վերադարձրեց նրան գահը և իշխանությունը[2]։ Նավրուզ զորավարը, որին ուղարկել էին Խորասան՝ դավադրություն կազմեց այնտեղ Ղազան խանի դեմ, բայց դավադրությունը բացվեց և սրի մատնվեցին թե ինքը և թե ամբողջ տոհմը։ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Խութլուշահի պատժական արշավախմբի մեջ, որը եկել էր Խորասան Նավրուզի դեմ՝ գտնվում էին Օրբելյան Տարսայիճի եղբոր որդին Լիպարիտը և Խաղբակյան մեծ իշխան Պռոշի (+1284) թոռը, Ամիր Հասանի (+1292) որդին՝ Էաչին։ Սրանք, ասում է Ստեփանոս Օրբելյանը, «թուք արձակեալ յերեսս Նավրուզին մեծ անարգանօք ձաղէին»[3]։

Հուլավյան տոհմի խաների մեջ Ղազան խանը (1295—1304) միակ փայլուն ու խոշոր պետական դեմքն էր։ Նրա իշխանությունը եռուն պետական գործունեության մի շրջան էր, որի նպատակն էր ամրացնել իլխանության երերուն ու խարխլված կառավարական կարգերը, բարեկարգել ու բարձրացնել նրա տնտեսական ու ֆի-

---

[1] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմություն, էջ 472—474։

[2] Նույնը, էջ 476։

[3] Նույնը, էջ 475։

նանսական գրությունը և ապահովել երկրում ներքին խաղաղությունը ու հասարակական անվտանգությունը։

Մինչև Ղազան խանի բարենորոգումները, իլխանության բոլոր երկրները հարստահարման ու կողոպտման էին ենթարկվում պաշտոնյաների ու հարկահանների կողմից, որոնք հարկահավաքման ժամանակ ազաղակող չեղծումներ էին գործում և քայքայում էին գյուղական ու քաղաքային տնտեսությունը։ Ղազան խանը հատուկ հրամանագրով կարգադրեց, որ բնակչությունն ամեն տեղ իրազեկ լինի իր իրավունքներին ու պարտականություններին, և միջոցներ ձեռք առավ, որ ամենուրեք բոլոր աչքի ընկնող տեղերում արձանագրված ու հրապարակված լինեն մանրամասն տեղեկություններ այդ վայրերից գանձվելիք հարկերի մասին, որ վճարելու էին հարկատուները։ Միաժամանակ Ղազան խանը վերակազմեց և բարեկարգեց դատարանները, որպեսզի կարողանա սրանց միջոցով մաքառել ու արմատախիլ անել վարչական չեղծումները և կամայականությունները։ Հովանավորելով առևտուրը և արդյունաբերությունը՝ նա կարգավորեց նույնպես և դրամական սիստեմը։ Իբրև դրամական միավոր ընդունվեց նրա ժամանակ արծաթ գիրհեմը, որի կշիռը հավասար էր 0,5 մսխալի կամ մոտ 2,15 գրամի։ Բացի այս դիրհեմից կտրվում էին նաև արծաթ դրամներ՝ հավասար 0,5, 2 և 6 գիրհեմի։ Վեց դիրհեմանոց արծաթ դրամը, որի կշիռն էր 3 մսխալ՝ անվանվում էր դինար։

Համդալլահ Ղազվինու վկայություններից պարզ երևում է, որ Ղազան խանի բարենորոգումների շնորհիվ իլխանության երկրները ղտնվում էին համեմատաբար բարեկեցիկ վիճակում և զգալի չափով ավելացել էին նաև պետական գանձարանի եկամուտները[1]։

Ղազան խանի բարենորոգումները բարերար ազդեցություն ունեցան, մասնավորապես, և Հայաստանի վրա։ Այդ մասին կարևոր տեղեկություն է հաղորդված ժամանակակից ձեռագրի մի հիշատակարանում, որը գրված է Նախիջևանում 1304 թվին։

> «Ի սոյն ամի [1304],— վկայում է այդ հիշատակարանը,— ինքնակալն Ղազանն վճարեցաւ ի կենացս և սուգ մեծ եհաս ամենայն տանս արևելից, մանաւանդ նեղեալ ազգացս քրիստոնէից, որոյ յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի և ընդ սրբոց թագաւորացն գահակալեսցի. վասն զի ի սորա

[1] Տե՛ս Бартольд, Персидская надпись на стене Анийской мечети Мануче, էջ 20 ևն։

*ժամանակս խաղաղացաւ երկիր իբր զդրախտ Աստուծոյ. բարձաւ ամենայն հարկապահանջութիւն աշխարհաց։ Սմա ետ Տէր Աստուած, ըստ Սաղմոսողին, զիրաւունս արքայի. վասն զի սա էր որդի Արղուն ղանին՝ իրաւարար արքային. և թէ՝ պատիւ արքայի զիրաւունս սիրէ։*

*Ի սոյն ժամանակս բարձրավիզ և հպարտապարանոց, խայտաբղէտ և գոռոզ ազգն Իսմայիլի գլխակորեալ ընկըրկեցան և բարձրացաւ եղջիւր եկեղեցւոյ սրբոյ, աճեցին ձայնք սաղմոսաց և երգք ալելուաց, պայծառացան հաւատք քրիստոնէից։ Աստանօր կատարեցաւ բանք ամովսածնին Եսայեայ, որ ասէ՝ գայլք և գառինք ի միասին ճարակեսցին։ Առնէր սա իրաւունս այրեաց, եբարձ զտոկոսիս պարտուց և դարձոյց զզրկանս զրկելոց։ Եբարձ սա զերթևեկութիւն դեսպակաց, ելլեաց և արղուշեաց և կարգեաց յամենայն տեղիս սուրհանդակս, որ են շքրիկք, և սակս արդար իրաւացն, զոր առնէր, փակեաց Տէր Աստուած զամենայն թշնամիս սորա ի ձեռս սորա։*

*Գնաց սա մեծաւ ուժով և ձիախրոխտ որոտմամբ, բազմախուռն Նիզակօք և խառնիճաղանջ բազմութեամբ, յոքնախումբ խմբիւք, էառ Նուաճեաց զամենայն տունն Շամայ,— եհար կոտորեաց մեծ և սաստիկ պատերազմաւ զզօրս Մսրայ և արեան ճապախիս ոչ սակաւ գործեաց, մինչ գրեթէ մարմինք մարդկան և անկեալ դիակացն ի վերայ արեանցն տարաբերել ղաւղիւր, որպէս տերևս թզենոյ. և հետամուտ եղեալ մինչև ի մուտս արևու անյագաբար ի սուր սուսերի մաշեցին զնոսա»[1]։*

Ղազան խանը, որ իր զորքի հետ ընդունել էր մահմեդականություն, ինչպես տեսնում ենք, քրիստոնեության նկատմամբ վարել էր բարեմիտ քաղաքականություն։ Իլխանությունը, որ հենված էր նրա ժամանակ թե մահմեդական և թե քրիստոնյա իր հպատակների վրա, բնականաբար, խիստ ուժեղացել էր և վտանգավոր էր դառել հարևան պետությունների համար։

Մոնղոլական շրջանի պարսկական պատմագիրների վկայություններից երևում է[2], որ Ղազան խանը աշխատել էր պահպանել

[1] Տե՛ս «ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 24 (Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից պետ. Ձեռագրատան № 3722 ձեռագիր 1304 թվի)։

[2] Տե՛ս *Тизенгаузен*, Сборник материалов, т. II, էջ 69, 72, 79, 82—84։

թարեկամական հարաբերություններ Ոսկե Հորդայի հետ, ուր իշխում էր նրա ժամանակ Տոխտա խանը (1290—1312)։ Պատմագիր Վասաֆի ասելով.

«Երբ Մանգու-Տիմուրի թագավորության ժառանգը դարավ Տոխտան՝ դեսպանների պարբերական ժամանման և հաճախակի հարաբերությունների շնորհիվ ճանապարհը նորից բացվել էր առևտրականների և օրթաղների համար ու միջոցներ էին ձեռք առնված ճանապարհորդների անվտանգության և անդորրության համար։ Առանի երկիրը ալեկոծվում էր երթևեկող սայլերի, ստրուկների, ձիերի և ոչխարների բազմության պատճառով։ Այդ երկրների ապրանքներն ու հազվագյուտ իրերը, որոնք այնքան տարիների ընթացքում չէին արտահանվում՝ նորից դրվեցին շրջանառության մեջ»[1]։

Պահպանելով բարի հարևանական հարաբերություններ Ոսկե Հորդայի հետ՝ Ղազան խանն ուղեց ապահովել իր երկրի հարավարևմտյան սահմանները և իր զենքը դարձրեց Եգիպտոսի դեմ, որը փխանության ամենահզոր թշնամին էր։

13-րդ դարի վերջերում մամլուքների սուլթանությունը չափազանց զորեղացել էր։ 1289 թվին Ալֆի սուլթանը նվաճել էր Տրապոլիս քաղաքը, 1291 թվին նրա որդին՝ Աշրաֆը գրավել էր Աքքա քաղաքը և քրիստոնյաներն այնուհետև առանց պատերազմի թողել էին գրեթե ամբողջ ծովեզերքը, որին տիրել էին մամլուքները։ Հետևյալ տարին, 1292 թվին, Մելիք Աշրաֆը մտել էր Կիլիկիա և վերցրել ու ավերել էր Հռոմկլան, որը Հայոց կաթողիկոսների աթոռանիստ կենտրոնն էր։ Նա գրավել էր այնուհետև, հաշտություն կնքելով Հեթում Բ-ի հետ, Բեհեսնի բերդաքաղաքը և այլ վայրեր։

Հեթում Բ-ի և նրա եղբայրների ժամանակ (1289—1305) Կիլիկիայի թագավորության դրությունը խիստ ծանր էր ու հուսահատական։ Բացի արտաքին հարձակումներից, տեղի էին ունենում այս ժամանակ գահակալական ներքին երկպառակություններ եղբայրների մեջ ու նաև կրոնական հուզումներ ու խռովություններ բանակցությունների պատճառով, որ Հեթում Բ-ը և կրոնական մերձավորության կուսակիցները վարում էին Հռոմի պապի հետ՝ արևմտյան քրիստոնեությունից օգնություն ստանալու ակնկալությամբ։

---

[1] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, т. II, էջ 82։

Կիլիկիայի թագավորությունը իր փրկության հույսը դրել էր, բացի այդ, նաև Ղազան խանի վրա, որի մոտ եկել էին Հեթում Բ-ը ու նրա եղբայր Սմբատը և կնքել էին համաձայնություն (1295 և 1297 թվերին)։ Դաշնակցության նորոգումը մոնղոլների հետ առիթ դարձավ նոր հարձակումների Կիլիկիայի վրա։ 1298 թվին, ինչպես վկայում են հայկական աղբյուրները, Կիլիկիա արշավեց Եգիպտոսի սուլթան Մանսուր Խուսամեդդին Լաջինը, որը շատ ավերածություններ գործեց երկրի դաշտային շրջաններում[1]։ Բայց 1299 թվի վերջերում մեծ զորքով եկավ Ասորիք Ղազան խանը և, միանալով հայերի հետ, առաջ շարժվեց դեպի Հեմս քաղաքը, և այստեղ, Հեմսի մոտ, ծանր պարտության մատնեց եգիպտական զորքերը և նրանց ի փախուստ դարձրեց։

Այս հաղթական ճակատամարտը տեղի էր ունեցել, ինչպես վկայում է Ռաշիդեդդինը, 1299 թվի դեկտեմբեր ամսի 23—24-ին Հեմս քաղաքի հյուսիսակողմում Աբբարիկ դետի մոտերքում[2]։ Նույն թվի դեկտեմբեր ամսի 31-ին Ղազան խանը, հալածելով եգիպտացիներին, հասել էր մինչև Դամասկոս, որը անձնատուր եղավ ու ավերածության չենթարկվեց։ Դամասկոս քաղաքի մեծամեծներն ու իշխանավորները նրան ընդառաջ եկան, հպատակվեցին նրան ու խնդրեցին տալ իրենց զինվորական կառավարիչ։

Ղազան խանի զորամասերը, ինչպես հաղորդում է Ռաշիդեդդինը, կոտորելով թշնամուն՝ հասել էին մինչև Գազա[3]։ Շուտով սակայն, 1300 թվի փետրվար ամսին՝ Ղազան խանը, թողնելով Ասորիքում պահապան զորքեր Խութլուշահի և Չոբանի հրամանատարության տակ, իր մեծ զորաբանակի հետ վերադարձավ Թավրիզ։ Նրա հեռանալուց հետո, նույն 1300 թվին ապստամբեցին Դամասկոսը և Ասորիքը և մոնղոլական պահապան զորքը հարկադրված եղավ դատարկել երկիրը։

Այնուհետև Ղազան խանի և Կիլիկյան թագավորության զորքերի արշավանքներն Ասորիքում, որոնց միացած էին հայ-վրացական զորքերը Վրաց թագավորության աթաբեկ ու սպասալար Զաքարյան Շահնշահի առաջնորդությամբ[4], տեղի ունեցան մի քանի

---

[1] Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 29. Ալիշան, Հայապատում, էջ 503 (հիշատակագիր)։

[2] Տե՛ս Рашид ад-дин, Сборник летописей. т. III, русс. перевод Арендса, էջ 183—184։ Համեմատե Հեթում պատմիչ, գլ. ԽԱ, էջ 60—61։

[3] Նույնը, էջ 185։

[4] Տե՛ս «Անանուն ժամանակագրություն», էջ 29. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղ-

անգամ 14-րդ դարի առաջին տարիներում Լաչինի հաջորդ Մելիք Նասիրի դեմ։ Սակայն այս արշավանքներից վերջինը հաջողություն չունեցավ։ 1303 թվին Ղազան խանի զորապետ Խութլուշահը, թեև կարողացավ գրավել Հեմսը և Դամասկոսը, բայց ծանր պարտություն կրեց Դամասկոսի հարավակողմում և իր զորքի մնացորդներով ետ նահանջեց Միջագետք[1]։ 1304 թվին մեռավ Ղազան խանը, և Կիլիկիայի Հայոց թագավորությունը մնաց անհույս ու անապավեն՝ շրջապատված հզոր թշնամիներով։

*1299—1303 թթ.* վերոհիշյալ արշավանքները, կարելի է ասել, իլխանության վերջին փորձերն էին ընկճելու մամլուքների հզորությունը և նրանց դուրս վտարելու Ասորիքից և Պաղեստինից։ Հարձակումներն այս անգամ խիստ ուժեղ էին և վտանգավոր էին Եգիպտոսի սուլթանության համար։ Այս արշավանքների ընթացքում մոնղոլական և քրիստոնեական միացյալ զորքերը պետք է օգնություն ստանային նաև Եվրոպայից։

> «Սակայն, ինչպես սովորաբար լինում է,— ասում է Ավգուստ Մյուլլերը,— քրիստոնյաների գործերը և նրանց գեղեցիկ խոսքերը իրար չէին բռնում»[2]։

Եվ Կիլիկիայի հայկական թագավորությունը դիմեց 14-րդ դարում դեպի կործանում՝ դրա հիմնական պատճառներից մեկը, ինչպես այժմ կարծում են, Եվրոպական պետությունների էին և նրանց երկմիտ քաղաքականությունը։

---

քուրները, II, էջ 61։ Օրբելյան Տարսայիճի մահից հետո (+1290) և Շահնշահից առաջ Հայոց Թագավորության սպասալարն էր Սադուն աթաբեկի որդի Խութլու Բուղան, սակայն սրա սպասալարության տևողությունը որոշ չէ. տե՛ս Ստեփանոս Օրբելյան, «Ժամանակագրություն», էջ 31. Սամուել Անեցի (շար.) էջ 164. Ալիշան, Հայապատում, էջ 529։

[1] Տե՛ս Հեթում պատմիչ, գլ. ԽԲ—ԽԴ. էջ 62—66. Ալիշան. Հայապատում (Ներսես Պալինց), 521—524. Սամուել Անեցի (շարուն.), էջ 165. «Անանուն ժամանակագրություն», էջ 29 և ուրիշ.։ Համեմատե Рашид ад-дин, Сборник летописей, III, էջ 196։

[2] Տե՛ս «История Ислама», т. III. էջ 284։

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

# ԻԼԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

**1. Օլջեյթու (1304—1316)։— Հալածանքներ քրիստոնյաների դեմ։— 2. Հատուկ գլխահարկի գանձումը քրիստոնյա հպատակներից։— Պաշտոնյաների և հարկահանների կեղեքումները։— 3. Աբու-Սեյիդ (1316—1335)։— Կռիվները Ոսկե Հորդայի հետ (1319, 1325 և 1335 թվերին)։— 4. Հայ բնակչության արտագաղթը։— 5. Անիի տնտեսական ծանր վիճակը։— Աբու-Սեյիդի հրովարտակը ապօրինի տուրքերի վերացման մասին։— 6. Խասինչու հայտարարված Անիի անթվական արձանագրությունը։— 7. Արձանագրության թվականի մասին սխալ կարծիքները։— Անիի երկրաշարժը։— 8. Ղուռումչիի 1319 թ. և Չոբանի ու նրա որդիների 1327 թ. ապստամբությունները։— 9. Հուլավյանների պետության անկումը։— Ոսկե Հորդայի նոր արշավանքը (1336 թ.)։— 10. Արփա խանի սպանությունը։— Հասան մեծ և Հասան փոքր։— 11. Հայաստանի աղետալի դրությունը ըստ ժամանակակից հիշատակարանների։ Իլխանության բաժանումը բազմաթիվ անկախ իշխանությունների։**

*Ղազան խանին հաջորդեց նրա եղբայր Օլջեյթուն (1304—1316), որն անվանվում է նաև Մուհամմեդ Խուդաբանդա (=«ծառա Աստծու»), իսկ հայկական աղբյուրներում՝ «Ղարբանդա» կամ «Խարբանդա» (=«ծառա էշի»)։ Սա իլխանության կենտրոնը փոխադրեց Թավրիզից Սուլթանիե, որը նրա ժամանակ արդեն դառել էր հոյակապ քաղաք։*

*Գահ բարձրանալուց հետո իր իշխանության առաջին տարիներում Օլջեյթուն, ինչպես վկայում է Հեթում պատմիչը[1], քրիստոնյաների նկատմամբ վարում էր բարեմիտ քաղաքականություն, բայց շուտով նա, ընկնելով մահմեդական իր շրջապատի ազդեցության տակ՝ փոխեց իր այդ քաղաքականությունը և քրիստոնեության դեմ հարուցեց ծանր հալածանքներ։ Այդ հալածանքները հատկապես*

[1] Հեթում պատմիչ, գլ. խե, էջ 67։

Հայ ժողովրդի վերաբերմամբ մատնանշված են ժամանակակից հայ ձեռագրերի հիշատակարաններում ու նաև Գրիգոր եպիսկոպոս Կարնեցու վկայաբանության մեջ, որ նահատակվել էր Կարինում 1321 թվին։ Այս վերջին գրվածքի վկայությունը հալածանքների մասին հարկ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։

«Նեստորաց ազգի բռնակալության ժամանակ,— պատմում է վկայաբանության Անանուն հեղինակը,— նորից զորացավ Իսմայելյան ազգը և հարուցանում էր հալածանքներ բոլոր քրիստոնյաների, մանավանդ մեր Հայոց աշխարհի դեմ։ Եվ հազարային չար հողմերը հնչեցին, ինչպես Դեկոս, Դիոկղետիանոս և Հուլիանոս Ուրացող ամբարիշտ թագավորների ժամանակ,— որովհետև Նեստորաց ազգը ընդունեց Իսմայելականների կրոնը և ըստ իրենց մարմնականասեր կրոնի օրենսդրի՝ հանձն առավ թլփատման ենթարկվելու և, ծառայելով Իսմայելականներին՝ շատ չարիքներ պատճառեց քրիստոնյաների եկեղեցիներին և աստծու պաշտոնյաներին աշխատեց հետ կասեցնել աստծու սուրբ եկեղեցիներից։ Նրանք եկեղեցիները շատ տեղերում թալանեցին ու քանդեցին..... Եվ բռնելով քրիստոնյաներին՝ դառն կերպով տանջում ու չարչարում էին, որպեսզի նրանք ուրանան իրենց քրիստոնեական հավատը.....։ Այնուհետև նրանք նորից տեղի տվին ու քրիստոնյաների վրա հարկ դրին և ամեն մի գլխից առնում էին յոթը-ութը դահեկան յուրաքանչյուր տարի. պահանջում էին, որ նրանք կամ ուրանան Քրիստոս կամ տան դահեկանը, որը խարաճ էր։ Իսկ քաջահավատները և կորովիները չընդունեցին նրանց խաբեբա աղանդը, այլ հանձն առան վճարել յուրաքանչյուր տարի հարկը։ Եվ մեր դասը ու քրիստոսադավան քրիստոնյաները մտան հարկերի լծի տակ և գոհությամբ տալիս էին իրենց ինչքը և վաճառում էին իրենց գույքը ու տալիս էին յուրաքանչյուր տարի. հարկը առնում էին և տասներկու տարեկան երեխաներից. և շատերը գաղթեցին երկրից հարկի պատճառով»։

[«Ընդ ժամանակս բռնակալութեանն ազգին Նեստորաց՝ կրկին զօրացեալ ազգն Իսմայէլեան՝ յարուցանէին հալածանս ի վերայ ամենայն քրիստոնէից, մանաւանդ ի վերայ աշխարհիս Հայոց։ Եւ չար հողմունք հազարային հնչեցին հանգոյնօրէն ամբարիշտ թագաւորացն Դեկոսի, Դիոկղետիանոսի և Յուլիանոսի Ուրացողին, քանզի ազգն Նեստորա-

ցըն դառնային ի դին Իսմայէլականաց և յաղագս մարմնականասէր կրօնից օրէնսդրին իւրեանց՝ յանձն առնուին զծլփատութիւն և արբանեկութեամբ նոցին բազում չարիք անցուցանէին յեկեղեցիս քրիստոնէից և զպաշտօնեայս Աստուծոյ խափանել ջանային ի սուրբ եկեղեցեայցն Աստուծոյ։ Եւ ի բազում տեղիս յաւարի առեալ քակէին, զոր Տէր Յիսուս խափանեաց հոգով զօրութեամբ իւրով և խափանեսցէ զյարձակումն անօրինացն։ Եւ ըմբռնեալ զքրիստոնեայսն դառն տանջանօք նեղէին ուրանալ զքրիստոսական հաւատն՝ որ ի Հայր և յՈրդի և յամենասուրբ Հոգի։ Դարձեալ տեղի ետուն և եդին հարկս ի վերայ քրիստոնէից և յամենայն գլխոյ առնուին եօթն ութ դահեկան՝ յամենայն ամի, կամ ուրանալ զՔրիստոս կամ տալ զդահեկանն՝ որ է խարաճ. զոր ոչ հնազանդեցան քաջահաւատքն և արիքն խաբեբայ աղանդից նոցա, այլ յանձն առին տալ զհարկն յամենայն ամի։ Եւ մեբային սեռս և քրիստոսադաւան քրիստոնեայք մտանէին ի լուծ հարկացն և գոհութեամբ տային զինչս և ստացուածս վաճառէին և տային յամենայն ամի. և յերկոտասանամեայ մանկանէ առնուին զհարկն. և բազումք տարագիրք եղեալ վասն հարկին»][1]։

Ժամանակակից երկու հայ ձեռագրերի հիշատակարաններում՝ օրինակված 1306 և 1307 թվերին, ինչպես վկայում է Չամչյանը[2], մատնանշված է, որ Ուլջեյտուն այնքան էր չարացել քրիստոնյաների դեմ, որ հրաման էր տվել, որ մահմեդական դարձնել բռնի կերպով բոլոր քրիստոնյաներին, որոնք ապրում էին Մեծ Հայքում, Աղվանքում և Վրաստանում։ Եվ երբ այդ չհաջողվեց նա բոլորի վրա ծանր հարկեր դրեց և պահանջեց, որ բոլորը՝ մեծից մինչև փոքրը վճարեն խարաճ՝ 40—30 սպիտակից մինչև 10 սպիտակ։

Երևանի Մատենադարանի «Պատմութիւն Վարդանայ Արևելցւոյ» № 3074 ձեռագրի հիշատակարանը ևս տալիս է այդ մասին հետևյալ տեղեկությունը.

«Ի ժամանակի յորում էր Թուականս մեր ՉԾԶ (1307), ի պակասել արդարութեանց և ի բազմանալ անօրէնութեանց մերոց, առաւել բազմացաւ բարկութիւն և սաստկացաւ չա-

---

[1] Տե՛ս «Հայոց նոր վկաները», գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903, էջ 121—122։

[2] Տե՛ս Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 299։

րութիւն ազգին Նետողաց ի վերա մեր՝ ազգիս քրիստոնէից, քանզի եւ տղայ հասակաւ այր մին ի Խորասանայ միականի, համանման Ներինն, որ գալոցն է, անուն նորա Խարբանդա. որ թարգմանի իշու ծառայ, որդի Արղունին որդոյ Հուլայունին: Սա բառնալ կամեցաւ զքրիստոնէութիւն աշխարհէս Հայոց և Վրաց, զոր խափանեաց տէր և ոչ կատարեցաւ չար խորհուրդ նորա: Յետոյ այլ բանս մտաւ ածեաց արբանեակն սատանայի, առաքեաց ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և հարկ առնուլ ըստ մարդաթուի խ (40) արծաթո մինչ ի ժ (10)՝ ըստ կարիս»[1]:

Հիշատակարաններից հայտնի է, բացի այդ, որ համաձայն Ուլջեյտուի կարգադրության, քրիստոնյաները մահմեդականներից տարբերելու համար, իրենց մեջքերի վրա պետք է ունենային սև կամ կապույտ նշաններ: Այդ մասին ունենք ուշագրավ վկայություն, օրինակ, Երևանի Մատենադարանի 1307 թվի № 4881 ձեռագրի հիշատակարանում.

«Եւ նեղեն [ազգն Նետողաց] զամենայն քրիստոնեայք դառնալ ի պատիր յոյսն իւրեանց, զոմն նեղեն, զոմն տանջեն, զոմն սպանանեն, զոմանց զինչսն յափշտակեն. և ոչ այնու շատացեալք, այլ և եդին ի վերա ամենայն քրիստոնէիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերա ուսոց թիկանցըն կտաւս սեաւս, զի որք տեսցեն զնոսա՝ ճանաչեսցեն եթէ քրիստոնեայք են և հայհոյեսցեն. և ամենևին ջանան, զի մի երևեսցի քրիստոնէութիւն ի վերա երկրիս»[2]:

Հալածանքները և կրոնական անհամբերողությունն ու արհամարհանքը դեպի քրիստոնյաները ունեցան սրանց համար ծանր հետևանքներ, մասնավորապես, և այն պատճառով, որ շնորհիվ այս ճնշումների սաստկացան նորից պաշտոնյաների ու հարկահանների անիրավությունները քրիստոնյա ազգաբնակության նկատմամբ: Հայ ձեռագրերի հիշատակարաններում, որ գրված են Ուլջեյտուի իշխանության վերջին տարիներում՝ մատնանշվում է հաճախ, որ շատ տեղերում հարկահանները անպատիժ կերպով նեղում ու կեղեքում էին հայերին և պահանջում էին նրանցից կրկնակի ու

[1] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 46:

[2] Նույնը, էջ 47:

պօրինի հարկեր[1]։ Իսկ Գլաձորի վանքի ձեռագրի մի հիշատակարան, որ մեջ է բերված Ալիշանի «Հայապատում»-ում, էջ 526, վկայում է նմանապես, որ Հայոց ՉԿԳ թվին [=1314] «համարողքն ի Վայուձորս եկին, ու մինչև ի յամսական տղայն համարէին»։

Ուլջեյտուին հաջորդեց նրա փոքրահասակ որդին՝ Աբու-Սեյիդը (1316—1335), որը փաստորեն վերջին իլխանն էր։ Սրա իշխանության ժամանակ սկսվեցին ինքնագլուխ և ըմբոստ ամիրաների և զորապետների երկպառակությունները։ Իսկ այնուհետև՝ սրա մահից հետո իլխանությունը գահավիժորեն դիմեց, ինչպես կտեսնենք, դեպի իր վերջնական անկումը։

Ոսկե Հորդան, որը լարված ուշադրությամբ հետևում էր գործերի դրությանը հարևան այս երկրում՝ Աբու-Սեյիդի ժամանակ նորից ուզեց նվաճել ու տեր դառնալ Ադրբեջանին և Հայաստանին, որոնց միջով տեղի էր ունենում միջազգային մեծ առևտուրը Եվրոպայի ու Փոքր Ասիայի հետ։ 1319 թվին Ոսկե Հորդայի խան Ուզբեկը (1312—1340) անթիվ զորքերով մտավ Դերբենդի ճանապարհով Անդրկովկաս և, ավերելով ու կողոպտելով Շիրվանը, հասավ մինչև Կուր գետը։ Ուզբեկի դեմ ռազմերթի ելավ Աբու-Սեյիդի մեծ զորավար Չոբանը՝ իլխանության փաստական կառավարիչը, և սպառնալով թշնամուն թիկունքից՝ նրան փախուստի մատնեց։ Այնուհետև կռիվներ տեղի ունեցան Ոսկե Հորդայի և իլխանության միջև նաև 1325 և 1335 թվերին։ Սակայն Ուզբեկ խանի բոլոր ջանքերը՝ տիրելու Ադրբեջանին՝ ապարդյուն անցան։ Արշավանքների միակ հետևանքը այն եղավ, որ կողոպտվեցին ու ավերվեցին որոշ շրջաններ և Արևելյան Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի[2]։

Աբու-Սեյիդի ժամանակ թեև հալածանքները քրիստոնյաների դեմ բավական մեղմացան, սակայն ծանր հարկերը և հարկահանների ու պաշտոնյաների կամայականություններն ու կեղեքումները արդեն այնպիսի ծանր դրություն էին ստեղծել աշխատավոր ժողովրդի համար, որ հայկական որոշ շրջանների բնակչության մի մասը, տեսնելով, որ պահանջվող հարկերն իր ուժերից վեր են՝ ստիպված եղավ գաղթել օտար երկրներ։ Խիստ ծանր էր, մանավանդ, Զաքարյան Հայաստանի քաղաքների դրությունը, որոնք տրանզի-

---

[1] Հարկերի ծանրության մասին տե՛ս Երևանի Մատենադարանի 1310 թվի № 380 և Լալայանի 1314 թվի № 485 (72) ձեռագրերի հիշատակարանները. «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 66 և 101—102։

2 Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 86, 89, 92, 93, 100, 101, 142, 143։

*տային ճանապարհների տեղափոխության պատճառով՝ կորցրել էին իրենց միջազգային առևտրական նախկին նշանակությունը։*

*Մասնավորապես, Անիի տնտեսական ծանր վիճակը պարզ կերպով մատնացույց է արված արդեն 1301 թվի Զաքարյան Աղբուղայի հետևյալ արձանագրության մեջ.*

> *«Թվ. ՉԾ [=1301]. Շնորհիւն Աստուծոյ ես Աղբուղէս, որդի Իւանէի, թոռն մեծացն* (sic) *Զաքարիայի, եկի յԱնի հրամանաւ Շահնշահի, տեսայ զքաղաքս աղքատացեալ և խիստ ի վէր մնացել. զի շատ հարկ էր ի վերայ դրած, որ ի սկզբանէ չէր եղել։ Ես Դ հարկ ի վեր կալա վասն երկար կենդանութեան և արևշատութեան եղբարցն իմոց Շահնշահի և իմ և վասն իմ նախնեաց գերեզմանին համար թողի զեզինն հազրն, զկովին համբրէլէն, զոչխարին ալլհակն...»[1]։*

*Աղքատացած Անի քաղաքի հարկերի թեթևացման մասին տեղեկություններ են հաղորդված նաև աթաբեկ Շահնշահի կնոջ և Սարգիս Ծիլենց բաժրարի 1320 թվի արձանագրություններում[2]։*

*Հայաստանի, ինչպես և Անի քաղաքի, տնտեսական կյանքի քայքայումը ցայտուն կերպով նկարագրված է Անիի Մանուչեի մզկիթի պատի վրա փորագրված Աբու-Սեյիդի պարսկերեն արձանագրության մեջ, որը գտնված է Անիի ավերակներում և որի ճըշգրիտ թարգմանությունը տվել է Բարտոլդը։ Այդ արձանագրությունից պարզ երևում է, որ Անիի և այլ գավառների բնակիչները ծանր ու ապօրինի հարկերի պատճառով թողնում էին երկիրը և գաղթում։ Աբու-Սեյիդը, որպեսզի երկրի ամայացման առաջն առնի, ուզեցել է գաղթականությունը կանգնեցնել, պաշտպանելով ժողովուրդը սնանկացնող ու ապօրինի հարկերից։ Նրա հրովարտակ-արձանագրությունը հարկ եմ համարում մեջ բերել ամբողջությամբ առանց վերջին տողերի, որ կարևոր չեն։*

> *«Աստված պարունակում է իր անքավության մեջ իր ծառաներին։ Աբու-Սեյիդ Բահատուր խան։ Հրովարտակ [եառլըխ]։ Երկրի երեսի ներկա թագավորի մայրաքաղաքից՝ աշխարհի սուլթանի, որը երկրավոր աշխարհի ու հավատի փառքն է և որի թագավորությունը աստված թող հավիտենական անե։ Քանի որ արևելքից մինչև արևմուտք աշխարհի բնակիչները գտնվում են նրա գթության ու արդարության*

---

*[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 151։ Համեմատե Ալիշան, Շիրակ, էջ 62։*
*[2] Նույնը, էջ 160։*

ներքո թող ամենակալ աստվածը առավելապես կտրուկ անի նրա կարգադրությունն ու հրամանը։

Այս է նրա կարգադրությունը։ Քանի որ երկրի մակերեսը ենթակա է նրա հրամանին և նրա գրչի շարժումից է կախված դիվանի կարգադրությունը՝ թող ոչ ոք չհամարձակի որևէ բան պակասեցնել կամ ավելացնել. թող բացի տամղայից և արդարացի մաքսից ուրիշ ոչինչ չառնեն և թող ոչոքից խալանի, նեմերիի և թարխի պատրվակով ոչինչ չպահանջեն. նրա համար, որ սրանից առաջ Անի քաղաքում և Վրաստանի այլ շրջաններում խալանի, նեմերիի, անիրավացի հատկացումների ու թարխի պատրվակով ապօրինի տուրքեր էին առնում և բռնություն էին անում ու գործ դնում և երկիրը սկսեց ամայանալ, հասարակ ժողովուրդը ցիր ու ցան եղավ և քաղաքի ու շրջանի տանուտերերը թողին խալանի ու դռնագրի պատճառով իրենց անշարժ ու շարժական գույքն ու ընտանիքը և հեռացան»...[1]

Աբու-Սեյիդի (1316—1335) իշխանության ժամանակաշրջանին է վերաբերում, ամենայն հավանականությամբ, Գրիգոր աղա և Հովհաննես տանուտերերի անթվական արձանագրությունը, որը գտնվում էր Անիի մեծ կամ ավագ դռան վերև։ Ըստ այդ արձանագրության Գրիգոր աղան և Հովհաննեսը՝ թեթևացնելու համար Անիի բնակչության հարկային ծանր դրությունը՝ վերացրել էին նախկին հարկերից շատերը։

«Գթութեամբն մարդասիրին և անմահ բանին Աստուծոյ,— ասված է այդ արձանագրության մեջ,— և վասն յերկար կենդանութեան արքայից արքային աստուածադիր փաթշահին և աստուածիմաստ իշխանաց իշխանին աշխարհաշէն և ի թագաւորութեան Վրաց աշխարհիս, որ եղև մայրաքաղաք Անի խասինջու օ եւ ի տէրութեան քաղաքիս աստուածասէր պարոնացն Գրիգոր աղին և Յովհաննիսի եւ յեպիսկոպոսութեան տէր Յովհաննիսի ողորմածն Աստուած հայեցաւ ի դժուարութիւն քաղաքիս և խորհուրդ բարի ծագեց ի սիրտս պարոնացն Գրի[գորի] եւ Յով[հաննիսի], որ զքաղաքս մեր նորոգել շինեցին և զամենայն հարկապահանջութիւն բարձին զմ[ալ] և զթաղար, զհեծել, զղափչուռ [=զղփչուր],

---

1 Տե՛ս Бартольд, Персидская надпись на стене Анийской мечети Мануче, էջ 6—7։ Համեմատե Ալիշան, Շիրակ, էջ 56։

զախսրթամարն եւ զդռնագիրն ի բաժ O ի դաղմս եւ ի մուտայիպն դարձուցին, եւ զաթոռին հարկն, որ յետոյ ի չարաց դրած էր՝ զկապալն յեպխկոպոսէն բարձին և յառաջին սահմ...»[1]։

Մեջբերված այս արձանագրության ժամանակը, որ պատմական կարևոր նշանակություն ունի՝ հայագիտական երկերում ըստ իս սխալ է մեկնված։ Ալիշանը արձանագրության ժամանակը դնում է 11-րդ դարում Շեդդադյան Մանուչեի ժամանակ, կարծելով, ըստ երևույթին, որ Անիի նորոգումը հավանական է ենթադրել հենց այս դարաշրջանում[2]։ Այս կարծիքը, իհարկե, մի պարզ թյուրիմացություն է, որովհետև արձանագրության մեջ հիշատակված են մոնղոլական շրջանի հարկերը՝ մալ, թաղար, ղփչուր և տամղա։ Ընդունելի չէ ըստ իս նաև Մառի ենթադրությունը, որը կարծում է, որ Անին կարող էր խասինջու դառած լինել 1251 թվին՝ նույն այն ժամանակ, երբ ճանաչվել էր իբրև ինջու, այսինքն՝ խանական տան անձնական կալված՝ Օրբելյան Սմբատի երկիրը[3]։ Ավելի մոտ է ճշմարտության Բրոսսեի ենթադրությունը, որն արձանագրության ժամանակը դնում է 14-րդ դարի սկզբում[4]։

Ինչպես վերև ասացինք, Գրիգոր աղա և Հովհաննես տանուտերերի արձանագրությունը գրված է, հավանորեն, Աբու-Սեյիդի իշխանության ժամանակ և, ըստ երևույթին, որոշ կապ ունի վերջինիս վերոհիշյալ պարսկերեն հրովարտակի հետ՝ գրված 1320—1335 թվերի ժամանակաշրջանում[5], որի մեջ, ինչպես տեսանք, նույնպես մատնանշված էր, որ Անի քաղաքի բնակիչներից «բացի տամղայից և արդարացի մաքսից ուրիշ ոչինչ չառնեն»։ Եթե ընդունելի համարվի նոր այս ենթադրությունը, այդ դեպքում՝ հավանական կլինի նաև ենթադրել, որ Անիի 1342 և 1348 թթ. արձանագրությունների մեջ հիշատակված «Վասիլ՝ որդի Գրիգորոյ» և «Շապադին՝ որդի Յովհանիսի»[6] կարող են լինել հենց Անիի վերոհիշյալ Գրիգոր աղա և Հովհաննես տանուտերերի որդիները։

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 221։ Համեմատե Ալիշան, Շիրակ, էջ 40։

[2] Տե՛ս Շիրակ, էջ 98 և 101։

[3] Տե՛ս *Н. Марр,* Новые материалы по армянской эпиграфике СПб, 1893, էջ 77—80։

[4] Տ՛ս *Brosset*, Les ruines d'Ani, St.-Pet. 1860—1861, էջ 19։

[5] Տե՛ս *Бартольд,* Персидская надпись, էջ 8։

[6] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 167 և 169։ Գրիգորի որդի Վասիլը, որը Զաքարյանների ժառանգական հարկահան ու դատավոր Գրիգոր Խուցեսի տոհմիցն էր, հայկական ձեռագրերի հիշատակարանների մեջ անվանվում է սովորաբար Ասիլ. տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 15։

Մեր նոր հետևությունը վերոհիշյալ արձանագրության ժամանակի մասին խիստ կարևոր է այն տեսակետից, որ նա միջանկյալ կերպով պարզում է հայկական ավանդության ստուգությունը Անիում տեղի ունեցած շարժի մասին 14-րդ դարի առաջին քառորդի վերջերում, որ մի շարք աշխատություններում համարվել է վիճելի[1]։ Անթվական արձանագրության մեջ պարզ ասված է, որ Գրիգոր աղան ու Հովհաննեսը Անի քաղաքը նորոգել էին և շինել, ուստի և, հիմնվելով կարևոր այս վկայության վրա, կարելի է հավանական համարել, որ քաղաքի այդ նորոգումը, ինչպես և նրա հայտարարումը խասինջու, կարող էին տեղի ունեցած լինել շարժից հետո։ Բարտոլդի և Մառի կարծիքը ճիշտ է միայն մի կետում, որ Անին երկրաշարժից հետո «ամբողջությամբ չէ կործանվել»[2] և իբրև քաղաք գոյություն է ունեցել նաև 14—15-րդ դարերում։ Ինչպես հայտնի է, Անիում թաթարական ու թուրքմենական դրամներ են կտրվել 1375 կամ 1376 թվին և նույնիսկ 15-րդ դարում[3]։

Աբու-Սեյիդի ժամանակ, ինչպես վերև ասացինք, իլխանության մեջ սաստկացան ելույթները և ըմբոստացումները զորապետների ու կուսակալների, որոնք չէին ուզում ենթարկվել կենտրոնական իշխանության կամ ձգտում էին իրենց երկրները դարձնել անկախ ու ինքնուրույն։ Այդպիսի մի ելույթ էր 1319 թվի Ղուռումշիի ապստամբությունը Անդրկովկասում, որի ժամանակ մեծ չափով ավերվեց, գլխավորապես, Գեղարքունիքը։ 1319—1320 թթ. Հովհաննես գրչի հիշատակարանը, նկարագրելով այս ապստամբությունը՝ վկայում է, որ Գեղարքունիքում կողոպտվեցին եկեղեցիները և գերվեցին երեխաներն ու ծերերը, իսկ մյուս բնակիչները, թողնելով իրենց գույքը, թաքնվեցին քարանձավներում։ Բայց շուտով, ասում է հիշատակարանի հեղինակը, ապստամբությունը զսպվեց և Ղուռումշին ու իր զորքը պարտվեցին և կոտորվեցին[4]։ Ղուռումշիի ապստամբությունը, ըստ երևույթին, տեղի էր ունեցել Անիի խասինջու հայտարարվելուց առաջ։

Աբու-Սեյիդի ժամանակ խիստ զորեղացել էին և վտանգավոր էին դառել պետության միության համար նրա մեծ զորապետ ու

---

1 Տե՛ս Бартольд, Персидская надпись, էջ 10։ Марр, Ани, էջ 44, 125 և 128։ Համեմատե նաև Ալիշան, Շիրակ, 103։

2 Տե՛ս նույնը։

3 Տե՛ս Марр, Ани, էջ 44։

4 Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 205, ծանոթ.։ Համեմատե Երևանի Թանգարանի ձեռ. № 88։ Նույն այս դեպքերը հիշատակված են նաև Սամուել Անեցու (շարուն.) մոտ, էջ 167։

*վեզիր Չոբանը և սրա որդիները, որոնք իլխանության զանազան շրջանների կուսակալներն էին։ Աբու-Սեյիդը 1327 թվին ընկճեց նաև այս հզոր ընտանիքի ապստամբությունը*[1]*։*

*Սակայն Աբու-Սեյիդի մահից հետո (+1335) այլևս հնարավոր չեղավ պահել պետության միությունը։ Մոնղոլական զորավարները և ցեղապետները փաստորեն իրենց ձեռքը առան իշխանությունը և Աբու-Սեյիդի հաջորդները պարզապես դրածու անվանական խաներ էին, որոնք ոչ մի նշանակություն չունեին և խաղալիք էին սրանց ձեռին։ Այս արդեն իլխանության հոգեվարքն էր, որը խիստ կարճատև եղավ և տևեց միայն ինը տարի։*

*Մոնղոլական Սուլդուզ և Ջելայիր ցեղերի առաջնորդները՝ Չոբանյանները և Ջելայիրյանները՝ մրցելով ու պատերազմելով իրար հետ՝ 1335—1344 թվերի մոտ ինը տարվա կարճ ժամանակամիջոցում նստեցրին և գահից գցեցին կամ սպանեցին ութը խան և 1344 թվին իլխանների մեծ պետությունը վերջնականապես քայքայվեց։*

*Աբու-Սեյիդից հետո Հուլավյանների պետության վերջին իլխաններն էին՝ Արփա 1335—1336, Մուսա 1336, Մուհամմեդ*[2] *1336—1338, Տողա-Տիմուր 1337 (+1353), Ջեհան-Տիմուր 1339—1340, Սատի-Բեկ 1338—1339, Սուլեյման 1339—1344, Նուշիրվան 1344։*

*Աբու-Սեյիդը, ինչպես վկայում է Համդալլահ Ղազվինին*[3]*, հիվանդացել և մեռել էր Առանում Հեջիրի 736 թվին ռաբի Բ ամսի 13-ին [=30 նոյեմբերի 1335 թ.], երբ նա պատրաստվում էր ետ մղել Ոսկե Հորդայի Ուզբեկ խանի հարձակումը, որը մեծ զորքով մտել էր Անդրկովկաս և հասել մինչև Կուր գետը։ Պատերազմի պատճառով գտնվելով վտանգված դրության մեջ՝ Աբու-Սեյիդի զորքերը, որպեսզի կարողանան թշնամուն դիմադրել, ինքնագլուխ կերպով, առանց բարձր ազնվականության ու ցեղապետների ժողով (ղուռուլթայ) գումարելու, իլխան ընտրեցին Արփային, որը շառավիղ էր և ժառանգ ոչ թե Հուլավուի, այլ սրա եղբոր Արիքբուղայի տոհմի։ Նորընտիր այս խանը Ոսկե Հորդայի զորքերին ցույց տվեց ուժեղ դիմադրություն և ստիպեց նրանց ետ նահանջել (1336)։*

---

[1] *Տե՛ս* Սամուել Անեցի *(շարուն.), էջ 158, 167.* Սմբատ սպարապետ *(շարուն.), էջ 123. Тизенгаузен.* Сборник материалов, III, *էջ 92, 101 և 143։*

[2] *1337 թվին Բզնունյաց գավառի Աղեթ գյուղում գրված «Ավետարան»-ի հիշատակարանում անվանված է «Մեծ ինքնակալ Մահմուտ խան», տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 296։*

[3] *Տե՛ս Тизенгаузен.* Сборник материалов, т. II, *էջ 93։*

*Սակայն նրա ընտրությունն իլխանության համար ունեցավ օրհասական նշանակություն։ Որովհետև նրան չէին ընտրել մոնղոլական բոլոր ցեղերի ներկայացուցիչները մեծ ժողովում (ղուռուլթայում)՝ ուստի և իլխանության մի շարք շրջաններ հրաժարվեցին նրան ճանաչել իլխան։*

*Սամուել Անեցու ժամանակագրության անանուն շարունակողի վկայությամբ՝ Արփա խանը իշխեց որպես իլխան միայն վեց ամիս։ Նրա դեմ եկավ Բաղդադից Աբու-Սեյիդի քեռին Ալի փաշա նոյինը, որը սպանեց նրան և իլխանության գահը տվեց Բայդու-խանի թոռ Մուսային*[1]*։ Այնուհետև թե ինքը Մուսան և թե նրա հաջորդներն անխոս գործիքներ էին Ալի փաշայի և, գլխավորապես, իրար հետ մրցող ու հակառակորդ Ջելայիրյան Հասան Վղուրկի («մեծի») և Չոբանյան Հասան Քուչուքի («փոքրի») ձեռքերում, որը Աբու-Սեյիդի վեզիր Չոբանի թոռն էր և Տամուրտաշի որդին։*

*Իլխանության հոգեվարքի վերջին տարիների ընթացքում անիշխանությունը, ավերածությունները և կողոպուտները ինչպես պետության զանազան շրջաններում, նույնպես և Հայաստանում, հասան ծայրահեղ աստիճանի։ Ինչպես ճիշտ մատնանշել է Գ. Հովսեփյանը*[2]*, այս ժամանակաշրջանին կարող է վերաբերել Դավիթ գրչի անթվական հիշատակարանը, որը գրված է Թեղենյաց վանքում։*

> *«Նետողաց խառնիճաղանջ ազգի այս ժամանակում,— ասված է հիշատակարանի մեջ,— ......ո՞վ կարող է պատմել տառապանքներն ու աղետները, քանի որ ոչ աշխարհ, ոչ քաղաք, ոչ ագարակ և ոչ սրբակրոն վանքեր խաղաղություն չգտան. այլ բոլորը նեղությունների մեջ էին և մեր երկիրն ավերվում էր ծանր հարկեր պահանջողների կողմից. որովհետև չկար ոչ թագավոր, ոչ իշխան և ոչ վերակացու, այլ բոլոր կողմերում խռովություն էր և աղմուկ»։*

---

[1] *Տե՛ս* Սամուել Անեցի *(շարուն.), էջ 158 և 168։*

[2] *Տե՛ս* Գ. Հովսեփյան, *Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 228։*

*Երևանի Մատենադարանի 1338 թվին գրված № 4813 «Աւետարանի» հիշատակարանի գրիչը ևս վկայում է, որ նա ընդօրինակել է ձեռագիրը— «ի թուական Հայոց ՉՁԷ (1338), ի ժամանակս որ ոչ ղան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև ղնաւ յերերման, և քրիստոնեայք էին հալածական և փախստական». տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 306։ Համեմատե նույն այս գրվածքում (էջ 314) նաև 1338 թվի «Առծկոյ Վանք»-ում գրված «Աւետարան»-ի հիշատակարանը։*

[«Ի ժամանակիս խառնիճաղանջ ազգիս Նետողաց... ով ոք կարէ պատմել զաղէտս տարակուսանաց, որ ոչ աշխարհ և ոչ քաղաք և ոչ ագարակ և ոչ սրբաչկրաւն վանորայք զխաղաղութիւն գտեալ, այլ համակ ի նեղութիւնս և ի խիստ հարկապահանջողաց աւերեալ լինէր աշխարհս. քան (զի) ոչ գոյր թագաւոր և ոչ իշխան և ոչ այցելու, այլ յամենայն կողմանց խռովութիւն և աղմուկ»]։

Մի ուրիշ հիշատակարանում, գրված Վերին Ագուլիսում 1340 թվին, նկարագրված է նաև Գողթն գավառի անասելի ծանր վիճակը նույն այս ժամանակաշրջանում։

«Բայց թագավորությունը,— վկայում է այս հիշատակարանը,— բարձված է, որովհետև իշխանները խռովարարներ են և, խախտված լինելով՝ աղմկում են իրար դեմ։ Անկարելի է խոսք գտնել ու պատմել հեծյալների պատճառած այն աղետն ու տագնապը, որ այս տարվա ընթացքում մեր աչքերը տեսան. սոքա, 30.000 մարդադեմ գազաններ, հարձակվելով մեր երկրի վրա՝ սրեցին նետերը, լարեցին աղեղները, հանեցին իրենց թրերը և ոտքի ելան մեր երկրի դեմ։ Եվ ո՞վ կարող է պատմել այն անօրենությունները, որ նրանք արին և գործեցին։ Նրանք գերեցին բազմաթիվ գավառներ, ավերեցին ու կործանեցին. Նրանք հափշտակեցին ամբողջ բերքը և ինչքը ու կողոպտեցին բոլոր քրիստոնյաներին. Նրանք մերկացրին ու բոբիկացրին և քրիստոնյա մարդկանց վրա ոչինչ չթողին։ Նրանք, վերցնելով խմբերով անասուններն ու տավարը՝ տարան ոչխարներն ու եզները, կովերն ու ցուլերը, էշերն ու երիվարները. Նրանք հանեցին մարդկանց հագուստները, մերկացրին և նրանց խաղք ու խայտառակ արին։ Ո՞ր աչքը ընդունակ է հանգիստ տեսնել ողորմ այդ տառապանքները և կամ ո՞ր մարդը կարող էր տեսնել ու տանել այդ չարչարանքները. որովհետև դեռ երեկ մարդիկ տան տեր էին և ամեն ինչ լիառատ ունեին, իսկ այսօր սրտաբեկված են, տխրած և նստած են մերկ մոխրի վրա. որովհետև երկիրը ամեն բարիքներով այնքան լիքն էր և հանկարծակի այնպես արին, որ շները սատակում էին սովից»։

[«Այլ բարձեալ է թագաւորութիւն, քանզի իշխանք են խռովարարք և տատանեալք, ի վերայ միմեանց աղմկեալք. զոր ոչ կարէ բերան պատմել զոր յայսմ ամի տեսին աչք

*մեր զաղէտ տարակուսանաց ի հեծելեաց. զորս երեսուն հազար մարդադէմ գազանաց ի վերայ երկրիս մերում յարձակեալք. զնետս սրեալ և զաղեղն լարեալ և զթուրս իւրեանց թափեալ՝ յարեան ի վերայ երկրիս մերում և ով կարէ պատմել զանօրէնութիւնս նոցա զոր արարին և գործեցին. քանզի բազում գաւառս գերեցին և աւերելով կործանեցին և վինչս արդիւնեաց զամենայնն յափշտակեցին և զամենեսեան զքրիստոնեայս կողոպուտ արարին, մերկ և բոկ. և ոչ թողին և ոչ մի ինչ ի վերայ անձանց քրիստոնէից. այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան զոչխարաց և զէզանց, ղկովուց և զցլուց, զիշուց և զերիվարաց, և զհանդերձս ի յանձնէ մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց. քանզի ո՞ր աչք բաւէ տեսանել զաղիողորմ տարակուսանաց. և կամ որ անձն բաւէր տեսանել և տանել այնմ չարչարանաց. որ յերեկ տան տանուտէր և ամենայն իրօք լի և այսօր բեկեալ սրտիւ և տրտմեալ և մերկ ի վերայ մոխրոյ նստեալ. քանզի այնպէս լի էր երկիրս ամենայն բարութեամբ և յանկարծակի այնպէս արարին, որ շունք ի սովոյ սատակէին»]*[1]։

*Աբու-Սեյիդի մահից հետո Հուլավյանների մեծ պետության փլատակների վրա հետզհետե, ինչպես կտեսնենք, հիմնվեցին բազմաթիվ ինքնուրույն ու անկախ մանր պետություններ, որոնք, պատերազմելով իրար դեմ՝ շարունակեցին ավերել ու տնտեսապես քայքայել Առաջավոր Ասիայի երկրները։ Բայց 14-րդ դարի վերջերում եկավ Միջին Ասիայից Լանկթամուրը, որը, վերացնելով այս մանր պետությունները՝ հիմնեց կրկին հսկայական մի նոր պետություն։*

---

1 *Տե՛ս* Մեսրոպ վ. Մախսուդյան, *Վերին Ագուլիսի և շրջակայքի հայերեն ձեռագիրը. «Արարատ», 1915 թ.,* Ե. Լալայան, *Գողթն, «Ազգագրական հանդէս», XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 165։ Համեմատե «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց* Լ. Ս. Խաչիկյան, *էջ 324։*

## Գ Լ Ո Ւ Խ Տ Ա Ս Ն Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ՉՈԲԱՆՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՋԵԼԱՅԻՐՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

**1. Հայաստանի իշխանությունները իլխանության անկման ժամանակ։— Ջաքարյանների տոհմը և նրա ապազգայնացման պատճառը։— 2. Վաչուտյանները, Օրբելյանները և մյուս իշխանությունները։— 3. Նրանց քաղաքական ու տնտեսական ծանր դրությունը։— 4. Չոբանյանների և Ջելայիրյանների իշխանությունների հաստատումը Թավրիզում և Բաղդադում։— 5. Մելիք-Աշրաֆ և Անիի ու Բջնիի ավերումը։— 6. Բջնիի վերստին նվաճումը Շահնշահ Գ-ի ձեռքով։— 7. Ոսկե Հորդայի Ջանիբեկ խանի արշավանքը Թավրիզ և Մելիք-Աշրաֆի սպանությունը։— 8. Ջանիբեկի սպանությունը և Ջելայիրյանների իշխանության հաստատումը Թավրիզում։— 9. Ուվեյսը և նրա հաջորդները։— Կռիվներ գահակալության համար և Ջելայիրյանների իշխանության քայքայումը։— 10. Թոխթամիշի զորքերի արշավանքը Ատրպատական և Թավրիզի առումը։— Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ավերումը Թոխթամիշի զորքի նահանջի ժամանակ։— 11. Գաղթական թուրքերի հոծ զանգվածները Մերձավոր Արևելքի բնակչության կազմում.—12. Օսմանյան թուրքերի հաստատումը Փոքր Ասիայում։— Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլու թուրքմենները։— 13. Հայ կուլտուրան 14-րդ դարում.— ունիթոռական շարժումը.— Եսայի Նչեցի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի։— 14. Կաթոլիկության հարող հայ իշխանները։**

*14-րդ դարի կեսերին, երբ Հուլավյանների մեծ պետությունը անդամահատվեց և բաժանվեց մի շարք անկախ երկրների՝ Հայաստանի հայկական իշխանությունները, թեև խեղճացած դրության մեջ էին, բայց բոլորն էլ գոյություն ունեին և տեղ-տեղ նրանց մեջ դեռ շարունակվում էր կուլտուրական շինարարությունը։*

*Շիրակում ու Անիում մոնղոլական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Ալիշանը[1], իշխում էր մեծ սպասալար Զաքարեի որդի Շահնշահ Ա-ը (+1261) և վերջինիս որդիներն ու թոռները։ Բանասերների նորագույն կար-*

[1] *Տե՛ս «Շիրակ», էջ 101։*

ծիքը, որ իբր թե մոնղոլները Անիի կառավարությունը հանձնած են եղել, որոշ ժամանակ անցնելուց հետո, ուրիշ հայ իշխանների՝ չի համապատասխանում աղբյուրների հաղորդած տեղեկություններին։ 14-րդ դարի առաջին կեսում Անիում ու նրա շրջանում շարունակում էին իշխել Շահնշահ Ա-ի թոռները՝ Շահնշահ Բ-ը (†1320), Վահրամը և Զաղան, որոնք բոլորն էլ արձանագրություններում կոչվում են աթաբեկներ[1]։

Հիմնվելով իր ուշադրավ դիտողությունների վրա Զաքարյանների կտրած դրամների ու Անիի միջնաբերդում գտնված տնային գործածության իրերի մասին՝ Մառը ենթադրում է[2], որ 13—14-րդ դարերում բարձր հայ ազնվականությունը, որին պատկանում էր և Զաքարյանների տոհմը՝ գրեթե բոլորովին ապազգայնացած էր և ենթարկված էր մուսուլմանական կուլտուրայի ազդեցության։ Ինձ թվում է, որ միջնաբերդի պեղումների տվյալները չեն կարող վերաբերվել բոլոր հայ իշխանական տոհմերին և հիմք ծառայել նման չափազանցված ընդհանրացման։ Զաքարյանների տոհմը, ընդունած լինելով վրաց եկեղեցու քաղկեդոնական դավանությունը՝ կապված էր, անշուշտ, ավելի վրացական, քան հայկական կուլտուրայի հետ։ Բացի այդ, նույն այդ տոհմը, խնամիություն ունենալով մահմեդական ազնվականության հետ՝ կրել էր, բնականաբար, որոշ չափով նաև մահմեդական կուլտուրայի ազդեցությունը։

Մենք արդեն տեսանք վերև, որ Զաքարյան Ավագի դստեր Խոշաքի ամուսինն էր Մուհամմեդ Շեմսեդդին Սահիպ Դիվանը։ Միանգամայն հնարավոր է ու հավանական, որ սրանց որդին Զաքարեն, որը հիշատակված է Գետարգելի վանքի 1325 թվի արձանագրության ու նաև Վրաց ժամանակագրության մեջ[3]՝ մահմեդական էր և ոչ քրիստոնյա։ Անիի տեր Զաքարյան Շահնշահ Բ-ը, ինչպես երևում է վիմական արձանագրությունների վկայություններից[4], ամուսնացած էր Շեմսեդդին Սահիպ Դիվանի դուստր Խուանդղեի հետ։ Հասկանալի է, ուրեմն, թե ինչու Անիի միջնաբերդում գտնված Զաքարյանների տնային կարասիքի առարկաները, մեծ մասամբ, մուսուլմանական կերտվածքներ են և ոչ հայկական։

Մոնղոլական տիրապետության ընթացքում իրենց գոյությունը

---

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 151, 156, 160, 165, 167, 169, 170։

[2] Տե՛ս Ани, էջ 42—44։

[3] Տե՛ս Ալիշան, «Այրարատ», էջ 292. Մեսրովբ Սմբատյանց, Գեղարքունի, էջ 241. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները, Բ, էջ 63։

[4] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 156, 160։

շարունակեցին Արագածոտն գավառում Վաչուտյանները։ 13-րդ դարում իշխում էին այնտեղ իշխանաց իշխան Վաչեի որդի Քուրդ Մեծը և սրա որդիները, իսկ 14-րդ դարի առաջին կեսում իշխանաց իշխան Քուրդ Անբերդցին ու նրա որդին «Թեոդոս Ձրքինը», որոնք հիշատակված են Կարբիի 1338 թվի և Հովհաննավանքի 1358 թվի արձանագրություններում[1]։ Քուրդ Անբերդցու մասին, որը Քուրդ Մեծի թոռն էր, 1335 թվից առաջ գրված մի ձեռագրի հիշատակարանի գրիչը տալիս է մեզ հետևյալ կարևոր տեղեկությունները՝

> «Յայսմ ժամանակի երևեալ քաջ և արի. յաղթող և բարձրաբազո՛կ իշխանաց իշխանն՝ յազգէ Վաչէի, որդի Տայիրին, որդւոյ բարեպաշտ և աստուածասէր Քրդին, որ և անուն նորա Քուրդ կոչի, որոյ անուամբն և քաջութեամբն մնաց գաւառս մեր և վանորայքս անշարժ և անվնաս յայսմ մեղսաշարժ և դառն ցասմանցս. զի յայսմ նուազեալ և դառնացեալ աւուրս, որ վասն մեղաց մերոց, երևեալ մեծափառ և աստուածահաճոյ մեծ զօրավարն և երևելի նախամարտիկ, պարծանաց և զարդու զաւակն Հայաստանեաց, ամենօրհնեալ Քուրդն. զի ոտնաձայնք երիվարացն նորա և ճօճիւն նիզակացն, և փայլատակումն սուսերացն, ճայթմունք աղեղացն, և կուռ զրահքն, և ասպարափակ լինելն, և այլ ահարկու կազմուածն զարհուրեցուցանէին թշնամիսն, թո՛ղ զյաղթութիւն և զքաջութիւն, և բազում պատերազմաց վանումն ի ձեռն նորա, և ազատազօրաց նորա բազմութիւն, գեղեցկութեամբ՝ իբրև զօր երկնից, և քաջութեամբ՝ իբրև ղառիւծ կամ իբրև քաջարծուի ի վերայ Հայաստանեաց, յամենայն պատերազմունս։ Այնու՝ առաջին այլասեռ թագաւորացն՝ Ղազանին և Ղարապանդին և Պուսայիդի և մեծամեծ սպարապետս նոյինացն մեծարգոյ և փառաւոր երեւեալ, և յամենայն շուք և պատիւ և խիլայ ընդունեալ, պահէր խնամօքն և ողորմութեամբն Աստուծոյ զգաւառս և զվաներս ի խաղաղութեան, և այլոց գաւառակցացն բազում կարեկից և օգնական լինէր»[2]։

Վայոց ձորում և Սյունիքի արևմտյան այլ մասերում իշխանության անկման ժամանակաշրջանում մեծ իշխանություն էր Օր-

[1] Տե՛ս «Վիմական տարեգիր», էջ 166. 171։

[2] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 270—271. Համեմատե Ալիշան, Հայապատում, էջ 527։

բելյանների իշխանությունը։ Տարսայիճի մահից հետո (+1290) սրա իշխանական իրավունքները ժառանգեց նրա մեծ որդին Էլիկումը, որը, կամենալով զրկել ժառանգությունից իր եղբայրներին ու մոտ ազգականներին՝ տվեց նրանց ըստ սովորութական իրավունքի իրենց հասանելիք մասը։ 14-րդ դարի առաջին կեսում այստեղ իշխում էին հիշյալ Էլիկումի որդիները և նրա եղբոր Ջալալի ու հորեղբոր որդու Լիպարիտի ժառանգները։

Օրբելյաններին հարևան էին Պռոշյանները, որոնց մեծ իշխանությունը, ինչպես վերև ասացինք, գտնվում էր Վայոց ձորում, Շահապունիքում, Վարաժնունիքում և Կոտայքում։ Այստեղ Պռոշ իշխանի մահից հետո (+1284) նրա իշխանությունը և կալվածքները ժառանգել էին սրա որդիները՝ Պապաքը (+1298) և Ամիր Հասան Ա-ը (+1292), իսկ 14-րդ դարի առաջին կեսում՝ վերջինիս որդի Էաչի Ա-ը (1299—1317) և ապա սրա որդիները[1]։

Թե Օրբելյանների և թե այս իշխանության մեջ կուլտուրական շինարարությունը, որ բուռն թափով սկսվել էր 13-րդ դարում, շարունակվեց նաև 14-րդ դարում, գլխավորապես, այս դարի առաջին կեսում։ Այս երկու իշխանությունների մեջ էին գտնվում այս դարում արևելյան հայերի գրականության ու գիտության գլխավոր կենտրոնները։ Էաչի Ա-ի որդու Ամիր Հասան Բ-ի (1317—1351) ժամանակ նշանավոր ուսումնավայր էր Եսայի Նչեցու Գլաձորի միջնադարյան դպրոց-համալսարանը, իսկ նույն դարի երկրորդ կեսում՝ նաև Տաթևի դպրոցը, որի հիմնադիրն էր Եսայի Նչեցու աշակերտ Հովհան Որոտնեցին։

14-րդ դարի սկզբներում, ինչպես վերև տեսանք, ընդարձակ երկիր էր նաև Դոփյանների իշխանությունը, որը Հասան Բ-ի որդի Գրիգորի ժամանակ, 1312 թվին, ուներ իր մեջ բացի Փոքր Սյունիքից, Գեղարքունիքի մի մասը և Վերին Խաչենը։ Նույն այս ժամանակ Ներքին Խաչենում իշխում էին Ջալալ Դոլա Հասանի (+1261) ժառանգները։ Կային այս ժամանակ նաև ուրիշ հայկական մանր իշխանություններ։

Ինչպես տեսնում ենք, Հուլավյանների մեծ պետության անկման ժամանակ Հայաստանի հայ իշխանությունները իրենց գոյությունը դեռ շարունակում էին։ Բայց մոնղոլների ավելի քան հարյուր տարվա ծանր տիրապետությունը քայքայիչ կերպով էր ազդել նրանց երկրների ու ժողովուրդների վրա։ Մոնղոլական մեծ

[1] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, էջ 135 և հետ.։

հարկերը, կեղեքումները, սնանկացող բնակչության արտագաղթը, ինչպես և հայ հեծելազորի մշտական մասնակցությունը մոնղոլական հեռավոր արշավանքներին՝ հետզհետե հյուծել ու ուժասպառ էին արել հայկական երկրները։ Եվ երբ 14-րդ դարի երկրորդ կեսում Անդրկովկասը և Հայաստանը ենթարկվեցին նոր փորձանքների ու աղետի՝ հայ իշխանությունները, բնականաբար, այլևս անկարող եղան դիմադրել նոր ու ավելի սոսկալի հարձակումներին և կորցրին իրենց քաղաքական ինքնուրույնության վերջին թույլ մնացորդները։

Որ Զաքարյան Հայաստանի վերոհիշյալ իշխանությունները իլխանության անկման շրջանում գտնվում էին, իրապես, քաղաքական ու տնտեսական ծանր դրության մեջ՝ այդ պարզ ու որոշ մատնանշված է 13—14-րդ դարի հեղինակ Խաչատուր Կեչառեցու «Ողբ վասն աւերման տանս արևելեան» ոտանավորի հետևյալ վկայություններում՝

«Ծաղր ու նախատ թազմաց մեք եղաք,
Յերկաթ ու ի նեղ զնդան մեք մտաք,
Յաղքատութիւն որ ժամանեցաք՝
Այս մեծ ճարիս ամենքս որ դիպաք։
Ի ձեռն չար ազգի մեք դրաւեցաք.
Բժիշկ չունիմք, ցաւոյս որ հասաք.
Զմեր բարերարն անյայտ կորուսաք,
Եւ այլ չունիմք իսկի մեզ ճարակ...
Մեռան իշխանքըն մեր ցանկալի,
Ու իրեանց որդիքն տղայ հասակի.
Սուգըն տիրեաց մեզ Իսրայէլի...»[1]։

Արյունահեղ ու երկարատև խռովություններից և կռիվներից հետո, որ իլխանության մեջ, ինչպես տեսանք, սկսվել էին Աբու-Սեյիդի մահից հետո՝ 1341 թվին Չոբանյան Հասան Փոքրի և Ջելայիրյան Հասան Մեծի միջև կայացավ վերջնական համաձայնություն, ըստ որի նրանք իլխանության արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջանները բաժանեցին իրար մեջ և առաջինը իշխանության գլուխ անցավ Թավրիզում, իսկ երկրորդը՝ Բաղդադում։ Միջադետքը և հարավային Հայաստանը մնացին իրենց նախկին իշխանավորների ձեռին, իսկ Փոքր Ասիայում կառավարիչներ նշանակվեցին Հասան Փոքրի եղբայր Աշրաֆը և Արտենա ամիրան։

---

[1] Տե՛ս Ալիշան, Հայապատում, էջ 528։

Իլխանության անկումը և նրա մեջ ծագած խառնակությունները, որոնցից անկարող եղան օգուտ քաղել հայ իշխանությունները, նպաստեցին Վրաստանի ուժեղացման, որի արևմտյան և հյուսիսային շրջանները քիչ էին ավերվել և մնացել էին համեմատաբար անվթար։ Չոբանյանների և Ջելայիրյանների իշխանության ժամանակ Վրաստանի թագավոր Գեորգի Պայծառը (1314—1346) ո՛չ միայն կարողացավ ուժեղացնել ու բարեկարգել իր երկիրը, այլև ենթարկեց իր իշխանությանը մի քանի անջատված շրջաններ։ Սակայն, որովհետև Հայաստանի լեռները ամառային արոտատեղիներ էին Առանի ու Ադրբեջանի տափաստաններում ձմեռող մոնղոլական-թուրքական քոչվորների համար՝ պաշտպանել այս շրջանները և պահել Վրաստանի գերիշխանության տակ, ըստ երևույթին, այլևս հնարավոր չէր։ Քոչվորների զգալի մասը կազմում էին Չոբանյաններին ցեղակից ռազմիկ ու հզոր Սուլդուզները, որոնք գլխավոր հենարանն էին Թավրիզում հաստատված Հասան Քուչուքի իշխանության։

Այս Հասանի իշխանությունը, որ ամրապնդվել էր 1341 թվի վերոհիշյալ համաձայնությունից հետո՝ երկար չտևեց։ 1344 թվին նրան սպանեց իր կինը և այնուհետև նրան հաջորդեց եղբայրը՝ Աշրաֆը (1344—1357)[1]։ Մելիք Աշրաֆի տասներեք տարի տևող իշխանությունը բռնությունների, անիրավությունների և սանձարձակ կամայականությունների մի շրջան էր։ Հարստահարվում և կեղեքվում էր նրա ժամանակ ամբողջ ազգաբնակությունը՝ ոչ միայն քրիստոնյաները, այլև մահմեդականները։

Կեռան թագուհու Ավետարանի 1357 թվի հիշատակարանից հայտնի է մեզ, որ Անին ու Շիրակը ենթարկվել էին հարձակման ու ավերածության «տաճկաց» զորքի կողմից։

> «Սպանեցին,— պատմում է հիշատակարանի հեղինակը,— ծնողների առաջ տղաներին և տղաների առաջ ծնողներին. և ում որ բռնեցին ու գերի էին տանում՝ մատնեցին բանտի ու տանջանքների։ Եվ բարերար Աստվածը տեսնում էր այս և անտես էր առնում մեր անչափ արարքների պատճառով։ Իսկ սրանց գլուխը, աթաբեկ և մեծ սպասալար Շահընշահը, հազիվ կարողացավ ազատվել թշնամիների ձեռքից»։

Նույն հիշատակարանում նաև Անիի տանուտեր «պարոն

[1] Համեմատե Սամուել Անեցի (շարուն.), էջ 168։

Ասիլ»-ի (=Վասիլի) մասին, որը, ինչպես վերև ենթադրեցինք, Գրիգոր Խուցեսի տոհմից էր, գրված է, որ

«Նա շատ վիշտ ու տրտմություն կրեց մայրաքաղաք Անիի ավերման պատճառով։ Որովհետև նա ինքն էր ծնողաբար սնուցել նրանց իբրև իր երեխաներին և հավատարիմ էր եղել պատրոն աթաբեկ Շահնշահի տանը և նրա տոհմի իշխանության մեջ գտնվող բոլոր բազմությանը. այն հոգսերը, որ իրեն էին հանձնարարված՝ նա հոգում էր Աստծու կամքի համաձայն, արժանանալով հավանության նրանց կողմից, որոնք գտնվում էին պատրոն Շահնշահի իշխանության տակ»։

[«Սատակեցին առաջի ծնողաց զտղայսն և առաջի տղայոց զծնողսն. և զորս ըմբռնեալ տանէին գերիս, բանդից և տանջանաց մատնեալ. և բարբարսն աստուած տեսեալ և անտես առնէր վասն անբաւ չարեաց մերոց։ Որոց գլուխ աթապակ և մեծ սպասալար Շահնշահ, որ հազիւ կարաց զերծանել ի ձեռաց թշնամեացն։

Բազում վիշտս և տրտմութիւնս կրեաց [պարոն Ասիլ] վասն աւերման մայրաքաղաքին Անոյ։ Քանզի իբրև զտղայս ծնողաբար սնուցեալ էր զնոսա և հաւատարիմ կացեալ ի վերայ տանն պատրոն աթապակ Շահնշահին և ամենայն բազմութեան տան իշխանութեան նորայ, ի ձեռս նորա եդեալ և զամենայն հոգս ըստ Աստուծոյ հաճոյիցն հոգայր և հաւանեցուցանէր, որք ընդ ձեռամբ պատրոն Շահնշահի էին»][1]։

Հիշատակարանի այս վկայությունը խիստ կարևոր է, որովհետև նա պարզ ցույց է տալիս, որ Անին, որպես մայրաքաղաք և Զաքարյանների նստավայր, իր գոյությունը պահել էր մինչև 14-րդ դարի հիսունական թվականները։ Ավերված ու ամայացած լինելով վերոհիշյալ արշավանքի ժամանակ՝ նա իբրև քաղաք, ինչպես վերև ասացինք, գոյություն է ունեցել, հավանորեն, և 15-րդ դարում։ Բայց նա Կեռան Թագուհու Ավետարանի հիշատակարանի մեջ նկարագրված աղետից հետո, ըստ երևույթին, այլևս չի եղել Զաքարյանների իշխանության տակ։

14-րդ դարի հիսունական թվականներին, Մելիք-Աշրաֆի բռնակալության ժամանակ, ինչպես երևում է Բջնիի 1358 թվի արձանա-

[1] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 15 (էջմիածն. Ն. 8. № 1804)։

գրությունից, ավերածության էին ենթարկվել ո՛չ միայն Անին ու Շիրակը, այլև ուրիշ հարևան գավառներ, որոնց թվում նաև Բջնին ու նրա շրջակայքը։ Բջնիի այդ արձանագրությունը, որ պատմական խիստ մեծ կարևորություն ունի՝ հարկ եմ համարում մեջ բերել առանց կրճատումների, բաց թողնելով Ալիշանի ուղղումները, որ ըստ իս հավանական չեն։

«Թվ. ՊԷ [1358]. ի զարմէ երկուց հարազատաց քաջաց եւ յաղթողաց ամիր սպասալար Զաքարիայի եւ աթաբակ Իվանէի, ես Աթաբակ Շահինշահ որդի աթաբակ Զազային[1], ի ժամանակս բռնակալութեան Մէլիք Աշրափին, զմեր հայրենիքս զԲջնի քաղաք յիսնէ հուքմով խլեր էր, զիր ճորտերն էսիր կացուցեր. եւ Հաճիբէկ նիազեցավ ու զքաղաքս ի հիմանց քակեց ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զեկեղեցիքս տապալեց ու զերկիրս ի չորս դիաց անբնակ արար ու զքրիստոնէք անխնայ կոտորեաց. մեք յաստուած ապաւինելով զմեր սալահրի... հեծելին գլուխ կացուցաք, որ ի վերա նստաւ բազում աշխատութեամբ. զիր ապրանքն նախ նա բաշխէր. որ աստուած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր ձեռս բերաց. վասն փրկութեան հոգւոյ և յերկար կենդանութեանս մերոյ կրկին նորոգեցաք զեկեղեցիս եւ ղբունիաթ արձանս, վերստին հաստատեցաք զվիճակ, զվանք, զգեօղ, զսարի, զդաշտի հայրենիք, բէց (˚) ու շինական ու գործաւոր զինչ եծ...... Աստուածածնայ ծառ(այ).... ազատ և թարխան արարին ի հարկէ և ի ծառայութենէ։ Տէր Վանական և սպասաւորքս խոստացան Յակոբայ տ(անի) գիշերապաշտաւն առնեն։ Ով ոք զմեր հաստատած արձանս խափանել ջանայ՝ դատի յաստուծոյ և մեր մեղացն պարտական եղիցի»[2]։

Հիմնվելով մեջբերված այս կարևոր արձանագրության բովանդակության վրա՝ կարելի է ըստ իս ենթադրել, որ աթաբեկ Շահնշահ Գ-ը, որը, ինչպես տեսանք, Անիի աղետի ժամանակ հազիվ ազատվել էր թշնամուց՝ կարողացել էր վերագրավել Բջնի քա-

---

[1] Ալիշանը (Այրարատ 273) ուղղել է «Շահինշահ(ի) որդի աթաբակ Զազայս» և վերագրել է արձանագրությունը Շահնշահի որդուն Զազային։ Սակայն Զաքարյանների ազյուսակի մեջ (Հայապատում, 447) նա Շահնշահ Գ-ին համարում է որդի աթաբեկ Զազայի։

[2] Տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 273—274. «Վիմական տարեգիր», էջ 169—170. Սմբատյանց, Գեղարքունի, էջ 320—321։

ղաքը և նրա շրջանը, որը քանդված ու ամայացված է եղել, ինչպես և Անին։ Ուշագրավ է, որ 1358 թվից հետո Զաքարյան տոհմի իշխաններ արձանագրությունների մեջ այլևս չեն հիշվում։ Վերոհիշյալ ավերումից հետո, ըստ երևույթին, նրանք բոլորովին նսեմացել էին և կորցրել էին իրենց քաղաքական նշանակությունը։

Չոբանյան Մելիք-Աշրաֆը, որը նողկալի մի բռնակալ էր, իշխեց Թավրիզում մինչև 1357 թիվը[1]։ Համաձայն պարսկական աղբյուրների վկայություններին՝ սրա մահմեդական հպատակները, գլխավորապես, Թավրիզի բնակիչները, անկարող լինելով տանել նրա չարագործությունները՝ դիմեցին Ջուչյան տոհմի Ջանիբեկ խանին (1340—1357) և ուզեցին իշխանությունը հանձնել Ոսկե Հորդայի խաներին։ Այսպիսով, Ջուչյանները, որոնք ձգտել էին շարունակ միացնել իրենց պետությանը նաև Ադրբեջանը՝ հարմար առիթ ունեցան իրականացնելու իրենց վաղեմի դիտավորությունը, որի համար նրանք արյունահեղ պատերազմներ էին ունեցել Հուլավյանների հետ։

1357 թվի սկզբներին Ջանիբեկը մեծ զորքով մտավ Անդրկովկաս և առանց դժվարության տիրեց Թավրիզին, ուր ազգաբնակությունն ընդունեց նրան գրկաբաց։ Մելիք-Աշրաֆը, որը գերի էր բռնվել՝ ենթարկվեց մահապատժի և Ադրբեջանի կուսակալ նշանակվեց Ջանիբեկի մեծ որդին՝ Բերդիբեկը[2]։ Բայց Ոսկե Հորդայի տիրապետությունն Ադրբեջանում շատ կարճ եղավ և տևեց միայն մի քանի ամիս։ Երբ Ջանիբեկը Թավրիզից վերադառնում էր Դեշտ-ի-Ղփչաղ՝ ճանապարհին նա հիվանդացավ և, ինչպես վկայում է պարսկական պատմագիր Մուինեդդին Նատանզին[3], Հեջիրի 758 թվի շաբան ամսի 3-ին [=22 VII 1357] սպանվեց իր մեծ վեզիր ու զորապետ Տուղլու-Բայի ու նրա մարդկանց ձեռքով՝ իր որ-

---

[1] Երևանի Մատենադարանի 1357 թվի № 5332 ձեռագրի հիշատակարանի վկայությունից մեզ հայտնի է, որ «յայսմ ամի... եղև գալուստ ղանին յարեվելից և ըմբռնումն Աշրաֆին», իսկ նույն Մատենադարանի 1358 թվի № 2087 ձեռագրի գրիչը վկայում է, որ նա Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան մատեանը» արտագրել է «յորժամ զչար իշխանն և զաւերումն աշխարհաց, զարքանեակն սատանայի, որոյ անունն Աշրաւ կոչիւր, ի խնամոցն Աստուծոյ եկն թագաւորն հիւսիսային, որոյ անուն Ջանիբեկ կոչիւր. և եբարձ զկարապետ Նեռինն ի կենաց, և եղև դադարումն չարեաց նորա». տե՛ս «Ժդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան. էջ 425 և 433։

[2] Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов. т. II, էջ 94—98. 101—103, 128, 146, 211, 214։ Համեմատե նաև Սամուել Անեցի. ժարոն., էջ 169։

[3] Նույնը, էջ 128—129. համեմատե նաև էջ 211 և 214։

*դու Բերդիբեկի դրդմամբ, որը Թավրիզից եկել էր հիվանդ հոր մոտ և մասնակցել էր նրա սպանությանը։ Ջանիբեկի սպանությունից հետո Բերդիբեկի իշխանության ժամանակ (1357—1359), որը ժառանգեց իր հոր գահը, Ոսկե Հորդայում սկսվեցին ներքին խռովություններ և Ջուչյանների տիրապետության հաստատումը Անդրկովկասում ձախողվեց և այս անգամ։*

*Բերդիբեկի Թավրիզից հեռանալուց հետո շատ կարճ ժամանակով իշխանությունը անցավ Ախիջուքի և Մելիք-Աշրաֆի կողմնակիցների ձեռքը։ Բայց շուտով, 1358 թվին, Ջելայիրյան սուլթան Ուվեյսը, վերոհիշյալ Հասան Մեծի (+1356) որդին, հարձակվեց Ախիջուքի վրա, սպանեց նրան և Ջելայիրյան տոհմի իշխանությունը հաստատեց և այս երկրի վրա։ Ջելայիրյանների աթոռանիստ մայրաքաղաքը փոխադրվեց այնուհետև Բաղդադից Թավրիզ։*

*Ուվեյսը (1356—1374) Ջելայիրյան տոհմի ամենահզոր իշխանն էր։ Նրա գերիշխանությունը ճանաչեցին շրջակա երկրների ամիրաններից շատերը։ Շիրվանի շահ Քաուսը, որի իշխանությունը ուժեղացել էր Հուլավյանների անկումից հետո՝ թեև փորձ արեց ապստամբել նրա դեմ, բայց հարկադրված եղավ հպատակվել նրան և, ինչպես ինքը, նույնպես և իր որդին Գուշինգը, դառան վասալներ Ջելայիրյանների։ 1360 թվին Մելիք-Աշրաֆի որդին, Տամուրտաշը, որին Ջանիբեկը քրոջ հետ տարել էր իր ուլուսը՝ կարողացավ այնտեղից գալ Խվարեզմի վրայով Խլաթ և ուզեց վերականգնել Թավրիզում Չոբանյանների իշխանությունը։ Սակայն Խլաթի կառավարիչը, իմանալով, որ Ուվեյսը գալիս է Խլաթ՝ բռնեց Տամուրտաշին և հանձնեց Ուվեյսին, որը ենթարկեց նրան մահապատժի*[2]։

*14-րդ դարի երկրորդ կեսում, մինչև Լանկթամուրի գալը, ըստ երևույթին, Ջելայիրյանների իշխանության տակ էր գտնվում Հայաստանի մեծագույն մասը, ինչպես և Անին, ուր, ինչպես ասացինք, մուսուլմանական դրամներ են կտրվել 1375 կամ 1376 թվին Ուվեյսի որդի Ջելայիրյան Հուսեյնի անունով։ Այս Հուսեյնի (1374—1382) ժամանակ, որը 1374 թվին հաջորդել էր Ուվեյսին, Ջելայիրյանների մոտ ևս սկսվեցին ներքին խառնակություններ ու կռիվներ, որոնք հիմք դրին նաև սրանց իշխանության թուլացման*

---

1 *Տե՛ս Тизенгаузен*, Сборник материалов, т. II, *էջ 97 և 103*։

2 *Նույնը, II, էջ 47.* Սամուել Անեցի *(շարուն.), էջ 169*։

ու քայքայման։ 1382 թվին Հուսեյնի վրա հարձակվեց Թավրիզում նրա եղբայր Ահմեդը, որը կատաղի ու դաժան բռնակալ էր, սպանեց նրան և տիրեց գահին[1]։ Այդ ժամանակ հարավային Հայաստանում իշխում էր Ուվեյսի մյուս որդին՝ Բայազիդը (1382/3—1384/5)։

Գահակալական կռիվների մասին Ջելայիրյանների մոտ Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը տալիս է հետևյալ տեղեկությունը.

> «ՌՅԼԲ. [1382/3]. Սուլթան Ահմեդը սպանեց երկու եղբայրներին և ինքը գահ նստեց. նա սպանեց և իր հոր մեծամեծներին ու բոլորին մատնեց կորստյան։ Իսկ նրա մյուս եղբայրը, որի անունն էր Շահզատա, նրա դեմ պատերազմի գնաց, նմանապես և նրա Փիրալիպատիկ զորապետը. և երբ նրանք եկան մեծ զորքով սուլթան Ահմեդի վրա՝ երկու զորքն էլ կոտորվեցին Արտազի դաշտում և ցրվեցին»։
>
> [«ՌՅԼԲ. Սուլտան Ահմատն զերկու եղբարսն սպանեաց՝ և ինքն նստաւ, սպան զմեծամեծս հօր իւրոյ, և կորոյս զամենեսեան։ Եւ միւս եղբայրն շարժեցաւ ընդ նմա ի պատերազմ՝ Շահզատայ անուն, և զօրապես նորա Փիրալիպատիկ, և եկեալ մեծաւ զօրաւ ի վերայ սուլտան Ահմատին և կոտորեցին երկոքին զօրք ի դաշտին Արտազու՝ և ցրուեցան զօրքն»][2]։

Ջելայիրյանների այս ներքին երկպառակություններից աշխատեց օգտվել Ոսկե Հորդայի խան Թոխթամիշը, որի ժամանակ, Մամայի պարտությունից (1380) և Մոսկվայի առումից (1382) հետո, Ոսկե Հորդան խիստ ուժեղացել էր։ 1385 թվին Թոխթամիշը փորձեց նորից նվաճել Ադրբեջանն ու Անդրկովկասը։ Ինչպես վկայում են պարսկական աղբյուրները, նրա զորքերը, թվով մոտ 90.000, Դերբենդի ու Շիրվանի վրայով մտան Ադրբեջան և, պարտության մատնելով Ջելայիրյան Ահմեդ Վելի ամիրային՝ մոտեցան Թավրիզին և պաշարեցին Ջելայիրյանների հարուստ ու փարթամ մայրաքաղաքը 1385 թվի հունվար ամսի սկզբներին։ Համդալլահի որդի Զեյնեդդինի վկայությամբ՝ Ոսկե Հորդայի զորքերի առաջնորդները, քաղաքը պաշարելուց մի քանի օր հետո,

---

[1] Այս Ահմեդը հիշատակված է իբրև «Ղան ազգին նետողաց Ահմատ» 1386 թվին «Արծրունիս քաղաք»-ում գրված Ավետարանի հիշատակարանում. տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 561։

[2] Սամուել Անեցի (շարուն.), էջ 170։

համաձայնության եկան Վելի ամիրայի հետ, որ իրենք պաշարումը կվերացնեն, ստանալով քաղաքացիներից իբրև փրկանք 250 թուման ոսկով։ Սակայն խաղաղության այս բանակցությունների նպատակն էր, իրապես, քնացնել քաղաքի պաշտպանների աչալրջությունը։ Թոխթամիշի զորքերը անսպասելի կերպով ներս խուժեցին քաղաք (1385 թվի հունվարի 6-ին, ուրբաթ) և ութը օր անխնա կոտորեցին, գերեցին և թալանեցին քաղաքի անպաշտպան բնակչությունը[1]։ Այս արշավանքի ժամանակ ավերածության էին ենթարկվել բացի Թավրիզից նաև Մարաղան, Մարանդը և Նախիջևանը։ Ադրբեջանում Թոխթամիշի զորքերը, ինչպես վկայում են Սամուել Անեցու շարունակողը և նմանապես Զեյնեդդինը, գերել էին ավելի քան 200.000 հոգի[2]։ Ադրբեջանից վերադառնալիս՝ Ոսկե Հորդայի զորքերը գնացին նախ դաշտային Ղարաբաղ— մի մասը Ահարի վրայով, որը գտնվում էր Ղարադաղում, իսկ մյուս մասը՝ Նախիջևանի և Սյունիքի վրայով։ Թովմա Մեծոփեցու վկայությունից երևում է, որ Նախիջևանի վրայով նահանջող զորքերը թե այս քաղաքի շրջաններում և թե Սյունիքում ավերել էին բազմաթիվ գավառներ և բնակչությունը կոտորել էին կամ գերել։ Սակայն ձմեռվա սաստիկ ցրտերի պատճառով նրանք հարկադրված են եղել արագացնել իրենց երթը, ուստի և թողել էին ավարի մի մասը և գերիներից շատերին[3]։

Թոխթամիշի զորքերի հեռանալուց մոտ մեկ տարի հետո, 1386 թվի աշնանը, ինչպես ներքև կտեսնենք, Անդրկովկաս ու Հայաստան մտավ Լանկթամուրը, որի արշավանքների ժամանակ թալանը, կոտորածները և ավերածությունները ինչպես Հայաստանում, նույնպես և ամբողջ Առաջավոր Ասիայում, շարունակվեցին ավելի մեծ չափերով։

Մոնղոլական վերոհիշյալ դինաստիաների տիրապետությունը մինչև Լանկթամուրի հանդես գալը, որ տևեց մոտ 150 տարի, ինչպես տեսանք, աշխարհավեր իրարանցումների, գաղթի ու մեծ տե-

---

1 Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, т. II, էջ 97, 98, 109, 151։ Համեմատե Թովմա Մեծոփեցի, էջ 14. Սամուել Անեցի (շարուն.), էջ 171։ Ինչպես վկայում է այս վերջին աղբյուրը, Թավրիզի առումը տեղի էր ունեցել Հայոց ՊԼԵ թվին (1385) «յայտնութեան ճրագալուցին» [=6 հունվ.]. Զեյնեդդինը Թավրիզի առումը դնում է Հեջիրի 787 թվին [=12 II 1385—1 II 1386] ուրբաթ։ Սակայն հունվարի 6-ը գալիս է ուրբաթ ո՛չ թե 1386, այլ 1385 թվին։

2 Սամուել Անեցի, շարուն., էջ 171 և Сборник материалов, т. II, էջ 98։

3 Թովմա Մեծոփեցի, էջ 14։ Համեմատե Սամուել Անեցի, շարուն., էջ 171։

ղաշարժերի մի ժամանակաշրջան էր։ Այդ 150 տարվա ընթացքում զգալի կերպով կերպարանափոխ եղավ բնակչության ցեղային կազմը ինչպես Հայաստանում, նույնպես և ամբողջ Առաջավոր Ասիայում։

Արդեն 13-րդ դարի առաջին կեսում նոր նվաճողների, մոնղոլական-թուրքական հորդաների տեղափոխությունը արևմուտք որոշ փոփոխություն մտցրեց Մերձավոր Արևելքի ազգագրական քարտեզում։ Իրենք, մոնղոլները զորքի մեջ շատ չէին և զորքի մեծամասնությունը կազմում էին թուրքերը։ Թուրքերենն էր, գլխավորապես, և նոր եկվորների խոսակցական լեզուն։ Թուրքական ցեղերի արտագաղթը արևմուտք շարունակվեց նաև 13-րդ դարի երկրորդ կեսում և իլխան Արղունի ժամանակ (1284—1291) Թուրքաստանից գաղթեցին Հյուսիսային Միջագետք և Հարավային Հայաստան քոչվոր թուրքմենները, որոնք մոտ ցեղակից էին սելջուկյան թուրքերին։

Հատկապես Հայաստանում, ինչպես վերև տեսանք, դեռևս արաբական տիրապետության ժամանակ պարսկա-արաբական մահմեդականությունը հաստատվել էր Դվինի կողմերում և Վանա լճի շուրջը գտնվող գավառներում։ Սելջուկյան արշավանքներից հետո թուրք և պարսիկ եկվոր ցեղերը շարունակեցին հաստատվել Հայաստանի ավերված ու ամայացած մասերում։ Իսկ մոնղոլական տիրապետության ժամանակ Միջին Ասիայից և Թուրքեստանից եկած քոչվորները տարածվեցին ամեն տեղ թե Ադրբեջանում ու Հայաստանում և թե ամբողջ Արևմտյան Ասիայում։

Այսպիսով, Լանկթեմուրի արշավանքներից առաջ, թուրքական եկվոր ցեղերի խառնիճաղանջ գաղթականությունը մեջ ընդ մեջ հաստատվել էր տեղական նվազած ու նոսրացած բնակչության՝ պարսիկների, հայերի, քրդերի, արաբների ու հույների միջև, Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներում։ Այդ նոր ցեղերից, ինչպես կտեսնենք, քաղաքական մեծ դեր էին կատարում 14—15-րդ դարերում Օսմանյան թուրքերը և Ղարա-Ղոյունլու (Սևախոյ) ու Աղ-Ղոյունլու (Սպիտակախոյ) թուրքմենները։

Օսմանյան թուրքերը, ինչպես պատմում է 15-րդ դարի վերջերում ապրող թուրք գրող Նեշրի Բրուսացին, ծագում են թուրքական օղուզների ցեղից և Սուլեյմանի առաջնորդությամբ գաղթել էին Հայաստան, Խլաթի և Երզնկայի շրջանները, Չինգիզ խանի արշավանքների ժամանակ՝ 13-րդ դարի քսանական թվերին։ Չինգիզ խանից հետո թուրքական այս հորդան ուզում էր վերադառնալ Խորա-

սան, բայց Եփրատն անցնելու ժամանակ Սուլեյմանի ձին ընկավ գահավեժ ափից գետ և ինքը՝ Սուլեյմանը խեղդվեց։ Այնուհետև հորդայի մի մասը Սուլեյմանի որդի Էրթողրուլի ուղեկցությամբ գնաց Արևմտյան Փոքր Ասիա և սելջուկյան սուլթաններից ստացավ այնտեղ բնակության տեղ Բրուսայի արևելակողմում՝ Բյուզանդական Բիթանիայի սահմանների մոտ[1]։ Երբ 13-րդ դարի վերջերում Իկոնիայի սուլթանությունը քայքայվեց՝ Էրթողրուլի որդին՝ Օսմանը, որի անունով թուրք ցեղի այս ճյուղը կոչվում է օսմանյան, ինքնագլուխ իշխեց այս կողմերում (1299—1326) և, ընդարձակելով իր իշխանության սահմանները՝ հիմնադիր եղավ Օսմանյան պետության։ Օսման Ա-ի հաջորդները, միացնելով իրենց իշխանության տակ Փոքր Ասիայի թուրքական մյուս ցեղերը՝ հետզհետե գրավեցին բյուզանդական ու սլավոնական բազմաթիվ շրջաններ Փոքր Ասիայում ու Բալկանյան թերակղզում և 14-րդ դարի վերջերում, սուլթան Բայազիտ Ա-ի ժամանակ (1389—1402), Օսմանյան պետությունը դառավ մեծ ու հզոր աշխարհակալություն, որ տարածվում էր Հյուսիսային Ասորիքի և Արևմտյան Հայաստանի Օրոնտես և Եփրատ գետերից մինչև Դանուբ գետը։

Լանկթամուրի արշավանքների ժամանակ (1386—1403) ու նաև 15-րդ դարում, ինչպես ասացինք, կարևոր դեր էին կատարում Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում, բացի օսմանյան թուրքերից, նաև վերոհիշյալ Ղարա-Ղոյունլու (Սևախոյ) և Աղ-Ղոյունլու (Սպիտակախոյ) թուրքմեն ցեղերը։ Սովորաբար ենթադրում են, որ այս թուրքմենները Սևախոյ և Սպիտակախոյ են անվանվել իրենց ցեղերի տոտեմների անուններով, սակայն վերջերս Մինորսկին հնարավոր ու հավանական է համարում, որ նրանք կարող էին այդպես կոչվել իրենց տարբեր գույնի ու տեսակի ոչխարների հոտերի պատճառով[2]։ Այս երկու ցեղը, որ Թուրքեստանից գաղթել էին 13-րդ դարի երկրորդ կեսում, բնակություն հաստատեցին պատմական Հայաստանի հարավում, Սևախոյերը՝ Վանա լճի մոտակա շրջաններում, իսկ Սպիտակախոյերը՝ Ամիդ-Դիարբեքիրի կողմերում։ Բնակվելով Հայաստանի այս մասերում՝ նրանք հետզհետե ընդարձակեցին իրենց տերության սահմանները և ենթարկեցին իրենց իշխանությանը շրջակա գավառների բնակչությանը։

[1] Տե՛ս *Markwart J.*, Ueber das Volkstum der Komanen, Leipzig, 1914, էջ 187—188. *Крымский А.*, История Турции и ее литературы, том первый, М., 1916, էջ 11 հն.։

[2] Տե՛ս *Minorsky*, La Perse au XV-e siècle entre la Turquie et Venize, էջ 4։

*Այսպիսով, Լանկթամուրի արշավանքներից դեռ առաջ Արևմտյան Ասիայում հանդես եկան թուրքական նոր ցեղեր, որոնցից վերջին երկուսը, Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլու թուրքմենները, ինչպես ներքև կտեսնենք, տիրեցին 15-րդ դարում Հայաստանի մեծագույն մասին։*

*Պետք է առանձնապես նշել, որ 14-րդ դարում, երբ քաղաքական ծանր դրության մեջ էին թե բուն Հայաստանը և թե Կիլիկիայի հայկական թագավորությունը՝ հայ ժողովրդի և եկեղեցու հանդեպ թշնամական ընթացք էին բռնել ո՛չ միայն մահմեդական ցեղերը, որ ամենուրեք տիրող և գերիշխող էին դառել, այլ նաև պապականությունն ու լատինական եկեղեցին։*

*14-րդ դարի առաջին քառորդում, դեռ մոնղոլական տիրապետության ժամանակ, Հռոմի Պարսկական Ադրբեջանում հիմնել էր Մարաղայի լատին եպիսկոպոսությունը, որի կենտրոնն էր Սուլթանիեն։ Կաթոլիկ կրոնավորները, որոնք ձգտում էին միացնել Հայոց եկեղեցին լատինականի հետ՝ հետզհետե որոշ հաջողություն ունեցան, հատկապես, Նախիջևանի, Երնջակի և Ջահուկի կողմերում։ Մի խումբ հայ հոգևորականներ միացան նրանց և սկսեցին քարոզել միացում կաթոլիկ եկեղեցու հետ։ Այս միաբանողները հայ մատենագրության մեջ հայտնի են լատիներեն «ունիթոռներ»* (unitores), *այսինքն՝ «միացողներ» անունով։*

*Ունիթոռները գործում էին թե բանավոր քարոզությամբ և թե գրավոր կերպով։ Նրանց աշխատությամբ թարգմանվել են և տարածվել Հայաստանում Արևմուտքի սխոլաստիկական դրականությունը, նաև կաթոլիկ ոգով գրված կրոնական գրքեր, քարոզներ, մեկնություններ և այլ երկեր։*

*Չնայած հայ երկրի ծանր ու խռովահույզ վիճակին, հատկապես, այս ժամանակաշրջանում՝ ունիթոռական գործունեությունը հանդիպեց զորեղ ընդդիմության։ Հայ մտավոր կյանքի գլխավոր կենտրոններն էին այս ժամանակ Վայոց ձորում գտնվող Գլաձորի Աղբերց վանքը, որ դեռևս 13-րդ դարի երկրորդ կեսում հռչակվել էր իբրև նշանավոր «համալսարան» և «Երկրորդ Աթենք», ու նաև Տաթևի վանքը։*

*Գլաձորի վանքի հիմնադիրն էր, հավանորեն, Ներսես Մշեցին, որի գործունեությունն Աղբերց վանքում ընկնում է 1269—1284 թվականների միջև*[1]*։ Սրա աշակերտներից նշանավոր էին Մխի-*

[1] *Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան. Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները, Գիտական աշխատությունները Երևանի պետական համալսարանի, Երևան, 1946, հատոր XXIII, էջ 426։*

թար Սասունցին և Եսայի Նչեցին։ Այս վանքում, ինչպես հայտնի է, բացի կրոնական գիտություններից, ուսուցանում էին նաև արտաքին գիտություններ՝ Դիոնիսիոս Թրակացու, Արիստոտելի, Պորփյուրի, Օլիմպիոդորոսի, Համբղիկոսի և ուրիշների երկերը և այդ երկերին վերաբերող հայկական մեկնությունները։

Եսայի Նչեցին, որ ծնվել է Սասունի Նիչ ավանում՝ ուսուցիչ էր և ղեկավար Գլաձորյան համալսարանի մոտ 55 կամ 60 տարի, սկսած 1284 թվից մինչև իր մահը (մինչև 1338 կամ 1342 թիվը)։ Ժամանակակիցները նրան անվանում են «ամենաիմաստ փիլիսոփայ», «անյաղթ հռետոր» և «վարդապետաց վարդապետ»։ Նչեցու երկերից առայժմ հայտնի են Հին Կտակարանի մի քանի դժվարիմաց մասերի մեկնություններ, «Մեկնութիւն քերականի», «Վիճաբանութիւնք» ու նաև նամակներ և ճառեր[1]։ Իր երկարամյա բեղմնավոր ուսուցչության ընթացքում, ինչպես հաղորդում է Ալիշանը[2], նա պատրաստել է գրական ու քարոզչական գործունեության համար մոտ 360 աշակերտ։

Եսայի Նչեցու աշակերտներից նշանավոր է իբրև մատենագիր և հակառակորդ ունիթոռների Հովհան Որոտնեցին, որը հիմնադիրն է Տաթևի վանքի մեծ դպրոցի։ Սա ծնվել է Որոտն գավառի Վաղադի գյուղում և Իվանե իշխանի որդին էր, որը, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, «էր ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր»[3]։

Հովհան Որոտնեցին (+1388) վարել է Տաթևի և Ապրակունիսի վանքերում ուսուցչական և վարդապետական պաշտոն, պատրաստել է բազմաթիվ աշակերտներ և թողել է մեզ հարուստ գրական ժառանգություն, որը դեռևս բավարարաչափ ուսումնասիրված չէ։ Նա գրել է քարոզներ ու մեկնություններ, որոնց մեջ խիստ կշտամբում է ունիթոռների արարքները և վարդապետությունը։ Նրանից մնացել են նաև մի շարք աշխատություններ, որոնց մեջ նա մեկնել է «արտաքնոց իմաստասիրաց»՝ Արիստոտելի, Պորփյուրի, Փիլոնի և այլ հեղինակների իմաստասիրական և քերականական երկերը։

Հովհան Որոտնեցու աշակերտ Գրիգոր Տաթևացին իր Ներբո-

---

[1] Տե՛ս Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 131։

[2] Նույնը, էջ 131։

[3] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկթեմուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 15։ Աբեղյանի կարծիքը («Հայոց հին գրականության պատմություն», II, Երևան, 1946, էջ 353), որ Հովհան Որոտնեցին Օրբելյան իշխանական տոհմից էր, անշուշտ, թյուրիմացության արդյունք է։

ղյանի մեջ— «Ներբողեան ողբերգաբար ոգեալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետին իւրոյ Յօհաննու Որոտնեցւոյ»— գրում է՝

«Ի սմանէ ընթերցումն սուրբ գրոց և վարժումն արտաքին կրթութեանց, տեսական իմաստից և գործնական արդեանց շարայարութեանց։ Ի սմանէ յոքնանկար նորագիծ տառք, և երաժշտական եղանակք... Մեկնութիւն Հոգեշունչ մատենից... և արտաքացումն արտաքին սոփեստից»[1]։

Որոտնեցին վախճանվել է 1388 թվին Ապրակունիսի վանքում և նրա բեղմնավոր գործունեությունը շարունակել է Գրիգոր Տաթևացին (+1410), որը ուսուցանում էր և կրթում աշակերտների նոր խմբեր նախ Ապրակունիսի (1388—1390 թթ.) և ապա Տաթևի (1390—1408 թթ.) ու Մեծոփա (1408—1409 թթ.) վանքերում։

Գրիգոր Տաթևացին ևս գրել է բազմաթիվ ու մեծածավալ աշխատություններ, որոնցից շատերը դեռ կարոտ են հատուկ ուսումնասիրության։ Թովմա Մեծոփեցին, որ նրա աշակերտն էր, գովաբանելով իր ուսուցչին՝ անվանում է Տաթևացուն «վարդապետն ամենայն Հայոց, երկրորդ Լուսաւորիչն և աստուածաբանն՝ գեր ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց և վարդապետաց Հնոց և Նորոց»[2]։ Եվ, իրավի, նա ո՛չ միայն հմուտ էր Հին և Նոր Կտակարանների ու կրոնական այլ երկերի գիտության, այլև ուսումնասիրել էր իմաստասիրական և աշխարհիկ արտաքին գիտությունները, որոնցով զինված նա մեծ հմտությամբ պայքար էր մղում ունիթոռական շարժման դեմ։

Գրիգոր Տաթևացու գլխավոր աշխատություններն են նրա՝ ա) «Հարցման գիրքը»՝ մեծ և փոքր, որի մեջ նա հարց ու պատասխանի ձևով խոսում է զանազան խնդիրների մասին, որ կարևոր են համարվել նրա ժամանակ, բ) Քարոզգիրքը, բաժանված երկու մեծ հատորների, որոնք պարունակում են առատ նյութ ժամանակակից հայ կյանքի մասին, գ) Արիստոտելի, Պորֆյուրի և Դավիթ փիլիսոփայի գրոց լուծմունքները և դ) բազմաթիվ ուրիշ մեկնություններ, լուծմունքներ ու նաև զանազան այլ երկեր։

Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և սրանց աշակերտների զորավոր ու խիստ կռիվը ունիթոռների դեմ մեծ նշանակություն ուներ, որովհետև ո՛չ միայն Կիլիկիայում, այլև բուն Հայաստանում

---

1 Տե՛ս Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, II, էջ 354։
2 Թովմա Մեծոփեցի. Պատմութիւն, էջ 50։

կային տարրեր, որոնք ջերմ կողմնակից էին կաթոլիկ եկեղեցու հետ միացման քաղաքական նպատակով։ Այս «միարարները» հույս ունեին, որ եկեղեցիների միության միջոցով կարելի կլինի նպաստ և օգնություն ստանալ պապից և Արևմտյան Եվրոպայի թագավորներից։ Նրանք դեռևս չէին գիտակցում, որ պապերը ո՛չ միայն այդ ժամանակ անզոր էին օգնություն հասցնելու, այլև չէին էլ օգնելու իրենց։

Խիստ հետաքրքիր է, որ կաթոլիկ եկեղեցուն հարելու հակում են ունեցել ինչպես Կիլիկիայում, նույնպես և բուն Հայաստանում, գլխավորապես, ժողովրդի բարձր խավերը։ Այս տեսակետից ուշագրավ է Ուիլյամ Ռուբրուկի 1253—1255 թթ. ուղեգրության վկայությունը, որի մեջ ասված է, որ Զաքարե ամիրսպասալարի քաղկեդոնականություն ընդունած որդին՝ Շահնշահը և սրա որդին՝ Զաքարիան, Ռուբրուկի Անիում եղած ժամանակ (1255 թ.), նրան հայտնել էին, որ իրենք կաթոլիկներ են։

> «Ես ճաշեցի մի անգամ,— պատմում է Ռուբրուկը,— Շահնշահի հետ, և նա շատ մեծ քաղաքավարություն ցույց տվեց իմ հանդեպ, ինչպես նաև իր կինը և իր զավակը՝ Զաքարյա անունով, մի շատ գեղեցիկ ու իմաստուն երիտասարդ, որ հարցրեց ինձ, —եթե ձեզ մոտ գամ, դուք կպահե՞ք ինձ. որովհետև նա այնքան ծանր է զգում թաթարների տիրապետությունը, որ թեև նա ամեն բան առատորեն ունի, սակայն նախընտրում է թափառել օտար երկրներ, քան կրել նրանց տիրապետությունը։ Այնուհանդերձ նրանք ինձ ասացին, թե իրենք հռովմեական եկեղեցու զավակներ էին, և եթե պապը մի քիչ օգնություն ուղարկե իրենց, նրանք դրացի բոլոր երկրները պիտի ենթարկեն եկեղեցուն»[1]։

Կարևոր է նաև Կլավիխոյի 1403—1406 թվերի ուղեգրության մեջ հաղորդված տեղեկությունը անմատչելի ու անառիկ բերդի տեր և իշխան Նուր-ադ-դինի մասին, որը հայ կաթոլիկ էր։

> «Կիրակի, հունիսի 1-ին [1404 թ.],— պատմում է Կլավիխոն,— մենք հասանք մի բերդ, որ կոչվում էր Մակու. և այս վայրը պատկանում էր մի իշխանի, որ հռովմեական կաթոլիկ քրիստոնյա էր, բայց նրա անունը Նուր-ադ-դին էր.

[1] Տե՛ս «Ուղեգրություններ», Ա, Երևան, 1932, էջ 19—20։

և այն զինվորները, որոնք պահպանում էին այս բերդը, նույնպես պատկանում էին հռովմեական կաթոլիկ հավատքին։ Նրանք հիրավի ազգությամբ հայ էին, խոսում էին հայերեն լեզուն, բայց միևնույն ժամանակ հասկանում էին թուրքերեն և պարսկերեն։ Մակվում ս. դոմինիկյան միաբանության մի վանք կա»[1]։

---

[1] Տե՛ս «Ուղեգրություններ», Ա, Երևան, 1932, 113։

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

# ԼԱՆԿԹԱՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ

**1. Լանկթամուրը և նրա տերության սկզբնավորությունը։— 2. Նրա 1386/7 թվերի արշավանքները Հայաստան և Վրաստան։— 3. Տփխիսի գրավումը և Բագրատ Ե-ի ուրացությունը (1386 թ.)— 4. Սյունիքի ծանր կացությունը։— 5. Լանկթամուրի անհաջող կռիվները Տուրուբերանում։— 6. Վանի գրավումը և բնակչության սոսկալի կոտորածը։— Սովը Հայաստանում։— 7. Լանկթամուրի երկրորդ արշավանքը արևմուտք և Հարավային ու Արևմտյան Հայաստանի նվաճումը։— 8. Նրա հաղթական արշավանքը Թոխթամիշի դեմ։— 9. Ղարա Յուսուֆի փախուստը։— 10. Լանկթամուրի արշավանքը Հնդկաստան։— Միրանշահի նշանակումը արևմտյան երկրների կուսակալ։— Միրանշահի անհաջողությունները։— 11. Լանկթամուրի երրորդ մեծ արշավանքը արևմուտքում։— Նրա մեծ ոխը վրացիների դեմ։— Վրաստանի ավերումը։— 12. Քաղաքական փոփոխությունները Փոքր Ասիայում։— Լանկթամուրի հաղթությունները Փոքր Ասիայում, Ասորիքում և Միջագետքում (1400—1401 թթ.)։— Անգորայի ճակատամարտը և Փոքր Ասիայի նվաճումը։— 14. Պատերազմական գործողությունները Վրաստանում և հաշտության կնքումը։— 15. Լանկթամուրի մահը (1405)։— 16. Նոր փոփոխություններ բնակչության կազմի մեջ Անդրկովկասում և Հայաստանում։— 17. Կլավիխոյի «Ուղեգրության» վկայությունները.— Մակուի հայ իշխանությունը։**

*Այն մեծ աղետը, որին ենթարկվեց Արևմտյան Ասիան սելջուկյան-թուրքական և մոնղոլական-թուրքական արշավանքների ժամանակ (11 և 13-րդ դարերում) և որը ծանր, անբուժելի հարված հասցրեց ո՛չ միայն Հայաստանի, այլև հարևան մահմեդական երկրների կուլտուրական զարգացմանը, վերսկսվեց մեծ ուժգնությամբ նաև 14-րդ դարի վերջին քառորդում՝ այս անգամ դարձյալ մոնղոլական-թուրքական հորդաների, չաղաթայների կողմից, որոնց առաջնորդն էր Լանկթամուրը։*

*Տուղրուլ Բեկի և Չինգիզ խանի այս արժանավոր հաջորդը, որ անվանվում է նաև Թիմուր կամ Լանկ-Թամուր (այսինքն՝ «Կաղ-*

Թիմուր»). ծնվել է Սամարղանդ քաղաքի մոտակա շրջաններից մեկում, ուր նրա հայրը եղել է տեղական մանր իշխանավոր։ Լանկթամուրին փառաբանող պարսկա-արաբական պատմագրությունը նրան համարում է զտարյուն մոնղոլ և շառավիղ Չինգիզ խանի տոհմի։ Բայց այդ վկայությունները այժմ հերքվում են և պատմագետներից շատերը, հիմնվելով նրա արտաքին տեսքի նկարագրի վրա՝ ենթադրում են, որ նա կարող էր լինել թուրք[1]։ Հայտնի է, որ Լանկթամուրի մայրենի լեզուն թուրքերեն չաղաթայերենն էր։

Լանկթամուրի ժամանակ, 14-րդ դարի երկրորդ կեսում, Չինգիզ խանի որդու Չաղաթայի սերունդը այլևս չուներ միահեծան իշխանություն Միջին Ասիայում։ Մոնղոլական այս ուլուսը վաղուց արդեն քայքայվել էր և բաժանվել մեծ ու փոքր անկախ կամ կիսանկախ իշխանությունների։ Լանկթամուրը, դառնալով 1369/70 թվին, զանազան արկածներից հետո, վեզիր և աթաբեկ Չաղաթայան տոհմի աննշան ու անվանական մի խանի՝ մոտ տասը տարվա ընթացքում վերականգնեց Չաղաթայան նախկին հզոր պետությունը, իսկ 1380 թվից սկսած իր իշխանությունը տարածեց նաև Պարսկաստանի արևելյան երկրներում։ Այս նոր լայնածավալ պետության աթոռանիստ կենտրոնը դառավ հին և հարուստ Սամարղանդ քաղաքը։

1386 թվին, Թոխթամիշի վերոհիշյալ արշավանքից ուղիղ մեկ տարի հետո, Լանկթամուրը մեծ զորքով մտավ Ադրբեջան և գրավեց ու վերստին կողոպտեց մեծ մայրաքաղաք Թավրիզը։ Այնուհետև նա, այստեղից առաջ անցնելով, նույն այս 1386 թվին դիմեց դեպի հյուսիս-արևմուտք և Նախիջևանի վրայով արշավեց Հայաստան ու Վրաստան։

Լանկթամուրի 1386—1387 թվերի առաջին այս մեծ արշավանքը Հայաստանում ու Վրաստանում, որ տակնուվրա արեց ամբողջ Արևելյան Հայաստանը, Վրաստանի արևելյան գավառները և պատմական Հայաստանի հարավային կողմերը՝ Սասունի շրջանից մինչև Վան, մանրամասն և ճշգրիտ կերպով նկարագրել են Թովմա Մեծոփեցին և Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը։ Այս աղբյուրների վկայություններից երևում է, որ 1386—1387 թվերի պատմական անցքերը, որ հաճախ խառնաշփոթ կերպով են

---

[1] Տե՛ս Мюллер А., История Ислама, III, էջ 294—295. Крымский, История Персии, ее литературы, т. III, էջ 17—18 և այլն։

պատմված պատմագիտական երկերում՝ տեղի էին ունեցել հետևյալ հաջորդականությամբ։

Հայոց 835 թվականի [=15 դեկտ. 1385—14 դեկտ. 1386][1] գարնանը, Թավրիզի գրավումից հետո, Լանկթամուրի զորքերը, անցնելով Արաքս գետը և ներս թափվելով Սյունիք՝ պաշարեցին և գրավեցին այնտեղ Որոտան բերդը։ Ուշագրավ տեղեկություններ այդ մասին տալիս է մեզ Երևանի Մատենադարանի № 5707 ձեռագրի Երնջակում 1386 թվին գրված հիշատակարանի Հակոբ գրիչը։

«Երբ մենք,— պատմում է նա,— լցված էինք անասելի ուրախությամբ՝ վարդապետը [Հովհան Որոտնեցին] և մենք 60 աշակերտներս նրա բնիկ գավառ Որոտան երկրում՝ երբ կարդում ու գրում էինք սուրբ մատյանները՝ իմ ծովացած մեղքերը հանեցին քրիստոնյաների դեմ, գլխավորապես, Թուրթելի երկրի վրա, անօրենների գունդերը։ Սրանք եկան և առան Որոտան բերդը և հայրենազուրկ արին Նանիկի որդուն՝ Սմբատին. և կամենում էին ձերբակալել մեր սուրբ վարդապետին հայրենյաց ժառանգության պատճառով, սակայն նա աստծու կամքով ազատվեց նրանց ձեռքից և երկու ամբողջ տարի շրջում էր իր աշակերտների հետ այլևայլ տեղերում, կարդալով ու ուսուցանելով»։

[«Եւ մինչդեռ անճառ ցնծութեամբ և բերկրալից ուրախութեամբ լցեալ կայաք, րաբունին Կ աշակերտօքն, ի բնիկ գաւառն իւր՝ յերկիրն Որոտան, կարդալով և գրելով զսուրբ մատեանս, մեղքն իմ ծովացեալ եհան զգունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրտելի։ Որ եկին և առին զբերդն Որոտան և հայրենազուրկ արարին զպարոն Սմբատն, որդի Նանիկին։ Եւ կամէին ձերբակալ առնել զսուրբ րաբունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեանն։ Եւ սա կամօքն Աստուծոյ զերծաւ ի նոցանէ և Բ ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր աշակերտօքն հանդերձ՝ կարդալով և ուսուցանելով»][2]։

Որոտան բերդի գրավման մասին 1386 թվին ունի վկայություն նաև Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը։ Ըստ այդ վկայության ևս՝ Որոտան բերդն առել էին թուրքերը «ի ՊԼԵ (=1386)

[1] Տե՛ս *Dulaurier*, Recherches sur la chronologie arménienne, Paris 1859, էջ 387։

[2] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 560։

ամ.ին» և մեծ վարդապետ Հովհան Որոտնեցին փախել էր Ծար, իսկ Օրբելյան իշխան Գորգունէն դարդամահ էր եղել[1]։

Նույն այս 1386 թվին Լանկթամուրի զորքերն ասպատակեցին նաև Այրարատ նահանգի արևելյան շրջանները մինչև Կարբի, Բջնի, Գառնի, Սուրմալի և Կողբ։ Նրանք պաշարեցին և գրավեցին այս կողմերում Սուրմալին, Բջնին և այլ տեղեր, իսկ բնակիչներին գերեցին կամ սպանեցին։

Թովմա Մեծոփեցին վկայում է, որ Սուրմալուի և շրջակա գյուղերի բնակչության մի մասը, բարձրանալով Կողբի հարավակողմում գտնվող Բարդող լեռը՝ քաջաբար կռվեց արշավողների դեմ և նրանց մատնեց պարտության։

> «Իսկ բարեպաշտ Մարտիրոս անունով մի տանուտեր Կողբ գյուղից,— պատմում է Թովմա Մեծոփեցին,— որը խիստ զորեղ զորական էր և ողորմած էր ու աղքատասեր՝ ելավ Բարդող լեռը, որ ուրիշ ազգեր անվանում էին Թակալթու, և գյուղի խիստ քաջ ու կտրիճ տղաների հետ փրկեց բոլոր հավատացյալներին մեծ կռվից հետո...։ Եվ թեև թշնամիները պատերազմեցին շատ անգամ, բայց այն լեռը չկարողացան առնել»։
>
> [«Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն՝ յոյժ զօրեղ զօրական, ողորմած և աղքատասէր ի գեղջէն Կողբայ, ելեալ ի լեառն Բարդող, որ կոչի յայլոց ազգաց Թակալթու, յոյժ արի և քաջ մանկամբք գեղջն ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ և սրտապինդ զօրութեամբ օգնութեամբ հզօրին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ։ Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ՝ ոչ կարացին առնուլ զլեառն զայն»][2]։

Բջնին գրավելուց և ավերելուց հետո՝ նրանք իջան, ունենալով իրենց հետ գերիների անհամար բազմություն, Տփղիս քաղաքի կողմերը, պաշարեցին ու առան Վրաստանի մայրաքաղաքը և վերցրին այստեղ ևս անթիվ գերիներ։

---

[1] Տե՛ս Սամուէլ Անեցի, շարուն., էջ 170։ Գրիգոր Խլաթեցին իր «Յիշատակարան աղէտից» ոտանավորի մեջ (Վաղարշապատ, 1897, էջ 5 և 1) «Որոտան ողեակ»-ի առումը դնում է 1387 թվի գարնանը, իսկ Հովհան Որոտնեցու մահը՝ 1386 թվի հունվար ամսին։ Այս վկայությունները, որ չեն համապատասխանում Հակոբ գրչի 1386 թվի հիշատակարանի ցուցումներին, ինչպես տեսնում ենք, ճիշտ չեն։

[2] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, Փարիզ, 1860, էջ 18։

*Անկարող լինելով դիմադրել՝ Վրաստանի Բագրատ Ե թագավորը հնազանդվեց Լանկթամուրին, բերելով նրան հարուստ նվերներ։ Բայց Լանկթամուրը, ինչպես վկայում են ժամանակակից աղբյուրները, ձերբակալեց նրան, տարավ իր հետ Ղարաբաղ, ուր նա ձմեռելու էր, և բռնի կերպով ստիպեց ընդունել մահմեդականություն։*

*Տփղիսի առումը և Բագրատ Ե-ի ձերբակալումը տեղի էր ունեցել ո՛չ թե 1393 թվին, ինչպես մատնանշված է Քարթլիս-Ցխովրեբայի շարունակության մեջ, այլ 1386 թվի նոյեմբեր ամսին, ինչպես այդ պարզ կերպով վկայում են ո՛չ միայն Թովմա Մեծոփեցին և Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը, այլև հույն ժամանակագիր Միքայել Պանարետը[1]։ Այս վերջինը հաղորդում է (էջ 17, 43), որ Լանկթամուրը՝*

> *«Դուրս գալով Չինաստանի լեռներից և վերցնելով իր հետ, ինչպես ասում են գիտցողները, ավելի քան 800.000 մարդ՝ եկավ և գրավեց ամբողջ Պարսկաստանը։ Հետո, մըտնելով նաև Իբերիայի լեռները, կռվեց ու նվաճեց զարմանքի արժանի Տփղիսը, գերի վերցրեց ռազմահզոր Բագրատ թագավորին, նրա կնոջը՝ մեր թագավորի դուստր չքնաղ Կիր-Աննային, ու նրա Դավիթ որդուն, իսկ բնակիչներին կոտորեց սրով և ոչնչացրեց։ Ինչպիսի ավերածություն նա գործեց, որքան սրբապատկերներ կողոպտեց ու այրեց, որքան թանկագին քարեր, մարգարիտ, ոսկի և արծաթ տարավ՝ այդ ոչ ոք գրի առնել չի կարող։ Այս տեղի ունեցավ նոյեմբեր ամսի 21-ին 6895 թվի [=1386]»։*

*1386/7 թվի ձմեռը Լանկթամուրն իր զորքի հետ անցկացրեց դաշտային Ղարաբաղում։ Իսկ 1387 թվի գարնանը նրա զորքերի մի մասը, ինչպես վկայում է Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը[2], նորից հարձակվեց Սյունիքի վրա, իսկ մյուս մասն ուղարկվեց Շիրվանի կողմերը Թոխթամիշի զորքերի դեմ, որոնք Դերբենդի վրայով եկել և հասել էին մինչև Սամուր գետը։ Շուտով, սակայն, հարձակվող բանակը պարտության մատնվեց և ետ քաշվեց դարձյալ Դերբենդի վրայով[3]։*

---

[1] *Տե՛ս* Թովմա Մեծոփեցի. *էջ 20.* Սամուել Անեցի. *շարուն., էջ 171 և Михаил Панарет,* изд. *Хаханова,* М., 1905. *էջ 43։ Համեմատե նաև* Գրիգոր Խլաթեցի. *«Յիշատակարան աղէտից», հրատ.* Գր. Խալաթյանցի. *Վաղարշապատ, 1897, էջ 4—5։*

[2] *Տե՛ս* Սամուել Անեցի. *շարուն., էջ 171։*

[3] *Տե՛ս Тизенгаузен,* Сборник материалов, т. II, *էջ 110 և 151—153։*

Լանկթեմուրի այս երկրորդ արշավանքի ընթացքում Սյունիքն ավելի մեծ ավերածության ենթարկվեց, քան վերև հիշատակված 1386 թվի հարձակման ժամանակ։ Այդ ավերածության ու կոտորածների մասին տալիս է մեզ կարևոր տեղեկություններ Երևանի Մատենադարանի Շահապոնք ամրոցում 1387 թվին գրված № 3616 ձեռագրի գրիչը, որը հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է ինքը՝

«Ի խռովութեան ժամու, և յանձուկ տեղոջ, յորում պաշարեալք ի հինից Նեռողաց կրկին յարուցեալ, Խորազմ անուանեալ յազգաց, զոր և անբաւ բազմութեամբ ապատակեալ աւերեաց զաշխարհս Հայոց, Պարսից, Վրաց և զամենայն արևելեացս։ Ոմանք ի գերութիւն վարեալ, արք և կանայք, և կէսք առթուր դիաթաւալ սրախող զալարեալ առ հասարակ՝ քահանայ և աշխարհականք, գէշ անկեալ դիակամբք, անթաղ ընկեցեալք, և այլ՝ ի բազմազան տանջարանս մաշեալք։ Ոմանք հրով կիսայրեացք տոչորեալք, և այլք ի սովոյ գազանաբեկ վտանգեալք, կէսք խստամբեր կրօնիւք չարչարեալք, և այլք երկեղիւ պակուցեալք։ Որ և մերն ունելով իբր մետաղս կամաւոր ի պահոց Շահապօնս կոչեցեալ ամրոցի, ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծ սաստասաստուուն ատենի։ Նախ որպէս անզանօր ողջունեն զխաղաղութեան և զշինութեան գոլ, յեղակարծ ժամու հասանել բարկութեան, նմանապէս և աստ՝ աւուրն կիրակէի ասացեալն կրկնոյ զատկի, յանկարծահաս ժամու շարժեալ հեղեղաց ուղխից խռովութեան զաւրաց, սաստագին գոչմամբ և ահագնատեսիլ, սուսերամերկ կորվալիճ Նեռողաց, որք պատեալ պահեալ պաշարէին զմեզ։ ...Եւ այս աղէտ անզերծ տարակուսից շրջապատեալ զմեզ շրջագայութեամբ տումարի Հայկազեան սեռից՝ հարիւրից կրկնակի քառից և վեցեաց վեցից [=1387], յորում ամի եղև ծռատօն զատկաց ազգի կոչեցեալ Յունաց, ի վերոյ ասացեալն աւուր նորոյս մէկբունեաց»[1]։

1387 թվի նույն այս արշավանքի ժամանակ, ինչպես վկայում են Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարան աղէտից» ոտանավորը և Վանի Հայկավանք եկեղեցու Ճաշոցի հիշատակարանը, գրավել էին նաև Փոքր Սյունիքը և Տարը, ուր «սրախողող կոտորվել ու արյու-

---

[1] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 567—568։

նաներկ դիաթավալ նահատակվել էին» Դոփյան իշխան Հասանը, նրա կինը՝ Խոնձան և որդիները՝ «քաջ ու արի պարոններ Գրիգորը, Սարգիսը, Շանշեն, Ջհանշեն, Աղբուղան և Շիրվանը», նաև «թագազարմ իշխան Սադունը»[1]։ Որ Լանկթամուրի 1386—1387 թվերի արշավանքների ժամանակ Հայաստանի իշխաններից շատերը նաև գերի էին տարվել՝ այդ հիշում է Գրիգոր Խլաթեցին՝

«Իշխանք բազումք ի տանց ելին
Եւ ի յընչից պարապեցին։
Յերիվարացըն զըրկեցին
Եւ հետիոտըս տանէին»[2]։

Ինչպես վկայում է 1387 թվին Երզնկայում գրված Ճաշոցի գրիչ Գեորգը, Լանկթամուրի զորքերը հասել էին այս թվին Հայաստանի արևմուտքում մինչև Էրզրում։

«Յայսմ ժամանակի,— գրում է Գեորգ գրիչը,— յորում էր թուական Հայոց ՊԼԶ (1387), ելաւ ազգն խուժադուժ յարևելից, ի կողմանց հիւսիսոյ, որ կոչէր Լանկ-Թամուր, և եկն մինչև յԱրզըրում, և բազում ոճիրս գործեաց... զոր յետս դարձոյց Աստուած, և աղօթք սուրբ Լուսաւորչին պահեաց զքաղաքս Եզնկայ և զգաւառս իւր, որք են առ մեզ բոլորակայ»[3]։

Լանկթամուրի զորքերը մեծ դիմադրության հանդիպեցին Հարավային Հայաստանում, ուր Տուրուբերան նահանգի կողմերում խիստ զորեղացել էին այդ ժամանակ Ղարա-Ղոյունլու թուրքմենները և ուր սրանց առաջնորդ Ղարա-Մահմադը 1378 թվին հիմնել էր Սևախոյ թուրքմենների դինաստիան և իշխում էր իր որդի Ղարա-Յուսուֆի հետ։ Սրանց գերագույն իշխանության տակ էին գտնվում 14-րդ դարի վերջերում Քաջբերունիքը, Տարոնը և Սասունը։ 1387 թվի գարնանը չաղաթայցիները, որոնք անցել էին Հայաստանի հարավակողմը՝ հարձակվեցին ծածկաբար ու հանկարծակի Ղարա-Մահմադի վրա։ Սակայն այստեղ նրանք հաջողություն չունեցան և, պարտություն կրելով Ճապաղջուր գավառում և լեռնային Խույթ շրջանում՝ գնացին արևելք և պաշարեցին Վան քաղաքը։ Իսկ Տուրուբերանի բնակիչները, որոնք, մեծ մասամբ, փախել էին և

---

[1] Տե՛ս Կարապետ եպիսկոպոս, Նյութեր հայ մելիքության մասին, պրակ Բ, էջ 84—85 և 185. Գրիգոր Խլաթեցի, «Յիշատակարան աղէտից», Վաղարշապատ, 1897, էջ 6։

[2] Տե՛ս «Յիշատակարան աղէտից», էջ 6։

[3] Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 570։

Ղարա-Յուսուֆի հրամանով տարվել Սասունի անառիկ շրջանը, թեև կոտորածից ու գերումից ազատվեցին, բայց կողոպտվեցին հենց նույն այս Ղարա-Յուսուֆի ու նրա զորքերի կողմից։ Պետք է ասել, որ Լանկթամուրի արշավանքների ժամանակ հավասարապես ծանր էր ու սոսկալի թե հայերի և թե մահմեդականների դրությունը։ Այդ մասին վկայություն ունի Գրիգոր Խլաթեցին իր վերոհիշյալ ստանավորի հետևյալ քառատողի մեջ.

«Այս ոչ միայն քրիստոնէից,
Այլ ի Տաճիկ ազգաց բնաւին.
Զի հասարակ էր նեղութիւն
Պարսից ազգին, հայ և թուրքին»[1]։

Վան ժամանելուց առաջ՝ Լանկթամուրին հոժարակամ հպատակվեցին Բաղեշի և Խույթի Ամիր Շարաֆ ամիրան և Արծկեի Սահանդ իշխանը, որոնց շրջաններում այնուհետև խաղաղությունը վերահաստատվեց։ Բայց Վանը, որի ամիրան Եզգինը, Թովմա Մեծոփեցու ասելով, ծագումով Սենեքերիմյանց, այսինքն՝ Արծրունիների տոհմիցն էր, դիմադրեց Լանկթամուրին և սոսկալի կերպով պատժվեց։ Լանկթամուրը, որ երկար ժամանակ պաշարել էր քաղաքը և ունեցել էր մեծ կորուստներ՝ հրամայեց կանանց ու փոքրահասակներին գերի տանել, իսկ մնացած բնակչությունը գահավեժ բերդից ցած գլորել։ Մեռելների կույտը, պատմում է Թովմա Մեծոփեցին, այնքան բազմացավ, որ վերջին ընկնողներն այլևս չէին մեռնում[2]։ Վանեցիների կրած այս զարհուրելի աղետը տեղի էր ունեցել ո՛չ թե 1392 թվին, ինչպես ենթադրում է Չամչյանը, այլ 1387 թվի սեպտեմբեր ամսին՝ «յաւուր Ե շաբաթոչ, յաթոռաց պահոց ս. Խաչին»[3]։

Լանկթամուրի արշավանքների ընթացքում գազանությունները՝ դիմադրություն ցույց տվող քաղաքների ու երկրների հանդեպ սովորական երևույթ էին և դրանց նպատակն էր ահ ու սարսափի միջոցով կասեցնել թշնամիների ընդդիմությունը և հարկադրել նրանց անձնատուր լինելու։ Աղբյուրների վկայություններից հայտնի է, որ Լանկթամուրի հրամանով նրա զորքերը, Բաղդադի բնակչությու-

---

1 Տե՛ս «Յիշատակարան աղէտից», էջ 8—9։

2 Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 30. Գրիգոր Խլաթեցի, «Յիշատակարան աղէտից», էջ 9. Սամուել Անեցի, շարուն., էջ 171։

3 Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ, էջ 424։ Սամուել Անեցի, շարուն., էջ 171։

նը կոտորելուց հետո՝ սրանց գլուխներից կազմել էին բուրգեր։ Խորասանում նրանք կենդանի մարդկանց գործածել էին իբրև շինանյութ և, դնելով պատերի մեջ, սվաղել ու ծածկել էին կրով ու կավով։ Իսկ Սեբաստիայում, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, նրանք 4000 մարդ կենդանի թաղել էին և ջրով ու մոխրով ծածկել[1]։ Հայաստանում, ինչպես տեսանք, նման գազանության զոհ եղավ, գլխավորապես, Վան քաղաքը։

Լանկթամուրի առաջին արշավանքը Հայաստան տևեց երկու տարի և նրա հեռանալուց հետո, 1388 թվին, երկիրը շատ տեղերում անմշակ մնալու պատճառով, առաջ եկավ սարսափելի սով և, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, «ջնջեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկազեան գաւառիս»[2]։ Պետք է ասել, որ սովը և ստաժամ մահը հաճախակի երևույթ էին Հայաստանում և հարևան երկրներում թե 14-րդ և թե 13-րդ դարերում շնորհիվ պարբերաբար տեղի ունեցող արշավանքների, կոտորածների ու ավերածություններին։

Սկսած 1388 թվից Հայաստանը համեմատաբար խաղաղ ու հանգիստ վիճակում մնաց վեց տարի՝ մինչև Լանկթամուրի երկրորդ արշավանքը, որ տեղի ունեցավ 1394 թվին։ 1388—1391 թվերին Լանկթամուրը պատերազմ էր վարում Անդրկասպյան երկրի կողմից Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանի դեմ, իսկ 1392—1393 թվերին Մուզաֆարյան Շահ-Մանսուրի դեմ Իրաքում և Ֆարսիստանում։

1387 թվին, ինչպես վերև տեսանք, Տուրուբերանում Լանկթամուրին ուժեղ դիմադրություն էին ցույց տվել Սևախոյ թուրքմենները և սրանք, չաղաթայցիների հեռանալուց հետո, վերստին տիրապետել էին այս շրջաններին. մոտավորապես 1388/9 թվականներին վախճանվել էր սրանց առաջնորդը՝ Ղարա-Մահմադը և նրան հաջորդել էր որդին՝ Ղարա-Յուսուֆը (1388/9—1420)։

1394 թվին Լանկթամուրը, որը Դեշտ-ի-Ղփչաղում և Ֆարսիստանում հաղթել էր իր ամենահզոր թշնամիներին, Թոխթամիշին և Շահ-Մանսուրին, նորից ռազմի ելավ Ղարա-Ղոյունլու թուրքմենների դեմ, որոնց կողմից նա նախորդ արշավանքի ժամանակ հանդիպել էր զորեղ դիմադրության։ Նա եկավ Իրաքից Բաղդադի ճանապարհով, նվաճեց Նինուէ-Մոսուլի շրջանը և այնտեղից մտավ Հյուսիսային Միջագետք ու ապա Հայաստան։ Այս անգամ Լանկ-

---

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 65։

[2] Նույնը, էջ 32։

թամուրի արշավանքը Հայաստանի հարավում հաջող անցավ։ Լանկթամուրի զորքերը գրավեցին այս կողմերում ամբողջ Հյուսիսային Միջագետքը ու նրա նշանավոր քաղաքները՝ Ամիդ-Դիարբեքիրը, Մերդինը, Ուռհան ու Մծբինը, նմանապես նաև Հարավային ու Արևմտյան Հայաստանը[1]։

Այս արշավանքի ժամանակ Մերդինում իշխում էր Արտուխյան տոհմի շառավիղ Մելիք-Ջահարը, որը գերի բռնվեց, բայց կարճ ժամանակից հետո ազատվեց և ո՛չ միայն վերահաստատվեց իր իշխանության մեջ, այլև ստացավ իր երկրի սահմանակից շրջանները։

Մերդինի կողմերում, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին[2], չաղատայցի զորքերը գերի էին վերցրել մեծ թվով այլազգիներ և քրիստոնյաներ, ի միջի այլոց, նաև չորս գյուղ արևապաշտ հայ հեթանոսներ, որոնք կոչվում էին արևորդիներ։

Հյուսիսային Միջագետքից Լանկթամուրը ուղղվեց Արևմտյան Հայաստան և այստեղ նրան կամավոր կերպով անձնատուր եղավ Երզնկա քաղաքը, ուր իշխում էր Թախրաթանը։ Այնուհետև նա եկավ Բարձր Հայք և գրավեց այստեղ Բասենի հարավակողմում գտնվող նշանավոր Ավնիկ բերդը։ Մտնելով Բարձր Հայքից Վանանդ՝ նա առավ Կարս քաղաքը և ավերածության մատնեց Սուրմալին ու Կողբը, բայց լուր ստանալով, որ Թոխթամիշի զորքերը Դերբենդի վրայով ներխուժել են Շիրվան՝ շտապ կերպով գնաց Առան[3]։ Շիրվանում այդ ժամանակ իշխում էր Շեյխ Իբրահիմ Դերբենդցին (1382—1417), որը դեռևս 1386/7 թվին հպատակվել էր Լանկթամուրին։

Երբ վերջինիս հաղթական զորքերը մոտեցան Շիրվանի սահմաններին, Ոսկե Հորդայի զորաբանակը ետ նահանջեց Դերբենդի վրայով և Լանկթամուրը իր զորքի հետ 1394/5 թվի ձմեռը բանակեց ու հանգստացավ Մուղանում։

1395 թվի գարնան սկզբին ինքը՝ Լանկթամուրը սկսեց Թոխթամիշի դեմ մեծ արշավանք և, մտնելով Դերբենդի վրայով Հյուսիսային Կովկաս՝ Թերեք գետի մոտ մատնեց նրան սոսկալի պարտության (1395 թվի ապրիլ ամսին)։ Այնուհետև նա անարգել կեր-

---

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի. էջ 44—45. Գրիգոր Խլաթեցի, «Յիշատակարան աղէտից». էջ 10. Սամուել Անեցի, շարուն., էջ 171. Իբն-Արաբշահ, թարգմ. Ա. Տեր-Հովհաննիսյանի, էջ 63—69 և ուրիշ.։

[2] Նույնը, էջ 45։

[3] Նույնը, էջ 45—46։

պով արշավեց հյուսիս և կողոպտեց ու ավերեց Սարայը, Կաֆա-Թեոդոսիան, Ազախ-Ազովը և Հաջի-Տարխան-Աժդերխանը[1]։

Լանկթամուրի Հայաստանից Ոսկե Հորդա մեկնելուց հետո, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին[2], Ղարա-Յուսուֆ թուրքմենը աշխատեց վերականգնել իր իշխանությունը և պատերազմ սկսեց Արճեշի Սահանդ իշխանի և Ոստանի Եզդին քուրդ ամիրայի հետ, որոնք հպատակվել էին Լանկթամուրին։ Ղարա-Յուսուֆի կողմն էր անցել, ըստ երևույթին, Բաղեշի ամիրա Իբրահիմը՝ Ամիր Շարաֆի եղբայրը ու հաջորդը, որը թշնամի էր ու հալածող քրիստոնյաների։ Բայց այս խառնակությունը կարճատև եղավ։ Լանկթամուրը, որը 1396 թվին արդեն վերադարձել էր Անդրկովկաս, ուղարկեց Ղարա-Յուսուֆի դեմ մեծ զորք իր Միրանշահ որդու առաջնորդությամբ և Ղարա-Յուսուֆը փախավ Փոքր Ասիա ու այնտեղից Եգիպտոս։ Իսկ Բաղեշի ամիրա Իբրահիմը ձերբակալվեց ու սպանվեց և նրա իշխանությունը Միրանշահը հանձնեց Ամիր Շարաֆի փոքր որդի Շամշադինին։ Ուշագրավ է ու հետաքրքիր, որ Լանկթամուրի այս Միրանշահ որդուն, որը համարվում է կիսախելագար մի վանդալ, Թովմա Մեծոփեցին անվանում է «յոյժ ողորմած և բարեբարոյ»[3]։

1396 թվի ամառը Լանկթամուրը վերադարձավ Սամարղանդ և այնուհետև 1397/8 թվերին նա կողոպտեց, դաժան կերպով սրի մատնեց ու ավերեց Հյուսիսային Հնդկաստանը և նրա Դելհի մայրաքաղաքը։ Լանկթամուրի զորքերին հարկավոր էր պատերազմական ավար, որ նրանք այլևս անկարող էին ձեռք բերել Պարսկաստանի ու Անդրկովկասի թալանված երկրներում։

Մեկնելով Ադրբեջանից Լանկթամուրը թողեց այնտեղ իր Միրանշահ որդուն իբրև կուսակալ արևմտյան երկրների, որ ձգվում էին Բաղդադից մինչև Դերբենդ և Համադանից մինչև Փոքր Ասիա։ 1396/7-թվին սա, որպես կուսակալ նաև հայկական շրջանների, ուղարկեց Վանա լճի կողմերը շեյխ Ահմեդ չաղատային, որը խաղաղեցրեց երկիրը, հավաքեց ցրված ժողովուրդը և ամեն կերպ աջակցեց նրանց, որ վերաշինեն իրենց բնակավայրերը, և նույնիսկ թույլ տվեց, որ վերակառուցեն իրենց քանդված եկեղեցիները[4]։

Լանկթամուրի և նրա մեծ զորաբանակի բացակայության ժամանակ՝ Միրանշահի դեմ ոտքի ելան Իրաքի ու Ադրբեջանի նախ-

---

1 Տե՛ս Тизенгаузен, Сборник материалов, т. II, էջ 118—121, 173—178 և ուրիշ.։

2 Թովմա Մեծոփեցի, էջ 47—49։

3 Նույնը, էջ 69։

4 Նույնը, էջ 49 են։

կին սուլթան Ջելայիրյան Ահմեդը, որը փախել էր Եգիպտոս, ու նաև Ղարա Յուսուֆ Թուրքմենը, որոնք ուզեցին վերահաստատվել իրենց իշխանություններում։ Ղարա-Ղոյունլու Թուրքմենները բավական անհանգիստ էին պահում իրենց Միջագետքում, իսկ սուլթան Ահմեդը, հենվելով արաբական բեդուինների վրա՝ Ասորիքի կողմից ներխուժեց Իրաք և կարողացավ վերստին տիրել Բաղդադ քաղաքին։ Դրությունը, սակայն, նորից փոխվեց, երբ Լանկթամուրը, Հյուսիսային Հնդկաստանը նվաճելուց հետո՝ 1399 թվին վերադարձավ արևմուտք։

Լանկթամուրի այս երրորդ արևմտյան արշավանքն աղետաբեր եղավ Վրաստանի և նրա հարավ-արևելյան շրջաններում ապրող հայության համար։ 1399/1400 թվին, Փոքր Ասիա արշավելուց առաջ, Լանկթամուրը մտավ Վրաստան և վրեժ առավ վրացիներից, որոնց դեմ նա մեծ ոխ ուներ դեռ նախորդ արշավանքների ժամանակվանից։ Այդ ոխակալության պատճառները հիշատակված են հայկական աղբյուրներում։ Թովմա Մեծոփեցին պատմում է, որ Վրաստանի Բագրատ Ե թագավորը (1360—1393), որը 1386 թվին գերի էր ընկել և ընդունել էր մահմեդականություն, համոզելով Լանկթամուրին, որ ինքը բոլոր վրացիներին կհնազանդեցնե նրան՝ ստացել էր նրանից մեծ զորք և մտել էր Վրաստան։ Բայց նա թաքուն կերպով հայտնել էր իր Գեորգի, Կոստանդին և Դավիթ որդիներին, որ նրանք իրեն ընդառաջ գան և օգնեն, որ կարողանա փախչել։ Բագրատը տարել էր չաղաթայ զորքերը նեղ ու կածան տեղեր և նրա որդիները, հարձակվելով նրանց վրա ու կոտորելով ավելի քան 12.000 մարդ՝ ազատել էին իրենց հորը։

Ոխակալության մի ուրիշ պատճառ մատնանշված է Գրիգոր Խլաթեցու վերոհիշյալ ոտանավորի մեջ։ Համաձայն սրա վկայության՝ Ջելայիրյան Ահմեդ սուլթանի որդին, սուլթան Տահիրը, գտնվում էր Երնջակ բերդում, որը պաշարել էին Լանկթամուրի զորքերը։ Վրաց թագավորը հարձակվել էր սրանց վրա և, մատնելով նրանց փախուստի՝ բերդից հանել էր սուլթան Տահիրին և ուղարկել հոր մոտ։ Այս էր իբրև թե պատճառը Լանկթամուրի կատաղության, որը ուզեց վրեժ առնել Վրաց թագավորից[1]։

1399/1400 թվերին, ինչպես վերև ասացինք, Լանկթամուրն արշավեց Վրաստան։ Իսկ Վրաց Գեորգի Է թագավորը և նրա Կոս-

---

[1] Տե՛ս Գրիգոր Խլաթեցի. «Յիշատակարան աղէտից», էջ 11—12։ Համեմատե Սամուել Անեցի. շարուն., էջ 171 և 175։

*տանգին ու Դավիթ եղբայրները[1], պատմում է Թովմա Մեծոփեցին, վրացիներին ու հայերին պատսպարեցին ամրությունների մեջ և իրենք ամրացան նեղ ու կածան տեղերում։ Բայց մի քանի դավաճաններ ցույց տվին Լանկթամուրին ճանապարհները և նա, մտնելով Վրաստանի ներսը՝ գրավեց և քանդեց ամրությունները ու եկեղեցիները, բնակիչներին անխնա կոտորեց, իսկ մի մասը, ավելի քան 60.000 հոգի, գերի վարեց[2]։*

*Այս արշավանքի մասին Վրաստանում, որ տևել էր, ըստ երևույթին, յոթը ամիս, սկսած 1399 թվի աշնանից մինչև 1400 թվի ամառը՝ ուշագրավ տեղեկություններ պահպանվել են Երևանի Մատենադարանի 1400 թվին Խառաբաստ վանքում գրված № 5435 ձեռագրի («Մեկնութիւն կաթուղիկէից թղթոց Սարգսի Շնորհալւոյ») հիշատակարանում, որի գրիչն էր, ինչպես կարծում է Լ. Խաչիկյանը, Գրիգոր Խլաթեցին։ Այս հիշատակարանի ներքև բերված պատմական վկայությունները հետաքրքիր են և այն տեսակետից, որ նրանց մեջ ժամանակագրական կարևոր ցուցումներ կան Լանկթամուրի նաև նախորդ արշավանքների մասին։*

> *«Եւ ձեռն ի գործ արկեալ,—ասում է գրիչը,—գրեց ըստ խմում կարի, թէև կատարելոյն անախորժելի, և յանկ հանեալ, յաւարտ սորին ժամանեալ հասի, ողորմութեամբ աստուածմաւր տիրածին կուսի, ի դառն և ի չար ժամանակիս, յորում զաւրացեալ է ի վերայ աշխարհիս կարապետ Նեռինն և արբանեակն սատանայի, մարդն անաւրէնութեան, որդին կորըստեան և ժառանգն անդնդային դժոխոց, պեղծն անագորոյն և անխնամ արեանարբուն Լանկա-Թամուրն կոչեցեալ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց անբարկանալին Աստուած բարկացաւ և բարերարութիւն նորին մեզ ի բարկութիւն դարձաւ, քաղցրն դառնացաւ, և բարին յեղափոխեցաւ։ Եւ այս Գ (3) անգամ չարն այն և գաւազանն խրատու սաստիցն Աստուծոյ եկեալ ի վերայ աշխարհիս պատուհասիւ։ Նախ և առաջին եկանել աստուածասաստ չարին եղև ի ՊԼԴ (1385) ամին թուականիս մերում, որ եկ ի վերայ Պար-*

---

[1] *1946 թվին Տփղիսում լույս տեսած «Վրաստանի պատմության» մեջ հիշատակված է Գեորգի Է-ի միայն Կոստանդին եղբայրը, տե՛ս* «История Грузии», под редакцией *С. Джанашиа*, Тбилиси, 1946, *էջ 454*։

[2] *Տե՛ս* Թովմա Մեծոփեցի, *էջ 66—67։ Համեմատե* Գրիգոր Խլաթեցի, *«Յիշատակարան աղէտից», էջ 12.* Սամուել Անեցի, *շարուն., էջ 171 և 175.* Իբն-Արաբշահ, *էջ 99։*

*սից աշխարհին և աւերեալ գերեաց զՊարսկաստան և Հայաստան զամս Բ (2), մինչ ի յաւարտ ՊԼԶ (1387) ամին, յորում եղեն շատ աւերք, արեանց բազմաց հեղումն, և սովք, և սասանութիւնք անթիւք։*

*Եւ դարձեալ ի ՊԽԲ (1393) ամին եկ և էջ ի Բաբելոն, և աւերեալ զամենայն Ասորեստան, եկ յերկիրս Հայոց՝ կրկին աւերմամբ, և գերելով անց ընդ Պահակն Հոնաց, և գնաց բարկութեամբ ի վերայ արքային Հոնաց, և անդ ևս արար շատ աւեր և գերութիւն, և յաղթեաց նոցա։ Բայց և ինքն տկարացաւ զաւրաւքն ի սովոյ, և անթիւք պակասեցան ի զաւրաց դոռոզին այնմիկ։ Եւ անտի դարձաւ ընդ Դուռն Ալանաց, և գնաց յաշխարհն իւր։ Եւ դարձեալ զաւրացաւ սպայիւք և հեծելաւք, և խաղաց, գնաց ի Հնդուստան, և անտի ևս բազում աւարաւ և փղաւք դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի տեղի իւր՝ ի Սամարղանդ։*

*Եւ մինչ սակաւ մի խաղաղացեալ երկիր փոքր-ինչ ոգի առին մարդիկ ի սաստիկ ցասմանէ չարին, արքայն Վրաց Գօրգի անարի յաղթութիւն ինչ արարեալ... եկն ի ղղեակն Երնջակոյ ի գաւառին Նախչաւանայ, և եհան անտի զորդի Ահմատ ղանին՝ զսուլտան Տահիրն, որ էր հսարեալ ի զաւրացն Թամուր-Լանկին յՊԼԵ (1386) ամէն մինչ ի ՊԽԸ (1399) ամ թւականին, զամս ԺԳ (13)։*

*Վասն որոյ մրմռեալ գազանութեամբ կատաղին այն Լանկ-Թամուրն, և դարձեալ եկ երրորդ անգամ անթիւ զաւրաւք բազմութեամբ, առաւել քան զառաջինն և զերկրորդն։*

*Եւ եկն, եկաց ի վերայ աշխարհին Վրաց յաշնանային յեղանակէն, մինչև յամառնայինն, ամիսս Է (7), աւելի և ոչ պակաս։ Եւ առեալ բազում ամրոցս, և սպան զբազումս ի նոցանէ, մինչ գրեթէ զամենայն արս կոտորեաց, զորոց զկանայս և զտղայս գերի խաղացոյց, անթիւս և անհամարս։ Որոց տեսողքն աղիողորմ աղէտիցն, ոչ միայն քրիստոնէից, այլ և յայլասեռից, որք տեսանէին զայնպիսի անմեղ գառինսն մատնեալ ի ձեռս արիւնախանձ և մարդադէմ գազանացն, որ ոչ կանանցն խղճային, և ոչ տղայոցն ողորմէին, ոչ ի հիւանդսն գթային և ոչ ի կարիսն նայէին, ոչ ի յալեացն հարկէին և ոչ ի մատաղ մանկունսն խնայէին, այլ անողորմաբար հետիոտս տանէին՝ մերկ, բոկոտն և գլուխ ի բաց։ Եւ որք ոչ կարէին գնալ՝ քարամբք սպանանէին և անցեալ*

գնային։ Եւ որք զայնպիսի կըսկիծսն տեսանէին, ասէին ընդ րանց, թէ՝ անկերուք ի վերայ մեր, և բլրոցն, թէ ծածկեցէք զմեզ։

Արդ՝ յայս դառն աւուրքս ի յաՀագին ժամանակիս յանկ ելեալ կատարեցաւ սա, ի թըւականիս մերում ՊԽԹ (1400) ամի, ի Հայրապետութեան տեառն Դաւթի նաՀանգիս Ախթամարայ, ի գաւառիս Քաջբերունւոյ ի վանս Սուխարայ, որ այժմ ասի Խառաբաստայ...»[1]։

Սրանից Հետո Լանկթամուրն անցավ Փոքր Ասիա ու Ասորիք, ուր գտնվում էին նրա ամենաՀզոր Հակառակորդները՝ Օսմանյան թուրքերը և Մամլուքները։ Լանկթամուրի երկրորդ արշավանքից Հետո Փոքր Ասիայում տեղի էին ունեցել քաղաքական մեծ փոփոխություններ։ Դեռևս 1380/ 1 թ. Արտենա ամիրայի տոՀմը, որ իշխում էր Արևելյան Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում (Կեսարիայում, Սեբաստիայում, Երզնկայում և Էրզրումում) բոլորովին վերացավ և այս սուլթանությանը բռնի կերպով տիրապետեց Ղադի ԲուրՀանեդդին ԱՀմեդը։ Բայց նույն այս ժամանակները, 14-րդ դարի վերջին քառորդում, ուժեղացան այս կողմերում Սպիտակախոյ կամ Աղ-Ղոյունլու թուրքմենները, որոնք բնակություն էին Հաստատել Ամիդ-Դիարբեքիրի շրջանում և քոչում էին Հաճախ իրենց Հոտերով Մալաթիայի ու Սեբաստիայի տափաստանները։ 1397/8 թ. սրանց առաջնորդ Ղարա-Յուլուք Օսմանը, որը Հիմնադիրն է Աղ-Ղոյունլուների Բայանդուրյան դինաստիայի՝ պատերազմ մղեց ԲուրՀանեդդինի դեմ, սպանեց նրան և տիրեց նրա երկրի մեծագույն մասին։ Բայց սրա տիրապետությունն Արևելյան Փոքր Ասիայում տևեց միայն մեկ կամ երկու տարի։ Մոտավորապես 1399 թվին Սեբաստիայի, Մալաթիայի և Երզնկայի շրջանները միացրեց իր Հզոր պետությանը Օսմանյան Բայազիտ Ա սուլթանը, որը անմիջական Հարևան դառավ Լանկթամուրի մեծ պետության։

Երզնկա քաղաքը և նրա շրջանը, ինչպես վերև տեսանք, դեռևս Լանկթամուրի 1394 թվի արշավանքի ժամանակ կամովին անձնատուր էր եղել և գտնվում էր սրա Հովանավորության ներքո։ Ուստի Երզնկայի գրավումը Բայազիտ Ա-ի կողմից պարզապես Լանկթամուրին ուղղված մի մարտաՀրավեր էր։ Արդեն 1400 թվին Լանկթամուրը սկսեց իր մեծ արշավանքն օսմանցիների Հզոր թագավորության դեմ և մտավ Փոքր Ասիա։ Այստեղ նա պաշարեց և առավ

---

[1] Տե՛ս «ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ», էջ 627—628։

Սեբաստիա քաղաքը, ուր սարսափելի գազանություններ գործեց։ Այնուհետև նա, օսմանցիներին վճռական ճակատամարտ տալուց առաջ, աշխատեց ապահովել իր թիկունքը Ասորիքի կողմից։ Նա գրավեց Մալաթիան և նրա պաշտպանությունը հանձնարարեց թուրքմեն Ղարա-Յուլուք Օսմանին, որին վտարել էր Փոքր Ասիայից սուլթան Բայազիտը։ Մտնելով այնուհետև Ասորիք՝ նա ողողեց նաև այս երկիրը արյունով և կործանեց Հալեպն ու Դամասկոսը (1400 թվի աշնանը)։

Ասորիքում ձմեռելուց հետո՝ 1401 թվին նա մտավ Միջագետք, ուր Մերդինը և Բաղդադը, ապստամբած լինելով իր դեմ՝ ճանաչել էին Եգիպտական Մամլուքների գերիշխանությունը։ Այս քաղաքները ևս սոսկալի կերպով մատնվեցին սրի ու հրի և այնուհետև, 1401 թվի վերջերին, չաղաթայ զորքերը Լանկթեմուրի հետ վերադարձան Ղարաբաղի դաշտային շրջանը, որը նրանց սովորական ձմեռվա կայանն էր։

1402 թվի գարնանը Լանկթեմուրը կրկին անցավ Փոքր Ասիա վճռական ճակատամարտ տալու սուլթան Բայազիտ Ա-ին, որը նրա բացակայության ժամանակ վերագրավել էր Սեբաստիան և Երզնկան։ Մեծ կռիվը այս երկու հզոր ու ահարկու թշնամիների միջև տեղի ունեցավ Անգորայի մոտ 1402 թվի հուլիս ամսին և վճռական այս մարտում Բայազիտ Ա-ն ոչ միայն պարտվեց, այլև ինքը գերի ընկավ Լանկթեմուրի ձեռքը։ Այժմ ամբողջ Փոքր Ասիան հպատակվեց նոր աշխարհակալին, որը վերականգնեց այստեղ սելջուկյան թուրք ամիրաների իշխանությունը, որոնք վերոհիշյալ ճակատամարտի սկզբում անցել էին իր կողմը։

Բայազիտ Ա-ի պարտությունից հետո Լանկթեմուրի գերագույն իշխանությունը ճանաչեց և Եգիպտոսի սուլթանը ու այսպիսով նոր նվաճումներից հետո նրա աշխարհակալ մեծ պետությունը անչափ ընդարձակվեց Առաջավոր Ասիայի նաև արևմտյան ուղղությամբ։ Լանկթեմուրի նոր աշխարհակալությունը տարածվում էր այնուհետև Չինաստանի ծայրամասերից և Հնդկաստանից մինչև Եգիպտոս, Հելլեսպոնտոս և Մոսկովյան իշխանությունը։ Նրա հսկայական պետության կազմի մեջ էին մտնում նախկին երեք մեծ ուլուս կոչվող մոնղոլական պետությունները՝ Չինգիզ խանի որդի Չաղաթայի միջին-ասիական ուլուսը, Բաթուի նվաճած Ոսկե Հորդայի բոլոր երկրները և Հուլավուի հիմնած իլխանությունը։

Փոքր Ասիան նվաճելուց և նրա քաղաքական խնդիրները կարգավորելուց հետո Լանկթեմուրը վերադարձավ Անդրկովկաս և 1403

*թվին նրա զորքերը նոր արշավանք սկսեցին Արևմտյան Վրաստանի և Աբխազիայի բերդերի վրա։ Բայց շուտով, ինչպես վկայում է Իբն Արաբշահը, Գեորգի Է-ի աղերսանքով և Շիրվանի իշխան Իբրահիմ Դերբենդցու միջնորդությամբ պատերազմական գործողությունները և ավերածությունները դադարեցին և Լանկթամուրը հաշտություն կնքեց Վրաց թագավորի հետ, որը հպատակվեց նրան և մնաց Վրաստանի թագավոր[1]։*

*1403/4 թվի ձմեռը Լանկթամուրը անցկացրեց Ղարաբաղում, իսկ 1404 թվի գարնանը մեծ ավարով ու գերիներով վերադարձավ իր զորաբանակի հետ Սամարղանդ։ Իր մեծ հաջողանքներով արբեցած՝ նա այստեղ, առանց ժամանակ կորցնելու, նախապատրաստվեց նոր արշավանքի և ուզեց նվաճել նաև Չինաստանը։ 1405 թվի սկզբին նա դիմեց դեպի չինացիների կենտրոնական կայսրությունը։ Փետրվար ամսին նրա զորքն անցավ Ծաքսարտես (Սիր-Դարյա) գետը, բայց շուտով հարկադրված եղավ կանգ առնել։ Լանկթամուրը, որ արդեն մոտ յոթանասուն տարեկան էր, ծանր հիվանդացավ և մեռավ Օթրարում փետրվարի կեսերին։*

*Չաղաթայ այս աշխարհակալի արշավանքները և տիրապետությունը Մերձավոր Արևելքում տևեցին ուղիղ քսան տարի (1386—1405), բայց սրա հասցրած հարվածները իր նվաճած երկրներին այնքան ծանր էին, որ մնացին երկար դարերով անդարմանելի։ Մենք տեսանք, որ ավերածությունները և բնակչության կոտորածները ու գերեվարությունները սովորական երևույթ էին դառել Արևմտյան Ասիայում դեռևս նախորդ դարերում, սակայն Լանկթամուրի ավերածությունները և գազանությունները, անկասկած, բոլորից ամենասոսկալին էին։*

*Աղբյուրների վկայություններից երևում է, որ Լանկթամուրի արշավանքների ժամանակ Անդրկովկասի ու Հայաստանի բնակչության կազմի մեջ տեղի էին ունեցել նոր փոփոխություններ։ Նա այստեղից, ինչպես վերև տեսանք, գերիների անթիվ անհամար բազմություն տարել էր Միջին Ասիա և գլխավորապես Սամարղանդ։ Միևնույն ժամանակ գաղթեցրել էր Խորասանից Ղարաբաղ թուրքական ցեղեր, ուր վերականգնել էր Բայլական քաղաքը։ Իբն-Արաբշահի ասելով՝ Լանկթամուրի սովորությունն էր փոփոխել զորքերի ու ժողովուրդների բնակության տեղերը։*

> *«Երբ նա,— վկայում է Իբն-Արաբշահը,— տիրում էր որևէ մի քաղաքի՝ անպատճառ զորքերի մի մասն այնտեղ*

---

[1] *Տե՛ս* Իբն-Արաբշահ, *էջ 182—187*։

էր բնակեցնում և այդ երկրում էր թողնում, իսկ այդ աշխարհի մարդկանց մի մասը փոխադրում էր և բնակեցնում ուրիշ երկրում, արևելյան բնակիչներին տանում էր արևմուտք, արևմտյան ժողովուրդներին՝ արևելք, հարավայիններին՝ հյուսիս և հյուսիսյաններին՝ հարավ»[1]։

Հատկապես Հայաստանի հայ ազգաբնակության նվազումը Թոխթամիշի և Լանկթամուրի արշավանքներից ու ավերածություններից հետո հիշատակված է Կլավիխոյի Ուղեգրության մեջ, որն ուղարկված էր Լանկթամուրի մոտ Սամարղանդ որպես դեսպան Սպանիայի Հենրի Գ թագավորի և 1404 թվին (ապրիլ—հունիս ամիսներին) Տրապիզոնից եկել էր Երզնկա և ապա Էրզրումի, Սուրմալուի, Բայազետի և Մակուի վրայով անցել էր Խոյ և այնտեղից Թավրիզ։ Սամարղանդից նա վերադարձել էր Եվրոպա դարձյալ Հայաստանի վրայով (1405 թ. օգոստոս—սեպտ. ամիսներին), բայց այս անգամ նա Խոյից գնացել էր Տրապիզոն Ալաշկերտի, Ավնիկի, Էրզրումի ու Սպերի վրայով։ Հայաստանի կիսաավերակ վիճակը և ազգաբնակության կազմի փոփոխությունը մատնանշված են, հատկապես, Սուրմալուի, Իգդիրի, Սյունիքի, Արտազի, Կոգովիտի և Բագրևանդի շրջաններում նրա Ուղեգրության հետևյալ հատվածներում.

1. Ուղեգրություններ, հատ. Ա., էջ 109.

«Սուրմարիի բնակչության ստվար մեծամասնությունը նախապես եղել են հայեր, որովհետև Հայաստանի քաղաքներից մինն է, բայց վերջին տարիներս շատ քրիստոնյաներ տեղահանվել են այս տեղից և իսլամներն են եկել ու հաստատվել նրանց տեղը....։ Սուրմարիում տակավին տեսնվում են մի շարք աշքառու և գեղեցիկ շենքեր»։

2. Նույնը, էջ 111.

«Հաջորդ օրը շաբաթ, որ մայիսի [31-ն] էր, մենք մեկնեցինք Իգդիրից և մեր ճանապարհն ընթանում էր այն լեռան կողքից, որի վրա Նոյան տապանը հանգչած էր։ Լեռը հիրավի շատ բարձր է, և նրա գագաթը մշտապես ծածկված է ձյունով։ Բոլոր բարձունքներում հիմա ձյուն էր եկել։ Լեռան ձորերը բոլորովին լերկ էին. այստեղ անտառ չի աճում, բայց արոտի համար շատ կանաչություն կար, և այնտեղից հոսում էին շատ գետեր։ Մեր ճանապարհը անցնում էր լե-

[1] Տե՛ս Իբն-Արաբշահ, գլ ԼԱ, էջ 189։

ռան շուրջից. և անցանք շատ ավերակ վայրեր, ուր տեսանք տների հիմքերը՝ շինված մեծ չափի քարերով»։

3. Նույնը, էջ 124.

«Տասնմեկ տարի առաջ էր (*), որ Թաթարների խան Թոխթամիշը իշխանության գլուխ անցնելով և բազմաթիվ ձիավոր հետևորդներ ունենալով [Ղփչաղից] արշավեց գրավելու համար Պարսկաստանը։ Նա հասավ [Ատրպատականի] նահանգը և գրավեց Թավրիզը ու Վերին Հայաստանի բոլոր շրջանները։ Շատ քաղաքներ կողոպտվեցին, շատ բերդեր ավերվեցին և իր բանակները քար ու քանդ արին գյուղերը, ինչպես մենք դեսպաններս տեսանք այս մասերում ճանապարհորդելիս, մասնավորապես, երբ մենք եկանք Սուրմարի քաղաքը։ Նույնը վիճակվեց նաև Սիսական շրջանի գլխավոր քաղաքին, ինչպես նաև Հայաստանի մյուս երկըրներին»։

4. Նույնը, էջ 138.

«Այնուամենայնիվ հաջորդ կիրակի օրը ստիպված էինք շարունակել, անցնելով բոլորովին անբնակ երկրից և երկուշաբթի միևնույնն էր։ Հայաստանի այս մասում [Խոյից մինչև Ալաշկերտ] բնակչության բացակայության պատճառն այն է, որ քրիստոնյաները կորցրել են իրենց իշխանությունն ամբողջ Մեծ Հայաստանում, քաղաքացիական կռիվների հետևանքով, որ վերջերս տեղի է ունեցել արքայական երեք եղբայրների միջև»։

5. Նույնը, էջ 139.

«Այսպես էր որ իսլամները եկել և գրավել էին ամբողջ Հայաստանը, որովհետև երբ նրանք տիրապետել էին քաղաքներին, մահացրել էին մեծավ մասամբ քրիստոնյա հայերին, որոնք բնիկներ էին, և նրանցից հետո նրանց տեղերը գրավել են»։

Ուշագրավ է առանձնապես, որ Կլավիխոն, որն անցել էր, գլխավորապես, Հայաստանի հարավային ու արևմտյան շրջաններով, իր Ուղեգրության մեջ (1403—1406 թ.) հիշատակում է միմիայն մեկ վայր, վերոհիշյալ Մակու բերդը, որ պատկանել է հայ իշխանի, և նա իր զարմանքն է հայտնում, որ այստեղ քրիստոնյա իշխանությունը կարողացել էր պահպանվել։ Մակուի հայ իշխանության մասին Կլավիխոյի վկայությունը կարևոր եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։

6. Նույնը, էջ 114—116.

«Մեզ ասացին, թե Թիմուրն անցյալում պաշարել է Մակվի այս բերդը, բայց չի կարողացել գրավել այն, հետևաբար նա դիմել և համաձայնության էր եկել տեղի իշխանի հետ [Նուր-ադ-դինի հետ, որ հայ-կաթոլիկ էր], որ ընդունել է քսան ձիավոր տալ Թիմուրին, որոնք պետք էր միանային նրա բանակներին, երբ որ պահանջ լիներ։ Այս համաձայնությունից քիչ հետո Թիմուրը պատեհություն էր ունեցել նորից անցնելու Մակուից և վերոհիշյալ իշխանն առաջարկել էր, որ իր որդին, քսան տարեկան մի երիտասարդ, առնելով երեք լավ թամբված ձիեր, դիմավորե և նվիրե նրան։ Երբ Թիմուրն եկել էր բերդի ստորոտն, այս երիտասարդը դիմավորել էր նրան, նվիրելու համար այս ձիերը իր հոր կողմից, և Թիմուրը շնորհալի կերպով ընդունելով նվերը, հայտարարել էր, թե իր մարդկանցից ոչ ոք վնաս չհասցնի բերդի հողերին։ Ապա, Թիմուրը նկատելով, որ բերդի իշխանը այսպիսի լավ որդի ունի, ասել է, թե հիրավի ափսոս է, որ այսպիսի մի երիտասարդ փակվի տանը, և թե Թիմուրը պիտի ընդունի նրան, տանելով իր հետ իր թոռան ընկերակից լինելու համար։ Այս իշխանը, Թիմուրի թոռը, կոչվում էր Օմար Միրզա, և նա այդ ժամանակ հաստատված էր որպես կառավարիչ ամբողջ Արևելյան Պարսկաստանի, որի շրջանում գտնվում է Մակուն։ Այն երիտասարդը, որին այսպես Թիմուրն իր հետ տարավ, ներկայումս ապրում է Օմար Միրզայի մոտ, և նրա բանակի հրամանատարն է։ Բայց նրան ստիպել են, հակառակ իր կամքին իսլամություն ընդունել, նրան տալով Սիուրղաթմիշ անունը, և նա այժմ Օմար Միրզայի պահակների հրամանատարն է։ Արտաքնապես նա իրեն հայտարարում է իսլամ, բայց ոչ ազատ կամքով, սակայն սրտով նա տակավին կաթոլիկ է։

Մենք բոլորս շատ քաղաքավարությամբ հյուրընկալվեցինք Մակվում՝ բերդի իշխանի կողմից, որ մեծ մխիթարություն էր զգում այն իրողությունից, որ մենք քրիստոնյա էինք. նա մեզ ցույց տվեց մեծ հյուրասիրություն։ ...Մակվի բերդում մեր ժամանման հաջորդ գիշերը շատ հաճելի ու հանգիստ անցուցինք, և վերջին Օմար Միրզայի բանակատեղում մենք հանդիպեցինք կառավարչի վերոհիշյալ որդուն և հաճախ խոսակցություն ունեցանք նրա հետ։ Կառավարիչը

*տանը ուներ մի ուրիշ որդի, ավելի երիտասարդ քան մյուսը. և խոսակցության ընթացքում նա մեզ տեղեկացրեց. թե իր երկրորդ որդին իր մյուս եղբոր նման զենքի մարդ չլինելով, ավելի հայ լեզվի քերականության ուսանող է և վարպետ, նա փափագ հայտնեց, որ երբ աստված կամենա, Սամարղանդից վերադարձին մենք անցնենք այս բերդից, նա պիտի վստահի մեզ, որ այս երիտասարդը մեզ հետ տանենք Սպանիա։ Այն ժամանակ մեր թագավորը, նա վստահ էր, թե պիտի համակրի նրան և հանձնարարի պապին, խնդրելով նորին սրբությունից նրան ձեռնադրելու եպիսկոպոս իր հոր նահանգի վրա։ Հիրավի, զարմանալի է՝ թե ի՞նչպես Մակվի այս քրիստոնյաները կարող են պահել իրենց, շրջապատված մահմեդական ժողովրդով և այսքա՛ն կտրված բոլոր քրիստոնյաների օգնությունից, փաստապես նրանք պատկանում են հայ ազգին, բայց հռովմեական կաթոլիկ հավատքին, և նրանք աստծուն ծառայում են ուղղափառ ծիսակատարությամբ»։*

*Լանկթամուրի արշավանքներից հետո Մերձավոր Արևելքի և Հայաստանի դրությունը դարձյալ ծանր էր և 15-րդ դարում։ Ինչպես Լանկթամուրի հաջորդների, նույնպես և Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլու թուրքմենների տիրապետության ժամանակ, ավերածությունները պարբերաբար շարունակվեցին և, ինչպես կտեսնենք, տնտեսական ու կուլտուրական կյանքը ո՛չ միայն կանգ առավ նրանց մեջ, այլև հետադիմեց։*

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

# ՂԱՐԱ-ՂՈՅՈՒՆԼՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Լենկթեմուրի լայնածավալ պետության քայքայումը։— 2. Օմար Միրզա.— Քրիստոնյաների մահմեդականացումը և նահատակությունները։— 3. Ղարա-Յուսուֆի և Ջելայիրյան Ահմեդի վերահաստատումը իրենց իշխանություններում։— 4. Ղարա-Յուսուֆի հաղթությունները և նվաճումները։— 5. Տասնամյա խաղաղություն Հայաստանում (1410—1420)։— 6. Շիրվանի նվաճումը և Ախալցխայի կրած աղետը.— կռիվները արևմուտքում Ղարա Օսմանի հետ։— 7. Շահռուխի արշավանքը և Ղարա-Յուսուֆի մահը (1420).—Ասպահան և Իսքանդար (1421/2—1437)։— 8. Խլաթի ու Վանի շրջանների և Ոստունիքի վերագրավումը.— այս շրջանների աղետալի դրությունը ըստ ժամանակակից հիշատակարանի։— 9. Ուրմիայի և Սուլթանիեի առումը և Շահռուխի նոր արշավանքը (1426)։— 10. Կռիվները Հայաստանում և սովը (1431)։— 11. Իսքանդարի ասպատակությունները Շիրվանում (1434)։— 12. Շահռուխի երրորդ արշավանքը Իսքանդարի դեմ (1435). —Իսքանդարի փախուստը և Ղարա Օսմանի պարտությունը ու մահը։— 13. Նրա վերադարձը և հայերի բռնի գաղթեցումը Արարատյան և Սյունյաց երկրներ.— Իսքանդարի փախուստը և մահը (1437/8)։— 14. Ջհանշահ (1435—1467).— Օրբելյան Բեշքենի թունավորումը.— Ջհանշահի արշավանքը Վրաստան (1441).— Նրա խաղաղասեր քաղաքականությունը Հայաստանում։— 15. Ջհանշահի արշավանքները դեպի Երզնկա և Կամախ։— 16. Մարաստանի, Իրաքի ու Ֆարսիստանի նվաճումը։— 17. Հարձակումը Բաղեշի ամիրայի վրա։— 18. Ջհանշահի արշավանքը Ուզուն Հասանի դեմ և մահը (1467)։ 19. Ղարա-Ղոյունլուների և Աղ-Ղոյունլուների քոչվորական ֆեոդալիզմի հիմքերի վրա հաստատված հասարակական կարգերը.— իշխող զինվորական ազնվականության ստացած ընդարձակ երկրամասեր.— «սոյուրղալը» և նրա առանձնահատուկ բնույթը։— 20. «Սոյուրղալ» ստացողների պարտականությունները։— 21. Պետական հողեր («դիվանի»), «խասսե» ու «մյուլք»։— 22. Գյուղացիների ու քաղաքացիների հարկերը և պարտիքները.— Ղասիմի 1498 թվի սոյուրղալական շնորհագրում հիշված հարկերն ու պարտիքները։— 23. Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլուների նվաճած երկրների պետական կազմակերպությունը։

*Լենկթեմուրի մեծ ու ընդարձակ աշխարհակալությունը, որ ստեղծվել էր կարճ ժամանակում՝ միաձույլ ու կայուն մի պետու-*

թյուն չէր, այլ բազմազան ժողովուրդների ու երկրների թուլահող մի համախմբումն էր, որ հնազանդության մեջ էր պահվում մահի, սարսափի տակ։ Կազմակերպչական պետական աշխատանքը Լանկ-թամուրին խորթ էր ու քիչ էր հետաքրքրում, և նա կարևոր չէր համարել ստեղծել իր նվաճած երկրներում տեղական ուժեղ վարչություն, այլ բավականացել էր միայն նրանով, որ դրանց կառավարությունը հանձնարարել էր, գլխավորապես, իր որդիներին ու թոռներին։ Շնորհիվ դրան, Լանկթամուրի մահից հետո նրա մեծ աշխարհակալությունը, որի մեջ իսկույն ծայր առան ներքին երկպառակություններ և գահակալական կռիվներ՝ մեծ արագությամբ քայքայվեց և շատ տեղերում տեր դառան իրենց երկրների իշխանական նախկին տոհմերը։

Լանկթամուրն իրեն հաջորդ էր նշանակել իր թոռին՝ իր մեծ որդի Ջհանգիրի Փիր-Մուհամմեդ որդուն։ Սակայն նրա զորքը թագաժառանգ ու հաջորդ հայտարարեց նրա թոռ Խալիլին։ Սկսվեցին այնուհետև Լանկթամուրի պետության արևելյան մասում ներքին կռիվներ ու խռովություններ, մինչև որ այս կողմերում իշխանությունն իր ձեռքն առավ Լանկթամուրի կրտսեր որդի Շահռուխը, որը դեռ իր հոր կենդանության ժամանակ Խորասանի կուսակալ էր նշանակված (1404—1447)։

Խլրտումները և արյունահեղ ընդհարումները ավելի երկարատև եղան Լանկթամուրի պետության արևմտյան մասում, ուր նվաճված երկրների նախկին տերերը ոտքի ելան և համառությամբ կռվեցին Միրանշահի ու նրա որդիների դեմ, որ իշխում էին արևմուտքում։

Լանկթամուրի իշխանության վերջին տարիներում Ադրբեջանի և Անդրկովկասի կուսակալ էր նշանակված նրա թոռը՝ Միրանշահի որդի Օմարը։ Թովմա Մեծոփեցին այս Օմարին անվանում է «ատեցող ազգիս քրիստոնէից»։

«Նա,— ասում է Մեծոփեցին,— իր իշխանության առաջին տարում բռնությամբ անհավատ դարձրեց մեր ազգից երեք իշխաններ, որոնք իբրև ողկույզներից մի ճութ մնացել էին մեր ազգի մեջ, այն է՝ Օրբելյանների տոհմից Իվանեի որդի Բուրթելի թոռ՝ Բուրթելին, որը Որոտանի տերն էր և նրա Սմբատ եղբայրը. սրանց իրենց ընտանիքների հետ տարան Սամարղանդ, բայց հետո աստծու ողորմությամբ և իրենց աղոթքների շնորհիվ վերադարձան իրենց հայրենիքը. ուրացուցին նաև Եղեգիսի տեր Տարսայիճին, Գորգոնի որ-

դուն, իսկ Մակուի տիրոջ ստիպեցին հրաժարվել սուտ և երկաբնակ աղթարմայությունից[1], նմանապես և մի ազատորդու Աղիտան անունով Արարատյան գավառի Աղցքն գյուղից. սրանք հետո զղջացին և նորից եղան քրիստոսի ճշմարիտ հավատացյալներ և արքայության ժառանգորդներ»։

[«Որ և յառաջին ամի իշխանութեան իւրոյ երեք իշխան յազգէս մերմէ, որք իբրև զճիռ մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն՝ զորդի Իվանէին զԹոռն Բուռթէլին զԲուռթէլ անուն յազգէն Օրբելեանց զտէրն Որոտնայ, և զեղբայր նորին Սմբատ անուն [զորս] տարան ի Սմրղանդ ընտանեօք իւրովք, որ յետոյ աստուածային ողորմութեամբն և աղօթիւք նոցա դարձան ի հայրենիս իւրեանց. և զտէրն Երեգեաց Տարսայիճ անուն՝ զորդի Գորգոնին ուրացուցին. և զտէրն Մակուայ հանին ի սուտ և յերկաբնակ աղթարմայութենէն, և ազատորդի մի Աղիտան անուն ի յԱրարատեան գաւառէն ի գեղջէն Աղցուաց. որք և յետոյ զղջացան և եղեն ճշմարիտ հաւատացեալք և ժառանգք արքայութեան»][2]։

Պետք է ասել, որ 14-րդ դարից սկսած քրիստոնյաներից շատերը և, մասնավորապես, նաև հայերը, ստիպված են եղել ընդունել մահմեդականություն։ Նրանց մի մասը հավատափոխ էր եղել կամավոր կերպով, որպեսզի ազատվի դրամական ծանր գլխահարկից, որ առնում էին քրիստոնյաներից։ Իսկ մեծագույն մասը մահմեդական էին դարձել բռնի կերպով Լանկթամուրի ու նրա հաջորդների ժամանակ։ Ուշագրավ է սակայն, որ սրածության, գերեվարության ու հալածանքների այս աղետալի ժամանակաշրջանում բազմաթիվ հայեր, գլխավորապես, ռամիկ ժողովրդից, ինչպես երևում է «Հայոց նոր վկաները» վերոհիշյալ հրատարակությունից և հիշատակարանների այլ վկայություններից, նահատակվել էին և հրաժարվել էին ուրանալ իրենց կրոնն ու ազգությունը։

Լանկթամուրի մահից հետո Ջելայիրյան Ահմեդը և թուրքմեն Ղարա Յուսուֆը, որոնց սուլթան Ֆարաջը, վախենալով չաղաթայներից, բանտարկել էր Եգիպտոսում՝ ազատ արձակվեցին և, վերա-

---

[1] Ըստ Կլավիխոյի՝ Մակուի հայ իշխանի որդուն, որին ստիպել էին ընդունել իսլամություն, անվանել էին Սիուրղաթմիշ և նշանակել էին Օմարի պահակների հրամանատար։ «Ուղեգրություններ», հատ. Ա, էջ 114—115։

[2] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 67—68։

*դառնալով իրենց հայրենի երկրները՝ ուզեցին նորից վերահաստատվել իրենց նախկին իշխանություններում։*

*Արդեն 1405 թվի ամառվա վերջերին, երբ իսպանացի դեսպան Կլավիխոն Հայաստանի վրայով ետ էր դառնում Եվրոպա՝ Ղարա Յուսուֆը մտել էր Հայաստան և նվաճում էր Վանա լճի շուրջը գտնվող գավառները[1]։ Ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին[2], նա գալիս է նախ Բաղեշ, ուր Ամիր Շարաֆի Շամշադին որդին նրան ընդառաջ է գնում և օգնություն հասցնում զենքով, պարենամթերքով, գումարով և զինվորական ու պատերազմական ամեն տեսակ սարքով ու հանդերձանքով։ Այստեղից նա գնում է Ուշտունիք, ուր նրան հնազանդում են նաև Եզդին ամիրան ու նրա Մելիք որդին։ Իսկ այնուհետև Ղարա Յուսուֆը, ընդարձակելով իր իշխանության սահմանները մինչև Երզնկա՝ 1407—8 թվերին պարտության մատնեց Օմարին, սրա հորը՝ Միրանշահին ու եղբորը՝ Աբուբեքրին և տիրեց Թավրիզին ու ամբողջ Ադրբեջանին մինչև Արդավիլ և Սուլթանիյե[3]։*

*Նույն այս ժամանակ, երբ Ղարա-Յուսուֆը հաջողություն ուներ Հայաստանում ու Ադրբեջանում՝ Ջելայիրյան Ահմեդը ևս, սուլթան Ուվեյսի որդին, 1406 թվին վերստին գրավեց Բաղդադը և տեր դառավ իր տոհմի բուն երկրին՝ Արաբական Իրաքին։*

*1408/9 թվին Ղարա Յուսուֆն առավ Արտուխյան Սալըխից, որը Մերդինի ու նրա շրջանի վերջին իշխողն էր, ստրատեգիական կարևոր այս քաղաք-ամրությունը և նրա շրջակայքը։ Այնուհետև Ղարա-Ղոյունլու թուրքմենները դառան արևմուտքում անմիջական հարևան Աղ-Ղոյունլու թուրքմենների, որոնք թեև ցեղակից էին, բայց թշնամի էին նրանց։ Այս երկու ցեղը տարբեր կրոններ էին դավանում՝ Ղարա-Ղոյունլուները աղանդավորներ էին շիա դավանանքի, իսկ Աղ-Ղոյունլուները սուննիներ էին[4]։*

*Ապահով համարելով իր թիկունքը լանկթամուրյանների հարձակումներից, որոնց մեջ շարունակվում էին դեռ ներքին երկպառակությունները՝ Ղարա Յուսուֆը ռազմերթի ելավ Աղ-Ղոյունլուների առաջնորդ Ղարա Յուլուք Օսմանի դեմ, որը իր ամենաուժեղ հակառակորդն էր արևմուտքում։ 1409/10 թ. նա մտավ Աղ-Ղոյուն-*

---

[1] *Տե՛ս «Ուղեգրություններ», հատ. Ա, էջ 136—138 և 140—141։*

[2] *Տե՛ս* Թովմա Մեծոփեցի, *էջ 70։*

[3] Նույնը, էջ 71—72. Սամուել Անեցի, *(շարուն.)*, էջ 173. Գրիգոր Խլաթեցի, *«Յիշատակարան աղէտից», էջ 14։*

[4] *Տե՛ս Minorsky*, La Perse au XV-e siécle. էջ 4—5։

լուների երկիրը, հաղթեց նրանց Մշո դաշտում և պաշարեց Ամիդ-Դիարբեքիրը և Արղանան։ Սակայն երբ նա այդ քաղաքներն առնելու մոտ էր՝ միջամտեց Երզնկայի Փիր-Օմար ամիրան և հաշտեցրեց նրան Ղարա Օսմանի հետ (1410 թ.)[1]։

Ղարա Յուսուֆի այս արշավանքի ժամանակ Ջելայիրյան Ահմեդ սուլթանը, որը վերագրավել էր Բաղդադը, ուզեց վերանվաճել նաև Ադրբեջանը, որը Թոխթամիշի և Լանկթամուրի արշավանքներից առաջ գտնվում էր նրա իշխանության տակ։ Օգտվելով թուրքմեն զորաբանակի բացակայությունից՝ նա կարողացավ գրավել Թավրիզը։ Բայց իսկույն վրա հասավ իր զորքերով Ղարա Յուսուֆը և, պարտության մատնելով Ահմեդին՝ մահապատժի ենթարկեց թե նրան և թե նրա որդիներին (1410)։ Այնուհետև Ղարա-Ղոյունլուների առաջնորդը երկար պաշարումից հետո գրավեց նաև Բաղդադը (1411 թ.) և Ջելայիրյանների երկրի մեծագույն մասը միացրեց իր նորաստեղծ պետությանը։

Այսպիսով, շատ կարճ ժամանակում (1405—1411) նրա պետությունը խիստ ընդարձակվեց և պարունակում էր իր մեջ Արաբական Իրաքը, Պարսկական Ադրբեջանը, Առանը և Հայաստանի մեծագույն մասը։ Նույն այս ժամանակաշրջանում, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին[2], նա առել էր Օրբելյան Իվանեի որդի և Բուրթելի թոռ Սմբատից Որոտնը։ Ըստ երևույթին, նա գրավել էր միաժամանակ նաև Սյունիքի մյուս շրջանները։

Լանկթամուրի և Ղարա Յուսուֆի պարբերաբար կրկնվող արշավանքներից ու ավերածություններից հետո, որոնց գլխավոր բեմերից մեկը Հայկական լեռնաշխարհն էր՝ Հայաստանը մոտ տասը տարի, մինչև 1420 թիվը, խաղաղ դրության մեջ մնաց, որովհետև կռիվները այնուհետև տեղի էին ունենում Հայաստանի հարևան այլ երկրներում։ Այս կարճատև հանգիստը այնպիսի արտասովոր ու բացառիկ երևույթ էր այժմ այս երկրում, որ առանձնապես ընդգծված է և գոհունակությամբ հիշատակված է հայկական աղբյուրներում։

«Եվ նույն այս ժամանակներում,— վկայում է Թովմա Մեծոփեցին,— խաղաղություն էր աստծու խնամքով Վրաց և Աղվանից ամբողջ մեր աշխարհում և շենություն էր բոլոր այս երկրում, այնպես որ Արճեշի կողմերից մինչև Արարատյան գավառը մարդիկ ապրում էին ո՛չ թե ավեր, այլ շեն

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 72 և այլն։
[2] Նույնը, էջ 34։ Համեմատե Ալիշան, Սիսական, էջ 96։

տեղերում. և թեպետ հարկապահանջությունը շատ էր, բայց խաղաղությունն անվրդով էր»։

[«Եւ եղև ի նոյն ժամանակս խաղաղութիւն խնամօքն Աստուծոյ ամենայն աշխարհիս Վրաց և Աղվանից, և շինութիւն ամենայն աշխարհիս, մինչ զի յԱրճիշու մինչ ի գաւառն Արարատեան մարդիկ ի յաւէր ոչ բնակէին. այլ ի շէնս բնակէին. և թէպէտ հարկապահանջութիւնն բազում էր, սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր»][1]։

Նույնը ընդգծում է նաև Գրիգոր Խլաթեցին և Ղարա Յուսուֆի մասին վկայում է[2], որ

«Արար բազում խաղաղութիւն
Եւ յաջողումն մարդկային.
Էրէմնութիւն և էժնութիւն,
Ամենևին անգողութիւն»։

1413 թվին Ղարա Յուսուֆը, ձգտելով ավելի ևս ընդարձակել իր պետությունը, դիմեց դեպի Շիրվան և գրավեց նաև այս երկիրը։ Շեյխ Իբրահիմ Դերբենդցին, որ գերի էր բռնվել, ազատվեց, վճարելով մեծ փրկանք, բայց ենթարկվեց նրա գերագույն իշխանությանը։ Շուտով, Ղարա Յուսուֆի մահից հետո (1420), Շիրվանը կարողացավ դառնալ անկախ պետություն և Դերբենդյան դինաստիայի իշխանության ներքո սկսեց արագ կերպով զարգանալ ու բարգավաճել տնտեսապես և կուլտուրապես։ Նրա այդ բարեկեցիկ վիճակը տևեց մոտ հարյուր տարի՝ մինչև 16-րդ դարի սկզբները[3]։

Շիրվանից վերադառնալուց հետո Ղարա Յուսուֆը իրեն նստավայր ընտրեց Վաղարշակերտը (այժմյան Ալաշկերտը), որ գտնվում էր Հայաստանի Բագրևանդ գավառում։ 1416 թվին նա այստեղից հարձակվեց Ախալցխա քաղաքի վրա և, գրավելով քաղաքը, որի իշխանն էր Աղբուղայի որդի Իվանեն, բնակչությունն անխնա կոտորեց և ավերելով նաև ամբողջ երկիրը, վերցրեց հարուստ ավար ու անթիվ քանակությամբ գերիներ և վերադարձավ Վաղարշակերտ։

«Եվ նրանք,— պատմում է Թովմա Մեծոփեցին,— կատաղի ու անողորմ գազանների նման սրի անցկացրին նրանց և մորթեցին որպես անմեղ գառների՝ անթիվ ու անհամար,

---

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 73։

[2] Տե՛ս «Յիշատակարան աղէտից», հրատ. Գ. Խալաթյանցի, Վաղարշապատ, 1897, էջ 14—15։

[3] Տե՛ս Пахомов Е. А., Краткий курс истории Азербайджана, էջ 20։

*ավելի քան կարող է մարդ մտածել։ Եվ բոլոր այն աշխարհը նրանք գերի վերցրին, թե կին և թե տղամարդ, և գերիներով լցրին Հայկազյան ազգի ամբողջ երկիրը։ Իսկ մեր ազգի քրիստոնյաները խղճացին բոլորին՝ հոգևորականներին և աշխարհականներին, և իրենց հոգու ու մարմնի ստացվածքը (՞) տվին դնելու համար գերիներին։ Եվ մերթ գողանալով ու մերթ փախցնելով՝ ազատում էին քրիստոնյաներին, և պատահում էր նաև, որ գազանների կերակուր էին լինում։ Եվ ո՞վ կարող է պատմել կամ գրի առնել տառապանքների այս աղետը և հայրերի ու մայրերի, որդիների ու դուստրերի լաց ու ողբի կսկիծը։ Առավել ևս չէին կարող դիմանալ նաև տեսնողները. կանայք պոկում էին իրենց զարդարանքները, տղամարդիկ տալիս էին իրենց անասունները, քահանաները և կրոնավորները՝ իրենց աղքատիկ միջոցները. ո՛վ որ ոչխար ուներ կամ տավար՝ տալիս էր և նրանց գնում էր։*

*Եվ երբ անօրենները տեսան նրանց բարեհոժարությունը՝ բոլոր գերիների գները բարձրացրին մինչև 10.000 և 20.000, նույնիսկ մի քահանայի գնեցին Արճեշում ու Արծկեում 230.000 դահեկանի»։*

*[«Եւ նոքա իբրև կատաղի և անողորմ գազան սուր եդեալ ի վերայ նոցա իբրև զգառն անմեղ զենուին ի վեր քան զհամար և զթիւ մտաց մարդկան։ Եւ զամենայն աշխարհն գերի առեալ զկին և զտղայ գերութեամբ լցին զամենայն աշխարհն Հայկազեան սեռի. եւ զամենայն քրիստոնեայքն ազգիս ողորմելի արարին զկարգաւոր եւ զաշխարհական, եւ զհոգւոյ եւ զմարմնոյ ստացուածս ի գին գերւոյն ետուն։ Եւ էր որ գողութեամբ, և էր որ փախստեամբ ազատ առնէին զքրիստոնեայսն, և էր որ գազանակուր լինէին։ Եւ ո՞վ կարէ պատմել եւ կամ ընդ գրով արկանել զաղէտս տարակուսանացն և զկսկիծ լալոյ և ողբոյ հարցն և մարցն, որդւոցն և դստերացն։ Եւ ևս առաւել տեսանողքն ոչ կարէին ժուժկալել. կանայք զզարդարանս իւրեանց կողոպտէին, արք՝ զանասունս, քահանայք և կրօնաւորք զաղքատութիւնս իւրեանց ցուցին. ում ոչխարիկ և ում տաւարիկ կայր՝ տային և գնէին։*

*Եւ տեսեալ անօրինացն զյօժարութիւն նոցին՝ զամեն գերին հանեցին ի 10.000 եւ ի 20.000, մինչ զվ քահանայի*

միոչ յԱրճէշ եւ յԱրծկէ երկերիւր երեսուն հազար դահեկան գնէին»]¹։

Այնուհետև Ղարա-Ղոյունլուների այս հզոր առաջնորդը, իր հաջողություններից քաջալերված, Ամիդ-Դիարբեքիրի կողմով ներխուժեց Հյուսիսային Միջագետք, Հռոմկլայի մոտ հաղթեց իր ախոյան Ղարա-Յուլուք Օսմանին (1418 թ.) և, հալածելով նրան, մտավ Ասորիք։ Բայց այստեղ նա աչքի ընկնող հաջողություն չունեցավ, և, լուր ստանալով իր Փիր Բուդաղ որդու մահվան մասին, որին նա կարգել էր Ադրբեջանի խան, շտապ կերպով վերադարձավ։

1419 թվին Աղ-Ղոյունլուների առաջնորդ Օսմանը, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին², առավ Երզնկան և սպանեց նրա իշխան Փիր Օմարին, որը գտնվում էր Ղարա Յուսուֆի գերիշխանության տակ։ Նրա համարձակ այս ելույթը արևմուտքում, ըստ երևույթին, համաձայնեցված էր Լանկթամուրի որդու Շահռուխի գործողությունների հետ արևելքում։ Վերջինս, որ հետզհետե նվաճել էր Ցարսիստանը և Մարաստանը, 1420 թվին, երբ Ղարա Յուսուֆը պատրաստվում էր վրեժ առնելու Ղարա Օսմանից՝ մտավ Պարսկական Ադրբեջան և մոտեցավ Թավրիզին։ Հարձակումը Թավրիզ մայրաքաղաքի վրա կանխելու համար՝ չաղաթայան բանակի դեմ շտապեց իր զորքերով դուրս գալ Ղարա Յուսուֆը, որը թշնամուն հանդիպեց Թավրիզի ու Միանեյի միջև գտնվող Ուջան քաղաքի մոտ։ Բայց նա այստեղ հանկարծամահ եղավ և նրա լքված զորքերը ետ նահանջեցին ու ցրվեցին (1420 թ.)։ Այնուհետև, Շահռուխի զորամասերը, հետապնդելով ու հալածելով նրանց, մտան Քաջբերունիք գավառը և, ավերելով Վանա հյուսիսակողմի շրջանները՝ հասան մինչև Տարոն։

Ղարա Յուսուֆի մահից հետո Շահռուխի դեմ Բաղդադից եկավ նրա որդի Սքանդարը, որը, գլուխ կանգնելով իր հոր ցիրուցան եղած բանակի ու հավաքելով նաև նոր զորք՝ մտավ Բագրևանդ, որ իր հոր նստավայրն էր։ Եվ հենց այստեղ, Ալաշկերտի դաշտում, տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, որի ընթացքում Սքանդարի թուրքմեն զորաբանակը պարտություն կրեց Շահռուխի զորքերի թվական գերակշռության պատճառով (1421 թ.)³։

Այս ճակատամարտից հետո Սքանդարը և նրա եղբայր Ասպա-

¹ Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 77—78։

² Տե՛ս նույնը, էջ 78։

³ Տե՛ս նույնը, էջ 80—81. Գրիգոր Խլաթեցի, «Յիշատակարան աղէտից», էջ 15—18 և այլն։

հանը, որոնք մեծ դժվարությամբ կարողացել էին փրկվել իրենց զորաբանակի սակավաթիվ մնացորդների հետ՝ փախան Մերդինի ու Մոսուլի կողմերը, իսկ Շահռուխը, որին հպատակվել էին տեղական ամիրաները՝ իր զորաբանակի հետ վերադարձավ Խորասան։ Այնուհետև, Շահռուխի մեկնելուց հետո, Հայաստանին ու Պարսկական Ադրբեջանին ուզեց տիրել Ղարա Յուսուֆի Ասպահան որդին, որը վերադարձավ Բաղեշի կողմերից և գրավեց Թավրիզը։ Բայց շուտով Բաղդադի կողմերից նրա դեմ եկավ մեծ եղբայր Սքանդարը, նրան դուրս վտարեց Ադրբեջանից ու Հայաստանից և անցավ իշխանության գլուխ։ Սրանց կռիվների միջոցին և Ասպահանի ու նրա բանակի նահանջի ժամանակ, ինչպես վկայում է Գրիգոր Խլաթեցին, ավերածության էին մատնվել Հայաստանում բազմաթիվ գավառներ ու վայրեր։

«Իսկ անիծեալն ամենևին
Կըրսեր որդի Միր Ուսուֆին՝
Ասպահանն· անաւթ չարին,
Լիրբ. անզգամ, յիմար հոգին,
էր վնասակար և աւերող
Շատ բարեկի չէն գաւառնին—
ԶԱրճէշ և զԱրծկէ աւերեց,
ԶԲասեն և զԱնիկըն քակեց,
ԶԿարնոյ քաղաքըն զԱռզըռում
Քան զամենայն խիստ աւերեց»[2]։

Ղարա Յուսուֆին հաջորդող Սքանդարի իշխանության մոտ տասնյոթ տարվա ժամանակամիջոցում (=1421/2—1437) Հայաստանի անմխիթար վիճակը ստացավ աղետալի բնույթ։ 1422/3 թվից սկսած տեղի ունեցան անվերջ կռիվներ ու պայքար— սկզբում նրա ու տեղական ամիրաների, իսկ ապա նաև նրա և Սպիտակխոյերի ու Շահռուխի միջև։ Այս կռիվների ընթացքում, որ կատաղի կերպով մղվում էին, գլխավորապես, Հայաստանի տերիտորիայի վրա՝ պատերազմող զորքերը շարունակ ավերում էին երկիրը և բնակչությունը կողոպտում էին, կոտորում կամ գերի վերցնում։

1423 և 1424 թվերին Սքանդարը երկու անգամ արշավեց Խլաթի շրջանը, գրավեց այստեղ Աղվանից կոչվող բերդը և սպանեց

[1] Տպագրված բնագիրն ունի «ըսպանդիարն» փոխ. «Ասպահանն»։
[2] Տե՛ս Գրիգոր Խլաթեցի. «Յիշատակարան աղէտից», էջ 19։

Բաղեշի ամիրա Շամշադինին, որը նրա ամենաուժեղ հակառակորդն էր և չէր համաձայնել հանձնել նրան Խլաթի բերդը։ Անցնելով Խլաթի շրջանից Վանա լճի հարավային կողմերը՝ նա կալանավորեց, երկրորդ իր արշավանքի ժամանակ, նաև Ռշտունիքի տեր սուլթան Ահմեդին, Եզդին ամիրայի որդուն, և նրա իշխանության տակ գտնվող Հայաստանի այս շրջանը մատնեց ավերածության. իսկ հետևյալ տարին նա սպանեց Ահմեդին Երնջակում, ուր նա բանտարկված էր։

1425 թվին Սքանդարը եկավ և պաշարեց Վանը, որը համառ դիմադրություն էր ցույց տվել նախորդ տարին։ Այս քաղաքի իշխան Մելիք Ասիդը չկարողացավ երկար դիմադրել և ստիպված եղավ անձնատուր լինել։ Եվ այստեղ Սքանդարը քաղաքի ու շրջանի կառավարիչ նշանակեց իր Արալի որդուն։

1425 թվի այս անցքերը, որ մատնանշված են Թովմա Մեծոփեցու մոտ[1], արձագանք են գտել նաև նույն 1425 թվին Աղթամարում գրված ավետարանի հիշատակարանում, որը մանրամասն նկարագրված է Լալայանի կազմած Վասպուրականի ձեռագրերի ցուցակում։ Ավետարանը, ասում է հիշատակարանում Թումա աբեղան, գրված է Աղթամարում տեր Դավթի հայրապետության ժամանակ և հայոց տոմարի ՊՀԴ [=1424/5] թվին՝

«Բոլորովին չար և դառն ու նեղության ժամանակում, որ թվին որ ամբողջ Հայոց երկիրը իմ ծովացած մեղքերի պատճառով մատնվեց սաման ու կողոպուտի և սրի ու գերության նետողաց անօրեն և անիծյալ ազգի կողմից։ Որովհետև այս արդեն մեկ տարի է, որ չար բռնավորը, Թավրիզի տեր Միրզա Սքանդարը, որ ազգով թուրք է, բռնել է Ոստան քաղաքի ամիրապետ սուլթան Ահմեդին և, շղթայելով երկաթե կապանքով՝ բանտ է դրել Երնջակի բերդում, պահանջելով նրանից նրա անառիկ ամրոցները։ Նա անմարդաբնակ արեց Հայոց այս երկիրը՝ Աղբակը, Քարպահը և մեր Ոստանա երկիրը՝ մինչև Բաղեշ։ Եվ այս երկրի բնակիչները՝ մերկ, բոբիկ ու սոված՝ հեռացան օտար աշխարհներ և ոմանք, գալով աստվածախնամ մեր կղզին և ապավինելով աստծուն և մեր սուրբ խաչի անհաղթ զորությանը՝ ազատվեցին չար բռնավորի ձեռքը գերի ընկնելուց»։

[«Ի յամենայն չար և ի դառն և ի նեղութեան ժամանակի, յորում ամի բոլոր աշխարհս Հայոց՝ ի յառ և ի յաւա-

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 84։

րի, ի սուր և ի գերութիւն մատնիցաւ վասըն ծովացեալ մեղաց իմոց ի ձեռս անաւրէն և անիծեալ ազգին Նետողաց։ Վասնզի այս բոլոր տարի մ՝է, որ չար բռնաւորն Ամիրզա Սքանդարն՝ տէրն Թաւրիզոյ, ազգաւ Թուրք, զամիրապետն Ոստան քաղաքի՝ զսուլթան Ահմադն՝ ըմբռնեալ է և երկաթի կապանաւք ի յԱլընչոյ բերթն ի բանդի է եդեալ, խնդրելով ի նմանէ զանառիկ ամրոցս նորա։ Եւ զերկիրս Հայոց, զԱղբակ և զՔարպահ և զՈստանայ երկիրս՝ մինչ ի Բաղէշ անմարդաբնակ արարեալ. և բնակիչք աշխարհիս, մերկ և բոկ և սովալըլուկ տարաշխարհիկ եղեալ. և ոմանք յաստուածախընամ կղզիս անկեալ, ապաւինելով յԱստուած և յամենայաղթ զաւրութիւն սուրբ խաչիս՝ ազատեցան ի գերութենէ չար բռնաւորին»[1]։

Նույն այս հիշատակարանի վկայություններից երևում է, որ 1425 թվի մոտերքը Աղ-Ղոյունլուների առաջնորդ Ղարա-Օսմանը, որը գործակցում ու օգնում էր տեղական ամիրաներին, հարձակվելով Արճեշի ու Արծկեի շրջանների վրա՝ կոտորել և գերի էր տարել սրանց բնակչությունը[2]։ Իսկ հետևյալ տարին, 1426 թվի գարնանը, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, Արծկեի վրա հարձակվել էին Շամշադինի եղբոր Սավալանի առաջնորդությամբ Բաղեշի քուրդերը, որոնք քաղաքը գրավելուց հետո բնակիչներին ենթարկել էին նորից կողոպուտի ու կոտորածի։ Այս արշավանքի ժամանակ Արծկեի մոտ գտնվող Ցիպնավանքում նահատակվել էր Գրիգոր վարդապետ Խլաթեցին՝ «Յիշատակարան աղէտից» ոտանավորի հեղինակը[3]։

Մինչ Հայաստանում այս դեպքերն էին տեղի ունենում, Սքանդարը 1426 թվին մեծ բանակով շարժվեց դեպի Ուրմիա, գրավեց այդ քաղաքը և դիմադրողներին, որոնք Շահռուխի և չաղաթայների կողմնակիցներն էին՝ չարաչար կերպով պատժեց։ Այնուհետև Սքանդարի զորքերը պաշարեցին Սուլթանիեն և, չնայած համառ դիմադրության, վերցրին քաղաքը և բանտարկեցին նրա էլխաս իշխանին, որը Շահռուխի ազգականն էր։

---

[1] Տե՛ս Լալայան Եռվ., Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 353։

[2] Նույնը, էջ 353։

[3] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 85. «Հայոց նոր վկաները», էջ 264—281. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Գ. էջ 462։ «Հայոց նոր վկաները» հրատարակության մեջ քննության է առնված և ճշտված Գրիգոր Խլաթեցու նահատակության թվականը։

1426 թվի այս անցքերը, իհարկե, պարզ ու համարձակ մարտահրավեր էին, որ Լանկթամուրի որդին չէր կարող անպատիժ թողնել։ Ուստի նրա դեմ իսկույն եկավ մեծ զորքով ինքը՝ Շահռուխը։ Ճակատամարտը երկու զորքերի միջև տեղի ունեցավ Սալմաստի մոտ, ուր Սքանդարի ահաբեկված զորքը մատնվեց ծանր պարտության և նրա զինվորներից շատերը, որոնց մի մասը քրիստոնյաներ էին և հայեր՝ գերի ընկան և ուղարկվեցին օտար աշխարհներ։

Կռվից հետո Շահռուխը իր զորաբանակի հետ գնաց դաշտային Ղարաբաղ, ուր անցկացրեց ձմեռը, իսկ գարնանը (1427 թ.) նա իր զորքի մի մասն ուղարկեց Սքանդարի դեմ, որը փախել էր Քաջբերունիքի շրջանը։ Վերջինիս հետապնդում էին Ամիրդի կողմից նաև Աղ-Ղոյունլու թուրքմենները՝ Շահռուխի դաշնակից Ղարա Օսմանի առաջնորդությամբ։ Այսպիսով, տեղի ունեցած անընդհատ այս գրոհների պատճառով Վասպուրականը և Տուրուբերանը, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, երեք կողմի զորքերից ոտնակոխ եղան և գրեթե բոլոր գյուղերն ու քաղաքները թալանվեցին ու ավերվեցին[1]։

Նաև 1427 թվից հետո համառ ու անընկճելի Սքանդարը, որը համարում էր իրեն Շահի-Արմեն, այսինքն՝ թագավոր Հայաստանի, և ձգտում էր հենվել, բացի իր թուրքմեններից, միաժամանակ և հայերի վրա՝ խիզախաբար կռվեց թե Շահռուխի և թե Ղարա Օսմանի զորքերի դեմ և, տեղից տեղ անցնելով, վարեց նրանց դեմ պարտիզանական պատերազմ։ Անտանելի էր ժողովրդի վիճակը այս անվերջ կռիվների ժամանակ, որ շարունակվեցին մինչև 1430 թիվը։ Գրեթե անընդհատ, տարիներ շարունակ, սրի ու գերության էր մատնվում խաղաղ ազգաբնակությունը ո՛չ միայն Տուրուբերանում ու Վասպուրականում, այլև Այրարատում ու Սյունիքում։ Իսկ լեռներում, ծերպերում ու անձավներում ապավինողները մեռնում էին սովից ու ցրտից։ Այս աղետների հետևանքով երկիրը շատ տեղերում անմշակ մնաց և 1431 թվին առաջ եկավ սարսափելի սով, որը նույնպես գործեց մեծ կոտորած։

Հայաստանի այս անասելի ծանր վիճակը մանրամասն նկարագրված է Թովմա Մեծոփեցու աշխատության մեջ։

«Եւ այս եօթն ամք են [1425—1431],— վկայում է նա,— որ ի ներքոյ դառն պատուհասի կամք. զի սուրն կոտորէր, սովն սպան, գերին պակասեաց, գազանք կերան զմար-

---

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 87 և հետ.։

դիկ, թռչունք կերան զվաստակս, գործն ու մկունք ապականեցին զանդաստանս. ավելի պատուհաս քան Բաբելացւոցն յաւուրս Աբրահամու և դառնագոյն քան զպատիժ Եբրայեցւոցն և Եգիպտացւոց»[1]։

1434 թվին Սքանդարը մեծ զորքով արշավեց Շիրվան։ Այս արշավանքի դրդապատճառը մատնանշված է Թովմա Մեծոփեցու մոտ։ Նրա պատմելով՝ Սքանդարի որդին՝ Արալին, որը իշխան էր դրված Վանում, անիրավություններ էր գործել քրիստոնյա և մահմեդական հարկատուների հանդեպ և վերջիններս գնացել գանգատվել էին Սքանդարին, որ իրենք այլևս անկարող են տանել այդ ամենը, որովհետև Արալին ծայրահեղ աղքատության դուռն է հասցրել ամբողջ երկիրը։ Սքանդարը, որ խիստ կատաղեց, որդուն կանչեց իսկույն իր մոտ։ Սակայն Արալին, երկյուղ կրելով հորից, փախավ Շիրվանի կողմերը Շեյխ Իբրահիմի որդի Խալիլի մոտ։ Բայց վերջինս, թշնամացած լինելով Սքանդարին՝ ձերբակալեց նրան և տվեց իր մարդկանց, որ տանեն և հանձնեն Շահռուխին։

Սքանդարն իմանալով այս՝ դաժան կերպով վրեժ առավ Խալիլից։ Նա ավերեց Շիրվանշահի երկիրը և ոչ միայն մատնեց սրի ու կողոպուտի նրա գյուղերն ու քաղաքները, այլև ոչնչացրեց նաև այգիներն ու պտղատու ծառերը, որ սովորական երևույթ էր և Լանկթամուրի ավերածությունների ընթացքում։ Սքանդարի այս պատժական արշավը շարունակվեց մի ամբողջ տարի։

Խիստ ուշագրավ է, որ շիրվանցիների կրած աղետի ժամանակ քրիստոնյաները օգնում էին իրար ու մահմեդականներին, ազատելով գերիներին[2]։ Փոխադարձ համերաշխությունը թուրք, հայ և ադրբեջանցի ժողովուրդների, որոնք թե Լանկթամուրի և թե հետագա կռիվների ու արշավանքների ժամանակ միասին հավասարապես տանջվում ու տառապում էին՝ հիշատակված են հայ աղբյուրներում։ Այս տեսակետից չափազանց հետաքրքրական են մահմեդականների, քրիստոնյաների և հրեաների համերաշխ աշխատակցությունը և նրանց միահամուռ ուժերով առաջացրած 1415—1418 թվերի ընդհանուր պայքարը և հեղաշրջումը Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայում Մուհամմեդ Ա Չելեպիի ժամանակ (1402—1421), որ դեռևս կարոտ է ուշադիր և մանրամասն ուսումնասիրության[3]։

---

[1] Թովմա Մեծոփեցի, էջ 95։

[2] Համեմատե նույնը, էջ 700։

[3] Տե՛ս Крымский, История Турции и ее литературы, т. первый, М., 1916, стр. 37 — 39.

Երբ Սքանդարի Շիրվանում գործած անգթությունների բոթը հասավ Խորասան՝ Շահռուխը, որի գերիշխանության ու հովանավորության ներքո էր գտնվում Շիրվանշահ Խալիլի երկիրը՝ 1435 թվին երրորդ անգամ արշավեց նրա դեմ։ Այս անգամ Շահռուխն իր բանակով մտավ Սյունիք և պաշարեց Երնջակը, ուր գտնվում էին Սքանդարը և նրա մոտ ազգականները։ Բայց Սքանդարը, որը բերդի մեջ չէր, այստեղից փախավ Արծափ և ապա Էրզրում, իսկ նրա մայրն ու եղբայրը, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, ուղարկեցին Շահռուխին հարուստ ընծաներ, ոսկի ու արծաթ, և խոստացան նրան, որ եթե հնար ունենան, հենց իրենք կսպանեն Սքանդարին[1]։

Էրզրումի շրջանում մոտ քսան հազար զորքով Սքանդարի դեմ դուրս եկավ Աղ-Կոյունլուների առաջնորդ Ղարա Օսմանը, որը դաշնակիցն էր Շահռուխի։

Բայց Սքանդարը, որն ուներ միայն մոտ երեք հազար հեծելազոր, անակնկալ կերպով հարձակվեց նրա զորքերի վրա, կոտորեց նրանց և մատնեց փախուստի։ Ճակատամարտում սպանվեց ինքը՝ Ղարա-Օսմանը ու նրա որդի Բայազիտը և այնուհետև Աղ-Կոյունլու թուրքմենների իշխանությունը ժառանգեց Օսմանի մեծ որդի Համզան (1435 թ.)։

Այս ճակատամարտից մի քանի օր հետո, Սքանդարի հետևից հասավ մեծ բանակով Շահռուխի որդի Ջոկգան, բայց Սքանդարը խույս տվեց և փախավ ու պատսպարվեց Թոխաթ քաղաքի կողմերում։

Սքանդարի Թոխաթ փախչելուց հետո Շահռուխն իր զորքերի հետ վերադարձավ Խորասան, բայց հեռանալուց առաջ Ադրբեջանի ու Հայաստանի մեծագույն մասի իշխանությունը հանձնեց Սքանդարի եղբորը՝ Ջհանշահին, որը հպատակվել էր նրան։

1435 թվի վերոհիշյալ պատմական անցքերը մատնանշված են ոչ միայն Թովմա Մեծոփեցու պատմության մեջ, այլև Վանի սուրբ Սահակ եկեղեցու 1435 թվին գրված ավետարանի հիշատակարանում։

> «Ի դառն և ի վշտաշատ ժամանակիս,— ասված է այդ հիշատակարանում,— որ վասն ծովացեալ մեղաց մերոց, բացաւ Դուռն Խորասանաց, և եկեալ որդի Թամուրին՝ Շահռուխն, ի յաշխարհս Հայոց, և որդի Ղարա-Իւսուֆին՝ Իս-

[1] Թովմա Մեծոփեցի, էջ 102։

կանդարն՝ փախստական գնաց ի ներքին աշխարհն. և սըպան զՂարա Օթմանն և զորդին և զայլ բազումք ընգ նմա։ Եւ միւս եղբայրն՝ Ջիանշայն, գնաց հնազանդութեամբ մօտ ի Շախ-ռուխն, և նստաւ նորին հրամանաւ ի Թաւրէզ. և եղին (՞) երկու եղբայրքն թշնամիք միմեանց և ոչ գիտեմք թէ զինչ լինելոց եմք»[1]։

Իշխանության հանձնումը Ջհանշահին պատճառ դառավ ներքին երկպառակությունների Ղարա Յուսուֆի ընտանիքում։ 1436 թվի գարնանը Սքանդարը նոր զորք հավաքեց, կողոպտեց և սրի ու հրի մատնեց Թոխաթի, Սեբաստիայի, Խարբերդի ու Դերջանի շրջանները և, վերցնելով մեծ թվով գերիներ, 1437 թվի սկզբներին եկավ Հայաստան պատերազմելու իր եղբոր դեմ։ Թովմա Մեծոփեցու վկայություններից երևում է, որ նրա վերոհիշյալ ասպատակությունների ժամանակ կոտորվել էին ոչ այնքան հայերը, որքան մյուս ազգությունները, իսկ հայերին նա ստիպել էր իրենց ամբողջ գույքով ու ընտանիքներով տեղափոխվել Արարատյան և Սյունյաց երկրները։ Սքանդարի այս կարգադրությունն ըստ իս անուղղակի կերպով ցույց է տալիս, որ նրա ժամանակ այս երկրները ամայացած էին և ազգաբնակությունը նրանց մեջ սաստիկ նվազել էր։

Հատկապես Սյունիքի ամայացման մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Թովմա Մեծոփեցին։ Նրա պատմելով՝ Սմբատ Օրբելյանի որդին՝ Բեշքենը, որի երկիրը շարունակ ոտնակոխ էր լինում և ավերվում Սքանդարի ու Շահռուխի կռիվների ժամանակ՝

«Վերցնելով Սյունյաց ամբողջ կողմի և Սյունիքի մոտ գտնվող բոլոր շրջակա գավառների բնակչությունը՝ ավելի քան 6000 քրիստոնյա տուն և, ազատելով Շահռուխից, հասցրեց Վրաց երկրի կողմերը։ Եվ թագավորը (Աղեքսանդր Ա) առերես պատվեց նրան և տվեց նրան Լոռիի բերդը։ Իսկ նա, լինելով բարեպաշտ ու երկյուղած, սիրող հոգևորականների ու աղքատների, ողորմած ու խաղաղասեր բոլորի վերաբերմամբ՝ իմաց տվեց և նրանք հավաքվեցին նրա մոտ։ Եվ նա բոլորին պատվեց ու մեծարեց հացով, սեղանով ու հանդերձով՝ բոլոր նրանց հայ ժողովրդից, որ գալիս էին նրա մոտ»։

[«Առեալ զամենայն կողմն Սիւնեաց և զամենայն գաւառս շրջակայ մերձ ի Սիւնիս, աւելի քան զ6000 քրիստոնեայ

[1] Տե՛ս Ն. Ղալայան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, էջ 369։

*տունս՝ և ազատեալ ի Շահ-ռուհէն՝ հասոյց ի կողմն Վրաց. և Թագաւորն առ երեսս պատուեալ զնա՝ տայ նմա զգղեակն Լոռու. իսկ նա բարեպաշտ և երկիւղած գոլով, սիրող կարգաւորաց և աղքատաց, ողորմած և խաղաղասէր առ ամենեսեան, ձայն տուեալ առ նա ժողովէին. և նա զամենեսեան պատուէր և մեծարէր հացով և սեղանով և հանդերձով, զամենայն դիմեալս առ նա յազգաց Հայոց»]*[2]։

Սքանդարը, վերադառնալով Հայաստան՝ իր հետ բերած հայ գաղթականության մի մասը բնակեցրեց Արարատյան երկրում, մի մասն էլ Սյունիքում։ Այնուհետև նա հավաքեց իր զորքերը և պատերազմ սկսեց եղբոր՝ Ջհանշահի դեմ, հույս ունենալով, որ նորից կկարողանա գլխավորել պետությունը։ Սակայն այս անգամ զորքերը թողին նրան և անցան Ջհանշահի կողմը։ Ինքը՝ Սքանդարը հաջիվ-հազ կարողացավ փախչել և ամրացավ Երնջակ բերդում, ուր մնաց ամբողջ ձմեռը (1437/8)։ Նրա որդին՝ Շահուբաթը և մի խումբ զորականներ նրան սպանեցին այստեղ քնած ժամանակ և գլուխն ուղարկեցին Ջհանշահին, որը պաշարել էր բերդը։

«Եվ խաղաղացավ,— ասում է Թովմա Մեծոփեցին,— երկիրը կարճ ժամանակում։ Որովհետև քանի նա ապրում էր երկրի վրա՝ ամբողջ աշխարհում, Խորասանից մինչև Եգիպտոս, խռովություն ու վրդովումն էր տիրում։ Եվ էր 886 [=1437] թվականը, երբ այս տեղի ունեցավ։ 870 [=1421] թվականից սկսած մինչև սրա մահը ամբողջ երկիրը խռովության ու վրդովման մեջ էր՝ թե անհավատները և թե հավատացյալները»։

*[«Եւ խաղաղացաւ երկիր ի սակաւ աւուրս։ Զի ի Խորասանու մինչ ի Մսր խռովութիւն վրդովմանց կայր յաշխարհ ամենայն որքան նա կենդանի էր ի վերայ երկրի։ Եւ էր թուականն 886, որ այս գործեցաւ։ Ի յ870 թուականէն ի հետ մինչ ի մահ սորա ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խռովութեան անհաւատ և հաւատացեալ»*[3]։

Սքանդարին հաջորդեց նրա եղբայր Ջհանշահը, որն արդեն երկու տարի իշխել էր նրա մահից առաջ (1435—7) և այնուհետև

---

[1] Փարիզի հրատարակությունը ունի՝ «աւելի քան զ60.000 քրիստոնեայ տունս»։

[2] Տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 96։ Համեմատե Թովմա Մեծոփեցի, էջ 117—118 (տեղ-տեղ բնագիրը աղավաղված է)։

[3] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 107—108։

ևս իշխեց երեսուն տարի՝ մինչև 1467 թիվը։ Սրա ժամանակ Հայաստանի արևելյան մասերը գտնվում էին համեմատաբար խաղաղ վիճակում, որովհետև կռիվները, ինչպես կտեսնենք, տեղի էին ունենում, գլխավորապես, Հայաստանի արևմտյան կողմերում կամ Պարսկաստանում։ Խիստ ծանր հարված ստացան Ջհանշահի իշխանության առաջին իսկ տարիներում Վրաստանի հարավ-արևելյան շրջանները, որոնց բնակչության մեծագույն մասը կազմում էին հայերը։ Վրաստանին միացված էր այդ ժամանակ Լոռին, որը զուտ հայաբնակ էր և գրեթե գլխովին հայախոս։ Այստեղ իշխում էր Օրբելյան իշխանաց իշխան Բեշքենը, Վրաց Աղեքսանդր Ա թագավորի անհրը, որը, ինչպես տեսանք, Շահռուխի արշավանքների ժամանակ բնակություն էր հաստատել Լոռիում Սյունիքից եկած հայ գաղթականության հետ։ Թովմա Մեծոփեցին հաղորդում է, որ Վրաց Աղեքսանդր Ա թագավորը, երկյուղ կրելով որ հայերը կհավաքվեն Բեշքենի շուրջը և Վրաստանը վնաս կկրե՝ 1438 թվին թունավորել տվեց նրան գործակցությամբ Ամնադին անունով հայի, խոստանալով սրան մեծամեծ պարգևներ[1]։

Նույն այս Աղեքսանդր Ա թագավորը, օգտվելով Շահռուխի և Սքանդարի միջև եղած երկարատև կռիվներից ու նաև իրենց՝ թուրքմենների միջև ծագած ներքին պառակտումներից՝ իր թագավորությունն ուզեց ազատել օտար լծից և մերժեց տալ տարեկան հարկերը։ Դրանից հետո Սևախոյ թուրքմենների զորքերը մտան հանկարծակի Արևելյան Վրաստան (1440 թ.) և երկար պաշարումից հետո գրավեցին Շամշույլդե քաղաքը։ Քաղաքի դռան մոտ նրանք, ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին, 1664 գանգից բուրգ շինեցին և գերի վերցրին ու տարան հեռավոր երկրներ 9400 հոգի[2]։

«Ամբողջ մեր ազգը,— ասում է նա,— այնքան աղքատացած էր՝ թե քաղաք ու գյուղ և թե վանք ու ագարակ, որ ամբողջ մի քաղաք և ամբողջ մի գյուղ նույնիսկ մ՛կ գերի չէին կարող գնել դառն աղքատության տառապանքի պատճառով»։

[«Եւ ա՛յնքան յաղքատութիւն անկեալ կամք ամենայն ազգս, քաղաք և գիւղք, վանք և ագարակ, զի մին քաղաք և

---

[1] Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 117—119։

[2] Նույնը, էջ 120։ Համեմատե նաև Լալայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, էջ 406։

մին գիւղ գերի մի գնել ու կարէ վասն դառն աղքատութեան տառապանաց»]¹։

Այնուհետև Ջհանշահը հարձակվեց նաև Տփղիսի վրա և քանդեց այնտեղ հին ու նոր եկեղեցիները։ Ալիշանի վկայությամբ՝ հայ ձեռագրերից մեկի հիշատակարանում մատնանշված է նաև նրա երկրորդ արշավանքը՝ Վրաստանի կողմերը 1448 թվին։ «Ի թվին Հայոց ՊՂԷ [1448],— ասված է այդ հիշատակարանում,— Ջհանշահ փատշահ արևելից զԱխլցխա գերեաց»²։

Իր պատմության վերջում Թովմա Մեծոփեցին հաղորդում է նաև, որ մահմեդական հոգևորականության խորհրդով Ջհանշահը ծանր հարկեր էր դրել հայ քրիստոնյաների վրա, որպեսզի նրանք ազատվելու համար տնտեսական իրենց նեղ վիճակից դառնան մահմեդական³։

Բայց, ընդհանուր առմամբ, իր իշխանության տակ գտնվող երկրների հանդեպ Ջհանշահը վարում էր խաղաղասեր քաղաքականություն։ Նա, անտարակույս, ավելի քաղաքակրթված էր, քան իր եղբայր Սքանդարը։ Թավրիզի ամենագեղեցիկ մզկիթներից մեկը, հռչակավոր երկնագույն մզկիթը, նրա կառուցածն է։ Նրան հեղինակ են համարում մի շարք միստիկական պոեմների, որոնք գրված են թուրքերեն և պարսկերեն։

Ջհանշահի ժամանակ, 1441 թվին, հայոց կաթողիկոսական աթոռը, որ գտնվում էր Սիս քաղաքում, փոխադրվեց էջմիածին և այստեղ կաթողիկոս ձեռնադրվեց Կիրակոս վարդապետ Ռշտունեցին։ Թովմա Մեծոփեցին, որ սրա ընտրությունը մանրամասն նկարագրել է՝ պատմում է, որ Երևանի կուսակալ Յաղուբ բեկը անձամբ իր զորքով առաջնորդեց հայ հոգևորականներին ընտրության վայրը՝ էջմիածին «փողով և թմբուկով»⁴։

Ջհանշահի իշխանության ընթացքում Ղարա-Ղոյունլու թուրքմենների հիմնած իշխանությունը, որ հետզհետե խիստ ընդարձակվել էր՝ հասավ իր հզորության գագաթնակետին։ Թուրքմենների այս առաջնորդը, որն իր գահը ստացել էր Շահռուխից՝ իր սյուզերենին հավատարիմ մնաց մինչև վերջինիս մահը (1447 թ.)։ Սակայն Շահռուխի մահից հետո, երբ սրա լայնածավալ պետությունը սկսեց քայքայվել ներքին երկպառակությունների և գահակալական

---

¹ Նույնը, էջ 122։
² Տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 327։
³ Տե՛ս Թովմա Մեծոփեցի, էջ 124։
⁴ Տե՛ս Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, հրատ. Կ. Կոստանյանի, էջ 68։

*կռիվների պատճառով՝ Ջհանշահը, դառնալով անկախ, աշխատեց ընդարձակել իր պետության սահմանները և պատերազմ վարեց արևելքում Լանկթամուրյան տոհմի իշխանների, իսկ արևմուտքում՝ Աղ-Ղոյունլու թուրքմենների դեմ, որոնք Լանկթամուրի ու նրա հաջորդների զորեղ դաշնակիցներն էին։ Նրա արշավանքները դեպի արևմուտք, Երզնկայի ու Կամախի շրջանները, հիշատակված են 1449/1450 ու նաև այլ թվերին։ Թե այս և թե հարևան շրջանները, որոնց բնակչության մեծագույն մասը հայեր էին՝ սոսկալի ավերածության ենթարկվեցին, գլխավորապես, 1450 թվին։ Ալիշանի ձեռքի տակ եղած հայ հիշատակագրերից մեկը վկայում է, որ այս թվին՝*

> *«Ելեալ սուլթանն Թաւրիզու Ջհանշահ անուն՝ բազում և անթիւ զօրօք՝ վաթսուն հազարաւ, եկեալ էառ զԵզընկայն, յաղդէ թուրքմանաց [Սպիտակախոյից] որ էր ազգաւ Պայընտուր. և կալեալ զիշխանն Եզընկայ քաղաքին և 40 անուանի ամիրայ զհետ նորա, և տարեալ յարևելս կորուսին. և զԿամխայ աստուածաշէն երկիրն ևս հասարակ գերեաց, իբրև անձինս ԺՌ [10.000] ընդ այր և ընդ կին, թող զայն որ մաշեցան. և զՆերքին Դերջանն և զՎերին Դերջանն, զԲաբերդ, զԿեղի, զԿոճակն և զԳայլգետն, զՇէռեան, զՍատաղ, առ հասարակ գերեաց»[1]։*

*Այնուհետև Ջհանշահը իր զենքը դարձրեց Լանկթամուրյանների դեմ, որոնք իշխում էին կենտրոնական ու արևելյան Պարսկաստանում։ 1452 թվին նա մտավ Պարսկաստանի ներքին գավառները և նվաճեց ո՛չ միայն Պարսկական Ադրբեջանի հարևան Մարաստանը և Իրաքը, այլև Ֆարսիստանը Շիրազ քաղաքի հետ միասին։ Մի քանի տարի հետո, 1457 թվին, նա աշխատեց գրավել նաև Խորասանը և հասավ Հերաթ, բայց նա այստեղ հաջողություն չունեցավ և 1458/9 թվին հաշտություն կնքեց Լանկթամուրյան տոհմի Աբու-Սեյիդ սուլթանի հետ և ստացավ ամբողջ Խորասանը մինչև Թեհրանի արևելակողմում գտնվող Սիմնան քաղաքը։*

*Մինչդեռ Ջհանշահը պատերազմներ էր մղում արևելքում՝ նրա թիկունքում, Միջագետքում ու Արևմտյան Հայաստանում, սկսեցին նորից ուժեղանալ Աղ-Ղոյունլու թուրքմենները և գլուխ բարձրացրին ու ըմբոստացան նրա դեմ նաև Բաղեշի քրդերը։ Այս վերջին-*

---

[1] Տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 327։ Համեմատե Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, էջ 411։

ների ըմբոստացման մասին Առաքել Դավրիժեցին, օգտվելով Արճեշ քաղաքում Հայոց ՋԺ [=1460/1] թվին գրված Հայսմավուրքի հիշատակարանից, տալիս է հետևյալ տեղեկությունները՝

«Այդ ժամանակ փադիշահը (Ջհանշահը) նեղացավ Բաղեշի ամիրայի վրա և ուղարկեց բարկությամբ չորս զորապետ տասներկու հազար հեծելազորով Խլաթ քաղաքի դեմ։ Եվ նրանք, գնալով այնտեղ՝ կողոպտեցին ու քանդեցին այդ տեղը և, միատեղ հավաքելով շատ ավար՝ նստան բերդի շուրջը և նեղում էին գրավելու ժամանակ։ Եվ պատրաստություն էին տեսնում որ նույնն անեն Բաղեշում, Մուշում, Խութում, Սասունում և բոլոր նրանց գավառներում»։

[«Ընդ այնմ ժամանակին եղև ցասնուլ փադշահին ի վերայ ամիրային Բաղիշու և բարկութեամբ առաքեաց Դ զորագլուխս երկոտասան հազար հեծելազորօք ի վերայ քաղաքին Խլաթայ, և գնացեալ աւարեալ քանդեցին զնա և բազում աւար ի մի ժողովեալ նստան ի վերայ բերդին և նեղէին յառնուլ զնա, և զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ, և ի Մուշ, ի Խութ և ի Սասունք և յամենայն գաւառսն նոցա»][1]։

Սակայն, նորընտիր Զաքարիա կաթողիկոսը, ինչպես վկայում է նույն այս հիշատակարանը, տեսնելով որ ամբողջ այս երկրի ժողովուրդը կոտորվելու է կամ գերի է տարվելու՝ միջամտեց ու միջնորդ եղավ և հաշտեցրեց Ջհանշահին Բաղեշի ամիրայի հետ, համաձայնեցնելով վերջինիս վճարելու Ջհանշահին արքունի հարկերը։

Բաղեշի ամիրայի հետ հաշտվելուց հետո Ջհանշահը սկսեց նախապատրաստվել պատերազմի Աղ-Կոյունլու թուրքմենների առաջնորդ Ուզուն Հասանի դեմ, որը խիստ զորեղացել էր Միջագետքում և միացրել էր իր իշխանության տակ նաև հարևան երկրները։ Բայց հենց նույն այս ժամանակ նրա դեմ ապստամբեց Բաղդադում որդին, ուստի և Ջհանշահը ստիպված եղավ վերադառնալ Իրաք։

Երկու այս ախոյան ցեղերի միջև վճռական կռիվը, որը ժամանակավոր կերպով հետաձգվեց, տեղի ունեցավ մի քանի տարի հետո։ 1467 թվին Ջհանշահը մեծ զորաբանակով արշավեց դեպի

---

[1] Տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 421 (գլ. Լ)։

Ամիդ, որը Աղ-Ղոյունլուների աթոռանիստ քաղաքն էր։ Երբ նա արագ երթերով հասավ Մուշ քաղաքի շրջանը՝ կանգ առավ այնտեղ և, կարծելով, որ թշնամին անպատրաստ է, հանգիստ տվեց զորքին և ինքը գնաց որսի։ Բայց Ուզուն Հասանը, որն ակնդետ հետևում էր նրա զորքի շարժումներին՝ հանկարծ վրա հասավ և պարտության մատնեց իր հակառակորդին, որը անփառունակ կերպով սպանվեց այս ճակատամարտում (11 նոյեմբ. 1467 թ.)։

Ջհանշահի հաջորդը՝ Հասան Ալին, որը հոր կենդանության ժամանակ նշանակված էր Նախիջևանի կուսակալ և կառավարում էր Հայաստանը՝ շուտով հավաքեց նոր զորաբանակ և ուզեց վերսկսել պատերազմը։ Բայց նրա զորքերը, որ խիստ դժգոհ էին իրենից՝ ցրիվ եկան և նա ստիպված եղավ վերադառնալ Մուղան, որ իր ձմեռանոցն էր։

1468 թվին Ուզուն Հասանը նվաճեց Ղարա-Ղոյունլուների պետությունը. և Հայաստանը՝ թե Արևմտյան և թե Արևելյան, գտնվում էր այնուհետև նրա իշխանության տակ։

Ղարա-Ղոյունլու թուրքմենների տիրապետության շրջանում, որ տևեց վաթսունմեկ տարի (1407—1468 թ.), Հայաստանը, որ կիսով չափ ամայացած էր Լանկթամուրի արշավանքների ժամանակ, դառել էր, ինչպես տեսնում ենք, գրեթե անընդհատ պատերազմների ասպարեզ և շարունակում էր ենթարկվել ավերածության և կոտորածների։

Պատմական այս ժամանակաշրջանը, որ վերև մենք ուրվագծեցինք աղոտ կերպով՝ հետագայում կարոտ է ավելի ընդարձակ ու հիմնավոր ուսումնասիրության։ Եվ կարելի է հուսալ, որ այդ հնարավոր կլինի մոտ ապագայում, երբ հրատարակված կլինեն 15-րդ դարի հայ ձեռագրերի հիշատակարանները և այս ժամանակաշըրջանին վերաբերող օտար աղբյուրները։

Սակայն այժմ իսկ հրապարակված նյութերից մոտավորապես արդեն երևում է, թե ինչպես հայ երկրում քոչվորական ֆեոդալիզմի հիմքերի վրա հաստատվել էին նախ Ղարա-Ղոյունլուների և ապա Աղ-Ղոյունլուների տնտեսական և վարչական կարգերը։ Այս երկու ցեղախմբերի իշխանության ժամանակ, ինչպես այժմ բավարարաչափ պարզվում է՝ շարունակում էին զարգանալ այն կարգերը, որ գոյություն ունեին արդեն մոնղոլական տիրապետության ժամանակ։

Ղարա-Ղոյունլուների կառավարություններում իշխող դասերն էին, գլխավորապես, քոչվորական ցեղերի զինվորական ազնվա-

կանները, և բացի այդ՝ բարձր պաշտոնեությունն ու բարձրագույն հոգևորականությունը։ Թուրքմենական, ինչպես և քրդական ցեղերի առաջնորդները՝ ստանում էին փադիշահներից կամ սուլթաններից ընդարձակ երկրամասեր ժառանգական տիրության իրավունքով։ Այս կալվածքներն անվանվում էին «սոյուրղալ» (մոնղ. և թուրք. soyurghal), որը նշանակում է «շնորհում», «պարգևում»։ «Սոյուրղալը», որ թուրքմենների մոտ հողատիրության ամենատարածված տեսակն էր, համապատասխանում է, ինչպես դժվար չէ համոզվել, հին հայկական «պարգևականք» կոչվող ֆեոդալական կալվածքներին։ «Սոյուրղալ» ստացողը, մեծ մասամբ, գրեթե լիակատար տեր ու տնօրենն էր իրեն շնորհված երկրամասի և ուներ ո՛չ միայն հարկային, այլ նաև դատական ու վարչական իմունիտետ։ Նրա իշխանությանն էին ենթարկված սոյուրղալական տերիտորիայի վրա գտնվող բոլոր պաշտոնյաները[1]։

Պարգևատրվող քոչվոր ցեղապետները, լինելով ավատատուներ՝ պարտավոր էին կատարել փադիշահի հանդեպ զինվորական և քաղաքացիական ծառայության պարտականություններ։ Նրանք, հարկավոր դեպքում, պետք է ներկայանային փադիշահին իրենց զորքով պետության պաշտպանության համար։

Ամեն մի նոր փադիշահ, գահ բարձրանալիս, հաստատում էր իր նախորդների սոյուրղալական շնորհումները, սակայն այս հաստատումը սոսկ մի ձևականություն էր։ Հայտնի է, օրինակ, որ Շամս-ադ-դին Ռուզեկի քուրդ էմիրը ստացել էր Ղարա-Յուսուֆից հարավային Հայաստանում չորս մեծ շրջաններ՝ Խլաթ, Մուշ, Բիթլիս և Խնուս։ Շամս-ադ-դինը հետագայում, որպես կողմնակից Շահռուխի, ենթարկվել էր մահապատժի։ Այնուամենայնիվ, սրա սոյուրղալը մնացել էր նրա ընտանիքի ձեռին ամբողջ 15-րդ դարում[2]։

Սոյուրղալ ստացողների իրավունքները որոշված են առանձին հրովարտակներում, օրինակ, Ղարա-Յուսուֆի 1417 թվին վերոհիշյալ Շամս-ադ-դինին տրված շնորհագրում, որը մեջ է բերված Շերեֆ-նամեում[3], ու նաև Աղ-Ղոյունլու Ջհանգիրի որդի Ղասիմի 1498 թվի շնորհագրում, որը, ինչպես ժառանգական տեր Դիարբե-

[1] Տե՛ս *Петрушевский И. П.*, Государства Азербайджана в XV веке. Известия «АзФАН», Баку, 1944, № 7, стр. 79—82.

[2] Նույնը, էջ 82։ Համեմատե նաև Scheref-Nameh, հրատարակություն Վելիամինով—Զերնովի, I, էջ 380—381։

[3] Շերեֆ-Նամե, I, էջ 376—8։

քիրի՝ Հգիլի շրջանը պարգևել էր իբրև սոյուրղալ ոմն Իսֆենդիար բեկին[1]։

Շերեֆ-Նամեի ու այլ աղբյուրների վկայություններից հայտնի է նաև, որ Մակուում, որը, ինչպես տեսանք, 15-րդ դարի սկզբում պատկանում էր հայ-կաթոլիկ իշխան Նուր-ադ-դինին, 15-րդ դարի ընթացքում իրենց իշխանությունն էին հաստատել մահմուդի քուրդ ցեղի առաջնորդները[2], իսկ Ադիլջևազն ու Ալաշկերտը գրավել էին քուրդ պազիկի ցեղի գլխավորները։

Թուրքմեն և քուրդ բարձր խավերը, որոնք քաղաքական ղեկավարող դեր էին խաղում՝ իրենց ցեղերի հետ քոչում էին տեղից տեղ և իրենք, սովորաբար, սեփական տնտեսություն չունեին։ Նրանց հողերը գտնվում էին օգտագործման իրավունքով գյուղական համայնքների ձեռին և կամ տրվում էին վարձակալությամբ անհատ գյուղացիներին, որոնք պարտավոր էին տալ հողատերերին ընդհանուր բերքի կեսից մինչև երեք հինգերորդը[3]։

Բացի վերոհիշյալ սոյուրղալական հողերից գոյություն ունեին այդ ժամանակ նաև պետական հողեր («դիվանի»), փադիշահի ու նրա ընտանիքի անդամների սեփական հողեր («խասսե») և մասնատիրական հողեր («մյուլք»)։

Նստակյաց գյուղացիները և քաղաքացիները վճարում էին, մեծ մասամբ, նույն հարկերը և կատարում էին նույն պարտիքները, որ գոյություն ունեին և մոնղոլական տիրապետության ժամանակ։

Գյուղացիների տված հարկերը ստանում էր կամ պետական գանձարանը (եթե հողերը պետական էին), կամ հողատերերը (եթե հողերը սոյուրղալական էին և ունեին հարկային իմունիտետի արտոնություն, որ կոչվում էր «մաաֆ») և կամ բաժանվում էին որոշ համամասնությամբ պետական գանձարանի և հողատերերի միջև (եթե հողերը «մյուլք» էին)[4]։

Աղ-Կոյունլու Ջհանգիրի որդու՝ Ղասիմի վերոհիշյալ 1498 թվի սոյուրղալական շնորհագրում հիշատակված են հարկերի ու պարհակների 31 անուն, որոնք ընկնում էին գյուղացիների և մասամբ քաղաքացիների վրա, և այս մեծ թիվը տուրքերի ու պարտականությունների արդեն ինքնին ցույց է տալիս, թե որքան ծանր է եղել նստակյաց գյուղացիների դրությունը։

---

[1] Տե՛ս *Minorsky V.*, A Soyurghal of Qasim Aq-Qoyunlu 903—1498. Bulletin of the Shool of Oriental Studies, vol. IX, part 4, London, 1939.

[2] Տե՛ս *Scheref-Nameh*, I, էջ 310 ևն։

[3] Տե՛ս *Петрушевский*, Государства Азербайджана в XV веке, էջ 80։

[4] Նույնը, էջ 82։

Հարկերը և պարտիքները ըստ այս վավերագրի հետևյալներն էին[1].

1. «Մալչահաթ» կամ «խարաջ»— հողային հարկ՝ բերքի որոշ մասը։
2. Գլխահարկ և ընտանիքի հարկ, որոնք հակառակ շարիաթի գանձվում էին ոչ միայն քրիստոնյաներից ու հրեաներից, այլ նաև մահմեդականներից (ուրիշ անվան տակ)։
3. Թաղար— տուրք ցորենով ու խմիչքով։
4. «Ալաֆե» և «ուլուֆե»— մթերապաշարի ու կերի մատակարարում զորքի ու ձիերի համար։
5. Անասնահարկ և տուրք արոտատեղիների համար («մավաշի» և «մարաի»)։
6. «Տաֆավուտ» (արաբ. նշանակում է «տարբերություն»)— հավելյալ տուրք բացի հիմնական հողային տուրքից, որ հավաքում էին գյուղացիներից։
7. «Ավիրազատ»— լրացուցիչ տուրքեր զանազան դեպքերում։
8. «Կոնալղա»— հպատակների պարտականություն պարենավորելու, իսկ երբեմն նաև իրենց տներում տեղավորելու, ճանապարհորդող դեսպաններին, արքունի սուրհանդակներին, էմիրներին, աստիճանավորներին և սրանց ուղեկիցներին ու ծառաներին։
9. «Ուլաղ»— բեռնակիր անասուններով և սայլերով փոխադրության պարտիք։
10. Տամղա— առևտրա-արդյունաբերական հարկ։
11. «Բաջ» (բաժ)— ապրանքների փոխադրության տուրք։
12. Թարխ— հարկադրական վաճառում և գնում ապրանքների. կառավարությունը կամ տեղական իշխանավորները մթերքներ և ապրանքներ էին առնում գյուղացիներից ու քաղաքացիներից պարտադիր գներով, որ շուկայական գներից մի քանի անգամ պակաս էին, և կամ պարտադիր կերպով վաճառում էին նրանց մթերքներ ու ապրանքներ շուկայական գներից մի քանի անգամ ավելի բարձր արժեքով։
13. «Բեկար»— պարտադիր և անվարձ աշխատանքներ՝ օգնելու պետության ու տեղական իշխանավորների շեն-

---

[1] Նույնը, էջ 83—84։

քերի, բերդերի և ճանապարհների կառուցման; անտառային ու շինարարական նյութերի տեղափոխման ևն։

14. «Արաբաճիլըխ»— փոխադրական միջոցների մատակարարում (քոչվոր ազնվականության համար տեղից տեղ տեղափոխվելու ժամանակ)։
15. «Ղափուճուլըխ»— դարբասները և ճանապարհները պահպանելու պարտիք։
16. «Յափիճիլըխ»— շինարարության աջակցելու պարտիք։
17. «Չերիկ»— ծառայություն ֆեոդալական զորքի մեջ (իբրև սպասավորներ և հետևակներ)։
18. «Իխրաջատ» (արաբ. նշանակում է «ծախքեր»)— տուրքեր և պարտիքներ զինվորական, քաղաքացիական և հոգևորական պաշտոնյաների օգտին, որ նշանակված են հարկային մատյաններում («դաֆթար»-ներում)։
19. «Շիլտակատ» (մոնղ. «շիլտակ» նշանակում է «պատճառ», «հիմք», փոխաբերական իմաստով՝ «ճնշում»)— պարտիքներ քմահաճ չափի, որ չեն նշանակված դաֆթարներում։
20. «Շիլան-բախա»— սննդադրամ տեղական ֆեոդալներին և կառավարիչներին։
21. «Թասմալ-սադարա»— տուրք հոգևորականության պետ՝ սադրի համար։
22. «Դարուղակի»— տուրք դարուղայի, այսինքն՝ վարչական-ոստիկանական պետի օգտին։
23. «Թասմալ-վիզարա»— տուրք վեզիրի համար։
24. «Ռուսում-ի-ումմալ»— տուրք ֆինանսների վարչության պաշտոնյաների օգտին։
25. «Իդի»— պարտադիր նվերներ երկու մուսուլմանական տոների ժամանակ։
26. «Նովրուզի»— նվեր Նովրուզի գարնան տոնին։
27. «Պիշկեշ» («փեշկեշ»)— նվերներ զանազան առիթներով։
28. «Սավերի»— ընծաներ։
29. «Սալամաթ»— շնորհավորական նվեր ֆեոդալի գալստի առթիվ։
30. «Բաղդիդ»— նվեր ֆեոդալի մեկնման ժամանակ։

Համեմատաբար ավելի թեթև էր Ղարա-Ղոյունլուների և Աղ-Ղոյունլուների տիրապետության ժամանակ քոչվորների դրությունը։ Սրանք, որովհետև զինվորական ծառայության մեջ էին և կազմում էին հեծելազորի կորիզը՝ շատ քիչ էին տուրք վճարում։ Իսկ քոչ-

վորները, որոնք արտոնյալ ցեղերից էին՝ բոլորովին ազատված էին հարկերից և պարհակներից[1]։

Սկզբնաղբյուրների մեջ կան բավարար տեղեկություններ նաև Ղարա-Ղոյունլուների և Աղ-Ղոյունլուների նվաճած երկրների պետական կազմակերպության մասին։

Զորքերի գլխավոր հրամանատար էր նշանակվում նրանց մոտ իշխող դինաստիայի անդամներից մեկը կամ որևէ մեկը քոչվորական ցեղերի ամենաականավոր էմիրներից։ Փադիշահից հետո սա պետության մեջ ամենաբարձր դիրքն ուներ և կոչվում էր «էմիրների էմիր»։ Սրանից հետո երկրորդ տեղն էր գրավում բարձրագույն սադրը, մուսուլմանական հոգևորականության գլուխը։ Նրանից հետո հաջորդ բարձրագույն աստիճանավորն էր մեծ վեզիրը, որը քաղաքացիական վարչության պետն էր և վարում էր նաև արտաքին քաղաքականության գործերը։ Սրանից ավելի ցածր էին սահիբ-դիվանը, որը վարում էր ֆինանսական-հարկային գործերի կառավարումը, և մուհրդարը, փադիշահի անձնական կնիքի պահապանը, որը կնքում էր պաշտոնական թղթերը[2]։

Փադիշահը և վերոհիշյալ բարձր աստիճանավորներն անմիջապես կառավարում էին հարավային Ադրբեջանը, իսկ մյուս երկրամասերը, վիլայեթները, ուղարկվում էին իբրև կուսակալներ կամ իշխող դինաստիայի անդամները և կամ գլխավոր քոչվոր ցեղերի էմիրները։ Վիլայեթների կառավարիչներն ունեին իրենց սեփական բյուջեն, իրենց արքունիքը և իրենց վարչական ապարատը, որ կազմված էր կենտրոնական արքունիքի նմանությամբ։ Կուսակալություններում ևս զորքի առաջնորդը, որ կոչվում էր գերագույն էմիր, նշանակվում էր տեղական ականավոր քոչվոր ֆեոդալներից։ Այստեղ ևս բարձրագույն մյուս աստիճանավորներն էին վերոհիշյալ հաջորդականությամբ՝ սադրը, վեզիրը, սահիբ-դիվանը և մուհրդարը։

Կուսակալներին ենթարկված էին շրջանների («թուման», «նահիա») կառավարիչները, որ կոչվում էին «հաքիմ»-ներ։ Այս պաշտոնները վարում էին, գլխավորապես, ժառանգական տեղական ֆեոդալ իշխանավորները և, մեծ մասամբ, զինվորական-քոչվորական ազնվականության էմիրներից[3]։

---

1 *Տե՛ս Петрушевский,* Государства Азербайджана в XV веке, *էջ 84։*

2 *Տե՛ս նույնը, էջ 89—90։*

3 *Նույնը, էջ 90։*

*Աղ-Ղոյունլուների պետության կուսակալությունների վարչական կարգերը մանրամասն նկարագրված են Ջալալ-ադ-դին Մուհամեդ Դավանիի (1427—1502 թ.) «Արզ-նամե» պարսկերեն երկում, որը 1913 թվին հրատարակել էր թուրք գիտնական Քիլիսլի Ռաֆատը։ Այս երկի համառոտ անգլերեն իր թարգմանությունը լույս է ընծայել 1940 թվին Վ. Մինորսկին[1]։*

---

[1] *Տե՛ս V. Minorsky*, A civil and military review of Fars in 881—1476. Bulletin of the Shool of Oriental Studies, vol, X, part 1, London, 1940.

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՂ-ՂՈՅՈՒՆԼՈՒ ԹՈՒՐՔՄԵՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

**1. Ղարա Օսմանը և նրա հաջորդները։— 2. Աղ-Ղոյունլուների հզորացումը Ուզուն Հասանի ժամանակ։— 3. Աղ-Ղոյունլուների պատերազմը սուլթան Աբու-Սեյիդի դեմ և վերջինիս սպանությունը (1469)։— Ուզուն Հասանի հիմնած աշխարհակալությունը։— 4. Օսմանցիների ուժեղացումը արևմուտքում։— 5. Նրանց նվաճումները Փոքր Ասիայում։— 6. Վենետիկի դաշինքը Ուզուն Հասանի հետ։— 7. Աղ-Ղոյունլուների և օսմանական թուրքերի պատերազմը։— Աղ-Ղոյունլուների պարտությունը Իկոնիայի և Բիրաջիքի կողմերում (1472)։— 8. Օսմանցիների վճռական հաղթությունը Դերջանի մոտ (1473)։— 9. Ուզուն Հասանի արշավանքը Վրաստան (1477)։— 10. Հայկական իշխանությունների մնացորդները 15-րդ դարի վերջերում։— 11. Գահակալական կռիվներ Ուզուն Հասանի մահից հետո (1478)։— 12. Յաղուբ փադշահ (1478—1490).— Ստեփանոս, Միրաք և այլ նահատակները.— Յաղուբի արշավանքը Վրաստան և պայքարը ուժեղացած Սեֆյանների դեմ։— 13. Շամախու կոտորածը և շեյխ Հայդարի պարտությունը ու մահը։— 14. Գահակալական կռիվները Յաղուբի մահից հետո (1490)։— Ռուստամ (1493—6)։— 15. Ռուստամի հաջորդները և Աղ-Ղոյունլուների իշխանության անկումը։— 16. Շեյխ Իսմայել Սեֆյան։— 17. Նրա հաղթությունները։— Սեֆյան դինաստիայի հաստատումը Պարսկաստանում։— 18. Վերջաբան։**

*Աղ-Ղոյունլու թուրքմենների իշխանական դինաստիայի հիմնադիրն էր, ինչպես վերև տեսանք, Ղարա Օսմանը, որը Բայանդուրյան տոհմից էր. ուստի և այս դինաստիան կոչվում է երբեմն Բայանդուրյան։ Թովմա Մեծոփեցին վկայում է, որ այս Օսմանը, որ սիրող ու բարեկամ էր հայ ազգի, քաջ զորական էր և տիրապետել էր Դիարբեքիրին, սպանելով 72 «պարոն»։*

> *«Տէր Ամթայ Օթման անուն Աղղօյինլու, սիրող յոյժ ազգիս Հայոց, քաջ զօրականն, որ և ասեն եթէ 72 պարոն սպանեալ էր և զՏիարպէկն յինքն գրաւեալ»*[1]։

---

[1] Թովմա Մեծոփեցի, էջ 72։

Սրա ու սրա հաջորդների՝ Համզայի և նրա եղբոր որդու Ջհանգիրի հանդուրժողական վերաբերմունքը դեպի հայերը և, հատկապես, դեպի նշանավոր հայ բանաստեղծ ու հասարակական գործիչ Մկրտիչ եպիսկոպոս Նաղաշը՝ մանրամասն հիշատակված է Հայսմավուրքի հիշատակարանում, որն ամբողջությամբ տպագրված է Ալիշանի Հայապատումում (էջ 571—574)։

Ղարա Օսմանի մահից հետո (1435) նրա ժառանգների միջև սկսվեցին ներքին պառակտումներ, որոնց վերջ տվեց նրա թոռը, Ուզուն Հասանը, որն «ուզուն» կամ «երկար» էր կոչվում իր բարձր հասակի պատճառով։ Նա հանդես եկավ իբրև ախոյան իր մեծ եղբոր Ջհանգիրի և, օգտվելով, որ սա բացակայում էր Դիարբեքիրից՝ գրավեց այս ամուր բերդը (1454 թ.), հետզհետե խիստ զորեղացավ և դարավ Ղարա-Ղոյունլուների լուրջ ու վտանգավոր թշնամին։

1457 թվին նա իր իշխանությանը ենթարկեց իր եղբոր՝ Ջհանգիրին պատկանող Երզնկա քաղաքը, որը, գտնվելով Պարսկաստանից Փոքր Ասիա տանող ռազմական ու առևտրական ճանապարհի վրա՝ ուներ ստրատեգիական խոշոր նշանակություն։ Նույն այս թվին նա պարտության մատնեց ամիրաներին, որոնք ուղարկված էին Ղարա-Ղոյունլուների առաջնորդ Ջհանշահի կողմից և եկել էին այստեղ իր եղբորն օգնելու։ Հայաստանի արևմտյան մասը նվաճելուց հետո՝ նա իր զենքը դարձրեց Վանա լճի արևմտակողմում իշխող քրդերի դեմ և հպատակեցրեց իր իշխանությանը նաև սրանց։ 1462/3 թվին նա գրավեց Հյուսիսային Միջագետքում Տիգրիս գետի ափին գտնվող նշանավոր ամրություն Հիսնկեֆը։ Եվ այսպիսով նա, օրըստօրե զորանալով և անմիջական հարևանը դառնալով Ղարա-Ղոյունլուների՝ 1467 թվին, ինչպես վերև տեսանք, պարտության մատնեց և նվաճեց սրանց ամբողջ պետությունը։ Ղարա-Ղոյունլուների պարտությունից ու անկումից ուզեց օգտվել լանկթամուրյան տոհմի սուլթան Աբու-Սեյիդը (1452—69), հույս ունենալով, որ կկարողանա վերագրավել իրենց պատկանած երկրները, որ բռնությամբ հափշտակել էին թուրքմեն Ղարա Յուսուֆը և նրա հաջորդները։ 1468 թվի գարնանը Աբու-Սեյիդը Հերաթից եկավ մեծ զորքով դեպի Ադրբեջան և ճանապարհին Արևմտյան Պարսկաստանի քաղաքներում ու շրջաններում նշանակեց ամեն տեղ իր կառավարիչներին։ 1468 թվի վերջերին նա հասավ Ադրբեջանի արևելյան սահմանների մոտերքը և ուզեց անցկացնել ձմեռը Արևելյան Անդրկովկասում։ Բայց երբ նա Միանեի կողմերից շարժվեց Մուղանի շրջանը, նրա զորքերի վրա, որ խիստ հոգնած

էին և նեղվում էին ցրտից ու սովից՝ Կուր և Արաքս գետերի հարավակողմում հարձակվեց Ուզուն Հասանը և նրանց մատնեց սոսկալի պարտության (1469 թվի փետրվար ամսին)։ Ինքը՝ Աբու Սեյիդը գերի բռնվեց և սպանվեց։

Այնուհետև Լանկթամուրյան տոհմի իրար դեմ պայքարող իշխանավորները արևելքում այլևս մեծ ուժ չէին կազմում և Ուզուն Հասանի համար միանգամայն անվտանգ էին։ Իր այս մեծ հաղթություններից հետո Աղ-Ղոյունլուների այս առաջնորդը հիմնադիր դառավ հսկայական պետության, որի սահմանները ձգվում էին Եփրատ գետից մինչև Պարսկաստանի արևելյան կողմերը և Կովկասից ու Տրապիզոնից մինչև Հնդկական օվկիանոսը։ Նրան պատկանում էին այնուհետև Արևմտյան Պարսկաստանը, Ադրբեջանը, ամբողջ Հայաստանը, Միջագետքը, երկու Իրաքը, Քերմանը և Ֆարսիստանը։ Ինչպես և Ղարա-Ղոյունլուների ժամանակ՝ Ուզուն Հասանի մայրաքաղաքը դառավ դարձյալ Թավրիզը և սա այս մեծ պետությունն իր նախորդների նման կառավարեց միահեծան կերպով։ Պետք է ասել, որ Ուզուն Հասանը ևս, ինչպես և Ջհանշահը, բավականաչափ քաղաքակրթված էր և հղկված։ Նրա մեծ տատը Տրապիզոնի կայսերական տոհմի իշխանուհի էր և նա ինքը նույնպես ամուսնացած էր Տրապիզոնի Կալոյոաննես կայսեր Կաթարինա աղջկա հետ, որին եվրոպական ճանապարհորդները իրենց ուղեգրություններում անվանում են Դեսպինա (δέσποινα «տիրուհի», իտալ. signora)։

Մոտավորապես նույն ժամանակամիջոցում, երբ Պարսկաստանում շարունակ առաջադիմում և ուժեղանում էր Ուզուն Հասանը, արևմուտքում՝ մեծ հաջողություններ ուներ օսմանցիների սուլթան Մուհամմեդ Բ-ը (1451—1481), որի մականունն է «նվաճող»։ Սա իր թագավորության արդեն երրորդ տարում, 1453 թվին, նվաճեց Կոստանդնուպոլիսը և վերջ դրեց Բյուզանդական կայսրության գոյությանը։ Այնուհետև նա, հաստատելով իր գահը կայսրների մայրաքաղաքում՝ մեծ հաջողությամբ շարունակեց առաջ տանել իր նվաճումները նախ արևմուտքում և ապա նաև արևելքում։ Մինչև 1460 թիվը, մոտ յոթը տարվա ընթացքում, նա հետզհետե գրավեց արևմուտքում Պելոպոնեսը, Միջին Հունաստանը և Բալկանյան թերակղզու հյուսիսային ծայրամասերը՝ Բոսնիայից մինչև Բեսարաբիա։ Իսկ 1460 թվից հետո նա ուզեց իր պետությունն ընդարձակել նաև դեպի արևելք և աշխատեց նոր երկրամասեր գրավել Պոնտոսում, Փոքր Ասիայում և Միջերկրական ծովի ավազանում։ 1461

թվին նա ճենովացիներից առավ Ամաստրիս քաղաքը և նույն թվին նվաճեց նաև Կոմնենների Տրապիզոնյան կայսրությունը, որը գտնըվում էր Ուզուն Հասանի հովանավորության տակ։ Վերջինս, որին սպառնում էր թիկունքից Ջհանշահը, հարկադրված եղավ ժամանակավորապես չեզոք մնալ և իրեն հասցրած վիրավորանքը թողեց անպատասխան։ 1465 թվին Մուհամմեդ Բ-ը սկիզբ դրեց Ղարամանիայի նվաճման, որը մեծ իշխանություն էր Փոքր Ասիայի հարավում և բովանդակում էր իր մեջ հին Լիկաոնիան, Իսավրիան և Կիլիկիան։ Ղարամանիայի թուրք ամիրաները, որոնք, ինչպես ենթադրում են, ծագում էին սելջուկյան սուլթանների տոհմից, ուժեղ էին ոչ միայն քաղաքականապես, այլև տնտեսապես։ Նրանց երկրի հարավային շրջանները, որոնք գտնվում էին Միջերկրական ծովի ափերին՝ առևտրական աղատ ու կենդանի հարաբերություններ ունեին Արևմտյան Եվրոպայի և, գլխավորապես, վենետիկցիների հետ, որոնց ձեռքումն էր այդ ժամանակ հարևան Կիպրոս կղզին։ Օսմանյան հաղթությունները Սև ու Միջերկրական ծովերի առափնյա երկրներում և, մասնավորապես, Ղարամանիայում՝ մեծ հարված էին հասցնում իտալական հանրապետություններին և, ամենից առաջ, Վենետիկին, որի ձեռքումն էր այդ ժամանակ կենտրոնացած մեծ չափով Արևմտյան Եվրոպայի առևտուրը Արևելքի հետ։ Վենետիկը, որը 1463 թվից սկսած պատերազմի մեջ էր օսմանցիների հետ՝ փորձեց ստեղծել Մուհամմեդ Բ-ի դեմ եվրոպական պետությունների մի զինակցություն, սակայն նրա ջանքերը այդ ուղղությամբ ի դերև ելան սրանց սուր մրցակցությունների ու շահերի ներհակության պատճառով։ Բայց շուտով նա իրեն գործակից գտավ Արևելքում և համաձայնության եկավ Աղ-Ղոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանի հետ, որը, տիրելով 1467—69 թվերին Արևմտյան Պարսկաստանին՝ դառել էր միակ հզոր ու արժանի հակառակորդը Օսմանյան պետության։

Դեռևս 1463 թվի վերջերին Վենետիկի ծերակույտը կարևոր էր համարել, որ դաշնակցություն կնքվի Ուզուն Հասանի հետ, և այդ նպատակով ուղարկել էր Թավրիզ հատուկ դեսպան։ Բայց բանակցությունները այս երկու երկրների միջև ավելի կենդանի բնույթ ստացան 1471 թվին, երբ Վենետիկը, Ուզուն Հասանի հետ բանակցելու համար, ուղարկեց Թավրիզ Կատերինո Ձենոյին, (1471—1474), որի մայրը Ուզուն Հասանի կնոջ՝ Դեսպինայի քույրն էր։ Բանակցությունների ընթացքում որոշվել էր, որ Վենետիկի նավատորմիղը պետք է հարձակվեր Փոքր Ասիայի հարավային ափերի

վրա և վերադարձներ Ղարամանիան սելջուկյան ամիրաներին, իսկ Ուզուն Հասանը պետք է արշավեր ու մտներ Հայաստանի վրայով Ղարամանիա և այստեղ հանդիպեր իր դաշնակիցներին։ Ուզուն Հասանի դեսպանների խնդիրքով՝ Վենետիկը իբրև օգնություն ուղարկեց նրան 6 մեծ ռմբընկեց, 600 պատրուգավոր հրացան, ննտիշներ, ռազմամթերք և 200 հրացանաձիգներ իրենց սպաների հետ։

Պատերազմն Օսմանյան պետության դեմ սկսվեց 1471 թվին։ Ուզուն Հասանի վեզիր Օմար բեգը և նրա զորավար Յուսուֆը հանկարծակի մտան Փոքր Ասիա, ունենալով իրենց հետ մոտ 100.000 հեծելազոր։ Այս մեծ բանակը, հրի ու սրի մատնելով չորս կողմը՝ Դերջանի ու Երզնկայի վրայով եկավ Թոխաթ—Եվդոկիա, առավ այս քաղաքը և բնակիչներին, որ հայեր ու այլազգիներ էին՝ կողոպտեց ու անգթաբար կոտորեց։ Այստեղից նրանք, շարունակելով իրենց ասպատակությունները՝ դիմեցին Ղարամանիայի կողմը և իջան Իկոնիայի ու Կիլիկիայի շրջանները։ Աղ-Ղոյունլուների նպատակն էր վերահաստատել իր իշխանության մեջ Ղարամանիայի Փիր Ահմեդ ամիրային, որն օսմանցիներից պարտված փախել էր Ուզուն Հասանի մոտ, և, բացի այդ, նրանք պետք է ճանապարհ բաց անեին դեպի Միջերկրական ծովը, ուր կապ էին հաստատելու վենետիկցիների հետ և ստանալու էին նրանցից հրետանի ու հրետանավորներ։

Սկզբում Ուզուն Հասանի զորքերի գործողությունները Փոքր Ասիայում հաջող էին անցնում և Ղարամանիայի կուսակալը, Մուհամմեդ Բ-ի որդի Մուստաֆան, սարսափած նահանջեց Քոթահիա։ Բայց կարճ ժամանակից հետո նա, լուր ստանալով, որ Ղարամանիայում մնացել է համեմատաբար փոքրաթիվ զորք՝ 1472 թվի օգոստոսին հարձակվեց սրանց վրա Իկոնիայի շրջանում և ո՛չ միայն նրանց մատնեց պարտության, այլև գերի վերցրեց թե իրեն՝ հրամանատար Յուսուֆին և թե ուրիշ գլխավորներին։ Հաջողություն չունեցան Ուզուն Հասանի զորքերը նաև Եփրատի մոտ՝ Բիրաջիքի շրջանում, ուր նրանց համառ դիմադրություն ցույց տվին Եգիպտոսի սուլթանի զորքերը։

Եվ այսպիսով, իտալա-թուրքմենական լիգան չկարողացավ տիրել Ղարամանիային ու Կիլիկիային, ուր այս երկու դաշնակիցները պետք է իրար հանդիպեին և օսմանցիների դեմ կազմեին ընդհանուր ճակատ։ Իսկ Աղ-Ղոյունլուները, բացի այդ, չկարողացան

ստանալ հրետանին ու ռազմամթերքը, որ խոստացել էին ուղարկել նրանց վենետիկցիները։

Հետևյալ տարին, 1473 թվի գարնանը, Կոստանդնուպոլսից եկավ Փոքր Ասիա ինքը՝ սուլթան Մուհամմեդ Բ-ը և մոտ 100 հազարանոց մի մեծ բանակով անձամբ գնաց Ուզուն Հասանի դեմ։ Թշնամի զորքերն իրար հանդիպեցին 1473 թվի օգոստոս ամսին Դերջանի դաշտում, որը գտնվում է այժմյան Մամախաթունի և Բագառիճի միջև։ Սկզբում օսմանցիները պարտության մատնվեցին Եփրատ գետի մոտ, բայց հետո, ինչպես վկայում են ժամանակակից հեղինակներ Զենոն և Անջիոլելլոն, երբ սրանք մտադիր էին ետ նահանջել՝ Ուզուն Հասանի զորքերը, քաջալերված իրենց հաջողությունից՝ հարձակվեցին նրանց վրա աջ թևից, սակայն այս անգամ իրենք կրեցին ծանր պարտություն, գլխավորապես, օսմանյան հրետանավորների դիպուկ թնդանոթաձգության պատճառով (12 օգոստ. 1473)[1]։

1473 թվի այս ճակատամարտը վերջնականապես վճռեց Փոքր Ասիայի հետագա ճակատագիրը և Օսմանյան պետությունն այնուհետև տիրեց ամբողջ այս երկրին, որը դարեր շարունակ մնաց նրա անմիջական տիրապետության տակ։ Թեև Վենետիկն այս ճակատամարտից հետո ևս աշխատեց իր ուղարկած դեսպանների միջոցով[2] դրդել Ուզուն Հասանին, որ նա նոր արշավանք սկսի օսմանցիների դեմ, սակայն նրա այդ ջանքերն ապարդյուն անցան։

Այդ անհաջողության գլխավոր պատճառներից մեկը, ըստ երևույթին, այն էր, որ Դերջանի ճակատամարտից անմիջապես հետո, 1474 թվին, Ուզուն Հասանի դեմ ապստամբել էր նրա որդին, Ուզուրլի Մահմեդը, որը Շիրազի կառավարիչն էր։ Ինչպես վկայում է Անջիոլելլոն, Ուզուրլի Մահմեդը շուտով փախավ Պոլիս, բայց կարճ ժամանակից հետո, հավատ ընծայելով տարածված սուտ լուրերին. որ իբր թե իր հայրը մեռել է՝ ուզեց վերադառնալ Պարսկաստան և ճանապարհին կալանավորվեց, բերվեց Թավրիզ ու դատապարտվեց մահվան[3]։

---

[1] Տե՛ս Minorsky, La Perse au XV-e siècle, էջ 14։ Համեմատե «Ուղեգրություններ», Ա, էջ 265։

[2] Վենետիկի Ուզուն Հասանին ուղարկված դեսպաններն էին՝ Ջոզեֆա Բարբարոն (1473 թվին) և Ամբրոսիո Կոնտարինին (1474 թվին)։ Սրանց Ուղեգրությունները ևս, ինչպես և Զենոյինը, աղբյուր են ծառայում այս ժամանակաշրջանի պատմության. տե՛ս «Ուղեգրություններ», Ա, էջ 175—214 և 215—254։

[3] Տե՛ս «Ուղեգրություններ», Ա, էջ 265—266։

1477 թվին Ուզուն Հասանը, ինչպես պատմում են վենետիկցիներ Բարբարոն և Անջիոլելլոն[1], լուր տարածելով, որ հարձակվելու է օսմանցիների վրա և ունենալով իր հետ մոտ քսան կամ քսանչորս հազար ընտիր հեծելազոր ու նաև հետևազոր՝ հանկարծ արշավեց Վրաստան։ Անջիոլելլոյի ասելով՝ Ուզուն Հասանը ցանկանում էր կողոպտել Վրաց թագավորի երկիրը, որովհետև վրացիներն իրեն չէին օգնել օսմանցիների դեմ մղված պատերազմում։

«Որովհետև թագավորը [Ուզուն Հասանը],— պատմում է Բարբարոն,— մտադրված էր կողոպտել, ուստի և իրենց եղանակով ուղարկեց հետախույզներ, մոտավորապես հինգ հազար ձիավոր, որ ճանապարհը բանան, որքան կարող էին կտրելով կամ այրելով անտառները, որովհետև նրանց ճանապարհն անցնում էր բարձր լեռների և շատ մեծ անտառների միջով։ Այնպես, որպեսզի տեսնենք կրակը և գիտենանք, թե ինչ ճամփա պետք է որ բռնենք։ Այսպես երկու օրվա ճանապարհը պատրաստված էր Վրաստանում, ուր մենք հասանք Թիֆլիս, որը լքված լինելով (ինչպես լքված էին այդ շրջանի բոլոր մասերը), գրավեցինք առանց դիմադրության։ Եվ մեկնելով այնտեղից՝ եկանք Գորի (Gory) և նրա շրջակայքում մի քանի ուրիշ տեղեր, որոնք բոլորն էլ կողոպուտի ենթարկվեցին, ինչպես նաև այդ շրջանի մեծ մասը։ Ի վերջո Հասան բեյ թագավորը [Ուզուն Հասան] բանակցություն մտավ Վրաստանի թագավոր Բագրատի (Pancratio) և Ղվարղվարեի (Ciurgura) հետ, որոնք պետք էր որ վճարեին տասն վեց հազար դուկատ, և ինքը [Ուզուն Հասանը] պիտի վերադարձներ իրենց ամբողջ երկիրը, բացի Թիֆլիսից»[2]։

Ինչպես երևում է աղբյուրների վկայություններից, Վրաստանն այդ ժամանակաշրջանում բաժանված էր չորս անկախ ու ինքնուրույն մասերի՝ ա. Արևելյան Վրաստան (Քարթլի), որի մայրաքաղաքն էր Տփղիսը, բ. Արևմտյան Վրաստան (Իմերեթ), որի մայրաքաղաքն էր Քութայիսը, գ. Կախեթ և դ. Սամցխե կամ Մեսխեթ, որ պատկանում էր Ախալցխայի աթաբեկներին, որոնք ըստ իրենց ժառանգական տիտղոսի սովորաբար անվանվում էին «Ղվարղվարե»[3]։ Հավանական է, որ 1477 թվին Բագրատը թագավոր էր ո՛չ միայն

---

[1] Տե՛ս «Ուղեգրություններ», էջ 204—205 և 267—268։

[2] Նույնը, էջ 204—205։

[3] Տե՛ս Minorsky, La Perse au XV-e siècle, էջ 22, ծանոթ. 31։

Արևելյան, այլ նաև Արևմտյան Վրաստանի, իսկ Ղվարղվարեն, որ հիշատակված է վերոհիշյալ վկայության մեջ՝ իշխան էր Սամցխեի կամ Մեսխեթի, որն այդ ժամանակ առանձին անկախ պետություն էր։ Բացի 1477 թվի արշավանքից աղբյուրների մեջ հիշատակված են Ուզուն Հասանի նաև երկու այլ արշավանքները դեպի Վրաստան ու Իմերեթ, որ տեղի էին ունեցել, հավանորեն, 1466 և 1472 թվերին»[1]։

Ուզուն Հասանը, որը սերտ բարեկամական հարաբերություններ ուներ քրիստոնյա պետությունների հետ և սրանց դաշնակիցն էր ընդդեմ օսմանցիների, բարեհաճ վերաբերմունք ուներ դեպի իր իշխանության տակ եղած քրիստոնյա հայերը։ Նրա ժամանակ, ինչպես երևում է ժամանակակից հայ ձեռագրերի հիշատակարանների վկայություններից, կենդանության որոշ նշաններ էին ցույց տալիս հայկական իշխանական տոհմերի մնացորդները, որ դեռևս պահպանվել էին Սյունիքի և Արցախի լեռնաշխարհում։

15-րդ դարի երկրորդ կեսում իրենց տոհմային իշխանությունը կարողացել էին վերականգնել Դոփյանները։ Այս տոհմի սերնդաբանության մեջ, որ պահպանել է Աղվանից Եսայի կաթողիկոսի 1718 թվի ձեռագիրը՝ պատմված է, որ Դոփյանների կալվածներին 15-րդ դարում տեր էին դառել այլազգիները և որ Հասանի թոռ ու Տուրսունի որդի Այտինը, երեք տարի աշխատելով և մեծ ծախսեր անելով ետ էր ստացել իրենց շինավայրերը վանքերի հետ միասին[2]։ Ինչպես հայտնի է, այս տոհմի շառավիղները կարողացել էին իրենց գոյությունը պահել նաև հաջորդ դարերում։

Ավելի մանրամասն տեղեկություններ պահպանված են ձեռագրերի հիշատակարաններում Պռոշյանց տոհմի մասին, որը Ուզուն Հասանի ժամանակ շարունակում էր իշխել Վայոց ձորում։ 1475 և 1476 թվականներին այս գավառում գրված են Էջմիածնի մատենադարանի № 377/2634 և 479/2781 ավետարանները, որոնց հիշատակարաններից իմանում ենք, որ այս ժամանակ այստեղ իշխում էր «մեծազգի և երևելի իշխանաց իշխող և բարեհաւատ պարոն Ջուման, թոռն մեծին Պռաւշայ, ասպարապետին Հայոց»։ Սրա որդիներն էին, ինչպես վկայում են նույն հիշատակարանները, «պարոն Լաղաբեկը, Ուլուսբեկը և Թումանբեկը», իսկ եղբորորդիներն

---

[1] Տե՛ս Minorsky, La Perse au XV-e siècle, էջ 22, ծանոթ. 31։

[2] Տե՛ս Կարապետ եպիսկոպոս. Դոփյանք և Մելիք Շահնազարյանք, էջ 44—45։ Համեմատե Հ. Թոփչյան, Ցուցակ ձեռագրաց Դադյան Խաչիկ վարդապետի, Վաղարշապատ, 1898, էջ 89։

էին՝ պարոն Հայկազը, Ամիր Վասակը, Հաղբակը, Ամիր Հասանը, տեր Հովհաննեսը և տեր Ստեփանոսը[1]: Վիմական արձանագրությունների և ձեռագրերի հիշատակարանների վկայություններից հայտնի է, բացի այդ, որ նախկին հայկական իշխանությունների— Օրբելյանների, Հասան Ջալալյանների, Զաքարյանների և ուրիշ ազնվական ավելի մանր տոհմերի մնացորդներ կային ցրված Սյունիքի և Ղարաբաղի լեռներում, Լոռում ու նաև այլ տեղերում: Հին ազնվականության այս բեկորներն էին, որ հետագայում հիմք դառան հայ մելիքությունների կազմակերպման:

1478 թվի հունվարի 6-ին մեռավ Ուզուն Հասանը և նրա ժառանգների միջև սկսվեցին ներքին երկպառակություններ ու համառ կռիվներ, որոնցից, ինչպես կտեսնենք, օգուտ քաղեց Սեֆյան դինաստիայի հիմնադիր Շահ Իսմայելը:

Ուզուն Հասանը, ինչպես վկայում են վենետիկցի ժամանակակից ուղևորներ Բարբարոն և Անջիոլելլոն, չորս որդի թողեց՝ երեքը մեկ մորից և մեկը Տրապիզոնի իշխանուհի Դեսպինայից: Հոր մահից անմիջապես հետո երեք եղբայրները խեղդամահ արին իրենց խորթ եղբորը, տերությունը բաժանեցին իրենց մեջ[2] և հոր գահը ստացավ մեծ որդին՝ Խալիլը: Բայց նույն 1478 թվին[3] երկրորդ եղբայրը, Յաղուբը, սպանեց սուլթան Խալիլին և ինքը բարձրացավ գահը և իշխեց ավելի քան տասներկու տարի (1478—1490):

Յաղուբ փատիշահը, ինչպես երևում է աղբյուրների վկայություններից՝ սիրում էր պարսկական գրականությունը և գիտությունը և արդեն մեծ չափով ենթարկվել էր պարսկա-արաբական կուլտուրայի ազդեցությանը: Սրա իշխանության ժամանակ Սոֆի Խալիլի հրամանով, որը «էր աթաբակ և հայրագլուխ որդւոց փատշահին»՝ նահատակված են Տաթևի արքեպիսկոպոս Ստեփանոսը և նրա քրոջ ու մորեղբոր որդիները: Իսկ 1486 թվի մարտի 24-ին, ավագ ուրբաթ, նահատակվել է Թավրիզում խոջա Միրաքը: Բայց այս նահատակություններին բնավ մեղսակից չէր ինքը՝ Յաղուբը: Ընդհակառակը, Միրաքին նահատակողին, որի անունն էր Մեհթի,

---

[1] Տե՛ս Դոփյանք և Մելիք Շահնազարյանք, էջ 94—95: Համեմատե Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 232 և 236:

[2] Տե՛ս «Ուղեգրություններ», էջ 208 և 268:

[3] Յաղուբը գահ է բարձրացել ո՛չ թե 1479 թվին, ինչպես ենթադրում են Լեն-Պուլը և եվրոպական պատմագետները, այլ 1478 թվին, ինչպես պարզ երևում է 1478 թվին Սրկղունիքում գրված Ճառընտրի հիշատակարանից (Ձեռ. էջմ. 909/942). տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 235:

նա սպանել էր ինքը իր ձեռքով իր զորականների հետ միասին և խիստ պատժել էր մահմեդական մոլեռանդ քաղաքացիներին, որոնք Միրաքի նահատակությունից հետո ուզեցել էին քանդել հայերի եկեղեցին, ու նաև նրանց, որոնք հակառակ իր հրամանին, ուզեցել էին հանդիսավոր կերպով թաղել Մեհթիի դիակը[1]։

Ուշագրավ է, որ աշխատել են մահմեդական դարձնել այս ժամանակ, գլխավորապես, ականավոր անձանց ու ազնվականներին։ Հայսմավուրքի հիշատակարանում, որը գրել է Գեղարդա վանքում Պռոշյան տոհմի պայազատ Հովհաննես եպիսկոպոսը, մատնանշված է, օրինակ, որ

> «Ժամանակս դառն էր, որ այլազգեաց շատ նեղութիւն քաշեցաք, որ յայսմ ամի խ ազատորդի կալան, թէ տաճկացէք. այլ ողորմածն աստուած ձեռնտու և աւգնական եղև նոցա, յորոց մի էր եղբայրն իմ պարոն Հայկազն և պարոն Աւագն, որ է ամիս կալուլական կացին և բազում տուգանք տվին և ի հաւատոցս քրիստոսի ո՛չ դարձան»[2]։

1487 թվին, ինչպես մատնանշում է չհրատարակված հայ ժամանակագիրներից մեկը, որի վկայությունը մեջ է բերված Ալիշանի Այրարատում (էջ 328), Յաղուբ փատիշահը նորից ավերել էր Տփղիսը ու նրա շրջանները, կործանել էր եկեղեցիները և գերի էր վերցրել բազմաթիվ քրիստոնյաներ։ Այս վկայությունից կարելի է հետևցնել, որ Ուզուն Հասանի մահից հետո Վրաց Կոստանդին թագավորը (1478—1505) կարողացել էր վերագրավել իր թագավորության մայրաքաղաքը, որին 1477 թվին տիրապետել էին Աղ-Կոյունլուները։

Յաղուբի իշխանության ժամանակ զորեղացան Արդավիլում մահմեդական Սեֆյան տոհմի շեյխերը, որոնք մեծ ազդեցություն ունեին քաղաքի ժողովրդի ու նաև հարևան շրջանների թուրք բնակչության վրա։ Այս տոհմի մեծն էր այս ժամանակ շեյխ Հայդարը, որը, ամուսնացած լինելով Ուզուն Հասանի աղջիկներից մեկի հետ՝ ձգտեց ընդլայնել իր իշխանությունը և մեծ զորքով արշավեց Շիրվան, գրավեց Շամախին և մատնեց քաղաքը կոտորածի ու ավերածության։ Սակայն հետևյալ տարին, 1489 թվին, Շիրվանի շահ Փառուխ Յեսարը, որին օգնության էին եկել Յաղուբի ուղարկած զոր-

[1] Տե՛ս «Հայոց նոր վկաները», գիտական հրատարակություն, էջ 313—319 և 322—328։ Համեմատե «Ուգեգրություններ», Ա, էջ 213—214։

[2] Տե՛ս Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 239—240։ Համեմատե Ձեռ. էջմ. № 131 Նոր ցուցակ։

քերը Սուլեյման իշխանի առաջնորդությամբ, հարձակվեց նրա վրա և Հայդարը չարաչար պարտվեց ու ճակատամարտում սպանվեց։

1488—9 թթ. այս անցքերը մանրամասն հիշված են հայ ձեռագրերի հիշատակարաններից մեկում, որ մեջ է բերված Ալիշանի Հայապատումում (էջ 586—587)։

> «Եվ մեծ սոֆին Արդավիլ քաղաքի,— ասված է այս հիշատակարանում,— ժողովեց իր նամակով ամբողջ երկրից բոլոր իր սոֆիններին,— նրանց կարգն էր ու սովորությունը, որ յուրաքանչյուր տարի ըստ նրա կոչի շտապ գալիս էին ամբողջ երկրից կարմրագգակ սոֆիները և զինվորում էին նրան իրենց ծախսով և փոխանակ նրանից առնելու, իրենք էին նրան տալիս շատ ոսկի ու արծաթ. և բոլոր պատերազմներում ուր նա գնում էր՝ հոժարությամբ կռվում էին և նրա համար մեռնում... Եվ նա նույն այս թվին ժողովեց մոտ 40.000 մարդ և գնաց ու խաբեությամբ մտավ Շամախի, և բոլորին, որ իր ձեռքն ընկան՝ քրիստոնյաներից ու տաճիկներից կանայք ու տղամարդիկ՝ սրով կոտորեց և ամբողջ քաղաքը հրով այրեց ճոթեղենի հետ և այն ամենով, որ գտնվում էր նրա մեջ... Նաև բոլոր անասունները՝ ձի, ջորի, ուղտ ու ոչխար՝ սրով կոտորեց. և այսպես չմնաց ոչ մարդ և ոչ անասուն։
>
> Ապա Շամախու տերը, տխուր լուրը հայտնելով, հաղորդեց այս մասին Թավրիզ իր փառշահ փեսա Եաղուբին. իսկ սա ուղարկեց բազմաթիվ զորքով մեծ իշխան Սուլեյմանին։ Երբ սա եկավ՝ սրանք մեծ թափով մարտնչեցին ու, հաղթելով կոտորեցին առհասարակ բոլորին. և իրենցից եւս շատերը մեռան»։
>
> [«Եւ մեծ Սօֆի Արտաւել քաղաքին ժողովեաց թղթով իւրով զամենայն սօֆիսն իւր յամենայն երկրէ. զի էր սահմանք և սովորութիւն նոցա՝ որ յամենայն ամի փութային ի կոչն նորա յամենայն աշխարհէ կարմրագտակ սօֆիքն, և զինուոր էին նմա իւրեանց թոշակօքն, և փոխանակ առնելոյ ի նմանէ՝ ինքեանք տային նմա բազում ոսկի և արծաթ, և յամենայն պատերազմունս ընդ որ երթայր՝ յօժարութեամբ կռուէին և մեռանէին առաջի նորա......... Որ և ժողովեաց յայսմ ամի արս իբրև Խռ (40.000), և գնացեալ խաբեութեամբ եմուտ ի Շամախի, և զամենեսեան որ ի ձեռն էած ի քրիստոնէից և ի տաճկաց՝ զարս և զկանայս՝ սրով կոտո-

րեաց, և զքաղաքն ամենայն հրով այրեաց կումաշօքն և որ ինչ էր ի նմա...... Զոր զոյժ արկեալ տէրն Շամախու ի Թավրէզ առ փատիշահ փեսայն իւր Աղաւալ [ուղղելի՝ Աղուպ], և ծանոյց նմա. և նա յուղարկեաց զիշխանն մեծ Սուլէման՝ բազում զօրօք, որ գնացեալ ջանիւ մեծաւ մարտեան և յաղթեալ կոտորեցին առ հասարակ զամենեսեան, և յինքեանց ես շատք մեռան»]։

1490 թվին մեռավ Եաղուբ փատիշահը և նրա որդիների միջև սկսվեցին նոր երկպառակություններ ու կռիվներ գահաժառանգման համար։ Մեծամեծներից ոմանք ուզում էին գահը տալ Եաղուբի եղբայրներին, իսկ ոմանք՝ որդիներին։ Ներքին կռիվների ժամանակ, որ տևեցին երեք տարի՝ սպանվեցին Եաղուբի եղբայր Մասիհը, Հասանի թոռ՝ Խալիլի որդի Ալին, Եաղուբի որդի Բայսոնղուրը, աթաբեկ Սոֆի Խալիլը, վերոհիշյալ մեծ վեզիր Սուլեյմանը և ուրիշները։ Այս երեք տարում իշխեցին, իրար հաջորդելով, նախ Մասիհը, հետո Ալին և ապա Բայսոնղուրը։ Արյունահեղ պայքարը դադարեց 1493 թվին և Աղ-Ղոյունլուների պետության գահը ստացավ Հասանի թոռ Ռուստամը, որը Մաքսուդի որդին էր (1493—6)։ Որ Ռուստամի գահ բարձրանալը պետք է դնել 1493 և ոչ 1491 թվին, ինչպես ունեն Լեն-Պուլը[1], և ուրիշները՝ այդ պարզ երևում է Աղթամարում 1493 թվին գրված ավետարանի հիշատակարանի վկայությունից, որի մեջ ասված է, որ այդ ձեռագիրն ընդօրինակված է՝

«Ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, քանզի Գ. ամ է որ աշխարհս անտէր ի փաթշահէ. և յայսմ ամի թագաւորեաց Ըռըստամ փաթշահն»[2]։

Ռուստամի իշխանության չորրորդ տարում, 1496 թվին նորից ծայր առան ներքին խռովությունները գահակալության համար։ Ռուստամի դեմ ապստամբեց իր հորեղբոր Ուզուրլու Մահմեդի որդին, Ահմեդը, որը Արաքսի ափին պարտության մատնեց նրան և խլեց նրանից գահը։ Ահմեդը կարողացավ իշխանությունն իր ձեռքում պահել միայն ութը ամիս և այնուհետև Աղ-Ղոյունլուների պետությունն արագ կերպով դիմեց դեպի անկում։ Ահմեդից հետո, որը սպանվեց ներքին խռովությունների ժամանակ (1497), իշխանությունն անցավ Եաղուբի որդի Մուրադին, բայց սրան ևս կարճ ժամանակից հետո պարտության մատնեց Ուզուն Հասանի թոռ և Յուսուֆի որդի Մուհամմեդը (1498—1499)։ Մուրադը փախավ Բաղդա-

---

[1] Տե՛ս Лэн-Пуль, Мусульманские династии, էջ 215։

[2] Տե՛ս Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, էջ 519։

դի կողմերը և այնտեղ տեր դառավ Հարավային Պարսկաստանի՝ Իրաքի ու Ֆարսիստանի։ Իսկ Մուհամմեդը շուտով գահընկեց արվեց իր եղբոր՝ Ալվանդի կողմից (1499 թ.)։

Այս ներքին համառ ու արյունահեղ կռիվների մասին, որոնք. ինչպես կտեսնենք, վերջ դրին Աղ-Ղոյունլու թուրքմենների իշխանությանը՝ անանուն հայ ժամանակագիրներից մեկը, որի վկայությունը մեջ է բերված Ալիշանի Այրարատում (էջ 329)՝ հաղորդում է հետևյալը.

«Թավրիզայ փաթշահութիւն խափանեալ էր, և Աղօլուցոց [Աղ-Ղոյունլուների] ազգն յիրար անկեալ էին. և պարոնութիւն սոցա ոչ հաստատէին. և աշխարհս կայր յերերմանի. վասն զի միմեանց ոչ հնազանդէին. յերեք չորս դիմաց բաժանեալ էին փատշահութիւն, զմիմեանս կոտորէին. և շատ հայ և թուրք թալանեցան, և գեղք ու քաղաքք աւերեցան, և ազգ քրդաց կոտորեցան և սպանեցան»։

Աղ-Ղոյունլուների երկպառակություններից օգտվեց Արդավիլի վերոհիշյալ Սեֆյան տոհմը։ Այս տոհմի կրոնական քարոզչությունը քաղաքական բնույթ էր ստացել դեռևս շեյխ Հայդարի ժամանակ, որը, ինչպես տեսանք, սպանվել էր ճակատամարտում Շիրվանի շահ Փառուխ Յեսարի և Նաղուբի մեծ վեզիր Սուլեյմանի հետ 1489 թվին։ 15-րդ դարի վերջում Հայդարի փոքր որդի Իսմայելը, ընթանալով իր հոր քաղաքական շավղով, ամենազորեղ մրցակիցը դառավ իրար դեմ պատերազմող Աղ-Ղոյունլու Բայանդուրյան տոհմի իշխանների, որոնք նրան ազգական էին մայրական կողմից։ Իսմայելի տատը, Սեֆյան Ջունեյդի կինը, Ուզուն Հասանի քույրն էր, իսկ Իսմայելի մայրը Ուզուն Հասանի դուստրն էր Դեսպինա կնոջից։ Ինչպես տեսնում ենք, Հայդարի այս կրտսեր որդին Ուզուն Հասանի թոռն էր և Տրապիզոնի Կալոյոաննես կայսեր թոռի որդին։ Շեյխ Իսմայելի գլխավոր ռազմական հենարանը կազմում էին Ադրբեջանում, մասնավորապես, Արդավիլի շրջանում ապրող քոչվոր թուրք ցեղերը։ Սրանք կրում էին սրածայր բարձր կարմիր գլխարկներ, որոնց վրայից կապում էին սպիտակ փաթթոցներ և հենց դրա համար էլ կոչվում էին «ղզլբաշ», այսինքն՝ «կարմրագլուխ»։

1500 թվին շեյխ Իսմայելն արշավեց Շիրվան վրեժ առնելու Փառուխ Յեսարից իր հոր՝ Հայդարի մահվան համար։ Շիրվանի շահը հաղթվեց և սպանվեց ու շեյխ Իսմայելը տիրեց Շամախի քաղաքին և Շիրվանին, որոնք նրան ծառայեցին իբրև նեցուկ հետագա պայքարի ընդդեմ Աղ-Ղոյունլու թուրքմենների։ 1501 թվին նա,

ձգտելով տեր դառնալ երկպառակությունների պատճառով ուժասպառված ու բաժան-բաժան եղած Աղ-Կոյունլուների պետության՝ իր զենքը դարձրեց Ալվանդի դեմ։ Վճռական ճակատամարտը նրա ու Աղ-Կոյունլուների միջև տեղի ունեցավ Նախիջևանի մոտ՝ Շարուրում։ Ալվանդի զորքերը չարաչար պարտվեցին, ինքը՝ Ալվանդն իր ընտանիքի հետ փախավ Ամիդ և շեյխ Իսմայելը գրավեց Թավրիզը (1501 թ.)[1]։ Այնուհետև, հետևյալ տարին, նա հաղթեց Համադանի մոտ նաև Եաղուբի որդի Մուրադին, որն իշխում էր Իրաքում ու Ֆարսիստանում։ Այսպիսով, կարճ ժամանակում, Սեֆյան Իսմայելը, նվաճելով նաև հարևան երկրները, իր պետության սահմանները հասցրեց հարավում մինչև Պարսկական ծովածոցը, արևելքում՝ մինչև Աֆղանիստան, հյուսիսում՝ մինչև Ամու-Դարյա գետը և արևմուտքում՝ մինչև Եփրատ։ Նա հիմնադիր եղավ Սեֆյանների նոր հարստության, հայտարարեց շիա դավանությունը պետական կրոն և անվանեց իրեն շահ։ Պարսիկ ժողովուրդը այնուհետև հետզհետե սերտ կերպով հարեց նոր այս իշխանությանը, որը ընդունվեց նրա կողմից իբրև իր պետական ու ազգային գոյության ու ինքնուրույնության վերահաստատող։

16-րդ դարի սկզբում Հայաստանը գրեթե ամբողջությամբ ընկավ Սեֆյանների տիրապետության տակ, որն իր արևմտյան սահմանում հարևան դառավ Օսմանյան պետության։ Այնուհետև Հայաստանի համար նորից ստեղծվեց, ինչպես հռոմեական-պարթևական, բյուզանդական-սասանյան և բյուզանդական-արաբական շրջաններում, բուֆերական ծանր կացություն և նա վերստին թատերաբեմ դառավ աղետների ու ավերածությունների, որոնք պարբերաբար տեղի էին ունենում պատերազմների ընթացքում Թյուրքիայի և Պարսկաստանի միջև։

Պարսկա-թուրքական տիրապետությունը Հայաստանում և, հատկապես, հայ ժողովրդի իրավական ու տնտեսական դրությունն այս նոր շրջանում՝ ունեն որոշ ինքնուրույն առանձնահատկություններ, որ դեռևս կարոտ են ուշադիր ու մանրախույզ ուսումնասիրության։

---

[1] Որ Ալվանդի այս պարտությունը տեղի էր ունեցել 1501 և ոչ 1502 թվին, ինչպես ունի Լեն-Պուլը (Мусульманские династии, էջ 216) այդ հաստատում է Արծկեում գրված ավետարանի հիշատակարանը, որի մեջ ասված է, որ «գրեցաւ սա... յամի ՋԾ [=1500/1], ի հայրապետութեան տեառն Տէր Սարգսի, ի դառն և ի դժուար ժամանակի, որ ելաւ Կարմիր գլուխ Սօֆին և զԱղօղլու ազգն կորոյս, և աշխարհս եղաւ յերերման». Տե՛ս Լալայան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, էջ 616։

* * *

Ինչպես տեսանք, 14-րդ դարի երկրորդ կեսը և 15-րդ դարը՝ Ջելայիրյանների, Չոբանյանների, Լանկթամուրի և Ղարա-Ղոյունլու և Աղ-Ղոյունլու թուրքմենների տիրապետության ժամանակաշրջանը՝ հայ ժողովրդի պատմության ամենամռայլ շրջաններից մեկն էր։

14-րդ դարի արդեն երկրորդ կեսում, 1375 թվին, մահացու հարված էր տրվել Կիլիկյան հայկական թագավորությանը և նույն այդ դարում հետզհետե կործանվել էին նաև Հայաստանի իշխանությունները, որոնցից, ինչպես տեսանք, մնացել էին միայն մի քանի խղճուկ բեկորներ, գլխավորապես, բուն Սյունիքում, Լեռնային Ղարաբաղում և Սևանա լճի շուրջը գտնվող գավառներում։ Հայաստանի պարբերական ամայացումը և հայ ժողովրդի բարեկեցության ու կուլտուրայի կործանումը շարունակվեցին այնուհետև գրեթե անընդհատ կերպով ու ամենամեծ չափերով նաև 15-րդ դարում։

Մերձավոր Արևելքի և, մասնավորապես, հայաբնակ գավառների կիսավեր անմխիթար այդ վիճակը մանրամասն նկարագրված է ժամանակակից եվրոպական ճանապարհորդների ուղեգրություններում։ Հայաստանի միջով անցնելիս՝ նրանք գրեթե ամեն քայլափոխում հանդիպել են քաղաքների ու գյուղերի ավերակների և ամայի կամ կիսակործան ընդարձակ տարածությունների։

Ուշագրավ է ու հետաքրքիր, որ Կլավիխոյին ժամանակակից հայերը իրենց թշվառ կացությունը և ազգային անկախության բարձումը վերագրել են հայ իշխանների անմիաբանությանն ու նրանց ներքին պառակտումներին[1]։

Այս ընդհանուր ու սովորական դարձած ժողովրդական կարծիքը ճիշտ չէ։ Անմիաբանությունը և ներքին խռովությունները, որ ընդհանուր երևույթ էին ֆեոդալական կազմակերպություն ունեցող բոլոր երկրներում՝ համեմատաբար հազվագյուտ էին Զաքարյան Հայաստանի հայ իշխանություններում։ Ծղբայրասպան կռիվներն ու տիրանենգումներն ավելի մեծ չափերով տեղի էին ունենում ընդհակառակը, թուրքական, մոնղոլական ու թուրքմենական իշխող դինաստիաների միջև, որոնք տիրել էին նրանց երկրին։

Իսկ, իրապես, հիմնական պատճառը Հայաստանի քաղաքական ու ազգային ինքնուրույնության խորտակման, ինչպես և նրա

---

[1] Տե՛ս «Ուղեգրություններ», էջ 138—139։

տնտեսական ու կուլտուրական կյանքի հետադիմության, ո՛չ թե հայերի երկպառակությունններն էին ու անմիաբանությունը, այլ Միջին Ասիայից եկող քոչվոր ու խաշնարած թուրք և թաթար ցեղերի տևական ու անհաղթահարելի արշավանքները, որոնք հիմնավորապես ավերածության մատնեցին և քարուքանդ արին առաջադեմ քաղաքակրթությունն ու կուլտուրան ո՛չ միայն Հայաստանի, այլև ամբողջ Արևմտյան Ասիայի։ Արշավողների կատաղի առաջշարժումը, ինչպես հայտնի է, չկարողացան կասեցնել մինչև իսկ այնպիսի մեծ ու հզոր պետություններ, ինչպիսիք էին Խվարեզմը, Չինաստանը և Ռուսաստանը։ Ուստի միանգամայն պարզ է, որ սելջուկյան, մոնղոլական ու լանկթամուրյան ռազմական տեսակետից խիստ կազմակերպված մոլեգին արշավանքները կործանիչ ու սոսկալի մի աղետ էին, որից փրկվել անկարող էր, իհարկե, և հայ ժողովուրդը։

Պետք է ասել, որ Միջին Ասիայից եկած հետամնաց ցեղերի իշխանության հաստատումն Առաջավոր Ասիայում մի մեծ դժբախտություն էր ոչ միայն հայերի, այլ, ընդհանրապես, այս հին կուլտուրական երկրի բոլոր ժողովուրդների համար։ Գտնվելով խաների, փադիշահների և սուլթանների վայրագ ու բռնակալ իշխանության տակ՝ նրանք բոլորը ստիպված եղան դարեր շարունակ վարել թշվառ ու ողորմելի կյանք։

Պետք է ասել սակայն, որ ավերածությունների, զաղթի ու թշվառության մռայլ այս ժամանակներում էլ, երբ հայ երկիրը գտնվում էր ամենասոսկալի վիճակում, հայ ժողովրդի մեջ կենդանի էր մնում նրա ստեղծագործական մեծ շնորհքը։ 15-րդ դարի անասելի ծանր պայմաններում անգամ հայ միտքը շարունակում էր հարստացնել գիտությունն ու գրականությունը կարևոր նոր նվաճումներով։ Գիտական ու գրական այդ աշխատանքների մեծագույն մասը դեռևս չեն հրատարակված և կարոտ են հետագայում ուշադիր ուսումնասիրության։

15-րդ դարում վաստակավոր գիտնական էր բժիշկ Ամիրդովլաթը, որի աշխատությունների շնորհիվ հայ բժշկական գիտությունը հասավ իր զարգացման բարձր աստիճանին։ Ամիրդովլաթը ծնվել է Ամասիայում մոտավորապես 1415—1425 թվերի միջև և վախճանվել է 1496 թվին։ Հմուտ լինելով արաբերեն, հունարեն, պարսկերեն և թուրքերեն լեզուներին՝ նա լայն կերպով օգտագործել է իր ժամանակվա բժշկական գրականությունը և գրել է բժշկագիտական բազմաթիվ գրքեր ու ձեռնարկներ։ Նրա լավագույն աշ-

խատությունններն են՝ «Օգուտ բժշկութեան» երկը, որ Արմֆանի հրատարակությամբ լույս տեսավ Երևանում 1940 թվին և «Անգիտաց անպէտ» բառարանը, որ լույս տեսավ Վիեննայում 1926 թըվին։ Ամիրդովլաթի աշխատությունները, ինչպես հայտնի է, գըրված են աշխարհիկ լեզվով։ Բացի բժշկական գրականությունից 15-րդ դարում արտասովոր կերպով զարգանում էր նաև բանաստեղծական գրականությունը, հատկապես քնարերգությունը։ Գեղարվեստական այս գրականության մեջ, որ իր բնույթով աշխարհիկ ու ժողովրդական էր, արտացոլվում էին հայ ժողովրդի ծանր ողբերգական վիճակը և նրա հույսերն ու ակնկալությունները։

Նշանավոր բանաստեղծ էր այս ժամանակ Մկրտիչ Նաղաշը, որը ծնվել էր Բաղեշ քաղաքի մոտ Պոռ գյուղում 14-րդ դարի վերջերում և վախճանվել էր 15-րդ դարի յոթանասունական թվականներին (1470—1480)։ Նաղաշի ոտանավորների մեջ, որ, մեծ մասամբ, խրատական են՝ պատկերավոր կերպով նկարագրված է 15-րդ դարի աստանդական պանդուխտ հայ գաղթականների վըշտալից ու դառն կյանքը։ Նա իր բանաստեղծություններից մեկում բնորոշում է ղարիբության դառնությունները հետևյալ տողերում՝

«Աւ՛աղ զղարիպն ասեմ, որ յօտար երկիր հանդիպի,
Աչերն արտասուօք ի լի, երեսէն ի վայր կութափի.
Յորժամ ի մեջլիս նստի, յանկասկած սրտիկն արունի,
Ջաչերն ի բոլոր ածէ, կարևոր և զոք նա չունի»։

Բայց նա միաժամանակ խրատում ու մխիթարում է նրան՝

«Ղարիպ, սիրտդ մի՛ նեղեր, այս դժվար օրերս անցնի.
Շատ ղարիպ ի տուն դարձաւ, մի՛ վախիր թէ քեզ չի լինի»։

15-րդ դարի հայտնի բանաստեղծ էր նաև Առաքել Բաղիշեցին, որը, ժամանակակից լինելով Բյուզանդական պետության անկմանը և օսմանցիների իշխանության հաստատմանը Կ. Պոլսում (1453 թիվ), գրել էր «Ողբ մայրաքաղաքին Ստըմպօլա»։ Այս հեղինակը ևս, որի գրվածքը թախծալից մի եղերերգ էր, հավատ էր ներշնչում հայ ժողովրդին, որ ծանր օրերն անցնելու են և Հայաստանը նորից վերականգնելու է իբրև ազատ երկիր։

# ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Հայ ժողովրդի պատմության այս շրջանի համար կան բազմաթիվ նյութական հիշատակարաններ, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է հնագիտությունը։ Նյութական այդպիսի հիշատակարաններ են քաղաքների ու շինությունների մնացորդները՝ ավերակ պալատները, բերդերը, եկեղեցիները, ջրանցքները, նաև գերեզմանները, տնային իրերը, զարդերը, զենքերը, աշխատանքի գործիքները և այլն։ Նյութական այս հիշատակարանները ծանոթացնում են մեզ թե հայ և թե հարևան ժողովուրդների մշակույթի, կենցաղի, սովորությունների, ինչպես և արվեստի ու տեխնիկայի հետ։

Հնագիտական աշխատանքներ Հայաստանում դեռևս շատ չեն կատարված։ Ապագայում, երբ այդ աշխատանքները լայն ծավալ ընդունեն՝ պատմական ու կուլտուրական մի շարք խնդիրներ կստանան, հավանաբար, նոր լուսաբանություն. կպարզվի ժողովրդի մասնավոր ու հասարակական կենցաղը և կորոշվեն նրա տնտեսական դրությունը ու նրա փոխհարաբերությունները հարևան երկրների հետ։

Նյութական բազմաթիվ հիշատակարաններ, որ վերաբերում են այս ժամանակաշրջանին, երևան են հանված պեղումների միջոցով, գլխավորապես, Անի քաղաքի ավերակներում։ Այդ պեղումներն ու հնագիտական ուսումնասիրությունները լուրջ ու բեղմնավոր ընթացք էին ստացել շնորհիվ Նիկ. Մառի Անիում ձեռնարկած աշխատանքների։ 1892 թվից սկսած մինչև 1916 թիվը Ն. Մառը պարբերաբար այցելել և կատարել է պեղումներ Անիի ավերակներում։ Այդ աշխատանքների գիտական արդյունքները լուսաբանված են նրա և ուրիշների հրատարակություններում և ամփոփված են Մառի 1934 թվին լույս տեսած «Անի» աշխատության մեջ

(Н. Я. Марр, Ани. Книжная история города и раскопки на месте городища. Л.—М., 1934).

Նյութական հիշատակարանների շարքում կարևոր տեղ են բռնում հին դրամները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է դրամագիտությունը։ Հին դրամների ուսումնասիրությունը նշանակություն ունի տնտեսական պատմության, նմանապես նաև դրամների, առևտրական հարաբերությունների և դրամական շրջանառության պատմության համար։ Հին դրամների ուսումնասիրությամբ լուսաբանվում են այլևայլ պետությունների, երկրների ու քաղաքների փոխադարձ հարաբերությունները և նրանց քաղաքական անկախության խնդիրը։ Դրամների վրա դրոշմված են լինում հաճախ պատմական անձերի նկարները, նրանց անունները ու նաև տարեթվերը, որ մեծ նշանակություն ունեն ժամանակագրության համար։ Լինելով արվեստի արտադրություններ և ունենալով իրենց վրա զանազան պատկերներ՝ նրանք ծանոթացնում են մեզ հնագույն ժամանակների շորերի, զենքերի, ինչպես և արվեստի զարգացման աստիճանի հետ։

Դժբախտաբար մեր ուսումնասիրած պատմական շրջանի վերաբերմամբ հավաքված դրամները դեռևս քիչ են ուսումնասիրված։ Կարևոր աշխատանք կատարել է այս ուղղությամբ Ե. Պախոմովը, որը պարբերաբար հրատարակում է կարևոր աշխատություններ հին դրամների մասին, որոնք հայտաբերված են Անդրկովկասում (տե՛ս Е. А. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик и краев Кавказа, вып. 1, 2, 3, Баку, 1926, 1938, 1940),

## Բ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդի պատմության այս շրջանի համար խիստ կարևոր աղբյուր են նաև արձանագրությունները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է արձանագրագիտությունը կամ էպիգրաֆիկան։ Արձանագրությունները գտնվում են պարիսպների, շինությունների պատերի, գերեզմանաքարերի, զանազան ամանների և իրերի վրա։

Հայկական արձանագրությունների մի ստվար մասը հրատարակված է բանասիրական, պատմական, աշխարհագրական և ազգագրական այլևայլ հայ և օտար երկերում ու հանդեսներում։ 1913 թվին Ս. Պետերբուրգի գիտությունների ակադեմիան հրատարակեց Կ. Կոստանյանցի կազմած «Վիմական տարեգիրը» («Ցուցակ ժողո-

վածոյ. արձանագրութեանց Հայոց»), որի մեջ ի մի են ամփոփված զանազան երկերում լույս տեսած արձանագրությունները։ Սակայն այդ աշխատությունը թերի է և շատ կողմերով անբավարար։ Անհրաժեշտ է նորից հավաքել ու հրատարակել գիտական եղանակով ո՛չ միայն արդեն լույս տեսած արձանագրությունները, այլև չհրատարակված նոր արձանագրությունները։

Կարելի է հուսալ, որ այդ կարևոր ու անհետաձգելի աշխատանքին շուտով ձեռնամուխ կլինեն Հայաստանի գիտական հաստատությունները։

## Գ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Հայ ժողովրդի այս շրջանի պատմության ամենագլխավոր աղբյուրներն են, անշուշտ, ժամանակագրական ու պատմական հայերեն երկերը, որոնք, բարեբախտաբար, արդեն հրատարակված են։ Բացի հայ մատենագիրներից ո՛չ պակաս կարևոր աղբյուրներ են նաև օտար պատմական մատենագիրները՝ արաբական, ասորական, պարսկական, բյուզանդական և այլն։ Ավելորդ չեմ համարում տալ ներքև համառոտ տեղեկություններ այն հեղինակների ու երկերի մասին, որոնք աղբյուր են ծառայել իմ այս աշխատության։

## Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

### 1. ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

Արիստակես Լաստիվերտցու կենսագրության գլխավոր աղբյուրն է նրա պատմությունը։ Ենթադրում են, որ սրա հայրենիքն էր Լաստիվերտ ավանը, որը, ըստ երևույթին, գտնվում էր Կարնո գավառում։ Արիստակեսը ժամանակակից էր սելջուկյան արշավանքներին և, ինչպես ինքը վկայում է, 1049 թվին ականատես է եղել Մանանաղի գավառում գտնվող Սմբատաբերդի և Արծն քաղաքի կոտորածներին։ «Այսոքիկ երկուց էր տեղեաց,— ասում է նա,— լերինն և քաղաքի, ողորմելի պատմութիւնս. զոր աչօք մեռովք տեսաք և ընդ փորձ չարեացն անցաք, զայն միայն գրեցաք» (գլ. Ժ, էջ 63)։ Մի ուրիշ տեղ իր երկում Արծն քաղաքը նա անվանում է «մեծանիստ և շահաստան քաղաքս մեր» (գլ. Ժ, էջ 63)։ Արիստակեսի պատմությունը սկսվում է Բազիլեյոս Բ կայսեր 25 տարուց (=1000 թ. մեր թվ. հ.) և հասնում մինչև 1071 թիվը։

Արիստակեսի «Պատմությունը» առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում 1844 թվին և այդ հրատարակությունից արտատպված

*է Տփղիսում 1912 թվին «Ղուկասյան մատենադարանի հրատարակությունը»։ Թարգմանված է ֆրանսերեն* E. Prudhomme, Histoire d'Arménie par Arisdaguès. *Փարիզ. 1864. Նաև աշխարհաբար՝ Մինաս Տեր-Պետրոսյանի աշխատությամբ, Ալեքսանդրապոլ, 1893 թ.։*

## 2. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

*Մատթեոս Ուռհայեցու կենսագրությունը մեզ անհայտ է, որովհետև այդ մասին չկան հիշատակություններ ոչ յուր, ոչ էլ այլ երկերում։ Իր ժամանակագրության 113 և 114 էջերում (Վաղարշապատ, 1898) նա ինքն իրեն անվանում է «Ուռհայեցի», «Վանական» և «Վանաց երեց»։ Մի ուրիշ տեղ իր երկում նա վկայում է, որ գրել է ժամանակագրությունը «ի քաղաքս Միջագետաց յՈւռհա» (էջ 278)։ Մատթեոսը հաղորդում է նաև, որ իր աշխատությունը գրել է երկար տարիների ընթացքում և մատնացույց է անում իր ժամանակագրության աղբյուրները. «զի զամս հնգետասան ունէաք զայս գործ քննութեանս, զոր ի մատենագրութիւնս ընթերցեալ գտանէաք զԹուականսն ժամանակացն ի յիշատակարանս գրոցն և ընդ ծերսն ի քննութիւն մտեալ տեգերէաք անդադար քննութեամբ՝ և հաւաքեալ գրեցաք ի դիրս զայս ինչ» (էջ 280)։*

*Այս ժամանակագրությունը սկսվում է 952 թվից և շարունակվում է մինչև 1136/7 թիվը։ Այս վերջին թվից սկսած՝ Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրությունը շարունակել է Գրիգոր երեցը, ըստ երևույթին, նույնպես Ուռհա քաղաքում և հասցրել մինչև 1162/3 թիվը։ Ուռհայեցու ժամանակագրությունն առաջին անգամ լույս ընծայեց Փարիզում ֆրանսիական խոշոր գիտնական Էդ. Դյուլորիեն նախ՝ ֆրանսերեն թարգմանությամբ 1858 թվին և ապա՝ հայերեն բնագրով ու ֆրանսերեն թարգմանությամբ «Հավաքումն խաչակրաց պատմիչների» ժողովածուի մեջ 1869 թվին։*

*Այս հրատարակությունից առաջ, դարձյալ 1869 թվին, հայերեն բնագիրը լույս էր տեսել նույնպես և Երուսաղեմում, իսկ հետո, 1898 թվին, մի քանի նոր ձեռագրերի համեմատությամբ Վաղարշապատում։*

## 3. ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

*Մխիթար Գոշը ծնվել է Գանձակ քաղաքում 12-րդ դարի առաջին կեսում և մեռել է խորին ծերության հասակում 1213 թվին։ Իր ուսումը նա ստացել էր Հովհաննես Տավուշեցու և ուրիշ ականավոր վարդապետների մոտ և ինքն էլ կուսակրոն հոգևորական էր ու վարդապետ։ Բացի կրոնական երկերից, առակներից ու Դատաս-*

տանագրքից նա ունի վերջին այս աշխատության հիշատակարանին կցված պատմական խիստ կարևոր մի գրություն, որի մեջ հիշատակված է Գանձակ քաղաքի և Փառիսոս ու Խաչեն գավառների 1139 թվի մեծ երկրաշարժը, մանրամասն առաջ են բերված «Շարք հայրապետացն Աղուանից» ցանկը մինչև 1139 թիվը և ապա ընդարձակ կերպով նկարագրված են պատմական կարևոր անցքերը, որ տեղի էին ունեցել Գանձակի կուսակալության մեջ և նրան հարևան շրջաններում 1139—1161 թվերին։ Մխիթար Գոշի արժանահավատ ու նոր տեղեկությունները այս անցքերի մասին, ինչպես ցույց է տրված իմ այս աշխատության մեջ, որոշ կետերում լրացնում ու ուղղում են եվրոպական պատմագետների՝ Մյուլլերի, Լեն-Պուլի և ուրիշների՝ սխալ տվյալները և կարծիքները։

Կարևոր պատմական այս գրությունը լույս է տեսել մեծ ու վաստակավոր գիտնական Ալիշանի Հայապատումում. տե՛ս էջ 361—362՝ «Ժամ Գանձակայ», և էջ 384—391 «Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու»։

Իմ աշխատության աղբյուր է ծառայել նաև Մխիթար Գոշի Դատաստանագիրքը («Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց», հրատ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880)։

## 4. ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ

Սամուել Անեցու անձնավորության մասին շատ քիչ տեղեկություն ունենք։ Նրա ժամանակագրության վերնագիրն է՝ «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ»։ Այս վերնագրից երևում է, որ նա Անեցի քահանա է։ Նկարագրելով Անի քաղաքի դրությունը 1126 թվից հետո, Շեդդադին Ապլսուարի ժամանակ, Սամուելը հաղորդում է, որ «վասն հարկապահանջ յափշտակութեանց եկն եհաս ի վերայ մեր վերջին աղքատութիւն և տառապանք անհնարինք, որ յառաջագոյն ժամանակօք ունէր զաշխարհս Հայոց. և աստանօր ժամանակօք յաւելաւ յաճախապէս՝ մի զհետ միոյ մինչև յաւուրս յայսոսիկ. յորում եմքս» (էջ 127)։ Այս վկայությունից պարզ երևում է, որ նա ականատես է եղել Անի քաղաքի անցքերին 1126 թվից հետո։ Ժամանակագրությունը սկսվում է Ադամից և հասնում մինչև 12-րդ դարի երկրորդ կեսը։ Այնուհետև ժամանակագրությունը շարունակել են անհայտ հեղինակներ և հասցրել մինչև 17-րդ դարը։

Սամուել Անեցու ժամանակագրությունը լույս է տեսել առաջին անգամ Վաղարշապատում 1895 թվին Արշակ Տեր-Միքելյանի հրատարակությամբ։ Հրատարակության մեջ պակասում են ժամանակագրական տախտակները, որ լույս են տեսել Մ. Բրոսսեի աշխատությամբ՝ M. Brosset, Tables chronologiques de Samuel d'Ani, Collection des historiens, arméniens, հատոր Բ, Պետերբուրգ, 1876։ Որոշ հատվածներ լույս են տեսել լատիներեն ու ֆրանսերեն թարգմանությամբ (լատ. Զոհրապ, իբրև հավելված Եվսեբիոսի Քրոնիկոնի Միլանի հրատարակության, 1818)։

### 5. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Վարդան վարդապետը գրել է ընդարձակ մի պատմություն, որը 1861 թվին հրատարակեց Մոսկվայում Մկրտիչ Էմինը («Մեծն Վարդանայ Բարձրբերդցւոյ պատմութիւն տիեզերական») և այս 1862 թվին հրատարակվել է նաև Վենետիկում («Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ»)։

Այս պատմությունը սկսվում է աշխարհի սկզբնավորությունից և հասնում է մինչև 1267 թիվը։ Ըստ երևույթին, հենց այս Վարդան վարդապետի աշխատակցությամբ 1248 թվին Իշոխ կամ Հեսու անուն ասորի քահանան հայերեն է թարգմանել Միքայել Ասորու ժամանակագրությունը, որի մասին խոսելու ենք ներքևում։ Կենսագրական տեղեկություններ Վարդանի մասին քիչ են, եղածն էլ կարոտ է քննության, որովհետև 13-րդ դարում ապրել են Վարդան անունով մի քանի մատենագիրներ, որոնք հաճախ իրար հետ շփոթված են։

Ինչպես կարծում են, սա Վանական վարդապետի աշակերտներից էր, Կիրակոս Գանձակեցու մոտ ընկերն էր և իր ուսումը ստացել էր Խորանաշատ վանքում։ 1264 թվին Հուլավու խանի հրավերով նա եկել էր սրա մոտ և այդ տեսակցությունը, որ խիստ հետաքրքրաշարժ է, մանրամասն մեջ է բերված նրա պատմության 96 և 97 գլուխներում։ Նա մեռել է խորին ծերության մեջ 1271 թվին։

Վարդանի պատմությունը թարգմանել է ռուսերեն Մ. Էմինը 1861 թվին Մոսկվայում։ Քաղվածքներ լույս են տեսել ֆրանսերեն և ռուսերեն Էդ. Դյուլորիեի և Ք. Պատկանյանի թարգմանությամբ. տե՛ս E. Dulaurier, Les Mongols d'après les historiens arméniens (Journal Asiatique, 1860, t. XVI), Recueil des historiens des Croisades, I, 1869, և Патканов К., История монголов по армянским источникам, выпуск I, СПб, 1873 г.

## 6. ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

*Կիրակոս Գանձակեցին գրել է 13-րդ դարում «Պատմութիւն Հայոց» Գրիգոր Լուսավորչից սկսած մինչև 1265 թիվը։ Նա ծնվել է Գանձակում 13-րդ դարի սկզբներում, իր ուսումը ստացել է Վանական վարդապետի մոտ, որի հետ 1236 թվին գերի էր ընկել թաթարների ձեռքը։ Ինչպես և մտերիմ իր ընկեր Վարդան վարդապետը, նա մեռել է 1271 թվին։ Կիրակոսի պատմությունը խիստ կարևոր աղբյուր է 13-րդ դարի թաթարաց շրջանի պատմության համար, իսկ նախորդ 11 և 12-րդ դարերի պատմական անցքերի մասին ունի միայն համառոտ ու հարևանցի վկայություններ։ Լույս է տեսել առաջին անգամ 1858 թվին Մոսկվայում և ապա նաև 1864 թվին Վենետիկում։ Տպագրված այս բնագրերը, որ կատարված են հրատարակիչների ձեռքի տակ եղած ձեռագրերից՝ բավարար չեն։ Ես օգտվել եմ նաև Ախալցխայի Կարապետյան դպրոցի գրադարանի ձեռագրից։ Թիֆլիսի 1910 թվի Ղուկասյան մատենադարանի հրատարակությունն արտատպություն է Մոսկվայի հրատարակությունից։ Թարգմանված է ֆրանսերեն Բրոսսեի աշխատությամբ* (Brosset M., Deux historiens arméniens, Kiracos de Gantzac, XIII-[e] s., histoire d'Arménie; Oukhtanès d'Ourha, X-[e] s. Histoire en trois parties։ *Առաջին մասը տպագրված է Պետերբուրգում 1870, իսկ երկրորդը՝ 1871 թվին)։ Քաղվածքներ հրատարակել են ֆրանսերեն, ռուսերեն և լատիներեն լեզուներով Դյուլորիեն, Պատկանյանը և Մ. Պետերմանը։*

## 7. ԳՐԻԳՈՐ ՊԱՏՄԻՉ (ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ)

*Գրիգոր Պատմիչը (Մաղաքիա աբեղան) ևս, ինչպես հայտնի է նրա պատմությունից (էջ 7 և 21), Վանական վարդապետի աշակերտներից էր և դասընկերն էր Վարդանի ու Կիրակոսի։ Նրա մասին ուրիշ կենսագրական տեղեկություններ չունենք։ Այս գրվածքը, որ մեծ ծավալ չունի, կոչվում է «Պատմութիւն ազգին Նետողաց» ու բովանդակում է իր մեջ 55 տարվա պատմություն՝ 1220 թվից սկսած մինչև 1275 թիվը։ Տպագրված է առաջին անգամ Ս. Պետերբուրգում 1870 թվին Ք. Պատկանյանի աշխատությամբ, ապա նաև Երուսաղեմում 1871 թվին։ Լույս է տեսել նաև նրա ռուսերեն թարգմանությունը՝* Патканов К. П., История монголов инока Магакии, СПб, 1871։ *Համեմատե Հ. Ժամկոչյան «Պատմութիւն վասն ազգին Նետողաց» երկի հեղինակը, Երևանի պետական համալսա-*

*րանի գիտական աշխատություններ, 1946, հատոր XXIII, էջ 367—388. նաև Ն. Ակինյան, Գրիգոր քահանա Ակներցի, Հանդ. Ամս., 1948, հուլ.-օգոստ., էջ 387—403։*

## 8. ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ

*Սմբատ Սպարապետը, որ Կիլիկիայի Հայոց Հեթում Ա թագավորի եղբայրն էր, գրել է համառոտ մի ժամանակագրություն, որ սկսվում է 951 թվից և հասնում մինչև 1274 թիվը։ Վերջին թվից հետո Սմբատի ժամանակագրությունը շարունակել է ուրիշ անհայտ մի հեղինակ և հասցրել մինչև 1331 թիվը. Սմբատը, որ ծնվել էր 1208 թվին և մեռել 1276 թվին, ժամանակակից էր 13-րդ դարի պատմական անցքերին։ Բուն Հայաստանում տեղի ունեցած պատմական անցքերի մասին Սմբատը տալիս է միայն համառոտ տեղեկություններ։ Տպագրված է առաջին անգամ Մոսկվայում 1856 թվին հետևյալ վերնագրով՝ «Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս և Հայոց Մեծաց՝ ըստ կարգի ժամանակաց»։ Լույս է տեսել նաև Փարիզում 1859 թվին Կ. վարդ. Շահնազարյանցի հրատարակությամբ «Տարեգիրք» վերնագրով։ Լանգլուայի ֆրանսերեն թարգմանությունը լույս է տեսել 1862 թվին Պետերբուրգում, իսկ Դյուլորիեինը 1869 թվին Փարիզում. տե՛ս* Langlois V., Extrait de la chronique de Sempad, Seigneur de Babaron, connétable d'Arménie, suivi de celle de son continuateur.... Traduit pour la première fois de l'arménien, sur les éditions de Moscou et de Paris. St.-Petersburg, 1862. 2. Ed. Dulaurier, Recueil des Historiens des Croisades. Documents arméniens, t. I, Paris, 1869.

## 9. ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

*Մխիթար Այրիվանեցին գրել է նույնպես համառոտ մի ժամանակագրություն, աշխարհի սկզբից մինչև 1289 թիվը։ Այս ժամանակագրությունը գրված է, հավանորեն, 14-րդ դարի սկզբնիրում։ Նրա մեջ «Իշխանք Կիլիկեցոց» ցանկի վերջում (էջ 16) հիշատակված է Հեթում Բ-ը և մատնանշված է, որ սրա թագավորությունը տևել է 15 տարի (1289—1304)։*

*Լույս է տեսել առաջին անգամ Մոսկվայում 1860 թվին Մ. Էմինի հրատարակությամբ և Պետերբուրգում 1867 թվին Ք. Պատկանյանի հրատարակությամբ։ Այս ժամանակագրությունը թարգմանել է ռուսերեն Ք. Պատկանյանը, իսկ ֆրանսերեն՝ Մ. Բրոսսեն.*

տե՛ս К. Патканов,, Хронографическая история Мехитара Айриванского (XIII в.), перевод с армянского с примечаниями. СПб, 1869. 2. Brosset M., Histoire chronologique par Mkhithar d'Airivank, XIII-e s., S.-Pétersb. 1869.

## 10. ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Ստեփանոս Օրբելյանը Սյունիքի նշանավոր իշխան Տարսայիճի որդին էր։ Նա գրել է Նորավանքում 13-րդ դարի վերջերում «Պատմութիւն Նահանգին Սիսական», որը վերջացրել է Հայոց 746 թվին (=1297)։ Այս ընդարձակ աշխատությունը, որ բաժանված է 74 գլուխների, կարևորագույն աղբյուր է Հայոց պատմության և, մանավանդ, արժեքավոր է ինչպես Սյունյաց հին իշխանական տոհմի, նույնպես և Օրբելյան տոհմի պատմության համար։

Լույս է տեսել առաջին անգամ Փարիզում Կ. Շահնազարյանի հրատարակությամբ 1859 թվին և ապա Մոսկվայում Մ. էմինի հրատարակությամբ 1861 թվին։ Տփղիսի 1911 թվի Ղուկասյան մատենադարանի պատմությունն արտատպված է Կարապետ Շահնազարյանի հրատարակությունից։ Օրբելյանի պատմությունը ամբողջությամբ ֆրանսերեն է թարգմանել և հրատարակել Բրոսսեն (Brosset M., Histoire de la Siounie par Stephannos Orbélian, traduite de l'arménien, 2 livraisons, St.-Pétersbourg, 1864—1866)։ Մոնղոլների մասին հատվածները թարգմանել է ռուսերեն Ք. Պատկանյանը (К. П. Патканов, История монголов по армянским источникам, вып. I, СПб, 1873)։ 65-րդ գլուխը առանձին լույս է տեսել Մադրասում, Մոսկվայում և ֆրանսերեն է թարգմանվել 1819 թվին (Saint-Martin M. J., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. II, Paris. 1819)։

Բացի «Պատմութիւն Նահանգին Սիսական» ընդարձակ աշխատությունից Ստեփանոս Օրբելյանին վերագրվում է նաև առանձին մի ժամանակագրական երկ, որը լույս է տեսել Երևանում 1942 թվին («Ժամանակագրութիւն Ստեփանոս Օրբելյանի», հրատ. Աշ. Աբրահամյանի)։ Այս ժամանակագրությունը սկսվում է Հայոց ՆԺԷ (=968) թվականից և հասնում է մինչև 1290 թիվը։ Առանձնապես կարևոր են ու հետաքրքիր այս հրատարակության վերջին էջերը, ուր ժամանակագրական կարգով մատնանշված են 13-րդ դարի պատմական անցքերը և նրանց ճիշտ ժամանակը։

## 11. ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ

*Հեթում պատմիչը, որը հեղինակն է «Պատմութիւն թաթարաց» աշխատության, Օշին իշխանի որդին էր և իբրև տեր Կոռիկոս բերդի կոչվում էր Հեթում Կոռիկոսցի։*

*Իր պատմությունը, որը, իրապես, ոչ միայն թաթարների, այլ նաև Միջնադարյան Արևելքի պատմություն է՝ նա հորինել է 14-րդ դարի սկզբներում Կղեմես Ե պապի հանձնարարությամբ։ Աշխատությունը Հեթումի թելադրությամբ գրի էր առել միջնադարյան ֆրանսերենով Նիկողայոս Ֆալկոն վանականը, որը հետո թարգմանել էր նույնը լատիներեն։ Ալիշանի ասելով (Հայապատում, էջ 113), Հեթումի պատմության հայերեն հին բնագիրը մոտ ժամանակներում հայտաբերված է եղել էջմիածնում, բայց հետո անհայտացել է։*

*«Պատմություն թաթարաց» երկը, որի լատիներեն վերնագիրն է* Liber historiarum partium Orientis, *մեծ ժողովրդականություն է վայելել միջին դարերում, շատ անգամ վերահրատարակվել է և թարգմանվել է ֆրանսերեն, հոլանդերեն, իտալերեն ու անգլերեն։ Հ. Մ. Ավգերյանի աշխատությամբ 1842 թվին լույս է տեսել նաև նրա գրաբար նոր թարգմանությունը լատիներենից («Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց», թարգմ. Մ. Ավգերյանի, Վենետիկ, 1842)։*

## 12. «ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ»

*«Անանուն ժամանակագրութիւն»-ը, որից մենք մեծ չափով օգտվել ենք, լույս է տեսել Երևանում, 1940 թվին Հ. Մանվելյանի և Հ. Աբրահամյանի հրատարակությամբ։ Հեղինակն առայժմ անհայտ է։ Ժամանակագրությունը սկսվում է Ադամից և հասնում է մինչև 1300 թիվը։ Գրված է, ինչպես մատնացույց են արել հրատարակիչները, 14-րդ դարի սկզբներին։ Լույս տեսած տեքստի ծավալը մեծ չէ, ընդամենը՝ 22 տպագրական փոքր էջ է։ Ժամանակագրությունը կարևոր աղբյուր է 13-րդ դարի երկրորդ կեսի պատմության համար։ Այս ժամանակագիրն ինքնուրույն է և նոր լույս է սփռում ու ճշտում այդ ժամանակաշրջանի պատմական եղելությունները։ Հրատարակության վերնագիրն է՝ «Անանուն ժամանակագրութիւն», առաջաբանով ու ծանոթագրություններով, կազմեցին Հովհ. Մանվելյան և Հար. Աբրահամյան, Երևան, 1940։*

## 13. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՐԴԵԼ

Հովհաննես Դարդելու Հայոց ժամանակագրությունը, որ կարևոր աղբյուր է, գլխավորապես, 14-րդ դարի երկրորդ կեսի պատմական անցքերի ճշտման համար՝ հրատարակել է ընդարձակ ու բովանդակալից առաջաբանով Կ. Եզյանցը։ Դարդելին, որը խոստովանահայրն էր Կահիրեում գերի տարված Լուսինյան Լևոն թագավորի, ինչպես կարծում է Եզյանցը, գրել է իր ժամանակագրությունը այն նպատակով, որպեսզի շարժի եվրոպական պետությունների կարեկցությունը դեպի Լևոնը։

Պրոֆ. Կարրիերը ենթադրում է, որ Դարդելին գրել է այս երկը Լևոնի թելադրությամբ ու նրա խոսքերով։

Ժամանակագրությունը, որ գրված էր հին ֆրանսիական լեզվով՝ Եզյանի խնդրանքով թարգմանել է գրաբար Խորեն արքեպիսկոպոս Նար-Պեյը և այնուհետև այդ թարգմանությունը համեմատել է բնագրի հետ ու խմբագրել Նորայր Բյուզանդացին. տե՛ս «Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն Հայոց», Ս.-Պետերբուրգ, 1891, առաջաբան, էջ ՀԷ—Ջ։

## 14. ԳՐԻԳՈՐ ԾԵՐԵՆՑ ԽԼԱԹԵՑԻ

14-րդ դարի վերջերում և 15-րդ դարի առաջին քառորդում հայտնի մատենագիր էր Գրիգոր Ծերենց Խլաթեցին։ Սա Գրիգոր Տաթևացու հետ ուսանել էր Հովհան Որոտնեցու մոտ և ապա, նրա մահից հետո, Արծկեի մոտ գտնվող Սուխարավանքում Սարգիս վարդապետի մոտ։

Գրիգոր Խլաթեցին գրել է ճառեր, վկայաբանություններ ու նաև տաղեր, գանձեր և ուրիշ մանր գրվածքներ։ Նա խմբագրել է վերստին Հայսմավուրքը և մտցրել է նրա մեջ մի շարք նոր հայ նահատակների պատմություններ։ 1425 թվին նա մեռավ և ինքը մարտիրոսական մահով, նահատակվելով քրդերից Արծկե քաղաքի մոտ գտնվող Ցիպնավանքում։

Գրիգոր Խլաթեցու երկասիրությունների մեջ պատմական մեծ արժեք ունի նրա «Յիշատակարան աղետից» ընդարձակ բանաստեղծությունը, որը բաղկացած է 460 տողից և ամփոփում է իր մեջ պատմական անցքերի նկարագրությունը, որ տեղի ունեցան Հայաստանում Լանկթամուրի, Շահռուխի, Ղարա-Յուսուֆի և սրա որդիների՝ Ասպահանի ու Սքանդարի ժամանակ, 1386—1422 թվերին։

Խլաթեցու այս երկը, որ ոմանք անվանում են պատմական վիպասանություն, հրատարակել են Գրիգոր Խալաթյանցը և Ալիշա-

*նը, առաջինը՝ 1897 թվին Վաղարշապատում («Յիշատակարան աղետից» Գրիգոր Խլաթեցւոյ, պատմական վիպասանութիւն), իսկ երկրորդը՝ «Հայապատում»-ի մեջ (էջ 563—568)։*

## 15. ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

*Թովմա Մեծոփեցին, որը կարևորագույն աղբյուրներից մեկն է Լանկթամուրի ու Նրա հաջորդների ժամանակաշրջանի պատմության՝ ծնվել է 14-րդ դարի երկրորդ կեսում Քաջբերունյաց գավառի Աղիովիտ գյուղում։ Իր ուսումը նա ստացել էր նախ Սարգիս վարդապետի մոտ Սուխարավանքում և ապա նշանավոր փիլիսոփա ու քերթող Գրիգոր վարդապետ Տաթևացու մոտ, որը 1408 թվին իր աշակերտներով հաստատվել էր Մեծոփա վանքում։ Ստանալով Տաթևացուց վարդապետական աստիճան՝ նա ինքը ևս մոտ 35 տարի ուսուցչություն արեց և ունեցավ բազմաթիվ աշակերտներ։*

*Իբրև պատմիչ՝ Թովմա Մեծոփեցին գրել է երկու արժեքավոր աշխատություն՝ Լանկթամուրի և Նրա հաջորդների պատմությունը և «Յիշատակարան», որի մեջ մանրամասն պատմված է կաթողիկոսական աթոռի փոխադրությունը Սսից էջմիածին (1441 թ.)։ Նրա առաջին երկը սկսվում է 1380 թվից և հասնում է մինչև 1440 թիվը. ամփոփում է, ուրեմն, իր մեջ վաթսուն տարվա պատմություն։ Թովման ո՛չ միայն ականատես է եղել Հայաստանում արյունահեղ կոտորածներին ու ավերմունքներին, այլ նաև ինքը արհավիրքների ընթացքում գտնվել է հաճախ հուսահատական դրության մեջ և կրել է ծանր տառապանքներ։*

*Թովմա Մեծոփեցու պատմությունը լույս է տեսել 1860 թվին Փարիզում Կարապետ Շահնազարյանի աշխատությամբ («Պատմութիւն Լանկ-թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ», Փարիզ, 1860), իսկ «Յիշատակարանը» հրատարակել է ընդարձակ առաջաբանով Կարապետ Կոստանյանցը («Թովմա Մեծոբեցու Յիշատակարանը», հրատարակեց յուր առաջաբանով Կ. Կոստանյանց, Թիֆլիս, 1892)։ Պատմության մեծագույն մասը թարգմանել է ֆրանսերեն բելգիացի հայագետ Ֆելիքս Նևը և հրատարակել է ընդարձակ առաջաբանով ու ծանոթություններով՝* Nève F., Exposé des guerres de Tamerlan et de Chahroch dans l'Asie occidentale, d'après la chronique arménienne inédite de Thomas de Medzoph, Bruxelles, 1855.

## 16. ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

*Այս կարևոր աղբյուրը լույս է տեսել Վաղարշապատում 1903 թվին՝ աշխատությամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի (1. «Հայոց Նոր վկաները», 1155—1843 թ., գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903 և 2. «Հայոց Նոր վկաները», ժողովրդական հրատարակություն, հատ. Ա., 1155—1485 և հատ. Բ., 1486—1843 թ., Վաղարշապատ, 1902)։ Այս վկայաբանությունները հավաքված են զանազան ձեռագրերից և 12—15-րդ դարերի պատմական անցքերի մասին պարունակում են իրենց մեջ խիստ կարևոր տեղեկություններ։*

## 17. ՖՐԻԿ

*Ֆրիկը թեև բանաստեղծ է և ոչ պատմագիր, սակայն նրա երկերը խիստ կարևոր աղբյուր են հայ ժողովրդի մոնղոլական շրջանի պատմության։ Նրա բանաստեղծությունների մեջ ցայտուն կերպով արտացոլվել են ժամանակակից քաղաքական ու սոցիալական կյանքի կենդանի պատկերը և, մասնավորապես, նաև հայ կեղեքվող ու տառապող ժողովրդի խոհերն ու զգացումները։*

*Ֆրիկի անձնավորության մասին շատ բան չգիտենք։ Նրա կենսագրության աղբյուրը, գլխավորապես, իր բանաստեղծություններն են։ Նա եղել է, ինչպես պարզ երևում է տաղերի վերնագրերից, աշխարհական։ Մոնղոլական ծանր հարկահանության պատճառով Ֆրիկը ո՛չ միայն զրկվել էր իր տուն ու տեղից, այլև իր որդուց։ Նա ծնվել է, հավանորեն, 13-րդ դարի առաջին քառորդում և վախճանվել կամ 13-րդ դարի վերջերին և կամ 14-րդ դարի սկզբներին։ Ֆրիկի ոտանավորներից առանձնապես կարևոր է նրա պատմական բովանդակություն ունեցող տաղը «Վասն Արղուն Ղանին և Բուղային», որի մեջ նկարագրված են Բուղայի ու մոնղոլ մեծամեծների 1289 թվի դավադրությունն ընդդեմ Արղունի և ապըստամբության ճնշումը ու դավադիրների ոչնչացումը։*

*Ֆրիկի բանաստեղծությունների ժողովածուն հրատարակել են 1941 թ. Մ. Մկրյանը և Ե. Թոռոսյանը (Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941), իսկ «Վասն Արղուն Ղանին և Բուղային» տաղը հրատարակված է, բացի այդ, Տիրայր եպիսկոպոսի կողմից, որը տաղի մեջ հիշատակված պատմական անցքերը մանրամասն քննության է ենթարկել (տե՛ս Արարատ, ապր., դեկտ., 1918, էջ 171—203)։*



23—28

*Խիստ կարևոր աղբյուր են այս ժամանակաշրջանի պատմության համար ձեռագրերի հիշատակարանները, որոնց հեղինակները պատմական անցքերին ժամանակակից գրիչներն են և որոնք երևան են բերում հաճախ պատմական նոր փաստեր ու լրացնում կամ ուղղում են ժամանակագիրների ու մյուս աղբյուրների հաղորդած տեղեկությունները։ Հիշատակարանները, դժբախտաբար, մեծ մասամբ հրատարակված չեն։ Ռուսական Ակադեմիայի հրատարակությունների հայտարարություններում դեռևս 1911 թվին հայտնված էր, որ Ակադեմիայի հրատարակությունների շարքում լույս են տեսնելու Գարեգին Հովսեփյանի էջմիածնի հայ ձեռագրերից հավաքած հիշատակարանները* („Историко-литературные записки из армянских рукописей“)։ *Այս կարևոր աշխատությունը հրատարակված չէ և Հայաստանի Պետական Ձեռագրատան հիշատակարանները, որ իրենց մեջ պատմական հարուստ նյութ են պարունակում, իմ այս աշխատության մեջ չեն օգտագործված լրիվ կերպով։ Ես կարողացել եմ օգտվել միայն այն պատմական հիշատակարաններից, որոնք արդեն հրատարակված են*[1]։

## Բ. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

### 19. ԳԵՈՐԳԻՈՍ ԿԵԴՐԵՆՈՍ

*Գեորգիոս Կեդրենոսի մասին կենսագրական տեղեկություններ չունենք։ Ենթադրում են, որ նա եղել է կուսակրոն հոգևորական։ Գրել է 11-րդ դարի վերջում կամ 12-րդ դարի սկզբում ընդհանուր ժամանակագրություն, որը սկսվում է Ադամից և հասնում մինչև 1057 թիվը։ Կեդրենոսի ժամանակագրությունը բանաքաղություն է այլ և այլ երկերից։ 811 թվից սկսած նա արտագրել է բառացի 11-րդ դարի երկրորդ կեսի ժամանակագիր Սկիլիցեսի երկը։ 11-րդ դարի երկրորդ կեսի համար կարևոր աղբյուր է Հայաստանի պատմության. նրա մեջ, ինչպես վերև տեսանք, ուշագրավ տեղեկություններ են հաղորդված Բագրատունյաց թագավորության անկման մասին և մասնավորապես, թե ինչու Հովհաննես-Սմբատը համաձայնել էր տալ Անին Բյուզանդիային։*

---

*[1] Աշխատությունս տպագրության հանձնելուց առաջ լույս տեսավ Լ. Խաչիկյանի մեծ խնամքով կազմված «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ը (Երևան, 1950)։ Այս աշխատությունից ես օգտվել եմ մեծ չափով։*

*1566 թվից սկսած լույս են տեսել Կեդրենոսի բազմաթիվ հրատարակություններ, որոնցից լավագույնն է Բեկկերի հրատարակությունը՝ տե՛ս* Corpus scriptorum historiae byzantinae, ed. I. Bekker. Bonn, 1839, Bd. II.

## 20. ՔԱԼԿՈՆԴԻԼԵՍ ԼԱՈՆԻԿՈՍ

*Քալկոնդիլես Լաոնիկոսն Աթենացի էր, ապրում էր 15-րդ դարում և ժամանակակից էր Պոլսի (1453) և Տրապիզոնի կայսրության (1461) անկման։ Նա գրել է 1298—1463 թթ. պատմությունը, ուշադրության առնելով ոչ այնքան Պալեոլոգների կայսերական տոհմի, որքան Օսմանյան հզոր պետության պատմությունը։ Հայաստանի պատմության համար կարևոր են Քալկոնդիլեսի պատմության, գլխավորապես, այն մասերը, որոնք վերաբերում են պատմական անցքերին Փոքր Ասիայում և արևմտյան Հայաստանում։*

*Այս երկը հրատարակված է շատ անգամ։ Լավագույն հրատարակությունը լույս է տեսել Բոնում՝* Corpus scriptorum historiae byzantinae, recogn. I. Bekker. Bonn, 1843.

## 21. ԴՈՒԿԱՍ

*Դուկասը Փոքր Ասիայի հույներից է։ Գրել է հունական ժողովրդական լեզվով 1341—1462 թթ. ընդհանուր և Բյուզանդիայի պատմությունը։ Ապրել է երկար ժամանակ Փոկեայում և եղել է այնտեղ քարտուղար Ջենովացի իշխանավորի։ Սրա պատմությունը՝ սկսած 1649 թվից, հրատարակվել է մի քանի անգամ։ 1834 թվին վերահրատարակվել է Բոնում՝* Corpus scriptorum historiae byzantinae, rec I. Bekker, Bonn, 1834.

## 22. ՖՐԱՆՁԵՍ ԳԵՈՐԳԻՈՍ

*Ֆրանձես Գեորգիոսը ծնվել է Պոլսում 1401 թվին։ Սա քարտուղարն էր Բյուզանդիայի Մանուել Բ կայսեր (1391—1425) և վարել է նաև պետական բարձր պաշտոններ։ Պոլսի առման ժամանակ (1453 թ.) նա կորցրել է իր ամբողջ կարողությունը և գերի է ընկել թուրքերի ձեռքը։ Ազատվելով գերությունից՝ մի քանի ժամանակ ապրել է Պելոպոնեսում և ապա Իտալիայում։ Գալով այնուհետև Կորֆու՝ ձեռնադրվել է այս կղզու վանքերից մեկում աբեղա և գրել է այստեղ իր ժամանակագրությունը, որը վերջացրել է 1477 թվին և որի մեջ նկարագրված են պատմական դեպքերը 1258—1476 թվերի։*

*Ֆրանցեսի պատմությունը հրատարակված է նույնպես մի քանի անգամ։ 1838 թվին վերահրատարակվել է նույնպես Բոնում* Corpus scriptorum historiae byzantinae, ed. I. Bekker Bonn, 1838.

### 23. ՄԻՔԱՅԵԼ ՊԱՆԱՐԵՏՈՍ

*Միքայել Պանարետոսը գրել է մի կարճ ամփոփ ժամանակագրություն, որի մեջ նկարագրված են Տրապիզոնի կայսրության մեջ տեղի ունեցած պատմական անցքերը 1204—1426 թթ.։*

*Այս աշխատությունը, թեև աղքատիկ բովանդակություն ունի, բայց արժեքավոր է, որովհետև կարևոր տեղեկություններ է տալիս Տրապիզոնի կայսրության, ինչպես և նրա հարևան հայկական գավառների ու, մասնավորապես, նաև Վրաց թագավորության մասին։ Ժամանակագրության վերջում պատմական անցքերը հեղինակը արձանագրել է իբրև ականատես։ Նա ինքը տրապիզոնցի է և ապրել է 14-րդ դարի երկրորդ և 15-րդ դարի առաջին կեսում։*

*Միքայել Պանարետոսի ժամանակագրությունը հրատարակված է մի քանի անգամ։ Հունարեն բնագիրը լույս է տեսել ռուսերեն թարգմանության հետ միասին Ա. Խախանովի աշխատությամբ* (Трапезундская хроника Михаила Панарета, греческий текст с переводом, предисловием и комментариями, изд. А. Хаханов, Москва, 1905)*։ Նույնը ֆրանսերեն է թարգմանել և տպագրել Լեբոյի աշխատության նոր հրատարակության մեջ Մ. Բրոսսեն՝* Lebeau, Histoire du Bas-Empire, t. XX, Paris, 1836, 482—509։

## Գ. ԱՍՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

### 24. ՄԻՔԱՅԵԼ ԱՍՈՐԻ

*Միքայել Ասորին, որ պատրիարք էր Անտիոքի (1166—1199), ծնվել է Մելիտենեում 1126 թվին և վախճանվել է 1199 թվին։ Կիլիկիայի հայ հոգևորականությունը և, մասնավորապես, Ներսես Շնորհալին (1166—1173), բարեկամական հարաբերություններ են ունեցել ասորի այս պատրիարքի հետ և վերջինս 1198 թվին ներկա է գտնվել Լևոն Բ-ի օծման ու թագադրության հանդեսին։*

*Միքայել Ասորին գրել է ընդարձակ ժամանակագրություն Ադամից սկսած մինչև 1194/5 թիվը, որի բնագիրը և արաբական բառացի թարգմանությունը գտնվեցին միայն 19-րդ դարի վերջերում։ Իսկ մինչև այս գյուտը պատմագիտությանը ծանոթ էր*

սրա հայերեն հին թարգմանությունը, որը պահպանվել է կրկին խմբագրությամբ՝ ընդարձակ ու մի փոքր համառոտված։ Առաջինը հրատարակված է Երուսաղեմում 1870 թվին, իսկ երկրորդը՝ դարձյալ Երուսաղեմում 1871 թվին։ Ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ ժամանակագրությունը հայերեն է թարգմանված Կոստանդին Ա կաթողիկոսի խնդիրքով 1245/6 թվին։ Թարգմանիչն է Իշոխ կամ Հեսու անունով ասորի քահանան, իսկ սրան աշխատակցել է և թարգմանությունը, ըստ երևույթին, խմբագրել է, ինչպես վերը ասացինք, Վարդան վարդապետը։

Հայերեն բնագրի մի քանի հատվածները թարգմանել է ֆրանսերեն Էդ. Դյուլորիեն, իսկ ամբողջը՝ Վ. Լանգլուան (V. Langlois, Chronique de Michel le Grand, Venise, 1868)։ Ասորերեն բնագիրը հրատարակել ու թարգմանել է ֆրանսերեն՝ Շաբոն (Chronique de Michel le Syrien, texte syriaque et trad. française, par J. B. Chabot, v. I, II, III, Paris, 1900—1910).

## 25. ԱԲՈՒԼՖԱՐԱՋ ԳՐԻԳՈՐ (ԲԱՐԵԲՐԵՈՍ)

Աբուլֆարաջն ասորական ու արաբական աչքի ընկնող հեղինակներից մեկն է։ Ծնվել է Մելիտենեում 1225/6 թվին և հրեական ծագում ունեցող քրիստոնյա բժշկի որդի է։ Նա արդեն երիտասարդ հասակում ձեռնադրվել է եպիսկոպոս և երկար ժամանակ եղել է առաջնորդ Մարաղայում ու Թավրիզում, ուր կառուցել է և հիմնադրել եկեղեցիներ ու վանքեր։ Վախճանվել է Մարաղայում 1286 թվին։

Աբուլֆարաջը գրել է բազմաթիվ աստվածաբանական, իմաստաբանական, քերականական, բժշկական ու նաև բանաստեղծական երկեր։ Նրա ամենակարևոր աշխատությունն է «Ժամանակագրությունը», որը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասում պատմված է Ասորիքի քաղաքական պատմությունը, երկրորդ մասում՝ եկեղեցականը։ Առաջին մասը հրատարակել են Բրունսը և Կիրշը (P. J. Bruns et G. G. Kirsch, Bar Hebraei chronicon syriacum, 2 Bde, Leipzig, 1789), իսկ երկրորդ մասը Աբբելոսը ու Լամին (J. B. Abbeloos et Th. J. Lamy, Chronicon ecclesiasticum, 3 Bde, Löwen, 1872—7)։

Իր կյանքի վերջին ամիսներում Աբդուլֆարաջը, քաղվածքներ անելով իր ժամանակագրությունից՝ կազմել է արաբերեն լեզվով պատմական մի երկ «Դինաստիաների պատմություն» վերնագրով։ Այս երկը հրատարակել է Ե. Պոկոկը („Abulfaragii historia com-

pendiosa dynastiarum", Oxoniae, 1663)։ Թարգմանել է գերմաներեն Բաուերը (Լայպցիգ, 1783)։

## 26. ԽԱՀՅԱ ԱՆՏԻՈՔԱՑԻ

Խահյա Անտիոքացին արաբական պատմագիր է 11-րդ դարի առաջին կեսի։ Գրել է շարունակությունը Ալեքսանդրիայի Եվտիքոս պատրիարքի (+939) արաբերեն գրված ընդհանուր պատմության։ Կարևոր աղբյուր է պատմական այն անցքերի լուսաբանության համար, որ տեղի ունեցան Բազիլեյոս Բ-ի և Տայքի Դավիթ Կյուրապաղատի ժամանակ 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկզբներում (տե՛ս В. Р. Розен, Император Василий Болгаробойца, Петербург, 1883).

## 27. ԻԲՆ ԱԼ-ԱՍԻՐ

Արաբական լավագույն պատմագիրներից մեկն է։ Ծնվել է 1160 թվին և վախճանվել է 1233 թվին։ Ապրում էր Միջագետքում ու Պաղեստինում և իր ուսումը ստացել էր Մոսուլում, Երուսաղեմում և Դամասկոսում։

Իբն ալ-Ասիրը գրել է, գլխավորապես, պատմական երկեր, որոնցից կարևորագույնն է նրա ընդհանուր պատմությունը («Թարիխ-ալ-Կամիլ»)։ Վերջինս սկսվում է աշխարհի սկզբից և հասնում է մինչև 1231 թիվը։ Արաբերեն բնագիրը հրատարակված է մի քանի անգամ։ Մի շարք հատվածներ թարգմանված են ֆրանսերեն։ Արաբերեն բնագրի լավագույն հրատարակությունը Տորնբերգինն է՝ Ibn-el-Athiri Chronicon, 14 vol., ed C. J. Tornberg, Leiden, 1851—1876։ Ես օգտվել եմ Ժուզեի ռուսերեն թարգմանությունից՝ Материалы по истории Азербайджана из Тарих-ал-камиль Ибн-ал-Асира, Баку, 1940.

## 28. ԱԲՈՒԼՖԵԴԱ

Աբուլֆեդան, որը արաբական մատենագիր է, ծագում է էյուբյան իշխանական տոհմից և ծնվել է Դամասկոսում 1273 թվին։ 1310 թվին նա Եգիպտոսի սուլթան Մելիք-Նասիրի կողմից նշանակվել էր Համանի կառավարիչ, իսկ 1312 թվից սկսած մինչև իր մահը, 1331 թիվը, նա իշխում էր այդ շրջանում իբրև ինքնիշխան սուլթան։

Աբուլֆեդան ունի գրած իրավաբանական, մաթեմատիկական, տրամաբանական, բժշկական և աշխարհագրական երկեր։ Նա գրել է արաբերեն լեզվով նաև ընդարձակ մի ժամանակագրություն, որը

հասցրել է մինչև 1328 թիվը։ Ժամանակագրության հնագույն մասը 1831 թվին հրատարակել է Լայպցիգում Ֆլեյշերը («Historia anteislamica»), իսկ մյուս մասերը հրատարակել է Կոպենհագենում Ռեյսկեն („Aboulfedae Annales moslemici, vol. 1—5, 1789—1974)։ Ամբողջ այս աշխատությունը տպագրված է 1870 թվին նաև Պոլսում։

## 29. ԻԲՆ-Ի ԲԱՏՈՒՏԱ

Իբն-ի Բատուտան ծնվել է Աֆրիկայի Տանգիր քաղաքում։ 1324 թվին նա, դուրս գալով իր հայրենի քաղաքից՝ մոտ 29 տարի ճանապարհորդել է զանազան երկրներում և վերադարձել է հայրենիք 1353 թվին։ Իր այցելած երկրները նա մանրամասն նկարագրել է և նրա այդ նկարագրություններից, որ գրի են առել իր երկրացիները, պահպանվել են որոշ քաղվածքներ։

Արաբերեն բնագիրն այս երկի և ֆրանսերեն թարգմանությունը լույս են տեսել Փարիզում 1853 թվականին՝ Ibn Batoutah, Voyages texte arabe, accompagné d'une traduction par C. Détrémery et B. R. Sanguinetti, t. I—III, Paris, 1853. Նույն այս երկը դեռ 1818 թվին թարգմանվել էր լատիներեն, իսկ 1829 թվին նաև Լոնդոնում անգլերեն։ Հայաստանի վերաբերյալ մասերը թարգմանել է հայերեն Հ. Աճառյանը՝ Իբն-ի Բատուտա, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940 («Օտար աղբյուրներ հայերի մասին», № 2, արաբական աղբյուրներ)։

## 30. ԱՐԱԲՇԱՀ (ԱՀՄԵԴ-ԻԲՆ-ՄՈՀԱՄՄԵԴ)

Արաբական հեղինակ Արաբշահը ծնվել է Դամասկոսում 1389 թվին և վախճանվել Եգիպտոսում 1450 թվին։ Լանկթամուրի արշավանքի ժամանակ նա գերի էր ընկել ու տարվել էր Սամարղանդ, ուր սովորել էր թուրքերեն ու պարսկերեն լեզուները և կարդացել էր այդ լեզուներով գրված բազմաթիվ գիտական ու գրական երկեր։

Արաբշահը գրել է Լանկթամուրի ու նրա հաջորդների պատմությունը մինչև 1436 թիվը։ Արաբերեն բնագիրը այս աշխատության հրատարակված է Լեյդենում 1636 թվին (Ahmedis Arabisiadae, Vitae et rerum gestarum Timuri, qui vulgo Tamerlanes dicitur, historia. Lugduni Batavorum, 1636)։ Արաբերեն ուղղված բնագիրը լույս է տեսել Կալկաթայում 1812 և 1818 թվերին։

Ես օգտվել եմ Արաբշահի պատմության հայերեն թարգմանությունից («Պատմութիւն Լենկ-Թիմուրայ, թարգմանեաց ի տաճիկ բնագրէ Ա. վրդ. Տէր-Յովհաննիսեանց, ի միաբանական ուխտէ Սրբոց Յակովբեանց», Երուսաղեմ, 1873)։

## Դ. ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

### 31. ՔԱՐԹԼԻՍ ՑԽՈՎՐԵԲԱ

*«Քարթլիս-ցխովրեբա»-ն, այսինքն՝ «Վրաց պատմությունը», պատմական և ժամանակագրական այլ և այլ երկերի ժողովածու է, որ կազմվել ու լրացվել է հետզհետե դարերի ընթացքում։*

*Քարթլիս-ցխովրեբայի վրացերեն բնագիրը հրատարակել են Ե. Թաքայշվիլին և Մ. Բրոսսեն (Ե. Թաքայշվիլի, Քարթլիս-ցխովրեբա, Մարիամ թագուհու վարիանտը, Տփղիս, 1906.* Brosset M., Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'au XIX-e siècle, publiée en géorgien.... 2 parties. St-Pétersbourg, 1849—54)։ *Այս երկը լույս է տեսել Բրոսսեի թարգմանությամբ նաև ֆրանսերեն՝* Brosset M., Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu' au XIX-e siècle, traduite du géorgien, St-Pétersbourg, 1849—58.

*12-րդ դարում վրացական այս աղբյուրի հնագույն մասերը թարգմանվել են հայերեն։ Թարգմանությունը 1884 թվին հրատարակել է Աթ. Թիրոյանը՝ «Համառօտ պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշէրի պատմչի», Վենետիկ, 1884։ Գրքի այս վերնագիրը, ինչպես այժմ պարզված է, ճիշտ չէ։ Ջուանշեր Ջուանշերյանը հեղինակն է միմիայն գրվածքի մի մասի՝ Վախտանգ Գորգասալի պատմության։*

*Թիրոյանի հրատարակած հայերեն բնագիրը թարգմանել է ֆրանսերեն Բրոսսեն՝* M. Brosset, Chronique arménienne (Additions et éclaircissements á l'Histoire de la Géorgie, St-Pétersbourg, 1851)։ *Իսկ առաջին գլուխները թարգմանել է ռուսերեն Պատկանյանը՝* К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии. О древней грузинской хронике (Журнал Мин. Нар. Просв., 1883, декабрь. стр. 193—274).

*Ես օգտվել եմ ոչ միայն վերոհիշյալ թարգմանություններից, այլև Մելիքսեթ-Բեկի աշխատությունից՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա. և Բ., Երևան, 1934—1936։*

### 32. Բ Ա Ս Ի Լ Ի

*Բասիլին, որը, ըստ երևույթին, 13-րդ դարի հեղինակ է՝ գրել է «Թագուհիների թագուհի Թամարայի վարքը»։ Այս երկը երևան է հանել Ջավախիշվիլին 1923 թվին Քարթլիս-ցխովրեբայի ձեռագրերից մեկում (տե՛ս Ջավախիշվիլի Իվ., «Նոր հայտնաբերած Քարթ-*

լիս-ցխովրեբան ու Թամար թագուհու ցարդ անծանոթ պատմիչի երկասիրությունը»,. վրացերեն, Bulletin de l'Université de Tiflis III, 1923, էջ 186—216)։ Ռուսերեն թարգմանությունը տպագրված է Պետական Էրմիտաժի 1938 թվի ժողովածուում՝ В. Дондуа, „Басили, историк царицы Тамары“, Памятники эпохи Руставели, Ленинград, 1938, էջ 33—76։ Մի փոքր հատված հայերեն թարգմանությամբ հրատարակել է Մելիքսեթ-Բեկը (տե՛ս Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Բ., էջ 33—36)։

## 33. ԱՆԱՆՈՒՆ 13-ՐԴ ԴԱՐԻ

13-րդ դարի Անանուն այս հեղինակը տվել է «Համառոտ տեղեկություններ Վրաստանի պատմություն»-ից, որ սկսվում են Վրաց դարձից և հասնում մինչև 13-րդ դարի առաջին կեսը։ Վրացերեն բնագիրը հրատարակել է Ե. Թաքայշվիլին («Վաղեմի Վրաստան», II, Տփղիս, 1911—13)։ Մի փոքր հատված թարգմանել է հայերեն Մելիքսեթ-Բեկը «Վրաց աղբյուրները», հատ. Բ, էջ 37—39)։

## 34. ԱՆԱՆՈՒՆ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԼԱՇԱ-ԳԵՈՐԳԻԻ

Լաշա-Գեորգիի ժամանակակից այս անհայտ հեղինակի երկը գտնվում է Քարթլիս-ցխովրեբայի Աննա թագուհու ձեռագրում, որը պատկանում է Իվ. Ջավախիշվիլու անձնական գրադարանին։ Ժամանակագրական այս երկը բովանդակում է իր մեջ «Դեմետրի, Գեորգիի, Թամարի և Լաշա Գեորգիի պատմություն»-ը։ Հրատարակված է Իվ. Ջավախիշվիլու կողմից՝ Chronicon anonymum tempore regis Las'a—Georgii scriptum, edidit Joannes Djavachisvili, Monumenta Georgica, III, Historici, № 2, Տփղիս, 1927, էջ 1—23։ Մի փոքր հատված լույս է տեսել հայերեն լեզվով Մելիքսեթ-Բեկի թարգմանությամբ՝ «Վրաց աղբյուրներ», հատ. Բ., էջ 42—46։

## 35. ՓԱՐՍԱԴԱՆ ԳՈՐԳԻՋԱՆԻՁԵ

Փարսադան Գորգիջանիձեն, որը, ըստ երևույթին, Գորեցի հայ էր՝ գրել է 17-րդ դարում վրացերեն լեզվով «Վրաստանի պատմություն»։ Այս երկը դեռևս ամբողջությամբ հրատարակված չէ։ Ես օգտվել եմ քաղվածքների հայերեն թարգմանությունից, որ մեջ են բերված Մելիքսեթ-Բեկի աշխատության մեջ՝ «Վրաց աղբյուրներ», հատ. Բ., էջ 107—109։

### 36. ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ 17—18-ՐԴ ԴԱՐԵՐԻ

*«Քարթլիս-ցխովրեբա»-յի անանուն այս հեղինակների չորս շարունակությունների մեջ համառոտ կերպով հիշատակված են Վրաստանում տեղի ունեցած պատմական անցքերը 13-րդ դարից մինչև 17-րդ դարը։ Ես օգտվել եմ համառոտ քաղվածքներից, որ թարգմանել է հայերեն Մելիքսեթ-Բեկը՝ «Վրաց աղբյուրներ», հատ. Բ., էջ 131—144։*

## Ե. ՊԱՐՍԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

### 37. ՋՈՒՎԵՅՆԻ ԱԼԱԵԴԴԻՆ ԱՏԱՄԵԼԻՔ

*Ալաեդդին Ատամելիք Ջուվեյնին ծնվել է 1226 թվին Խորասանի Ջուվեյն գավառում և արդեն իր երիտասարդ հասակում ծառայության մեջ է եղել մոնղոլների մոտ։ 1259 թվին Հուլավու խանի կողմից նշանակվել է Բաղդադի, Իրաքի ու Խուժաստանի կառավարիչ և այդ պաշտոնը վարել է մինչև իր մահը 1283 թիվը։*

*Սա ներկայացուցիչ է մոնղոլներին սպասարկող ներբողական պատմագրության և 1252/3—60 թվականներին գրել է Չինգիզ խանի ու նրա հաջորդների պատմությունը մինչև 1257 թիվը։ Այս երկի վերնագիրն է «Պատմություն աշխարհի նվաճողի» (Տարիխ-ի-Ջեհանգուշա)։ Ջուվեյնին գրի է առել իրենց մոնղոլների հաղորդած տեղեկությունները և օգտվել է նույնպես պաշտոնական փաստաթղթերից։*

*Ջուվեյնիի աշխատությունը հրատարակել է պարսիկ գիտնական Միրզա Մուհամմեդ Ղազվինին անգլիական արևելագետ Գիբբի հիշատակին նվիրված հրատարակությունների մատենաշարում* (Gibb Memorial Series, vol. XVI, I—III, Leyden and London, 1912, *1916, 1937)։ Թարգմանված են միայն առանձին գլուխները։ Ես օգտվել եմ միմիայն այն քաղվածքներից, որ մեջ են բերված Տիզենհաուզենի ժողովածուի մեջ* (В. Г. Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, II, Москва—Ленинград, 1941, էջ 20—21)։

### 38. ՌԱՇԻԴԵԴԴԻՆ

*Ռաշիդեդդինը, որը ծագումով Ադրբեջանի հրեա էր, ծնվել է 1245 թվին։ Սկզբում նա վարել է բժշկի պաշտոն, բայց սկսած 1298 թվից մինչև 1316 թիվը նա եղել է վեզիր և մոնղոլական պետության վարչապետ։ 1317 թվին, Աբու-Սեյիդի ժամանակ, նա հեռացվել է պաշտոնից, մեղսակից է համարվել Ուլջեյտուի թունավորման և 1318 թվին ենթարկվել է մահապատժի։*

*Ռաշիդեդդինի գլխավոր աշխատությունն է «Ժամանակագրությունների ժողովածու»-ն, որը նա սկսել էր գրել Ղազան խանի կարգադրությամբ 1300/1 թվին և վերջացրել Ուլջեյտուի ժամանակ 1310/11 թ.։*

*Այս ժողովածուն անզուգական մի փորձ էր ի մի հավաքելու բոլոր ժողովուրդների պատմության վերաբերող կարևոր տեղեկությունները աշխատակցությամբ այդ ժողովածուների առանձին ներկայացուցիչների։ Ռաշիդեդդինը, ըստ երևույթին, եղել է այս հսկայական գործի խմբագրողը և ղեկավարը։*

*«Ժամանակագրությունների ժողովածու»-ն բաղկացած է երկու մասից՝ մոնղոլների պատմությունից, որն ընդգրկում է իր մեջ, մասնավորապես, նաև Հուլավյանների պատմությունը մինչև Ղազան խանի (1295—1304) մահը, և ընդհանուր պատմությունից։ Առաջին մասի աղբյուր են ծառայել, գլխավորապես, մոնղոլական ազնվականների բանավոր հիշողությունները և մասամբ նաև մոնղոլական «Ոսկյա Գիրքը»* (Altan depter)*, որը պահվում էր խանական գանձատնում և որը մեր ձեռքը չի հասել։*

*Ռաշիդեդդինի այս մեծ աշխատության պարսկերեն բնագիրը և ռուսերեն թարգմանությունը շուտով լույս են տեսնելու Մոսկվայում՝ արևելագիտության ինստիտուտի հրատարակությամբ։*
*Նախորդ հրատարակություններից կարևոր են հետևյալները՝*

1. И. Н. Березин, Сборник летописей. История Монголов, сочинение Рашид-Эддина. Введение и история Чингизхана, с русским переводом (Труды Восточного отделения Русского археол. общ., тт. V, VII, XIII и XV, СПб. 1858—1888).

2. Blochet E., Djami el Tévarikh, par Rachid-ed-Din, t. II, „Gibb Memorial Series", vol. XVIII, 2, 1911.

3. Quatrmère E., Histoire des Mongols de la Parse, par Rachid-Eddin, Collection orientale, t. I, Paris, 1836 *(տպագրված է և ֆրանսերեն թարգմանությունը)։*

4. Jahn Karl, Geschichte Gāzān Chān's, London, 1940 („Gibb Memorial Series", N. S. XIV)։ *Քաղվածքներ ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել Տիզենհաուզենի ժողովածուի մեջ՝* Сборник материалов. II, 29—79.[1]

---

[1] *Նորերս լույս է տեսել Ռաշիդեդդինի «Ժամանակագրությունների ժողովածուի» երրորդ հատորը ռուսերեն թարգմանությամբ՝* *Рашид ад-дин*, Сборник летописей, т. III, перевод Арендса, М.—Л., 1946.

## 39. ՎԱՍՍԱՖ

*Վասսաֆը, ևս, ինչպես Ջուվեյնին ու Ռաշիդեդդինը, Հուլավյան տոհմի խաների պալատական պատմագիրներից է։ Նրան աղբյուր են ծառայել Ջուվեյնիի ու Ռաշիդեդդինի երկերը, բայց օգտվել է, բացի այդ, նաև բանավոր ավանդություններից և ականատեսների տված տեղեկություններից։*

*Վասսաֆի պատմությունը լրիվ տպագրված է (վիմատիպ) Բոմբեյում 1853 թվին։ Առաջին մասը հրատարակել ու թարգմանել է գերմաներեն Համմեր-Պուրգշտալը՝* „Geschichte Wassaf's persisch herausgegeben und deutsch übersetzt von Hammer-Purgstall", Wien, 1856։

*Քաղվածքներ ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել Տիզենհաուզենի ժողովածուում՝* Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, II, *էջ* 80—90։

## 40. ՀԱՄԴԱԼԼԱՀ ՂԱԶՎԻՆԻ

*Համդալլահ Ղազվինին ծնվել է 1281/2 թվին։ Նա ծանոթ էր Ռաշիդեդդինին և վերջինիս կողմից նշանակված էր ֆինանսների կառավարիչ Ղազվին քաղաքի և հարևան շրջանների։ Սա գրել է ընդհանուր պատմություն, որի վերնագիրն է* „Tarich-i Guzida" *(«Ընտիր պատմություն») և որը պարունակում է իր մեջ, մասնավորապես, և մոնղոլների պատմությունը մինչև 1329 թիվը։*

*Հետագայում Ղազվինին գրել է 1334—1344 թթ. ժամանակաշրջանի պատմությունը, իսկ նրա որդին Զեյնեդդինը կազմել է նաև շարունակությունը, որն ընդգրկում է հյուսիս-արևմտյան Իրանում տեղի ունեցած պատմական անցքերի նկարագրությունը, սկսած 1341 թվից մինչև 1392 թիվը։*

*Բացի իր պատմությունից Ղազվինին գրել է նույնպես պատմական-աշխարհագրական մի երկ, որի վերնագիրն է* Muzhat-al qulub *(«Սրտերի վայելք») և որի մեջ նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում, ի միջի այլոց, առևտրական ճանապարհների, ինչպես և Պարսկաստանի և Անդրկովկասի քաղաքների ու առանձին շրջանների հարկերի մասին, մոնղոլների ու սելջուկների ժամանակ։*

*Կարևոր ամբողջական հրատարակություններն են՝* 1. Tarich-i Guzida....of Hamdu'llah Mustawfi-i-Qazwini....reproduced in facsimile....with an introduction by Edward G. Browne, Leyden—London, 1910—1913 („Gibb Memorial Series", vol. XIV, I,

Engl. translation, vol. XIV, 2); 2. Nuzhat-al-qulub, ed. by G. Le Strange, „Gibb Memorial Series“, vol. XXIII, I pers. text, vol. XXIII, 2, Engl. translation։ Մի շարք քաղվածքներ ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսել Տիզենհաուզենի ժողովածուի երկրորդ հատորի մեջ՝ Тизенгаузен В. Г., Сборник материалов, II, էջ 91—98։ Ես օգտվել եմ միայն այս քաղվածքներից։

### 41. ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿ 14-ՐԴ ԴԱՐԻ

14-րդ դարի Անանուն մի հեղինակ գրել է ընդհանուր պատմություն, որը սկսվում է աշխարհի ստեղծումից և հասնում մինչև Ջելաիրյան շեյխ Ուվեյսը (1356—1374), որին այդ աշխատությունը նվիրված է։ Պարսկերեն բնագիրը դեռևս հրատարակված չէ։ Ես օգտվել եմ Տիզենհաուզենի ժողովածուի մեջ տպագրված քաղվածքներից՝ Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 99—103։

### 42. ՆԻԶԱՄԵԴԴԻՆ ՇԱՄԻ

Նիզամեդդին Շամին ծնվել է Թավրիզի արվարձան Շամում և 1392/3 թվին ապրում էր Բաղդադում։ Այս քաղաքի գրավումից հետո՝ Լանկթամուրը հանձնարարել էր նրան գրել իր արշավանքների ու աշխարհակալության պատմությունը։ Ըստ այդ հանձնարարության նա գրել է իր հայտնի Zafarnāma («Հաղթությունների գիրքը») աշխատությունը, որը առաջին ընդարձակ նկարագրությունն է Լանկթամուրի ժամանակաշրջանի պատմության։

Նիզամեդդինի այս երկի պարսկերեն բնագիրը ամբողջությամբ լույս է տեսել 1937 թվին՝ Histoire des conquêtes de Tamerlan intitulée Zafarnāma par Nizāmmuddīn Sāmī....Edition critique par Felix Tauer, Tome I. Texte persan du Zafarnāma, Praha, 1937 (Monographie Archivu orientálního, vol. V)։ Ես օգտվել եմ Նիզամեդդինի պատմության ռուսերեն քաղվածքներից, որոնք մեջ են բերված Տիզենհաուզենի ժողովածուի մեջ՝ Тизенгаузен, Сборник материалов, II, էջ 105—125։

### 43. ՇԵՐԵՖԵԴԴԻՆ ԵԶԴԻ

Պալատական գովերգող պատմագիրներ ունեցել են, ինչպես տեսանք, ոչ միայն իլխանները, այլև Լանկթամուրը և նրա հաջորդները։ Նման պատմագիրներից է, բացի Նիզամեդդինից, նաև Շերեֆեդդին Ալի Եզդին։ Սա ծնվել է Ֆարսիստանի Եզդ քաղա-

*քում և 15-րդ դարի առաջին քառորդի վերջերում գրել է նույնպես «Հաղթությունների գիրք» (Zafarnāma) Շահռուխի որդի Իբրահիմ սուլթանի հանձնարարությամբ։ Շերեֆեդդինը պատկանում է այն պատմագիրների շարքին, որոնք վայելում էին Շահռուխի ու նրա ընտանիքի հովանավորությունը։ 1419—1427 թ թվերին Իբրահիմ սուլթանը Շերեֆեդդինի հետ կազմել են* Zafarnāma-*ի ներածությունը։ «Հաղթությունների գիրք»-ը (առանց ներածության) հրատարակված է Կալկուտայում 1885—1888 թվերին։ Թարգմանված է ֆրանսերեն, անգլերեն և իտալերեն։ Ես օգտվել եմ ռուսերեն քաղվածքներից, որ լույս են տեսել Տիզենհաուզենի ժողովածուի մեջ՝* Сборник материалов, II, 144—189.

### 44. ԱԲԴ-ԱՐ-ՌԱԶԱՂ ՍԱՄԱՐՂԱՆԴԻ

*Քեմալեդդին Աբդարրազաղ Սամարղանդին ծնվել է Հերատում 1413 թվին և մեռել 1482 թվին։ Սա ևս պալատական պատմագիր է Շահռուխի ու Աբու-Սեյիդի (1452—1469) ժամանակաշրջանի և սրանց մոտ վարել է բարձր պաշտոններ ու եղել դիպլոմատիկական գործակալ ու դեսպան Հնդկաստանում ու այլ երկրներում։ Աբդարրազաղի պատմական երկը, որ բաժանված է երկու մասի, շարունակությունն է Ռաշիդեդդինի պատմության և բովանդակում է իր մեջ պատմական անցքերի նկարագրությունը՝ 1304 թվից սկսած մինչև 1471 թվականը։ Նա իր աշխատությունը սկսել է գրել 1467 թվին և վերջացրել է մի քանի տարուց հետո։ Աբդարրազաղի պատմության վերջին մասը, որը նա գրել է ինքը իբրև ժամանակակից ու ականատես՝ ամենակարևոր սկզբնաղբյուրներից մեկն է Լանկթամուրի հաջորդների պատմության։*

*Այս կարևոր երկի պարսկերեն բնագիրը դեռևս ամբողջությամբ չէ հրատարակված։ Տպագրված են պարսկերեն լեզվով միայն քաղվածքներ, նմանապես և բազմաթիվ քաղվածքներ ֆրանսերեն, անգլերեն ու հոլանդերեն թարգմանությամբ։ Ես օգտվել եմ ռուսերեն քաղվածքներից, որ լույս են տեսել Տիզենհաուզենի ժողովածուի մեջ՝* Сборник материалов, II, *էջ* 190—201։

### 45. ՇԵՐԵՖ ԿԱՄ ՇԵՐԵՖ-ԽԱՆ

*Շերեֆ կամ Շերեֆ-խան պատմիչը ծնվել է 1542 թվին և մոտավորապես 1597 թվին գրել է քրդերի պատմությունը, որի՝ վերնագիրն է «Շերեֆնամա»։ Այս պատմության պարսկերեն բնագիրը հրատարակել է Ս.-Պետերբուրգում Վելյամինով-Զերնովը (2 հատ.,*

*1860—1862), իսկ Շարմուան թարգմանել է ֆրանսերեն՝* Charmoy Fr. Bern., Chèref-Nâmeh ou fastes de la nation Kourde, par Chèref-ou'ddîne, prince de Bidlîs, dans l'Jîâlèt d'Arzeroûme. Traduits du persan et commentès par.... 2 tomes, St. Pétersbourg, 1868—1875։

## Զ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

### 46. ՆԵՇՐԻ ԲՐՈՒՍԱՑԻ

*Նեշրի Մուհամմեդ Բրուսացին 15-րդ դարի վերջերում գրել է ժամանակագրական մի երկ, որի վերնագիրն է «Աշխարհի հայելի»։ Այս ժամանակագրությունը սկսվում է աշխարհի ստեղծումից և հասնում մինչև 1485 թիվը։ Նեշրին իր երկի մեջ տալիս է տեղեկություններ օսմանցի թուրքերի ծագման և Օսմանյան պետության սկզբնավորության մասին։*

*Քաղվածքներ Նեշրիի երկից հրատարակել և թարգմանել է գերմաներեն Թ. Նյոլդեքեն՝* Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft *հանդեսում (հատ.* XIII *և* XV, Leipzig, 1859 *և* 1861)։

## Է. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐ

### 47. ՌՈՒԲՐՈՒՔ ՈՒԻԼՅԱՄ

*Ուիլյամ Ռուբրուքը, որը ծնվել էր Ֆլանդրիայի Ռուբրուք գյուղում (Ս.-Օմեր քաղաքի մոտ), ֆրանչիսկյան միաբանության կրոնավոր էր։ 1253 թվին Ֆրանսիայի Լուդովիկոս Թ թագավորը նրան ուղարկեց հատուկ հանձնարարությամբ Մանգու խանի մոտ։ 1253 թվի մայիս ամսին Ռուբրուքը մեկնեց Կոստանդնուպոլսից և այժմյան հարավային Ռուսաստանի վրայով ճանապարհվեց դեպի Մոնղոլիա և հասավ Ղարաղորում 1253 թվի դեկտեմբերի 27-ին։ Մանգու խանի մոտ նա մնաց Ղարաղորումում մինչև 1254 թվի հուլիսի 10-ը և ապա վերադարձավ Սարայ ու այնտեղից Դերբենդի վրայով եկավ Նախիջևան և այստեղից Էրզրումի ու Երզնկայի վրայով գնաց Կիլիկիա, Կիպրոս և Անտիոք (1255 թվի օգոստոսին)։*

*Ռուբրուքը իր Ուղեգրության մեջ ուշագրավ տեղեկություններ է տալիս Արևելքի ու Անդրկովկասի ժողովուրդների մասին և կարևորագույն աղբյուր է այս ժամանակաշրջանի պատմության։ Այս երկասիրությունը հրատարակված է շատ անգամ և թարգմանված է անգլիերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով։*

Ես օգտվել եմ ռուսերեն թարգմանությունից և Հայաստանի վերաբերյալ մասերի հայերեն թարգմանված քաղվածքներից. 1. Малеин А., История монголов Иоанна де Плано Карпини и путешествие в восточные страны Вильгельма де Рубрука. С.-Петербург, 1911. 2. Ուղեգրություններ, հատ. Ա., Երևան, 1932, էջ 1—35։

### 48. ՄԱՐԿՈ ՊՈԼՈ

Վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն, որը ծնվել է տասներեքերորդ դարի կեսերին և մեռել է 1324/5 թվին, առաջին եվրոպացին է, որ իր հայրենակիցներին մանրամասն տեղեկություններ է հաղորդել Հեռավոր Արևելքի մասին։ Մարկո Պոլոյի հայրը Նիկոլա Պոլոն և հորեղբայրը՝ Մաֆեո Պոլոն վենետիկցի վաճառականներ էին Կոստանդնուպոլսում և մեծ առևտուր ունեին արևելյան երկրներում։ Սրանք մինչևիսկ եղել էին Չինաստանում մեծ խան Խուբիլայի մոտ, որը նրանց հանձնարարություն էր տվել բանակցելու պապի հետ և խնդրել, որ վերջինս ուղարկե իրեն մոտ միսիոներներ։

1271 թվին Նիկոլա և Մաֆեո Պոլոները երկրորդ անգամ եկան Չինաստան, վերցնելով իրենց հետ պատանի Մարկո Պոլոյին, որը շուտով տիրապետեց այստեղ մոնղոլական լեզվին և, ձեռք բերելով Խուբիլայի վստահությունը՝ դառավ արքունի պաշտոնյա։ Երիտասարդ Մարկոն ուղարկվում էր հաճախ որոշ հանձնարարություններով պետության զանազան շրջանները, ուստի և նա կարողացավ մոտ ծանոթանալ Հեռավոր Արևելքի երկրներին։ Թույլտվություն ստանալով Խուբիլայից ուղևորվելու Արևմուտք՝ երեք Պոլոները վերադարձան Վենետիկ միայն 1295 թվին մոտ 25 տարվա բացակայությունից հետո։

1298 թվին Մարկո Պոլոն, մասնակից լինելով իբրև սպա ծովային կռիվներին Ջենովացիների դեմ՝ գերի ընկավ սրանց ձեռքը, բայց շուտով ազատվեց։ Նրա գերության ժամանակ Ջենովայում, 1298—9 թվերին, գրի է առնված հին ֆրանսերեն լեզվով սրա ճանապարհորդության նկարագրությունը, որը կարևորագույն աղբյուր է Արևելքի պատմության ու աշխարհագրության։

Մարկո Պոլոյի ուղեգրությունը թարգմանված է բազմաթիվ լեզուներով 15-րդ դարից սկսած։ Ուղեգրության Հայաստանին վերաբերող մասերը լույս են տեսել հայերեն թարգմանությամբ 1932 թվին՝ Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932, էջ 36—64։

*Բացի այս երկից, օգտվել եմ նաև Մինաևի ռուսերեն թարգմանությունից՝* Минаев И. П., Путешествие Марко Поло, перевод старо-французского текста, изд. Русск. Геогр. Общества, под редакцией В. В. Бартольда, Записки Русск. Геогр. Общ. по отд. этногр., т. XXVI, СПб., 1902.

## 49. ԿԼԱՎԻԽՈ

*Ռույ Գոնզալես դե Կլավիխոն Կաստիլիայի ազնվականներից է և ծնվել է Մադրիդում։ 1403 թվին Կաստիլիայի Հենրիխ Գ թագավորը ուղարկեց Կլավիխոյին երկու այլ դեսպանների հետ Լանկթամուրի մոտ և սրանք, մեկնելով մայիսի 21-ին Կադիքսից՝ 1404 թվի սեպտեմբերի 8-ին ժամանեցին Սամարղանդ։ Այս դեսպանության նպատակն էր ծանոթանալ քաղաքական անցուդարձին Արևելքում և հաստատել օսմանցիներին ջախջախող աշխարհակալի հետ սերտ հարաբերություններ։*

*Մոտ երեք տարի տևող այս ճանապարհորդության ժամանակ Կլավիխոն մանրամասն գրի էր առել այն ամենը, ինչ որ տեսել ու լսել էր՝ իր կարևոր ու հետաքրքիր օրագրում։ Առաջին անգամ տպագրված է այս օրագիրը 1582 թվին Սեվիլիայում։ Լույս են տեսել թարգմանություններ զանազան լեզուներով։ Սպաներեն բնագիրը 1881 թվին վերահրատարակել և թարգմանել է ռուսերեն Ի. Սրեզնևսկին՝* И. И. Срезневский, Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403—1406 гг., подлинный текст с переводом и примечаниями (Сборник Отделения русск. яз. и словесности Академии наук, т. XXVIII, № 1, СПб., 1881)։

## 50. ԿԱՏԱՐԻՆՈ ԶԵՆՈ

*Կատարինո Զենոն Վենետիկի բարձր ազնվական դասից էր և 1471 թվին Վենետիկի հանրապետության կողմից ուղարկված էր իբրև դեսպան Աղ-Ղոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանի մոտ։ Զենոն ամուսնացած էր Տրապիզոնի Կալոյոաննես կայսեր Վիոլենտա թոռի հետ, ուստի և մոտ բարեկամ էր Ուզուն Հասանի Դեսպինա կնոջ։ 1474 թվին նա վերադարձավ Թավրիզից Վենետիկ և ներկայացրեց ծերակույտին իր զեկուցագիրը։ Սրա ուղեգրությունը կազմել է Ռամուզիոն Վենետիկի կառավարությանը նրա ուղարկած նամակներից* (Ramusio, Secondo volume delle navigationi e viaggi, Venezia, 1550—1559)։ *Անգլերեն թարգմանությունը*

*հրատարակել է անգլիական* Hakluyt *ընկերությունը 1873 թվին* „Travels of Venetians in Persia" *ժողովածուի մեջ։ Ես օգտվել եմ հայերեն թարգմանված քաղվածքներից, որ լույս են տեսել Երևանում (տե՛ս Ուղեգրություններ, հատ. Ա., էջ 153—174)։*

## 51. ԲԱՐԲԱՐՈ

*Ջոզեֆա Բարբարոն, ինչպես և Կատարինո Ջենոն, Վենետիկի բարձր ազնվական դասից էր և միաժամանակ խոշոր առևտրական։ Նա ապրել է երկար ժամանակ Տանա-Ազովում, որը նրա ժամանակ Վենետիկի մեծ առևտրի գլխավոր բազաներից մեկն էր Սևծովյան մարզում։ Այստեղից կատարել է նա հեռավոր ճանապարհորդություններ առևտրական նպատակներով։ Լինելով Ուզուն Հասանի դաշնակիցը՝ Վենետիկը նրան ևս ուղարկել էր 1471 թվին իբրև դեսպան վերջինիս մոտ։ Պարսկաստանից Բարբարոն վերադարձել է Վենետիկ 1479 թվին։ Սրա ուղեգրությունը հրատարակված է շատ անգամ և թարգմանված է զանազան լեզուներով։ Ես օգտվել եմ հայերեն թարգմանված քաղվածքներից, որ լույս են տեսել Երևանում (Ուղեգրություններ, հատ. Ա., էջ 175—214)։*

## 52. ԿՈՆՏԱՐԻՆԻ

*Ամբրոսիո Կոնտարինին դիպլոմատ էր, Վենետիկի բարձր ազնվական դասից և խոշոր առևտրական էր։ Բարբարոյից մի փոքր հետո, 1473 թվին, սա ևս Վենետիկի ծերակույտի կողմից ընտրվեց Պարսկաստանի դեսպան և ուղարկվեց Ուզուն Հասանի աթոռանիստ կենտրոնը։ Նա Թավրիզ ժամանեց 1474 թվի օգոստոսի 4-ին, մնաց Պարսկաստանում ավելի քան մեկ տարի և վերադարձավ Աստրախանի, Մոսկվայի ու Լեհաստանի վրայով հայրենիք 1476/7 թվերին։*

*Կոնտարինիի ուղեգրությունը հրատարակված է մի քանի անգամ և թարգմանված է զանազան լեզուներով։ Ես օգտվել եմ միմիայն այն քաղվածքներից, որոնք հայերեն թարգմանությամբ լույս են տեսել Երևանում (տե՛ս Ուղեգրություններ, հատ. Ա., էջ 215—254)։*

## 53. ԱՆՋԻՈԼԵԼԼՈ

*Անջիոլելլոն, որը վենետիկցի էր, պալատական ստրուկն էր սուլթան Մուհամմեդ Բ-ի որդի Մուստաֆայի (+ 1474) և ապա նաև իրեն Մուհամմեդ Բ-ի ու վերջինիս հաջորդների։ Անջիոլելլոն*

*ականատես էր Դերջանի դաշտում տեղի ունեցած մեծ ճակատամարտին, ուր 1473 թվին պարտություն էր մատնվել Ուզուն Հասանը։ 16-րդ դարի առաջին կեսում նա, վերադառնալով հայրենիք՝ խմբագրել է իր հուշերը Ուզուն Հասանի ու սրա ժամանակաշրջանի պատմական անցքերի մասին։ Անջիոլելլոյի երկը տպագրված է Ռամուզիոյի վերոհիշյալ հրատարակության մեջ՝* Secondo volu-*լ*
me delle navigationi e viaggi, Venezia, 1550—1559։ *Ես օգտվե*
*եմ հայերեն թարգմանված քաղվածքներից (Ուղեգրություններ, հատ. Ա, էջ 255—288)։*

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Ալիշան Ղևոնդ, *Հայապատում, Վենետիկ, 1901։*

*Brosset M.*, Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX-e siécle, traduite du géorgien, ...6 livraisons, St.-Pétersbourg, 1849—1858.

*Gelzer H.*, Abriss der bysantinischen Kaisergeschichte, *տե՛ս* K. Krumbacher, Geschichte der byzantinischen Litteratur, Zweite Auflage, München. 1897, էջ 911—1067.

*(Նույնը թարգմանված է հայերեն՝ Գելցեր Հ., «Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության», գերմաներենից թարգմանեց Մեսրոպ վարդ. Տեր-Մովսեսյան, Վաղարշապատ, 1901)։*

*Lebeau*, Histoire du Bas-Empire, nouvelle édition, revue entièrement corrigée et augmentée d'aprés les historiens orientaux, par M. de Saint-Martin, et continuée par M. Brosset, 21 vol., Paris, 1824—1836.

*Hertzberg G. F.*, Geschichte der Byzantiner und des osmanischen Reiches bis gegen Ende des 16. Jahrhunderts, Berlin, 1883 (in der von Oncken herausgegebenen allgemeinen Geschichte in Einzeldarstellungen, II, 7, Teil).

*Horn Paul*, Geschichte Irans in islamitischer Zeit (Grundriss der Iranischen Philologie, II Band, 5 Lief, Strassburg, 1903, էջ 551—604).

*Malcolm J.*, Geschichte Persiens. Aus dem Englischen von. Dr. G. W. Becker, erster und zweiter Band, Leipzig, 1830.

*Марр Н. Я.*, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915.

Մելիքսեթ-Բեկ *Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Երևան, 1934 և հատոր Բ, Երևան, 1936։*

*Мюллер А.*, История ислама, перевод с немецкого под ред. Н. А. Медникова, том III, СПб. 1896.

*Morgan Jacques*, Histoire du peuple arménien, depuis les temps les plus reculés de ses annales jusqu' à nos jours, Nancy-Paris-Strasbourg, 1919.

Շահնազարյանց *Կարապետ վարդ., «Ծրագիր պատմութիւն Հայաստան աշխարհին և տեսութիւն Հին Հայաստանի...», Տփղիս, 1863։*

Չամչյանց Միքայել *վարդ., «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784», հատոր Բ, Վենետիկ, 1785 և հատոր Գ, Վենետիկ, 1786։*

Պալասանյան Ստեփ., *Պատմություն Հայոց սկզբից մինչև մեր օրերը, երկ-տպագր., Թիֆլիս, 1895.*

*Tournebize Fr.*, Histoire politique et religieuse de l'Arménie, depuis les origines des arméniens jusqu'à la mort de leur dernier roi (l'an 1393). Paris, 1900.

## *Բ. ԱՅԼԵՎԱՅԼ ԵՐԿԵՐ*

Ալիշան, *Այրարատ, Վենետիկ, 1890։*

Նույնի, *Շիրակ. Վենետիկ, 1881։*

Նույնի, *Սիսական, Վենետիկ, 1893։*

Նույնի, *Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855։*

Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926—1935։*

Բարխուդարյանց Մակար *եպ., Արցախ, Բագու, 1895։*

Նույնի, *Պատմություն Աղվանից, հատ. Ա., Վաղարշապատ, 1902.*

*Бартольд В. В.*, Историко-географический обзор Ирана, С-Петербург, 1903.

*Նույնի,* История изучения Востока в Европе и в России, С-Петербург, 1911.

*Նույնի,* Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925.

*Бердзенишвили Н.,* Очерки из истории феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.). Тбилиси, 1938.

*Dulaurier Ed.*, Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859.

*Лен-Пуль Стэнли,* Мусульманские династии, хронологические и генеалогические таблицы. Перевод В. Бартольда, С.-Петербург, 1899.

Կարապետ *եպիսկոպոս, Նյութեր հայ մելիքության մասին, Բ. պրակ. Դոփյանք և Մելիք-Շահնազարյանք, Ս.—Էջմիածին, 1914։*

Կոստանյանց Կ., *Վիմական տարեգիր, Ս. Պետերբ., 1913.*

*Krumbacher K.*, Geschichte der byzantinischen Litteratur, zw. Aufl., München, 1897.

Հովսեփյան Գարեգին *արքեպ., Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928։*

Մանանդյան Հ. *և* Աճառյան Հր., *Հայոց նոր վկաները, գիտական հրատարակություն, Վաղարշապատ, 1903.*

Մանանդյան Հ., *Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934։*

*Նույնի, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները. Երևան, 1936։*

*Марр Н. Я.*, Ани, книжная история города и раскопки на месте городища, Л.—М., 1934.

*Minorsky V.*, Hudūd al'Alam, „The regions of the World", a Persian Geography, London, 1937.

*Saint-Martin M. J.*, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I—II, Paris, 1818—1819.

*Тизенгаузен В. Г.*, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, М.—Л., 1941.

## ԳԼՈՒԽՆԵՐ Ա—Դ

Ա. Հայաստանի քաղաքական կացությունը սելջուկյան արշավանքներից առաջ։— Բ. Սելջուկյան թուրքերի արշավանքները և հարավային ու արևմտյան Հայաստանի շրջանների ավերումը։— Գ. Ալփասլանի ու Մելիքշահի նոր արշավանքները և Բյուզանդիայի վտարումը Փոքր Ասիայից։— Դ. Հայաստանը Սելջուկյան աշխարհակալության անկման ժամանակ։

### *ԱՂԲՅՈՒՐՆԵՐ*


Արիստակես Լաստիվերտցի. *Մատթեոս Ուռհայեցի. Սամուել Անեցի. Վարդան վարդապետ. Մխիթար Այրիվանեցի. Ստեփանոս Օրբելյան (պատմություն և ժամանակագրություն). Հայոց նոր վկաները. Կեդրենոս. Միքայել Ասորի. Եահյա Անտիոքացի. Քարթլիս-ցխովրեբա.—(տե՛ս վերև №№ 1, 2, 4, 5, 9, 10, 16, 19, 24, 26 և 31)։*

Ատտալիատես Միխայել, *Պատմություն (1034—1079)* Corpus scriptorum historiae byzantinae, recogn. L. Bekker, Bonnae, 1853.

Թովմա Արծրունի, *«Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917.*

*Ибн-ал-Асир*, Тарих-ал-Камиль, Баку, 1940.

*Georgii Monachi*, Dicti Hamartoli, Chronicon, ed. Edouard de Muralt, Petrop., 1859.

Կոստանյանց Կ., *Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910.*

«Ջուանշէրի պատմչի *Համառօտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1884.*

«Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան, *Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885։*


### *ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*


Ակինյան Հ. Ն., *«Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ», Վիեննա, 1920, Ազգ. մատենադ. ՁՁ։*

*Akulian A.*, Einverleibung armenischer Territorien durch Byzanz im XI. Jahrhundert, Grüningen, 1912.

*Anastasievic D. N.*, Die Zahl der Araberzüge des Tzimiskes, Byz. Zeit. Bd. XXX, Berlin 1929/30, էջ 400—405.

*Gelzer H.*, Ausgewählte kleine Schriften, Leipzig, 1907.

*Грен А.*, Династия Багратидов в Армении, Журн. Мин. Нар. Просв., 1893, ноябрь, *էջ 52—139։*

Երզնկյան Դ. Ք., *Կայան բերդ և Կայենոյ ձոր, Ազգ. Հանդ, 1898, № 1, էջ 316—328։*

Կեկելիձե Կ., *Երկու Եփիմիոս Վրաց հին գրականության մեջ (վրացերեն), «Զվենի մեցնիերեբա», № 2—3, 1923.*

*Крымский А.*, История Персии, ее литературы и дервишской теософии, т. I, № 2, М., 1914.

Մանանդյան Հ., *Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան 1940։*

*Markwart J.*, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

*Նույնի,* Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien. Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien, 1928.

*Minorsky V.*, La domination des Dailamites. Publications de la Société des études iraniénnes, № 3, Paris, 1932.

*Пахомов Е. А.*, Арабские и прикаспийско-иранские феодалы в Азербайджане X—XI вв., Сборник памяти акад. Н. Я. Марра, М.—Л., 1938, *էջ 416—428։*

*Джавахишвили И. А.*, История грузинского народа, II, перевод М. Хубуа (на правах рукописи).

*Розен В. Р.*, Император Василий Болгаробойца, СПб., 1883. (Записки Ак. наук, прилож. к т. XLIV, № 1, 1883).

*Finlay George*, A History of Greece. Oxford, 1877.

Տաշյան Հ., *«Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895։*

*Орбели И.*, Надписи Мармашена, Петроград, 1914.

## ԳԼՈՒԽՆԵՐ Ե—Թ

Ե. Վրաստանի հզորացումը և նրա տիրապետության ծավալումը մինչև Անի։— Զ. Վրաստանի հզորացումը Գեորգի Դ-ի ժամանակ։— Է. Հայաստանի վերականգնումը Զաքարյանների իշխանության ներքո։— Ը. Հայկական իշխանությունները վերանվաճված Հայաստանում։— Թ. Հայաստանի ներքին կացությունը Զաքարյանների տիրապետության ժամանակ։

### *ԱՂԲՅՈՒՐՆԵՐ*

Մատթեոս Ուռհայեցի. *Մխիթար Գոշ. Սամուել Անեցի. Վարդան վարդապետ. Կիրակոս Գանձակեցի. Մխիթար Այրիվանեցի. Ստեփանոս Օրբելյան. Հայոց նոր վկաները. Միքայել Ասորի. Աբուլֆարաջ. Իբն ալ-Ասիր. Քարթլիս ցխովրեբա, Բասիլի, Համդալլահ Ղազվինի, Շերեֆ-խան. (տե՛ս վերև №№ 2, 3, 4, 5, 6, 9, 10, 16, 24, 25, 27, 31, 32, 40, 45)։*

*«Զաքարիայի սարկաւագի պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870։*

*«Ջվանշէրի պատմչի, Համառօտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1884։*

*«Ստեփանոսի Տարօնցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885։*

*Адонц Н.*, Армения в эпоху Юстиниана. СПб., 1908.

*Гюзалян Л. Т.*, Персидская надпись Кей-султана Шеддади в Ани. «Академия Наук СССР академику Н. Я. Марру», М.—Л., էջ 629—641։

*Крымский А.*, История Персии, ее литературы и дервишской теософии, часть II, от разложения сельджукского царства до монголов. 3-е изд. М., 1912.

*Նույնի*, Страницы из истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Шеки. Сборник «Памяти академика Н. Я. Марра», М.—Л., 1938.

*Նույնի*, Страница по истории северного или кавказского Азербайджана (классической Албании). Сборник статей Академии наук, посвященный С. Ф. Ольденбургу, Л., 1934.

*Овсепян Г.*, Потомство Тарсанча Орбеляна и Мина-Хатуны, «Христианский Восток», т. II, вып. II, стр. 216—252, СПб, 1913.

Հովսեփյան Գ., *Զագավանից ժողովը, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913։*

Մանանդյան Հ., *Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան, 1926 (Արտատպ. գիտության և արվեստի Տեղեկագրի № 1-ից)։*

*Նույնի, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, II. Երևան, 1928 (Արտատպություն պետհամալսարանի գիտական Տեղեկագրի № 4-ից)։*

*Նույնի*, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Эривань, 1930.

*Նույնի, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940.*

*Markwart J.*, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930.

*Марр Н. Я.* Новые материалы по армянской эпиграфике. СПб., 1893 (Отдельн. оттиск из «Зап. Вост., Отд. Рус. Арх. Общ.», т. VIII).

*Նույնի*, Надпись Епифания католикоса Грузии, СПб., 1910.

Մովսեսյան Հ., *Ղևոնդ, «Լոռի և Բագրատունի տան Կորիկեան ցեղի պատմութիւնը», Վիեննա, 1923. Ազգ. մատ. ՂԵ։*

Շահնազարյան Ասլ., *Զաքարեան Երկայնաբազուկ տոհմի ծագումը, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 66—83։*

*Пахомов Е. А.*, О монете Корикэ Куропалата, Известия Кавказского Историко-археол. института, т. III, Тифлис, 1925.

Ջալալյանց Ս. Վ., *«Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա. Տփխիս, 1842։*

*Джавахишвили И. А.* История грузинского народа, II. перевод М. Хубуа (на правах рукописи).

Սամվելյան Խ., *Հին հայ իրավունքի պատմությունը, հատ. Ա., Երևան, 1939։*

*Орбели И.* Надписи Мармашена, Петроград, 1914.

Օրբելի Հ., *«Անւոյ աւերակները», թարգմ. Հուսիկ արքեպիսկ., Վաղարշապատ, 1911։*

## ԳԼՈՒԽՆԵՐ Ժ—ԺԳ

**Ժ. Մոնղոլական առաջապահ բանակի և Ջալալեդդինի արշավանքները։— ԺԱ. Չարմաղանի արշավանքը և Հայաստանի ու Վրաստանի նվաճումը։— ԺԲ. Բաչու նոյինը, և Կարինի, Խլաթի և Փոքր Ասիայի նվաճումը։— ԺԳ. Հուլավուն և նրա արշավանքները**

### ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Մխիթար Գոշ, *Սամուել Անեցի (շարուն.) Վարդան վարդապետ.— Կիրակոս Գանձակեցի.— Մաղաքիա աբեղա.— Սմբատ սպարապետ.— Մխիթար Այրիվանեցի.— Ստեփանոս Օրբելյան.— Հեթում պատմիչ.— «Անանուն ժամանակագրություն».— Հովհաննես Դարդելի.— Հայոց նոր վկաները.— Միքայել Ասորի (շարուն.).— Աբուլֆարաջ.— Իբն ալ-Ասիր.— Քարթլիս-ցխովրեբա.— Ջուվեյնի.— Ռաշիդեդդին.— Վասսաֆ.— Համադալլահ Ղազվինի.— Ռուբրուք.— Մարկո Պոլո.— (տե՛ս վերև №№ 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 24, 25, 27, 31, 37, 38, 39, 40, 47, 48)։*

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


*Altunian G.*, Die Mongolen und ihre Eroberungen in kaukasischen und kleinasiatischen Ländern im XIII, Jahrhundert, Berlin, 1911. *(Հայերենը՝ Ալթունյան Գ., Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում, Վաղարշապատ, 1913)։*

*Brosset M.*, Histoire chronologique par Mkhithar d'Airivank, XIII-e s. traduite de l'arménien (Mém. VII Ser. T. XIII, № 5. 1869).

*Греков Г.* и *Якубовский А.*, Золотая Орда. Л., 1937.

*Крымский А.*, История Персии, ее литературы и дервишской теософии, т. III. №№ 1—2. От эпохи монголов Джингиз-хана до водворения Сефевидов в Иране... М., 1914—1917.

*Насонов А. Н.*, Монголы и Русь (история татарской политики на Руси), М.—Л., 1940.

*D'Ohsson*, Histoire des Mongols depuis Tchinguiskhan jusqu'à Timour-Beg ou Tamerlan. La Haye et Amsterdam, I—IV. vol., 1834—1835.

*Патканов К.*, История монголов по армянским источникам, вып. I, извлечения из трудов Вардана, Стефана Орбеляна и констабля Сембата, СПб., 1874.

*Նույնի*, История монголов по армянским источникам, вып. II. извлечения из истории Киракоса, СПб., 1874.

*Նույնի*, История монголов инока Магакии. СПб., 1871.

*Петрушевский И. П.*, Хамдаллах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья, Известия Академии наук СССР, 1937.

*Плано Карпини*, История монголов, перевод А. Маленна, СПб., 1911.

*Владимирцов Б. Я.*, Общественный строй монголов (монгольский кочевой феодализм), Л., 1934.

*Quatrmère E.*, Histoire des Mongols de la Perse par Rachid-Eddin, Collection orientale, t. I, Paris, 1836.

## ԳԼՈՒԽ ԺԴ—ԺԸ

ԺԴ. Հայաստանի քաղաքական վիճակը մոնղոլական տիրապետության ժամանակ:— ԺԵ. Հայաստանի առևտուրը և քաղաքները իլխանների ժամանակ:— ԺԶ. Հայաստանի տնտեսական ծանր դրությունը և ժողովրդի աղքատացումը:— ԺԷ. Աբաղա խանը և նրա հաջորդները մինչև Ղազան խանը:— ԺԸ. Իլխանության անկումը և Հայաստանի տնտեսական քայքայումը:

### *ԱՂԲՅՈՒՐՆԵՐ*

Սամուել Անեցի *(շարուն.). Վարդան վարդապետ. Կիրակոս Գանձակեցի. Մաղաքիա աբեղա. Սմբատ սպարապետ. Մխիթար Այրիվանեցի. Ստեփանոս Օրբելյան. Հեթում պատմիչ. «Անանուն ժամանակագրություն». Հովհաննես Դարդելի. Հայոց նոր վկաները. Ֆրիկ. Միքայել Պանարետոս. Աբուլֆարաջ. Աբուլֆեդա. Քարթլիսցխովրեբա. Ռաշիդեդդին. Համդալլահ Ղազվինի. Ռուբրուք. Մարկո Պոլո. (տե՛ս վերև №№ 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 17, 23, 25, 28, 31, 38, 40, 47, 48).*

### *ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

*Altunian G.*, Die Mongolen und ihre Eroberungen in kaukasischen und kleinasiatischen Ländern im XIII. Jahrhundert, Berlin, 1911.

*Бартольд В.*, Персидская надпись на стене Анийской мечети Мануче, СПб., 1911.

*Brosset M.*, Histoire de la Géorgie... Dernière livraison. Introduction et Tables des matières, St.-Pètersbourg, 1858.

*Նույնի*, Les ruines d'Ani, capitale d'Arménie sous les rois Bagratides, 2 parties, St.-Pètersbourg, 1860—1861.

*Якубовский А.*, Восстание Тараби в 1238 г. «Труды Института востоковедения», т. XVII.

Լալայան Ե. *Գողթն, «Ազգագրական հանդես», XII գիրք, Թիֆլիս, 1905.*

*Крымский А.*, История Персии, ее литературы и дервишской теософии, т. III, №№ I—2. От эпохи монголов Джингизхана до водворения Сефевидов в Иране, М., 1914—1917.

*Ուղեգրություններ, հատ. Ա., Երևան, 1932։*

*Heyd W.*, Histoire du commerce du Levant, I—II, Leipzig, 1923.

Հովսեփյան Գ., *Զագավանից ժողովը, «Շողակաթ», Վաղարշապատ, 1913։*

Մանանդյան Հ., *Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան, 1930։*

*Նույնի, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Երևան 1927 (Արտատպություն գիտ. և արվեստի ինստիտ. Տեղեկագրի № 2-ից)։*

*Նույնի,* О торговле и городах Армении, Эривань, 1930.

*Марр Н.*, Новые материалы по армянской эпиграфике, СПб., 1893 (Отд. оттиск из «Зап. Вост. Отд. Рус. Арх. Общ.», том VIII).

*Marx K.*, Secret Diplomatic History of Eighteenth Century, edit. by Eleonor Marx, London, 1899.

Մաքսուդյան Մեսրոպ վ., *Վերին Ագուլիսի և շրջակայքի հայերէն ձեռագրերը, «Արարատ», 1915։*

*Насонов А. Н.*, Монголы и Русь (История татарской политики на Руси), М.—Л., 1940.

*D'Ohsson*, Histoire des Mongols... I—IV vol., La Haye et Amsterdam, 1834—1835.

*Патканов К.*, История монголов по армянским источникам, вып. I, СПб., 1873.

*Նույնի*, История монголов по армянским источникам, вып. II, СПб., 1874.

*Петрушевский И. П.*, Хамдаллах Казвини как источник по социально-экономической истории Восточного Закавказья, Изв. Ак. наук СССР, 1937.

*Плано Карпини*, История монголов, перев. А. Маленна, СПб. 1911.

*Покровский М. Н.*, Очерк истории русской культуры, часть I, М., 1915.

*Владимирцов*, Общественный строй монголов, Л.—М., 1934.

*Quatremére E.*, Histoire des Mongols de la Perse par Rachid—Eddin, Colection orientale, t. I, Paris, 1836.

## ԳԼՈՒԽ ԺԹ—ԻԲ

ԺԹ. Հայաստանի վիճակը Չոբանյանների և Ջելայիրյանների տիրապետության շրջանում։— Ի. Լանկթամուրի արշավանքները և հայ ժողովրդի նոր տառապանքները։— ԻԱ. Ղարա-Ղոյունլու թուրքմենների տիրապետությունը Հայաստանում։— ԻԲ. Հայաստանը Աղ-Ղոյունլու թուրքմենների տիրապետության տակ։

### *ԱՂԲՅՈՒՐՆԵՐ*

Սամուել Անեցի *(շարուն). Գրիգոր Խլաթեցի. Թովմա Մեծոփեցի (պատմությունը և հիշատակարանը). Հայոց նոր վկաները. Առաքել վարդապետ Դավր. Քալկոնդիլես Լաոնիկոս. Դուկաս. Ցրանցես Գեորգիոս. Միքայել Պանարետոս. Արաբշահ. Քարթլիս-ցխովրեբա. Նիզամեդդին-Շամի. Շերեֆեդդին Եզդի. Աբդար-րազաղ Սամարղանդի. Նեշրի Բրուսացի. Կլավիխո. Կատարինո Զենո. Բարբարո. Կոնտարինի, Անջիոլելլո. (տե՛ս վերև №№ 4, 14, 15, 16, 20, 21, 22, 23, 30, 31, 42, 43, 44, 46, 49, 50, 51, 52, 53).*

### *ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

Թոփճյան Հակոբ, *Ցուցակ ձեռագրաց Դադյան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878—1898, Վաղարշապատ, 1898։*

Լալայան Երվ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի. Թիֆլիս, 1915։*

*Крымский А.*, История Персии, ее литературы и дервишской теософии. т. III, № 1—2. От эпохи монголов до водворения Сефевидов. М., 1914—1917.

*Նույնի,* История Турции и ее литературы, том первый (от возникновения до начала расцвета), М., 1916.

*Ուղեգրություններ, Հատ. Ա., Երևան, 1932։*

*Markwart J.*, Ueber das Volkstum der Komanen, Leipzig, 1914.

*Minorsky V.*, La Perse au XV-e siècle entre la Turquie et Venise. Publication de la Société des Etudes Iraniennes et de l'art persan, № 8, Paris, 1833.

*Пахомов Е. А.*, Краткий курс истории Азербайджана, Баку, 1923.

Սմբատյանց Մեսրոպ *արքեպիսկ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի, Վաղարշապատ, 1896։*

---

*Banescu N.*, Un duc byzantin du XI-e siècle: Katakalon Kèkauménos. Bulletin de la Section historique de l'Académie Roumaine, XI (1924).

*Minorsky V.*, A Soyurghal of Qasim Aq-Qoyunlu. Bulletin of the School of Oriental Studies, vol. IX, part 4, London, 1939, էջ 943—956.

*Նույնի,* A Civil and military review of Fars in 881—1476. Bulletin of the School of Oriental Studies, vol. X, part I, London, 1940.

*Véliaminof*—Zernof W., Scheref-Nameh ou histoire des Kourdes par Scheref, prince de Bidlis, publiée pour la première fois, traduite et annotée. T. I—II, St.—Pétersbourg, 1860—1862.

*Ализаде А. А.*, К истории феодальных отношений в Азербайджане в XIII—XIV вв. Термин «тарх». Известия «АзФАН», Баку, 1942, № 3.

*Նույնի,* Виды земельной собственности и налоговая система ильханов в Азербайджане (XIII—XIV вв.). Известия «АзФАН», Баку, 1942, № 4.

*Նույնի,* К вопросу об институте «икта». Известия «АзФАН», Баку, 1942, № 5.

*Նույնի,* К вопросу об институте «инджу» в Азербайджане в XIII—XIV вв. Известия «АзФАН», Баку, 1943, № 8.

*Նույնի,* К истории феодальных отношений в Азербайджане. Термин «купчур». Известия Академии Наук Азербайджанской ССР, Баку, 1945, № 5.

*Նույնի,* Борьба Золотой Орды и государства ильханов за Азербайджан. Известия Академии Наук Азербайджанской ССР, Баку, 1946, № 5 и № 7.

*Беленицкий А. М.*, Происхождение института сойургал. «Историк-Марксист», 1941, № 4.

*Бердзенишвили Н.*, Джавахишвили И., Джанашиа С. История Грузии, ч. I, Тбилиси, 1946.

*Гордлевский Вл.*, Государство сельджуков Малой Азии, М.—Л., 1941.

*Петрушевский И. П.*, К вопросу об иммунитете в Азербайджане. «Исторический Сборник», 1934, № 4.

*Նույնի.* Внутренняя политика Ахмеда Ак-Койунлу. Известия «АзФАН», Баку, 1942, № 2.

*Նույնի.* Государства Азербайджана в XV веке. Известия «АзФАН», Баку, 1944, № 2—3 *և № 7.*

*Նույնի.* Новый персидский источник по истории монгольского нашествия. «Вопросы Истории». 1946. № 11—12.

*Նույնի.* К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества. «Вопросы Истории». М., 1947, № 4.

*Рашид-ад-дин,* Сборник летописей, т. III, перевод Арендса, М.—Л., 1946.

*Шарифли М.,* Торговля и торговые пути Азербайджана в XIII—XIV вв. Известия «АзФАН». Баку, 1944, № 2—3.

*Шильдбергер И.,* Путешествие Ивана Шильдбергера по Европе, Азии и Африке с 1394 по 1427 год. Перевод Ф. Бруна. Записки Новороссийского Университета, Одесса, 1857, т. I, вып. 1—2.

*Якубовский А.,* Тимур (опыт краткой характеристики), «Вопросы Истории», М., 1946, № 8—9.

Աբեղյան Մ., *Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946։*

Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942 և հատոր Բ, Երևան, 1944։*

Ժամկոչյան Հ., *«Պատմութիւն վասն ազգին Նետողաց» երկի հեղինակը. Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, հատոր XXIII, Երևան, 1946։*

Խաչիկյան Լ., *Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները. Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի. հատոր XIII, Երևան, 1946։*

Գալստյան Աշոտ, *Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից. Լենինական. 1945։*

*Сиасет-Намэ,* Книга о правлении визира XI столетия, Низам-ал-Мулька, перевод, введение в изучение памятника и примечания профессора Б. Н. Заходера, М.—Л., 1949.

*«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950։*

Բաբայան Լ., *Մոնղոլների վարչատնտեսական քաղաքականությունը Հայաստանում, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, Երևան, 1947, 4, էջ 69—82։*

Բաբայան Լ., *Հայաստանի հարկային սիստեմը մոնղոլական տիրապետության շրջանում, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, Երևան, 1948, № 7, էջ 55—66։*

Մելիք-Բեկ Լ., *Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զաքարյան Հայաստանում, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, հասարակական գիտություններ, Երևան, 1945, № 3—4, էջ 73—81։*

Աբրահամյան Աշ., *Ռուքն-էդ-դինի ջախջախումը, Տեղեկագիր ԱրմՖԱՆ-ի, 1941, № 5—6 (10—11), էջ 77—83։*

Հակոբյան Ս., *Փաստեր ճորտերի և նրանց վաճառքի մասին միջնադարյան*

*Հայաստանում, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր. Հասարակական գիտություններ, 1947, № 5, էջ 79—84։*

Երեմյան Ս. Տ., *Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1947, № 8, էջ 65—79։*

Մելիքսեթ-Բեկ Լ., *XIV դարու Ասլանի որդի Սարգսի քառալեզվյան հազվագյուտ արձանագրության մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1946, № 7, էջ 31—38։*

Հակոբյան Վ., *Անանուն ժամանակագրության աղբյուրների մասին կամ Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերականն»-ի համառոտ խմբագրությունը, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1949, № 7, էջ 51—62։*

*Петрушевский И. П.* Городская знать в государстве хулагидов, Советское Востоковедение, М.—Л., 1948, V, стр. 85—110.

*Беленецкий А. М.* К вопросу о социальных отношениях в Иране в хулагидскую эпоху, Советское Востоковедение, М.—Л., 1948, V, стр. 111—128.

*Петрушевский И. П.* К истории института сонургала, Советское Византиноведение, М.-Л., 1949, VI, стр. 227—246.

Ջանփոլադյան Հ., *Մխիթար Գոշը և Նոր-Գետիկի վանքը, Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հատ. 1, Երևան, 1948, էջ 97—166։*

*Еремян С. Т.* Юрий Боголюбский по армянским и грузинским источникам. Научные труды Ерев. Гос. Унт. т. XXIII, Ереван, 1946, стр. 289—421.

Երեմյան Ս. Տ., *Լիպարիտ զորավարը և նրա նախորդները, Երևանի պետ. համալսարանի Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, № 2, Երևան, 1947, էջ 103—149։*

Խաչիկյան Լ., *Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում 12—14 դարերում, Երևանի պետ. համալսարանի Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, № 2, Երևան, 1947, էջ 181—07։*

Ղաֆադարյան Կ., *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948։*

Ակինյան Ն., *Գրիգոր քահանայ Ակներցի պատմագիր Թաթարաց Պատմության, Հանդ. Ամս., 1948, հուլ.-օգոստ., էջ 387—403։*

# ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁԱԿԻ ԱՎԵՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ*

*Ինչպես հայտնի է, թաթարների կողմից Գանձակի պաշարման ու գրավման մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում XIII դարի հայ պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդանը։*

*Նրանցից առաջինը տալիս է «Հոյակապ Գանձակ քաղաքի» ավերման մանրամասն նկարագրությունը և հայտնում, որ չորս տարվա ընթացքում քաղաքը գտնվում էր ամայի վիճակում և որ հետո թաթարները «հրաման ետուն շինութեան քաղաքին և եկին ժողովեցան առ սակաւ, և սկսան շինել զնա, բաց ի պարսպէն»[1]։ Այս դեպքերի թվականների մասին Կիրակոս Գանձակեցին, դժբախտաբար, ուղղակի հիշատակումներ չի անում։*

*Հայ մյուս պատմիչի՝ Վարդանի, մոտ նույնպես տեղեկություն է պահպանվել թաթարների կողմից Գանձակի պաշարման ու գրավման մասին. այդ իրադարձության տարեթիվը նշված է հայկական թվականության 684 թ. (մ. թ. 1235 թ.)*[2]*։*

*«Յաւելեալ յինքն անհուն բազմութիւնքն՝ առաջնորդ ունելով զՉարմաղանն կոչեցեալ զօրապետ,— պատմում է Վարդանը,— գայ 'ի Գանձակ շահաստան. ի վեց հարիւր ութսուն և չորս թուին պաշարէ զնա աւուրս մինչև առնու և կոտորէ անողորմաբար բաց 'ի մատաղ տղայոց և 'ի կանանց, յորս հաճէին»*[3]*։*

*Ինձ թվում է, որ գլխավորապես Վարդանի վերը հիշատակված վկայության վրա հենվելով էր, որ հայ և արևմտաեվրոպա-*

---

* *Я. И. Манандян,* Новые данные о времени разрушения Ганджи монголами, см. «Известия» Азерб. филиала АН СССР, 1943, № 7, /сентябрь-октябрь/, стр. 79—80.

1 *Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 223—224։*

2 *Տե՛ս «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», հրատ. Մկրտիչ էմին, Մ., 1861, էջ 189։*

3 *Նույն տեղում։*

կան գիտնականները՝ Չամչյանը, Սեն-Մարտենը և ուրիշներ. Թաթարների կողմից Գանձակի գրավումը և ավերումը վերագրում էին մեր թվականության 1235 թվականին[1]։

Թեև այս տարեթիվն այժմ էլ գրեթե բոլոր գիտնականները համարում են վերջնականապես հաստատված ու անսասան. սակայն, հարցի ուշադիր քննության և վերջերս հայտնաբերված հայկական աղբյուրների նոր տվյալների հետ ծանոթանալու դեպքում դժվար չէ համոզվել, որ այն պետք է ամենավճռական կերպով մերժվի։

1942 թվականին Երևանում հրատարակվել է հայ նշանավոր պատմիչ Ստեփաննոս Օրբելյանի «Ժամանակագրությունը» և նրանում որոշակիորեն նշված է, որ թաթարները Գանձակը գրավել են 1231—2 թ.[2]։ Այդ բանը, միաժամանակ, հաստատվում է Հավապտուկի վանքին պատկանող Ավետարանի հիշատակարանով[3]։ Վկայակոչելով այդ հիշատակարանը, որը, դժբախտաբար, դեռևս չի հրապարակվել, Գ. Հովսեփյանը Գանձակի ավերումը վերագրում է 1232—3 թ.[4]։

Ստեփանոս Օրբելյանի նոր տարեթվի ճշտությունը կասկածի ենթակա չէ, քանի որ այն հաստատվում է նաև հենց Կիրակոս Գանձակեցու կողմից, որը եղել է մոնղոլների Ադրբեջան, Վրաստան ու Հայաստան կատարած առաջին ներխուժումների ժամանակակիցը։ Վերջինս, նկարագրելով Չարմաղանի 1236 թ. արշավանքը Հայաստան, որոշակիորեն հաղորդում է, որ այդ արշավանքը տեղի է ունեցել «Ջկնի անցանելոյ ինչ աւերման քաղաքին Գանձակայ»[5]։

Այսպիսով, այս նոր տվյալների հիման վրա մոնղոլների կողմից Գանձակի գրավումն ու ավերումը տեղի է ունեցել ոչ թե 1235, այլ 1231—32 թթ.։

---

[1] Տե՛ս Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. 3, Վենետիկ, 1786, էջ 204։ Saint-Martin M., Mémoires hist. et geogr. sur l'Arménie, I, Paris, 1818, էջ 384։ Համմտ. *Бартольд*, Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, 62—63.

[2] Տե՛ս «Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի», հրատ. Աբրահամյանի, Երևան, 1942, էջ 24։

[3] Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 89։

[4] Նույն տեղում, էջ 89։

[5] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 224։ Կիրակոսի «Պատմության» Թիֆլիսյան հրատարակության մեջ կան դեպքերի կոպիտ աղավաղումներ։ Տե՛ս ծանոթագր. 38ա։

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

*867—886* Բազիլեյոս Ա, կայսր Բյուզանդիայի։

*886—911* Կայսր Լևոն Զ Իմաստասեր։

*912—959* Կոստանդինոս Է Ծիրանածին ու նրա աթոռակից Ռոմանոս Ա Լեկապենոս (919—944)։

*920—942* Հովհաննես Կուրկուասի քսանամյա կռիվներն Արևելքում և նախկին Բյուզանդական Հայաստանի երկրամասերի վերագրավումը մինչև Եփրատ և Վերին Տիգրիս գետերը։

*963—969* Նիկեփորոս Բ Փոկաս, կայսր Բյուզանդիայի։

*964—968* Նիկեփորոս Բ-ի հաղթական կռիվները և Արևելյան Կիլիկիայի ու Հյուսիսային Ասորիքի նվաճումը։

*966/7* Բագրատունի իշխան Աշոտ Պատրիկի մահը և Տարոնի միացումը կայսրությանը։

*969—976* Հովհաննես Ա Չմշկիկ, կայսր Բյուզանդիայի։

*972—975* Հովհաննես Չմշկիկը նվաճում է Միջագետքում, Ասորիքում և Չորրորդ Հայքում Մծբինը, Եդեսիան, Հելիոպոլիսը, Բեյրութը, Ամիդը, Ցարկին-Տիգրանակերտը և այլ քաղաքներ։

*974* Հովհաննես Չմշկիկի արշավանքը Տարոնի վրա և համաձայնության կնքումը Աշոտ Գ-ի հետ։

*976—1025* Բազիլեյոս Բ, կայսր Բյուզանդիայի։

*988* Բյուզանդիայի իշխանության տակ գտնվող հայերի մի մասի գաղթեցումը Մակեդոնիա։

*1000* Տայոց իշխան Դավիթ Կյուրապաղատի կտակը և նրա մահը։

*1001* Տայքի, Բասենի, Հարքի և Ապահունիքի միացումը կայսրության համաձայն Դավիթ Կյուրապաղատի կտակի։

*1014—1027* Գեորգի Ա, թագավոր Աբխազիայի և Վրաստանի։

*1014—1018* Բազիլեյոս Բ-ի հաղթական կռիվներն ընդդեմ բուլղարների։

*1016 կամ 1018* Վասպուրականի Սենեքերիմ թագավորի Դավիթ որդու անհաջող կռիվը հարևան պարսկական իշխանության վարձկան թուրք հրոսակների դեմ։

*1020* Բագրատունի Գագիկ Ա թագավորի մահը։

*1021—1022* Բազիլեյոս Բ-ի պատժական արշավանքը Վրաց Գեորգի Բ-ի դեմ և բազմաթիվ գավառների ավերումը Կարս-Արդահանի ու Ախալքալաքի կողմերում։

*1021* Վասակ Պահլավունու կռիվը դեյլեմիկների դեմ։ Վասպուրականի թա-

թագավորության հանձնումը Բյուզանդիային և Սենեքերիմ թագավորի գաղթը Սեբաստիա։

1021/2 Բասենի Ոկոմի ավանի ու նրա շրջակա գյուղերի բնակչության գաղթեցումը Խաղտիք։

1027—1072 Բագարատ Դ, թագավոր Աբխազիայի և Վրաստանի։

1034—1041 Միքայել Դ Պափլագոնացի, կայսր Բյուզանդիայի։

1035—1040 Սելջուկյան թուրքերի արշավանքներն արևելքում և Պարսկաստանի հյուսիս-արևելյան և հյուսիսային երկրների նվաճումը։

1040/1 Հովհաննես-Սմբատ թագավորի և նրա եղբայր Աշոտի մահը։

1041—1044 Բյուզանդական-հայկական կռիվները Շիրակում։

1042 Աշոտ Բագրատունու որդու, Գագիկի, գահակալությունը։

1042—1054 Կոստանդինոս Թ Մոնոմախոս, կայսր Բյուզանդիայի։

1045 Հույները գրավում են Անին։

1045 կամ 1046 Վասակ Պահլավունու որդին, իշխան Գրիգորը, հանձնում է Բջնին Բյուզանդիային և գաղթում է Միջագետք։

1047/8 Սելջուկյան թուրքերի առաջին արշավանքը Հայաստան Տուղրուլ-բեգի հրամանով և Իբրահիմ Ենալի ու Գթլմուշի առաջնորդությամբ։

1048 Սելջուկյան թուրքերի երկրորդ արշավանքը և նրանց մուտքը Բասենի ու Կարնո դաշտերը։ Արծն քաղաքի ավերումը։ Բյուզանդական զորքերի պարտությունը Բասենի դաշտում Կապուտրու բերդի մոտ (սեպտեմբերի 18-ին)։

1048— մինչև ԺԱ դարի իննսունական թվականները. Կյուրիկե Ա թագավոր Տաշիրի, Ձորագետի և Աղվանքի։

1053/4 Սելջուկյան թուրք հրոսակախմբերի հարձակումը Կարս քաղաքի վրա։

1054 Տուղրուլ բեգի մուտքը Հայաստան և նրա զորամասերի ասպատակությունները։ Գանձակի, Դվինի և Ատրպեճանի ամիրաների հպատակումը Տուղրուլ բեկին։

1055 Տուղրուլ բեկը գրավում է Բաղդադը։

1058 Սասունցիների հարձակումը Թոռնիկ իշխանի առաջնորդությամբ Պարսկաստան վերադարձող թուրք զորքերի վրա և այս զորքերի ջարդը։

1059 Գազնևյան Մահմուդի թոռ Իբրահիմի խաղաղության դաշինքը Չակիր բեգի հետ և Պարսկաստանի արևելյան երկրների զիջումը Չակիր բեգին։ Չակիր բեգի մահը և Իբրահիմ Ենալի խեղդամահ սպանությունը։

1059—1067 Կոստանդինոս Ժ Դուկաս, կայսր Բյուզանդիայի։

1063 Տուղրուլ սուլթանի մահը։

1063/1064 Ալփասլանը ճնշում է Ռեյում Գթլմուշի ապստամբությունը։

1064 (Հեջիրի 456 թվի ռաբիա I ամսում=1064 թ. փետր. 22—մարտ 22). Ալփասլանի և Մելիքշահի արշավանքը Հայաստանի կենտրոնական ու հյուսիսային շրջանները։ Ախալքալաքի գրավումը և ավերումը (ռաջաբ ամսում=հունիս 19—հուլիս 18)։ Անիի գրավումը (օգոստ. 16, երկուշաբթի)։

1065 Կարսի Գագիկ թագավորը հանձնում է իր թագավորությունը Կոս-

տանդինոս Ժ Դուկասին և փոխարենը ստանում է նրանից Ծամընդավ բերդը և այլ քաղաքներ ու գյուղեր Փոքր Հայքի արևմտակողմում։

1067 Ալփասլանի կռիվը իր եղբոր՝ Կավուրդի դեմ։

1067—1071 Ռոմանոս Դ Դիոգենես, կայսր Բյուզանդիայի։

1068 Ալփասլանի նոր արշավանքը և նրա մուտքը Քարթլի։

1068—1069 Թուրքական զորքերի ու հրոսակախմբերի հետ մղումը Պոնտոսից և Եփրատ գետի մոտերքից։

1070 Ռոմանոս Դ կայսեր նահանջը և վերադարձը Կոստանդնուպոլիս։

1071 Ալփասլանի վճռական հաղթությունը Մանազկերտի մոտ։

1071—1078 Միքայել Է Դուկաս, կայսր Բյուզանդիայի։

1072 Անիի գնումը Ալփասլանից և հանձնումը Գանձակի Փադլուն ամիրայի Մանուչե թոռին։

1072—1110 Շեդդադյան Մանուչե՝ ամիրա Անիի և Շիրակի։

1072 Սելջուկյան Ալփասլան սուլթանի մահը։

1072—1092 Ալփասլանի հաջորդ սուլթան Մելիքշահ։

1072—1089 Գեորգի Բ, թագավոր Վրաստանի։

1074 Գթլմուշի որդի Սուլեյմանը ճանաչվում է Բյուզանդիայի կողմից օրինավոր տեր Փոքր Ասիայի մեծագույն մասի։

1078 Սասունի իշխան Թոռնիկի մահը։

1079 Գագիկ Բ Բագրատունու մահը։

1054—1102 Կյուրիկե Դ, թագավոր Կախեթի։

1066 Մելիքշահի երթը մինչև Միջերկրական ծովը և Փոքր Ասիայի ու Ասորիքի իշխանների հպատակումը սելջուկյան սուլթանին։

1087 Մելիքշահի ուղարկած Բուզան ամիրան գրավում է Գանձակ քաղաքը։

1089—1125 Դավիթ Դ Շինող, թագավոր Վրաստանի։

1090—1093 Իսմայել իբն Ակութ, ամիրա Ատրպատականի, Աղվանքի ու Հայաստանի։

1092 Նիզամ ալ-Մուլքի սպանությունը։

1092—1104 Մելիքշահի հաջորդ սուլթան Բարկիարուխ։

1094 Շեդդադյանների զորավար՝ Ապիրատյան Գրիգորի արշավանքը Սյունիք և Բաղաց Սենեքերիմ թագավորի սպանությունը։

1095 Բարկիարուխի եղբոր՝ Մուհամմեդի նշանակումը Ատրպատականի և Առանի կուսակալ։

1099 Մուհամմեդի ապստամբությունը Բարկիարուխի դեմ։ Ապիրատյան Գրիգորի մահը Կաղզվանի մոտ տեղի ունեցած կռվից հետո։

1101 Դավիթ Շինողը գրավում է Զեդազեն բերդը Կյուրիկե Դ-ից։

1103 Թուրքերը գրավում և ավերում են Ջորթման ամիրայի առաջնորդությամբ Կապան քաղաքը։

1104—1105 Թուրքերը գրավում են Որոտն ու Բղեն բերդերը։ Ղզիլ ամիրան գրավում է Լոռին և այրում է Հաղբատն ու Սանահինը։ Նա գրավում է նաև Դվինը և սպանում է Շեդդադյան Մանուչեի եղբորը՝ Աբու-Նասրին։

1105—1118 Բարկիարուխի հաջորդ սուլթան Մուհամմեդ (Տափար)։

1110 Շահ-Արմենների ամիրայության հիմնադրումը Խլաթում։

1110—1117 Դավիթ Շինողի հաղթական կռիվներն ընդդեմ թուրքերի։ Շամշուլդեի և Սամխեթի բերդերի նվաճումը (1110)։ Քալաձոր բերդի գրավումը Շաքիի կողմերում (1117)։

1118 Դավիթ Շինողը գրավում է Կյուրիկյանների Լոռի քաղաքաբերդը և Ագարակը։

1118—1131 Սելջուկյան Մուհամմեդի հաջորդ՝ սուլթան Մահմուդ։

1118—1120 Օսերի հնազանդեցումը Վրաստանին և Դարիալի բերդի գրավումը։

1120 Դավիթ Շինողի արշավանքը Շիրվան և Կապաղակ քաղաքի գրավումը։

1121 Թուրքական միացյալ զորքերի պարտությունը Մանգլիսի մոտ՝ Դիդկոր կոչվող լեռներում (օգոստոսին)։

1122 Դավիթ Շինողը պաշարում է և գրավում Տփղիս քաղաքը։

1123 Դավիթ Շինողի արշավանքն ընդդեմ սելջուկյան Մահմուդ սուլթանի և Շամախի քաղաքի գրավումը։ Արևելյան Գուգարքի և արևմտյան Առանի բերդերի ու ամրոցների նվաճումը։ Անի քաղաքի կամավոր անձնատրությունը Դավիթ Շինողին։

1125—1155/6 Դեմետրե Ա, թագավոր Վրաստանի։

1126 Հարոն ամիրան ավերում է Կապան ու Արևիք գավառները և գրավում է «Կաքաւու բերդ»-ը և «Բաղակու քար»-ը։ Դեմետրե Ա-ը վերադարձնում է Շիրակը և Անին Շեդդադյան Փադլունին։

1125—1132 Շեդդադյան Փադլուն, ամիրա Անիի և Շիրակի։

1128 Դեմետրե Ա-ի կռիվները Գանձակի Սելջուկյան կուսակալության դեմ և Ղարա-Սնղուր աթաբեկի պարտությունը։ Դմանիսի և Խունանի գրավումը։

1128—1185 Շահարմեն Միրան (Նասրադդին Մուհամմադ Սուքման Բ), ամիրա Մանազկերտ-Խլաթի։

1130 Խուրթի ամիրան, պարտության մատնելով Շեդդադյան Փադլունին, գրավում է Դվինը։

1131 Աբուլեթի որդի Իվանե Օրբելյանի պարտությունը Դվինի մոտ։

1131—1133 Տուղրուլ Բ՝ սուլթան։

1133—1152 Մասուդ սուլթան սելջուկյան։

1139 Գանձակի մեծ երկրաշարժը (սեպտ. 30)։ Դեմետրե Ա-ը հարձակվում է Գանձակի վրա։

1140 Ղարա-Սնղուր աթաբեկի արշավանքը Վրաստան։

1142 Գանձակի Խուհտուղտի ամիրայի արշավանքը Գարդման։

1142/3 Գանձակի զորագլուխ Չավլին առնում է Գանձակը, կուրացնում է Խուհտուղտին և հաստատում է իր իշխանությունն Առանում։

1143/4 Չավլի ամիրան գրավում է և ավերում Խաչենի ամրոցները։

1145 Չավլին պաշարում է և գրավում Տավուշ բերդը։ Կյուրիկե Ա-ի որդին՝ Աբաս Ա-ը, հեռանում է Վրաստան։

1145/6 Չավլին երրորդ անգամ արշավում է Խաչեն և ավերում Խաչենի դաշտային շրջանները։

1148—1225 Ելտկուզյանների կամ Փահլավանյանների իշխանությունը նախ Ադրբեջանում ու Գանձակում և ապա նաև Իրաքում։

1148—1172 Ելտկուզ՝ աթաբեկ Ադրբեջանի և Գանձակի։

1152 Թուրքերը գրավում են Կապանում Շլորուտ բերդը։
1155/6—1184 Գեորգի Գ, թագավոր Վրաստանի։
1157 Թուրքերը գրավում են Մեղրին։
1160 Գեորգի Գ-ի զորքերը հաղթում են Օլթի գավառում Շահարմեն Միրանի աներոջ՝ Ատրատինին։
1161 Վրաց զորքերի արշավանքը Շիրակ և Անիի գրավումը (հունիսի 13-ին, երեքշաբթի)։ Մեծ պատերազմը Շահարմեն Միրանի և վրաց զորքերի միջև Անիի մոտ և Շահարմենի պարտությունը (օգոստոսի սկզբին)։
1162 Գեորգի Գ-ը գրավում է Դվինը (օգոստոսին)։
1162—1163 Ելտկուզ աթաբեկի հաղթական արշավանքը Գեորգի Գ-ի դեմ։
1165 Անիի հանձնումը Շեդդադյան Մահմուդ ամիրայի որդուն։
1165/6 Գեորգի Գ-ի արշավանքն Աղվանքի կողմերը և Ուտի նահանգի ավերումը։
1166—1170 Թուրքերը գրավում են Սյունիքում Գրհամը, Գեղին, Կաքավաբերդը, Կկվաչարը և Բաղաբերդը։
1172—1186 Ելտկուզի հաջորդ՝ Մուհամմեդ Փահլավան աթաբեկը։
1174 Գեորգի Գ-ը վերստին գրավում է Անի քաղաքը։ Անիի հանձնումը ամիրսպասալար Իվանե Օրբելիին։
1177/8 Ապստամբությունը Վրաստանում Գեորգի Գ-ի դեմ։
1177—1194 Տուղրուլ Գ սուլթան։
1184—1213 Թամար, թագուհի Վրաստանի։
1184—1187 Վրացական արշավանքները Դվինի, Գեղարքունիքի և Արաքսի ափերի ուղղությամբ։
1185—1193 Բեկդամուր, ամիրա Մանազկերտ-Խլաթի։
1186—1191 Մուհամմեդ Փահլավանի հաջորդ՝ Խզըլ Արսլան աթաբեկ։
1186 Անեցիները գրավում են Ծառաքարը։ Զաքարյան Սարգիս մեծ իշխանի նշանակումը վրացական-հայկական զորքերի ամիրսպասալար։
1187 Զաքարյան Սարգիս իշխանի մահը։
1191—1210 Փահլավանյան Խզըլ Արսլանի հաջորդ՝ Աբու-Բեկր։
1196 Վրացական-հայկական զորքերը Զաքարե ամիրսպասալարի առաջնորդությամբ ազատագրում են Անբերդը։
1199 Զաքարեն և Իվանեն գրավում են Շեդդադյաններից Անին։
1201 Վրացական-հայկական զորքերը ազատագրում են Բջնին։
1203 Դվին քաղաքի նվաճումը։
1204 Տրապիզոնի կայսրության հիմնումը Թամար թագուհու աջակցությամբ։ Վրացական-հայկական զորքերի մեծ հաղթությունը Բասենում և Իկոնիա-Ռումի սուլթան Ռուքնադդինի ծանր պարտությունը։
1205—1206 Վրացական-հայկական զորքերի արշավանքները Մանազկերտ-Խլաթի ամիրայության կողմերում։
1206 Մոնղոլական միացյալ մեծ պետության հիմնադրումը։
1206/7 Վրաստանի զորքերը Զաքարե ամիրսպասալարի առաջնորդությամբ պաշարում և ազատագրում են Կարս քաղաքը։
1207/8 Շահարմենների Խլաթի ամիրայությանը տեր է դառնում Սալահեդ-

դինի Ադիլ եղբոր՝ Մելիք-Ուխադ որդին։ Արդաբիլի սուլթանը հարձակվում է Զատիկի օրը Անի քաղաքի վրա և կոտորում ու գերի է տանում բնակիչներին։ Զաքարեն և Իվանեն արշավում են Արդաբիլ, կոտորում են բնակիչներին և գերի են վերցնում սուլթանին և նրա կանանց ու երեխաներին։

1208/9 Վրաստանի զորքերը գրավում են էյուբյան ամիրայից Արճեշը։

1209/1210 Խլաթի անհաջող պաշարումը։ Զաքարեն և Իվանեն էյուբյանների հետ կնքում են խաղաղության դաշինք։

1210—1225 Փահլավան Աբու-Բեկրի հաջորդ՝ Ուզբեկ։

1211 Վրացական-հայկական զորքերի արշավանքն Ատրպատական։

1212 Զաքարե ամիրսպասալարի մահը։

1213—1223 Գեորգի Լաշա, թագավոր Վրաստանի։

1213 Մխիթար Գոշի մահը։

1214 Հաթերքի և Վերին Խաչենի Վախտանգ իշխանի մահը։

1218 Վրաց Եպիփան կաթողիկոսի հրամանը եկեղեցական տուրքերի մասին Անիում։

1220—1231 Խվարեզմի Մուհամմեդ շահի հաջորդ՝ Ջալալեդդին։

1220 Մոնղոլական զորքերը ներխուժում են Անդրկովկաս Ջեբեի և Սուբատայի առաջնորդությամբ (դեկտեմբերին)։

1221 Մեծ ճակատամարտը Կոտման գետի ափին և վրացական-հայկական զորքերի պարտությունը (հունվար ամսին)։ Մոնղոլական զորքերն ավերում են Մարաղան, Համադանը, Նախիջևանը, Սարաբը, Արդաբիլը, իսպառ կործանում են Բայլական քաղաքը, նաև պաշարում են և վերցնում Շամախի քաղաքը։

1222 Իվանե աթաբեկի անհաջող արշավանքը Գանձակ և խաղբակյան Պապաքի սպանությունը։

1223 Ջեբեի և Սուբատայի մոնղոլական զորքերը պարտության են մատնում ղփչաղներին և ռուսներին Կալկայի մեծ ճակատամարտում։ Վրացական-հայկական զորքերը կոտորում են ղփչաղներին Վարդանաշատի շրջանում։ Վրացական-թուրքական կռիվները Սուրմառի գավառում։ Վրաց թագավոր Գեորգի Լաշայի մահը (հունվարի 18-ին, չորեքշաբթի)։

1223—1247 Գեորգի Լաշայի հաջորդ՝ Ռուսուդան թագուհի։

1225 Խվարեզմի շահ Ջալալեդդինը գրավում է Ադրբեջանը, Թավրիզ աթոռանիստ քաղաքը և Դվինը։ Իվանե աթաբեկի պարտությունը Գառնիի ճակատամարտում (օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերի սկզբներին)։

1226 Ջալալեդդինը պաշարում և գրավում է Տփղիս քաղաքը (մարտի 9-ին)։

1227 Անիի և Կարսի զորքերը գրավում են Տփղիսը, ավերում և հրդեհում են քաղաքը և վերադառնում են իրենց տեղերը։

1227 կամ 1228 Մեծ իշխան Պռոշը մտնում է Դվին և կոտորում է Խվարեզմյան զորքերը։

1228 Ջալալեդդինի կռիվները մոնղոլական հրոսակների դեմ Ռեյ և Ասպահան քաղաքների կողմերում։ Նրա զորքերի ասպատակությունները Մշո դաշտի, Տողատափի և Ճապաղջրի կողմերում։

1229—1241 Չինգիզ խանի որդի՝ Հոքաթա մեծ խան (Ուգեդեյ)։

1230 Ջալալեդդինը պաշարում և գրավում է Խլաթը (Հեջիրի 627 թվի ջումադա I ամսի 28-ին=ապրիլի 14-ին, կիրակի)։ Իկոնիայի Ալադին սուլթանի և էյուբյան Աշրաֆի մեծ պատերազմը Ջալալեդդինի դեմ Երզնկայի մոտ և Ջալալեդդինի ծանր պարտությունը (Հեջիրի 627 թվի ռամազան ամսի 28-ին=օգոստոսի 10-ին, շաբաթ)։

1231 Մոնղոլական նոր զորաբանակի ներխուժումը Ադրբեջան Չարմաղան նոյինի առաջնորդությամբ։ Ջալալեդդինի պարտությունը և սպանությունը։

1231/2 Չարմաղանի զորքերն գրավում և հիմնահատակ ավերում են Գանձակ քաղաքը։

1234 Աթաբեկ Իվանեի մահը։

1236 Չարմաղանի արշավանքն Արևմտյան Վրաստան և Հայաստան։ Մոլար նոյինը գրավում է Ուտիի հյուսիսային շրջանները՝ Շամքորը և մոտակա բերդերը։ Ղատաղա նոյինը գրավում է Ուտիի հարավային մասերը՝ Գարդմանը, Չարեքը, Գետաբեկը, Վարդանաշատը և սրանց մոտակա շրջանները։ Չաղատա նոյինը նվաճում է և ավերում է Լոռի բերդաքաղաքը, գրավում է նաև Դմանիսը, Շամշուլդեն և Տփղիսը։ Դուղադա նոյինը պաշարում և առնում է Կայեն բերդը։ Ջուղբուղա նոյինը և Ասլան նոյինը նվաճում են Խաչենը և Սյունիքը։ Անի և Կարս քաղաքների նվաճումը և բնակչության կոտորածը։

1236—1240 Մոնղոլները նվաճում են Արևելյան Վրաստանը։

1236—1256 Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու։

1242 Չարմաղանի փոխարեն մոնղոլական զորքի հրամանատար նշանակվում է Բաչու նոյինը։ Կարին քաղաքի նվաճումը։

1243 Բաչուի արշավանքը Փոքր Ասիա։ Իկոնիայի սուլթան Ղիաթեդդինի պարտությունը Երզնկայի մոտ։ Երզնկայի, Կեսարիայի, Սեբաստիայի և Տիվրիկի գրավումը։

1245 Բաչուի արշավանքը Միջագետք և Ասորիք և Բաղեշի ու Խլաթի գրավումը։

1246—1248 Հոքաթայի որդի՝ մեծ խան Գույուկ։

1247/8 Գեորգի Լաշայի Դավիթ որդու հաստատումը Վրաստանի թագավոր։

1248—1250 Կիլիկիայի Հեթում թագավորի եղբոր՝ Սմբատ սպարապետի, ուղևորությունը մեծ խանի մոտ։

1249 Տփղիսի զորաժողովը մոնղոլ հարստահարիչների դեմ ապստամբելու նպատակով։

1250 Իվանե աթաբեկի որդի՝ Ավագի մահը։

1251—1259 Համամոնղոլական մեծ խան Մանգու։

1251 Սմբատ Օրբելյանի ուղևորությունը Մանգու մեծ խանի մոտ։

1253—1273 Օրբելյան Սմբատն ինքնուրույն իշխան («ինջու», «ենչու»)։

1254 Արղունի աշխարհագիրը Վրաստանում և Հայաստանում։

1254—1255 Կիլիկիայի Հեթում թագավորի ուղևորությունը Մանգու մեծ խանի մոտ։

1256 Սմբատ Օրբելյանը գնում է նորից Մանգու մեծ խանի մոտ։

1256—1265 Հուլավու՝ Իրանի և Առաջավոր Ասիայի խան։

1257 Հուլավու խանը գալիս է մեծ զորքով Անդրկովկաս։

1257 աշնանը. Հուլավուի մեծ արշավանքը Բաղդադի խալիֆի դեմ։

1258 փետր. 4, երկուշաբթի. Բաղդադի գրավումը և խալիֆայության բարձումը։

1258 աշնանը. Հուլավուի որդի՝ Իսմեթի արշավանքը Հյուսիսային Միջագետք։ Մուֆարղին-Տիգրանակերտ քաղաքի պաշարումը։

1259 Վրաստանի Դավիթ թագավորի և նրա իշխանների ապստամբությունը մոնղոլների դեմ։

1259—1260 Հուլավուի արշավանքն Ասորիք։ Հալեպ քաղաքի պաշարումը և նվաճումը (Հեջիրի 657 թվի զուլհիջա ամսում=1259 թ. նոյ. 19—դեկտ. 17)։ Դամասկոսի, Համաթի, Հեմսի և Հելիոպոլսի գրավումը։ Իսմեթը գրավում է Մուֆարղին քաղաքը, նաև Մերդինը և այլ քաղաքներ։

1260 աշնանը. Մամլուքների հաղթությունը Պաղեստինում և Հուլավուի զորավար Քիթ-Բուղայի ծանր պարտությունը։

1261 Զաքարյան Շահնշահի որդու՝ Զաքարեի սպանությունը Հուլավուի հրամանով։ Զաքարյան Շահնշահի մահը։ Հասան Ջալալի մահը։

1262—1263 Պատերազմ Ոսկե Հորդայի Ջուչյանների և Հուլավյանների միջև։ Բերքայի զորավար Նողայի պարտությունը Շամախու մոտ (հոկտեմբերին)։ Բերքայի մեծ հաղթությունը Թերեք գետի մոտ (հունվարին)։

1263 Մեծ խան Խուբիլայը տալիս է Հուլավուին «իլխան»-ի, այսինքն՝ «ժողովրդի պետի» տիտղոս։

1265—1282 Հուլավուի հաջորդ Աբաղա իլխանը։

1265 աշնանը. Իսմեթի և Նողայի կռիվն Աքսու գետի մոտ և Նողայի պարտությունը։

1266 Ոսկե Հորդայի Բերքա խանի մահը։

1266—1280 Բերքայի հաջորդ՝ Մանգու-Տիմուր խան։

1269 հոկտ. Հեթում թագավորի մահը։

1269 Մոնղոլական զորավար Թագուդարի ու նրա զորքերի վայրագությունները և Թագուդարի բանտարկումը։

1270 Աբաղա խանի և Բորախի կռիվը Խորասանում և վերջինի ծանր պարտությունը։ Գեորգի Լաշայի որդի Դավիթ թագավորի մահը։

1270—1289 Լևոն Գ, Կիլիկիայի թագավոր։

1272—1289 Դեմետրե Բ, թագավոր Վրաստանի։

1273 Արղունի նոր աշխարհագիրը Վրաստանում և Հայաստանում։

1277 Եգիպտոսի Բեյբարս սուլթանի արշավանքը Փոքր Ասիա և Թոխու Նոյինի ու Թովդա Բահատուրի պարտությունն Ապլիստանի դաշտում (ապրիլին)։ Աբաղայի արշավանքը Փոքր Ասիա և Բեյբարսի նահանջը։ Լևոն Գ-ի հաղթական կռիվները Բեյբարսի նահանջող զորքերի դեմ։ Բեյբարսի մահը։

1279/1280 Ոսկե Հորդայի զորքերի արշավանքն Անդրկովկաս և Աբաղա խանի զորքերի հաղթությունը։

1281 Մոնղոլական զորքի մեծ ճակատամարտն ընդդեմ եգիպտական զորքերի Համաթ և Հեմս քաղաքների միջև և Աբաղա խանի եղբոր՝ Մանգու-Տիմուրի պարտությունը (հոկտեմբերի վերջերին)։

1282 Աբաղա խանի մահը (ապր. 1-ին)։
1282—1284 Աբաղայի հաջորդ՝ իլխան Թագուդար-Ահմադ։
1283/4 Աթաբեկ Սադուն Արծրունու մահը։
1284 Թագուդար Ահմադի և Սահիբ Դիվանի սպանությունը։ Մեծ իշխան Պռոշի մահը։ Աթաբեկության հանձնումը Տարսայիճ Օրբելյանին։
1284—1291 Աբաղայի որդի՝ իլխան Արղուն։
1284—1338 կամ 1342. Եսայի Նչեցին ղեկավարում է Գլաձորյան համալսարանը։
1285 Կիլիկիայի թագավոր Լևոն Գ-ի գալուստը իլխան Արղունի մոտ։
1288 Ոսկե Հորդայի զորքերի նոր արշավանքն Անդրկովկաս և նրանց փախուստը (Հեջիրի 687 թվի ռամազան ամսում=29 սեպտ.—28 հոկտեմբ.)։
1289 Բուղայի դավադրությունը ընդդեմ Արղունի։ Բուղայի և մյուս դավադիրների ու նաև Վրաստանի Դեմետրե Բ թագավորի սպանությունը։
1290 Ոսկե Հորդայի զորքերի արշավանքն Անդրկովկաս և նրանց պարտությունը (ապրիլի վերջերին)։ Աթաբեկ Տարսայիճ Օրբելյանի մահը։
1291—1295 Արղունի հաջորդ՝ իլխան Քեյղաթու։
1292 Մելիք-Աշրաֆը գրավում և ավերում է Հռոմկլան։ Պռոշյան ամիր Հասան Ա-ի մահը։
1295 Մոնղոլական զորքերի ապստամբությունը և Քեյղաթուի ու նրա համախոհների սպանությունը։ Բայդուի հայտարարումը իլխան (ապրիլին)։
1295—1304 Բայդուի հաջորդ՝ իլխան Ղազան։
1295 և 1297 Հեթում Բ-ը դաշինք է կնքում Ղազան խանի հետ։
1298 Պռոշի որդի՝ Պապաքի մահը։
1299—1326 Օսմանյան պետության հիմնադիր Օսման Ա։
1299—1317 Պռոշյան իշխան Էաչի Ա։
1299 Ղազան խանի արշավանքն Ասորիք։ Հեմս քաղաքի մոտ ճակատամարտը և եգիպտական զորքերի պարտությունը (դեկտեմբերի 23/24-ին)։ Դամասկոսի գրավումը (դեկտեմբերի 31-ին)։
1300 Ապստամբությունը Դամասկոսում և Ասորիքում և Ղազան խանի զորքերի վտարումը Ասորիքից։
1303 Ղազան խանի զորավար Խութլուշահի արշավանքն Ասորիք և նրա ծանր պարտությունը Դամասկոսի հարավակողմում։
1304—1316 Ղազան խանի հաջորդ՝ Ուլջեյտու։
1314—1346 — Գեորգի Ե Պայծառ, թագավոր Վրաստանի։
1316—1335 Ուլջեյտուի հաջորդ՝ իլխան Աբու-Սեյիդ։
1318—1351 Պռոշյան իշխան Ամիր-Հասան Բ։
1319 Ոսկե Հորդայի Ուզբեկ խանի արշավանքը Անդրկովկաս և նրա պարտությունը։ Ղուռումչիի ապստամբությունը և Գեղարքունիքի ավերումը։
1320 Զաքարյան իշխան Շահնշահ Բ-ի մահը։
1320—1335 Թվականների միջոցում. Աբու-Սեյիդի հրովարտակն Անիի հարկերի թեթևացման մասին։

1325 Ոսկե Հորդայի Ուզբեկ խանի անհաջող արշավանքը Անդրկովկաս։

1327 Աբու-Սեյիդի վեզիր Չոբանի ապստամբությունը։

1335—1336 Աբու-Սեյիդի հաջորդ՝ իլխան Արփա։ Ոսկե Հորդայի Ուզբեկ խանի նոր արշավանքը Անդրկովկաս։

1341 Չոբանյան Հասան Փոքրի և Ջելայիրյան Հասան Մեծի կնքած դաշինքը և իլխանության երկրների բաժանումը նրանց միջև։

1344 Չոբանյան Հասան Փոքրի սպանությունը։

1344—1357 Հասան Փոքրի հաջորդ՝ Աշրաֆ։ Սա ավերածության է ենթարկում Անին, Շիրակը և Բջնին։

1357 Ոսկե Հորդայի Ջանիբեկ խանի արշավանքն Ադրբեջան և Թավրիզի գրավումը։

1358 Զաքարյան Շահնշահ Գ-ը վերագրավում է Բջնին։ Հասան Մեծի որդին՝ Ջելայիրյան սուլթան Ուվեյսը, գրավում է Թավրիզը։

1360 Մելիք Աշրաֆի որդին՝ Տամուրտաշը, ենթարկվում է մահապատժի։

1360—1393 Բագրատ Ե, թագավոր Վրաստանի։

1374—1384 Ջելայիրյան Ուվեյսի հաջորդ՝ Հուսեյն։

1378 Ղարա-Ղոյունլու թուրքմենների դինաստիայի հաստատումը Տուրուբերան նահանգի կողմերում։

1382—1410 Ջելայիրյան Հուսեյնի հաջորդ՝ սուլթան Ահմեդ։

1385 Ոսկե Հորդայի խան Թոխթամիշի արշավանքն Անդրկովկաս և Ադրբեջան։ Թավրիզի գրավումը և կողոպտումը (հունվարի 6-ին, ուրբաթ)։ Մարաղայի, Մարանդի, Նախիջևանի և Սյունիքի ավերումը։

1386 Լանկթամուրը գրավում է Թավրիզը։ Լանկթամուրի առաջին մեծ արշավանքը Հայաստան և Վրաստան։ Լանկթամուրի զորքերը պաշարում են Սյունիքում Երնջակ և Շահապոնք ամրոցները և ավերում Այրարատ նահանգի արևելյան շրջանները մինչև Կարբի, Բջնի, Գառնի, Սուրմալի և Կողբ (աշնանը)։ Կռիվը Բարդող լեռան շրջանում տանուտեր Մարտիրոսի առաջնորդությամբ։ Տփղիսի գրավումը (նոյեմբերին)։

1387 Լանկթամուրի զորամասերի հարձակումը Սյունիքի վրա և Որոտան բերդի գրավումը (գարնանը)։ Փոքր Սյունիքի և Ծարի գրավումը և Դոփյան տոհմի իշխանների նահատակումը։ Լանկթամուրի զորամասերի պարտությունը Ճապաղջուր գավառում և լեռնային Խույթ շրջանում (գարնանը)։ Վանի գրավումը և բնակչության սոսկալի կոտորածը (սեպտեմբերին)։

1388 Հովհան Որոտնեցու մահը։

1388—1409 Գրիգոր Տաթևացին ուսուցանում է աշակերտներ՝ Ապրակունիսի, Տաթևի և Մեծոփա վանքերում։

1388/9 Ղարա-Ղոյունլուների առաջնորդ Ղարա Մուհամմեդի մահը։

1388/9—1420/1 Ղարա Մուհամմեդի հաջորդ՝ Ղարա Յուսուֆ։

1393—1407 Գեորգի Է, թագավոր Վրաստանի։

1394 Լանկթամուրի երկրորդ արշավանքը Հյուսիսային Միջագետքի վրայով Հայաստան։ Լանկթամուրի զորքերը գրավում են Ամիդ-Դիարբեքիրը, Մերդինը, Ուռհան, Մծբինը, Երզնկան, Ավնիկ բերդը և Կարսը։

1395 Լենկթեմուրի արշավանքը Թոխթամիշի դեմ և վերջին ծանր պարտությունը Թերեք գետի մոտ (ապրիլին)։

1396 Լենկթեմուրի որդի՝ Միրանշահի արշավանքը Ղարա-Յուսուֆի դեմ և վերջինիս փախուստը Եգիպտոս։

1396/7 Շեյխ Ահմեդ Ջաղատայի առաքումը Վանա լճի կողմերը և այս շրջանի խաղաղեցումը և վերաշինումը։

1399 Սեբաստիայի, Մալաթիայի և Երզնկայի միացումն Օսմանյան պետությանը։

1399—1400 Լենկթեմուրի երրորդ արշավանքն Արևմուտք և Վրաստանի ավերումը ու բնակչության անխնա կոտորածը։

1400 Լենկթեմուրը գրավում և ավերում է Սեբաստիան, Հալեպը և Դամասկոսը։

1401 Մերդինը և Բաղդադը, որոնք ապստամբել էին Լենկթեմուրի դեմ, մատնվում են սրի ու հրի։

1402 Մեծ ճակատամարտը Անգորայի մոտ և սուլթան Բայազիտ Ա-ի ծանր պարտությունը (հուլիսին)։

1403 Լենկթեմուրի արշավանքն Արևմտյան Վրաստան ու Աբխազիա և հաշտության կնքումը Գեորգի է-ի հետ։

1405 Լենկթեմուրի մահը (փետրվար ամսի կեսերին)։

1404—1405 Կլավիխոյի ճանապարհորդությունը Հայաստանի վրայով Թավրիզ ու Սամարղանդ և վերադարձը։

1404—1447 Լենկթեմուրի կրտսեր որդի՝ Շահռուխ։

1405 Ղարա-Ղոյունլուների առաջնորդը՝ Ղարա-Յուսուֆը, մտնում է Հայաստան և նվաճում է Վանա լճի շուրջը գտնվող նահանգները։

1406 Ջելայիրյան Ահմեդը գրավում է Բաղդադը և Իրաքը։

1407—1408 Ղարա-Յուսուֆը գրավում է Ադրբեջանը։

1408/9 Ղարա-Յուսուֆը նվաճում է Մերդինը։

1409/1410 Ղարա-Յուսուֆի կռիվը Աղ-Ղոյունլուների առաջնորդ Ղարա-Յուլուք Օսմանի դեմ և նրանց հաշտությունը։

1410 Ղարա-Յուսուֆի կռիվը Ջելայիրյան Ահմեդի դեմ և վերջինիս սպանությունը։

1411 Ղարա-Յուսուֆը գրավում է Բաղդադը և նվաճում է Ջելայիրյանների պետության մեծագույն մասը։

1413 Շիրվանի գրավումը և միացումը Ղարա-Յուսուֆի մեծ երկրին։

1416 Ղարա-Յուսուֆի հարձակումը Ախալցխա քաղաքի վրա։

1418 Ղարա-Յուսուֆը ներխուժում է Միջագետք և հաղթում Ղարա-Յուլուք Օսմանին։

1419 Աղ-Ղոյունլուների առաջնորդ Օսմանն գրավում է Երզնկան և սպանում է նրա իշխան Փիր-Օմարին։

1420 Լենկթեմուրի որդի Շահռուխի մուտքն Ադրբեջան, Ղարա-Յուսուֆի մահը և Շահռուխի առաջխաղացումը մինչև Տարոն։ Շիրվանի ապստամբությունը։

1421 Սքանդարի կռիվը Շահռուխի դեմ Ալաշկերտի դաշտում և Սքանդարի պարտությունը։

1421—1437 Ղարա-Յուսուֆի հաջորդ՝ Սքանդար։

1423—1424 Սքանդարի արշավանքները Խլաթի շրջանը և Բաղեշի Շամշադին ամիրայի սպանությունը։

1425 Սքանդարը պաշարում և գրավում է Վանը։ Աղ-Ղոյունլուների առաջնորդ Ղարա-Օսմանը կոտորում ու գերի է վարում Արճեշի ու Արծկեի շրջանների բնակչությունը։

1426 Բաղեշի քուրդերի հարձակումը Արծկեի վրա Շամշադինի եղբոր՝ Սավալանի առաջնորդությամբ։ Սքանդարը գրավում է Ուրմիա և Սուլտանիե քաղաքները։

1427 Շահռուխի նոր արշավանքը Սքանդարի դեմ և վերջինիս ծանր պարտությունը Սալմաստի մոտ։

1434 Սքանդարի պատժական արշավը Շիրվանում։

1435 Շահռուխի երրորդ արշավանքը Սքանդարի դեմ։ Սքանդարը հարձակվում է Էրզրումի շրջանում Աղ-Ղոյունլու թուրքմենների վրա և սպանում է Ղարա-Օսմանին ու նրա որդուն՝ Բայազիտին։

1435—1467 Սքանդարի եղբայր՝ Ջհանշահ։

1437 Սքանդարի արշավանքը Հայաստան իր եղբոր Ջհանշահի դեմ։

1437/8 Սքանդարի փախուստը և սպանությունը Երնջակ բերդում։

1440 Ղարա-Ղոյունլու թուրքմենների արշավանքը Վրաստան և Շամշուլդե ու Տփղիս քաղաքների գրավումը։

1441 Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Էջմիածին։

1448 Ջհանշահի երկրորդ արշավանքը Վրաստան։

1449—1450 Ջհանշահի արշավանքը Երզնկայի և Կամախի կողմերը։

1452 Ջհանշահը նվաճում է Մարաստանը, Իրաքը և Ֆարսիստանը։

1453 Օսմանյան սուլթան Մուհամմեդ Բ-ը գրավում է Կոստանդնուպոլիսը։

1454 Աղ-Ղոյունլու թուրքմենների առաջնորդ Ուզուն Հասանը գրավում է Ամիդ-Դիարբեքիրը։

1457 Ուզուն Հասանը գրավում է Երզնկա քաղաքը։

1458/9 Ջհանշահը հաշտության դաշինք է կնքում Լանկթամուրի տոհմի Աբու-Սեյիդ սուլթանի հետ և ստանում է ամբողջ Խորասանը։

1462/3 Ուզուն Հասանը գրավում է Հիսնկեֆը։

1467 Ջհանշահի արշավանքն Ուզուն Հասանի դեմ, մեծ ճակատամարտը Մուշ քաղաքի մոտ և Ջհանշահի սպանությունը (նոյեմբերի 11-ին)։

1468 Ուզուն Հասանը նվաճում է Ղարա-Ղոյունլուների պետությունը, նաև Հայաստանը։

1469 Աբու-Սեյիդի պարտությունը և սպանությունը Մուղանի դաշտում։

1471 Վենետիկն ուղարկում է Կատերինո Զենոյին Ուզուն Հասանի մոտ և կնքում է նրա հետ համագործակցության դաշինք։

1472 Ուզուն Հասանի զորամասերի պարտությունն Իկոնիայի և Բիրաջիքի մոտերքում։

1473 Դերջանի մեծ ճակատամարտը Մուհամմեդ Բ-ի և Ուզուն Հասանի և վերջինիս ծանր պարտությունը (օգոստոսի 12-ին)։

1474 Ուզուն Հասանի որդու, Ուղուրլի Մահմեդի ապստամբությունը։

1477 Ուզուն Հասանի արշավանքը Վրաստան և Տփղիսի գրավումը։

1478 Ուզուն Հասանի մահը (հունվարի 6-ին)։ Գահակալական կռիվ-

ները Ուզուն Հասանի մահից հետո։

1478—1490 Ուզուն Հասանի որդի՝ փադիշահ Յաղուբ։

1487 Յաղուբը ավերում է Տփղիսը։

1488 Սեֆյան շեյխ Հայդարը մեծ զորքով արշավում է Շիրվան և գրավում ու ավերում է Շամախին։

1489 Հայդարի ծանր պարտությունը և սպանությունը։

1493—1496 Հասանի թոռ՝ փադիշահ Ռուստամ։

1497 Ուղուրլի Մահմեդի որդի՝ Ահմեդ։

1498—1499 Ուզուն Հասանի թոռ՝ Մուհամմեդ։ Սրան դահընկեց է անում Ալվանդը։

1500 Շեյխ Իսմայելի արշավանքը Շիրվան և Փառուխ Յեսարի սպանությունը։

1501 Աղ-Ղոյունլուների ծանր պարտությունը Շարուրում։ Շեյխ Իսմայելը գրավում է Թավրիզը։

# ՑԱՆԿԵՐ*

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Աբաղա իլխան 255, 268, 279, 305—319
Աբաս, Կարսի թագավոր 19, 53
Աբաս Ա Կյուրիկյան 97, 108, 135, 533
Աբաս Բ Կյուրիկյան 170, 178
Աբաս Ճահկեցի 162
Աբդ-ար-Ռազադ Սամարղանդի 446
Աբդլմսեհ Արծրունի 82
Աբրահամյան Ա. 429
Աբրահամյան Հ. 430
Աբու-Բեկր, Գանձակի աթաբեկ 140—144
Աբուլեթ Օրբելի, վրաց ֆեոդալ 96, 101, 102, 104, 105, 522—525
Աբուլսուար, Դվինի ամիրա 25, 26, 55, 86
Աբուլսուար, որդի Մանուչեի 100—102, 112, 516, 521—523
Աբուլֆարաջ, պատմիչ 149, 437
Աբուլֆիդա, աշխարհագիր 150, 438
Աբունասր, Դվինի ամիրա 89, 90
Աբու-Սեյիդ իլխան 294, 295, 328—334, 336, 341, 442
Աբու-Սեյիդ սուլթան, Լանկթամուրի տոհմից 395, 405, 406, 446
Ադիլ, եղբայր Սալահեդդինի 149, 228 տե՛ս նաև Մելիք Ադիլ
Ադոնց Ն. 124
Աթաբակ, որդի Հասան Ջալալի 250
Աժդահակ 158, 159
Ալադին (Ալայեդդին), Իկոնիայի սուլթան. 203—205, 233
Ալաեդդին Ատամելիք Ջուվեյնի, պատմիչ 442, 444
Ալեքսիոս Կոմնեն, Տրապիզոնի կայսր 176, 538
Ալի, թոռ Ուզուն Հասանի 415
Ալի փաշա Նոյին 334
Ալիբասան, դանիշմանյան ամիրա 91
Ալիզադե Ա. 288, 294
Ալիշան Ղ. 58, 159, 165, 228, 293, 328, 331, 337, 344, 352, 394, 395, 405, 413, 414, 416, 425, 430, 431
Ալիշեր, Դվինի ամիրա 130
Ազիտան ումն 379
Ալվանդ փադիշահ 416, 417
Ալուզ իշխանաց իշխան 82
Ալփասլան, սելջուկ սուլթան 36, 56, 57, 60—63, 65—69, 72, 78, 88, 496, 502, 503—508, 512, 516
Ալֆի, Եգիպտոսի սուլթան 312, 321, տե՛ս նաև Մանսուր Սեյֆեդդին Գելաուն
Ախիջուք. Ջոբանյան ցեղից 346
Ակինյան Ն. 428
Ահարոն Բուլղար, Վասպուրականի կառավարիչ 46—48, 500
Ահմադ 313—314, տե՛ս նաև Թագուդար
Ահմեդ Ջելայիրյան սուլթան 347, 367, 379—381
Ահմեդ սուլթան 278, 386, 387
Ահմեդ, Ուզուրլու Մահմեդի որդի 415
Աղբուղա (Ախալցխայում) 382
Աղբուղա Դոփյան 362
Աղբուղա, Վահրամ Գագեցու որդի 213, 215, 227, 257, 266, 329
Աղեքսանդր Ա, Վրաց թագավոր 391, 393
Աղսարթան Կյուրիկյան 214
Աղսարթան, Կախեթի թագավոր 67
Աղսարթան Բ, Կախեթի թագավոր 96


* Ցանկերը կազմել է Ռ. Ի. Մաթևոսյանը։

Աղ-Սնղուր, Մարաղայի տեր 119
Աճառյան Հ. 295, 433, 439
Ամիր Երկաթ Պահլավունի 162
Ամիրդովլաթ, բժիշկ 419, 420
Ամիր Հասան Ա., Պռոշ Խաղբակյանի որդի 318, 340
Ամիր Հասան Բ, Էաչի Խաղբակյանի որդի 340
Ամիր Շարաֆ, Բաղեշի ամիրա 363, 366, 380
Ամիր Վասակ Պռոշյան 412
Ամիր Քուրդ Արծրունի 137, 170, 181, 267
Ամնագին 393
Այտին Դոփյան 411
Անդրոնիկոս Դուկաս, բյուզանդական զորավար 68, 506, 507
Անձևացիներ 18
Աննա Թագուհի 441
Անջիոլելլո պատմիչ 409, 410, 412, 450, 451
Աշոտ Գ Ողորմած, հայոց թագավոր 18
Աշոտ Դ, որդի Գագիկ Ա-ի 21, 22, 24, 86, 88
Աշոտ, Կապանի թագավոր 84, 85
Աշոտ պատրիկ Բագրատունի, Տարոնի իշխան 17
Աշրաֆ Էյուբյան, Խլաթի ամիրայության հեջուբ 202—205
Աշրաֆ (Մելիք Աշրաֆ), եղբայր Հասան Քուչուքի 341—346
Աշրաֆ, Մելիք-Աուխադի եղբայր 150, 203—205, 228
Ապիրատ Պահլավունի, եղբայր Բարսեղ եպիսկոպոսի 120, 123
Ապիրատ Պահլավունի, հայր Սարգիս եպիսկոպոսի 162
Ապիրատ Պահլավունի, հայր Վասակի 89
Ապլսուար Շեդդադյան 425
Ապուղամր Պահլավունի, Գրիգոր եպիսկոպոսի հայր 162
Ապուղամր, Ղարիպ Մագիստրոսի հայր 162
Առաքել Բաղիշեցի 420
Առաքել Դավրիժեցի 396
Ասիլ 276, տե՛ս նաև Ումեկ
Ասիլ, տեր Անիի 343
Ասլան, որդի Մահմուդի 120, 121
Ասլան Նոյին 217, 265—267
Ասլանշահ Մելեք սուլթանի որդի 110
Ասողիկ, պատմիչ 19, տե՛ս նաև Ստեփանոս Տարոնեցի
Ասպահան, Ղարա Ցուսուֆի որդի 384, 385, 431
Ասփա, դուստր Բուրակի 163
Ասփա, դուստր Տարսայիճ Օրբելյանի 166, 167
Ավագ Զաքարյան 200, 212, 215—220, 226—228, 235, 239, 250, 257, 258, 264, 265, 268, 278, 314, 338
Ավետ քահանա, նահատակ 114
Ավգերյան Մ. 430
Ատտիյա, հոների առաջնորդ 35
Ատրատին, Միրան ամիրայի աներ 115
Արաբշահ (Ահմեդ իբն-Մոհամեդ), պատմիչ 439
Արալի, Վանի կառավարիչ 386, 389
Արդոխ, Սաղդուխ ամիրայի հայր 112
Արզուխաթուն, կին Հանբերքի Վախթանգ իշխանի 168, 178
Արիստակես Լաստիվերտցի 19, 20, 22, 26, 28—30, 40, 42—45, 48, 50—54, 314, 423
Արիստոտել 352, 353
Արիքբուղա իլխան, Հուլավուի եղբայր 250, 333
Արծրունիներ 55, 111, 267, 363
Արղուն իլխան 274, 287, 289, 298, 309, 314—317, 320, 327, 349, 433
Արղուն, բասղաղ և վեզիր 229, 240, 249, 250, 260, 261, 263, 318
Արշակունիներ 14, 180
Արսլանշահ, սելջուկ սուլթան 120
Արտաշիր, որդի Շահնշահ Զաքարյանի 279
Արտենա ամիրա 341, 370
Արտուխ, սելջուկ ամիրա 92
Արտուխյաններ 92, 98, 149
Արփա իլխան 333, 334

Բագարատ Գ, Աբխազիայի և Վրաստանի թագավոր 19, 20
Բագարատ Դ, Աբխազիայի և Վրաստանի թագավոր 26, 58, 60, 61, 66, 72, 73, 94, 100, 124
Բագրատ, Անիի կառավարիչ 63
Բագրատ Ե. Վրաստանի թագավոր 360, 367
Բագրատ, Վրաց թագավոր (XV դ.) 410
Բագրատունիներ հայ 15, 24, 26, 27, 53, 100, 124, 132, 133, 135, 138, 140, 152, 180
Բագրատունիներ վրաց 8, 94, 100, 101, 105, 131
Բազիլեոս Ա, կայսր 15, 16
Բազիլեոս Բ, կայսր 16, 18, 19, 20, 21, 22, 24, 27, 28, 29, 31, 32, 40, 70, 423
Բաթու, Ոսկե Հորդայի խան 210, 229, 231—233, 236, 237, 240, 241, 251, 264, 291, 371
Բալախեն, մոնղոլ իշխանավոր 243, 244, 251
Բալբան Շահի-Արմեն 148
Բալդուչչի Պեգոլոտտի 274
Բաղաց (Կապանի) իշխանական տոհմ 165
Բայազիտ Ա, օսմանյան սուլթան 350, 370, 371
Բայազիդ Ջելայիրյան 347
Բայազիտ, Ղարա Օսմանի որդի 390
Բայանդուրյան տոհմ 370, 404
Բայսունգուր, որդի Եաղուբ փադիշահի 415
Բաչու Նոյին 225, 227, 228, 231, 234, 241—243, 266, 267, 299, 270
Բասիլի, պատմիչ 143, 144, 147, 185, 440
Բաստամյանց Կ. 425
Բարբարո, ուղևոր 410, 412, 450
Բարխուդարյանց Մ. 108, 195
Բարկիարուխ, սելջուկ սուլթան 77, 78, 83, 90
Բարսեղ Մեծ 27, 195
Բարսեղ Ա Անեցի. կաթողիկոս 74, 83, 89, 116
Բարսեղ, եպիսկոպոս Անիում 116, 120, 123, 126
Բարսեղ եպիսկոպոս Պահլավունի, որդի ամիր Երկաթի 162
Բարտոլդ Վ. 270, 284, 288, 293, 294, 300, 301, 329, 332
Բաուեր, հրատարակիչ 438
Բեկդամուր, Նփրկերտի կուսակալ 146, 147
Բեկկեր Ի. 435
Բեյբարս Փնդուխդար, Եգիպտոսի սուլթան 248, 306, 309—311
Բեշքենդ Օրբելյան 391, 393
Բերդիբեկ, որդի Ջանիբեկ Ջուչյանի 345, 346
Բերքա, Ոսկե Հորդայի խան 237, 251, 252, 280, 305, 306
Բզափայ, Փարսի ամիրա 110
Բյուզանդացի Ն. 431
Բորախ, Չաղատայանների ուլուսի կառավարիչ 308, 309
Բորախան, 243, 244
Բորինա, դուստր Կյուրիկե Բ-ի 178
Բուբակ, իշխանաց իշխան 163
Բուզան ամիրա 74
Բուժղուր, սելջուկ զորապետ 74
Բուիդներ (դինաստիա) 55
Բուղա հարկահան 229, 240, 314, 315, 433
Բուրթել Օրբելյան 252, 358, 378, 379, 381
Բրոսսե Մ. 194, 263, 287, 331, 426—428, 436, 440
Բրունս, հրատարակիչ 437

Գագիկ Ա, Հայոց թագավոր 19, 21—23, 58
Գագիկ Բ, Հայոց թագավոր 24—26, 30, 64, 86, 100
Գագիկ Աբասյան, Կարսի թագավոր 53, 65
Գագիկ, Կախեթի թագավոր, որդի Դավիթ Անհողինի 67, 96

Գամրեկել Թորեցի. վրաց ամիրսպասալար 135—137
Գելցեր Հ. 15, 27, 33, 47, 68
Գեորգ գրիչ 362
Գեորգի Ա, վիրա-աբխազաց թագավոր 21, 22, 24
Գեորգի Բ, վիրա-աբխազաց թագավոր 72, 73, 94, 95, 97
Գեորգի Գ, Վրաց թագավոր 110, 112, 115—118, 120, 121, 123—128, 130, 131, 133, 135, 136, 146, 162
Գեորգի Է, Վրաց թագավոր 367, 369, 372
Գեորգի, Դավիթ Վրաց թագավորի որդի 249
Գեորգի, Թամար թագուհու ամուսին 139—141
Գեորգի Լաշա, Վրաց թագավոր 164, 194, 197, 230, 231, 233, 243, 348, 249, 261, 263, 265, 309, 441
Գեորգի Պայծառ, Վրաց թագավոր 342
Գեորգիոս Կեդրենոս 434, 435
Գեորգիոս Համարտոլոս, պատմիչ 17
Գեորգ կաթողիկոս 89
Գթլմուշ (Գըթըլմուշ), սելջուկ առաջնորդ 42, 46, 66, 69, 78
Գիբբ 442
Գոհարինե, Դավիթ իշխանավորի դուստր 91
Գոնցա, Ավագ Զաքարյանի կին 235, 265
Գոնցա, Դավիթ վրաց թագավորի կին 249, 250
Գրիգոր Ակներցի 223, 224, 232, 234, 242, 243, 260, 267, 279, 287, 288, 291, 297, 298, 307, 308, 313, 427, 428
Գրիգոր աղա 330—331
Գրիգոր Ապիրատյան 88, 89, 90, 127
Գրիգոր, Ապուղամրի որդի 162
Գրիգոր Բակուրյան, Անվո կառավարիչ 63
Գրիգոր Դոփյան 340, 362
Գրիգոր Բ Դոփյան 166, 167, 169
Գրիգոր դուքս Արևելքի 82
Գրիգոր եպիսկոպոս Կարնեցի 325
Գրիգոր երեց 115, 424
Գրիգոր Խաչենցի 226, 227, 245
Գրիգոր Խլաթեցի 226, 227, 361—363, 367, 368, 382, 385, 387, 431, 432
Գրիգոր Խուցես 343
Գրիգոր, Կապանի թագավոր 84, 85
Գրիգոր Հեջուբ 169, 182
Գրիգոր Մագիստրոս 30, 42, 47, 59, 64, 88
Գրիգոր Պահլավունի, Անվո եպիսկոպոս 162
Գրիգոր, Վասակ Խաղբակյանի եղբայր 196
Գրիգոր Տաթևացի 352, 353, 431, 432
Գրիգոր Տղա, (Ավագ Զաքարյանի) Հեջուբ 169, 182, 216
Գույուկ, մոնղոլ մեծ խան 229, 231, 232, 236, 240
Գուշինգ, Քաուս շահի որդի 346
Գուրանդուխտ, Դավիթ Շինարարի կին 102
Գուրդեն, Եղեգիսի տեր 378, 379
Գուրգեն, Սենեքերիմ Արծրունու եղբայր 19, 29
Գուրգեն, Վրաց թագավոր 19, 20

Դանիշման, Դանիշմանյան ամիրայության հիմնադիր 91
Դանիշմաններ 91, 92, 144
Դավիթ, հայ իշխանավոր 91
Դավիթ գրիչ 334
Դավիթ Անհողին, Տաշիր-Ձորագետի թագավոր 26, 61, 96
Դավիթ Կյուրապաղատ (Տայքում) 18—21, 33, 28, 438
Դավիթ, Բագրատ Ե վրաց թագավորի որդի 360, 367, 368
Դավիթ Գ, Վրաց թագավոր 109, 110, 127
Դավիթ, Դեմետրե Ա-ի հաջորդ, Վրաց թագավոր 114
Դավիթ, Դեմետրե Բ-ի որդի 314, 316, 318
Դավիթ, Գեորգի Լաշայի որդի, Վրաց



23—31

թագավոր, 230, 231, 233, 234, 248—250, 258, 261, 263, 276, 309
Դավիթ, Վրաց Գեորգի Է-ի եղբայր 367, 368
Դավիթ Կյուրիկյան, Կյուրիկե Ա-ի որդի 97, 109, 135
Դավիթ Կոմնին 176
Դավիթ, Հայրապետ (Աղթամարում) 286
Դավիթ Շինարար, Վրաց թագավոր 95—102, 110, 112, 124, 135
Դավիթ, Ռուսուդան թագուհու որդի 220, 230, 231, 265, 316
Դավիթ Սոսլան, Վրաց թագավոր 139, 148, 184
Դավիթ, Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդի 38—41
Դավիթ փիլիսոփա 353
Դատախան 251
Դատազա Նոյին 215
Դեմետրե Ա, Վրաց թագավոր 96, 102—105, 108, 109, 113, 114, 133
Դեմետրե Բ, Վրաց թագավոր 314—316, 318
Դեմետրե (Դեմնա), Վրաց թագավոր Դավիթ Գ-ի որդի 110, 127
Դեմետրե, Վրաց թագավոր, Լաշա Գեորգիի թոռ 249, 305, 309, 312
Դեսպինա, Ուզուն Հասանի կին 406, 407, 412, 416, 449
Դերենիկ, որդի Գուրգեն Արծրունու 29
Դյուլորյե Է. 63, 426—428, 437
Դոփ, քույր Զաքարե և Իվանե Զաքարյանների 165, 167, 170, 226, 227, 246
Դոփյաններ 166, 168, 169, 265, 340, 341
Դուբեյս Բ, Սադակայի որդի 98
Դուկաս, պատմիչ 435
Դուղադա Նոյին 215, 216

Եահյա Անտիոքացի 21, 28, 29, 438
Եաղուբ բեկ, Երևանի կուսակալ 394
Եաղուբ փատիշահ, Ուզուն Հասանի հաջորդ 412—417
Եզդին, Ոստանի ամիրա 363, 366, 330, 386
Եզյան Կ. 431
Ելթինա խաթուն, Զարմաղանի կին 224, 227
Ելիկում Օրբելյան 128
Ելտկուզ աթաբեկ 107, 110, 111, 113, 114, 115, 118—123, 128, 140
Ելտկուզյաններ 110, 111, 140, 198
Եպիխտ իշխան 64
Եպիփան, Վրաց կաթողիկոս 162
Եսայի, Աղվանից կաթողիկոս 411
Եսայի Նչեցի 281, 340. 352
Եվտիքոս պատրիարք 438

Զագա Զաքարյան 338, 344
Զանգի աթաբեկ 106
Զաքարե Զաքարյան, ամիրսպասալար 131, 133—138, 140—143, 145, 147—154, 156—161, 164, 165, 167, 170, 178—184, 212, 215, 246, 257, 329
Զաքարե Ա, Զաքարյան տոհմից 134, 142
Զաքարե Բ, Շահնշահի որդի 235, 242, 250, 254
Զաքարե, Խոշաքի որդի 338
Զաքարե, Վահրամ Գագեցու որդի 134, 141, 142, 156, 157
Զաքարիա կաթողիկոս 396
Զաքարիա Պահլավունի, հեչուր 182
Զաքարիա սարկավագ 132, 133, 158, 159
Զաքարյաններ 132—139, 141, 147, 154, 156, 157, 159, 163—165, 169, 170, 172, 173, 176, 177, 179—181, 183, 184, 186, 193, 197, 198, 218, 233, 236, 264, 265, 267, 338, 343, 345, 412
Զեյնեդդին, պատմիչ 347, 348
Զենո, 15-րդ դ. հեղինակ 409

Էաչի Խաղբակյան 318, 340
Էլիաս, Սուլթանիե քաղաքի իշխան 387
Էլիկում, Լիպարիտի որդի, հայ Օրբելյանների հիմնադիր 162, 265
Էլիկում Օրբելյան, Սյունյաց իշխան 217, 228, 252

Էլիկում Օրբելյան, Տարսայիճի որդի 340
Էլխազի, Արտուխյան ամիրա 90
Էմին Մ., 426, 428, 429
Էյուբ Էյուբյան 149
Էյուբյաններ 148—150, 246, 247
Էրթողրուլ, օղուզների առաջնորդ 350

Ըրդիշ ամիրա 107

Թագուդար իլխան 243, 244, 307, 308, 313, 314
Թախրաթան, Երզնկացի իշխան 365
Թաղայշվիլի Ե. 440, 441
Թաղիադին Կյուրիկյան 245
Թամար, Վրաց թագուհի 130, 131, 133, 136—139, 141, 143, 146—148, 265, 268
Թամթա, Իվանե աթաբեկի դուստր 150, 176, 184, 197, 228
Թեոդոս Ջրքին 339
Թեոդորոս աբեղա 91
Թիրոյան Ա, 440
Թիրքաշ, վրաց իշխան 114
Թոխթամիշ, Ոսկե Հորդայի խան 347, 348, 357, 360, 364, 365, 373, 374, 381
Թոխու Նոյին, մոնղոլ զորավար 310
Թոռնիկ, Սասունի իշխան 55, 81, 111
Թովղա Բահատուր, մոնղոլ զորավար 310
Թովմա Արծրունի 97, 82
Թովմա Մեծոփեցի 348, 353, 357, 359, 360, 363—368, 378, 380—382, 384, 391—394, 404—432
Թորո Աղա, մոնղոլ հարկահան 240, 260
Թորոս, Հեթում Ա-ի որդի 306
Թորոս, Ռուբինյան իշխան 64
Թորոսյան Ե. 433
Թումա աբեղա 386
Թումանբեկ Պռոշյան 411

Ժամկոչյան Հ. 427
Ժուզե, հրատարակիչ 438

Իբեկ, մամլուք սուլթան 247
Իբն-ալ-Ասիր 48, 57—60, 62, 98, 105, 113, 119, 121, 143, 147, 149, 190, 192, 194, 195, 197—202, 265, 438
Իբն-ալ Դայրանի (Դերենիկ Արծրունի) 29
Իբն-Արաբշահ, պատմիչ 372
Իբն-ի Բատուտա 439
Իբրահիմ, Բաղեշի ամիրա 366
Իբրահիմ Դերբենդցի, Շիրվանի շեյխ 365, 372, 382, 388
Իբրահիմ Խաննալ 36, 42, 49, 50, 52
Իբրահիմ, Մահմուդ Ղազնևյան թոռ 36
Իբրահիմ սուլթան, Շահռուխի որդի 446
Իլխազի, Արտուխյան տոհմից 92, 98
Իսահակ Կոմնեն, բյուզանդական զորավար 69
Իսմայել շեյխ Սեֆյան, Սեֆյանների պետության հիմնադիր 416, 417
Իսմայիլ իբն Ակուբ, սելջուկ ամիրա 74, 75, 77
Իսմութ, Արաղա իլխանի եղբայր 246, 305
Իսֆենդիար բեկ ումն 399
Իվանե աթաբեկ Զաքարյան 131, 133—143, 145, 148—154, 156, 157, 161—170, 178, 180, 182—184, 194—200, 212, 215, 228, 235, 246, 258, 265, 329, 344
Իվանե, Աղբուղայի որդի, Ախալցիխայի կառավարիչ 382
Իվանե իշխան, Թիրքաշի հայր 114
Իվանե, Վահրամ Գագեցու թոռ 142
Իվանե Օրբելյան, Անիի կառավարիչ 116
Իվանե Օրբելյան, Աբուլեթի որդի 96, 97, 101, 102, 104, 105, 117, 135
Իվանե Օրբելյան, Լիպարիտի որդի 72, 128, 162
Իվանե Օրբելյան ամիրսպասալար, Սմբատ Օրբելյանի որդի 123—128
Իվանե Օրբելյան, սպասալար, Նախորդի պապ 124
Իվանե Օրբելյան, Սմբատի հայր 104
Իվանե Օրբելյան ամիրսպասալար 178
Իվանե Օրբելյան, հայ իշխան (Սյունիքում) 378, 379, 381

Լալայան Ե. 386
Լաղարբեկ Պռոշյան 411

Լանգելե 275
Լանգլուա Վ. 428, 437
Լանկթամուր (Թիմուր) 336, 346, 348—351, 356—373, 375, 376—379, 381, 384, 388—390, 395, 397, 418, 431, 432, 439, 445, 446, 449
Լերո 436
Լեն-Պուլ Ս, 111, 126, 415, 425
Լեո 10
Լևոն Լուսինյան, Կիլիկիայի թագավոր 431
Լիպարիտ իշխան, վրաց սպարապետ 41, 47, 49, 124
Լիպարիտ Օրբելյան, հայ Օրբելյանների իշխանության հիմնադիր 162—164, 265—267
Լիպարիտ, Իվանե Օրբելյանի եղբայր 128
Լիպարիտ, Տարսայիճ Օրբելյանի եղբոր որդի 318
Լիպարիտ Օրբելյան, Իվանեի հայր 72
Լիպարիտ Օրբելյան (14-րդ դ.) 340
Լյուդովիկոս Թ, Ֆրանսիայի թագավոր 447
Լևոն Բ, Կիլիկիայի թագավոր 133, 436
Լևոն Գ, Կիլիկիայի թագավոր 306, 309, 311, 312, 315

Խազան խան 292
Խազբեկ 110, տես Ղազի աթաբեկ
Խաթուն, Արաս Ճահկեցու դուստր 162, 163
Խալաթ, որդի Սմբատի 154
Խալաթյանց Գ. 431
Խալիլ, Շիրվանի կառավարիչ 379, 389, 390
Խալիլ, Ուզուն Հասանի հաջորդ 412, 415
Խախանով Ա., 436
Խաղբակյաններ 164, 165, 167, 265
Խանիկով 125, 143
Խաչատուր Կեչառեցի 341
Խաչիկյան Լ. 368
Խարբանդա 166, 327, տե՛ս Մուհամմեդ Խուդաբանդա
Խաքան ոմն 217, 272
Խեդենեկ Արծրունի 111
Խըզլ-Ասլան, Գանձակի ամիրա 123, 128, 129, 130, 140, 162
Խլիճ-Ասլան, Իկոնիայի սուլթան 144, 148, 197
Խոնձա, Հասան Գոփյանի կին 362
Խոշաք, Ավագ Զաքարյանի դուստր 235, 250, 268, 278, 338
Խոշաք, Իվանե աթաբեկի կին 154, 198
Խոջա Մուհամմեդ Շամսեդդին, մեծահարուստ 277, 313, տե՛ս նաև Սահիբ Դիվան
Խոսրով Գանձակեցի, նահատակ 114, 122, 128
Խոսրով Զաքարյան տոհմից 134
Խոսրով Պարվեզ 301
Խոսրով Փիրուզ, Բաղդադի ամիրա 50
Խոսրովիկ, իշխան Կապանում 84, 85
Խորիշահ, Զաքարե և Իվանե Զաքարյանների քույր 167, 178
Խուանդզե, Սահիբ Դիվանի դուստր 338
Խուբիլա, մոնղոլ մեծ իշխան 238, 250, 254, 258
Խութլուշահ, մոնղոլ զորավար 318, 322, 323
Խութլու-Արսլան 136
Խուհտուղտի, Գանձակի ամիրա 106, 107
Խուշշեր, Փատլունի որդի 112
Խուպասար, ամիրսպասալար 136
Խուրթի ամիրա 104, 117, 118

Ծամիդես, Դավիթ իշխանավորի որդի 91
«Ծովիզ սուլթան» 121

Կանիկլ մագիստրոս 20
Կավուրդ, Ալփասլանի եղբայր 66, 78
Կատա, Բաղաց Գրիգոր թագավորի դուստր 84, 85
Կատակալոն Կեկավմեն (Կամենաս) բյուզանդական պաշտոնյա Անիում 46, 47
Կարստ Յ. 295
Կեդրենոս Գեորգիոս, պատմիչ 22, 23, 44
Կեկելիձե Կ. 58
Կեյ-սուլթան Շեդդադյան 126, 143
Կեռան թագուհի 342, 343
Կեսար Դուկաս, բյուզանդական զորավար 69

Կիրակոս Գանձակեցի 97, 132—134, 144, 149—152, 169, 170, 178, 179, 192, 193, 195, 196, 204—206, 208, 211—218, 225, 226, 228, 231—233, 235, 236, 240, 241, 245, 246, 248—250, 257, 259, 260, 261, 264, 271, 276, 279, 287, 289, 291, 298, 299, 422, 426, 427, 479, 480
Կիրակոս Ռշտունեցի, կաթողիկոս 394
Կիր-Աննա, Բագրատ Ե-ի կին 360
Կիրշ Գ. 437
Կղեմես Ե, Հռոմի պապ
Կյուրիկե Ա, (Կորիկե) Տաշիր-Ձորագետի թագավոր 61, 66, 80, 97, 108, 135
Կյուրիկե Բ, Մածնաբերդում 109, 124, 170, 178
Կյուրիկե Գ, Մածնաբերդում 214, 245
Կյուրիկե Դ, Կախեթի թագավոր 96
Կյուրիկյաններ 73, 97, 124, 132, 135, 138
Կոմնեններ 407
Կոնտարինի Ամբրոսիո 450
Կոստանդին Ա, կաթողիկոս 437
Կոստանդին, Բագրատ Ե-ի որդի 367, 368
Կոստանդին Դուկաս, կայսր 65
Կոստանդին Երզնկացի 282
Կոստանդին Է կայսր 16
Կոստանդին Ը, կայսր 29
Կոստանդին Թ Մոնոմախոս, կայսր 25, 26, 30
Կոստանդին, Վրաց թագավոր 413
Կոստանյանց Կ. 432
Կուզ ամիրա 104
Կուտուզ, մամլուք սուլթան 247, 248

Հակոբ գրիչ 358
Հաղբակ Պռոշյան 412
Համազասպյան-Մամիկոնյաններ 170
Համբդիկոս 352
Համդալլահ Ղազվինի 119, 252, 275, 299, 300, 301, 312, 319, 333, 444
Համզա, Աղ-Ղոյունլուների առաջնորդ 390, 405
Համմեր-Պուրգշտալլ, հրատարակիչ 444
Հայդ Վ. 275
Հայդար շեյխ Սեֆյան 413, 414, 416
Հայկազ Պռոշյան 412
Հասան Ալի, Ջհանշահի հաջորդ 397
Հասան, Այտինի պապ 411
Հասան Դոփյան 362
Հասան Բ Դոփյան 340
Հասան իբն Ալի 71, տե՛ս նաև Նիզամ ալ-Մուլք
Հասան, Հաթերքի իշխան 168
Հասան Մագիստրոս 126
Հասան Մեծ, Ջելայիրյան 341, 346
Հասան Ջալալ Դոլա, Խաչենի իշխան 167, 178, 217, 227, 229, 230, 233, 250, 257, 259, 264, 267, 291
Հասան Ջալալյաններ 412
Հասան Վզուրկ Ջելայիրյան 334
Հասան փոքր Չոբանյան ցեղից 341
Հասան Քուչուք, Չոբանյան ցեղից 334
Հասան Քուչուկ, Սուլդուզ ցեղից 342
Հեթում Ա, Կիլիկիայի թագավոր 227, 231, 240, 241, 242, 247, 248, 428
Հեթում Բ. Կիլիկիայի թագավոր 321, 322, 428
Հեթում պատմիչ 222, 223, 311, 314, 316, 324, 430
Հենրի Գ. Սպանիայի թագավոր 373, 449
Հեսու, Ասորի քահանա 426, 437
Հերցբերգ 63
Հոնենց տոհմ 159
Հովհան Որոտնեցի 340, 352, 353, 358, 359, 431
Հովհաննես, Գեղարդա վանքի եպիսկոպոս 413
Հովհաննես գրիչ 332
Հովհաննես դարդելի 424
Հովհաննես Կուրկուաս, բյուզանդական զորավար 16
Հովհաննես Չմշկիկ, կայսր 16, 17
Հովհաննես Պռոշյան 412
Հովհաննես Սարկավագ 179
Հովհաննես-Սմբատ, Հայոց թագավոր 21—24, 86, 88, 434
Հովհաննես Տանուտեր 330—332
Հովհաննես Տավուշեցի 424, տե՛ս նաև Վանական

Հովհաննես, Ումեկի որդի 276
Հովսեփ Դվինեցի, նահատակ 113
Հովսեփյան Գ. 81, 143, 164, 165, 167, 183, 309, 334, 434, 480
Հորդանան, վկա 114
Հորն 112
Հոքաթա, մոնղոլ մեծ խան 229, 236
Հոքթա խաղան 204, տե՛ս նաև Ուգեդեյ
Հուլուվյաններ 251, 252, 254, 256, 274, 280, 306, 318, 333, 336, 337, 340, 345, 346, 444
Հուլավու, Առաջավոր Ասիայի մոնղոլ կառավարիչ, իլխանության հիմնադիր 236, 238, 241—248, 250—252, 254, 255, 258, 268, 279, 280, 289, 290, 291, 304, 305—307, 313, 327, 333, 371, 426, 442
Հուլիանոս 27
Հուսեյն Ջելայիրյան 346, 347

Ղադի Բուրհանեդդին Ահմեդ 370
Ղազան խան 222, 274, 287, 296, 300, 317—324, 443
Ղազի Ա, աթաբեկ Մոսուլում 110, 111
Ղազի բեգ. Ադանում և Ադրբեջանում 106
Ղասիմ Աղ-Ղոյունլու 398, 399
Ղատախան, մոնղոլ իշխանավոր 243, 244
Ղարա Բահատուր, մոնղոլ զորավար 216
Ղարա Բուղա 242
Ղարա Գրիգոր 165
Ղարա-Մահմադ, Ղարա-Ղոյունլուների առաջնորդ 362, 364
Ղարա-Յուլուք, Օսման, Աղ-Ղոյունլուների առաջնորդ 370, 380, 381, 384
Ղարա-Յուսուֆ, Աղ-Ղոյունլուների առաջնորդ 362—364, 366, 367, 379—382, 384, 385, 391, 398, 405, 431
Ղարաչա ամիրա 129, 130
Ղարա Սնդուր աթաբեկ 104—106
Ղարա Օսման, Աղ-Ղոյունլուների առաջնորդ 387, 388, 390, 404, 405
Ղարիփ Փահլավանի 162
Ղզիլ Ամիրա 90
Ղիաթեդդին Գ, Իկոնիայի սուլթան 225, 227, 230—232, 311, 314
Ղոնղրաթա Գ, Իկոնիայի սուլթան 225, 227, 230, 232, 311, 314
Ղոնդրաթա, Աբաղա խանի եղբայր 310, 312, 314
Ղվարվարե, վրաց ֆեոդալ 410, 411
Ղութլու Բուղա 316
Ղուլ, մոնղոլ իշխանավոր 243, 244, 251
Ղուռումչի, մոնղոլ զորապետ 332

Ճար, Ումեկի որդի 227
Ճենքակուր, Չինաստանի թագավոր 124

Մակեդոնական դինաստիա 15, 16
Մահմուդ Գազնևյան 35, 36
Մահմուդ, Մուհամեդ-Թափարի որդի, սելջուկ սուլթան 97
Մահմուդ Շեդդադյան 99
Մահմուդ, Շեդդադյան ամիրա՝ «Ծովից սուլթան» 120
Մահմուդ, Շիրվանի սուլթան 99
Մահևանեանք 165
Մաղաքիա աբեղա (Գրիգոր Ակներցի) 194, 224, 232, 234, 242, 243, 267, 279, 287, 288, 291, 297, 298, 307, 308, 313, 427
Մամախաթուն, Վաչե Վաչուտյանի կին 158
Մամիկոնյաններ 55, 124
Մամայ 347
Մամքան, դուստր Կյուրիկե Բ-ի 168, 178
Մանանդյան Հ. 433
Մանգու, Մոնղոլ մեծ խան 232, 234, 237, 238, 240, 241, 243, 244, 248, 250, 254, 265, 267, 268, 292, 447
Մանգու-Տիմուր, Ոսկե Հորդայի խան 305, 310, 312, 313, 321
Մանդալե, հույն տոհմ 64
Մանսուր Խուսամեդդին Լաջին, Եգիպտոսի սուլթան 322, 323
Մանսուր Սեյֆեդդին Քելաուն, Եգիպտոսի սուլթան 312
Մանուել իշխան, հայր Ալեքսիոս Կոմնինի 176
Մանուել Բ, կայսր 435

Մանվել, Դեմետրե Բ Թագավորի որդի 314
Մանվելյան Հ. 430
Մանուչե Շեդդադյան 88—90, 100, 120, 294, 295, 329, 331
Մառ Ն. 58, 176, 177, 279, 331, 332, 338, 421
Մասիհ, Յազուբ փատիշահի եղբայր 415
Մասուդ, սելջուկ սուլթան 106, 107, 110, 314
Մատթեոս Ուռհայեցի 18, 22, 38, 41, 42, 44—46, 57, 60, 61, 63—65, 72, 75, 81, 91, 98, 99, 102, 111, 115, 116, 424
Մարիամ, Աբդլմսեհ Արծրունու կին 82
Մարիամ, Գագիկ Ա-ի թոռ, Բագրատ Դ-ի կին 26
Մարիամ, Կյուրիկե Բ-ի դուստր 178
Մարիամ, Սենեքերիմ Արծրունու դուստր 100
Մարկո Պոլո 258, 275, 448
Մարկոս, Կեսարիայի մետրոպոլիտ 64
Մարկվարտ Յ. 55, 57, 58, 60, 111
Մարտիրոս Տանուտեր 359
Մարքս Կ. 263, 284, 285, 298
Մաֆեո Պոլո 448
Մաքսուդ, Ուզուն Հասանի որդի 415
Մելիք, սելջուկ սուլթան 97, 98, 110
Մելիք, Եզդի ամիրայի որդի 380
Մելիք Ադիլ, Սալահեդդինի եղբայր 149
Մելիք Աշրաֆ, Եգիպտոսի սուլթան 228, 321
Մելիք Ասադ, Վանի խան 386
Մելիք Աուխադ, Խլաթի ամիրա 149, 150
Մելիք Ջահար Արտուխյան 365
Մելիք Նասիր, Եգիպտոսի սուլթան 323, 438
Մելիք Նասիր Սալահեդդին Յուսուփ, Ասորիքի ամիրա 247
Մելիքշահ, սելջուկ սուլթան 57—61, 69—74, 77, 78, 80, 81, 84, 85, 92, 94, 95, 97, 173
Մելիք Ռահիմ, Փարսի իշխան 55
Մելիքսեթ-բեկ Լ. 58, 121, 235, 440—442
Մեհթի 412, 413
Մերվանյաններ 92
Մինաև Ի. 449
Մինորսկի Վ. 350, 403
Միրան Շահի-Արմեն 111—114, 118, 119, 146, 147
Միրանշահ, Լանկթամուրի որդի 366, 378, 380
Միրաք խոջա 412, 413
Միրզա Մուհամմեդ Քազվինի 442
Միքայել Ասիտես, բյուզանդական պաշտոնյա 25
Միքայել Ասորի 113, 146, 202, 426, 436
Միքայել Դ Պափլագոնացի, կայսր 24
Միքայել Է Դուկաս, կայսր 68, 69
Միքայել Պալեոլոգ, կայսր 305
Միքայել Պանարետ, պատմիչ 360, 436
Մխարգրձելիներ 148
Մխիթար Այրիվանեցի 103, 149, 181, 428
Մխիթար Անեցի 294
Մխիթար Գոշ 105, 106, 108—111, 113—115, 119, 122, 126, 176, 179, 181, 185, 186, 188, 194, 208, 214, 289, 424, 425
Մխիթար Սասունցի 352
Մխիթար Փեճարենց, Նորագուսի առաջնորդ 183
Մկրյան Մ. 433
Մկրտիչ Նաղաշ 405, 420
Մյուլլեր Ա. 7, 112, 305, 323, 425
Մոլար Նոյին 213, 214
Մուինեդդին Նատանզի, պատմիչ 345
Մուինեդդին-Փարվանա, վեզիր 311
Մուհամմեդ, Բարկիարուխի եղբայր, սելջուկ սուլթան 83
Մուհամմեդ, իլխան 333
Մուհամմեդ Խվարեզմշահ 190, 192, 198
Մուհամմեդ Խուդաբանդա 324
Մուհամմեդ Ջելեպի 389
Մուհամմեդ Շեմսեդդին Սահիբ Դիվան 338, տե՛ս նաև Սահիբ Դիվան
Մուհամմեդ Տափար, սելջուկ սուլթան 78, 85, 90

Մուհամմեդ, Ուզուն Հասանի թոռ 415, 416
Մուհամմեդ Փահլավան, Գանձակի ամիրա 111, 113, 123, 128, 140, 162, 192
Մուհամմեդ Բ, օսմանցիների սուլթան 406—409, 450
Մուշեղ, Սասունի իշխան 55, 81
Մուսա իլխան 333, 334
Մուսթասիմ խալիֆ 245
Մուստաֆա, Մուհամմեդ Բ սուլթանի որդի 450
Մուրադ, Ծաղուրի որդի, իշխում էր Իրաքում 415, 417

Յուսուֆ, Ուզուն Հասանի զորավար 408
Յուսուֆ, Ուզուն Հասանի որդի 415

Նանա, Զաքարե և Իվանե Զաքարյանների քույր 170, 178
Նասրադդին Սուքման Բ (Միրան ամիրա) 111
Նավրուզ, մոնղոլ զորավար 318
Նար-Պեյ Խ. 431
Նեշրի Բրուսացի, պատմիչ 349, 447
Նեոլդեքե, հրատարակիչ 447
Նեվ Ֆ. 432
Ներսես Մշեցի 351
Ներսես Շնորհալի 436
Նիզամ ալ-Մուլք 57—59, 61, 70, 71, 75
Նիզամեդդին Շամի, պատմիչ 445
Նիկեփոր Բ Փոկաս, կայսր 16, 17
Նիկիտոմ Ներքինի 29
Նիկոլա Պոլո, Մարկո Պոլոյի հայր 448
Նիկողայոս Ֆալկոն, վանական 430
Նողայ, մոնղոլ զորավար 252, 305, 306
Նուշիրվան իլխան 333
Նուր-ադ-դին, Մակուի իշխան 354, 375, 399

Շադադ, Անիի ամիրա 112
Շահի-Արմեններ 149, 175
Շահ Իսմայիլ, Սեֆյան դինաստիայի հիմնադիր 412
Շեմս-ադ-Դին Ռուզեկ, քուրդ ամիրա 398
Շահնազարյանց Ա. 134, 138
Շահնազարյանց Կ. 428. 429, 432
Շահ Մանսուր Մուզաֆարյան 364
Շահնշահ Զաքարյան, Զաքարե ամիրսպասալարի որդի 158, 160. 165, 182, 198, 212, 215, 217. 218. 226, 227, 229, 234, 245, 250, 257, 262, 279, 314, 337, 338, 354
Շահնշահ Բ Զաքարյան 322, 338
Շահնշահ Գ Զաքարյան 342—344
Շահնշահ Զաքարյան, եղբայր Աղբուղա Զաքարյանի 329
Շահնշահ Մամիկոնյան 146, 147
Շահռուխ, Լանկթամուրի որդի 378. 384, 385, 387—394, 398, 431, 446
Շահուրաթ, Սքանդարի որդի 392
Շահուռնեցիք 165
Շամշադին, Բաղեշի ամիրա 366, 380, 386, 387
Շանշե Դոփյան 362
Շապուհ, պաշտոնյա Վասպուրականի թագավորությունում 39, 40
Շարաֆ ալ-Մուլք, Ջալալեդդինի վեզիր 201
Շարմուա 447
Շեդդադյաններ 86, 88, 89—91, 100, 104, 112, 115, 116, 118, 121, 126, 143, 161, 175
Շերբարոզ Արծրունի 246, 247, 267
Շերեֆեդդին Եզդի 445, 446
Շերեֆ խան, պատմիչ 446
Շիրվան Դոփյան 362

Չակիր բեգ 36, 56
Չաղատա Նոյին 215, 219, 237, 357, 371
Չաղատայաններ 254, 308, 309
Չամչյան Մ. 10, 63, 192, 217, 228, 254, 326, 363, 480
Չավլի, Գանձակի ամիրա 106, 108
Չարասլան, Իկոնիայի սուլթան 144
Չարմաղան Նոյին 204, 206, 208, 211, 212, 216—219, 224, 225, 227, 270, 271, 299. 559, 560

Չինգիզ խան 190, 192, 196, 200, 204, 236—239, 250, 251, 254, 256, 270, 349, 356, 357, 371, 442
Չորման, մոնղոլ զորավար 322, 328, 333, 334
Չորմանյաններ 333, 342, 346, 418
Չորթման, Գանձակի ամիրա 83—85
Չորտվանել, Սասունի իշխան 55, 81

Պալասանյան 10
Պալեոլոգներ 435
Պախոմով Ե. 422
Պակրովսկի Մ. 283, 284
Պահլավունիներ 55, 88, 162
Պապաք Պռոշյան 196, 340
Պատկանյան Ք. 195, 287, 290, 426—429, 440
Պետերման Մ. 427
Պետրոս Ա. Գետադարձ, կաթողիկոս 23, 26, 27, 47, 294
Պետրուշևսկի 287
Պլանո Կարպինի, ճանապարհորդ 222, 258
Պլու Ջաքարե, հայր Վահրամ Գագեցու 213
Պոկոն Ե., հրատարակիչ 437
Պռոշ Խաղբակյան (Պռոշյան) 164, 181, 202, 245, 246, 340
Պռոշյաններ 281, 340, 411, 413

Ջալալ Դոլա Հասան 340
Ջալալ Օրբելյան, Տարսայիճ իշխանի որդի 340
Ջալալ-ադ-դին Մուհամեդ Դավանի, պատմիչ 403
Ջալալեդդին Խորեզմշահ 155, 198, 199, 200—205, 208. 210, 211, 214, 228, 299
Ջալալյան Ս. 152
Ջանիբեկ խան, Ջուչյան տոհմից 345, 346
Ջավախիշվիլի Ի. 73, 148, 151, 440, 441
Ջեբե Նոյին 192, 194—196
Ջելայիրյաններ 315, 333, 342, 346, 347, 381, 418
Ջեհան-Տիմուր, իլխան 333
Ջհանգիր, Աղ-Կոյունլու առաջնորդ 398, 399, 405
Ջհանգիր, Լանկթամուրի որդի 378
Ջհանշահ, Հայաստանի և Ադրբեջանի կառավարիչ 390—397, 405—407
Ջհանշե Դոփյան 362
Ջոլա, Զարմազանի եղբայր 217
Ջոնգա, Շահռուխի որդի 390
Ջուանշեր, պատմիչ 67, 72, 73, 97, 99
Ջումա Պռոշյան 411
Ջանեյդի Սեֆյան 416
Ջուղբուղա, մոնղոլ զորավար 217
Ջուզջանի, պատմիչ 236
Ջուչի, Չինգիզ խանի որդի 211, 237
Ջուչյաններ 251, 252, 254, 280, 306, 309, 345, 346
Ջուվեյնի, պատմիչ 232, 442

Ռաբան Աթա 271
Ռադիոս, Դավիթ իշխանավորի որդի 91
Ռամուզիո 449, 451
Ռաշիդեդդին, Ղազան խանի վեզիր 194, 195, 210, 252, 287, 290, 292, 296, 297, 300, 305, 309, 315, 322, 442—444, 446
Ռավադյաններ, իշխում էին Թավրիզում և Մարաղայում 86
Ռեզայիդ 316, տե՛ս Քեյղաթուն
Ռեյսկե, հրատարակիչ 439
Ռոմանոս Ա Լեկապենոս, կայսր 16, 70
Ռոմանոս Դ. Դիոգենես, կայսր 27, 66—68
Ռովադի, Գանձակի ամիրա 107
Ռոքրուկ Ու. ճանապարհորդ 223, 234, 235, 262, 276, 354, 447
Ռուստամ փատիշահ, Ուզուն Հասանի թոռ 415
Ռուսուդան, Կյուրիկե Բ-ի դուստր 123—125, 178
Ռուսուդան, Վրաց թագուհի 197, 211, 220, 230, 231, 258, 265
Ռուքնադդին, իսմայելիտների առաջնորդ 148, 242

Սարուկդիկին, Գազնայի իշխան 35
Սադա, Գրիգոր Խաչենցու որդի 245
Սադակա ոմն 98
Սադոն իշխան 362
Սադուն Ա Արծրունի 120, 246, 247, 267
Սադուն Բ Արծրունի, Շերբարոքի որդի 246, 247, 267, 268, 309, 314, 316
Սալահեդդին Էյուբյան 149, 228
Սալըխ Արտուխյան, Մեդինի իշխան 380
Սալդուխ, Կարնո ամիրա 112—115, 148
Սահակադուխտ Արծրունի 137
Սահանդ, իշխան Արծկեի 363, 366
Սահիդ Դիվան 277, 278, 313, 314
Սահմադին, մեծահարուստ 277—279
Սաղպուղ Զաքարյան 142
Սամուել Անեցի 63, 100, 103, 104, 105, 117, 118, 268, 294, 347, 348, 357, 358, 360 425, 426
Սավալան, Բաղեշի ամիրա 387
Սատի-բեկ, իլխան 333
Սարթախ, Բաթու խանի որդի 233, 241
Սարգիս Արծրունի 115
Սարգիս, Ապիրատի որդի 162
Սարգիս Դոփյան 362
Սարգիս եպիսկոպոս, Եկեղյաց գավառում 310
Սարգիս եպիսկոպոս, Կարինում 229
Սարգիս Զաքարյան, ամիրսպասալար 116, 120, 127, 131, 133—137, 151, 152, 165
Սարգիս կաթողիկոս 23
Սարգիս Ծիլենց 329
Սարգիս Ջաղելի, Սամցխեի իշխան 264
Սարգիս, Վահրամ Գագեցու որդի 134, 142
Սարգիս Վաչուտյան 157, 158
Սարգիս վարդապետ 431, 432
Սարգիս, Ուխտիքի իշխան 250
Սելջուկ, թուրք-սելջուկների առաջնորդ 35, 36
Սենեքերիմ, Բաղաց թագավոր 81, 90
Սենեքերիմ, Վասպուրականի թագավոր 19, 26, 28, 29, 38—41, 58, 65, 82, 91, 100
Սեն-Մարտեն 60, 63, 209, 254, 480
Սեֆյաններ 413, 416, 417
Սիմեոն 271, տե՛ս նաև Ռաբան աթա
Սինջար, Մելիքշահի որդի 78
Սկիլիցես, պատմիչ 434
Սմբատ, Գրիգոր Հեջուբի հայր 169
Սմբատ, Խալաթի հայր 154
Սմբատ, Կապանի Աշոտ թագավորի թոռ 84, 85
Սմբատ սպարապետ 203, 231, 232, 310, 311, 322, 428
Սմբատ Օրբելյան, Բեշքենդի հայր 391
Սմբատ Օրբելյան, Բուրթելի եղբայր 378, 379
Սմբատ Օրբելյան, Բուրթելի թոռ 381
Սմբատ Օրբելյան, Ելիկումի եղբայր 265—267
Սմբատ Օրբելյան, Իվանե Օրբելյանի որդի 104
Սմբատ Օրբելյան, Իվանե Օրբելյանի հայր 124, 123
Սմբատ Օրբելյան, Լիպարիտի հայր 162
Սմբատ Օրբելյան. Սյունիքի իշխան 278, 331
«Սմբատաւրենց Սուլեման» Տիգրան Հոնենցի հայր 159
Սոֆի խալիլ, աթաբեկ 412, 415
Ստեփանոս Պռոշյան 412
Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոս 162, 163
Ստեփանոս, Տաթևի եպիսկոպոս 412
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ 28
Ստեփանոս, Ումեկի որդի 276
Ստեփանոս Օրբելյան 80, 81, 83, 107. 122—124, 136, 152, 153, 162—165, 199, 206, 217, 228, 252, 261, 262, 265, 266, 277, 285, 313—318, 429. 480
Սրահանգ ամիրա 73
Սրեզնևսկի Ի. հրատարակիչ 449
Սուբատա Բահատուր, մոնղոլ զորավար 192, 194—196
Սուլեյման, Գթլմուշի որդի 69, 78
Սուլեյման Ա, Իկոնիայի սուլթանության հիմնադիր 70
Սուլեյման Բ, Իկոնիայի սուլթան 144

Սուլեյման իշխան, Յաղուրի վեզիր 414—416
Սուլեյման, օղուզների առաջնորդ 349—350
Սուքման ալ-Կուտբի, Շահի-Արմեն ամիրայության հիմնադիր 92, 111, 119
Սքանդար, Ղարա Յուսուֆի հաջորդ 384—389, 391—394, 431
Սևադա խաչենցի, Գրիգորի որդի 246
Սևադյաններ 170

Վախթանգ Գորգասլան, Վրաց թագավոր 440
Վախթանգ, խաչենի տեր 167
Վախթանգ, Հաթերքի իշխան 168, 169, 178
Վախթանգ, Վրաց թագավոր 316
Վախթանգ Տանկիկ 178
Վախթանգյաններ 169
Վահրամ Գագեցի 142, 151, 156, 157, 162, 197, 212—215, 218, 226, 227, 231, 257, 314
Վահրամ Զաքարյան, աթաբեկ (14-րդ դ.) 338
Վահրամ Պահլավունի (XIII դ.) 162
Վահրամ Պահլավունի, սպարապետ 24, 58
Վահրամ, Սարգիս Զաքարյանի եղբայր 134, 141, 194
Վահրամ, Վահրամ Գագեցու թոռ 142
Վահրամյաններ 141
Վանական վարդապետ 214, 281, 427
Վանենի, Կյուրիկե Բ-ի դուստր 178
Վաչե Վաչուտյան, իշխանաց իշխան 157—159, 339
Վաչուտ Վաչուտյան 159
Վաչուտյաններ 158, 159, 339
Վասակ Արծրունի, Ամիր Քրդի եղբայր 114, 115, 181
Վասակ, Գրիգոր Ապիրատյանի հայր 89
Վասակ, Գրիգոր Մագիստրոսի որդի 64
Վասակ Խաղբակյան 164, 181, 196, 202, 245
Վասակ Կյուրիկյան Նոր Բերդում 214
Վասակ Պահլավունի 30, 41, 42
Վասակ, Սասունի իշխան 81
Վասիլ Բ, կայսր 22, 23, 41, տե՛ս նաև Բագիլեյոս Բ
Վասիլ իշխան, Մանազկերտի կառավարիչ
Վասսաֆ, պատմիչ 251, 280, 321, 444
Վարդան, պատմիչ 23, 41, 42, 65, 72, 75, 88—90, 97, 101, 104, 111—114, 118, 120, 123, 128—130, 132, 133, 142, 143, 147, 151, 167, 168, 184, 194, 195, 206, 215, 234, 241, 243, 245, 246, 251, 260, 294, 426, 427, 437, 479
Վելյամինով-Զերնով, հրատարակիչ 446
Վեստ Սարգիս 26
Վիգեն Թոռնիկյան 111
Վիգեն Մամիկոնյան-Ճորտվանելյան 146

Տահիր Սուլթան, Ահմադ խանի որդի 367, 369
Տայլար ոմն 154
Տամուրտաշ, Մելիք Աշրաֆի որդի 346
Տամուրտաշ, Չոբան վեզիրի որդի 334
Տանկիկ 167, տե՛ս Վախթանգ խաչենցի
Տարսայիճ, Եղեգիսի տեր, որդի Գորգոնի 378, 379
Տարսայիճ Օրբելյան 166, 167, 267, 313, 314, 318, 340, 429
Տափար, սելջուկ սուլթան 97
Տեմուչին 189, տե՛ս նաև Չինգիզ խան
Տեր-Միքայելյան Ա. 426
Տեր-Պետրոսյան Մ. 424
Տիգրան Բ Մեծ 246
Տիգրան Հոնենց 159—161
Տիզենհաուզեն Վ. 287, 442—446
Տիրայր եպիսկոպոս 433
Տիոնիսիոս Թրակացի 352
Տոզա-Տիմուր, իլխան 333
Տոխտա խան, Ոսկե Հորդայի խան 321
Տողուզ խաթուն, Հուլավուի կին 243, 245
Տոռնբերգ Կ. հրատարակիչ 438
Տուդար, մոնղոլ իշխանավոր 243, 244, 251, 252
Տուլի, Չինգիզ խանի որդի 237
Տուկիոս, Դավիթ իշխանավորի որդի 92

Տուղլու-բայ, վեզիր 345
Տուղրիլ բեկ, սելջուկ սուլթան 33, 36, 41, 42, 46, 50, 52, 53, 54, 56, 65—67, 69, 356
Տուղրիլ Բ 110, տե՛ս նաև Մելիք սուլթան
Տուղրիլ Գ, սելջուկ սուլթան 140
Տուղրիլ շահ, Էրզրումի ամիրա 197
Տուղրիլ-շահ, սելջուկ իշխան 148
Տուտուշ, Մելիքշահի եղբայր 78, 92
Տուրագինե, Հոքաթա խանի կին 229
Տուրսուն, հայր Այտինի 411

Ուգեդեյ, Չինգիզ խանի որդի 204
Ուզբեկ, Գանձակի աթաբեկ 140, 198
Ուզբեկ, Մուհամմեդ Փահլավանի որդի 192
Ուզբեկ, Ոսկե Հորդայի խան 328, 333
Ուզուն Հասան, Աղ-Կոյունլուների առաջնորդ 396, 397, 405—416
Ուլջեյտու, իլխան 324, 326—328, 442, 448, տե՛ս նաև Մուհամմեդ Խուդաբանդա, Խարբանդա
Ուլուսբեկ Պողոշյան 411
Ուղուրլու Մահմեդ, Ուզուն Հասանի որդի 409, 415
Ումեկ, մեծահարուստ 276, 277, 279
Ուվեյս, Ջելայիրյանների սուլթան 346, 347, 380, 445
Ուրսել, Նորմանական զորապետ 69
Ուքանյաններ 170

Փախրադին, Գանձակի ամիրա 106, 110
Փահլավան, Գանձակի աթաբեկ 143
Փահլավանյաններ 106, 107, 110, 111
Փառուխ Յեսար շահ, Շիրվանի տեր 413, 416
Փադլուն, Գանձակի ամիրա 67, 72, 83, 86, 88, 89, 90
Փադլուն Շեդդադյան, Մանաչեի թոռ 102—104, 112, 115, 117
Փադլունյաններ 74, 81
Փարսադան Գորգիջանիձե 441

Փիլարտոս (Փիլարետոս) Վարաժնունի 66, 81
Փիլոն փիլիսոփա 352
Փիր Ահմեդ, Ղարամանիայի ամիրա 405
Փիրբուդաղ, Ադրբեջանի խան 384
Փիր-Մուհամմեդ, Լանկթամուրի թոռ 378
Փիր-Օմար, Երզնկացի ամիրա 381, 384
Փորփիր 352

Քալկոնդիլես Լաոնիկոս, պատմիչ 435
Քատրմեր 290
Քարիմադին, հայ առևտրական 277, 278
Քաուս, Շիրվանի շահ 346
Քեմլ Էյուբյան 204
Քաղղաթու իլխան 316, 317
Քիթբուղա, մոնղոլ հրամանատար 248, 250
Քիլիսլի Ռաֆատ 403
Քյարիմ, Զաքարյան տոհմից 134
Քուրդ Աներեցի 339
Քուրդ Արծրունի 115, տե՛ս նաև Ամիր Քուրդ Արծրունի
Քուրդ, Վաչե Վաչուտյանի որդի 339

Օհսոն Դ 287, 288, 290, 293
Օլիմպիադոս 352
Օմար բեգ, վեզիր 408
Օմար Խայամ 70
Օմար Միրզա Անդրկովկասի և Ադրբեջանի կուսակալ 375, 378, 380
Օշին իշխան (Կիլիկիայում) 430
Օսման, օսմանյան թուրքերի առաջնորդ 350
Օրբելյաններ (հայ) 162, 164, 165, 264, 265, 267, 340, 378, 379, 412, 429
Օրբելյաններ (վրաց) 110, 124, 127, 128, 135

Ֆատիմյաններ 92
Ֆարաջ, սուլթան 379
Ֆինլե Ջ. 18
Ֆլեյշեր, հրատարակիչ 439
Ֆրանցես Գեորգիոս, պատմիչ 435
Ֆրիկ 278, 282, 286, 296, 315, 433

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Ա՛ալլալ քաղաք 60
Աբբարիկ գետ 322
Աբխազիա 14, 28, 51, 66, 72—74, 94, 100, 202, 248, 249, 308, 372
Ագարակ 97
Ագուլիս 335
Ադամխան 166
Ադանա 306
Ադիլջևազ 399
Ադրբեջան 55, 106, 111, 119, 140, 143, 157, 194, 195, 198, 199, 202—206, 210, 241, 251, 252, 272, 305, 328, 342, 345, 347—349, 351, 357, 366, 380, 381, 384, 385, 390, 395, 402, 405, 406, 416, 442, 480
Ազախ-Ազով 366
Ազգոր 250
Ազորդաց փոր, գավառ 19
Ալագազ 254, 279, 313
Ալամութ ամրություն 242
Ալանաց դուռ 369
Ալաշկերտ 19, 373, 374, 382, 399
Ալաշկերտի դաշտ 274, 384
Ալեքսանդրիա քաղաք 438
Ալտան բերդ 197
Ալտայ 237
Ախալքալաք 21, 60, 61
Ախալցխա 382, 394, 410, 427
Ախուրյան գետ 59
Ականա բերդ 233, 264
Ահար, վայր 348
Աղբակ գավառ 386, 387
Աղբերիս գյուղ 163
Աղբերց վանք 165, 351
Աղթամար 55, 82, 370, 386, 415
Աղիովիտ գյուղ 432
Աղկունծ գյուղ 158
Աղչկա բերդ (Անիում) 154
Աղստև գետ 72, 137, 163
Աղվանից բերդ 385
Աղվանիստան 69, 417
Աղվանք 14, 18, 26, 57, 61, 77, 81, 83, 113, 122, 157, 174, 192, 193, 195, 196, 206, 208, 211, 260, 269, 326
Աղցքն գյուղ 379
Աճարա 215
Ամասիա 65, 419
Ամաստրիա քաղաք 407
Ամիդ քաղաք 17, 82, 205, 228, 350, 365, 370, 381, 384, 388, 397, 417
Ամյուկ բերդ 55, 81, 111
Ամու-Դարյա գետ 237, 254, 417
Այաս 274, 275, 279
Այծյաց բերդ 18
Այնա-Ջալու հովիտ 248
Այրարատ (Արարատ) նահանգ, երկիր, դաշտ 94, 138, 141, 142, 153, 157, 165, 314, 359, 379, 381, 382, 388, 391, 392
Անակոփիա քաղաք 73
Անբերդ 142, 143, 152, 153, 159
Անգղ ավան 82
Անգորա 371
Անդրկովկաս 18, 34, 66, 69, 74, 94, 95, 101, 106, 154, 155, 174, 175, 192, 194, 196, 200, 202, 208, 211, 243, 244, 252, 271, 272, 281, 299, 300, 301, 305, 306, 311, 315, 316, 328, 332, 333, 341, 345—348, 366, 371, 372, 405, 444
Անի 13, 19, 22—26, 30, 46, 58, 62—64, 82, 86, 88—90, 100—104,

112—126, 135, 136, 143, 144, 148, 152—154, 156, 160, 161, 179, 182, 216, 234, 262, 270, 275, 276, 278, 285, 293—295, 329—332, 337, 338, 342—346, 354, 421, 425, 434
Անիի ամիրայություն 89
Անիի իշխանություն 86
Անի-Շիրակ թագավորություն 140, 156, տե՛ս նաև Բագրատունյաց թագավորություն
Անտիոք քաղաք 17, 64, 306, 436, 447
Աշմուշատ քաղաք 81
Աշնակ գյուղ 118
Աշտարակ 294
Ապահունիք 19, 51, 52
Ապամեա քաղաք 17
Ապարաններ 159, տե՛ս նաև Պանանյար
Ապլիստանի դաշտ 310
Ապիականիսի վանք 352, 353
Աջամեթ, վայր 184
Աղան 83, 86, 97, 99, 106, 111, 114, 118, 139—141, 192, 194, 195, 251, 333, 342, 365, 381
Առաջավոր Ասիա 7, 15, 32—35, 71, 154, 170, 174, 175, 238, 250, 254, 258, 284, 299, 301, 336, 348, 349, 371, 419
Առաքելոց վանք 145
Ասորեստան 369
Ասորիք 16, 17, 69, 78, 83, 149, 174, 203, 224, 228, 232, 238, 246—248, 274, 306, 307, 310—312, 322, 323, 350, 367, 370, 371, 384, 437
Աստրախան 450
Ավնիկ 365, 373
Ատրենի, վայր 167
Ատրպատական 36, 74, 77, 83, 86, 94, 106, 118, 138, 151, 153, 192, 197, 374
Արաբական խալիֆայություն 14, 16, 35, 174, 180, 238
Արագածոտն գավառ 42, 118, 142, 156—159, 339
Արածանի գետ 67
Արաքս գետ 139, 141, 147, 148, 184, 197, 241, 254, 358, 406, 415
Արբադիլ (Արդավիլ) 148, 149, 151, 195, 380, 413, 414, 416
Արդահան (Արտահան) 21, 73, 184, 218
Արզն 49, 88, 205
Արթիկ 162
Արծափ 390
Արծկե 53, 363, 383, 354, 387
Արծն քաղաք 44, 45, 51, 423, 431
Արծրունյաց թագավորություն 36, 40
Արղանա քազաք 381
Արճեշ քաղաք 51, 52, 82, 111, 147, 149, 205, 275, 366, 381—384, 387, 396
Արշակունիների թագավորություն 10, 180
Արշարունիք (Արշարունյաց) գավառ 43, 44, 90, 98, 114, 115
Արջովիտ գավառ 47
Արտազ գավառ 244, 373
Արտազի դաշտ 347
Արտանուջ 73, 139
Արտաշիր գավառ 153
Արտուկյան իշխանություն 92
Արցախ գավառ 81, 107, 122, 128, 129, 142, 165, 169, 411
Արուճ 160
Արփա ավան 165
Արևիք գավառ 107
Արսու (Ձաղան Մուրան) գետ 305
Աքքա քաղաք 321
Աֆրիկա 439

Բաբելոն (Բաբելոնիա) 51, 52, 54, 138, 159, 369
Բաբերդ 303, 395
Բագավան 197, 254, 274, 275, 279
Բագառիճ 409
Բագնայր 162
Բագրատունյաց թագավորություն 14, 25, 173, 175, 176, 180, 282, 294, 434
Բագրևանդ գավառ 19, 373, 382, 384
Բալթյան ծով 272
Բալկանյան թերակղզի 33, 350, 389, 406
Բալու քաղաք 18

Բաղաբերդ 84, 85, 122, 123
Բաղաց թագավորություն 80, 83—85, 122, տե՛ս նաև Կապանի թագավորություն
Բաղդադ 36, 50, 55, 70, 245, 246, 334, 341, 346, 363, 364, 366, 367, 371, 380, 381, 385, 415, 442, 445
Բաղդադի խալիֆայություն 13, 245, 248, 275
Բաղեշ 228, 363, 366, 380, 385—387, 395, 396, 420
Բայազետ 373
Բայլական քաղաք 141, 192, 195, 197, 269, 372
Բայկալյան լիճ 237
Բաշքյանդ 165
Բասեն գավառ, դաշտ 19, 28, 42—44, 47, 124, 139, 144, 153, 156, 365
Բարդող լեռ 359
Բարկուշատ 153, 154, 163
Բարձր-բերդ (Կիլիկիայում) 306
Բարձր Հայք 365
Բելական, վայր 152, 309
Բեխենց վանք (Անիում) 160
Բեհիստուն քաղաք 321
Բեղամեջ, վայր 192
Բեյրութ 17
Բեսարաբիա 406
Բերդաձոր 167
Բերկրի 51, 52, 82
Բզնունիք գավառ 228
Բիթանիա 350
Բիթլիս 398
Բիրաջիք, վայր 408
Բղեն 83—85, 153, 154, 266, 267
Բյուզանդական կայսրություն, Բյուզանդիա 14—22, 24—28, 30, 32, 33, 46, 48, 53, 57, 64—70, 72, 73, 78, 82, 86, 91, 93, 174, 176, 406, 434, 435, 491
Բոլորաբերդ 165
Բոլորապահակ 274
Բոմբեյ 444
Բոնն 435, 436
Բոսնիա 406
Բորոտան բերդ 153, 154, 266, 267
Բջնի 30, 143, 152, 153, 164, 200, 205, 235, 295, 343, 344, 359
Բրուսա 350
Բուլղար քաղաք 282
Բուլղարական թագավորություն 16, 18
Բուլղարիա 20, 21, 27, 31, 491
Բուխարա 41
Բուիդների պետություն 36

Գագ բերդ 72, 99, 119, 141, 142, 147, 184, 214
Գագա դաշտ 99, 119, 120, 200
Գազա քաղաք 322
Գազնա քաղաք 35
Գայլ գետ 395
Գանլիճա, վայր 58
Գանձակ 55, 67, 72—75, 81, 83, 86, 88, 94, 97, 98, 104—108, 110, 111, 121, 122, 141, 147, 153, 154, 184, 196, 197, 198, 200, 202, 203, 206, 212, 270, 424, 425, 427, 479, 480
Գանձակի ամիրայություն 89, 96, 97, 110
Գանձակի կուսակալություն 103—106
Գանձասար 167, 168
Գանձասարի վանք 178, 217, 281
Գառնի 104, 117, 153, 199, 200, 217, 359
Գավազանք, վայր 152
Գավարգին 99
Գարգարացոց երկիր 141
Գարդման գավառ, բերդ 108, 142, 153, 154, 157, 194, 214, 215
Գեզութ, վայր 148, 184
Գելաթ 249
Գեկսյուն, վայր 274
Գեղարդավանք 281, 413
Գեղամա ծով 167
Գեղարքունի ծով 153
Գեղարքունիք 137, 139, 141, 148, 157, 163, 166, 169, 265—267, 332, 340
Գեղի բերդ 84, 85, 122, 199
Գենովա 177

Գետաբեկ 215
Գետարգել վանք 338
Գետիկի վանք 276
Գերեթին վանք 244
Գլաձոր 281, 340, 351
Գլաձորի համալսարան 352
Գլաձորի վանք 328
Գողթն գավառ 335
Գոշավանք 179, 276
Գորի 410
Գրհամ, վայր 84, 85, 122
Գուգարք 80, 99, 138
Գուրան-չայ 194

Դադի վանք 108, 168, 294
Դալաս, վայր 241
Դամասկոս 228, 247, 312, 322, 323, 371, 438, 439
Դանուբ գետ 350
Դառան (Դառան դաշտ) 254, 279
Դարանաղյաց գավառ 144
Դարյալ 318
Դեղ ամրոց 229, 230
Դեկոր լեռ (Դիդկոր) 99
Դեհլի քաղաք 366
Դեշտ-ի-Խազար 312
Դեշտ-ի-Ղփչախ 237, 270, 272, 345, 364
Դերբենդ 192, 196, 231, 241, 252, 276, 305, 311, 316, 328, 347, 360, 365, 447
Դերջան 391, 395, 408, 451
Դերջանի դաշտ 409
Դիադին 254, 279
Դիարբեկիր 350, 365, 370, 381, 398, 404, 405
Դմանիս 73, 104, 215, 309
Դոփյան իշխանություն 165, 169
Դսեղ 170
Դվին 25, 26, 41, 55, 73, 82, 86, 88, 89, 90, 104, 117—120, 125, 130, 139, 140, 143, 144, 149, 153, 154, 157, 163, 164, 184, 199, 202, 275, 349
Դվինի ամիրայություն 89
Դվինի իշխանություն 86

Եաքսաթես 372, տե՛ս Սիր-Դարյա
Եգիպտոս 69, 92, 149, 174, 247, 248, 304, 306, 309, 310, 312, 321—323, 366, 367, 371, 379, 392, 408, 438, 439
Եդեսիայի շրջան 144
Եզդ քաղաք 445
Եթիլ գետ (Վոլգա) 241
Ելտկուզյան աթաբեկություն 140—142, 146
Եկեղյաց գավառ 144, 310
Եղեգիս 165, 217, 266, 267, 378, 379
Եղեգյաց ձոր 164
Եմեն 69
Եմեսա, վայր 17
Եվդոկիա 408
Եվլախ 196
Եվրոպա 35, 171, 188, 210, 252, 273, 306, 315, 323, 328, 353, 373, 380, 407
Երանոս, վայր 166
Երասխաձոր 114, 159
Երգևանք 142, 214
Երերոն բերդ 217
Երերունք 266, 267
Երզնկա 18, 19, 146, 184, 204, 227, 244, 270, 274, 302, 310, 349, 362, 365, 370, 371, 373, 380, 381, 384, 395, 405, 408, 447
Երնջակ գավառ, բերդ 159, 351, 358, 367, 369, 386, 390, 392
Երուսաղեմ 92, 191, 247, 424, 427, 437—439
Եփրատ 16, 66, 166, 312, 350, 406, 408, 409, 417
Երևան 160, 361, 368, 394, 420, 427, 429, 430, 439, 450, 480

Ջարևանդ գավառ 308
Ջաքարյան իշխանություն 270
Ջեդաղեն բերդ 96
Ջենջան (Ջանգան) քաղաք 106, 274

Էլառ 163
Էջմիածին 394, 411, 430, 432, 434

Էրզրում 148, 175, 197, 201, 203, 204, 227, 229, 270, 274, 275, 362, 370, 373, 390, 447

Թաթարստան 241
Թալին գյուղ 118, 294
Թայշարուխ գյուղ 235
Թանատի վանք 165
Թառձյան բերդ 147
Թարգմանչաց վանք 166, 168
Թարթառ գետ 107, 108, 165, 168, 217
Թավրիզ 86, 151, 152, 192, 198, 199, 203, 252, 254, 274—276, 279, 280, 315, 322, 324, 341, 342, 345—348, 357, 358, 373, 374, 380, 381, 384, 385—387, 394, 406, 407, 409, 412, 414—417, 437, 445, 450
Թբիլիսի 148, տե՛ս նաև Թիֆլիս
Թելավ 309
Թեհրան 395
Թեղենյաց վանք 334
Թեոդոսիա 366
Թեոդոսուպոլիս 44, 144, 145, 302, 303
Թերեք գետ 365
Թիֆլիս 410, 427, 429, տե՛ս նաև Տփղիս
Թոխաթ քաղաք 311, 390, 391, 408
Թորթում 373
Թոուզ գետ 195
Թռեղք գավառ 60, 61, 98, 99, 218
Թրղին գետ 107
Թուրքեստան 190, 237, 241, 272, 349
Թուրքիա 417

Իբերիա 24, 360
Իգդիր 373
Իլանսու գետ 241
Իկոնիա 66, 78, 203, 225—227, 230, 232, 233, 242, 408
Իկոնիայի սուլթանություն 70, 78, 144, 204, 228, 241, 242, 350
Իմերեթ 410, 411
Ինաքլու գյուղ 143
Իսավրիա 242, 407
Իտալիա 66, 272, 435
Իրան 35, 78, 83, 222, 237, 240, 252, 254, 258, 260, 300, 317, 395, 444
Իրաք 55, 92, 106, 111, 255, 364, 366, 367, 380, 381, 406, 416, 417, 442

Լալ բերդաքաղաք 60
Լայպցիգ 439
Լառիա 65
Լաստիվերտ ավան 423
Լատինական կայսրություն 176
Լարիսա քաղաք 28, 40
Լեհաստան 450
Լեյդեն քաղաք 439
Լիկաոնիա 407
Լիկանդոս գավառ 30
Լմպատ 162
Լոնդոն 439
Լոռի գավառ 26, 57, 61, 80, 90, 125, 135—137, 163, 170, 412
Լոռի բերդ 97, 215, 391—393

Խաթրավանք 166
Խալինձքար 99
Խախանաբերդ 81, 164, 168
Խաղրակյան իշխանություն 169
Խաղտիք, Խաղտյաց գավառ 28, 44, 51
Խաչեն (Խաչեն վերին, Խաչեն ներքին) 105, 108, 122, 141, 167, 168, 169, 170, 182, 217, 233, 250, 257, 259, 264, 267, 340, 425
Խաչենաբերդ 168
Խաչենագետ 164, 168, 217
Խաչենի իշխանություն 81
Խառարաստա վանք 368, 370
Խարբերդ 391
Խլաթ 66, 82, 92, 111, 119, 146—152, 202, 203, 205, 228, 270, 275, 346, 349, 385, 386, 396, 398
Խլաթի ամիրայություն 110, 111, 144, 147, 148, 150, 202, 228
Խծկոնք 160
«Խնձորո գլուխ»,— թաղ Կապան քաղաքում 84, 85
Խնուս 275, 398
Խոխանաբերդ 217

Խոյ քաղաք 203, 204, 275, 373, 374
Խոյական բերդ 229, 230
Խոշորնի 132, 133
Խորանաշատ վանք 214, 281, 426
Խորասան, մարզ 36, 41, 71, 301, 309, 313, 314, 317, 318, 327, 349, 364, 372, 378, 385, 390, 392, 395, 442
Խորձյան 43, 44
Խվարեզմ 155, 171, 190, 198, 204, 272, 346, 419
Խրամ գետ 194
Խութավանք 168, 178, տե՛ս նաև Դադի վանք
Խուժաստան (երկիր) 50, 110, 198, 442
Խույթ, վայր 51, 362, 363, 396
Խունան 98, 104, 194

Ծաղկոցաձոր (Անիում) 160
Ծաղկոտն գավառ 82
Ծամնդավ քաղաք 65
Ծառաքար 129, 130
Ծար գյուղաքաղաք 166, 359, 361
Ծիրանաքար ամրոց 229, 230
Ծմակ, վայր 160
Ծոփք 144

Կադիքս քաղաք 449
Կալկա գետ 196
Կալկաթա 439, 446
Կախեթ 67, 96, 263, 410
Կածարեթ բերդ 142, 214
Կահիրե 431
Կաղզվան գյուղ 90, 114, 115, 151, 153
Կամախ 204, 244, 395
Կայեն բերդ 99, 137, 215, 267
Կայեն գավառ 141, 163
Կայծոն բերդ 99, 137
Կանգարք գավառ 60, 61
Կաշգար 190
Կապադովկիա 30, 31, 66, 68, 78, 91, 92
Կապաղակ քաղաք 97, 196
Կապան քաղաք 18, 81, 83, 84
Կապան գավառ, աշխարհ 84, 107
Կապանի թագավորություն 8, 83, 122
Կապուտոու բերդ 47, 48
Կառկառ բերդ 233, 264
Կասպից ծով 42, 101, 166, 175, 192, 237
Կաստիլիա 449
Կարակորում 210
Կարբի գյուղ 339, 359
Կարին քաղաք 49, 82, 113, 114, 144, 146, 152, 153, 184, 226, 227, 229, 270, 274, 325
Կարին գավառ, երկիր, շրջան 112, 138, 141, 151, 225
Կարինի (Կարնո) ամիրայություն 91, 101, 112, 144
Կարճևան 84, 85
Կարմիր գետ 275
Կարմիր փորակ 148
Կարնո դաշտ 23, 43, 44
Կարս քաղաք 18, 19, 21—23, 50, 51, 65, 73, 82, 100, 120, 123, 144, 147, 148, 153, 184, 202, 216, 241, 263, 270, 275, 277, 309, 365
Կարսի ամիրայություն 91, 101
Կարսի թագավորություն 13, 140
Կարսի իշխանություն 175
Կարուց երկիր 139
Կաքավաբերդ 84, 122
Կաֆա 366
Կեղի 395
Կեչառիսի վանք 90, 164
Կեչրոր 129, 130
Կեսարիա 64, 69, 227, 231, 258, 310, 370
Կերման 78
Կիզիլ չայ (Կարմիր գետ) 275
Կիզիստրա բերդ 64
Կիլիկիա 9, 16, 18, 66, 78, 174, 179, 183, 204, 227, 233, 240, 241, 247, 306, 309—311, 321, 322, 353, 354, 407, 408, 428, 436, 447
Կիլիկիայի հայկական թագավորություն 309, 321—323, 351, 374, 418
Կիպրոս կղզի 407, 447
Կիրման մարզ 66
«Կկոց քար» 122

Կղարջք 73, 218
Կյուրիկյան թագավորություն 80, 90, 97, 110, 135, տե՛ս նաև Ձորագետի թագավորություն
Կոգովիտ գավառ 82, 373
Կոթի գյուղ 119
Կող գավառ 184, 218
Կողբ 260, 359
Կողբ (Վանանդում) 365
Կոմանա քաղաք 65
Կոշ գյուղ 160
Կոպենհագեն 439
Կոպիտառա, վայր 274
Կոռիկոս բերդ 310, 430
Կոստանդնուպոլիս 25, 26, 33, 49, 67—69, 139, 144, 176, 406, 409, 420, 435, 439, 447, 448
Կոտայք 163, 164, 266, 267, 340
Կոտման գետ 194, 195
Կովկաս 35, 51, 52, 69, 93, 97, 101, 110, 166, 196, 231, 312, 328, 365, 406
Կորֆու կղզի 435
Կուր գետ 104, 121, 141, 148, 254, 305, 328, 333, 406

Հաթերք 31, 108, 168
Հալեպ 247, 312, 371
Հալեպի սուլթանություն 248
Հաղբատի վանք 88—90, 125, 178, 179, 281
Հաղարծնի վանք 135, 138, 143, 152, 154
Համադան 194, 195, 312, 366, 417
Համաթ քաղաք 247, 312
Համասրի գյուղ 163
Հայաստան passini
Հայկական լեռնաշխարհ 17, 27, 32, 33, 62, 64, 76, 86, 91, 93, 212, 381
Հայկական միջնաշխարհ 82, 86
Հայկավանք եկեղեցի 361
Հանդաբերդ 166—168
Հանձիթ գավառ 81
Հաշտյանք գավառ 44
Հաջի-Տարխան-Աժդերխան 366
Հասկաբակ, վայր 167
Հավապտուկ (բերդ, վանք) 164, 168, 480
Հավճիչ քաղաք 18, 19
Հավքախաղաց բերդ 217
«Հարու ամրոց» (Ղարաբաղում) 122
Հարք գավառ 18, 19
Հելլեսպոնտոս 371
Հելիոպոլիս քաղաք 17, 247
Հեմս քաղաք 247, 312, 322, 323
Հերաթ քաղաք 395, 405, 446
Հեր գավառ 308
Հերթ 153, 154
Հերհեր 165
Հերքան բերդ 107
Հիերոպոլիս քաղաք 17
Հինդուկուշ 36
Հիսնկեֆ քաղաք 92, 405
Հնդկական օվկիանոս 69, 406
Հնդկաստան 35, 198, 254, 366, 367, 369, 371, 446
Հոռոմայր վանք 135
Հոռոմոսի վանք 154, 159, 169
Հովհաննավանք 157, 158, 339
Հովք, վայր 277
Հորդանան գետ 248
Հռոմ 351
Հռոմկլա 321, 384
Հրաշկաբերդ 163, 164, 217
Հուլավյանների պետություն 314
Հունաստան 30, 406
Հունարակերտ քաղաք 104

Ձագավանք 294
Ձորագետ 61, 65, 66, 80, 125, 132, 133, 135, 138, 147, 170, 179, 184
Ձորագետի Կյուրիկյան թագավորություն 8, 13, 124, 140, տե՛ս նաև Կյուրիկյան թագավորություն
Ձիրավի դաշտ 317
Ձորոփոր գավառ 80, 104, 141

Ղազախ գավառ 72, 141
Ղազվին քաղաք 242, 250, 274
Ղարաբաղ 122, 254, 348, 360, 371, 372, 388, 412, 418

Ղարադաղ 254, 348
Ղարաղորում 237—239, 241, 250, 256, 265, 447
Ղարամանիա, իշխանություն Փոքր Ասիայում 407, 408
Ղարաքենդ 274
Ղվելիս-Ղուր, վայր 60
Ղուլալի գյուղ 214

Ճակատք գավառ 57
Ճանեթ 51, 52
Ճապաղ ջուր գավառ 203, 362
Ճառաքերդ 107
Ճոխանց գավառ 167
Ճորոխ 98

Մադրաս 429
Մալաթիա 18, 370, 371
Մածնաբերդ 97, 135, 170, 214
Մակեդոնիա 28, 373—376, 379
Մակու բերդ 374, 375
Մահկանաբերդ 99, 170, 267, 309, 399
Մամախաթուն 409
Մանազկերտ 19, 49—53, 67, 68, 82, 92, 111, 146—148, 202, 274, 275
Մանազկերտ—Խլաթի ամիրայություն 111, 149
Մանանաղ գավառ 44, 423
Մանտազամ 99
Մանկլիս 99
Մասիս 139
Մավերան-Նախր—Թուրքեստան 237
Մարաղա քաղաք 86, 119, 195, 348, 351, 437
Մարանդ քաղաք 92, 151, 152, 203, 348
Մարաստան 50, 106, 384, 395
Մարդին քաղաք 149
Մարմաշեն (Մարիամ-Նիշին) 42, 57—61
Մարտիրոսաց քաղաք 228
Մելիտենե քաղաք 55, 436
Մեծ Հայք 326
Մեծոփա վանք 353, 432
Մեղրի 84, 85, 122
Մեսխեթ 410, 411
Մերդին քաղաք 92, 247, 365, 371, 385
Մերվ 36
Մցնկերտ քաղաք 153
Միանե, վայր 384, 405
Միաֆարղին 205
Միջագետք 16, 17, 27, 30, 31, 53, 78, 83, 92, 93, 98, 149, 174, 198, 224, 228, 238, 246—248, 301, 323, 341, 349, 364, 365, 367, 371, 384, 395, 405, 406, 438, 491
Միջերկրական ծով 69, 242, 254, 272, 406—408
Միջին Ասիա 7, 170, 254, 272, 301, 336, 349, 357, 372, 419
Մծբին քաղաք 17, 92, 228, 365
Մոկք 55, 82
Մոնղոլիա 189, 210, 222, 237, 238, 270, 447
Մոսկվա 237, 347, 426—429, 450
Մոսկովյան իշխանություն 317
Մոսուլ 106, 110, 111, 364, 385, 438
Մսիս 310
Մրեն 118, 160, 279, 294
Մուշ քաղաք, Մշո դաշտ 111, 145, 203, 381, 396—398
Մուղան 194, 197, 218, 227, 228, 254, 365, 397
Մուղանի դաշտ 192, 211, 212, 242, 243, 315, 316, 405
Մուֆարղին քաղաք 82, 246, 247, 267

Նախի 96
Նախիջևան 41, 57, 58, 61, 107, 111, 151, 162, 195, 203, 234, 318, 319, 348, 351, 357, 369, 397, 417, 447
Նախիջևանի ամիրայություն 110
Նեապոլիս-Սիխեմ քաղաք 248
Նիկ գավառ 159
Նիկիա 78
Նինուե 364
Նիշ ավան 352
Նյուշապուհ քաղաք 70
Նորադուզ 183
Նոր բերդ 99, 104, 214
Նովգորոդ քաղաք 299

Նորովանք 163, 217, 429
Նպատ (Ալադաղ) լեռ 279
Նրբույն բերդ 165
Նփրկերտ քաղաք 19, 146

Շահապունք ամրոց 361
Շահապունիք գավառ 164, 340, 361
Շամախի քաղաք 99, 196, 252, 276, 413—416
Շամշուլդե բերդավան 73, 74, 80, 96, 97, 215, 393
Շամքոր քաղաք 141, 142, 151, 153, 154, 193, 213, 214
Շավշք, Շավշեթ 73, 139, 218
Շարուր 314, 417
Շաքի 96, 97, 152, 153
Շեդդադյան ամիրայություն 112
«զՇեռեխան», վայր 395
Շիրազ 395, 409
Շիրակ 19, 26, 57, 88, 90, 100—102, 112, 118, 119, 120, 125, 144, 159, 161, 162, 226, 337, 342, 344
Շիրակավան 294—296
Շիրվան 96, 97, 99, 101, 152, 196, 305, 328, 346, 347, 360, 365, 372, 382, 389, 390, 413, 416
Շլորուտ բերդ 84, 85, 122
Շողագա գավառ 166, 167
Շուշի քաղաք 141

Ոսկե Հորդա 231, 232, 237, 240, 250—252, 254, 272, 280, 282, 304, 305, 306, 311, 312, 315, 316, 321, 328, 333, 345—348, 364—366, 371
Ոստան քաղաք 366, 386, 387
Ուրմիա քաղաք 387
Որոտան, Որոտն բերդ 83—85, 151, 153, 154, 163, 358, 378, 379, 381

Չաղան Մուրան գետ 305
Չարաբերդ 153, 154, 239, 264
Չարեք բերդ 107, 108, 151, 153, 154, 215
Չինաստան 69, 124, 171, 189, 190, 227, 237, 238, 240, 250, 272, 360, 371, 372, 419, 448
Չլդիր լիճ 139
Չմանկատուկ գյուղաքաղաք 227
Չորրորդ Հայք 16, 17

Պալակացիս լիճ 139, տե՛ս նաև Չլդիր լիճ
Պաղեստին 248, 323, 438
Պանանյար 159
Պարխար լեռներ 50, 52
Պարսկական ծովածոց 417
Պարսկաստան 30, 36, 40, 41, 44, 53, 55, 60, 86, 97, 102, 105, 106, 153, 162, 190, 192, 198, 201, 203, 204, 238, 241, 254, 255, 272, 288, 301, 357, 360, 366, 369, 374, 375, 393, 395, 405—407, 409, 416, 417, 444, 450
Պարտավ քաղաք 97, 98, 141, 152—154, 192
Պելոպոնես 406, 435
Պեկին 238
Պետերբուրգ 422, 426—428, 431, 446
Պիզու քաղաք 30
Պղնձահանք 235
Պոնտոս 66, 91, 144, 166, 242, 406
Պռո գյուղ 420

Ջահան գետ 310
Ջահուկ գավառ 351
Ջավախք 57, 60, 61, 73, 147, 184, 218
Ջենովա 274, 448
Ջիբալ, վայր 119
Ջուվեյն գավառ 442
Ջևանշիր գավառ 194

Ռուբինյան թագավորություն (Կիլիկիայում) 9, 183
Ռուբինյան իշխանություն 78
Ռեյ քաղաք 60, 77, 111, 203
Ռյազան քաղաք 291
Ռշտունիք գավառ 55, 82, 380, 386
Ռուբրուք գյուղ 447
Ռում, Ռումի սուլթանություն 146, 148
Ռուսթավ քաղաք 96, 137

Ռուսաստան 35, 171, 174, 210, 211, 240, 263, 264, 269, 270, 272, 282, 285, 288, 291, 299, 419, 447

Սագամ բերդ 214
Սաղախլու 131
Սալմաստ քաղաք 388
Ս. Սահակ եկեղեցի (Վանում) 390
Սաղմոսավանք 157, 158
Սամարղանդ 357, 366, 369, 372, 373, 376, 378, 439, 449
Սամցխե 218, 234, 264, 410, 411
Սամուր գետ 360
Սանահին, վանք և գյուղ 90, 135, 136, 151, 170, 178, 179, 295
Սասուն 17, 18, 51, 55, 81, 91, 111, 146, 147, 246, 247, 352, 357, 362, 363, 396
Սասունի իշխանություն 80, 81
Սատաղ 395
Սարար քաղաք 195
Սարայ քաղաք 276, 282, 366
Սեբաստիա 28, 40, 41, 55, 91, 144, 145, 227, 274, 364, 370, 371, 391
Սելջուկյան սուլթանություն 94, 95, 97, 105, 180, 226, 255, 305, 311
Սերկևիլ, վայր 41, 42
Սիբիր 189
Սիմ լեռ 51, 52
Սիմնան քաղաք 395
Սիպետշահր քաղաք (Սպիտակ քաղաք) 60
Սիս 240, 306, 394, 432
Սիսական 374
Սիր-Դարյա գետ 372
Սմյատաբերդ 44, 423
Սյունիք, Սյունյաց աշխարհ, նահանգ 80, 81, 83, 90, 107, 122, 138, 148, 153, 154, 157, 163, 164, 167, 169, 217, 265—267, 318, 339, 340, 348, 358, 360, 361, 373, 381, 388, 390—393, 411, 412, 418, 429
Սյունիքի թագավորություն 13
Սյունյաց իշխանություն 140
Սոդք, Սոթից գավառ 157, 165—167
Սոմխեթ 80, 96, 99, 141, 184
Սպահան 70, 74, 81, 111, 119
Սպահանի սուլթանություն 85, 121
Սպանիա 373, 376
Սպեր 43, 44, 147, 184, 373
Սպիտակավոր վանք 165
Սվանեթ 231, 248, 249, 258, 265
Սրկղունք ավան 165
Սուդակ քաղաք 282
Սուլթանիե քաղաք 274, 275, 315, 324, 351, 380, 387
Սուխարա վանք 370, 431, 432, տե՛ս նաև Խառաբաստա
Սուրմառի (Սուրմալի) բերդաքաղաք-գավառ 57, 58, 61, 153, 197, 216, 359, 365, 373, 374
Սև ծով 69, 101, 175, 176, 257, 272, 407
Սևանա լիճ 138, 156, 166, 216, 418
Սևիլյա քաղաք 449

Վախթանգյան իշխանություն 169
Վաղարշակերտ (Ալաշկերտ) 19, 153, 382
Վաղարշապատ 424—426, 432, 433
Վաղարշավան Դաստակերտ 42, 43
Վայոց ձոր 153, 157, 162—165, 167, 217, 255, 328, 339, 340, 351, 411
Վան քաղաք 357, 361—364, 384, 386, 390
Վանա լիճ 50, 55, 82, 112, 349, 350, 366, 380, 386, 405
Վանանդ գավառ 53, 73, 146, 365
Վաչուտյանների իշխանություն 157
Վասպուրական 18, 19, 28, 29, 38, 40—43, 46, 65, 91, 386, 388
Վասպուրականի իշխանություն 82
Վարագա վանք 205
Վարդանաշատ, վայր 197, 215
Վարաժնունիք 164, 340
Վարանդա 122
Վարդենիք 165
Վարդշեն գյուղ 302
Վեգի 266, 267
Վենետիկ 177, 274, 407—409, 423, 425, 427, 430, 440, 448—450

Վոլգա գետ 35, 237, 241
Վրաստան 8, 14, 16, 18, 20, 21, 27, 29—31, 56, 61, 73, 74, 76, 93, 94, 96—105, 111, 113—115, 117—121, 124, 127, 128, 130, 131, 135—138, 141, 142, 144, 146, 149, 151, 154—157, 170, 173—177, 182, 183, 194—198, 200, 202, 208—212, 215, 218, 224, 225, 230, 231, 233, 238—240, 243, 256, 257, 258, 260, 261, 263, 264, 270, 295, 301, 309, 312, 316, 318, 326, 330, 342, 357, 359, 360, 367, 368, 372, 393, 394, 410, 411, 442, 480
«Վրաց ղավառ» 29
Վրաց թագավորություն 124, 140, 146, 170, 184, 211, 230, 231, 235, 259, 262—264, 267, 268, 322, 436
Վրթանես գյուղ 165

Տաթևի վանք 123, 266, 267, 340, 351—353
Տայ-Ջավար դաշտ 274
Տալլարի վանք 169
Տայք 18—21, 28, 43, 44, 55, 138, 302, 438
Տանգիր քաղաք 439
Տավրոսի լեռներ 51, 65
Տավուշ բերդ 97, 99, 108, 135, 142, 214
Տարոն 17, 18, 43, 44, 81, 147, 150, 151, 303, 362, 384
Տարսոն քաղաք 18, 310
Տերեկ գետ 252
Տերունական բերդ 99, 142, 194, 195, 214
Տիբեթ 237
Տիգրանակերտ 246, 247
Տիգրիս գետ 16, 405
Տիվրիկ քաղաք 227
Տողատափ, վայր 11, 203
Տրանսօքսանիա (երկիր) 49
Տրապիզոն 29, 49, 176, 177, 272, 274, 275, 279, 373, 406, 412, 416, 449
Տրապիզոնի կայսրություն 407, 435, 436
Տրապոլիս քաղաք 321
Տուս քաղաք 71
Տուրուբերան 362, 364, 388
Տփղիս 67, 72—74, 96, 99, 118, 193, 200—202, 215, 231, 233, 234, 249, 258, 262, 276, 305, 359, 360, 394, 413, 424, 429, 440, 441

Ցիպնավանք 387, 431

Ուչքիլսե 274
Ուջան քաղաք 384
Ուռիաձոր 167
Ուռհա քաղաք 365, 424
Ուտիք, Ուտի նահանգ, Ուտեացոց երկիր 80, 81, 121, 122, 138, 142, 179, 213, 215, 250
Ուրծ 266, 267
Ուրմիա 203
Ուրֆա քաղաք 228

Փառիսոս գավառ 105, 157, 179, 425
Փարիզ 424, 428, 429, 432, 439
Փարս երկիր 55, 110
Փարցխիս 73
Փոկեա, վայր 435
Փաղահանք 266, 267
Փոքր Ասիա 27, 31, 33, 57, 64—70, 72, 78, 144, 224, 227, 242, 272, 276, 282, 301, 310, 311, 317, 328, 341, 350, 366, 367, 370, 371, 389, 405—409, 435, 491

Քազվին քաղաք 444
Քալաձոր բերդ 96
Քաջբերունիք գավառ 362, 370, 384, 388, 432
Քավարզին բերդ 72, 214
Քարթլի 60, 67, 98, 184, 218, 263, 410
Քարհերձ 142
Քարպահ, վայր 386, 387
Քերման 406
Քեփրիքե 274
Քոբայր 178
Քութահիա, վայր 408

Քութայիս 73, 215, 410
Քուստի 157
Քուրդ-Վաճառի ձոր 141

Օթրար, վայր 372
Օլթի 115, 250
Օխրիդա, վայր 18
Օկումի ավան 28
Օնոն գետ 190
Օշական 160, 183, 262, 295
Օսեթ 231
Օսմանյան պետություն 350, 407—409, 417, 435, 447
Օրխոն գետ 210, 237
Օրոնտես գետ 350
Օքսուղլու գյուղ 195

Ֆարկին քաղաք 17, տե՛ս նաև Տիգրանակերտ
Ֆարս, Ֆարսիստան, երկիր 50, 193, 364, 384, 395, 406, 416, 417, 445
Ֆլանդրիա 447
Ֆրանսիա 447

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### *ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*


Խմբագրության կողմից . . . . . . . . . . . . . 5

Ներածություն . . . . . . . . . . . . . . . 7

Գլուխ առաջին

Հայաստանի քաղաքական կացությունը սելջուկյան արշավանքներից առաջ 13

Գլուխ երկրորդ

Սելջուկյան թուրքերի առաջին արշավանքները և Հայաստանի հարավային ու արևմտյան ավերումը . . . . . . . . . . 34

Գլուխ երրորդ

Ալփասլանի ու Մելիքշահի նոր արշավանքները և Բյուզանդիայի վտարումը Փոքր Ասիայից . . . . . . . . . . . . 56

Գլուխ չորրորդ

Հայաստանը սելջուկյան աշխարհակալության անկման ժամանակ . . 77

Գլուխ հինգերորդ

Վրաստանի հզորացումը և նրա տիրապետության տարածումը մինչև Անի 95

Գլուխ վեցերորդ

Վրաստանի հզորացումը Գեորգի Գ-ի ժամանակ . . . . . . 109

Գլուխ յոթերորդ

Հայաստանի վերականգնումը Զաքարյանների իշխանության ներքո . . 131

Գլուխ ութերորդ

Հայկական իշխանությունները ազատագրված Հայաստանում . . . 156

Գլուխ իններորդ

Հայաստանի ներքին կացությունը Զաքարյանների տիրապետության ժամանակ . . . . . . . . . . . . . 172

Գլուխ տասներորդ

Մոնղոլական առաջապահ բանակի և Ջալալեդդինի արշավանքները . . 189

Գլուխ տասնմեկերորդ

Ջարմաղանի արշավանքը և Հայաստանի ու Վրաստանի նվաճումը . . 210

Գլուխ տասներկուերորդ

Բաչու նոյինը և Կարինի, Խլաթի ու Փոքր Ասիայի նվաճումը . . . 225

Գլուխ տասներեքերորդ

Հուլավուն և նրա արշավանքները . . . . . . . . . . 239

Գլուխ տասնչորսերորդ

Հայաստանի քաղաքական վիճակը մոնղոլական տիրապետության ժամանակ 256

Գլուխ տասնհինգերորդ

Հայաստանի առևտուրը և քաղաքները իլխանների ժամանակ . . . 269

Գլուխ տասնվեցերորդ

Հայաստանի տնտեսական ծանր դրությունը և ժողովրդի աղքատացումը 283

Գլուխ տասնյոթերորդ

Աբաղա խանը ու նրա հաջորդները մինչև Ղազան խանը . . . . 304

Գլուխ տասնութերորդ

Իլխանության անկումը և Հայաստանի տնտեսական քայքայումը . . 324

Գլուխ տասնիններորդ

Հայաստանի վիճակը Չոբանյանների և Ջելայիրյանների տիրապետության շրջանում . . . . . . . . . . . . . 337

Գլուխ քսաներորդ

Լանկթամուրի արշավանքները և հայ ժողովրդի տառապանքները . . 356

Գլուխ քսանմեկերորդ

Ղարա-Ղոյունլու թուրքմենների տիրապետությունը Հայաստանում . . 377

Գլուխ քսաներկուերորդ

Հայաստանը Աղ-Ղոյունլու թուրքմենների տիրապետության տակ . . 404
Աղբյուրների համառոտ տեսություն . . . . . . . . . . 421
Ընդհանուր գրականություն . . . . . . . . . . 452
Նոր տվյալներ մոնղոլների կողմից Գանձակի ավերման մասին . . 463
Ժամանակագրական աղյուսակ . . . . . . . . . . . 465


Ցանկեր


Անձնանունների . . . . . . . . . . . . . 478
Տեղանունների . . . . . . . . . . . . . 493

ՀԱԿՈԲ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԱՆԱՆԴՅԱՆ
ЯКОВ АМАЗАСПОВИЧ МАНАНДЯН

# Ե Ր Կ Ե Ր

Գ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Նկարիչ
Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ա. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Պատվեր 23 Հրատ. 4566 Տպաքանակ 5000*
*Հանձնված է շարվածքի 13/1 1977 թ.։ Ստորագրված է տպագրության, 15/XII 1977 թ.։ Տպագրական 31,75 մամուլ,+7 ներդիր, պայման. 32,63 մամուլ, հրատ. 27,24 մամուլ։ Թուղթ № 1, 60×90 1/16, գինը 3 ռուբ.։*

---

*Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.*
Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамятян, 24-г.
*Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24*
Типография Издательства АН Арм. ССР, Ереван, Барекамутян, 24.

10

A 11/58999
A 11/60062
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220060062